



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՄԱՍԿԵԼ ԱՌՈՐԱԴՑԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՀԻՐԱԶ

Գիրք Ա

ԵՐԵՎԱՆ
2012

ՄԱՐԿԵԼ ՄՈՒՐԱԳՅԱՆ

Հ. 100 100 100
Է. 1 00 100
Ս. 100 100

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՐԱԶ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ՄԱՐԴԸ

ԳԻՐԲ Ա

Հ. 100 100 100
Է. 1 00 100

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 891. 981. 0

ԳՍԴ 83. 3 Դ

Շ 641 Ա.

ԽՄԲԱԳԻՐ՝

Բանախթանի գիտությունների ֆակուլտետ.

Գրչենտ ՄԵՐԺ ՄՐԱՊԱՈՆՅԱՆ

Մուրադյան Սամվել

Շ 641 Ա. Դիվանենա Հիրազ: Բանաստեղծը, Մարզ / Ս. Մուրադյան. -

Եր.: ԵՊՀ, 2012. Գ Ա - 576 էջ:

Դիվանենա Հիրազ բանաստեղծն իրը կենդանի լեզուն էր, բայց նա լեզուն է նաև հիմա և հետո: Երան մեծարում էին «նայ դասական քնարերգությանը եզրափակող բանաստեղծ», «նայոց վշտի բանաստեղծ» և այլ պատվանուններով, որոնք մասամբ էին համապատասխանում նրա քուն նույնպես: Երա մահից անցել է շուրջ երեք տասնամյակ: Շատերն շտապեցին իրենց հուշապատումները գրել համազգային մեծ բանաստեղծի կյանքը քանակով մեծահույսել իրենց կենսագրությանը կամ հանատակը: Սակայն այդ բանաստեղծը որևէ մեկի մասնավոր անփականությունը չէ, և ոչ ոք չի կարող հավակնել նրա մասին ավարտում ու սպասել խոսք անելու:

Սույն մեմուարայան հեղինակը, շուրջ քսոթորդ դար (1961-1984 թթ.) լինելով բանաստեղծի մտերիներից մեկը, ներկայացնել է իր ճանաչած Դովի, Հիրազ մարդուն ու բանաստեղծին և ըստ կատելության քննադատել նրա ստեղծագործությունը: Բանաստեղծի գրական հիմնական ամբողջացնելու նկատմամբ ներառված են նաև հեղինակի նախնական սպառնալից հոդվածներ և ուսումնասիրություններ՝ որոշակի լրամշակումներով ու բարեփոխումներով:

Քիչըց նախատեսվում է գրականագետների, ուսանողների, ուսուցիչների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 891. 981. 0

ԳՍԴ 83. 3 Դ

ISBN 978-5-8084-1569-0

© Ա. Մուրադյան, 2012

ԳՐՔԻ ՀՈՎԱՆԱԿՈՐ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՑՈՎԱՍԵՓ ԵՒ ԳԱՐՈՒԽ
ՆԱԼՊԱՆՏԵՄՆԵՐ

(Լուս Անտալյա, ԱՄՆ)

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ

500

ԱՄՅԱԿԻՆ

Հայաստանի Հանրապետության Գրչենտի հիմնադրամիջոցառում
Հայաստանի Հանրապետության Գրչենտի հիմնադրամիջոցառում

Միտք եմ անում գետի ափին՝
Յառկամ ափին կանաչերազ,
Ինձ թողնելով անխթարթին՝
Գետն Հտուճ է Հավերժապաշտ.
Երթն ատուճ է իր աղբիքին՝
Ետ չնայես՝ քար կղզուճաս...
Ետ չի թևերուճ թարթիչն անզամ
Ու միշտ առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ՝
Ասես գետի՝ ուր է վազուճ
Կույր տարերքով մշտապաշտ,
Ու գնո՛ւճ է, գնո՛ւճ, գնո՛ւճ
Հավերժի Հետ մշտապնտ,
Լոկ աղբիք է ափին մեռնում,
Նա, որ ետ է նայում մի պահ...
Այսպես դարե՛ր, դարե՛ր գլխիս՝
Դարերին է Համբավ տալիս
Իմ ժողովուրդն, ու Հավատո՛ւճ
Հավե՛ճ պիտի այսպես երթա
Դեպի երա՛զն իր զուլթական՝
Ետ չլինքամ թարթիչն անզամ, —
Ետ չի նայում.
Թե գառնա ետ՝
Կարանա
Իսկույն եկթ...

Մտանում է Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի ծննդյան 100-ամյակը, և շուրջ երեք տասնամյակ է՝ նրան չենք տեսնում Երևանի փողոցներում, մտախի ու Հեռավոր բնակավայրերում ժողովրդական լայն խավերի Հետ բազմամարդ ու չունդալից Հանդիպումներում, չենք լսում նրա արտակարգ սրամտու-թյունները... Բայց նա ընդմիշտ մեզ Հետ է, արդիական է, ինչ-պես բոլոր իրական մեծերը, ազգային է խորապես ու Հենց դրանով էլ Համամարդկային: Համաշխարհային մեծ քնարեր-գույներից մեկն է նա՝ իր ծիսականալար քնարով ու Հենց Հայ-կական Համամարդկայնությամբ, ազգային ուղղվածությամբ այն զործերով, որոնցով Համաշխարհային են բոլոր փոքրաթիվ ազգերի մեծ բանաստեղծները:

Իր աղբած դարաշրջանի կենդանի լեզունը էր նա՝ Հզոր երևակայությամբ ու պատկերավոր մտածողության բացառիկ ուժով, գեղարվեստական մաքի անկասելի թռիչքներով օժտ-ված ազգային այն շոտյ Հանճարը, որի ստեղծագործությունը խորհրդային ժամանակներում և այնուհետև եղավ Հայ սե-բունդներին Հայցի մտածողությամբ, Հոգեբանությամբ ու նկարագրով դաստիարակելու և Ափյուռքում Հայապահպանու-թյան լավագույն միջոցը:

Դյուրին էլք նրա կյանքը: Հայոց ազգային իրավունքների և արժանապատվության, պատմական արդարության վերա-կանդեման Համար մղած Համառ, ամենօրյա Ավարտյունում նա ոչ մի սահման ու կաշկանդում չհանդուրժող ազատամտու-թյամբ դարձավ ժամանակի մեծագույն գրական ընդդիմու-թյունը, Հայոց լեզվի և դրանով իսկ Հայության պահպանու-թյան Համար մարտնչող, ձուլման վտանգի դեմ անզիջում պատերազմ Հայտարարած անվեհեր քաջամարտիկը:

Բայցը գիտեին նրան որպես կենդանի լեզունդի, որպես մեր էպոսի գյուցագուն ծեփից մեկին, որը, Հանուճ Հայ մարդու և աշխարհի խիղճն արթուն պահելու, մարդու բարոյական նկա-րագիրը վեհացնելու, Հանուճ Հայության Հարատեման, իր

լուին գրասեղանի վրա Վարդանի ու Անդրանիկի, բոլոր հայ քաջորդիների պես զոհվելու պատրաստ աննահանջ գոտեմարտ էր մղում:

Որ չգիպչեն հայոց լեզվին ժամանակներն անկառու:

Նրա ամեն բանաստեղծություն կամ պոեմ, յուրաքանչյուր տող ու պատկեր գլավլիտի և հրատարակիչների կողմից արժանանում էր մանրագրին գրաքննություն և խմբագրվում էր «Տեղիկակից գաղանակ»: Մեծ գծավորություններ հաղթահարելով, համառու ու աննկուն պայքարով էր նա կարողանում հրատարակել անգամ թույլատրելի ստեղծագործությունները՝ այն էլ նաևժողոր աղանառումներով ու անխիղճ կրճատումներով: Իսկ թե նյութական, բարոյական ու քաղաքական ինչ արգելապատնեշների է բախվել պետական բոլոր ասպարեզներին քոնի «քաղաքագործություններ» վտարված ու մերժված, հանախ հուսալքված, «խեքնասպանություն մտքի ազատվելը զլիտում պատվոզ» բանաստեղծը՝ քչերին է հայտնի:

Իսկ ինչ գիտի այսօրվա՝ երիտասարդ սերունդը արևմտահայ վարուժանյան շքեղ պատկերավորությունը և արևելահայ՝ իտահայանական զեղչուկ պարզությունը միահյուսած (Հակոբ Օշականի բնութագրումն է՝ Ս. Մ.) և իր սեփական ոճն ու զարդը ստեղծած Հովհ. Շիրազի մասին, վազվա սերունդն ինչո՞վ է հիշելու նրան. արդյո՞ք մենք ամեն ինչ արել կամ անում ենք Հայաստանում ու Ափյուռքում սերունդներին նրանով գաստարակելու և մեր ազգի գլխին կախված արդի տարածունյթ վտանգները կանխելու համար: 24՝ որ Խորհրդային Հայաստանն օտարաշունչ ու օտարահունչ տեղանունների ժանգից մաքրած, մեր անձնանունները հայացրած, 1960-ականների զարթոնքի և 80-ականների արցախյան պահանջատրություն ու հերոսամարտ սերունդների գաղափարական առաջնորդ Հովհ. Շիրազի պտղագամախոտությունը հայության համար կենսական անհրաժեշտություն է և արքայական պարտազիր հրաման՝ անվերապահ կատարման ենթակա: Իսկ նա

բանաստեղծության իրական արքա էր, ժողովրդի՝ թաղազրած պոետների արքան, որը երբեք չգործածվ արքաների պոետ:

Իրականում ազգայնահայ բանաստեղծն ապրեց բոլոր սրբացված նահատակների վարքով կրելով նույնիսկ ավելի ծանր չարաբանքներ ու նվաստացումներ, քան Հնում հանուն հավատի ու գաղափարի մարտիրոսված ու սրբացված նահատակ՝ վկաները, մարեց իր կոչմանն ու սրբազան իդճերին, հայության ու ողջ մարդկության արդարություն, խաղաղության երազանքին հավատարիմ՝ երբեք չմտածելով վայելքի, փառքի ու բարեկեցության մասին:

Այո՛, նա համաշխարհային մեծ քնարերգու էր՝ շոալյորեն օժտված նաև էպիկական ու դրամատիկական արգասարք մերքերով: Կարող էր շափածո վիպիկ Արևելքի ու Արևմուտքի մեծերի՝ Հոմերոսի ու Ֆիրդուսու, Բայրոնի ու Պուշկինի, Արգոյանի ու Թուժանյանի, Վարուժանի ու Զարեհի նման: «Միամանկա և իջեզարե» (պատահական չէին նրա բննագրության ու կինոնկարահանման փորձերը), «Աիրանանե», «Տիգրան Մեծի վիշաք և հավերժությունը», «Հայոց դանթեականը», «Անի» և զոռես անտիպ «Թոնդրակեցիներ» պոեմները հիմք են տալիս ստեղծելու, որ նա նույնպես Հովհ. Թուժանյանի նման «հոգով և էությունը գրամատուրգ բանաստեղծ» էր:

Մեր զեղարվեստական մտքի բոլոր զբոսորումների հնազրական ազգակցությունը կապված՝ մեր միջնադարյան տաղերգության ու ժողովրդագուսանական բանաստեղծության, նոր ու նորագույն գասական քնարերգության ազնիվ շարունակությունն էր Հովհ. Շիրազը և բոլորից առանձնանում էր իր ինքնատիպության պատկերավոր մտածողության բացառիկ ուժով և երևակայության հզոր թռիչքներով: Նրա ստեղծագործությունն իր խորապես արդիական բովանդակությամբ ու փիլիսոփայական խոր ենթաշխրտերով, անսպասելի գյուտերի առատությամբ, քնարական նրբազեղությամբ, էպիկական հզոր շեշտադրումներով, բարդ շարունակներով ու զեղարվեստական այլ յուրահատուկություններով անգնահատելի ազգային արժեք է:

Հայն էր այդ բանաստեղծի մտահորիզոնը, անպարփակ ու անպարագրելի՝ տեսողաչառ, իսկ ստեղծագործությունը Հայության օրհանգիսի Հարցերի Հետ միասին ընդգրկում էր «քաղցած մրջնի Հոտաշանքից» մինչև Համաշխարհային վիշտը, մինչև մարդու խորանգույն ներաշխարհի տարրեր ծայքերի ու ենթաշխարհերի բացահայտումները, մինչև «մաքի ձեռքով» բնություն ու տիեզերքի վերին զազանիքների խորաթափանց արծարծումները:

Այս ամենի Հետ միասին՝ նա կյանքը նորոգող ու վերարձարձող Հայփրանական գարունների, սիրո բազմերանգ զգացմունքի, մայրական ու Հայրական սիրո, Հայրենիքի սիրո, Հայոց մեծ ողբերգության ու արգար պահանջատիրության, բոլոր ազգերին անհրաժեշտ խաղաղության, մարդկային փոխըմբռնման ու Համերաշխության, բնություն գեղեցկությունների ու մարդկային վսեմ առաքինությունների, ազնիվ տենչերի անմրցելի երգիչն էր.

Ժայռից ջրվեժը փչրվում է ցած,
Անդնում մահով կապում ծիածան.
Քանի որ կյանքս մի վայրկյան է լուկ
Եվ իմ դեմ աշխարհն՝ Հավիտական,
Մի բան է տենչում սիրտս անանոթ՝
Քնկուզ մի վայրկյան լինել ծիածան,
Որ ծայրինծայր աշխարհը զրկեր
Ու գեղեցկությամբ աշխարհը լցնեք
Քնկուզ մի վայրկյան,
Քնկուզ մի վայրկյան...

Անձնավորված այս բնագրականորեն ներկայացվում է մարդասեր Հեղինակի Համամարդկային բուռն ձգտումը: Այո՛, ճիշտ ու ճիշտ իր պատկերած ծրածանակամար բնական գեղեցկությամբ աշխարհը զրկող, ինքնամոռաց զոհարերումով ժայռերի գլխից անդուռողը նեոգոմ է նույն այդ անդնդի վրա Հանձարեղ ու Հավերժ մի վայրկյան իր մահով ծրածան կապող, աշխարհը գեղեցկությամբ լցնող ջրվեժի նման էր Հովհ.

Շիրազ երևույթն ինքը, որի երկրաշին կյանքը չի սահմանափակվում միայն ծննդյան ու մահվան շոր թվականներով:

Որպես բանաստեղծ՝ նա մեափորվել է Հայ և Համաշխարհային գեղարվեստական խոսքի զարգացման ողջ անցյալի փորձով ու գրական ավանդներով, և ինքն էլ ստեղծել է նոր զպրոց ու կենսունակ ավանդներ, որոնք շարունակվելու և զարգացվելու են գրական նոր սերունդների կողմից: Այնպես որ նա, թվում է, տարել է ոչ միայն 20-րդ դարում, այլև նրանից շատ ու շատ ժամանակներ առաջ և իր գեղարվեստական մտաւնաթելությամբ ու ստեղծած ավանդներով Հաստատագրես ապրելու է նաև զայրերներով:

Բանաստեղծ ծնվում կամ դառնում են որոշակի ժամանակներում ու Հանդամանքներում: Իսկ այն կենսապայմանները, որոնցում աշխարհ եկավ Օնիկ Կարապետյանը, մեզմ առած, այնքան էլ «բանաստեղծական» չէին: Եղեաւի ահափոր տարիներ, արևմտահայ սովահար գաղթականներով ու որբերով լեցուն խղճուկ Արևելյան Հայաստան պատերազմական վիճակում, վեց տարեկանում՝ Հոր կորուստ, զժպարագույն մանկություն, որբանոց, գոյատևման մաքառում այդ Հակացություն ամենաընդգրկուն իմաստով...

Եվ միխիթարականն այն է, որ այս գեղեցում «ձվազողը չգարձով մի չար ձրագող», այլ «բարձրագահ բանաստեղծ», որին Հանրությունը ճանաչում է 1930-ական թվականներից ի վեր, բանաստեղծ, որի Հայտնությունը մեծագույն բարերախտություն ու պատմական անհրաժեշտություն էր եղեռնազարկ եղած և անզամ գրանից Հետո Հարություն առած, բայց աշխարհի լայնքով ու երկայնքով սփռված Համայն Հայության Համար:

Բայց Հովհ. Շիրազը ազգային պատկանելություններից՝ Հայ լինելուց անկախ էլ մեծ բանաստեղծ էր, ինչպես բոլոր ժամանակներում քերթողական արվեստին ազնվորեն ծառայած բոլոր իրական մեծություններն ու մեծ մարդասերները ամբողջ աշխարհում: Այն երջանիկ-դժբախտներից էր նա, որոնց մտածողության ու նկարագրի վրա ամենազոր ժամանակը թեև որոշ

չնչին ազդեցութիւն ունեցել է, սակայն իշխանութիւն բնալ չի ունեցել, ընդհակառակը, Համազգային ու Համամարդկային իղձերի այդ արտահայտիչները թեև իրենց ժամանակում ազդում են զժողովին կյանքով, բայց Հենց նրանք են իրենց բարձրաբովեստ ու մնայուն սանդղազործութիւններով դառնում Հոգևոր Հայ ու սերունդների առաջնորդ, իրենց վարքով ու ազդանվեր գործով իմաստավորում, բովանդակավորում են նույն այդ ժամանակն ու ազգում նրա վրա, բերողում նրա գեները:

Հովհ. Երրազ Մարզն ու Բանաստեղծը ներգաշնակ միասնութիւն էին. բանաստեղծութիւնը բխում էր նրա մարդկային էութիւնէն: Իսկ կենսակերպը, մարդկային նկարագրին ու վարքագիծը թելադրում էր նրա մեջ ապրող Հաննաբը նորին մեծութիւն Բանաստեղծը: Իր մյուս ժամանակակիցների պես կարող էր ապրել նոխութիւնն ու շքեղութիւնն մեջ, արժանանալ պետականորեն Հովանավորող փառքի, բայց շարեց զրա Համար պահանջվող գիշումները և չօգտվեց այդ Հնարավորութիւնից: Ուրիշներին ծաղրում էր մարդկային այդօրինակ թուլութիւններին Համար: Շատերին էր անառաղանդ անվանում, բայց Համար նրանից կլսեիր, թե՛ այսինչը կամ այնինչը Հաստատ անառաղանդ չէին, բայց գիտե՛ս ինչու ժողովրդի բանաստեղծը չհարձան, որովհետեւ պաշտօնի և պնտի՛ն ձգտեցին, իրենց կապեցին պետական կերակրամանին և ճոխ ու շքեղ ապրեցին, իսկ նոխութիւնը բանաստեղծութիւնն մեծագույն թշնամին է...

Հասարակ ու ժուժկալ, սակավապետ ու գրեթե գերվիշային կյանքով ապրած այդ Հոգր անՀատականութիւնը, մեծ բանաստեղծ լինելով, մեծագույն քաղաքագետ էր նաև, Հայրենասիրութիւնն ու ազգանվիրութիւնն բարձրագույն օրինակ:

Իմ մայր ազգին թեկուզ ինքս ծար պես ծնած լինեի,
Ասովամային ամբոսների կաթով սնած լինեի,
Ե՛ս լինեի թեկուզ ծնած անձա՛նութիւնն իմ Հայոց, —
Էլի պիտի պարտք մնայի, թեկուզ Ասոված լինեի:

Ուներ սեփական մեծութիւնն Հօտակ գիտակցութիւնն.

Հազար տարի Հնոս էլ դեռ դու գալիք ես անլուս, —

մարգարեանում էր բանաստեղծը: Ու երբ այսօր՝ նրա մահից տասնամյակներ անց, Հայացք ենք նետում Հայ մարդու նրա՛ տեսակին, մարդկային նրա՛ նկարագրին ու քաղաքացիական կեցվածքին, ճշմարիտ բանաստեղծական խառնվածքին ու թողած իրք գիթիտարի գրական ժառանգութիւնը և մանավանդ Հայաստանի և Միջուռքի Հայ երիտասարդութիւնն ուղղված պատգամախոսութիւնը, կրկին ու վերստին Հատկվում ենք, որ նա արդիական է աշխարհի բոլոր մեծերի պես: Ավելին՝ նա իր ստեղծած մնայուն արժեքներով Հենց այսօրվա բանաստեղծն է և Հայուն Հայաստանի արժապիտ անցյալի, սուղնապներով ու մաքառումներով բնորոշվող ներկայի մեծ երգիչը և ըզձաշատ գալիքի գերազնիվ պատգամախոսը:

Դասական Հայ քնարերգութիւնն այդ ազնիվ երակը ինքնաճանաչման արյուն, Հարսեման կամք, ալյուն ու կենսահայտ էր ներարքիւմ Հայութիւնն նոր սերունդներին, Հաննաբը կանխատեսութիւնն անցյալի ու ներկայի մեջ տեսնում գարգացման ուղիներն ու գալիքի Հեռանկարները: Հայ - թուրքական Հարաբերութիւններին և Հայոց մեծ եղեռնի Համաշխարհային ճանաչման անՀրաժեշտութիւնն մազին տասնամյակներ առաջ նրա ալյում բնորոշումներն այսօր էլ ամենաարդիական բանաձևի արժեք ունեն և ուղեցույց պիտի լինեն այդ խնդրով գրազվող Հայ և ոչ Հայ քաղաքական ու պետական գործիչներին Համար: Ունե՛նք այսօր արդյոք ավելի արդիական ու նաև, ցավօք, չհնացող, քաղաքականութիւնն մեջ ավելի Հտակ կողմնորոշող բանաձև, քան շիրազյան Հետեյալ պատկերավոր արտահայտութիւնն է.

Թուրքն Հայի արնից մեռեցրը Հանում,
Աստուս սրբունքի մեջ է լվանում,
Սրբում սրբիւ՛ով ազգերի տված,
Յնծում լուռութիւնը նրանց սնատված...

Հտակ գիտեր, որ ինքը Ե. Չարենցից Հնոս նոր սկիզբ է ու շարունակութիւն: Ազգային նկարագիր, ոգի ու մտածողու-

թյունն ձևավորող այդ բացատրի անհատականությունը հենց ինքն իրավունք ունեն իր բանաստեղծական հայտնությունը բնութագրելու հետևյալ քառյակով.

Աշխարհ եկա՝ հայոց երգի կանթիկները մտք տեսա,
Նոր էր մտքի վերջին ջառը, ու վշտերը բար տեսա.-
Միաքս՝ դեպի Մասիսն ի վեր, սիրաբա՝ բուրբախտ արևի՝
Սիրտս դրի իմ երգի մեջ ու ջաները վառ տեսա...

Հովհ. Երրագի գրական մուտքի տարիներին՝ 1920 - 30-ական թվականներին, կատարվում էր զվարթին սերնդափոխություն: Տեղական մի քանի թափթփուկների ձեռքով Չարենցի ու Բակունցի պես հանճարներն ոչնչացրած պետական մեքենան, իբրև թե, շատ ուշացած հասկացալով, որ իր գեղակահարած կամ բանտերում ու արտարափայլերում տանջահար արած և ոչ լրիվ երկու տասնամյակ հետո «Հանցակազմի բացակայության պատճառով» հեռավառու արդարացրած գրական սերունդն անփոխարինելի էր, իսկ իր հովանավորած խեղճուկրակ ու մերն ի վիճակի չէին նրա դերը կատարելու: Չարերի ու դաժան ժամանակների պարտադրանքով մտքի էր «վերջին ևս հաժան ժամանակների պարտադրանքով մտքի էր «վերջին ևս հաժան պարհից հեռացվել ու ոչնչացվել էին գրական մեծ ճանապարհ անցած, դարի բանաստեղծական գեմքը բնորոշող եղբյն Չարենցն ու իր սերունդը:

Այս Հանգամանքներում էլ, հենց մեծերի՝ Ալ. Երվանդի գրի, Ավ. Իսահակյանի ու Ը. Չարենցի ներկայությամբ, իբրև նոր սերիզը՝ գրական աշխարհ Հաստատարայլ մուտք էր գործում Հովհաննես Երրագը, որին վիճակված էր կրելու հետախոնջյան շրջանի մեր նորագույն քնարերգության զարգացման բարդ ճանապարհի զվարությունները:

Նա, «սիրաբ երգի մեջ դրած», պատվով կատարեց իր պատճառական գիտն առաքելությունը: Որպես ճշմարիտ ժողովրդական բանաստեղծ և իր մեծ ու լուսավոր նախորդների արժանավոր հոգեծառանկ ու աղնիվ շարունակությունն իր հզոր քնարերգությունը նա ժողովրդի մեջ արգարացիորեն նվանց բարձրա-

գույն հեղինակություն՝ կանգնեց այդ մեծերի կողքին՝ և դարձավ Հուսայի կամուրջ նախորդների և Հաջորդների միջև:

Եվ սա ամենին էլ չափազանցություն կամ գերազանցատություն չէ: Մեր գրական միտքը, մանավանդ խորհրդային տարիներին, Հովհ. Երրագ երևույթի իր գնահատումներում, մեզմ ասած, եղել է զուտալ ու չափավոր, ափելի հանախ գրսեորի է և նահարկի ժատություն, իսկ քննադատելիս էլ ցուցաբերել է անտեղի շտապություն...

Բայց այն, որ Ալ. Երրանդագի, Ավ. Իսահակյանի, Վ. Ալազանի, Գ. Մահարու, Հ. Մահյանի, Գ. Սևակի, Ս. Խանդաղյանի նման ողջամիտներն են ըմբռնել ու արժևորել Հովհ. Երրագի պատմական ծառայությունը, այն, որ Արչակ Չուպույանի, Հակոբ Օշականի, Անդրանիկ Մատուչյանի, Լևոն-Չավին Սյուրմելյանի ու Վիլյամ Սարգսյանի նման մեծություններն են գնահատել Երրագին, այն, որ Ս. Ազարարյանի ու Հր. Թամբաղյանի պես քննադատներն են բարբերանել նրան (գեռ օտարների մասին չենք խոսում), ամենին էլ պատահական չէ: Իսկ այն, որ ժողովուրդը նրան իսկպան Վարպետ էր անվանում չչփոխելով Ավ. Իսահակյանի հետ, բացարձակ իրողություն է: Նման երևույթը, անկախ ոմանց քմահաճույթից, չէր կարող աննկատ ու անարձագանք մնալ, չէր կարող մնալ պետական քանոնով ու կարկինով զմլված շրջանակներում: Այն պիտի ի հեճուկ ոմանց գնահատվեր թե՛ իր ժամանակի մեջ և թե՛ նրանից դուրս, և գեռ նոր է սկսվելու Հովհ. Երրագին գնահատելու ժամանակը:

Բացի նրանից, որ մշտապես կար Հովհ. Թումանյանի ասած «տարակրի և անտաղանդություն հավիտենական կռիվը», կար նաև գրականության հանդեպ պետական ու կուսակցական աչառու քաղաքականությունը, գրականությունը պարտադիր պիտի լիներ կուսակցական, որը, մեզմ ասած, Հովհ. Երրագի և ազգային օգտին չէր: Նրա շուրջ ծավալված անիմառս վեճերն ամփոփելով՝ ուժ ուսուցիչը Երևանի պետական համալսարանի Հայ գրականության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Հր. Թամբաղյանը, պնդում էր և գրել էր. «Անողոր, բայց ի-

մաստուն ժամանակը խոսում է Հովհաննես Երրագի օգտին»։ Իսկ մեր վերջին գրույցների ժամանակ էլ, այն էլ ոչ մեկ ու միակ անգամ, ուղղակի ասում էր. «— Անկատար ծրագրեր շատ ունեմ, բայց ջգտում, ափսոսում եմ մեկի՝ Համար միայն. ես պարզաբ մնացի Հովհաննես Երրագին: Ծիշտ է, ժամանակին նրան պաշտպանել եմ կուպիտ ու անարդար Հարձակումներից և զրել եմ, իմ ու գրական ընկերներին կարծիքով, իրոք բնութագրական գիծանկար, սակայն այդ զարմանահարշ բանաստեղծի մասին իմ գիրքը զեռ չեմ զրել, ինչպես զրել եմ Թուժամյանի, Սիւսանյանի, Տերյանի ու Ջարենցի մասին: Դա արգեն լինելու է քո օրբողան պարտականությունը. դու է պիտի խոր գիտականությունը զրեն քո աշխույժ ու կենդանի գիրքը նրա մասին՝ օգտագործելով մեր, զոնն ինձ Հայտնի, տասնամյակների՝ մտերմության, կենդանի գրական կյանքում բազմաթիվ Հանգրիպումների ու գրույցների սպաղորտությունների Հարուստ պաշարները...»:

Հովհ. Երրագից ու Հր. Թամրազյանից Հետո մյուս սիրելի ուսուցիչս ՀՍԽՀ ԳԱ գրեականության ինստիտուտի երբեմնի անօրեն, «Բանբեր Երևանի Համալսարանի» Հանգեսի գլխավոր խմբագիր ակադեմիկոս Էդ. Զրբաշյանն էր: Նա, մեծ տեսքան և Հատկապես Թուժամյանի, Տերյանի ու Ջարենցի սիրահար լինելով, ինձ և շատերի Համար զարմանայի, միշտ վերապահությունը էր արտահայտվում արևելահայ մյուս քնարերգուների ու Հասկապես Ավ. Իսահակյանի ու Հովհ. Երրագի մասին: 1975-ին՝ Վարպետի ծննդյան 100-ամյակի տոնակատարության օրերին բուռն բանավեճերից Հետո նա փոխեց ու որոշակիացրեց իր վերաբերմունքը Ավ. Իսահակյանի նկատմամբ զրելով նրա քնարական Հերոսի և «Աբու-Լալա Մահարի» պոեմի մասին նախ «Բանբեր Երևանի Համալսարանի» Հանգեսում, ապա իր «Չորս գագաթ» գրքում Հրատարակված երկու լավագույն ուսումնասիրությունները: Առհասարակ Հավասարակշիռ, բարեկիրթ այդ մարդն ու գրեականագետ Հովհ. Երրագի մասին սովորաբար զուսպ էր արտահայտվում, բայց նկատի ունենալով նրա բազմանգամ ընտանիքի գծվարին կենսապայ-

մանները՝ Համակրում էր այն աստիճան, որ նույնիսկ պատրաստվում էր գրավոր դիմումով Հանուն նրա Հրամարվել իր ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս ընտրվելուց¹: Նրա այդ քայլը ակադեմիայում կասեցրել էին Համոզելով, թե՛ Հովհ. Երրագը, որպես մեծ բանաստեղծ, զուրս է մրցույթից, և նրա Համար առանձին ակադեմիկոսի տեղ է Հատկացվելու, որը, սակայն, այդպես էլ չկայացավ, սակայն իրականացվեց ուրիշ բանաստեղծների Համար...

Ակադեմիայի ընտրություններում Հովհ. Երրագն ունեցել է նաև այլ Համակիրներ, որոնցից էր ակադեմիկոս Մ. Ազալանը: Պահպանվել է ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովին 1982 թ. Հիվանդանոցի Հղած նրա նամակը, որի գրա կա և շիրաղյան այսօր սի մակարդություն. «Վաղամեծիկ ակադեմիկոսի աղերք գայություն է իմ և Սևակի մասին... Իմ մտքարթն օրս,— կասեր մեծ Համեաը,— տեղա սիրա իմ»: Այդ գրություն մե՛ջ իր գործընկերներին Հիշեցնելով, որ ակադեմիայի Հիմնադրման օրից նրա կազմում եղել են Հայ գրականության ականավոր ներկայացուցիչները՝ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Սա. Ջորայանը, ակադ. Մ. Ազալանը զրել է. «Վերջին տասնամյակներում մեր գրականության երախտավորները տեղ չեն գտնում ակադեմիայի կազմում: Այդպես չէ, սակայն, վիճակը մեր երկրի (ԽՍՀՄ-ի—Ս. Մ.) Հանրապետական մյուս ակադեմիաներում: Մենք այժմ փոստանքով ենք նշում, որ ժամանակին չկարողացանք տաղանդավոր բանաստեղծ Գարույր Սևակին ընդգրկել ակադեմիայի կազմում: Ես կարծում եմ, արտահայտած կլինեմ ակադեմիայի անդամների և ամբողջ ժողովրդի կարծիքը, եթե մեր ժամանակի մեծագույն բանաստեղծ Հովհաննես Երրագին նորից զինարկության զնենք և քնարենք ակադեմիայի կազմում: Դա պատվարեր գործ կլինի»:

¹ Պարզվում է այս մասին էջ Տրբաշյանը նաև ակադեմիայի գրականության ինստիտուտում է արտահայտվել, և դա վկայում է նաև ԵՊԳ Խայր լեզվի ամբիոնի ողորմու Աշուտ Տեր-Սիսայանը, որն այն ժամանակներում աշխատում էր գրականության ինստիտուտում:

Այնուհետև ակադեմիկոսը, որպես հիմնադրում վկայակոչելով Հովհ. Շիրազի մասին Ալ Շիրվանզադեի, Ավ. Բասահյանի, Մարիտաա Շահինյանի, ինչպես և ուր, ֆրանսիացի, իտալացի, չեխ, լեհ, պարսիկ, արաբ, վրացի գրողների ու թարգմանիչների հույժ գրական կարիքները, ընդգծում է, որ «Շիրազը խոսում է համերժական ժամանակի ճայնով, ինչպես Չարենցն էր ասում «Մշտահայրով, մշտագո, մշտատև»: Ակադեմիկոսն իր նամակն ավարտել է այսպես. «Եկեք ուրեմն, Հարգելի ընկերներ, այդ միշտ զոդանջող ու մեզ արթննու պահ չիրազյան երգը, որ մեր ժողովրդի խիզճն ու պատիվն է, Հարգենք արժանվույն կերպով: Խնդրում եմ նամակ գնել ՀՍՍՀ ակադեմիայի ընդհանուր ժողովի քննարկմանը:

Հարգանքներով ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մատուր Ազաջան
20. 01. 1982 թ., հիվանդանոցից»:

Այս նամակն էլ, պարզվում է, որևէ ազդեցություն չի ունեցել խորհրդային ժամանակների գիտությունների ակադեմիայի վրա, որը զեռնու ազգային էջը էլ կոչվում է Գ. Սևակի ու Հովհ. Շիրազի նման բանաստեղծների անկողն էլ էր...

Հովհ. Շիրազը հրաշայի գիտեր ակադեմիական ընտրություններում իր և Գ. Սևակի «ձախողումների» բուն պատճառը, գիտեր իրական մեղավորներին, սակայն այնլի շատ մեղադրում էր քննադատներին: Ասում էր՝ անպաշտպան գրողներ ենք, իսկ քննադատները մեզ ինչպես հարկն է չեն ներկայացնում, «իմ սարերը թողած՝ ուրիշների ձորերը կգովեն»: Այսպես զգոճել էր գրականագետ Զավեն Ավետիսյանից մի բանաստեղծի մասին նրա ասած հոգովածը կարգալուց հետո:

1976 թ. գրողների միություն 7-րդ Համագումարում էլ Հովհ. Շիրազն իր ելույթում խիստ զգոճել է քննադատներից (բարեխառտար նրա ելույթի ճայնագրությունը պահպանվել է): «Խ՛ւր է մեր քննադատությունը: Գննադատներ միտքը, նրա սիրտը, ողնաշարի ուղեղի նպատակն այն է, որ նա պետք է պատպանի կենդանի գրողներին»:

Կարգացած լինելով էդ. Զրբաշյանի՝ Հովհ. Թումանյանին և Մրաաք Մեծարենցին նվիրված ուսումնասիրությունների հա-

տորները՝ Հովհ. Շիրազը Համահրանքով էր արտահայտվում նրա մասին: 1983 թ. սեպտեմբերի 23-ին, երբ նույն մեքենայով վերադառնում էինք Արազյուղում կայացած Հանդիպումից, ասացի, որ էդ. Զրբաշյանի մենդյան 60-ամյակն է, և խնդրեցի նախ ինձ իջեցնել Կոնդում Հորեյարի տան մոտ, Հովհ. Շիրազն ասաց.

— Էդիկին չասես, թե մենք միասին ենք եղել, որ իմանա՝ հասել եմ իր տան մոտ ու ներս չեմ մտել՝ շնորհավորելու, Հաստատ կենդանա, սակայն չափազանց Հոգնած եմ, ի վիճակի չեմ գալու: Խաթիրն Համար իմ ջերմաջերմ շնորհավորանքները Հաղորդել նրան: Ասա՝ Շիրազը Հոգնած էր, միայն այդ պատճառով չեկավ:

— Արդեն գիտի, որ միասին ենք, և ուշանալու եմ:

Հորեյարին Հաղորդեցի Շիրազի շնորհավորանքը, բայց նա էլ հենց ինձեից նեղացավ, թե՛ դ՛ու ես մեղավոր, որ Շիրազը հասել է մեր դռան մոտ ու տուն չի մտել, եթե լավ պնդեիր, նա քեզ հետ կգար, գոնե քեզ չէր մերժի...

Բայց 1984 թ. փետրվարյան մի օր, սակայն, նույն էդ. Զրբաշյանը անակեկալ սուր ընդհարում էր ունեցել Հովհ. Շիրազի հետ: Համապատասխանաբար եկավ մայրահեղ վերջոված ու այլայլված այնքան, որ, տեսնելով նրա այդ վիճակը, ինքս հարցրի՝ ի՞նչ է պատահել: Գիտեր մեր մտերմության աստիճանը և Հովհ. Շիրազից իր վերափորձություն մասին անմիջական տպավորություն էր և անկեղծ դառնությունը այսպես արտահայտեց.

— Ինչ առաջ փողոցում պատահարար գիտե՞ս ում եմ Հանդիպել՝ քո սիրելի բանաստեղծին: Ուրիշ ոչ մեկը չէր կարող ինձ այսպես զարթացնել ու դառնացնել: Այդպես էլ այդ մարդը չափի զգացում չուներցավ: Սկզբում Հանդիստ, խաղաղ, մարդավարի զրուցում էինք կյանքի ու գրականության մասին: Երգվում եմ իմ բոլոր սրբություններով՝ ես ոչ մի վերափորական խոսք չասացի նրան, բայց այդ տարորինակ մարդը, որի Համար ես ակադեմիայի ընտրություններում կոխվ էի տալիս, մեկ էլ անսպասելի բռնկվեց, իր խորին զգոճությունն ար-

առհասարակ ընդհանրապես գրականագետներից ու քննադատներից և մասնավորապես ինձնից:

— Էլ գլխա՞րդ Ջրբայան, բա մեզք չե՞ն իմ ու քո պաշտելի Քուսմանյանը, Մեծարենցը, մեր մյուս գասականները, հզգքան ի՞նչ կբրբրեք էնոնց, արխիվիստ՝, ձեռագրեր՝, տեքստային տարբերակներ... Քննադատի, գրողական գոհունի ուժ, ազդանդ ուժիս, բայց, գոնե մի անգամ կենդանի Հանճարի վրա ուժդ փորձիր, որ խոսքդ արժեք ու կշիռ ունենա, իմանանք՝ ո՞վ ես դու: — Ահա այսպիսի կուպիս արտահայտություններից վերափոխելու և ծաղրելի ինձ, իսկ ես, նրա այդ մեծամտություններից պաշտաւոր, երեսին նայելի և անկեղծորեն ընդգամներ մի պարզ բան ասացի:

— Եվ դու առանց ամաչելու հանդիմու՞մ ես քեզ Համեմատել Քուսմանյանի հե՞տ: Այսքանն ընդամենը: Երգվում եմ ուրիշ ոչինչ չեմ ասել: Իսկ նա անամոթ մեծամտությամբ ի՞նչ պատասխանի լավ է: Նայեց երեսիս ու ասաց:

— Իյա՞, էգ ի՞նչ կրօսես, մեծն Քուսմանյանն այսօր ինձի հետ ապրել քեզի պես քննադատների միջավայրում ու բառանաւար ձեռ ստորագու՞ւռ (սնց էլ գայրկեանապա Հորինեց այդ բառը) վերաբերմունքին՝ կոշիկիցս հետ բանաստեղծ պիտի մտար...

— Իսկ դու, սիրելի՛ս, այսպիսի ամբարտաճան ու անպարկեշտ մեծամտին լուրջ մարդու տեղ ես դնում...

Անակնկալից շփոթված, ինքս էլ չզգալով թե ինչպիսի ընդամենը մի լուրջ Հարց» էլ ես ավի նրան:

— Դա միայն Ձե՛ր կարծիքն է, թե՞՞ նաև պետություն...

Անպարկեշտ Հարցս, իհարկե, մնաց անպատասխան...

Օրեր անց բանաստեղծն ինքը Հաստատեց կատարվածը՝ բոլոր մանրամասների բառացի ճշգրտությունը:

Հովհ. Շիրազի հետ իմ վերջին Հանդիպումը կայացավ 1984 թ. մարտի 2-ին: Նա դուրս էր եկել Հրատարակչության տնօրենի՝ Հարություն Ֆելեքյանի (վերջինս էլ Ջրբայանից Հետո արդեն մի քանի տարի նաև «Իսմերի Երևանի Համալսարանի» Հանդեսի գլխավոր խմբագիրն էր) առանձնասենյակից, ես

զլավիտի բաժանմունքից: Աստիճաններով իջնում էի արդեն՝ նրան չնկատած: Ինքը տեսել էր ինձ ու վերևից ձայն ասեց:

— Մուրա՛ղյան (գարմացա, առաջին անգամ էր ինձ այդպես դիմում),— կանչեց ինձ աստիճանների գլխից,— երեկ «Քոնգրակեցիներ» պոեմիս մասին էլ ի՞նչ ես խոսել տնօրենի հետ, որ երեկվա Չարություն Ֆելեքյանն այսօր դարձել է Բարություն Ֆելեքյան: մեջը գու՞թ է արթնացել, երեի կուզե «Քոնգրակեցիներ» պոեմս էլ ապել:

— Շատ չէ, ասացի, երեկ, երբ միասին «Հայոց գանձակահար» պոեմից զուգաներից նախկին գեկավարություն և խմբագրի կրճատած ու «կորցրած» և իմ Հիշողություններ վերականգնած արձակ առաջարկները համեմատում էինք բերածը սեպտեմբերյանների հետ, զարմացավ, որ Հիշել եմ գրեթե բառացի ճշգրտությամբ և հետաքրքրվեց քո մյուս ձեռագրերով: Խոսեցինք Հատկապես «Անի» և «Քոնգրակեցիներ» պոեմներից մասին: Ընդամենը ասել եմ, որ նույն այս Հրատարակչությունը Չեզոքից տարիներ առաջ Շիրազի «Քոնգրակեցիներ» պոեմը ավել էր մի բանաստեղծի՝ սպազորության համար անկեղծելով նրա գրավոր գրական (զուցեց և բացասակա՞ն) կարծիքը, իսկ ես, մերժելով Շիրազի պոեմը, Հետո Հրատարակեց նույն «Քոնգրակեցիներ» վերնագրով իր պոեմը...

— Էլ զ մեկը գիտե՞մ,— ասաց տարեկը,— իսկ ինչպիսի՞ն է Շիրազի պոեմը, գոնե մի Հատված կարո՞ղ ես հիշել:

Ես էլ պոեմից միայն մի փոքրիկ Հատված եմ մտադ արտասանել

Կույս զպիս են, կույս էլ զն՝ում...

Կույսը պի՞ղծ է, երբ չի ծնում:

Այն էլ կույսը Հայոց ազգի,

Որ կարոտ է կովոր ըսակի...

— Ուրեմն՝ Հասկացել է... Ես էլ կրեմ՞ էս Ֆելեքն ինչօ՞ւ է ինձ հօր Հատուկ կանչել ու պոեմիս մասին կհարցնե: Հաստատա՞ քո բարի մատը խառն է եղել...

Գալանավորվեցինք, որ իր վերջնական նայելուց Հետո ես մի անգամ էլ ուշադիր կարգամ նաև «Քոնգրակեցիներ» պոե-

մի մեքենագրի մտորեցողքը, ինչպես «Հայոց դանթեականի» վերջին տարբերակն էի ժամանակին կարգացել հրատարակչությանը հանձնելուց առաջ:

Վերջին անգամ մարտի 7-ին էր մեր տուն հեռաձայնել և իմ տանը չլինելու պատճառով աղջկա՝ Անիի հետ էր խոսել.

«- Բալիկ ջան, Երբազ պապիկին է: Հայրիկիդ ասա՛ գա պոծմը վերցնի, իրեն կապահան»:

Մտածեցի՝ թող Մարտի 8-ի տունն անցնի՝ կզեամ կվերցնեմ: Ասկայն մարտի 9-ին արգեն բանաստեղծը կաթվածահար էր եղել...

Հիմանդանոցում էր, վիճակն՝ օրհասական, բայց փրկության թաղան հույս էինք փայտալուծ: Մտածեալ չէի կարող. Հակառակի պես հարբուխ ունեի այդ օրերին, ուստի հիվանդասենյակ չէի մտնում՝ վախենալով՝ կվնասեմ, հետո ինձ կմեղադրեն: Այդ օրհասական պահին՝ պիտի հիվանդանայի...

Ատում էին՝ ծայրահեղ վատ է վիճակը, չի խոսում, չի հազորակցում. ի՞նչ կարող էի անել: Երբ հիվանդասենյակի դուռ ուրիշների ելումուտի ժամանակ քայցում էր, երկար ու անզոր նայում էի տապալված արձիկն՝ ինձ զատապարտելով: Միայն հայացքով էր հասկացնում, որ ինձ տեսել է, ու ես ջանում էի հիշողությանս մեջ գրռոջմել նրա լուռ, արտասպասառն ու բազմախոս վերջին հայացքը...

Իմ և էլ Ջրբաշյանի միջև ստանությունը փարատվեց մարտի 14-ին: Ժամը 11-ին մոտ վախճանվել էր Հովհաննես Երբազը, և այդ բոթը առաջինը նա ինձ հայտնեց: Համապարան մտնելով՝ լուռ հանդիսավորությամբ, խոստ մոայլ զեմքով մտանցավ, իրեն բնորոշ անկեղծությամբ զրկեց ինձ, հարազատի պես համբուրեց և արցունքների միջից մխիթարելով ասաց.

- Երևի տեղյակ չես, ալլապես դու հիմա այտուց չէիր լինիքիչ առաջ մահացավ Հովհաննես Երբազը: Ես քեզ անկեղծորեն ցավակցում եմ, որովհետև համոզված եմ իմ բոլոր ծանոթներից ավելի շատ դու ես հիմա արժանի այսպիսի ցավակցության, այս պահին երևի դու ես աննեից խորն զգում Համազգային այդ մեծ կորստի արժեքը: Վերջին օրերին, մարդուն էլ

մի կողմ գրած, նորից կարգացել նրա բոլոր գրքերը, որ ժամանակին շեքմ մակագրությամբ ինձ էր նվիրել: Կարգացի և համոզվեցի, որ նա ճիշտ և իրավացի էր բոլոր հարցերում: Նա իրոք բնարուխ մեծ բանաստեղծ էր: Մենք արդար չեղանք նրա նկատմամբ, իրեն պատշանող վերաբերմունքի շարժանցքին... Մեր մեղքը դու պիտի քավես և պարտքը հատուցես...

Ես իրոք պարտք էի թե՛ Հովհ. Երբազին և թե՛ իմ ուսուցիչներին:

* * *

Շատերն են զրել Հովհաննես Երբազի մասին. զրականագիտական ծանրակշիռ ուսումնասիրություններից՝ մենագրություններից ու արձանորդ հոդվածներից, քննադատական հոյուզներին ու դիմանկարներից բացի, մահալամեղ հետմահու, լույս են տեսել մահախոսականներ, զանազան հուշեր, արձակ և չարձան զեղարվեստական պատումներ: Դրանցով մի կողմից հարստացավ շիրազագրությունը, մյուս կողմից հետմահու ծավալվեց ու վերարժարվեց Երբազ մարդու մասին համալուր ու գրավոր լեզնեղը: Երբեմնի հակառակորդներն ու մերժողներն անգամ նրա մահից հետո հանրությանը ներկայացան իրեն ճշմարիտ սիրողներ, երկրպագուներ ու բարեկամներ: Շատերն անկեղծ էին, բայց և կային «Գնա մեռիք՝ արի սիրեն» սկզբունքով գրվածներ: Անուղղելի շարժախոսներն էլ առանց անհարմար զգալու իրենց բնորոշ արտահայտություններ էին անում՝ մահվան լուրն առնելով. կարծես իրենք չէին մտնելու և ապրելիս էլ արգեն մեռած չէին... Բայց ահա Գեորգ Էմինը, Հենց Երբազի թաղման օրը, տեսնելով բանաստեղծի նկատմամբ Համաժողովրդական աննախազեղ սերը, անկեղծացավ ու ասաց.

- Տղերք, Հովհաննես Երբազն իր ողբության ժամանակ մեղ բուրբիս միտ իր սովորում թողեց, իսկ իր այս թաղումով էլ հետմահու սպանեց բոլորին: Ուրիշ ո՞վ պիտի արժանանա այսպիսի թաղման...

Ոճանք, բանաստեղծին սիրելով, իբրև ականատեսի իրական պատում են ներկայացրել նրա կյանքից այնպիսի դեպքեր ու զբվագներ, որոնց իրականում իրենք նույնիսկ ներկա էլ չեն եղել: Այդպիսին են, օրինակ «Միակողմանի» կամ «Անունը» զբվագները Մետաքսի Հուշագրքում: Ի դեպ, որպես կատարված դեպքի միակ վկա՝ ամենայն պատասխանատվությամբ հավաստում եմ, որ այդ Հտովածում ներկայացվածը խիստ թերի է և ազավազված: Հարգելի բանաստեղծուհին, որն այս դեպքում ականատես վկայազրոյ է, այլ՝ վերապատմող, հեռանալը ներկայացրել է առանց պատճառների, որնք նրան պարզապես չէին էլ կարող Հայանի լինել: Թող ընթերցողը ներողամտ լինի ոչ թե այս կրկնութիան, այլ հարկադիր այս պատումի Համար և Մետաքսի գրածին՝ Համեմատելով՝ ճանաչի բուն իրողությունը, որ ստորև ներկայացնում ենք անհրաժեշտաբար՝ առանց որևէ մեկի վերավորելու կամ նեղացնելու միտումնավորության:

Դեպքը պատահել է 1981 թվին՝ Հովհ. Շիրազի երկերի ծրագրված հինգ Հատորյակի առաջին Հատորի հրատարակվելուց անմիջապես հետո, երբ «Առվտական գրող» հրատարակչությունը տնօրենը Շիրազի մտերիմ ընկեր Գեորգ Նվարյանն էր, իսկ այդ Հատորի խմբագիրը Շիրազին իսկապես արժևորող բանաստեղծ Արտակ Ոսկանյանը: Պատմով նախատեսված էր, որ երկերի հինգ Հատորյակը պիտի հրատարակվեր Հովհ. Շիրազին պատշաճ 60 000 տպաքանակով: Բայց նշված տպաքանակով հնտագայում լույս տեսան 2-րդ, 3-րդ և 4-րդ Հատորները (հինգերորդ Հատորն այդպես էլ լույս չտեսավ), երբ արդեն տնօրենը Է. Ֆելեքյանն էր: Ի-ին Հատորը, որն ընդգրկում է Հովհ. Շիրազի բուն քնարերգությունն իր գրեթե լավագույն մասով, նախկին տնօրենը 60 000-ի փոխարեն տպագրել էր 20 000 տպաքանակով (Համեմատեք Ի-ին Հատորը մյուս Հատորների հետ և կհամոզվեք սա անհերքելի իրողություն է), իսկ մնացած 40 000-ի թղթով տպել էր իր վեպը, որն այն ժամանակվա

երիտասարդներից մեկը շտապել էր մամուլում ոչ ավել ոչ պակաս համեմատելու Դոստոևսկու վեպերի հետ...

Բանաստեղծը թիկունքից անպատեհի Հարված էր ստացել այն էլ Հարազատ ընկերոջից, որն իրեն շատ Հարցերում մարդկայնորեն օգնել էր, անդամ ավագ խմբագրի պաշտոնով աշխատանքի էր հրամանագրել հրատարակչությունում:

Ձեզ եմ դիմում, սիրելի՛ ընթերցողներ, Հովհ. Շիրազին իրավունք չունե՞ր վերավորելու և դժգոհելու այս երևույթից և իր իրական բարեկամից ու մանկութիան ընկերոջից, որն իրեն ոչ ընդորոչ արարք էր թույլ տվել ի վնաս Շիրազի: Ունե՞ր, իհարկե՞: Դժգոհել էր և անկեղծորեն արտահայտվել նաև մի քանի մտերիմ գրողների ներկայությամբ (Հակասակորդների ու թշնամիների մոտ իր ընկերների մասին երբեք չէր արտահայտվում): Նրանք էլ, տնօրենին դուր գալու համար, բամբասակ էին Շիրազից, թե՛ նա այսպես ու այսպես ասաց: Վերավորված տնօրենն էլ կանչել էր բանաստեղծին ու... լրջորեն կըլտամբել:

Գլավխաի՛ մամուլում պետական զաղտների պահպանության մարմնի՛ մեզ հսկող և տպագրության թույլատրող բաժանմունքը նույն հրատարակչության շնորհի 2-րդ Հարկում էր՝ 18-րդ սենյակում: Բամբոք երևանի Համայնարանի՞ պատասխանատու քարտուղարն էի այդ ժամանակ. գնացել էի՛ հետաքրքրվելու հանդեսի մամուլների ճակատագրով: Վերադարձին հենց միջանցքում հանդիպեցի տնօրենի առանձնատեսչակից զուրս կազմ այլայլված Հովհ. Շիրազին:

- Ի՛նչ եղավ էր, որ քեզի տեսա, թե չէ հիմի պիտի խելլունի:
- Քիչ խելյառ էիր՝ նո՛ւր պիտի խելլուես...
- Ձե՛, հիմի՛, հիմի՛: Տեսնի՛ս զը էդ տրանզիստորին ու իր ընկերներին: Գեորգն արարքի մասին արդարացի դժգոհել եմ մտանքը՝ մտերիմ կարծելով, բայց սրանք, խոսքերս իրենց երևակայությամբ Հարստացրած, տեղ են Հացքից: Երանի՛ ինչես էի ասել՝ է՛ն ասած լինեիր: Բայց դու տես մարդու էությունը: Էս Գեորգն էլ կանչել է, ինձի կրան՝ Հովհաննես Շիրազ, դու որ տղամարդավարի իմ դեմ հենց հիմա էլ ինձ Հայհոյես

² Տես Մետաքս, Գովհաննես Շիրազը՝ հմ ինչերում, «Ձագակ», եր., 2002, էջ 108:

քեզնեն չեմ նեղենա, բայց որ այդ մարդոց մտտ ես Հայհոյել, դա նախ վիրավորական պիտի լինի քեզ Համար, Հետո նոր՝ ինձ Համար... Բայց ես իսկապես չէի Հայհոյել: Ապառա, ստուած կանգնեցի ու մտաբերեցի, թե իրականում ես ի՞նչ եմ ասել:

— Գեւորգ, կեցի՛ր, ասացի, նեղանալու ի՞նչ կա, ես ընդամենը այնքան եմ ասել ու այսպես. ասարեւորութիւնները լուրջ քեզի բերողներին են: Ձայրացած ասացի, դուրս ելա ու Հիմի լամ է՝ քեզ Հանդիպեցի:

— Ձեռ խրատովում, էլի՛ր, ասացի, դու չգիտեի՛ր, որ քեզ շրջապատողները մեջ խոսք տանող — բերողներ կան, մարդկային էլ թուլութիւնը նրանք էլ ունեն, ինչո՞ւ ես նրանց մտա այդքան անկեղծացել:

— Ենչու չե՞ս ըստ, խոսք տանող են, Հըմը բերող չեն:

Չափազանց Հուզված էր: Փորձեցի Հանգստացնել ու տուն ուղեկցել: Բայց Հակառակի պես Հենց Հրատարակչութեան մտաակայքում տեսանք Տերյան փողոցով բարձրացող երեք գիւնովցած ընկերներին, որոնց մեջ էր և Հիշյալ անձը: «ԳաՀո՛, մտանցի, Հիմա որ փողոցում սրանց միջև կտիվ ու վեճ ծագի, ես ի՞նչ եմ անելու»: Սակայն բարեբախտաբար բանը կովի չՀասավ: Երբազը մի քիչ մեղմացել էր արդեն, բայց այնուամենայնիվ որոշեց ծագրով լուծել խնդիրը: Ներքուստ ուրախացա. կտիվը միայն խոսքով էր լինելու:

Տարածութիւնը կրճատվում էր, և անխուսափելի էր այդ երեքի Հետ դեմ առ դեմ Հանդիպումը:

— Կտեսի՞ս ովքեր կուզան:

— Տեսնում եմ, բայց Հետու են, Համ էլ դրանց չեմ հանաչում.— կցկատուր ասացի ես: Լավ էլ ճանաչում էի. սպասեցի, որ Երբազ ինքը արտահայտուի:

— Էն ձախ կողմից եկողն ո՞վ է, գիտե՞ս: Էղիկ Գարանակ Խոսկանյանն է (Արտակ Ոսկանյանն էր):

— Իսկ էն աջ կողմից եկողն ով է, գիտե՞ս:

— Ձեմ ճանաչում, ասացի, դարձյալ սպասելով, որ Կ. Հակոբյանին նույնպես բնորոշի:

— Հայաստանում Կարլեն անունով երեք գրող կա. մեկը Կարլեն Մուրադյանն է՝ նույն ինքը՝ Գեորգ Բեմինը (Էմինին նկատի ունիք), մյուսը մի քուրդ գրող է՝ Կարլենն Չաչանն, սա էլ Հայ գրող Կարլենն Հաչանն է:

... Արդեն մտտեցել էինք այնքան, որ Երբազը Թաթուլի օձիքը բռնեց.

— Մո միակողմանի՛ լրտես, էգ ի՞նչըդ է, որ լուրերը էս կողմն կտանիս, Հըմը էն կողմեն չես բերի:

— Գարուր Սևակն էսպիտի բան չէ՛ր անի.— ըմբոստանալով ուղեց Երբազին չեղել Թաթուլը:

— Աստվածաշո՞ւնչ էլ չես կարդացել. պատմիրանները չգիտե՞ս՝ Աստուռ անունը ամեն պատեհ-անպատեհ առիթով բերանդ մի՛ առնիր...

Դիմացինը խեղճացավ և Երբազի Հաջորդ՝ «Անունդ ի՞նչ է» Հարցին, խոնարհ պատասխան տվեց.

— Անունս Թաթուլ է, Վարպե՛ս:

— Թաթուլ անունդ ե՛ս եմ զրել, իշու ձագ, Հիշողութեան էլ չունիս: Դու Հիմի ճիշտն բան Հայրդ. քահանայի Հետ զաշնակցելով, ծխական մատյանի ու ծննդյան վկայականից մեջ ի՞նչ էին զրել անունդ:

— Ես ի՞նչ մեղք ունեմ, Վարպե՛ս, նորածին եմ եղել, առանց իմ կամքը Հարցնելու անունս Սովետ են զրած եղել:

— Անձեռմոխիքն անուն ունի, սրիկա՛, Հիմա որ քո մեծ Հայրենակցի՛՝ Տերյանի անվան փողոցում որ քեզի Հայհոյեմ, պիտի էրթաս էստեղ-էնտեղ բռնս, թե Երբազը սովետին կՀայհոյի, Հակաստովետական Հայհոյանք կուտար...

Երբ շփոթված տղաները առանց Հրատեղախ լուս Հեռացան, մնացինք երկուսով:

— Տեսա՛ր ինչ եղավ: Ախր ես էղոնց շատ կսիրեմ, իրենք էլ գիտեն, բայց իրենք էին մուսկաուտութիւն էրե, ու Հիմա էլ ոչ թե Աստված, այլ Սատանան դեմս բերեց Հսոնց, ես էլ զայրացած խոսեցի: Ախտո՛ս, մեղք էին տղերքը...

Երանի՛ Հսօր չՀանդիպիրեք...

Իրականում այս պատճառով ու այսպես է Հովհ. Շիրազը պատժել «միակողմանի լրտեսին»:

Բոլոր գնդաբերում, չնայած կիսատպուառությունը, Մետաքսն այս պատումը չի Հորինել, գուցեև Քանացի է մյուս Հերոսներին «խնայել», սակայն գոնե պահպանել է էականը: Առհասարակ նրա գիրքն արժեքավոր է ոչ միայն շիրազյան Հրատարակմանը, այլև Հրատարակչաների կուլիաների Հետևում կատարվածների, Հովհ. Շիրազի նկատմամբ գրողների միության ղեկավարների վերաբերմունքի և նրա գրչակիցների արարքների կարևոր բացահայտումներով: Այսպես Հանրությունն անհայտ պիտի մնային էդ. Քոֆչյանի, Գ. Էմինի ու մանավանդ Վ. Պետրոսյանի և Մ. Մարգարյանի տմարդի արարքները թե՛ Հովհ. Շիրազի ողջություն ժամանակ, թե՛ նրա մահից հետո:

Ոմանք բացահայտ էին գործում, ոմանք՝ թաքուն: Մի իբր թե շատ նուրբ բանաստեղծուհի էլ, որին Հասկանալի պատճառով մեկը ոչ ավել ոչ պակաս բնորոշեց որպես «աստղերից իջած կին», Հենց գրողների միության դահլիճում Հայտարարել էր, թե՛ «Այս Շիրազ կոչված խուլիգանին պետք է մարմնապես, ֆիզիկապես ոչնչացնել...»: Թեև դահլիճն աղմկել էր, բայց, ըստ ներկաների, նրան սաստելով ըմբոստացել էին միայն երեք հոգի՝ Սուրեն Աղարարյանը՝ թղթվելով ինչպե՛ս չեք ամաչում, սա Հո 37 թիվը չէ՞, Սարմենն էլ իր աթոռն էր չպրտել այդ ողևորված ընկերուհու վրա, նույնիսկ Աշոտ Գրաչին էր ընդ-վզել: Գրողների միության մի երկրորդ քարտուղար էլ մի անգամ բուռնությամբ Հարվածել ու ջարդել էր բանաստեղծի երկու ատամները, մի անգամ էլ ոտքով Հարվածելով կողոսկրն էր կտրել... Հովհ. Շիրազն ինքը այդ վայրենություն զեմ բողոքեց, բայց Հենց ինքը թույլ չտվեց, որ քրեական գործ Հարուցեն: Եվ սակայն Հենց այս մարդիկ էլ «արգարանում» էին ու տարանում, թե ո՞վ է Հայտնում Շիրազին որ, նա գիտմամբ է մտել Հայածված առարկայի կերպարի մեջ...

Մետաքսի վկայությամբ՝ Հայաստանի գրողների միության պլենումում Հիշյալ բանաստեղծուհու անգույս կոչը՝ Շիրազին ոչնչացնելու մասին, ափսո՛ս, ցավալի իրողություն է: Դա Հաստատվում է նաև ՀԿԿ Կենտկոմի բյուրոյին՝ Հովհ. Շիրազի մեակերպմամբ՝ «Հայաստանի գլխավոր ղեկավարությունից բյուրոյի խորհրդատուությանը» 1961 թ. նրա ուղղած դիմում— բողոքով:

Առաջին անգամ Հրատարակվող այդ նամակում կարդում ենք. «Ինչպես թուրքն է յաթաղանով պաշարել Անին՝ այդպես էլ գրողների միության պաշտոնական ոճմակը, խիստ ու խիստ գաղտնիությամբ, Քանում է Հասցնել ինքնասպանության... մահի: Այդ ոճմակի ջանքերով և մեր միջին «մեծերի» լուս ծափահարությամբ արդեն յոթը տարի է նոքա ինձինք ոչ մի նոր բան չեն ապել, բացի վերատուգմանց:

Այդ ոճմակի գաղանային մեղքով իմ դեմ զոցված են երկրի բոլոր ու բոլոր թերթերի դուները, արդեն յոթ տարի է գիմացել եմ դժոխային Հալածանքներին և գլուխ եմ Հանել ինքնապանության մույլ վիճանդեղից...

Բայց բաժակը, ահա, լցվում է, և խեղդում եմ՝ ինձ ու մեզ փրկեք զայդ Հավերժական սևաթույր խայտառակությունից. նույնիսկ խեղդված եմ նյութական թաղթաղուկում...:

Իմ դեմ այդ ոճմակը գաղափարական կոխի է մղում. ես Մասին եմ, ես ոչ... Մի ժողովում նույնիսկ մեկը բղավեց, թե պետք է Շիրազին ոչնչացնել նաև մարմնապես:

Հովհանես Շիրազ, —

Համաժողովրդական..... »³ (Ընդգծ.— Ս. Մ.):

Բանաստեղծը 17 կետից բաղկացած ելույթի նախագիծ կամ ըստ երևույթի գործունեության մի ծրագիր էր պատրաստել, թե առաջիկայում ինչով պիտի զբաղվի, իր որ երկի տպագրությունը խոչընդոտելու դեմ ինչ մեծանարկի, թշնամիների

³ Լամանը պահվում է բանաստեղծի ժառանգորդի մոտ — Ս. Ս.:

և գրչակների գրադարաններին ի՞նչ հակադարձի, երկրի ղեկավարներին հանդիպելիս ի՞նչ պիտի պատմի նրանց, ինչի՞ մասին պիտի խոսի և առաջնահերթ ի՞նչ պիտի անի:

Անշուշտ, անթվակիր այդ ծրագրի բոլոր այդ 17 կետերն էլ հետաքրքիր են բանաստեղծի շուրջն ասեղծված մթնոլորտն ու նրա մարդկային ապրումները պատկերացնելու համար, սակայն ընթերցողի ուշադրությունն առայժմ հրավիրում ենք միայն մի քանի կետերի վրա.

«8. Ինձ բոլոր սեզոնային գրկերը՝ կիրգիզական, զազախական, ապա տաջիկական, հետո ուկրաինական, ապա ուսուական գրական շարափներից ժտարվելու, բոլորը պատմել:

9. Ավելի զազախյին՝ նրբ մեռնում է այն կամ այն իմ գրչակիցը՝ իմ անուրը չէին դնում մահախոսականների տակ, որպեսզի ժողովրդի աչքից զցեն:

13. «Հայ գանթեականը» պոեմիս արգելումը Ստ. Վարդանյանի կողմից (Կենտկոմ), Կոմպոզիտորների միության զահչիտում իբր պիտի կատարվեր իմ ծննդյան օրվա նշումը: Աֆիշաները բոլոր պատերից հանվեցին լուսաղեմը դեռ չբացված (Էջ. Միրզոյանի ասածները հիշել...):

14. Էրերունուց էլ գրկեցին ինձ...

15. Նազուշ Հ-ի (Գերագույն սովետի գլխավորի) ինձ բերած ողջույնը Փարիզի 2000 - հայ գանդվածներին և իմ այցելության մասին խոսակցությունները և նրա երկրիմի պատասխանը:

16. Աքջային (Ղարա) և Նախնգլանի մասին, «Ղարաբաղի ողբ» պոեմիս ճակատագրի մասին. - խոսել մեր արգար գատից»:

Բանաստեղծին ամենից շատ մտահոգող կետերից մեկը Զ. րզն էր, որի վերաբերյալ հանտիս էր արտահայտվում.

«- Վերագորական է, անմարդկային: Ի՞նչ պատասխանեմ մարդոց իրավացի դժգոհությանը, թե ինչու՞ իմ անուրը այս-ինչի կամ այնինչի մահախոսականի տակ չկա: Գիտեն թե՛ ե՛ս չեմ ուզե, բայց չգիտեն, որ թաղման կառավարական հանձնաժողով կազմողը ես չեմ, որ անուրս ցավակցողների մեջ՝ դեմ: Կանսին՝ օ՛ ի՞նչպես են ինձ վերագորում ու մեկուսացնում...»

Մինչդեռ գոնե դու գիտես, որ Պարույրի մահով ինձնից շատ վշտացած ու ողբացող մեկը չկա»:

Բանաստեղծի նկատմամբ վերաբերմունքը նույնն էր մամուլի պետական կոմիտեում և պետհրատում: Իրենց կուսուներս երևակայող ղեկավարներ կային, որ ազատամտությունն ու բանաստեղծներին և մանկավանդ Հովհ. Շիրազին Հայածում էին մարքսիզմ-լենինիզմի դրոշով: Իրենք էին որ կային: Այդպիսի ղեկավարներ ո՛չ Բաքուն ուներ, ո՛չ Մոսկվան, ոչ էլ միտթեմական մյուս հանրապետությունները: Ազգային գրական ու գիտական արժեքներ, այդ թվում և Հովհ. Շիրազի ստեղծագործությունների ճակատագրեր նրանք էին գնում: Իհարկե, կային նաև այնպիսիները, որոնք դժվարություններ էին համատեղում ազգային մտածողությանը հայ մարդուն և խորհրդային կոմունիստ պաշտոնյային, բայց, ի վերջո, նրանք էլ ենթարկվում էին վերին հրահանգներին: Իսկ եթե ոմանք ինքնարդարացման կամ հետին թվով բարեկամ ձեռնալու մարմաջով (իսկ այդպիսիք բավական շատ կան այսօրվա թոշակատուների մեջ) նույնիսկ իրողությունը փորձեն հերքել կամ կասկածի մատենել, ապա մեր սասածը հաստատող պատմաթիվ պահպանված վավերագրեր կան, որոնք կարող են պատկերացում տալ բանաստեղծի շուրջ ձեռագրված մթնոլորտի մասին: Բանը հասել էր նրան, որ Հովհ. Շիրազին խմբագրում կամ հրատարակում էին Հեղինակից գաղտնի, լավագույն ղեպքում վերատպում էին արդեն հայտնի ստեղծագործությունները և հայտարարում, թե Շիրազն իրեն սպառել է, այլևս նոր գործեր չի գրում և զբաղված է ինքնակրկիտությամբ: Մինչդեռ պարզվում է, որ 1972 թ. պետական պլանից հանել են նրա բոլոր գործերը, 1974 թ. արդեն շարված և էջկապած «Քենար Հայաստանի» երրորդ գրքից, անխնա կրճատումներից բացի, հանել են շուրջ 100 բանաստեղծություն և ծախսն էլ բռնազանձել Հեղինակից: Ողջամիտ ընթերցողին ենք ներկայացնում մի վավերագիր.

«Կենտկոմի գլխավոր ղեկավարին
Դիմում - բողոք

Ահա այն բանաստեղծություններս, որոնք իբրև փշոտ արհիվներ՝ լայն անդամներ են գրգռելու: — Եթե այս անփուշ իմ վարդերը չկարողացրեք վերադնել գրքիս մեջ, — ես էլի կրողդեմ՝ մեղմից էլ բարձր բարձունքի՝ խղճի առջև դնելով սույն այս իմ հայրենապաշտի երգերս: — Առանց սրանց ես գիրք չեմ տա աշխարհին:

2. Երբազ (ստորագրություն)

2. Գ. Բանաստեղծություններս հանված են զազանի կերպով խմբագրի և պետհրատի կողմից, բայց բունեցի...»:

Նույն իրավիճակը շարունակվել է և հետագայում՝ 1977 թ.: Գլխավոր խմբագիրը Հովհ. Երբազի խմբագրվող գրքի անվանաթերթին արել է հետևյալ մակագրությունը.

«Ընկ. Լ. Արազյանին

Խնդրում եմ խմբագրել բայց հեղինակից ... զազանի:

Մովսիս՝ 15. 0 մ.

10. 05. 77 Ստորագրություն»:

Իսկ թե ինչ զազանիքներ են պարունակում Հովհ. Երբազի մնացած շուրջ 4000 նամակները, ջուրջ կտա դրանց հանգամանակից ուսումնասիրությունը:

Դեռ այն օրերին Հայանի էր, որ Վ. Գևորգյանը Հովհ. Երբազի մահվան օրը՝ 1984 թ. մարտի 14-ի գիշերը՝ ժամը 4-ին, գնացել է Հիվանդանոց, իսկ ցերեկը՝ հոգեհանգստից առաջ, գնացել է Կենտրոն, ամեն ինչը զործադրել Հայոց մեծերի պալատում Հովհ. Երբազի հուղարկավորությունը խափանելու և Թոխմախի գերեզմանատանը կազմակերպելու «Հատուկ առաքելություն»:

Թափանքը մասնակցելու համար ոտքով երևան եկած 600 վերաբորված գյուղացիների նույնիսկ պահանջում էին Գյուլմարի տանը բանաստեղծի աճյունը: Ընդ Կենտրոնի առաջին քաղաքապետ Կ. Դեմիրճյանը, սակայն, որ այդ օրերին բուժվում էր Մոսկվայում, իմանալով իրավիճակը՝ պնդել էր, որ Հովհ. Երբազի տեղը Կոմիտասի այգու՝ Հայոց մեծերի պալատում է՝ Կոմիտասի, Երբովանդազի, Ավ. Իսահակյանի ու մյուս մեծերի

կողքին, և ինքն էլ անձամբ կզա ու կկազմակերպել հուղարկավորությունը: Իսկապես էլ, ընդհատելով Մոսկվայում իր բուժումը՝ նա եկավ ու կազմակերպեց նախադեպը չունեցած այդ թաղումը, ինքն էլ մյուսների հետ ուսամբարձ դուրս բերեց Հովհ. Երբազի դագաղը Օպերայից, դրեց սպա հանդերձանքով ու ծաղիկներով զարդարված իր շքեղ մեքենայի վրա, որ արամադրել էր նախապես, և ինքն էլ ուղեկցեց Գանձեռն՝:

Շատերը, հիմնականում մերձգրտական մարդիկ, շատ բան հորինել են, հուշագրելիս պարզապես չեն ունեցել Երբովանդազի, Եր. Օսյանի, Ավ. Իսահակյանի, Ստ. Զորյանի, Հակոբ Սի-



Պոլի. Երբազի ջիւղարկման օրը: Երբազի խմբագրված գրքերը և թափանցիկ խափանքները

րուևու, Թեոդիկի արդարամտությունն ու ազնիվ օրագրողի բարեխիղճ անկողմնակալությունը: Եր. Օսյանի՝ «այս մասին

* Տես Սեսարյանի վախճանը (կա ինչպե՞ս գրում, էջ 66):
Բազմոյցյան պատմելը ճշդբան մի խումբ գրողներ կանոնում էին մտնել Օպերա՝ Երբազին հրահանջ տալու: Կարգապահ ոստիկաններին երբ բացատրեցին, թե ինչն էր գրողներն են, խնդրում են տանց հեղթի խողմն, հսկող ոստիկանները գեթե միաբանապես ասացին. «Գրողը Երբազն էր մնալ: Դուք ո՞վ եք»:

կուզեմ բացարձակապես անկեղծ ըլլալ» սկզբունքը «մոռացած» Հոգու ա իրենց թույլ են տվել փաստական ու ժամանակագրական կուպու սխալներ, Հովհ. Շիրազի մասին իրենց պատուհը ծանրարեւոնել ավելորդ, կենցաղային ու երկրորդական, գրականության Համար որևէ Հետաքրքրություն չունենցող մանրամասներով, որոնց մեջ ավելի շատ իրենք են ներկայացված, քան Շիրազը, իրական գեղարվեստի խառնել են երևակայածն ու ցանկային՝ այդպիսով ավելացնելով կասկածելին և կամա թե ակամա նվազեցնելով իրենց խոսքի կշիռն ու արժանահավաստությունը:

Այդպիսի խառնաշփոթություններով, որինակ, առատ է բաժնատանգը մանկության ընկերներից ու իրական մտերմներից մեկի՝ Ն. Գալստյանի (Մշեցի) հուշագրերը՝ Նիկար Բարսեղյանի Հանձնարարականով ու խմբագրությունը: Ընչա է, որ Հովհ. Շիրազը խորագույն Հարգանք ուներ մանկության ժամանակների Լենինականի «Խուժանի որբանոցի» իր ընկերների ու նաև Ն. Գալստյանի նկատմամբ, Երևանում և տարբեր վայրերում իր Հնա կայացած գրական միջնորդություններին երբևի՜մ Հրապիրտն էր նրան, պատվում ու մեծարում՝ որպես որբ մանկության տարիների իր ընկերոջ, բայց Հովհ. Շիրազի «Մի փնտուր իմ արժիվ կյանքից» գրքի վերնագրի նմանոգությունը ստեղծված նրա «Մի փնտուր արժիվ կյանքից» Հուշագրերը՝ շատ կարճոր տեղեկություններով Հանդիման, ցամաք, պարունակում է փաստական սխալներ, անճշտություններ ու աչքի է ընկնում ավելորդ շեղումներով և մտքի ծայրահեղ անհե-

տեղողականությամբ: Դրանց բնույթը պատկերացնելու Համար նշենք գոնե մեկը:

Հեղինակ Ն. Մշեցին, բանաստեղծի ու Մուշեղ Նարյանի Հնա միասին Գյումրուց վերադառնալով, մասնակցել է Հուշահավոր գերասան Հրաչյա Ներսիսյանի թաղմանն ու գրանից Հնաո գնացել է Հովհ. Շիրազի տուն, և նրանց միջև իրր ծավալվել է Հետևյալ գրույցը.

«- Թաղցի՛ր,- Հարցրել է Հ. Շիրազը,- և Հետևել է պատասխանը.

- Այո՛, բեկված ձայնով ասացի ևս, խաղազությունն նրա շիրմին: Ներս մտան Մասին ու Սիրիանը՝ այդ անմեղ գտնուկները, ընդհատվեց մեր գրույցը»⁵(ընդգծ.- Մ. Մ.):

Այդպիսի չկայացած «գրույցի», անկեղծ ստան, չեմ ուզում և չեմ էլ կարող Հ ավատուլ, որովհետև բուրբիղ Հնա միասին ևս էլ գրեմե, որ Հայ բնի մեծ վարպետ Հրաչյա Ներսիսյանը 1961 թ. աշնանը՝ նոյեմբերի 6-ին է մահացել, իսկ Հովհ. Շիրազի զավակները՝ գեո չծնված «անմեղ գտնուկներ» Մասին ու Սիրիանը, այդ գրույցի պահին «ներս մտնել» ու «գրույցն ընդհատել» պարզապես չէին կարող, որովհետև նրանք գրանից անավագն 5-6 տարի Հնաո պիտի լույս աշխարհ գային...

Ոմանք խնդիրն այնպես են ներկայացրել, կործան Հիշյալ բարձրաստիճաններն ու մյուսներն ո՛չ Հովհ. Շիրազին գրեմին, ո՛չ նրա ստեղծագործությունը, ո՛չ էլ իրենց ավտոի ու պաշտոնի արժեքը: Նրանք բուրբն էլ զգում ու Հասկանում էին, որ ամենածոլորդական բանաստեղծի բարձունքին Հասած Հովհ. Շիրազը հորհրդային Հայաստանի պետության մեջ մի առանձին ինքնակառավարվող ազգային պետություն է իր ներքին ու արտաքին քաղականությամբ, ամբողջ Ժողովրդով Համայրվող ազգային բանակով: Հասկանում էին, որ Հովհ. Շիրազի իշխանություններից երկույց չունի, բանաստեղծի նրա արքայական գահը ոչ որ խլել չի կարող, իսկ իրենք վախենում էին կորցնել գահաթոնը: Գնտական մարտիկներից ու պաշտոն-

⁵ Ըստ այդ հուշագրի այդ հանդիպումներից միայն ինքն է ներկա եղել և գլուխների գրականագետներ Մուշեղ Լարյանն ու Վարդես Սարգսյանը: Իրոք, նրանք էլ են մասնակցել մեկ-երկու հանդիպումների, ոչ ավելի: Իսկ թե Շայաստամի տարբեր վայրերի ուղեգրներում, բեռնում, գրծարանների բանդարայան կոլեկտիվներում, գյուղական համայնքներում ու մշակույթի տներում կայացած բազմաթիվ հանդիպումներում ո՛չ էլ շուրջ քստուր դար հանդուրյանը ներկայացրել է Շիրազին ու մանավանդ նրա անտիպ առեղծագրությունները, հուշագիրը «համատարն» լույ է չի հիշել ոչ Գառնիկ Գովհանիսյանին, ոչ Սամվել Մուրադյանին, ոչ էլ Սիրիսյան Մարգարյանին: Նրա պես «հանձնա» են եղել նաև Վազգեն Սուրբյան (Սուրբյան) ու մյուս հուշագիրները:

⁶ Լ. Մշեցի, Սի փնտուր արժիվ կյանքից, Գյումրի, 1996, էջ 46:

յաներից ձանձրացած, հիստիսիպի մարդիկ ճարահաս նրա միջատութեանն էին դիմում իրենց գրեթե բոլոր չլուծվող հարցերով: Ես ժողովրդի մարդկանց ոչ մի խնդրանք անարձագանք չէի թողնում, ժամանակ և հնարավորություն էր ստեղծում գիմելու վերին առյուծների զանազան պաշտոնատարներին, անգամ իր չսիրած մարդկանց, և Հանտի էր Հաջողութեան Հասնում, որովհետև նրանց մեջ էլ կային բանաստեղծին գնահատող և նրա խոսքը գետին չզցող մարդիկ:

Իսկ Հովհ. Բաղդասարյանը, որ վաղուց արդեն Հովհաննես Մինայելի էր, շատ լավ էր ճանաչում Հովհ. Երրազին և Կենտկոմի երկրորդ քարտուղար եղած ժամանակ էլ մասնույժմ քննադատել էր բանաստեղծին՝ ժողովուրդների բարեկամութեան մեծ երգչի իր դիրքերից իրը նահանջելու համար: Գրողների միության՝ Կենտկոմին հաշվետու ժողովում էլ 1964 թ. հայտարարեց, թե՛ այդ ի՛նչ էր գրել, որ չենք տպել, Գարույր Անպղծ մեզ ի՛նչ կաշառք խոստացավ, որ տպեցինք նրա «Անլսելի զանգակատուներ», Անու Խանզադյանը մեզ թնդանո՞թ զե՛ծ արեց, որ տպեցինք նրա «Գառ թագավորը»...

Ինձուցութեան այս «գռհարի» առթիվ կարող եք երևակայել դահլիճի արձագանքն ու այդ նշանավոր պատմավեպերի հեղինակներ Աս. Զորյանի ու Աս. Խանզադյանի զարմանքն ու իրար նայող շփոթված հայացքները...

Հովհ. Երրազը Հ. Բաղդասարյանին տպեց «Անի» պոեմի մեքենագիր տարբերակը: Ու երբ թղթնապանակի կապիչներն էր արձակում՝ բազմանշանակ «տեսնե՛նք, տեսնե՛նք» ստեղծվ, հնչեց Երրազի ձայնը.

— Ձգո՛ւյ՛, առյուծներս կելինին թեզի կուտան...

Ի դեպ, նույն Հ. Բաղդասարյանին է նվիրված Հովհ. Երրազի «Գառի քարն ու Լրազացբարը» ստակը, ուր այլարանոթն ներկայացված է նրանց հարաբերությունը.

Դու գարնել ես լրազացբար,
Ես՝ պատի քար մի շարքային,
Մանկությունը ո՞նց մոռացար,
Որ չես հիշում ինձ՝ քո գահին:

Մանուկ էլինք նույն քարահետւմ,
Ինչպե՛ս էլինք իբր գրեւում-
Գառնում էլինք՝ սփռվել էլինք՝
Էլ լսիտի քամակներդ...

Բախող թեզ վեր բարձրացրեց,
Մեզ գարնելից շողացարթը,
Ինձ պատի մե՛ջ Հարկի դրեց,
Ավո՛ղ, դու էլ ինձ մոռացար:

Դու քո շուրջն ես միշտ պատում,
Մեզ համար ես սպում անվորէլ,
Ինձ չես հարցնում ի՞նչ էլ ցամուռ,
Մեջ ես պատի քարերը խեղճ...

Ա՛ր, կեռու ես գառնուտում,
Մանկությունը ո՞նց մոռացար,
Ով մանկությունն է մոռանում,
Քար է, ոչ թե լրազացբար...

Բացք դու մի որ փռաքից կընկնես,
Երբ եկե՛ս ընկնես՝ մտաջ կղամ,
Հոսք էլ կտամ ստաղկա պե՛տ,
Ի սեր անեղի մեր մանկութեան:

1975 թ. հոկտեմբերին հանդիսավորությունում անում էին Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը: Կառավարական հորեկայանական հանձնաժողովին մտանելով Հովհ. Երրազը հերթավ զարեկեց բոլորին: Նախագահը Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանն էր: Նրա կողքին կանգնած էին Գերազույն խորհրդի նախագահության նախագահ Բ. Ասրկիսովը, Հ. Բաղդասարյանը, մյուս անդամները և Խորհրդային Միության տարբեր մայրերից եկած հյուրեր: Նրանց պատշաճորեն ողջունելով՝ Հովհ. Երրազը հեղանափառ մտացալվ Հ. Բաղդասարյանին և հատուկ շնորհակալություններով, բարձրաձայն ասաց.

— Բարո՛՛վ, բարո՛՛վ, Բա՛ղ-դա՛-սա՛-րո՛՛վ:

— Ձե՛ս մի՛ առ, Երրա՛ղ, չէ՛՞ որ ես քո ընկերն եմ, դու ինձ վաղ մանկությունից Գյուճբուց գրեսես, ես հայ մարդ եմ, և ազգանունս էլ Բաղդասարյան է: Ես երբեք Բաղդասարով չեմ եղել և չեմ լինելու:

— Էղ ի՛նչու է, Սար-կի-սա՛վ կէղեր, Բա՛ղ-դա՛-սա՛-րո՛՛վ չէ՛՞ կէղեր...

Այդ պահին բոլորը լրջացան, որոշ քննաժպիտներ նույնիսկ բարձրաձայն կշտամբեցին «անկիրթ» բանաստեղծին, ու հենց Բարեկեն Սարկիսովն ինքը միայն զստը մպստաց՝ հասկանալով Հովհ. Երրազի սրամիտ ակնարկը, որն այդ պահին անձնական վիրավորանքի միտում չուներ: Խնդիրը նախապատմություն ուներ:

Արարատի շրջանում Արարատ շրջկենտրոնից մոտ 5 կմ հեռու, կար Երրազու (հիմա անվանափոխվել է) անունով գյուղ՝ խոտը ազգաբնակչությունում հայեր, ազերիներ, աս-

բիւնք: Տարիներ առաջ գյուղի մշակութի տանը կայացավ
Հովհ. Շիրազի գրական Հանդիպումը գյուղի Հասարակութեան
Հետ, որտեղ շատ էին շիրազացիները: Հատկապես այդ
գյուղում Շիրազն ունեցած իր, կարելի է ասել, ամենախնամ-
նացիոնախառնական ելույթը, խոսեց ժողովուրդների բարեկա-
մութեան ու Համերաշխութեան անհրաժեշտութեան մասին:
Իայց Հենց այդ գյուղից էին գրավոր դիմումներ Հասնի Կենտ-
րոն և Գերագույն խորհուրդ, թե Նորոց բանաստեղծ Հովհ.
Շիրազը իրենց գյուղում թշնամութուն էր սերմանում Հայ և
ազերբեջանցի ժողովուրդների միջև: Խնդրին տեղյակ չիր-
ազանք Հայերը, որպես Հակաբալլ, մայրուղու վրա գյուղի
սկիզբն ու ավարտը նշող «Շիրազում» ցուցանակի երեսից
գրելըը ներկով ջնջել էին վերջին լու մասնիկը՝ այդպես իրենց
գյուղի անունը դարձնելով **Շիրազ**:

Գյուղի ազրեսիվ աղերները մի պատվիրակություն էին
ուղարկել Բ. Սարկիսովի մոտ ու իրենց զժգոհութիւնը Հայտ-
նել: Նրա խորհրդով նորից ավելացրել էին լու մասնիկն ու
վերականգնել գյուղի նախկին անունը:

Դեպքը կրկնվել էր մի քանի անգամ:

Բ. Սարկիսովը բորբոքված տարածայնութիւնները Հար-
թիւն, խնդիր կարգավորելու և խաղաղ լուծում առելու նպա-
տակով գյուղ է ուղարկում գրողների միութեան նախագահ Վ.
Պետրոսյանին՝ տեղի շիրազացիներ Հայ բնակչութեան մեջ բացա-
տրական աշխատանք տեսնելու Համար: Այսինքն՝ գյուղի ան-
վանափոխութիւնը կարող է կատարվել միայն ՀեՍՀ Գերա-
գույն խորհրդի նախագահութեան Հրամանագրով, իսկ քաղա-
կացույն օրենսդիրն, իրը, մտադիր է Հետագայում Հայ ժողո-
վրդի մեծ բանաստեղծ Շիրազին արժանավորապես մեծարելու
և Հիշատակը Հավերժացնելու Համար նրան Համապատասխան
ուրիշ բնակավայր, անգամ քաղաք անվանակոչել...

Վ. Պետրոսյանն իրոք ասցելում է գյուղ, կազմակերպում
Հիշյալ ժողովը, իսկ թե գյուղացիների Հետ ի՛նչ է խոսում,
ի՛նչպես է փորձում նրանց Համոզել Հրամարվելու գյուղը
Շիրազի անունով կոչելու գաղափարից՝ բոլոր մանրամասնե-

րով արգեն գիտեք Հովհ. Շիրազը: Իսկ գեպի շիրազյան մեկ-
նութիւնը, որը գրողների միութեան նախագահի արարքից
նրա վերափոխման արտահայտութիւնն էր, դառնում է
երգիծանքի կատարյալ զուխործոց:

— Շիրազուի թուրքերին դուր պալու և գյուղում վեճերը
խաղաղացնելու Համար Սարկիսովը կրկին Մարդկետոյին: Էս էլ
գյուղ կերթաւ, ժողով կենե, ինչքան կարողութիւնը թույլ կու-
տա ինձի կրամբանս ու կշարախոսե, վերջն էլ իր գրողական
իրական արժեքի գիտակցումով իր էութեանը Համապատաս-
խան ազնիվ առաջարկ կենե. գյուղացիներին կրո՛ւ՝ Շիրազը
Համարաւ անուն չէ՛ ձեզի, ինչո՛ւ մեր սերունդներին կուզեք
կապել էնոր անվան Հետ, իրք այդքանը թիչ է՛ մեր Հայասն-
ներին մեզ թշնամի կգործենեք փուչ բանի Համար: Ինձ լսեք,
մեր գյուղի Շիրազու անվան սկզբից **Շիրազը** ջնջե՛ք, թող
մնա **Լու**—, որ ինձի Համապատասխանի...

* * *

Յրված են շիրազյան մասունքները. գրունք բանաստեղծու-
թիւններ են, խմբագրութիւններում ու Հրատարակչութիւն-
ներում կորած մեքենայի ամբողջական գործեր, գրքերի, հրա-
վերաստմաների, լուսանկարների վրա մեղադրութիւն
ներին ու ընծայագրեր, Հարազատներին, մանկութեան բնկեր-
ներին, զպրոցներին, գյուղական Համայնքների զեկավարներին,
սկսնակ ու երիտասարդ գրողներին, իր Հանձարի երկրպագու-
ներին, Հայրենիքում և Ափյուռքում ապրած գրական մարդ-
կանց, ծանոթներին ու անծանոթներին ուղղված նամակներ,
Հրատարակչական բնագավառի զեկավարներին, խմբագիրնե-
րին, բարձրաստիճան պաշտոնյաներին Հասցեագրված դիմում-
ներ ու խնդրագրեր: Իսկ եթե սրանք (և ոչ միայն) Հավաքվեն
ու միատեղվեն, Գյուժրու տուն-թանգարանը չի կարողանա
տեղավորել: Ուրեմն՝ ժամանակն է մտածել Հենց Հայոց մայ-
րաքաղաք Երեւանում, ուր Հովհաննես Շիրազն ապրել է շուրջ
կես դար, նրա տուն-թանգարան տեղծելու մասին:

Բնական է, որ շիրազյան նյութերով առավել հարուստ են եղել Հրատարակիչներն իրենք ու բանաստեղծի մտերիմները, մանկության, սրբանոցային ընկերներն ու դասընկերները:

Մեծ բարեբախտություն է, որ նույն նիկար Բարսեղյանը, Մանուկ Մանուկյանը, Մետաքսեն⁷, Մկրտիչ Սարգսյանը, Աբրամ Գրիգորյանը, Նազարեթ Կերակոսյանը, Նորայր Արզու-մանյանը, Վազգեն Առաքելյանը (սա այնքան է սիրել Շիրազին, որ իր իմացած ամեն ինչ վերագրել է նրան, ինչպես Խազմիկ Լալայանի «Որբի ծննդան էլ նման է լացի» տողը, իսկ «Գրական թերթի» բանից անտեղյակ գրախոսն էլ ոգևորվել է զբառով) և ուրիշներ հրատարակել են իրենց Հավաքածուներում պահպանել են իրենց Հուշագրություններում ֆանացի են ներկայացնել իրենց տեսած ու ճանաչած Շիրազ մարդուն ու բանաստեղծին:

Հարկ ենք Համարում կարևորել Լ. Հովնաթանի⁸ Հովհ. Շիրազի Հետ, նրա և Իսահակյանի, Շիրազի մասին Համո Սահյանի, Սերո Խանզադյանի, Գեորգ Աբշակյանի, Մորիս Փոցխիշվիլու Հետ վարած Հարցազրույցները, որոնք գրեթե բառացի Համ-բեկնում են Հովհ. Շիրազի «Մի փետուր էմ արծիվ կյանքից» գրքի տեղեկություններին և անձամբ իմ լսածներին ու տեսած-ներին: Բայաբեկ Մելյանն էլ ֆանադրաբար կազմել է «Հովհաննես Շիրազի կենսամատենագրություն» երկհատորյակը:

Այլ է որակի և արժանահավատության խնդիրը: Նշված ու չնշված բոլոր Հուշագրություններն էլ, առավել կամ նովա Հավաստությամբ, իրենց այն կամ այն թիրուխյամբ Հանդերձ անշուտ կարևոր են Շիրազ մարդ — լեզվեզի ու բանաստեղծի գիմանկարի ամբողջացման Համար: Սակայն դրանց Հետ միասին և զրանցից առաջ անշուտ, զնահատելի են Հովհ. Շիրազի ստեղծագործության մասնագիտական արժեքները:

Ինչպես տեսնում ենք, թեև նախապատրաստություն արվել է, սակայն բուն անկիտերեն առկեսում են:

Նախորդ դարի երկրորդ կեսի մեր մեծ գրականագետների իմ սիրելի ուսուցիչներ Հր. Թամբազյանի և Էդ. Զրբաշյանի վերջ հիշածս պարտավորեցնող խոսքերը բնակատարաբար պիտի ունենային իրենց ներգործող զորքը: Սակայն դրանց Հետ միասին ու զրանցից ավելի, Հովհաննես Շիրազ մարդու և բանաստեղծի, Հայաստանի և Սփյուռքի Հայության Հանդեպ չմարող պարտքի զգացումն անընդհատ բորբոքել է Հենց նրա մի գրավոր պատգամ-պատվիրանը, պարտավորեցնող ու պարտադրող «Էջրապրձում» կտակ-բանաստեղծությունը, որը մնվել է Հետա-յայ Հանգամանքներում:

Շուրջ քառորդ դար տեսած մեր գրեթե ամենօրյա Հանդի-պումներն ու զրույցները Հիշելու տեղը չէ Հիմա. այս զրբում զրանց կանգրդառնանք միայն ըստ անհրաժեշտության մնացածը թողնելով Հետագային: Այժմ կարևոր ենք Համարում Հետևյալ բնորոշ զրվազի վերհուշը, որը նոր լույս կարող է սփռել դիտարկվող երևույթի որոշ կողմերի վրա:

1975 թ. մայիսի 15-ին Լ. Շիրազը Հեռաձայնեց ինձ.

— Էքերմանի «Զրույցներ Գյոթեի Հետ» գիրքը ժամանակին ուսուցիչներով, գեղարվեստներով փորձել եմ կարդալ, բայց չի

⁷ Ի պատիվ բանաստեղծուհու պետք է ասել, որ իննց ճրան էր հալոցվել ժամանակից ձեռք բերել Գովհ. Շիրազի 1954 — 55 թթ. Սովետական ռեսանսեու տարեցրեմն գրած ու քո-րած երկու ընդհանուր տեսություն, որոնք էլ մա տարիներ առաջ հանդիսավորությամբ հասնեց Ե. Յարենցի անվան գրականության և արվեստի բանգարանին — Ս. Ա.:

տպագործի: Իմացա, որ Հակոբ Հակոբյանը, ո՛չ պրոչեստանտեր, գերմաներեն ընագրից հայերեն թարգմանել և տպագրել է: Գիրքը բաժանորդագրական է՝ «Համաշխարհային դասականներ» մասնաշարով. հարելը շատ դժվար է: Ճիշտ է, գրավաճառները բարեհաճ են իմ հանդեպ, սիրահոժար ընդառաջում են ինձ, բայց ես հերթի կանգնած մարդկանցից կամչչնամ: Խաթիրա Համար որևէ հնարքով գտիր բե՛ր այդ գիրքը, որ կարգամ. դրա կարիքը շատ սուր եմ զգում:

Իր փառքի գազթնակետին հասած վաթսուներեքամյա Հովհ. Նիրազը կարգալու գիրք էր խնդրում... Իսկապես գրասիրության ու ընթերցանության ժամանակներն էին: Գիրքը հայթայթելու խնդրում հարկադրված ենթադասվեցի գրականագետներ Արշակ Մաղոյանին ու Խաչատուր Վարդանյանին, և երեքին միացյալ ուժերով գնվեց Հովհ. Նիրազի ուղած մեկ գիրքը: Ընկերներս այս պատմությանը մասնակցեցին նաև իրենց «Արշակը» հերթը, ես էլ գիրքը: Երկուսս էլ սիրով՝ մակագրությամբ:

Գիրքը հանձնեցի:

— Մեկ շաբաթ հետև կուզաս կտանիս. վերջերս մեր տանից սկսել են բաներ կորչել:

— Ուրեմն մեկ շաբաթ դու չպիտի գրես և միայն այս գի՞րքը պիտի կարդաս... Որ այդպես է՝ կգամ մեկ ամիս հետո:

Ճիշտ մեկ ամիս անց հունիսի 15-ին, զանգահարեց.

— Արի գիրքդ տա՛ր, չուշանաս:

Հակառակի պես ուշացա, տեսա՝ մեկ ոտքը շեմքից դուրս, մյուս ոտքը ներս Շիրազին՝ բաց դռան մեջ կանգնած, գիրքը թեկի տակ:

— Ինչո՞ւ ուշացար. ես սպասել չեմ սիրե. սովոր եմ, որ ինձի սպասեն. տասնհինգ տարվա մեջ չսովորեցի՞ր...

Չարդարացա, բայց իրավիճակից դուրս գալու համար մուտքի աստիճաններով իջնելիս հարցրի.

— Կարդացի՞ր, Ի՞նչ տպավորություն ստացար հայերեն ընթերցումից:

— Հոյակապ գիրք է: Երանի՛ր ամեն Հայ մեծ գրող մի այսպիսի մեծ կենսագիր ունենար...

— Օրինակ՝ ո՞ւմ եկատի ունես:

— Ես կուզեի, որ էպիսի մի մեծ ու աղնիվ կենսագիր ունենար Մովսես Խորենացին. այդ դեպքում նրան Հինգերորդ դարից չէին տեղափոխի մինչև Իններորդ, մեկըմ պիտի ունենար ասաներորդ դարի հանճարը՝ Գրիգոր Նարեկացին, մեկըմ՝ Նաճապետ Քուչակը, որ վերանային նրա վերաբերյալ վեճերն ու կապածները, մեկըմ՝ Սայաթ-Նովան, չէ՞, Սայաթ-Նովան արդեն ունի, որովհետև Գարույրի գիրքը իրոք լավն է, մեկըմ Արովյանը պիտի ունենար, մեկըմ՝ աճեղ և անմրցելի Բաֆֆին, մեկըմ՝ Թուսայանը, մեկըմ Իսահակյանը, Միամանթոյին նվիրված Թամարյանի գիրքն էլ է լավը, մեկըմ Վարուժանը պիտի ունենա, մեկըմ՝ Տերտրյանը, մեկըմ Չարենցը, և ինչո՞ւ չէ, մեկն էլ ե՛ս պիտի ունենամ... (ընդգծ. — Ս. Մ.):

— Ասածդ Հենց քո ձեռքո՞վ այս վայրկյանին գրիր, որ ես ու սերունդները չմոռանանք, — ասացի՝ մտածելով, որ նա իր այս խոսքով այդ պահին հայ բանաստեղծության պատմության ու զարգացման ընթացքի մեջ իր իսկ տեղն է ճշգրտում:

— Որտե՞ղ գրեմ, ինչո՞վ գրեմ, տուն դառնալ էլ չեմ ուզում...

— Հենց այստեղ և այս գրքի կողին գրիր:

— Գրիչ չունիմ:

Հասկացա, որ խուսափում է գրելուց. կանաչ միջուկով մի գրիչ կար մոտս, ավի և պարտադրեցի տեղնուտեղը գրել:

Հաջողվեց համոզել: Ինքն էլ գտավ գրելու կերպը: Աստիճանների վրա շուռ եկավ, ձախ ոտքը դրեց վերին աստիճանին, գիրքը՝ ձեկին ու սկսեց գրել:

— Ես կողմը չնայեա, ինձի չխանգարես...

Բնավորությունը գիտեի. բուռն ոգևորության, մանավանդ ստեղծագործելու ինքնամոռաց պահին նրան պարզապես խանգարել չէր կարելի: Հաճախ էի տեսել նրան ստեղծագործելիս: Բանաստեղծություն կամ պոեմ գրելիս արագագիր էր նա, մտածողությամբ՝ ազատ, ինքը՝ աշխարհից վերացած: Նրա առյուծային մոնշյունից զգացի, որ այդ պահին ոչ թե իր ասածը,

այլ բանաստեղծութիւնն է գրում: Ավարտելով՝ փակեց դիրքը, սովեց ինձ ու խրատ հնչեցրանալով Համեմարարեց.

— Այսօրգա գրածս իմ ներկայութեամբ չկարդաս. կերթանք «Արմենիա», կնայենք, Հետո կերթնաւ տուն, կնտեղ նոր կկարդաս. թե չէ Հիմա կլսեմ, կուզեմամ փոփոխել, Հարմար չէ: Թող էզդպե անազարտ մաս բնարուի փրճակուս...

Մեր «Արմենիա» միասին գնալը սովորաբար վերածվում էր կատարյալ թատերական ներկայացման, որի գերակատարները մեզ Հետ միասին ժամանակի ուրիշ մտալորականներն էին լինում՝ սեռատրան այցելող գրողներ, գերասաններ և այլն: Բոլորի ուշադրութեան կենտրոնում ներքուստ մասլը, բայց կենսախիղճ ու արտաքուստ ժպտուն, գրեթե միշտ բարձրամայն կատակող Հեղնարան Հովհ. Շիրազն էր:

Յերեկ էր: «Արմենիայի» ճաշարահում այդ ժամերին սովորաբար շատ մարդ չէր լինում: Այդ օրն էլ, իր բնավորութեան համեմայն ուսումնասիրելով գահլիճի մարդկանց, որոշեց բոլորի լսելի բարձրամայն սրամտել.

— Յամվել, — դիմեց ինձ՝ գրեթե զոտայով. — նայի՛ տես, Յական Շողենցն էնտեղ կեկհ Հետ նստած է. Հանկարծ չըտե՛ս՝ Յականն անտազանդ է, կնիկը կլսե՛ կնեղենա...

Հիմնականում մատուցող Հակոբն էր մեզ սպասարկում: Շիրազը նրան մտերմաբար ձուտիկ էր կոչում: Նրանք վաղուցցա ծանոթներ էին և ունեին «անձնուցիկայի գաղտնի նամակագրութիւն»: Ձուտիկը, ինչպես բնում ներկայացման պահին, ամեն անգամ կնտանար, կխոնարհվեր, «Ողջո՛ւն Հայոց մեծագոր արքային: Արդյոք ի՛նչ կկամենա ճաշակել այսօր Հայոց անգահ Հարթան «Արմենիայի» խոհանոցից» տակով սեղանիկ Շիրազի առջև, կզներ բռտածալ մի անձնուցիկ մեջը իր երևակայած լավագույն Հայհոյանքը, որին բանաստեղծը պիտի զբոսվոր պատասխաներ մինչև ճաշի մատուցումը:

Պատասխանը միայն ու միայն ձուտիկի մասնավոր սեփականութիւնն էր. սեղանի շուրջ եղողներին ոչ ոք իրավունք չուներ գրանք կարդալու: Ով գիտի տարիների ընթացքում

բանի՛ այդպիսի անձնուցիկ — պատասխան էր Հովաքել Հեռասն ձուտիկը...

Հովհ. Շիրազը Հերթական պատասխանն էր գրում, երբ դահլիճ մտան մի խումբ սփյուռքահայեր: Տեսնելով նրան խանդավառ ողջագուրվեցին ու խնդրեցին լուսանկարվել: Բանաստեղծը անՀանգիտ շարժումներով վեր կացավ սեղանից՝ ճրճողթմած թողնելով չափարտած կամ չհավանած պատասխանը: Մինչև նրա վերադարձը, մեզքս ինչ թացքնեմ, բուռն Հեռաբերբերութեան պարտագրանքով գողուցի Հարթեցրի անձնուցիկը: Բայց իր գրածը բանաստեղծն այնպես էր ջնջել, որ Հնարավոր եղավ վերձանել միայն մեկ տող՝

Գրդանս է դատարկ՝ զլիսի Հալասար...

Անձնուցիկը նույն ձևով նորից տեղը դրի:

— Որե՛ մեկը Հո չէ՛ս կարդացել, — խստորեն Հարցրեց վերադարձին:

Ես լուխյայն մատնացույց արի ճճթված անձնուցիկն ու իրոք չբացված դիրքը: Ձուտիկը պատվիրածը դանդաղ բերեց, բայց արագ դրեց սեղանին՝ մինչև գոտկատեղը խոնարհվելով և «Ան՛ւշ արեք, վեմափա՛յլ արքա» տակով, իսկ Շիրազը նրան մեկնեց նոր գրած պատասխանը՝ «Դո՛ւ էլ տեսչ արա, Ձուտի՛կ» մաղթանքով:

Միակ անգամն էր, որ անՀամբեր ուզում էի Շիրազից շուտ բաժանվել: Շատ էր Հեռաբերբեր ի՛նչ է գրել տեսնես, որ չի ուզում իր ներկայութեամբ կարգած, արք նա ինձ գտառում էր ամեն ինչ և ինձ Հետ էր քննարկում բոլոր նոր ձեռագրերը, Հրատարակելիք գրքերը:

Նույնիսկ Հրածեղտից Հետո էլ, երբ բավականաչափ Հեռացի էի, երկուզում էի, թե Հեռվից էլ կտեսնի ու կկշտամբի: Վերջապես տուն Հասա, բացեցի դիրքը և Հենց կաղմի վրա ներսում, տեսա Շիրազի ձեռքով մեկ շնչով գրված «Էքսպրոմտը», որը թեև, արքս՛ս, նախապես ինձ ասածը չէր, բայց և Հարթան եմ, որ այն ասանչորատողանի Հետևյալ խորունկ բանաստեղծութիւնն էր.

(էքսպրոմտ)

– Սամվել, երանի՜ այս մարդու նման՝
 Դու՛ մատչանիկի մտքերս անսահման,
 Որ շաղ եմ տալիս անդու՛ւ ու անվերջ
 Այն էլ բյուրեղի՛ ունայնության մեջ,
 Այն էլ այս անհող քարերի վրա
 Միտք-խոյանքներս, դանձրս ատորյա,
 Որ չեն վատապու՛մ ոչինչ ու ոչինչ,
 Իմաստուններս և խենթերս շինչ,–
 Սուրբ արցունքներս սպառնամբյան,
 Անհող հունդերս, Հողերս անզու՛թան,
 Մովրս, որ ազգիս մաղով եմ տալիս...
 Ահա թե՛ ինչու՛ և ի՛նչ եմ լալիս...
 Երնե՛կ չուսլիս դու մատչանիկի,
 Որ դարեր Հետո քեզ էլ գտնիկր...

Հովհաննես Երրազ⁹

Իր ստեղծագործության համազգային ու համամարդկային արժեքի խոր գիտակցումով է Հեղինակը գրել այս բանաստեղծությունը: Ու թեև այն ձևավորվել ու ծնվել է հանպարաստից՝ մի քանի րոպեում, սակայն տասնամյակների ներքին բարդ մտորումների, նախակուսակման և հասունացման արդյունք է իրականում. պարզապես մեր հանդիպման պահին է ստեղծվել ինքնարատահայտման հնարավորությունը:

Ախա՛ս, որ Երրազը Գյոթեն չէր իր անսահման հնարավորություններով, և ոչ էլ նա կարող էի լինել էքերմանը, որը պետական հանձնարարականով օրագրական ճշգրտությունը գրանել է գերմանական հանձարի Հետ նրա կյանքի վերջին շրջանի՝ 1823 – 1832 թթ. գրույցները: Ցավոք, այդպիսի հնարավորություն ու պայմաններ մեզ ժամանակին տրված չեն եղել, և Հիմա պատանություն ու երիտասարդության տարիների տեսանքներս ու անձամբ բանաստեղծից լսածներս մեկնաբանվում

⁹ Պոզիս էրեմո ընթերցող կտեսնի այս բանաստեղծության, ինչպես և շիրազյան այլ ծնագրերի լուսագալտեմներ ու առաջին անգամ երազայակվող լուսանկարներ – Ս. Ա.:

են հասուն տարիների միավորյալ հայացքով⁹: Ուսանող տարիներին մի քանի անգամ եմ սկսել Հովհ. Երրազի հետ հանդիպումների, նրա ելույթների և իմ ունեցած գրույցների բառացի գրառումներ: Բայց գրանք, գրառածս դասախոսությունների հետ միասին, դասամիջոցներին պայուսակով կորչում էին համալսարանական լսարանից, ճամպուրակով հանրակացարանային սենյակից... Եվ քանի որ կորուստներս սեղել էին ունենում հատկապես ապրիլի 24-ի նախօրերին, հասկացա, որ գրանք պատահական չեն. իմ ձեռագրերով ու փաստաթղթերով հետաքրքրվողները իրականում անհատներ չէին:

Գրառելը գաղարկների այն ժամանակ, երբ վերջնականապես համոզվեցի, որ այդ պայմաններում ինչ էլ գրեմ՝ պիտի զողանան, իսկ գրանք պահելու ապահով տեղ չունեի:

Մնում էր ապավինել Հրեղությանը (այն տարիքում հիշողությունից գանգատվելու պատճառ չունեի և չգիտես ինչու հավատացած էի, թե ոչինչ չեմ մոռանա, մինչև գրելու հարմար ժամանակը կգա, իսկ այդ ժամանակը, հակառակի պես, ուշանում էր):


«Էքսպրոմտը» ինքնագիր վավերական գրական փաստ է: Որքան մեզ հայտնի է, Հովհ. Երրազն իր կենսագրիներից ուրիշ որևէ մեկի այսպիսի գրավոր կտակ – հանձնարարություն չի

⁹ Լազարեթ Կիրակոսյանի նման ազնիվ կենսագիրը, որը ծանոթ էր այս «էքսպրոմտին», «ՍԵՃ Շիրազի էրեմոն» խորագրով բանաստեղծություն է ընծայագրել տողերիս գրողին (տես և, Կիրակոսյան, Ընթերցելիք, Եր., 2011, էջ 79):

Շիրազն ունի էրեմոններ
 Սեզ Լորյուններ, ազիլ սաներ:
 Դու առաջին էրեմոնն ես,
 Դու ասածով անձնան ես,
 Դու ծով մտքերն իր անասինան
 Ընթոստ ու ինքն և անասան
 Սեզ համձնեցիր, մայրամեջիր,
 Որ չկողմն պատյանեցիր....

Արդ ինչիմանակն հայանելով մեր խորին շնորհակալությունը՝ պիտի խստովանենք, որ մեզ դուր շատ ավելի համեստ է, քան նրա իրոք քարեզ գնահատմանը – Ս. Ա.:

տովել: Իր փորձերի գաղափարն հասած վախճանամայա Հովհ. Շիրազի ձեռքով գրված խոհաքնարական այդ մանրակերտը, հանձնարարական լինելուց բացի, մի կուս գեղարվեստական խառցում է, որը, նաև Հեղինակի ներքին խոտովաձույզ վիճակի պատկերը և իր վաստակի ինքնարժեքումը լինելով իրոք որ, լավագույնն է բնորոշում բանաստեղծ – ժողովուրդ և բանաստեղծ – ժամանակ հարաբերությունները:



էքեմանի «Չորսյանի Գործի ձեռ» գրքի զրա Գ. Շիրազի Ա. Մուրադյանին նվիրած կտակ-բանաստեղծության մեագիրքը

Շիրազյան այս «Էքսպրոմտի» և Էքերմանի պես կենսագիր ունենալուն արժանի Հայ գրողների ժամանակագրական ներկայացման արտաբուստ գծովար նկատելի կապը ներքուստ խիստ տրամաբանական է: Բանաստեղծը իր նախորդներին զասակարգում էր նրանց խոր ճանաչողությամբ, ստեղծած մնայուն արժեքներով և ազգապաշտպան գերով: Ինքն էլ է այդ

հարաբերության մեջ՝ մատյանվելու արժանի իր խնեթ ու իմաստուն անասճման մտքերով, ոչինչ չվաստակող «առօրյա գանձերով», որ անդուլ սերմնացանի պես կենդանի տրեությունամբ շաղ է տվել «բյուրեղի ունայնություն մեջ» և հայոց «անհող բարերի վրա»...

Բանաստեղծության մեկ խորանալու փոխարեն՝ քնարական հերոս – Հեղինակի ողբերգական հոգեվիճակի սուր զգացողությամբ Հ. Թումանյանի հանճարեղ «Մեր նախորդներին» բանաստեղծությունը հիշեցնող շիրազյան այս «Էքսպրոմտը» բնարան ընդունենք մեր «Հովհաննես Շիրազ, բանաստեղծը, մարդը» գրքի համար և հետևենք նրա ընթացքին:

Ճողովուրդը իսկապես սիրում և գնահատում էր իր բանաստեղծին, բայց նրա իրական մեծությունը ոչ բոլոր էին գիտակցում: «Մարի վրա գանվող հովիվը չի պատկերացնում նրա իրական բարձրությունը: Նա պետք է ցած իջնի ու հեռուներից նայի սարին»,- իմաստասիրտում էր Հովհ. Շիրազը:

Գրական միջավայրում Հովհ. Շիրազը չբնագատված էր հարաբերությամբ լավ ու վատ մարդկանցով: Լավերը թեև համակրում, սիրում էին նրան, բայց իրենց ողջ բարոյականությունները հանդերձ՝ քչերն էին կարողանում հարկ եղած պարուն պաշտպանել բանաստեղծին, և ոմանք էլ ոչ թե միտումնաբերությամբ, այլ իշխանությունների թելադրանքով, հարկադրված, ակամա էին գործում նրա դեմ:

«Անողոր և իմաստուն» ժամանակի հարահուր բողոքն է սրբաբուստ պատահական ու երկրորդական գծերից, տանում է անցողիկը, թողնում մնայունը, ոմանց էլ ամբողջությամբ է տանում... Իսկ ժամանակի պատվերն անվերջ կատարող ակամա վատերն ու կամա չարամիտները ակնհայտին էին իրենց բամբասանքներով, անձնական նախանձի մազձ ու թույնով: Մրանց ստոր արարքներից, խարդախանքներից ու դավերից զժողճ բանաստեղծն իր հոգեվիճակը պատկերավոր այսպես է ներկայացրել՝

Միամանը տեղս լինե՛ր՝ կուսանար ցավից...

Գրական միջավայրի մի որոշակի անձնավորություն մասին մի առակ էր գրել ԼուիՇ. Շիրազը՝ «Մարգարիտն ու փրփուրը» վերնագրով: Այդ այլարանությունը, սակայն, այնպիսի ընդհանրացում էր, որ բանաստեղծը սիրում էր կրկնել իրեն նվիրված հանդիսություններին. մարգարիտն ինքն էր, փրփուրը՝ Հանրապետի փառաբանվածներն ու գրական հակառակորդները: Նրանց՝ այդ «Հազարամյա թշնամիների» մասին են շիրազյան առակների մեծ մասը, որոշ բանաստեղծություններ, բալլադներ ու քառյակներ: Հիշենք զրանցից դոն մի նմուշ.

Ա՛խ, անկամորդ ու նախանձ են
 Թշնամիներս Հաղարկնյա.
 Վրաս բուռ-բուռ Հող կղցեն,
 Որ բամբասանք — Հողով դմնյա՝
 Իմ կրկերի սարը ծածկեն...
 Բայց կույր ու քեն՝
 Դեռ չգիտեն,
 Որ սարն Հողին կուզ չի դեռ.
 Ինչ Հողով էլ ինչքան ծածկեն՝
 Սարն այնքան վեր կբարձրանա:

Հարամիտներից նույնիսկ Իսահակյանն է զժվարությունը գլուխ հանել: «Մի անգամ, — գառնացած խոսեց Շիրազը, — զրոզների միություն նախագահ Իսահակյանին սախ, թե՛ չեմ կասկածում, որ ինձ շատ ես սիրում, գիտեմ, համոզվել եմ, բայց ինչո՞ւ մրցանակները տալիս ես ուրիշներին: Իսահակյանը ինչդեպքով, սասց.

— Օնրիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ իմ գլխարկն ու վերաբրունտ օրը վեցից ութ ժամ կախված են զրոզների միությունում... Մի՛ թե զա հասկանալի չէ...

Այն, որ Շիրազը սրամտությունը անգերազանցելի էր, բուրբ գիտեին ու խուսափում էին նրա Հարվածի տակ ընկնելուց: Նրա բնորոշումները գառնում էին անընթեղի պիտակ: Նա պահի մեջ ուղեորվում ու գրողների, քննադատների երգիծական մականուններ էր ստեղծում՝ նրանց անվան և ազգանվան

մեկ հնչյունի կամ տառի փոփոխությամբ: Բայց ինքը ջանում էր չտարածել զրանք. «Իմ ընկերներին չեմ ուզե նեղացնեմ, որ թշնամիներս չչատանան»: Լսողներն էին տարածում զրանք:



Լուի. Շիրազը Ձվարթնոցում իր խոտիկ հետ: 1975 թ. աշուն



Վերջին լուսանկարներից. Գյումրու ճանապարհին, 1983 թ. ամառ

Երբեմն էլ, իհարկե, ԼուիՇ. Շիրազն ինքն էր շարաննի կատակներով զրզուում, առիթ տալիս հակառակորդներին, որ իր դեմ արտահայտվեն: Նրանից վիրավորվածներն, իրենց արածը թաքցնելով կամ քողարկելով, ամենուր տարածում էին, թե՛ տեսե՛ք-տեսե՛ք՝ ոչ թե մենք նրան, այլ Շիրազն ինքն է մեղ Հայրածում, լսեցի՞ք՝ ինչե՛ր է ասում մեր Հասցեին:

Մի օր Հրապարակի գրախոսնութի մաս Հանդիպելիք Սուրեն Վահանունու տղային՝ կրնոտեխտար Արա Վահանուն:

— Արա՛ ջան, զու իմ Արայիկիս պես տղա ես. գիտե՛ս՝ Հորդ մասին նոր գիրք է լույս տեսել, այն էլ՝ երկու հատորով: Ես Հորդ մանկությունից գիտեմ: Ոչ մի տեղ Հորդ կենսագրու-

թուևն ու բնավորութիւնը էնքան լավ ու ճշգրիտ չի ներկայացված, ինչպես էլ գրքում է. թե չունեն նվիրեմ, արդեն պատվիրել եմ, — ասաց Երրազը շատ լուրջ, հավատ ներշնչող հնչերանգով:

Արան կարծես իրոք Հովատաց, և երեքով մասնք գրախանութ: Մեծ հերթը սպասարկող գրավաճառուհուն Արփիկին մտանալով՝ Հ. Երրազն ասաց.

— Ան՝ւշ ջան, մի էն գիրքը բեր՝ ս:

Պարզօց՝ նա գիրքը իրոք նախապես պատվիրել էր, վճարել, թերթով փաթեթել ու պահ տպել՝ սպասելով հարմար առիթի: Առիթը ներկայացել էր:

— Նախ դու կարգա, Արայիկ ջան, հորդ ճանաչիր, հետո տուր՝ հայրդ էլ թող կարգա, որ հասնի լիակատար ինքնաճանաչման:

Արա Վահուենին կասկածելով բացեց փաթեթը, և ի՛նչ դուրս գա լավ է. դու՛նավոր սուպերչապիկով և պատկերազարդ երկու հատորով մի գիրք՝ «Հայաստանի թու՛նավոր օձերը»...

Օրեր անց Հովհ. Երրազը գրողների տանը (ինքը Հաճախ «մրողների տուն» էր առում) հանդիպում է Ս. Վահուենին: Երկուսն էլ լուռ ժպտում են իրարու, և հենց այդ պահին Երրազը նրան ասում է.

«— Սուրեն, առականերիս գիրքը շուտով պիտի տպեմ՝ «Առական գինջ ցուցանեմ» վերնագրով. հիմի ճիշտն ըսեմ, էլ գրքում ո՛րն է քեզի հարմար տեղը, օձերի սկի՞զը, թե՛՛ կարիճների վերջը...»⁷⁰:

Հաներայն չէր քննադատների հետ, թեև, որպես զբաղված մարդկանց, ներքուստ համակրում էր նրանց, բայց երբեմն էլ խոսել էր արտահայտվում: Գրականագետ Գարեգին Հովսեփյանը, որպես «օժանդակ բայ», երբեմն ներկա էր լինում շիրազյան զբաղված հանդիպումներին՝ պայմանով, որ բանաստեղծի մասին խոսք չասեր: Բայց նա, իր ներկա լինելն արգարացնե-

լու համար, փորձում էր գոնե հյուրասիրութիւնների մասնակցանահատել Երրազ բանաստեղծին: Մի օր էլ, մի ջերմ միջավայրում, զբաղվածագրական տեսական եզրաբաներով ծանրաբեռնված մի ճոռոմ, խրթին կենացածառ հրամցեց.

«— Երրազը սովանտիզմն ու սեպիզմը հաճախ է համարում. նա, միտոցիցիզմը հաղթահարելով, էքսպրեսիոնիզմը և սիմվոլիզմը միաժուլելով, ջանում է սենտիմենտալիզմից բարձրանալ զեպի էքզիստենցիալիզմի մատույցները...»:

Զարմացած իրար նայեցինք:

— Մո՛, էս ի՛նչ կենեմ, էս ի՛նչե՛ր կխոսի, գիտե՞ թե լավ բան է խոսածը, — ասաց տարակուսած ու խոսքն անմիջաբար ուղղեց ճառասուտին.

— Գարեգին, արա՛ղըդ խմեմ, արա՛ղըդ. մեզք են էս մարդիկ, հո մեր ձեռքը կրակը չե՛ն ընկել, գիտական կոմունիզմի ու օթեթիզմի դասախոսները քի՛չ են, որ էնոնց պես կխոսիս, էլ խոսքերդ պահե՛ն զոկոտորակներից պաշտպանութիւնը կըսես...:

Ավելի բուսն էին Լևոն Բատիկյանի հետ բանավեճերը: Նա «Հովհաննես Երրազի մայրականը» խորագրով ուսումնասիրութիւն էր գրում: Մամուլում մի հատված էր տպագրել, որտեղ նշել էր ապացուցել, թե Երրազն «արդարացիորեն է հասել մեր աստվածացման ենթագիտակցութիւնը», բայց և մեղադրում էր բանաստեղծին՝ կնո՛ղը խոստորեն դատապարտելու համար:

«— Տեսնես էղիկ կհասկանա՞ ինչ է գրել. ես չիկե՛մ, թե ով է մայրը, և ինչ է կինը: Յավալին էն է, որ կնո՞ջ հարցում ինքն էլ ինձի պես դժբախտ է, ու գրածներս կարդալուց հետո էլ մինչև հիմի չի հասկցել կնո՞ջ էությունը»:

... Գուռը բայեց ու ներս մտավ Լ. Բատիկյանը՝ թևատակին մի թերթափաթեթով: Սառն էր ընդունելութիւնը: Ընչո՞ղ լուսթիւնը խախտվեց Լևոնի խոսքով.

— Երրա՛, որ իմանաս ի՛նչ եմ քերել...:

— Արդեն ինձ զարմացրել ես գրածովդ:

— Բերածս իշխան է:

⁷⁰ Մետաքսն քելել է այս պատճի մի այլ տարբերակ կապված կուսակցական պաշտոնյա դաժան մի նրխասարկ բանաստեղծի հետ — Ս. Ս.:

- Ես իշխանների հետ գործ չունիմ:

- Մարզ չէ՛, ձո՛ւկ է՛:

- Մե՛կ է: Լամ էլ էգիկ չի կրնա իշխան էղնի: Դո՛ւ բն, Սամվել, երկու որ առաջ միասին Անան չէի՞նք, որ սևանցիները մղկատացին, թե այնկոծության պատճառով չէին կրցն իշխան բռնի: - Էդ ի՛նչըդ է, գոռոզ իշխանը Անանու՛մ արքային չուզեց երևալ, հիմա փռոճնեղ եկել է Երևան՝ արքայից ներողություն հայցելո՞ւ... Փաթեթերը բաց տեսնեմ:

Լենց թուղթը բացելիս ցելոֆանե տողարկի մեջ երևացին Ալյոբ 16ի տղամահոտ իշխանները:

- Էսպես էլ իշխան՝, որպես քննադատ է՛լ ես էսքան ազնիվ էսիկ գիտե՞ս ինչպես իշխան է, Լեո՛ն, ինչըդ որ ուրիշ մուրակից թուզող ափսեներով գան Երկիր՝ ուղեման երկբային մարդ տեսնին, բայց մի չար հրաշքով Երկրի բոլոր մարդիկ վերացած էղնին, մենակ զու մնացած էղնիս: Քեզի տեսնին, բսն՝ ահա՛, էսիկ մարդ է: Էսիկ էլ ճիշտ էդ տեսակ իշխան է՞»:

* * *

Տանամյակներ շարունակ դերվիշի կյանքով ապրած, երբեք չբեղության ու վայելքի չձգտած, ամեն ինչ անմասնորդ իր ժողովրդին տված և փոխարենը ոչինչ չպահանջած այդ նվիրյալ բանաստեղծը եղեռն տեսած ու պատմական Հայրենիք կորցրած մեր ժողովրդի մշտաբխուն խիզճն էր ու ոգին:

Հայրության հանդեպ թույլ արված պատմական անարգարությունների դեմ հերոսաբար մարտնչող և հանուն մեր ազգային արժանապատվության ու իրավունքների մաքառող մերոջա «տխուր պատկերի ասպետ» էր նա, որ խորհրդային վարչակարգի պայմաններում հետևողականորեն մաքառեց ժողովրդից թաքցվող եղեռն կոչված իրողության ճանաչման և պատմական արդարության վերականգնման համար:

Հայրենիքում թե Սփյուռքում Հայոց լեզվի ամենախիզախ պաշտպանն էր նա և Հայապահպանություն անխոնջ ու անդուլ զանգահարը, սերունդների մեջ մեր զարթնեցի, ազգային ինքնագիտակցության ու նկարագրի աննահանջ գտաբարակը,

ազգային միասնության ու Հայրենի Հոգիի վրա աշխարհացիք Հայության համախոթման հզորագույն պատգամատեսն ու արցախյան ազատամարտի նախապատրաստողներից, նրա հերոսական սերնդի գաղափարական առաջնորդներից մեկը: 1988 թ. վաղ գարնան բազմահազարանոց ցույցերին ու միախնդներին մարզկանց համախմբում և երբեմն միխոնտանոց բուռնացրված ու անտանված ձեռքերով ձեռուն Արցախի ազատամարտի էր տանում Հովհ. Երրազն իր այն կարգախոսներով, որ տասնամյակներ շարունակ ներարկել էր համայն Հայության արյան, հոգեբանության ու գիտակցության մեջ:

Իր ստեղծագործությունքը Հովհ. Երրազն մեծազույն անհրաժեշտություն էր և մեր ժողովրդին մատուցեց անուբանալի պատմական ծառայություն. նրա բանաստեղծություններն ու պոեմները իրոք սերունդների վրա ունեցել են վիթխարի ներգործություն և՛ դեղադեղատական, և՛ բարոյահոգեբանական, և՛ ազգային ինքնամանաչման առումներով:

Չլինեին նրա՛ կարգախոսի, պատգամի ու բանաձևի արժեք ունեցող գործերը՝ մենք ժամանակին դժվարությամբ պիտի ազատագրվենք մեր մարդկանց՝ Յասիլբեկ, Զալբեկ, Նուրբեկ, Անտեֆոն, Գասեֆոն, Գայանեբեկ, Դեզինեբեկա, Ենուբու, Վան-Երիբեա, Կարբու, Լարբու, Վիլիս, և բնակավայրերի՝ Թալաբոխ, Ճյոխան, Տավշանդշյաղ, Սուխոյ - ֆանտան, Իլան, Զալան, Դոնախոզան, Մոլլադուբուն, Սամազարվեշ, Դոթբուր, Ուլիխանլու, Մեջղլու, Չոտլու, Չամուր օտարահունչ ու անխմատ անուկներին: Միափեցնող պատակի նշանակություն ունեցան շիրազյան «Հայոց անունները» և «Մեր գյուղերի անունները» պոեմները Հայաստանը օտար ժանդից մաքրելու և Հայության նոր սերունդներին արժանի Հայրենիք դարձնելու խնդրում:

Կյանքը հիմնավորապես ցույց տվեց Հովհ. Երրազ ազգային գործչի բանաստեղծական ազնիվ ու հզոր խոսքի ճշմարտացիությունն ու կենսունակությունը: Իսկ նրա բազմաթիվ կանխատեսումներ իրականություն են զարմեկ կամ իրականանալու ճանապարհին են, և շատ բանաձևումներ էլ այսօր ունեն

Հուժ արդիական նշանակություն չենց գալիքի տեսանկյունից: Հանձնարեղորեն ըմբռնել էր դարի սգին, մարդկային ու ազգային հարարներությունները, ճանաչում էր օրինաչափությունները, տեսնում, զարմանալի ներքնատեսությամբ զգում էր, թե զեպի ուր է տանում զարգացման ընթացքը, և գալիքում ինչ է սպասվում հայ մոդոլոգին: Հպարտանում էր ազգային սգի և նկարագրի ունեցող, Հայաստանը շենացող, նրա գիտությունն ու մշակույթը զարգացնող Հայերով, բայց և դառնանում էր բազմազգի մի մարդկանց խարդավանքներից, սպիքը երեսին այլ բան էին ասում, հետևից և հարց վճռող կարողություններում այլ:

«... Իսկը Հոգեբանական վեպի զար է հիմա, — մի օր ասաց վրդովված բանասանկզքը, — իբր թե կստեղծ կատաղի թշնամիներս քիչ էին, իմ մանկության որբանոցային, պատանուության ու երիտասարդության ընկերն էլ, որ մտկոմարենակ Նոյի ազգով էլ զարձել, իմ ուսուրենն արգիլիք զրքի զեմ է վայրահաչել՝ Հայտարարելով, թե իբր ես նացիոնալիստ զրոզ եմ, ինձ չի կարելի հրատարակել և ուսուրենով ներկայացնել համամիութենական ընթերցողին: Վերջերս էլ իմացա, որ նույն մարդը հիմա իմ մասին ինչ-որ գիրք է գրում: — Ափսո՛ս փրպասան չեմ, որ սրանց կերպար-գիմանկարները տեղգծեն ու Հոգեբանությունը անկաշկանդ արձակի լայն հնարավորություններով ու ճկուն արտահայտչամիջոցներով բացահայտեն: Թե չէ՛ ես ինչ էլ կզրեն՝ բանաստեղծություն կդառնա: Որոչ հատվածների ծանոթ եմ, բայց չեմ պատկերացնում, թե նրա գրած գիրքը ինչ պիտի լինի»:

Սուսը Ա. Գրիգորյանի «Պատումներ Երրազի կյանքից» հուշապատումի մասին է, որը լույս է տեսել բանաստեղծի մահից երեք տարի հետո: Մեր նպատակից զուրս է դնահատելի և զատապարտելի էջերով Հարստա այդ հուշագրքի, ինչպես և մյուս հուշագրությունների՝ բոս հուժան արժևորումը: Ն. Մշեցու հուշագրությունն էլ անզրադառնում ենք, որովհետև նրա մեջ կա Երրազից անձամբ մեր լսածը հատատող հետեյալ վկայությունը.

«...Մնացինք երկուսով:

— Ի՞նչացել եմ՝ Արամ Գրիգորյանը զերք է գրում քո մասին, ճի՞շտ է:

— Այո՛, ճիշտ է, բայց չգիտեմ ինչ զուրս կզա:

— Բայց զու գրա հետ երկար տարիներ չէիր խոսում: Նա ինչպե՞ս է քո մասին գիրք գրում:

— Է՛, բոլորն էլ գրում են. կո՞նա՞մ բոս՝ մի՛ գրի:

— Բայց պատճառն ի՞նչ էր, որ էզբան երկար տեղք ձեր խոսությունը:



Պոլի. Շիրազը ապրող հանձար



Սի քու գերեզման 1984 թ. մարտի 21:
Պոլի Շիրազի յոթնորոցը

— Իյա՛, ընչի՞ զու չիղեն՝ ընձի՞ կհարցնես:

— Գիտեի, բայց մոռացել եմ:

— Որ մոռացել ես, թող էզպես էլ մնա: Լա՛վ: Արամը Մոսկվա կապրի: Իմ մոզովածուն կուղեին ուսուրենն սպեին: Արամն ըսել է էզիկ նացիոնալիստ զրոզ է:

— Բայց դու ճշտեցի՞ր:

— Իհարկե՛ն, ուրիշը՛մ պատանկ է, ես էլ լսել եմ: Դրա համա՞ր էզքան երկար պատուզա պահեցիր: Բայց իրա տղի՛ Բուրիկի հետ կխոսիմ, նամակ կգրեմ»¹¹:

Այս իսկ պատճառով էլ, թող ներգլի տակ, դժվար է հավատ ընծայել բանաստեղծի քրոջ՝ Գուհար Կարապետյանի այն հավաստմանը, թե իբր «վերջին հիվանդության ժամանակ ինձ հետ գրուցելիս Հովհաննեսը նորից խոսք բացեց «Սիրելի, բայց հեռավոր» Արամի մասին. «Ն՛ր է գալու»¹²:



...երևու Շիբազ կա այս նստն աշխարհում
Մեկը արծով է քանցակված,
Մեկը վանդակված...

եկավ հեիհե, թո՛րիչքով, բայց Շիրազը արդեն չկար»¹³: Այն-
ինչ բանաստեղծի մեծ նեղով արտասանած վերջին խոսքը, հի-

¹¹ ՏՅՆ Ե. Մշեթի. Ելվ, գիրքը, էջ 83:

¹² Ա. Գրիգորյան, Ելվ, գիրքը, էջ 230:

¹³ Մեսարյան յի Աշխ բանաստեղծի քրոջ Գուհարի այդ պատեմ ներկա գտնվելը—Ա. Ա.:
¹⁴ Նույն տեղում:

վանդանոցում այդ պահին ներկա եղած հարազատների առ-
ջով, իրականում եղել է հետևյալը.

— Էրեխո՞ցս բերեք...

Բայց այդ ասելով՝ նա պահանջել էր իր մյուս զավակներին
և ոչ թե «հեռավոր, բայց սիրելի Արամին»:

Հարկազրկված ենք տակ, որ այդ «վերջին հիվանդության
ժամանակ» ամբողջովին ուժասույստ Շիրազը, դարձյալ ներկա
եղած հարազատների վկայությամբ, ոչ միայն չի «գրուցել»,
այլև չի խոսել, ուր մնաց՝ գրել. մահն զգալով լուս արտասովի
է միայն: Ականատես Մեսարյանն, որին նախասպա գանդահա
բած է եղել Ս. Կապուտիկյանը, Շիրազի կաթվածահար լինելու
օրվա՝ մարտի 9 - ի զեպքն այսպես է վկայագրել. «Ջանգա-
հարեցի Կապուտիկյանին: Հայտնեց, որ Հովհաննես Շիրազը

կաթվածահար է եղել, որ Արայիկը հարբուխով պառկած է: Շի-
րազին տարել են Բ-րդ վարչության հիվանդանոց: Ես վատ նա-
խազգացումով իրար անցա: Լցվեցինք Ժիրայրի ավտոմեքե-
նան ու շտապեցինք հիվանդանոց: Ինձ թույլ ալիցին վերև
բարձրանալու: Մտա հիվանդանոց այն պահին, երբ Շիրազին
պատգարակից տեղափոխում էին մահահակալ: Գունատ էր: Գրե-
թե անզգա: Աչքերը փակ, խախտացնում էր: Ձեռքի եղունգնե-
րը կապտած էին: Հասկացա, որ վերջն է... Այստեղ էին Շիրազի
փոքր քույր Մանիկը, նրա աղջիկը՝ Լենան, աղանձ Ջոսիկը,
Արայիկի կինը՝ Նարինեն: Հիվանդին 421-րդ սենյակում տե-
ղափոխելուց հետո միացրին սրտանման: Ես հեկեկալով թեյի
զգալով ջուր էի լցնում հիվանդի բերանը, որ առանց շուրթերի
միջնորդության կլիկալով հոտում էր կոհորդն ի վար... «Շիրազ,
Շիրազ, առում էի շփելով ճակատը, բայց ոչ մի արձագանք:
Տնքում էր ու թույլ խոխուում: Թվում էր՝ ձայն լսում էր,
աչքերի կուպերը շարժվում էին, բայց բացել չէր կարողանում:
Անզգա ընկած էր գրականության հսկան մյուսահեր գլուխը
բարձին»¹⁴ (ընդգծ.—Ա. Ա.):

¹⁴ Մեսարյան, Ելված գիրքը, էջ 57-59:

Այս է եղել Հովհաննես Երրագ բանաստեղծի և մարզու վերջին օրերի ու ժամերի իրական վիճակը:

Բայց Հեռո Հայանվեցին ինչ-որ ժամացույցի պատմություն, մահից տարիներ, անգամ ասանամյակներ առաջ Հովհ. Երրագի գրած բանաստեղծությունները Համարեցին Հիվանդանոցում կամ «մահից քիչ առաջ գրված ստղեր»: Ճիշտ է, որ միևնույն փաստը կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ, բայց բայց կեղծիքը, «մի լավ բան ստեղծ համար» ճշմարտության կամայական խեղաթյուրումը Հանդուրժելի է: Նույն Ա. Գրիգորյանն էլ է նման նման մի բան Հարմարեցրել կամ Խ. Արսլանի ասած՝ «չի՛նել և սազացրել»: «Երբ մի որ այս լուսանկարը լույս աշխարհ գա, նրան որպես բացատրություն պիտի Հնչեն Երրագի, մահվանից քիչ առաջ գրած, ստղերը.

Այնպես խաղաղ է արևը մեռուում,
Կարծես չգիտես խորհուրդը մահվան,
Դեմքին դեռ ոսկի ժպիտ է մուսմ:
Մինչև խախտում կիջնի գերեզման:

Օ՛, թե գիտե՛ս, թե ես էլ, իբրով,
Մահեցա Հեռո աշխարհ պիտի գամ,
Ես էլ կմեռնեմ նրա պես խաղաղ,
Ես էլ ժպիտով մահելու կզևամ...¹⁵

Ինչի՞ նման է սա և ինչի՞ համար, տե՛ր Աստված, այսքան է՛լ՝ քմահաճ ու կամայական... Բայց էլ՞՞ որ 1949 թ. գրված այս բանաստեղծությունը վաղուց ապաված է եղել Հովհ. Երրագի տարբեր Հատորներում: 1949 թիվը՝ ուր, 1984 թիվը՝ ուր: Այսինքն՝ Հիշյալ բանաստեղծությունը գրված է եղել ոչ թե Հեղինակի «մահվանից քիչ առաջ» ու նրա ձեռքով, այլ... առնվազն 35 տարի առաջ...

Եվ սա՛ է Ա. Գրիգորյանը ներկայացրել որպես որպես «Համոզորեն գեղեցիկ ճշմարտություն»:

Իսկ այս կարգի «մանր» թվացող վրիպումները, իրոք որ, ստվեր են զցուժ բանաստեղծի Հնագույն ընկերոջ՝ Ա. Գրիգորյանի՝ «ականատեսի աչքով» նկարագրած «Համոզորեն գեղեցիկ» պատմների վրա և ստիպում են կասկածի աչքով նայել նրա նկարագրած նույնիսկ իրականում ճշմարտապես կատարվածներին:

* * *

Զարմանալի Հանկարծատեղծ էր Հովհ. Երրագը. նրա մահագրությունները՝ արձակ կամ չափածո, ծնվել ու զրվել ակնթարթի մեջ: Իսկ ինչքա՞ն սրամիտ ասույթներ, բանավոր բանաստեղծություններ թղթին չհանձնվեցին... Համո Ասհյանն անտեղի էլ էր ասում՝ գրավորն արգեն կա, պետք է փրկել բանավոր Հովհաննես Երրագին:

Ընկերներս գիտե՛ին, որ խաչի սիրահար է: Երբ Օսիկ Ղափանցյանը հրավիրեց, խոստացավ անպայման ինձ Հեռո ներկա լինել: Իսկ պայմանավորված օրը գծկամությանը համաձայնեց, թե՛ կերթա՛նք մարդու՛ն նեղություն կտանք... Ասացի՞ սկզբից պիտի մերժե՛իր, հիմա նա այդ նեղությունն արգեն կրել է և Հենց քո նշած ժամը Ց-ին էլ սպասում է:

— Համոզեցիր, — ասաց Հագնվելով, — Հրըր սիրի՞նդ ուր է:
— Փողոցում սպասում է, որ Հենց մեզ տեսնի՝ մեքենա կանգնեցնի:

Ժամը 7 անց կես էր, ձմեռվա մութնուլույս: Հեռվից ձայնեց գրիթն ըզզվելով.

— Նկի՛ր,
Հանդիպել ես գելի...

Մտածեցանք: Դեռ մեքենա չկար: Ականջի մոտ, բայց ինձ էլ լսելի, ժպտալով շարունակեց.

Նեկի՛ն՝
Հանդիպել է գելին,
Բայց զարկելով թափբե՛նների թելին՝

¹⁵ Ա. Գրիգորյան, 674, գլխը, էք 230: Սեր ընդգծում է: Այնպես է քվում, քն Գովհ. Երրագի քոռը Գոտար Կարապետյանի «եռավոր, բայց սիրելի Արամի» մասին խոսքը անցել է Ա. Գրիգորյանի զրի սակավ և ստացել նրա համար «նպատակոր» երանգներ - Ս. Մ.:

Կախարդում է գելին...

Այն ժամանակների մի սիրողական կինոսարքով նկարում էի Հյուբերին Երբազի հետ: Մտերիմ Հյուբերից մեկը նկարվելիս կանգնեց Նելլիի կողքին: Երբազը մտտեցավ.

— Նելլի՛, կողքիդ կանգնած է արսվերը գելի՛...



Լուսանկար շրջան մակագրությունը: «Ի՞նչ Մամբրես Նելլիի գլուխ: Ի՞նչ Իր Սիբին էլ ի՞նչ գլուխ լինի գեթ այսպես, մեկ վայրկյան...»: Գ. Շիրազ, 1968.

Հովհ. Երբազը մանկան պես հրճվում էր շարերի ու վատերի մասին իր իսկ Հորինած մի երևակայական գլխարկալի ճամփորդությունը պատմելիս: Պատժում էր Հավաստությունը ներշնչող լրջությամբ, չարանճի կատակելով ու ժպտալով, բայց ասածին կարևորությունը հազորդելով:

«— Դրանի, որ օձերի արքայի նստավայրը Հեղկաստանն է. մի որ վեր կացա ու Հեղկաստան գնացի... երևակայությամբ իրականում ինձ ո՞վ կիմոզներ, որ երթայի: Գնացի ու Հարցնելով գտա օձերի արքայի պալատը: Պահապանն ու քարտուղար օձ-օձուհիներին ներկայացա, խնդրեցի, որ իմ մասին զեկուցեն արքային:

Գեղեցիկ կյանքի վայրում լայն ժայռեր զայտ:

Ջեկուցեցին: Չնայած օձ էր և օձերի՛ արքան, բայց մեր մեծ ու փոքր պաշտոնյաներին բոլորովին նման չէր: Երբ իմացավ, որ բանաստեղծ եմ և Հայաստանից Հատուկ իրեն դիմելու խնդրով եմ գնացել Հասել Հեղկաստան, ժամանակ արամազրեց ու մարդավայել քնդունելություն արժանացրեց: Ներս հրավիրեցին: Տեսա պետական գործերը իմ պատճառով Հեսածգած արքային՝ սովիզեն գահաձյգին բազմած, միախոտը բերանին և գեղանի օձուհիներով շրջապատված: Նրա վերաբերմունքից զգացված խոնարհ ողջունեցի և վարանուժով կանգ առա:

— Լսում եմ,— ասաց արքան և նազիր-վեզիր օձ-օձուհիներին դուրս արեց: — Մնացինք երկու արքա՝ մեկս օձերի, մեկս՝ բանաստեղծների: Ի՞նչն է քեզ մեր աշխարհը բերել, Հայոց բանաստեղծների արքա Երբազ, անկեղծորեն ասա՛, մի՛ քաշվիր:

— Ջարմացած եմ, որ Դուք էլ եք ինձ լավ ճանաչում, արքա՛,— ասացի Հուզված ու շփոթված:

— Մի՛ գարմացիր. բանաստեղծիդ փառքից ու հուշակից առաջ Հալածանքներիդ Համբավն է մեզ Հասել:

— Հենց այդ պատճառով ես էլ Հասել եմ այստեղ: Եկել եմ Ձերդ վեհմաքայլ Օձուխանը խնդրելու, որ մի՛ բիշ, շա՛տ բիշ, չնչին, խորհրդանշական քանակով թույն տաք ինձ՝ գուռս ինքնապաշտպանության, չարամիտ թշնամիներին դեմ կռվելու և իմ մեջ ապրող Հանճարեղ բանաստեղծին փրկելու Համար: Ըն՛չառ որ ասե՛մ, արքա՛, չե՛մ էլ կռվելու. պարտացիր չէ՛ մեկնումեկին խայթե՛մ, մարդկային բնույթս այդպիսին չէ: Բավական է թշնամիներս միայն իմանան՝ ես է՛լ թույն ունե՛մ իրենց վախից այլևս ինձ չեն Հալածի:

Լեց արքան, խեղճացավ, արքայական վեհությունից դարձավ մի բուռ Հասարակ օձ, նազիր-վեզիր օձերին ու օձուհիներին նորրից ներս կանչեց և նրանց ներկայությունը ասաց.

— Երբազ ջան, ներս՞դ եղիր. ես քեզ մերժողը չէի, բայց այս պալատականներս էլ գիտեն, որ մեր թույնի պաշարները Հայպետհրատն ու Հայաստանի գրողների միությունը արդեն կես դարից սգվել է՝ կապալով վերցրել են ու չեն վերագործնում...

Մենք էլ վաղուց թունադուրկ, խեղճուկրակ ու թշվառ օձեր ենք, փոստ, քեզ օգնել չենք կարող...»:

Այս զավիշաողորմական պատմությունը Հենց այնպես սրամտելու համար չէր ստեղծվել:

* * *

Միշտ էլ անտաղանդներն ու անցողիկ միջակությունները, մերձգրական երևույթները, թուամայանի ասած «սգ-գրական ոչնչությունները», միտումնավոր անանեղով Հիմնականն ու էականը, այդ կերպորդականներից ու պատահականներից չարամտորեն աղմուկ, փրփուր ու մուսցություն մշուշ են հյուսում մեծերի անվան շուրջ: Սա ցավալի օրինաչափություն է, որ ուղեկցում է բոլոր հանձարներին՝ Գուշկինին կաշենովսկիները, թուամայանին «Հայոց դրամբյանիզմը», Տերյանին մատենյանները, Մեծարենցին՝ Ենոփ Արմենն ու Ժակ Սայասպայանը: Վերջինիս մասին եր. Օտյանը գրել է. «Սայասպայան գրող է նաև, խեղճ մարդը, սակայն, ժամանակ չէ ունեցած գլուխգործոց մը գրելու»:

Նման քննադատներով էին շրջապատված Եղիշե Չարենցն ու նրա համակիրները: Գ. Վանանչեցին, Ն. Գարսյանը և 1920–30-ական թթ. այգործինակ քննադատներն այսօր հիշվում են միմիայն Չարենցի առնչությամբ: Նիշտ այդպես էլ եղել են քննադատներ ու գրական գործիչներ, որոնք եթե հիշվեն, ապա միայն Հովհ. Երրազի առնչությամբ:

«–Չարենցի գրական թանգարանը քննելիս փոխն չտեսար, – Հարցնում էր ժամանակի ողջամիտ քննադատ Հար. Սուրխաթյանը Գուրգեն Վանանչեցուն և նմաններին:

Հովհ. Երրազի կապակցությամբ էլ Նույնպիսի մի Հարց էր տալիս և Գուրգեն Մահարին իրեն ու բոլորին.

«– Թերություններ ունե՞ր Երրազը:

Գառափանում ենք.

– Ունի:

– Կարելի՞ է նշել նրանցից ամենակարևորները:

Այս կերպորդ Հարցին պատասխանելու փոխարեն՝ ես ինձ Հարցնում եմ.

– Նշելուց առաջ կամա-ակամա թերիները՝ դու պատասխանիր.

– Կարո՞ղ ես գրել վերոհիշյալ բանաստեղծություններին համապոր դործեր: Գառափանում եմ.– Ո՛չ:

– Կարո՞ղ ես գրել մի նոր «Բիրլիական»:

– Ո՛չ:

– «Քնար Հայաստանի», «Տիգրան Մեծի վի՛շաբ»:

– Ո՛չ:

Այս «ոչերից» Հետո դու իրավունք ունե՞ս խոսելու թերությունների մասին մի բանաստեղծի, որն ստեղծագործող է այս անկրկնելի գործերի...
– Իհարկե ոչ»¹⁰:

Հիմա՝ առանձնակներ այն, զարձյալ հայտնվում են արդեն փակված «Ազատամտություն» թերթուկի լրագրողների պես թափթիփուկներ՝ բանաստեղծի լուսավոր հիշատակի վրա ցելի շարժելու անհասկանալի մոլուցքով: Ուրեմն՝ Հին պատվերները դեռ չարունակվում են, և կամ այսօրվա պաշտոնատարներինց ոմանք էլ իրենց աթոռա-անձնապաշտպանության լավատյուն կերպը անցյալի պես համարում են անհրաժեշտ անդերում Հովհ. Երրազին դեմ արտահայտվելը:

Միջնդեռ վրացի գրող և թարգմանիչ Մորիս Փոջխիշվիլին, որ չունեի նման վախ ու մտահոգություն, անկողմնակալ ու անկեղծ էր Երրազ Բանաստեղծի և Մարդու իր գեղահատուկներում: Նա Հովհ. Երրազի հուշարկավորությունը չէր մասնակցում որպես Հարևան երկրից ցավակցելու և Հարգուպատշաճ մատուցող Հյուր, այլ Հարգապատի պես եկել էր «ցավակցություններ ընդունելու»: Եվ զա անում էր Հովհ. Երրազ Մարդու և Բանաստեղծի համամարդկային մեծ արժեքի խոր ըմբռնմամբ. «Մեր դարը չէ ունեցել պոետական հանճարի այնպիսի կորուստ, ինչպիսին Հովհաննես Երրազի մահն էր: Նրա մեջ բոցկրուտ էր մաշտոցյան լեզվի կրակը, նրա երակ-

¹⁰ «Խաղաղության ժամանակ» հոդվածների ժողովածու, «Գառափան» իրատ. եր., 1974, էջ 20:

ներում հասում էր նարեկացու, Քուչակի արյունը, իսկ սրտի միջով անցնում էր Խաչատուր Աբովյանի վերքը: Նա տիրապետում էր Սասունցի Դավթի ուժին, սակայն նրա պոեզիայում ծագվում էր մոր ծագիկը, որի անունը քընքշություն է: Նրա քնարը պատվով կրում էր Կոմիտասի կարոտը և Մարտիրոս Սարյանի գույների հարմոնիան»:

Այդպիսին էր Հովհ. Շիրազն իր երկրային կյանքում, այդպիսին է նա անմահության ոլորտներում: Աստիճանաբար ցրվում են չարամիտների ստեղծած փրփուրն ու մշուշը, և բանաստեղծի կերպարը իր պաշտելի Մասիսի նման ամենքին երևում է իր բնական վեհությամբ ու պայծառությամբ:

Այս գիրքը ձոն-մատյան է մեծ բանաստեղծի ու գերազնիվ Հայի Հովհաննես Շիրազի սուրբ հիշատակին: Նրա հանգեպ մեր մարդկային ու մասնագիտական պարտքը գոնե մասամբ հատուցած կհամարենք, եթե մեզ հաջողված լինի առանց «չարամտորեն ավելացնելու կամ պակասեցնելու»՝ թեկուզ որոշ չափով ընդլայնել իմացությունների շրջանակն ու պատկերացումները իրոք համաժողովրդական մեծ բանաստեղծի ու մարդու մասին և ավելի ճանաչելի դարձնել նրան գիտական հանրությունը, ընթերցողների ներկա ու գալիք սերունդներին:

ՄԱՆ
ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ
ԾՆՈՒՆԴԸ

Իմ սիրո արցունքի միջին ատում եմ՝ երկի՛նք իմ, ներկի՛նք,
 Եթե քո վարդերի վրա արցունքի մի ցող եմ լացել, —
 Ես խարված իմ սերն եմ լացել, օ՛, ներթի արցունքս, ներթի,
 Ինձ բուրբ քո ստողերի մեջ լուկ նրա աչքերն են խոցել...
 Ես վայրի վարդենու պես երբ նրան իմ սիրտը բացի,
 Առավ նա ու նետեց ճամփին՝ ասելով՝ բիրտ ես մնացել,
 Բայց երբ որ գտան ճամփորդներն ու սիրով սիրտս կարդացին,
 Ուզեցին Համբուրել վիշտս, սեղմեցին կրճքներին ջահել,
 Ասացին՝ իդուր ես լացել թափառող մի ծաղկի Համար,
 Ասացին, որ օրտես, ահա, վշտերի ամպին է Հեռացել,
 Բայց ամպից հեռք է մնացել կարոտիս արցունքը դոհար, —
 Ա՛խ, ներթի, մո՛րս պես ներթի, թե իրավ դու մայր ես դարձել,
 Ես սիրո վարդն եմ մնացել քո երգի բերչու՛թյան Համար:

Հովհ. Շիրազի մանկության, որբանոցային դժվարին կյանքի, ուսումնասիրության, բանաստեղծական հայտնություն, առաջին Հաջողությունների ու ստեղծագործական վերելքի մասին շատ է զբվել: Բայց ահա նրա կյանքի հատուկ շրջանի, մի շարք ստեղծագործությունների հրատարակման պատմության մասին ես չեմ չի կարելի ասել: Հասկանալի պատճառներով քննադատները խուսափել են մխրճել Հատկապես 1950—80-ական թթ. նրա գործունեության, հայտնության պահանջատիրության արժարժույթների, գրողների միության, հրատարակչական ու պետական-կուսակցական մարմինների հետ ունեցած հարաբերությունների մեկնարանման մեջ:

Նախորդ «Մուտք» բաժնում մենք անդրադարձանք այդ հարաբերությունների մի շնչին մասին միայն. հաջորդ դուրսնեում էլ դեռ կենդակացնենք Համանման խնդիրներ: Սակայն դրանք դարձյալ ամբողջական չեն լինի. անսպառ այդ երևույթը միշտ էլ արժանանալու է վերաբարձարժաների, որոնք իրենց հետ կրեքեն նոր բացահայտումներ ու մեկնաբանություններ: Ահա ինչու չժանրանալով արդեն հայտնի կենսագրական փաստերի վրա՝ ջանալու ենք դիտարկել մեր Հայցնական տղա առավել կարեորները և, մյուսները թողնելով Հետազային, առայժմ հիմնական դիրք ենք ունենալու նրա գրական ուղու կարևոր շրջափուլերի դիտարկումն ու մի շարք բնորոշ ստեղծագործությունների արժեքումը:

Մարզու ծնունդը և բանաստեղծի ծնունդը տարբեր իրողություններ են: Դրանք երբեք չեն Համընկնում: Բուրբ մարդիկ էլ ծնվում են և ունենում են իրենց ծննդյան, ցավոք և մահվան տարիթվերը: Քչերն են մարզու Հետ միասին բանաստեղծ ծնվում կամ դառնում Հետո, իսկ մարզու մեջ բանաստեղծի ծննդյան ժամանակը որոշելն էլ դյուրին չէ: Ի՞նչ

սկզբունքով որոշել՝ գրած ու սպաղարած առաջին բանաստեղծություններն իմ, առաջին, թե՛ մի քանի ժողովածուներով, դժբանցից լավագույնս՝ իմ ամբողջ գրական ժառանգությունը: Բայց տասնյակ ժողովածուներ սպաղարելուց հետո էլ ո՞՞՞նք բանաստեղծ չեմ դառնում: ուրեմն՝ բանաստեղծ չէիմ էլ ծնվել:

Ինչդերև ավելի պարզ հարցադրմամբ պետք է ձևակերպել բանաստեղծ ծնվում եմ, թե՛ գառնում:

Հարցն ունի միանշանակ մեկ պատասխան՝ Հովհ. Շիրազը բանաստեղծ ծնվել էր, ու թեև այս պարագայում էլ մարզու և բանաստեղծի ծննդյան ժամկետների համընկնում չկա, բայց դրանք՝ որպես իրողություններ, ժամանակով միմյանց ամենից մոտն են, կամ մարզու և կայացած բանաստեղծի միջև ժամանակային տարածությունն ամենից կարճն է:

Համամիտ ենք Ա. Գրիգորյանի այն տեսակետին, թե Հովհ. Շիրազի գրական ճանապարհի սկիզբը չի կարելի համարել 1935 թ. «Գարնանամուտի» սպաղարությունը, քանի որ դրանից շատ առաջ՝ դեռ 1929-30 թթ. էլ նա արդեն սպաղարվում էր ու արդեն կայացած բանաստեղծ էր, իսկ գրական առաջին փորձերը կատարել էր դեռևս 7-8 տարեկանից, նույնիսկ դրանից էլ վաղ: Բանաստեղծների, աշուղների, երգիչների հայրենիքում, ուր ծնվել ու հասակ է նետել Օնիկ Կարապետյանը, վաղ հասունացման համար կային նպաստավոր պայմաններ: Այդ միջավայրում իրոք մեծ կարևորություն էին տալիս մարզու գեղարվեստական ունակություններին, առավել ևս՝ բանաստեղծելու կարողությունը: Մրամիտ ու խոսքաչափ մարդկանց այս միջավայրն էլ կողմնորոշիչ եղավ սպաղար բանաստեղծի համար և նպաստեց նրա բնածին ունակությունների, ստեղծագործական կարողությունների անկաշկանջ դրսևորմանը:

Ժամանակին մատնանշում և գրում էին Հովհաննես Շիրազի ծննդյան տարրեր տարեթիվը: Բանաստեղծն ինքն էլ չէր թաքցնում, որ իր անշարժապաս եղած տարիներին իրեն աշխատանքի տեղավորելու համար հարցառածները ստիպված են եղել փոխել ծննդյան վկայականը մեկ - երկու տարով մեծացնելով նրան: Այդ պատճառով էլ, իբր, նրա ծննդյան թուն

տարեթիվը միայն Աստղիկ մայրիկը կամ բույրերը՝ Մանիկն ու Գուհարը, գիտեին:

Մինչև 1965 թվականը որպես Հովհ. Շիրազի ծննդյան տարեթիվ ընդունված էր 1914 թ. ապրիլի 26-ը, և դրա դեմ բանաստեղծն ինքն էլ մինչև 1974 թվականը կարծես չէր առարկում: Ընդհակառակը, տարրեր առիթներով նույնիսկ հաստատել է այն.

Վեց տարեկան մանուկ էի,

Երբ կոչվեի սպառա Հորսւ-

գրել է բանաստեղծը և անգամ վերջին հրատարակություններում էլ չի փոխել: Ուրեմն ամենագործ իմարտություն հոր սպանություն տարեթիվը՝ 1920-ը, հանում ենք այս «վեց տարեկան»-ը և ստանում անվիճելի իմացող 1914-ը: Հաճախ էին տարակուսողները հարցնելու համար անձամբ իրեն՝ Հովհ. Շիրազին գիմում, իսկ նա խորհրդավոր ու բազմանշանակ պատասխանում էր.

Մովսես օրը էլ մի՛ Հարցելի.

Հայը ծննդյան լուկ մի օր չունի...

1965 թ.՝ Հայոց մեծ եղեռնի 50-ամյակի ապրիլքսանչորսան հայտնի դեպքերից հետո, Հովհ. Շիրազը հատուկ կամարտահայտությամբ հայտարարեց, որ ինքը ծնվել է հեկտ 1915 թ. ապրիլի 27-ին՝ Մեծ եղեռնի դժնդակ օրերին Կարսից Գյումրի գաղթի ճանապարհին¹⁷: Իր այս որոշումը նա հիմնավորել է նաև բանաստեղծություններով.

Ես ծնվել եմ ձորերում՝

Եղեռնի սեւ օրերում:

¹⁷ Ինքիբր ասելով իսնգամանորեն կարող է ընկնել Չուկ. Շիրազի գիտական կենսագրության մեջ, որը պետք է շարադրի փափուրդների և ժամանակակիցների վկայությունների մանրակրկիտ ուսումնասիրությանը ու փաստերի համալրմանը: Մենք անդրադառնալու ենք Գ. Շիրազի կենսագրության այն դրվագներին, որոնք կարևոր ենք իսմարում նրա որպես բանաստեղծի, մակերման, ստեղծագործական ուղու, գրական մտածողության ընթացի, նախորդների ու ժամանակակիցների հետ ունեցած հարաբերությունների և ժամանակի զգական կյանքում նրա դերի ընթացադրման տեսանկյունից - Ա. Ա.:

Մայրս՝ կրճիթի օրորել՝
Իմ օրորոցն է կորել:

Աչքս քացի՝ տվի տեսու,
Աստված ասաց՝ «զոհ է սա»:

Գեռ փայտե ձի չհեծած՝
Բաճաթի միուց ընկա ցած:

...Քիչ էր մուռ՝ եղևուների
Թաթին իմ կոկորդն էլ բուխ:

Բյուրերին է նա Հորել,
Ինչպե՛ս է, որ չեմ կորել:

Ձեմ պղտորվել վշտից մեծ,
Սոխակս օձի չսփռվեց:

Հոգին արցունք ու ուկի՝
Խոսացվածքն եմ իմ աղբի:

Այժմ աղբին իմ անշար
Գարաք են Աստված ու աշխարհ...

Ընդգծելով Կարսում ծնված իր Աստղիկ մոր և գյուժերցի հմուտ հողագործ ու գիշերապահ Թաղևոս Հոր մեղձ ու բարի բնավորությունը՝ նա ֆանացել է հաստատել այդ թվականը նկատելով, որ իր ծնունդը ունեցր նպատակով հեռացելու՜ են Հայոց մեծ եղևուների սարսթից, ինչպես մեկուսացրին և թույլ չտվին, որ անձամբ մասնակցի 1965 թ. Մեծ եղևուների 50-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառմանը: Բուրբրին կարելի էր, նրան չէր կարելի...

«Մայրս հնզ էր, նույնիսկ հեղին ու ծայրաստիճան ինքնամփոփ ու մեծասեր, քնքուշ, ինչպես Հովի, երկչոտ, ինչպես սարի եղևիկ, սիրելի, ինչպես թիֆերի տակ քաշված երկչոտ աչքերով մանուշակ: Հայրս նույնպես բարի ու մեղմախոս էր, ինչպես Շիրակի դաշտերի հովերը, բայց երբեմն խիստ՝ ինչպես Արագածի ձմռան չուներ: Ահա այս երկու մեղմություններն ինձ աշխարհ են բերել, որպես իրենց սիրո երբորդ պտուղը, հազար ինը հարյուր տասնհինգ թվականին Գյուժերի նվիրական քա-

ղաքում»¹⁹ (ընդգծ.՝ Ս. Մ.),՝ հետագայում «Մի փետուր իմ արծիվ կյանքից» հուշագրություն մեջ գրել է բանաստեղծը՝ նպատակ ունենալով հաստատել իր ծննդյան տարեթիվը:

Ուրիշ վկայություններ էլ կան, որոնցով հաստատվում է 1914 թվականը: Բանաստեղծի մանկության ընկերներից Վազգեն Հարությունյանն, օրինակ, այդ տարեթիվն է հիմնավորել այն վավերական իրողություններով, որոնք ինքը կարող էր և պարտավոր էր ճշգրիտ հիշել: Իր «Գյուժերին, նրա մարդիկ, սփյուռնությունները» գիրքը նա սպազրել է 1996 թ., երբ 85 տարեկան էր՝ ժողովրդի հաշվումներով 1911 թ. ծնված: Ինչպես Գյուժերին ու նրա մարդկանց վերաբերող բոլոր նշանակալից իրողաբանությունները՝ նա Հովհ. Շիրազի ծնունդն էլ, մկրտությունն էլ, թվում է, վկայագրել է ճշգրտորեն:

Հարևաններ են եղել, նրա մայրական տատը՝ Շողակաթ Սահփանյանը, եղել է Հովհաննես Կարապետյանի ապագա Շիրազի տատները, հայրը՝ տեր Հովսեփ քահանա Հարությունյանն էլ՝ նրան մկրտող քահանան: Վ. Հարությունյանը՝ «Կուժայր» թերթի «ամենաառաջիկ ու երկարակյաց թղթակիցը», ճշգրիտ հիշել է գյուժերցի պատկառելի հողագործ Թաղևոսի ընտանիքին առնչվող բոլոր մանրամասները, անպա՛ռ այն հասցեները, որտեղ վարձով ապրել է այդ ընտանիքը: Ինքն ու բանաստեղծը զեռ վաղ մանկությունից ու պատանեկությունից ներգրավված են եղել Գյուժերու գրական-մշակութային կյանքում: 1930 թ. Գյուժերու առաջին երիտասարդ գրողների գրական միավորմանն է նա անդամակցել Աղավնու (Գրիգորյան), Արայոմ Շահբաղի, Բագրատ Ստաֆֆու, Հովհաննես Շիրազի և ուրիշների հետ միասին, 1934 թ. հրավիրվել Հայաստանի երիտասարդ գրողների միության առաջին համագումարին, ուր անձամբ էլ լսել ե. Չարենցի ու Վ. Ալազանցի զովետարի խոսքերը մեծ սպազա խոստացող Հովհ. Շիրազ բանաստեղծի մասին...

¹⁹ Ջ. Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից, «Նայաստան» հրատ., Եր., 1984, էջ 7:

Հիմա տեսնենք՝ նա ի՞նչ է հիշում. «1914 թվականի ապրիլն էր: Հորդ անձրև էր տեղում: Ապրիլի 25-ի գիշերը բավականին ուշ ժամի, մեր տուն եկավ Հարևան բոստանիչի Թադևոսը և տատիկս խնդրեց իրենց տուն գնալ: Կինը երկունքի ցավերի մեջ էր: Տառա շտապ Հագավ շորերը և Թադևոսի Հետ գնաց: Առափտայան վերադարձավ և Հայտնեց, որ Աստղիկը շատ դժվար է ծննդաբերել, աղա է ունեցել»¹⁹:

Եթե այս վիպյուեթյունն ընդունում ենք, ապա Հովհ Շիրազը ծնվել է 1914 թ. ապրիլի 25-ի գիշերը, այսինքն՝ 26-ին: Սա պարզապես ճշմարտանման է հնչում: Բանի որ իր Հայրն է եղել միտոզ քահանան, Վ. Հարությունյանը, հիշում է նաև ապագա բանաստեղծի միտոզիայան մանրամասները: Այդ մանրամասները ճշգրտել, բազմիցս հիշել և հիշեցրել է բանաստեղծն ինքը և Հաստատել նաև «Մայրիկին ուխտն ու ազդեցությունը» բանաստեղծության հեղինակային ծանոթագրությանը:²⁰ Մեզ այնպես է թվում, որ Վ. Հարությունյանն էլ հետևել է ընդունված պաշտոնական տեսակետին և իր հիշողություններով փորձել հիմնավորել ընդունված և ավանդույթի ուժ ստացածը:

Անկարելի է կարծել, թե բանաստեղծը բնավ չի Հետաքրքրվել ու պարզել իր ծննդյան ճիշտ տարիները. էջ՝ որ նրան Հայտնի էր, որ այդ տարիները մեկ տարով մեծացրել են՝ տեղեակի գործարանում աշխատանքի ընդունելու և Հրամանագրել կարողանալու Համար:

Այնպես որ, 1915 թ. ապրիլի 27-ը բոլորովին էլ պատահական տարիներ էլ, այլ ճշգրտված:

¹⁹ Վ. Հարությունյան, Գյուրնե, նրա մտքի, սովորություններ, Գյուրնի, 1986, էջ 59:

²⁰ Տես նույն գրքի «Ինչպես մկրտվեց Շիրազը» հատվածը, մաս 3. Շիրազ, Երևան, հ. 4, էջ. 1986, էջ 150: Դուրի Շիրազի «Թեմա Ղապտապին» 4-րդ հատոր չի ունեցել. Վ. Հարությունյանը նկատել է ունեցել երկերի ժողովածուի այս 4-րդ հատորը, ուրե՛նք նրա ինչո՞ղորություններում անն ինչ ճշգրտել չէ: Գրչապ բանաստեղծության ժամթագություն մեջ իր մկրտության օրը Վ. Հարությունյանի բնական իր «քարաղ օրնեղ» և այլ մանրամասներ ճշգրտորեն վկայելով համարձի հեղինակն իր ծննդյան տարեթիվը համարել է 1915-ը: Բ. Սելյանը բնու է մաս ուրիշ քվոր ու վկայություններ (մաս Բ. Սելյան, Գովհանես Շիրազ կենսամատենագիտություն, Եր., 1989, էջ 8) – Ա. Մ.:

Խնդիրն ավելի կհասակվի, եթե հիշենք, որ բանաստեղծը երրորդ զավակն էր, իսկ քույրերի Գուհարն ու Մանիկը կամ Մարիամը, եղբորից մեծ էին տարիներով, իսկ վերջինը ծնվել էր 1914-ին:

Սակայն երկու տարիներ էլ՝ և՛ 1914 թ. ապրիլի 26-ը, և՛ 1915 թ. ապրիլի 27-ը, վերաբերում են Հովհանեսի (Օնիկ) Կարապետյան մարզուն, իսկ այդ թվերը, իրենց որոշակի թե կասկածելի լինելով Հանդերձ, մեզ Համար գրեթե նույնքան կարևորություն ունեն, որքան Նարեկացու, Բուշակի, Սայաթ-Նովայի կամ Արտվյանի Համար մատանելվող ծննդյան տարրեր տարիները: Իսկ բանաստեղծներ էլ կան, որոնց ծննդյան տարիներին առհասարակ Հայտնի չէ, բայց նրանց ստեղծագործությունները են բնորոշվում իրենց ապրած զարն ու ժամանակը: Ուրե՛մն՝ կարևորն այս զեպքում ոչ թե մարդու ծննդյան տարիները, ամբար, որն ու ժամն են, այլ բանաստեղծի՝ ծննդյան ժամանակը. ե՞րբ է ծնվել բանաստեղծ Շիրազը, այսինքն՝ երբ վաճի՞ց է սկսել գրել ու արժեքներ ստեղծել, ի՞նչ միջավայրում ու Հանգամանքներում, ո՞ր իրադարձություններն են վճառական եղել նրա բանաստեղծական կենսագրության Համար: Ահա ինչու էր Հովհ. Շիրազը փոխել իր ծննդյան տարիները և կայել Հայոց մեծ եղևնիի իրազույթյան Հետ:

Առաջին Համաշխարհային պատերազմի, արևմտահայության ջարդի, բռնազաղթի ու սովի մղձմախնային տարիներ, Հայության իսպառ բնաջնջման իրական ու ստակալի վտանգահա այլ այլ տարիներին է անցել բանաստեղծի որը ու անուբախ մահկանությունը: Արևելահայությանը ևս բնաջնջելու մոլուցքով Օսմանյան կայսրության տիրապետության տակ զանգված արևմտահայության զանգվածային ջարդերից ու տեղահանությունից Հետո Հայությանը լիովին բնաջնջելու նպատակով Թուրքերը ներթուսել էին Գարեհաստան ու Արևելյան Հայաստան: Ույի և նրա շրջակայքի Հայերի կտորումից ու տեղահանումից Հետո նրանք Հարձակվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության վրա, գրավեցին Կարան ու Ալեքսանդրապոլը և սպառնում էին Երևանին: 1920 թ. աշնան Թուրքական արշավանքի ժամանակ Հագարավոր Հայերի Հետ միասին

պանդինց նաև ապագա բանաստեղծի Հայրը՝ աղնիվ Հողազործ Քաղկեսը, և փոքրիկ Հովհաննեսի՝ Աուժան Օձոյի Համար այդ ժամանակից սկսվեց ծայրահեղ աղքատության ու որրություն զառը փորձություններով լի մի շրջան: Ամուսնու պայակնելուց Հետո ստեղծված անհավասարելի նյութական գեղարտությունները, սովը, երեք մանկահատակ երեխաներին միայնակ պահելու անկարելիությունն ու նրանց կորցնելու վախն էին Հարկադրել Աստղիկ մայրիկին՝ զավակներին Հանձնելու որրանոց: «Սովը ուրբերի պես պտտվում էր մեր խրճիթի զլխին, - Հետագայում գրել է բանաստեղծը, - մեկ ուղում էր իջնել, խլել մեկն ու մեկին, բայց ինչ-որ մի անհայտ բախտ գուժի էր գալիս և Հայտնվում մի վայրկյան զողջողո՞ւ ձեռքում մի կտոր Հացի փշանք... եվ մեր օրերը արտապնդելով անցնում էին: եվ մի օր մայրս մեզ տարավ որրանոց»²¹:

Չմանրանալք նրա որրանոցային կյանքի մանրամասների վրա, մանավանդ որ դրանք Հրաչյաի ներկայացրել են և՛ Հնդդինական իր «Ա՛ր փետուր իմ արծիվ կյանքից» գրքում, և՛ նրա մանկությունը ընկերներն իրենց Հուշերում: Ընդգծենք միայն, որ երեխան եղել է բացառիկ ունակությունների տեր և գեղարվեստի տարբեր ճյուղերում վաղ մանկությունից զբոսերել է իր բնատուր շնորհները: Դեռ աստանանաչ չեղած ոտանավորներ էր Հորինում, որոնք գրի էին առնում իրենից այնպիսի ջուրերը, կալից բանդակում էր կենդանիներ ու առարկաներ, որ ջուրերը փոխանակում էին ... Հացով: Բայց Հացի խնդիրը զբանով ոչ միայն չէր լուծվում, այլև Օձոյին ու բախտակիցներին մղում էր անհավատալի անմեղ ու արկածալից գողություններ:

Վաղ մանկություն տարիների նրա առաջին բանաստեղծական թոթովանքները լսել ու քաջալերել են Աստղիկ մայրիկը, նույնիսկ 1920 թ. զոճված Քաղկես Հայրիկը, Գոհար և Մանիկ ջուրերը, որոնց Հանդեպ առատելիական սեր ունեց բանաստեղծը, որրանոցային խուժանացած ընկերները, շուկայի առևտրականներն ու արհեստավորները, Գյուճերում կենտրոնացած մտավորականները, զժմար ապրող վշտահար, բայց

պարզ ու սրտարագ մարդիկ: Բնորոշ է Հոր մասին Հեղինակային Հնունայ մանկական վերհուշը, որի մեջ երևում է նաև բանաստեղծն ինքը.

- Ինքն իրենից Օմիկս ոտամալոր կՀանե...
- Կալից մարդ էլ կէինե,- պարծենում էր Հայրիկս:
- Ասա ինքը մարդ դառնա,- կստաղվում էր մայրիկս:
- Ձէ՛, կգառնա. չե՛ս տեսնում՝ մատներն Հույս են ի մնե...

Բարեմիտ ու չարամիտ Հարեաններն էլ իրենց խորհրդավոր վերաբերմունքն ունեին.

- Բիթը սրբել չի կրնա՝ ինչե՛ր կենե՛ Հըլլա տես...

Տրամագրություն որոշ պահերի բանաստեղծն ընկնում էր Հուշերի գրկը և ինքն էր տխրություն պատմում իր ու ընկերների Հանրապետ գողությունների մասին. մի սուր ծայրով երկաթածող էին գտել. երեք-չորս ընկերներով մտնում էին շուկա. մյուսները խոսեցնում էին միթո՞ղ վաճառողին, իսկ ավելի Համարձակը՝ Օձոն, Հնուվից այդ ձողը աննկատ խրում էր խնձորի կամ ուրիշ մրգերի շեղջերի մեջ, և եթե «արչավանքը» քարհաջող էր լինում, ավարտվում էր ամեն մեկին մի խնձոր, մի տանձ ավարով, ու այդպիսով գոնե մասամբ կտրում էին իրենց աճավոր քաղցը: Բայց Հանախ էլ բռնվում էին Հենց շուկայում ու զանազան պատիժների արժանանում:

Պատժվում էին նաև «Առուժանի որրանոցի» զեկավարների ու մանավանդ իրենց զատախարանչուՆու՝ վաթսուհամայ գեղեցկուհի օրիորդ Սաթնեիկի մտրակով կամ ավագի վրա երկար չորեխով, որ կոչվում էր ավագապատիժ: Իսկ Օձոն Հանախ նաև ընկերների փոխարեն էր մերկ մեկնելով ժամերով չորքում ավագախնձորի վրայ՝ Հանձն առնելով նրանց գործած ու չգործած մեղքերը: Բայց Օձոն ընկերներից տարբերվում էր չոր էական մի առավելությունով. ունեց գեղարվեստական տարբեր շնորհներ, որոնց զբոսերումով մեղմանում էին զեկավարության խիստ պատիժները:

Հիմնականում Համընկնում են Հովհ. Երբազի և նրա Հին ընկեր Հուշագրիների վկայություններն այս շրջանի մասին: Ա.

²¹ Առյճ տեղում, էջ 9.

Գրիգորյանը, սակայն, չգիտես ինչու, ջանացել է անպայման հավաստել, թե իբր շիրազյան չքնաղ բանաստեղծություններից մեկը նվիրված է եղել Հենց այս դաժան գեղեցկուհուն.

Դու չբիռներն ունես վարդի
Եվ աչիկներ գեղեցիկ,
Ատամնաչար պղամանդի
Եվ աչիկներ գեղեցիկ,
Այտեր ունես վարդ ու կաթի
Եվ աչիկներ գեղեցիկ:
Լույս պարանոց կույս կարապի
Եվ աչիկներ գեղեցիկ:
Մաղեր ունես գիշեր սաթի,
Եվ աչիկներ գեղեցիկ:
Գաթան հասակ նազող բարդի
Եվ աչիկներ գեղեցիկ:
Ավա՛ղ, և քար մի սիրտ ունես
Եվ աչիկներ գեղեցիկ:

Սակայն նրա այդ վկայությունը²² հավատ ընծայել չենք կարող, որովհետև նախ «վարդի չբիռներ», «ատամնաչար պղամանդի», «լույս պարանոց կույս կարապի», «գաթանան հասակ՝ նազող բարդի» փոխարքարկան համեմատություններն ամենևին էլ բնորոշ չէին կարող լինել վաթսուևամյա թեկուզե գեղեցկուհի օրիորդին, և ապա՝ կնոջ գեղեցկությունը և նրաներքինի հակադրությունն այդպիսի սուր զգացողությունը բնորոշ չէր կարող լինել թեկուզ Օմիրի նման 7–8 տարեկան որբանոցային երեխային: Երկերի ժողովածուի 3-րդ հատորում և զետես անտիպ «Հասարակություն» Հովհ. Շիրազյն ինքն է նշել այս բանաստեղծության գրությունն տարեթիվը՝ 1940, երբ ինքն արդեն 25 – 26 տարեկան երիտասարդ էր և Երևանի պետհամալսարանի ուսանող: Բանաստեղծության իրական հասցեատեղը, ըստ «Լիրիկա» (1946) գրքում տպագրվածի, ժաննա ա-

նունով մեկն է եղել, հավանաբար ուսանողության տարիներին ծանոթներից կամ հրատարակներից մեկը, որն իրոք քարսիրտ անտարբերություն է զբաղեցրել բանաստեղծի նկատմամբ: Իսկ Օմիրի որբուկ ընկերներից վայրագորեն ծեծած օրիորդ Սաթենիկը, ինչպես ստորև կտեսնենք, բանաստեղծի վկայությունից՝ նույնիսկ սիրել, քաջալերել է շնորհաշատ որբուկին, համար յոյն նրա գլուխը:

«Խուժանի որբանոցից քիչ հուշեր ունեմ,- խոստովանել է բանաստեղծը,- հիշում եմ, թե ինչպես մանուկ մասնեբով դուժուղազ կավից շինում էի գառ, Հովիվ, ուլ, ձի, կով, գուլթան ու նույնիսկ գյուղ և իմ այդ «ստեղծագործությունների» «Հմայքով» սիրվում էի որբանոցի ղեկավարների կողմից՝ ինչպես, օրինակ, վաթսուևամյա օրիորդ Սաթենիկից, որը վայրագորեն ծեծում էր իմ ընկեր-որբուկներից շատերին, իսկ ինձ միշտ քաջալերում էր գլուխս շոյելով, թեև ես միշտ էլ «մեղքի» մեջ էի լինում»²³(ընդգծ.- Ս. Մ.): Այս ապավորություններից են հյուսվել բանաստեղծի ու իր սերնդակիցների մանկությունը պատկերող գրեթե բոլոր ստեղծագործություններն ու «Իմ ընկեր Լորիկը» պոեմը, շիրազյան արձակի որոշ էջեր:

«Խուժանի որբանոցը», այնուամենայնիվ, տանելի էր. այնտեղ որբերին գոնե օրը երկու անգամ կերակրում էին խաշած լորով, բայց բնելու տեղ շինելու պատճառով գիշերները նրանց «տուն» էին ուղարկում: Սա, բանաստեղծի ասելով, իրական որբանոցը չէր: Ավելի սարսափելի էր միտքը Բիշերի՝ Գոլիզոնում անգալորված որբանոցը, որտեղ առավել չարանհիներին՝ Հաց, կաշիկ, սավան զողացողներին, արժանացնում էին առավել խիտա ու անմարդկային պատիժների. առողջ մանուկներին հարկադրում էին մտնել քոսով վարակված հիվանդների բաղնիքը, ուր իբր թե բուժում էին ծծրահեղուկով: Երկու անգամ էլ Օմիր ինքն է ստիպված եղել մտնել այդ «գեղին դժոխքի» պարունակները: Հասկանալի է բոլոր ատճանակիր որբուկ-

²² Տես Ա. Գրիգորյան, «Ատուճճը Շիրազի կյանքից», եր., 1987, էջ 14-16:

²³ Լույս տեղում, էջ 9:

ներն էլ պիտի ջանային փախչել այդ ահապոր պատժներից-
ոմանք պարզապես քաղաք էին փախչում, ոմանք շուկա, իսկ
Օվոն, ի տարբերություն նրանց, ցեղերին կախում էր
ընտանիքները, հիանում նրա անապակ գեղեցկություննե-
րով, լողանում Արփաշայի բյուրեղ ջրերում, քնում ուռիների
ստվերոտ, մաղկազարդ օրորոցում, իսկ երեկոյան Հարկազրգված
էր վերադառնալ իր որջը: Ետանվամբքն ու բանաստեղծին
ընտրել մի տեսակ բնազդական կողմնորոշման հարց էր: Այս-
պես է բնութային արմատակալել ոչ միայն նրա հոգում, այլև
բանաստեղծություններում, դարձել պատկերավոր մտածողու-
թյան աստղ՝ ինչպես Մեծարեկնից պարագայում: «Բայց այդ
սեխ ու սովի դժոխքից ես շուտ-շուտ ծղկում, փախչում ու
մտնում էի գաշտերը, ուրիշները փախչում էին դեպի քաղաք,
դեպի շուկա, իսկ ես փախչում էի դեպի ձորերի կանաչ դերկը,
դեպի մենակություն էի սրտով ձգտում, գնում-իջնում էի իմ
նվերական Արփաշայի քնուշ Հովիտները և տիրոջ կորցրած
որսկանի փոքրիկ շան պես թանջին էի տալիս ձորերում ու ջրե-
րում մինչև իրիկուն և սովահար ու Հոգնարեկ գալիս էի որ-
ջը...»²⁴ (ընդգծ. — Ս. Մ.):

Որբանոցային կամ խուժանությունների շրջանի շարանճիներին
մի այլ նպատակ յուրահատկությունը, մի կարևոր միջբով էլ էր
առանձնանում Օնիկը. նա «էն գլխից» բանաստեղծ էր: Ահա և
նրա առաջին ունկնդիր «ընթերցողներին» մեկի՝ որբանոցային
ընկերակ վկայությունը. «Մի խոսքով, խուժանների որբանո-
ցում էինք 7 - 8 տարեկան երեխաներ:

Գետինն ծալապատիկ նստած՝ լսում էինք Օնիկին (նի Հարա-
վում, սրված դեմքով, ցցված սականջներով), կլանում էինք
ամեն մի խոսք: Նա չէր կարդում, նշայած արդեն գրագետ էր:
Ասում էր բերանացի, անպիր: Հետո թի՛ լա՛վ բաներ են:

— Թ՛վ է գրել, ո՛վ է ասել, — հարցնում էր մեզանից տարե-
քը...

— Ի՛նչ գիտեմա՞ ով է գրել: Մայրս է պատմում: Քույրիկ-
ներս են ասում: Ես էլ անպիր եմ անում:

... Ձէինք էլ մտածում, թե այդ թուրքերի օրերին ով է
Երբալին գրագիտություն սովորեցրել: Որտեղից նա գիտե-
րային բան, այդքան երգ ու Հանկուլակ²⁵ (ընդգծ. — Ս. Մ.):

Փորկը ինչ-որ բան լցնելու համար խեղճուկրակ օրերը
գիժում էին կարելի և անկարելի բոլոր միջոցներին.

Ջեր էլ մտա, բայց որբերին

Նստարկ ջեր էր աշխարհը ուղձ. —

ցավով հիշել է բանաստեղծն իր որբություն «եզակի Հրաշալիք-
ներին»: Հավանաբար, այս եզակի գեղարվեստական ստեղծված աշխարհ
շատ տարածված էր մի վարկարեկիչ կարծիք. իբր թե նա շատ
նշանավոր դոջ է՝ «եքիտ մասով Հանոզ»: Իսկ դա ընդամենը
շատ պարզ, չափազանցված շարախոսություն էր, որովհետև
Օվոյից ի՛նչ հանցագործ. նա ընդամենը սեուեղ՝ հաց, խնձոր,
տանձ, սոխ, կարտոֆիլ և նման «բանական» է թոցրել և
զոհարավոր Ջարուդոն նման ոչ մի դեպքում, ոչ մի պարա-
գայում նրան չի լքել խիղճը: Որբանոցից վերջնականապես
փախչում է ազատասանն ինչու՞ման Օվոն ու Հայտնվում Գյում-
բու շուկայում: Այստեղ էլ մայրը գտնում է իր կորած Օնիկին,
ունև տանում ու հետո էլ դպրոց տալիս:

Գորոցը որբանոցից տարբեր աշխարհ էր. գասեր, ուսուցիչ-
ներ, գրքեր, ունակությունների դրսևորման որոշ հնարավորու-
թյուններ: Օրապահիկ, շոր ու կոշիկ էին տվել ազքատի երեխա
լինելու հանգամանքով: Սակայն նախկին միջավայրից, խու-
ժանային սովորություններից, որբանոցային ու փողոցային
շարանճիություններից վերջնական հրատարումը դյուրին չէր:
Անմեղ շարանճին հետը շուն էր տանում դպրոց, որը գտնու-
մ էր գատերը խանդարելու պատճառ(այս մասին կան և՛ իր՝ Հովհ.
Շիրազի, և՛ Ա. Գրիգորյանի վկայությունները): Մի անգամ էլ
(սա գուտ իր՝ բանաստեղծի պատմածն է), երբ նկարչություն
դասատուն աշակերտներին Հանձնարարել էր էլ նկարել և
նրանց բացատրել էր, թե սովորաբար այն նկարներն են հա-

²⁴ Հ. Շիրազ, ԵՎ. գիրք, էջ 11:

²⁵ Ա. Գրիգորյան, ԵՎ. գիրք, էջ 14-16:

չողովում, որ անմիջապաք բնությունից կամ բնօրինակից են վերցրվում (սա արդեն զարդացական դասընկերը՝ դասարանի երբեմնի ախազն է մեր ներկայությամբ հիշեցրել բանաստեղծին, որը նա մտարեքեց ու սիրով Հաստատեց), Հաջորդ զատին ուսուցիչը զարմանքով տեսել է մի անակնկալ՝ դասարանում գրաստիստակի մոտ կանգնած մի էջ:

— Մզ է այն էչը դասարան բերել:

— Ե՛ս եմ բերել, — պարծեցել է Օնիկը, — Դուք չըսե՞ք, թե Հաջող են լինում բնությունից ու բնօրինակից ներշնչված նկարները, բերել եմ, որ աչակերտները բնական էչ տեսնին և ճիշտ ու լավ նկարեն...

Եվ ուսուցիչը, արդեն Հովհ. Երազի տակնով, զասարանի ազգային Հանձնարարել է.

— Է՛ս էչին էն մյուս էչի Հես դասարանից գո՛ւրս արա... — հիշում էր Երազն ու ծիծաղում այնպես, ինչպես երևի գեղարվ որն էր կուշտ ծիծաղել:

Դպրոցում ուներ իր սիրած առարկաները. ամենից շատ սիրում էր Հայոց լեզուն, պատմությունը, աշխարհագրությունը, նկարչությունը: Ու միշտ նույն անհանգիստ շարանճին էր: Նկարելու, գրելու ձիբքերը թեև նրան փրկում էին ծանր պատժներից ու արժանացնում գուրգուրանքի, բայց նա կարոտով հիշում էր ռուկայի տանձն ու խնձորը, ընկերներին, դասերից փախչում ու քանաստեղծավորի թափառում էր իր սիրած վայրերում: Հետո դարձավ Հայտնի Զուր ծախող ու մի օր էլ բախվեց նշանավոր Պոլոզ Մուկուչին ափելի ուչ մանր-մանրավոր նրա Հես: Մայրը խնդրել է սրան-նրան, որ Հես ընդունեն զպրոց կամ այլ մի տեղ, որ տղան մի արհեստ սովորի. կտրվի իր փոս շըրջապատից: Իսկապես էչ տղային Հոր-գորել էր.

Արհեստ սովորիք, մի՛ լինիր նպուկ

Արհեստն է մարդուն ոսկի բխլազուկ:

Մի որոշ ժամանակ դարբնի աչակերտ եղավ, Հեսո՞՛ Հյուսնի, կոչկակարի, Խուժան Օվոյից դարձավ «Հեղինակավոր մարդ»՝

Փիննաչի Օվո. «Որքա՛ն էին ուրախանում իմ Հին ծանոթները, գլխավորապես Հասակավոր մարդիկ, որոնցից բանուժան էի թուցրել... Բայց ինձ չէին գտահուում, կոչիկները չէին տալիս, որ կարեմ. ես էչ Հո սոված չէի՞՝ մնալու. Թույլ ափելի, որ իմ խուժան ընկերները իրենց զողացած ավարը բերեն ու պահան ինձ մոտ դազգահչիս մեջ...Եվ ես դառնում էի գողերի պահեստապետ: Մինչև կեսօր փինաչություն էի տեսում, ուրիշի կոչիկ կարկատում, կեսօրից Հեսո, ինչպես կասեր Թուժան-յանը, խուժան ընկերներին Հեսո գնում էի Արփաշայ, լողանում էի, մինչև իրիկուն թափառում էի Արփաշայի կանաչ սպերին կամ գնում էի Հովիվների մոտ ու ստաղերի Հես գնում տուն. մի նկուզ էր դա, Տեր-Ամպալումի տան մտայն նկուզը»²⁶(ընդ-գրծ. — Ս. Մ.): Բայց սա էլ երկար չի տեսում, քանի որ նույն այդ ընկերները զողանում են Փիննաչի Օվոյի կոչկակարի զործիքները զրկելով նրան արհեստավորի ազնիվ աշխատանքով ապրուստ Հայթայթելու վերջին միջոցից:

Այս էր 1920-ական թթ. Հայ ու մանավանդ գյուժերական իրականությունը, որտեղից 1921 թ ապրիլի վերջերին՝ անգամ Հայաստանի խորհրդայնացումից էլ հինգ ամիս Հետո էին Հե-սացել թուրքերը կողոպտելով, թալանելով, պղծելով ամեն ինչ ու թողնելով իրենց վայրագությունյան ցավալի Հեսքերը:

Այդ ժամանակներում էլ Օվոն ստեղծագործում էր: Ա. Գրի-գորյանը Հիշատակում է Հովհաննես Թուժանյանի մահվան առիթով Օննիկի գրած մի քանաստեղծություն, իսկ դա բնականաբար պիտի գրված լիներ 1923 թ. գարնանը՝ մարտի 23-ից Հեսո, մեծ զբոսի մահվան անմիջական տպավորությամբ. հիշում է նաև ուրիշ տողեր ու պատասխաններ, քանաստեղծական գեղեցիկ պատկերներ, որոնք պիտի հղկվեին ու ամբարձրվեին ափելի ուչ զրված ստեղծագործություններում:

Թուրքական աղետին 1926 թ. Հաջորդեց բնական աղետը՝ Լեհինականի նշանավոր ժամքը, որը բազմաթիվ զոհերի ու

²⁶ 3. Երազ, Եվ գիրք, էջ 18:

փյուզումների պատճառ դարձավ: Փամանակակիցները Հիշել են այդ առթիվ Ատրպետի օգնությունը Օնիկի ստեղծած «Փամաքը եկավ ժամը յոթին գետնի տակիցը» ոտանավորը, որը գյումրեցիները նրդի էին վերածել, և ոչ միայն դա: Արզեն զբրանանա՛ն՝ զպրոցում սոփորելու տարիներին էլ սիրահարվում է, գրում մեզ Հասած աշակերտական առաջին բանաստեղծություններն ու նամակները՝ Հասցեագրված դասընկերուհուն՝ Մանիկ Անմեղրիկյանին: Սակայն դրանք չենք կարող անվանել «առաջին բանաստեղծություն», քանի որ արզեն որոշակի վարպետության Հասած գրչի արտագրանք և Հասուն գեղարվեստական մտածողության արտահայտություն են: Հենց այն, որ զպրոցական աշակերտ եղած ժամանակ էլ նա գրել է 12 բանաստեղծություններից կազմված շարք, արզեն սկսնակի բան էլ: Ահա այդ շարքին ուղեկցող շիրադյան նամակը.

«Միրելի Մանիկ, որոշեցի քեզ Համար այս դասին բանաստեղծություններ գրել, ոչ այն բանի Համար, որ գեղեցիկ ես և իմ սրտի զուրկան, այլ նրա Համար, որ մի ավելորդ անգամ ևս ցույց տամ քեզ իմ անաղարտ և քո սիրո բողբոջ Հրդեհված սիրտս, որպես մի կարմիր, սրբազան դրոշակ՝ քո սիրո և քո էություն գերուխտ բերդերի վրա ծածանվող»²⁷ (ընդգծ. Ս. Մ.):

Համաձայնե՞ք ո՛չ այս նամակը, ո՛չ էլ Մանիկին նվիրված այդ տասներկու բանաստեղծությունները, որոնցից 2-րդը և 5-րդը նպատակային ընտրությունը ներկայացնում ենք ընթերցողին, ամենին էլ սկսնակի կամ թեկուզ բարձր դասարանի աշակերտի գեղարվեստական մտածողություն չեն.

2.

Դու նման ես մանուշակի,

Աչք ու ունքով՝ վառ կրակի,

Սիրտս վաղուց կպել է քեզ.

²⁷ Ամանվորը և բանաստեղծությունը տես Ս. Մառուկյան, Գովառնես Շիրազ. Նորահայտ ստեղծագործություններ, «Սուլցի» հրատ., Եր. 2002, «Շիրազի սիրո ցնարք» բաժնում, էջ 78 - 87:

Ինչպես լուսին արեգակի,
Դու մեր դաշտի քնքուշ ծաղիկ,
Իմ երգի սեր, իմ անմեղիկ:

5.

Քեզ կպահանջ ծաղիկներում,
Ամբրոսաբույր շողերի մեջ,
Սրտիս վարդի թերթիկներում,
Կլվածած ցողերով պերճ,
Ազատ երկրիս արևի պես
Կրճքիս վրա փայփայեմ քեզ...

Իհարկե, ո՛չ սրանք, ո՛չ էլ նույն Մ. Անմեղրիկյանին նվիրված մյուս բանաստեղծությունները զեռևս կատարելություններ չեն, սակայն սրանց մեջ զգալի է բանաստեղծի սրտի արտփյունը, զգացմունքների ուժն ու անկեղծությունը, որն արտահայտվել է թեկուզ անկատար պատկերավոր խոսքի միջոցով: Սակայն աստիճանաբար բարձրանում էր պատանու բանաստեղծական Հեղինակությունը, այն էլ ոչ միայն որբանոցային կամ չուկիայական ու զպրոցական ընկերների շրջանում: Արզեն 1929 - 30 թթ. նրա գործերը ոչ միայն լույս էին տեսնում պատի թերթերում ու այժմանայինրում, այլև տպագրվում էին տեքստիլ գործարանի «Մանածագործ» ու քաղաքային «Բանվոր» թերթերում: Հրճվածքով էր Հիշում, թե ինչպես «Մանածագործի» ցրիչ եղած ժամանակ մի անգամ Հենց ճանապարհին Հանել էր տպարան տարփող նյութերից մեկն ու նրա տեղը զրիչ իր բանաստեղծությունը: «Հանցագործին» այս անգամ չէր պատժվել, քանի որ բոլորն անվերապահ Հավանել էին այդ բանաստեղծությունը: Ապագա բանաստեղծի կյանքի այս դժվար շրջափուլի մասին, կարծում ենք, ուրիշների բնորոշումներից առաջին արժանահավատ վկայություն է Հենց նրա սեփական Հետևյալ խոստովանությունը.

«Երբ ջուր ծախողի կուժը ինձ ծարավ թողեց, փորձեցի երկու մատով Հանել օրվա Հացը՝ ընկնելով կրկնակի «գուրս» ընկածների մանուկ ո՛հմակը: Բայց իմ բախտից Հենց առաջին փորձը փորձանք բերեց մանուկ գլխիս, քանից տեղուտեղը

բունփնց առաջին գրպանն ահա՛յոր մկնամտնելս... Եվ ձգտեցի արհեստ ստորել, կանգնում էի Հյուսնի, զարքնի, կոշկակարի խանութի դռներին և հայրի-մայրի նայում էի, որ... մարդ գտանամ: Եվ քանի՞-քանի՞ անգամ աշակերտեցի զարքնին, Հյուսնին, կոշկակարին, պղնձագործին, դերձակին, բայց ամենքի մոտ ինձ չգտա, անողւս ձանձրանում էի... Եվ, չգիտեմ ինչպե՛ս, գրտում պատերի տակ, սկսեցի կոշիկ կարկատելով դուրսն օգահել, բայց սա էլ ես չէի... Այսպ հին ու մին էի հավաքում, ծախում, հին կոշիկներ, պղնձի, երկաթի կտորներ, բայց սա էլ երազներես ետից չհաստավ... սա էլ ես չէի: Մայրս տարավ տվեց ջուլհակի աշակերտ. ջղերի խելահեղություն ստացա և մի օր կտրտեցի հատվի Հնեքաթիկերը, ինձ տարան, հետո բայց թողեցին, - ջուլհակն էլ ես չէի, մտա խնքադատուն... ցրել, այդ էլ ես չէի... փախա, որ ինձ գտնեմ, և կարծես... այս գրքերում էլ ման եմ դալիս, հույս ստսված...»²⁸ (Ընդգծ. - Մ. Մ.):

Որբանոցներից ու չուկայից նրա հանգեպ առավել բարեհաս գտնվեց գրական միջավայրը, որովհետև բանաստեղծությունների կողքին հաճախ էին տպագրվում հրատապ խնդիրներ արձարժող նրա թղթակցությունները, նորակառույցների մասին լուրերը. լրագրական հոդվածներ, որոնք նույնպես գրեթե բանաստեղծություն էին կամ ավարտվում էին բանաստեղծությամբ: Սակայն պատանու համար գլխավորում բանաստեղծությունն էր: Եվ հակառակ չարախոսների հերյուրանքների՝ թե Օնիկը գոռոզ է ու մեծամիտ, նա խելամտորեն կարևորում էր ավագների կարծիքը, խոնարհարար ընդունում նրանց դիտողություններն ու առաջարկությունները:

Արդևն համրավա՛յր Գնդա՛մ Սարյանին կարծիքի էր տվել իր նոր բանաստեղծությունների տեսրը՝ մեջը թյուրիմացարար թողած իրենց տան հացի գրքույկը, որը կորած էին համարում: Տանեցիք մեղադրում էին, թե զա հնչեց «այդ խուժանի ձեռքի գործն» է. նա է ծախել հացի գրքույկը և իրենց մատնել սփր... Երդումները բանի տող չեն անցնում, իսկ ինքը չէր հի-

շուժ, չգիտեր, որ գրքույկը Գ. Սարյանին տված տետրի մեջ է և ամաչում էր մոտենալ նրան ու կարծիք հարցնել, մինչև մի օր Սարյանն ինքն է պատահարար հանդիպում նրան: Սակայն բանաստեղծությունների համար դեռ ոչինչ չասած՝ խիստ մտահոգ հարցնում է.

« - Ա՛յ տղա, ո՞ւր ես կորել չես երևում... քանի դեռ տետրը ինձ չէի տվել՝ գրեթե ամեն օր էի քեզ տեսնում: Բայց արդեն երկու ամիս է՝ չկաս: Ընկերներիդ չե՞ն ասել, որ ես քե՛զ եմ փնտրում: Բանաստեղծություններդ, խոսք չունեմ, շատ հետաքրքիր են ու ինքնատիպ, դա շատ լավ է, բայց առանց այս գրքույկի ինչպե՛ս եք Հաց ճարել, երբ այն տետրիդ մեջ՝ ինձ մտա էր...»:

Այսպես է բանաստեղծը փրկվել զավաճանություն ու գողություն մեջ մեղազրգվույց և նույնիսկ հարազատների ձեռքով բանտարկության մատնվույց:

Լավ թե վատ կողմերով նրան գրեթե բոլորն էին ճանաչում, բայց խոստումնալից պատանուն հասկապես սիրում էր արդեն ձերուձի Ասրպատը՝ հանրահայտ «Տժվժիկ» նորավեպի հեղինակը:

« - Գիտեր, որ քաղցած եմ մնում, և Հպարտ արժանապատվությունս թույլ չի տալիս ուրիշից խնդրել, - պատմում էր բանաստեղծը: - Որպեսզի ես չվիրավորվեմ՝ մշակել էր ինձ կերակրելու, սովից փրկելու հարմար եղանակ: Եթե անձամբ էլ ինձ չտեսներ, բնկերներես միջոցով կկանչեր իր մոտ, կտաներ չուկա, կանոնք մի տուրքակ քամած մածուն, կտար ձեռքս ու կխնդրեր.

- Օնիկ ջան, էս մածուներ տանի՞ս մեր տուն:
Տանում էի, պատմում էր բանաստեղծը, ճանապարհին գայթակղություններ չէի դիմանում, ուտում էի մածուն վրայից, կիսատ տուրքակը տուն հասցնում: Ու թեև Ասրպատը քաջ գիտեր, որ ես ճանապարհին մածունի տուրքակը «թեթեացնում» եմ, հաջորդ օրը նորից էր կանչում.
- Էս մածուներ տանի՞ս մեր տուն...»:

²⁸ Գ. Հրդա, Երկր, հ. 4, էջ 234:

Մի կարճ ժամանակ՝ դպրոցն ավարտելուց հետո՝ 1933 թ., ուսուցչություն է անում մոտակա Հաջինազար (Հետագայում՝ Կամո՝ Ախուրյանի շրջանում) գյուղում: Հաջինազարի դպրոցում, որի մոտ մի օր պտույտի ժամանակ կանգ առանք, մտենշավ բանաստեղծին աշակերտածներից մեկը՝ արդեն տարեց մարզ, հեղինակի ներկայությամբ պատմեց Շիրազի մանկավարժական զործուեսությունից զրգովներ: Պարզվեց, որ դասերին աշակերտներին ինքուրույն աշխատանք կատարելու Հանձնարարություններ է տվել, իսկ ինքը՝ բանաստեղծուհի-յուններ գրել: Ունեցել է խանգարող աշակերտներին կարգի հրավիրելու կամ պատժելու յուրօրինակ միջոցներ՝ սկսած բանավոր դիտողությունից: Պատմողն ինքը հիշեցրեց, թե աշակերտ ժամանակ իր շարձանկարություններն ինչպիսի չափածո գիտողություններով էր ստանում բանաստեղծ — ուսուցիչը:

Ների՛ք զրզզաւ,
Ների՛ք բըզզաւ,
Դուռը բացվի՛
Դուրս կըվըզզաւ...

Իսկ մի ուրիշ աշակերտից, որը Շիրազի դասաւումբյան ժամանակ դասարանի բացարձակ լուծբյունը խանգարում էր աղանձ (խեծաղ) ուսուցիչ, գրպակից հանում է ամբողջ խեծաղը և իր զրգանը լցնում: Որոշ ժամանակ անց՝ նոր դասը բացատրելու ընթացքում, հանկարծ լսվում է սոփած աշակերտների համընդհանուր բրբբիջը: Խեծաղի տերը բողբոջել էր՝ «էդ ի՛նչըդ է, ուսուցչին դասի ժամանակ խեծաղ ուսուց կարելի է, աշակերտին չի՛՝ կարելի»:

— Ընիշտ կրսւ,— հաստատեց բանաստեղծը և ինքը շարունակեց.— դու մի՛՝ բուն՝ այդ աշակերտից վերցրած խեծաղը, որ գրպանս էի լցրել, հենց դասի ժամանակ ես եմ սկսել ինքնաբերաբար ուսուց...

Բանաստեղծական ազատութեան վարժված Օնիկը չէր կարող երկար կաշկանդվիլ դպրոցական կարգուկանոնի շրջանակներում. նա շուտով նորից հայտնվում է քաղաքում՝ որբանո-

ցային ընկերների ու գրական մարկանց շրջապատում: Զույ-հակի աշակերտի «պաշտոնով» աշխատում է տերտախի գործարանում, թղթակցում մամուլին, եռանդով մասնակցում տերտախի և երկաթուղայինների գրական տարբեր խմբակների աշխատանքներին:

1930-ականների Գյումրիում էին կենտրոնացել Արեմտահայաստանից գաղթած կամ արտասահմանից եկած, խորհրդային երկրի համար «անհուսալի» գրական մտավորականներ՝ Գեղամ Սարյանը, Ատրպետը, Խաչիկ Դաշտենցը, Սողոմոն Տարտեցի և ուրիշներ: Մայրաքաղաքում նրանց կուտակվելու մեջ քաղաքական վտանգ էին ստանում ժամանակի իշխանությունները: Մրանց միջավայրը նույնպես բարենպաստ եղավ պատանի բանաստեղծի համար: Նրանց բախվերությունն ինքնափտահայտությունները չէին պատանուն, և ժամույն իր էջերը լայնորեն բացեց արագագիր բանաստեղծի առջև: Բարձրացավ պատանի բանաստեղծի հեղինակությունը՝ գրական անուն ունենալու չափ:

Կարապետյան ազգանունը, սակայն, երկարահունչ էր և պատանու ու շատերի կարծիքով բնավ էլ բանաստեղծական չէր. ուստի որոշ բանաստեղծություններ հրատարակում է **Հովհաննես Պետյան** ստորագրությամբ՝ կրճատելով իր ազգանվան **կարա** սիգրենամար: Բայց ահա հայտնվում է մի հաղթանակամ կիսագրագետ՝ ոտանավորներ գրող իսկական Հովհաննես Պետյանը:

— Հովհաննես Պետյանը ե՛ս եմ. անունս հընչի՛՝ ես գողցել...

Սպանալիքն այնքան լուրջ էր, որ բանաստեղծն անմիջապես որոշում է **Կարապետյանի** վերջին մասը սղել ու դառնալ **Հովհաննես Կարապ**: «Նույնիսկ մի քանի ոտանավոր էլ տպեցի «Հովհաննես Կարապ» ստորագրությամբ, պատմում էր բանաստեղծը, բայց հանկարծ հիշեցի, որ կարապ թուշուր երկում է միայն մեռնելու պահին, և դրանից էլ ծաղկ **կարապի** երգ արտահայտությունը: Ուրեմն յուրաքանչյուր բանաստեղծություն կարող էր իմ վերջին ե՛րգը դառնալ: Բոլորովին էլ հարձար գրական անուն չէր: Փորձեցի իմ մեծ հայրենակցի նմա-

նությամբ կոչվել **Հովհաննես Երևակացի**, մի քանի նամակներ ու բանաստեղծություններ այդպես էլ ստորագրել են, բայց դա էլ Հարմար չէր. անմիջապես մեղադրեցին մեծամտության մեջ՝ տեսնե՞ք՝ ո՛ւմ հետ է չափվում»:

Երբ արդեն կարծես գտել էր իրեն և ծննդավայրին համապատասխան լավագույն գրական անունը՝ **Հովհաննես Երևակ**, նորից հայտնվում է մեկը և բուռնցքներով սպառնալից հարձակվում պատանու վրա ու մարմնական վնասվածքներ պատճառելով պահանջում է հրաժարվել այդ անունից էլ:

Բանաստեղծի բնատուր ձրերը գնահատող Արարկանն է միջամտում: Հենց նա էլ, պատանու բանաստեղծություններից ու «Սիամանթո և Խընգարե» պոեմից Արևելքի մեծ բանաստեղծների Հաֆեզի ու Սաադիի ծննդավայրի՝ Իրանի Երբազ հուշակավոր քաղաքի վարդերի բույրն առնելով, իր ձեռքով **Երևակ** անվան կ - ն ղ է դարձնում՝ այդպես ձևավորելով հայ բանաստեղծի **Երբազ** գրական անունը: Մանավանդ «Մարդկանց անունները» (հետագայում «Հայոց անունները») պոեմը գրելուց հետո բանաստեղծը ազնիվ ու սրտացավ ընթերցողներից և գրչակից բարեկամներից ու չարկամներից կշտամբանքներ ստացավ: Ինչո՞րք վերաբարձում էր նաև Համո Սահյանի հայտնի պարոդիան.

Բայց պետք մեր անվանի,
Թողած անունն իր Սևանի,
Թողած Երբակն իր Հեղանակ,
Անվանել է իրեն Երբազ,
Օտար անունն ստել վրան՝
Մաղր է անում սրան-նրան...

Իր անվան շուրջ վեճերի լավագույն բացատրությունը տվել է բանաստեղծն ինքը 1954 թ. ՀնՍՀ Մարտունու ջրբանի Զորագյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ժողովրդական երգիչ ու երգահան Հայրիկ Ղազարյանին դրած նամակում, որով էլ սկսվել է նրանց տևական բարեկամությունը: Հ. Ղազարյանն էլ չափածո նամակով մյուսների նման

Հարցրել է, թե ինչու «Մարդկանց անունները» պոեմի Հեղինակ հայոց բանաստեղծի անունը **Երբազ** է և ոչ թե **Երբակ**:

Բարեբախտաբար պահպանվել Հովհ. Երբազի պատասխան նամակը դեռևս «անծանոթ ընկեր» Հ. Ղազարյանին, որում բանաստեղծն իր գրական անվան ծագման մասին տվել է իրոք հետաքրքիր ու համոզիչ պատասխան: Այդ պատասխանից հստակ երևում է, որ բանաստեղծն ինքն էլ դժգոհ է եղել Արարկանի՝ իրեն պարտադրած անունից, բայց այդ անունով հուշակվելուց, հանրածանաչ դառնալուց հետո նրանից հրաժարվելն անհնար էր արդեն: «Սիրելի անծանոթ ընկ. Հայրիկ Ղազարյան, - գրել է Հովհ. Երբազը, - ստացա ոտանավորով գրված Ձեր ողջույնի նամակը իմ «Մարդկանց անունները» պոեմի մասին: Շատ ու շատ շնորհակալություն Ձեր տար վերաբերմունքի համար: Ձեր այդ բարձր գնահատականն ինձ՝ իրեն ժողովրդի **ինքնաընտրյալ ծառայի**, պարտավորեցնում է:

Իսկ թե ինչու իմ անունը **Երբակ** չէ, այլ **Երբազ** է, դա, կարծում եմ, համազգային հարց չէ: Իմ անունը գրող Արարկանն է կնքել ու նշանակում է **Երբ առյուծ, աղ՝ առյուծի քերան**: Նա ինձ այդպես կնքեց շատ վաղուց, երբ կարդաց իմ «Սիամանթո և Խընգարե» պոեմի ձեռագիրը և ասաց: «Սերը առաջ այսպես պիտի գրեն. **առյուծի քերանով լացած վիշտ է առյուծի քերանով, սոխակի լեզվով**: Ահա իմ անվան ծագումը:

Բարևներով Հովհաննես Առյուծաքերան:

15.04. 1954, Երևան»²⁹(ընդգծ. - Մ. Մ.):

Ին՝ Հովհաննես Պետյանը, թե՛ մյուսները իրենց ողջության օրոք որպես բանաստեղծ այդպես էլ չկայացան ու անհետացան սուպարեզից, սակայն գրական այմանախներում, «Մանածագործ», «Լեռնագործ» ու «Բանվոր» թերթերում, ապա և «Գրական թերթում» սկսեցին հաճախակի երևալ ժամանակի համար անսովոր, թարմ ու ինքնատիպ բանաստեղծություն-

²⁹ Լամանը տես Մ. Մանուկյան, Գովհաննես Երբազ. Նորահայտ ստեղծագործություններ, «Արևիկ» հրատ., եր., 2002, էջ 9:

ներք Հովհաննես Երթազ ստորագրութեամբ: Նրան, ընթերցող լայն շրջանների հետ միասին, սկսում են ուշադրութեան արժանացնել թե՛ գրական վարպետներն ու սերնդակիցները և թե՛ պետական-հուսանկալի գործիչները:

Ա. Գրիգորյանի «Պատումները», որքան էլ կասկածելի կամ Հորինված լինեն, այնուամենայնիվ, արժանաՀավատ ու Հետաքրքիր շատ վիպակներ են պարունակում Հովհ. Երթազի վաղ շրջանի կյանքի ու գործունեության վերաբերյալ: Այդպիսիք են «Երգեր Հոգին» երեք բանաստեղծություններից կազմված շարքի «Գրական թերթում» տպվելուց Հետո եղած արձագանքները և մանավանդ Չարենցի ու Ալազանի դեհաժանակները, «Բանաստեղծները» գրական շարժան Հանգանակի, Երթազի կազմած «Գրական Լեհերնական» այժմանախի, «Լեհագարա» և «Թոհիրները» բանաստեղծությունների, Երթազի շուրջ ժողոված բանավեճերի բնութագրումները և այլն: Դրանցից մեկն էլ բանաստեղծի նկատմամբ Ազատի Խանճյանի Հույժ գրական վերաբերմունքի մասին «Լուսավոր կանխատեսում» խորագրով պատումն է:

Ինչ «Գարնանամուտը» լույս չէր տեսել: Հանրապետության երկրորդ քաղաքն ապրում էր եռուս գրական կյանքով, որը զուրա չէր Կենդանի ուշադրությունից: Ազատի Խանճյանը, որը խելամուտքն կարողանում էր զսպել շարամիտների կրքերը և ուղղորդում էր ողջ Հանրապետության գրական կյանքի ընթացքը, բոլոր Հնարավոր եղանակներով ու միջոցներով պաշտպանում էր Հայաստանների թիրախ դարձած Չարենցին, Բակունցին և մյուս առողջ գրական ուժերին, անձամբ էր այցելում Լեհինական Հետեկու նրա գրական կյանքին: Այստեղ էլ նա «Մանածագործ» գործարանային Թերթում կարգում է Հ. Երթազի «Թոհիրները» բանաստեղծությունը: Ա. Գրիգորյանի խոսքից Համառոտելով, ոչ ամբողջությամբ, բերում ենք Հ. Երթազին վերաբերող արտահայտությունները... Խանճյանը երեք անգամ կրկնեց.

- Երթազ... Հովհաննես Երթազ... Երթազ:
- Ապա դարձավ ինձ.
- Իու որտեղից գ գրեան նրան:
- Ո՛ւ՛՛՛՛:

- Երթազին, ո՛ւ՛՛՛՛...

- Որքանոցից: Մանկատներից:

- Ո՛ր:

- Եռուսանների: Ղեկավարը աներկիացիներն էին:

- Այն էլ խուժանների... Ի՛նչ էիք անում:

- Մեզ Հովաքեյ էին -տարբեր որբանոցներից: Փայտում էինք: Հովաքում էին, լցնում մի տեղ, անունն էլ դրել էին Խուժանների:

Խանճյանը տխրեց: Կարծես զայրացավ նաև իմ դեմ:

- Լա՛վ: Հասկանալի է:

Փոքր-ինչ անց նա նորից խնամքով բացեց «Մանածագործը»: Ապա բարձրաձայն, այս անգամ արդեն բոլորի Համար կարգապ Երթազի բանաստեղծությունը...

Կարգապ երկրորդ անգամ, ինքն իր Համար, բայց և լսելի: Այս անգամ, արդեն, լուսվելուն ավելի երկարաց: Հետո ասաց.

- Ը՛ր, Ի՛նչ կասեք... Ա՛յ դա Երթազ: Գիտե՛ք, - այսպիսի դեպքերում Պուշկինը դեմելով իրեն՝ կասեր. «Ա՛յ դա Պուշկին» (Պուշկինին Հիշեց, գուցե թե կատար ունենալով նաև Երթազի և Պուշկինի որոշ սողների Հոգեհարազատությունը): Բայց սպասեք, ո՛վ է ինձ պատմել այս տղայի մասին, Ալազանը, թե՛ Նդիշեն, Չարենցը: Չէ՛, Ալազանն էր, որ ասաց. «Նկիլ է մի նոր բանաստեղծ...»: Ինչքան Հարուստ է ժողովուրդը: Տեսավ աճավոր կոտորածներ, տանջանք ու թշվառություն: Բայց աճա Երթազը...

...- Երթազին ասա, թող այս բանաստեղծությունն ու զարկի երևան, «Գրական թերթին», Ալազանին»:

Լսեց մտախոհ և նույն պահին էլ դիմելով Հովաքովածներին (տեսն դիմում էր բազմամարդ դահլիճին) այսպես խոսեց.

- Ասացե՛ք Երթազին, որ ես չափազանց սիրեցի նրա Համարձակ, մեծ Թախքներով սուլեցուն պատկերավոր խոսքը - ասել է նա: - Գալիս է, երեխ, նոր մի քնարերգու, որ նման չէ ոչ որի: Բայց եկեք չչտասպե՛ք... Հանկարծ չմեծամտանա՛: Ո՛վ դիտի... Բայց սա Հողիվ թե մեծամտանա: Որբություն է տեսել, կորուսանք է տեսել: Զգուշանա՛ք գրական նախամեծից: Մեկ էլ տեսար ինձ էլ մեղադրեցին՝ տեսե՛ք, - ասե՛ն, - Խանճյանը մի

բանաստեղծությանը հեռահար ենթադրություններ է անուս՝³⁰ (ընդգծ. — Ա. Մ.): Եվ իսկապես էլ, 1934 թ. փետրվարի 20-ի Համարում «Գրական թերթը» տպել է Հովհ. Շիրազի «Քոնիք-ները» բանաստեղծությունը:

Այլ խնդիր է, երբ նույն Ա. Գրիգորյանը ներկայացրել է Չարենցի և Շիրազի Լենինականում «կայացած» բանավեճը, որի մասին ո՛չ Շիրազը, ո՛չ էլ ուրիշ մեկը որևէ անգամ գրավոր թե՛ բանավոր չեն հիշել, կամ 1958, 1964 և 1974 թթ. «Բնար Հայաստանին» ներկայացրել է «1934 թ.» մակագրությունը և այլն: Եթե նա վկայիք այն իրողությունը, որ Չարենցը, Շիրազի ասելով կամ նվարդ թուժամանյանի Հավաստմամբ, իր ծոցատեղում արտագրած է եղել «Նրադարա», «Հին աշխարհը չեմ տեսել» կամ այլ մի բանաստեղծություն, և հեղինակի մասին իր հիացմունքն արտահայտել գրական միջավայրում նրան լիարժեք Հավատ կրնալիս:

Բանաստեղծի հետ գրեթե բոլոր հանդիպումներում, երբ Հարցնում էին նրա և Չարենցի անձնական հնարավոր ծանոթություն մասին, Հովհ. Շիրազը գրեթե ամեն անգամ այս էր պատմում, և Ա. Գրիգորյանը չէր կարող տեղյակ չլինել: Վերստուգման նպատակ ու ցանկություն չունենք, սակայն թող ներքին ասել չենք կարող Հավատ ընծայել Չարենցի եղբորական մահից տարիներ հետո՝ անգամ Հայրենական պատերազմի տարիներին և ավելի ուշ Հովհ. Շիրազի գրած բանաստեղծությունների մասին Չարենցի կարծիքներին, որ վկայել է Ա. Գրիգորյանը:

Սա բոլորովին այլ քննարկման նյութ է: Սակայն նույն Ա. Գրիգորյանը բերել է նաև այլ աղբյուրներով Հաստատվող Հավաստի վկայություններ 1920–30-ական թթ. գրական կյանքի, Հովհ. Շիրազի գրական շունչալից մուտքի, նրա անկասելի Հաջողությունների, նրան ընդունողների և մերժողների, նրա անվան շուրջ ծագած բանավեճերի մասին, որոնցից պարզորոշ երևում է, որ Հովհ. Շիրազի իսկապես զոհուս «Գարնանատեղի» առաջ էլ արդեն ճանաչված բանաստեղծ էր:

Կարևոր է Հովհ. Շիրազի այն վկայություն — վերհուշը, որը Հաստատում է Ե. Չարենցի իրական համակրանքը պատանի բանաստեղծի նկատմամբ: «Հանկարծ կինը ներս մտավ և ասաց, որ Չարենցի քնելու ժամն է, — չարունակել է Հ. Շիրազը: — Եվ իսկապես, Չարենցի Հասակին փոժամ ծիւժանապույն վեր-մերի տակ մտավ ու վայրկիճապես կարծես Հանգեց: Ես մի երկար Հայացք գցեցի նրա զեղնադալուչ դեմքին: Երբ անցնում էի նրա մտով, նա աչքերը բացեց և զեղնատերև ձեռքը պարզեցով՝ բռնեց ձախ դաստակից, նախ սեղմեց ամուր և ասալ ասաց. «Սիրելի՛ մանուկ, կարծում ես որ Հանձնադր չարժե՞ց, աշխարհը կբրկե՞ս»³¹: Ընդգծվածներից երևում է, որ Ե. Չարենցը լավ էլ ծանոթ է եղել նրա ստեղծագործություններին, ճանաչել է պատանի բանաստեղծի ուժը և կանխատեսել նրա արգասառիք գրական ապագան անկախ «աշխարհը փրկելու» նրա հնարավորությունից:

Մեկ անգամ էլ զիմենց Հ. Շիրազի Հուշերին, որոնք, մեր Համոզմամբ, առավել գտնահանելի են.

« — Լսել էի, որ Թումանյանի դուստրը՝ նվարդը, երևանում է, հյուրանոցում, — ասել է Հ. Շիրազը Հարցազրույցներից մեկում, — ուղղել տեսնել, չտեսած Թումանյանի կարուն տունը: Եվ ահա հոր զեմքով, Հոր աչքերով նվարդը: Երբ իմացավ ով լինելու, ձայնե՛ց՝ սի՛ աղա, մի՛ բի՛ջ շուս գայիր, այստեղ էին Չարենցը և իրավաբան Գրիգոր Չուբարը³²: Եղիլը ինձ և Գրի-

³⁰ «Չովիանես Շիրազի մասին» ժողովածու, էջ 100:

³¹ Վերջին Չարենցի դատապարտությանն է եղել նրա դատափարության ժամանակ: Գիշուժ նմ 1963 թ. գարնանային մի օր Երևանի պետական համալսարանի կենտրոնական ֆակուլտետի լեվելոնոս դակիլոնոս նրա լուրջը բանաստեղծի ներկայությամբ. «Ո՛վ է ասում, թե Չարենցին սպանել են կամ նա մեռած է ... Սա կենդանի Չարենցը մեր մեջ է ու մեզ հետ ...»: Ի՛նչպիսի, այդ օրը, արդեն մեղ չբրանում. Գ. Շիրազը ծանրամասնել արդյունք Չարենցի դատապարտությունը. և Գ. Չուբարը ասաց. — Համոզեցի Չարենցին, որ դատախազ մնալին նա միայն իմ ասածնը հաստատի այս ասելով կամ գոնե գլխի դուրան չարժե՞նով: Երբ իմ նշույթում, որպես մեղմարցուցի ասեցմանք, ներկայացրեք, նա առե-ճանակով կրակելը եղել է խանդի հետևանք, որովհետև օրբորը Սարգան Այվազյանին քոլով սրբախաղած եղի՛նե փողոցում նրան տեսել է ուրիշ սրբախաղեցի հետ և ուղեցի, որ դա հաստատի Չարենցը իմ «Նի՛շտ է, եղի՛ն» հարցին ի պատասխան, Չարենցը գոնե ինձ համար անսպասելի ասաց.

— Ո՛վ, ե՛ս պրիտալովի այդ ձրու մտքին ...»:

³² Տես Ա. Գրիգորյան, Դատուճեր Շիրազի կյանքից, Եր., 1987, էջ 79–80:

գորին ցույց տվեց, ծոցից Հանելուկ, քո երեք բանաստեղծութիւնը. Ալազանից էր վերցրել արտագրել: Մեկը նիսազարայի մասին էր, մեկը «Հին աշխարհը չեմ տեսել», մյուսը չեմ հիշում:

Չարենցն ասել էր՝ այս տղան ոչ մեկին թրի տակով չի անցնելու»²³ (ընդդժ. - Ա. Մ.):

Չարենցը այս խոսքն իրոք ասել էր Հովհ. Շիրազի մասին՝ «Գարնանամուտը» դեռ չտպագրած: Լրացուցիչ հիշենք նաև, որ Վ. Ալազանը Հովհ. Շիրազի բանաստեղծական անդրանիկ ժողովածուի՝ «Գարնանամուտի» առաջարանը գրել է ոչ թե 1935-ին, այլ գրանից ավելի վաղ՝ ճշգրիտ՝ 1934 թ. սեպտեմբերի 15-ին: Սերեն գիրքը մինչև այդ է պատրաստ եղել տպագրութեան, և Նախքան «Գարնանամուտն» էլ Հովհ. Շիրազն արդեն երևույթ էր, և նրան ճանաչում ու զննահատում էր Ե. Չարենցը:



Գով. Շիրազը և իր ուղեկցող-ուղեգրիչը Ալ. Բասախյանն ու Վ. Ալազանը

Ալազանով՝ «ե՛րբ է ծնվել բանաստեղծ Հովհաննես Շիրազը»
Հարցը միանշանակ մեկ պատասխան ունի. Կահան չէ, թե նրա՝

²³ Գնեսազայում տողերիս հեղինակն պարզ դարձավ, քե ինչու է գրվել Չարենցի «Չորս ծուր» բանաստեղծությունը) - Ա. Մ.:

²⁴ Ես եմ տեղում:

որպես մարդու, ծնունդը երբ է գրանցվել՝ 1914-ի՞ն, թե 1915-ին, այլ Կահանն այն է, որ նա Հենց բանաստեղծ էր ծնվել: Մինչև «Գարնանամուտն» էլ նա տարիներ շարունակ գրել է բանաստեղծություններ, անցել նախապարաստություն ու մեզոքման Հետաքրքիր շրջան: Իսկ «Գարնանամուտը» ոչ միայն նրա մինչ այդ անցած ստեղծագործական ճանապարհի ամփոփումն էր ու արդեն կայացած բանաստեղծի վավերացումը, այլև գրական արգասավոր ճանապարհի նոր շրջափուլի սկիզբը, որ այնպե՛ս ջերմորեն ողջունեցին Վ. Ալազանը՝ Հայաստանում, Ա. Բասախյանն ու Ա. Չոպանյանը Փարիզից:

1936 թ. դեկտեմբերի սկզբին Ալ. Բասախյանը վերադարձավ Հայաստան, և նրա ու Վ. Ալազանի բարի, հայրական հայացքները երիտասարդ Հովհ. Շիրազին՝ որպես գրական մեծ երևույթի, ուղղորդեցին դեպի քնարերգության դեռևս չնվաճված բարձունքներ:

«ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ» ՂՈՂԱՆՁՆԵՐԸ

1.

Մեր գրույցների ժամանակ Հովհ. Շիրազն հաճախ էր ընդգծում, որ աշխարհում ամենից զգվարբ բանաստեղծի գործն է և մանավանդ Հայ բանաստեղծինը:

Եվ ինչու՞վ էր հիմնավորում: Գրիչ վերցնող ամեն Հայ բանաստեղծ, առում էր նա, կամենա թե ոչ, մրցակցության մեջ է մտնում նախ իր ազգակիցների գրական սերնդակիցների, ավագների, մերձավոր ու հեռավոր նախորդների, և ապա աշխարհի հին ու նոր մեծ ու փոքր բոլոր բանաստեղծների հետ: Ուժ ու զորություն պիտի ունենա, տաղանդ ու հանճար պիտի լինի, անմահ գործեր պիտի ստեղծի, որ այդ զգվարին մրցակցությանը դիմանալով տեղ ունենա նրանց շարքում:

Ինքնին Հակոբյան է, որ այսպիսի մտածողությամբ բանաստեղծը լրջազույն պատասխանատուությամբ պիտի վերաբերվեր իր ստեղծագործությանը զեռ գրական վաղ շրջանից, անգամ առաջին քայլերից: Այդ քայլերը, ինչպես տեսանք, շատերն են խրատուսեղ, սեպկայն Հովհ. Շիրազ բանաստեղծի գրական ճանապարհին ամենից վճռական դերը կատարել է երջանկահաջապահ Վահրամ Ալազանը, որն էլ իրավունք ուներ հետագայում պարծենալու. «Հովհաննես Շիրազին ես պեղեցի լենինականից»: Նրա միջամտությունը եղել է առավել գործնական ու վճռական: Հենց նրա ջանքերով, նրա խմբագրությամբ ու բնութագրական առաջարկով էլ 1935 թ. լույս է տեսել Հովհ. Շիրազի անգլարանիկ ժողովածուն՝ «Գարնանամուտը»:

Հայ նոր քնարերգության պատմության մեջ եզակի են բանաստեղծական այն առաջին ժողովածուները, որոնք երևույթ են եղել և միանգամից ճանաչում ու հռչակ բերել նրանց հեղինակներին, դարձել գեղարվեստական մտածողության նոր սկիզբ: Ռ. Պատկանյանի «Ազգային երգարանից» (1857 թ.), Հ.

Հովհաննեսյանի «Բնաստեղծություններից» (1857 թ.), Ա. Իսահակյանի «Երգեր ու վերքեր»-ից (1898 թ.), Միամանթյոյի «Դյուցազնորեն»-ից (1901 թ.), Մ. Մեծարենցի «Միամանից» (1907 թ.), Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներից» (1908 թ.) հետո «Գարնանամուտը» դարձավ Հայ բանաստեղծության նոր վերելքը խորհրդանշող առաջին գրքերից մեկը: Դժվար է համաձայնել Գ. Մահարու այն մտքին, թե «Շիրազը «սևնակի նախակրթարան չի անցել»: Դա ճիշտ կլինի, եթե վերաբերվի միայն «Գարնանամուտին», իսկ այդպիսի «նախակրթարան» Հովհ. Շիրազն իրականում անցել էր մինչև «Գարնանամուտը», երբ մանկահասակ էր ու պատանի և որբանոցային բախտակիցների, շուկայի ջուր ծախողների ներկայությամբ նոր-նոր էր թոթովում իր ստանձվորները: Բայց նա հոգով բանաստեղծ էր, մասնակցում էր գրական խմբակների պարսպամուկներին, աշխատակցում էր թերթերին, իսկ թղթակցություններն ու լրատվություններն էլ բանաստեղծություն էին դառնում: Այդ ընթացքում էլ նա արդեն ճանաչված էր որպես բանաստեղծ և արժանիորեն նվաճել էր գրքով հանդես գալու իրավունք: Եվ տպագրված առաջին գիրքն էլ գրեթե ամպրոպային երևույթ էր 1930-ական թթ. գրական մթնոլորտում:

«Գարնանամուտը» խիզախ մարտահրավեր էր գերբխող սինմատիզմին ու տեխնիցիզմին, խորհրդային միակուսակցական, վարչահրամայական գրական քաղաքականությանն ու ոչ-քնարական պոետներին, մեքենայի ու տեխնիկայի անիմատ փառաբանումներին, համաշխարհային և անգամ տիեզերական հեղափոխություն բարոզող սպազոկային անփառունակ սպաններին:

Գեղարվեստական մտածողության մեջ զեռուս 20-ական թթ. երկրորդ կեսից և մանավանդ իր «Էպիբաական լուսարաց» (1930) և «Գիրք ճանապարհի» (1934) գրքերով այդպիսի հեղաշրջում արդեն սկսել էր հանճարեղ Նիկոլ Զարենցը և հանդիպել պաշտոնական ու խմբակային ճախավեր քննադատության կատաղի դիմադրությունն ու կոպիտ հարձակումներին, 1934 - 37 թթ. գառապարտովել մարդկային ու Հոգեկան ահա-

վոր առաւայանքներին: Իսկ բանաստեղծութեան մեջ շարենցյան սիրանքը դժբախտաբար չուենցավ Համարժեք շարունակութեան, և այդ Հանճարը իր բախտակիցեցնրի Հետ կանգնած էր ժողովրդի ու իր անձնական ահալոր ողբերգութեան դեմ Հանդիման: Ի վերջո, այդ ծանր ողբերգութեան վարագույրը փակվեց նրա և Համախոհների կործանումով կամ աքսորումով և մինչև 1954 թվականը տեւած արգելումով:

Նոր ժամանակների մարդու Հարուստ Հույզերի ու կրքերի պատկերման պահանջի անմիջական կատարումն էին Հովհ. Շիրազի ներաշխարհ և Հոգեբանութեան պատկերող բանաստեղծութունները: Ազգային գաղափարախոսութեան, անցյալի հոգևոր-մշակութային արժեքների և դասական ավանդների մերժման պայմաններում նրանով սկսված ճշմարիտ քնարերգութեան վերածնունդը, թարմ ու ինքնատիպ պատկերավոր խոսքի իրավունքների Հաստատումն առաջիններից մեկը ողջունեց այդ օրերին ձերուսագարգ գրական նահապետը՝ Ալեքսանդր Շիրվանզադեն: 1935 թ. ապրիլին ծանոթանալով «Գարնանամուտի» ձեռագրին և տեսնելով գրական բացառիկ ձիրքը, զնահատելով քնարական գոգոտրիկ բանաստեղծութունները՝ նրբաճաշակ ու բազմափորձ գրողը պատգամում էր ժամանակի գրական կյանքի ղեկավարներին. «Ուշազրույթուն պիտի դարձնել այս պոետի գրա: Պիտի դաստիարակել նրան. մեծ ապագա է խոստանում: Գուրգուրեցն՝ք, բայց երես մի՛ ավելք. քնդՀանուք սղմուկի մեջ ժողովրդական լիբիկա է բերում»:

Սա Շիրվանզադեի գրառված կարծիքն է: Հովհ. Շիրազին Հայտնի էր նաև, որ նա վճարաբար դեմ է եղել իր քաղաք գալուստ: Վ. Ալազանին և մյուսներին նա ասել էր նաև՝ շուտ մի՛ բերք քաղաք, հաջով մի՛ բնամիջ շորհՀրով բանաստեղծ է Հայտնվել, թողք մնա Շիրակում և ստեղծագործի: Ընդգծել էր նաև՝ «քաղաքը կփչացնի բանաստեղծին. գործարանը, մեքենան, ասֆալտը, անիմաստ գրական կոիվները ներշնչանքի աղբյուր չեն, իսկական բանաստեղծութեան թշնամին են...»:

«Գարնանամուտի» մի բանի օրինակները Հայաստանի որոշ գրագրարաններում թեև պահպանվել են, բայց գրանք բոլորն էլ

սկսվում են Թ-րդ էջով. կտրված-հանված է Վ. Ալազանի առաջարանը, իսկ շապիկի վրա սև ներկով նկատելիորեն ջնջված է «Վահրամ Ալազանի խմբագրութեամբ և առաջարանով» արտահայտութունը: Գրքի վերջին 106-րդ ուսանքին էջի վերին ձախ անկյունում նույնպես ջնջված է խմբագրի Ալազանի անունը, բայց պահպանված են տեխնիկական խմբագրի 2. Բարամյանի և սուպեր շապիկը ձեւավորած Ս. Ալաջանյանի անունները: Անգամ Հովհ. Շիրազի զավակների մոտ պահվող միակ օրինակն էլ է այդպիսին: Միայն Ազգային գրադարանի անձեռնմխելի Փոնդակ՝ զժպրութեամբ Հարլոդից գտնել նրա մի «անիմաթիո» օրինակ՝ Վ. Ալազանի «Հովհաննես Շիրազ» առաջարանով²⁴: Մյուս օրինակներից այդ առաջարանը ժամանակին որպես «ժողովրդի թշնամի» աքսորած լինելու պատճառով: Իսկ առաջարանն ամբողջութեամբ մեզ չի Հասել. պահպանվածը մոտ 4 էջ է՝ առանց էջահամարների: ԱնհՀայտ է, որ «Գարնանամուտը» շարվելուց Հետո մեկից ավելի անգամներ քանդվել, վերաշարվել ու վերակապվել է, բնականաբար էլջահամարների ևլ փոխվել են, իսկ առաջարանն էլ էլջահամարներ չուեն:

Անվանաթերթից Հետո Վ. Ալազանի առաջարանը գրադեցնում է գրքի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չՀամարակալված էջերը:

²⁴ Նախայես այդ առաջարանը եղել է քալսական ժամազում. Գովի. Շիրազի ասելով 68 էջ ճերպալ իր 15 էջ կազմող ինքնակենսագրութունը: «Չիքս լույս տեսավ անժողայ կազանի խմբագրութեամբ և առաջարանով: Մտաբարանը իր մեջ պարունակում էր նաև իմ ինքնակենսագրակառն...: Ելով ժամանակ... կարողում ենք «Գարունը» քրտկտի կարած «Բանաստեղծը ժողովրդի և քալսականութեան» խոթազուկ խարգալուցում Գ. Շիրազի խոսքը... Զարեցն էր պետիոտաթ գեղարվեստական քանճի վարիլը: Եա բնդդիմացել էր կազանին, ասելով «Ի՛նչ է, կատիկ ևս իրատարակում, այսպես էլ երկար առաջարան՝ մի պատճառն նրախարիքի հանձր...»: Ել Չարեցնց առաջարանի 53 էջից կրճատում քրտկում է 23-ը: Բայց իճմա ով կարդա «Գարնանամուտը», կտեսնի միայն 3 էջը (իրականում 4 ու լրիվ էր - Ս. Ա. Գ.): Զարեցնց կազանից գաղտնի իճել էր տպագրան և հանել է նաև 20 էջը: Այս բոլորի մասին եա չառ ուշ լսեցի, իճացա, որ մեծ քանմաստեղծը մտածել էր իմ մասին՝ համկարձ գրալուս փառքից զլխապտույտ չունենամ...» (ՑԵՍ «Գովիմենն Շիրազի մասին» ժողովածու, էջ 98):

Բուն գիրքը «Տխուր-արտում այն փողոցից» բանաստեղծությունը սկսվում է 9-րդ էջից: Իսկ 6-րդ էջ 7-8-րդ էջերը: Չկան: Մնում է եկեղեցի, որ այդ առաջարանը Չարենցի վերջնական կրճատումներից հետո եղել է 5 էջանոց³⁵, որի մեկ էջն էլ սպազությունից հետո են կրճատել առանց Չարենցի, նորից շարել է տեղագրել: Միայն այս դեպքում կարող էին պահպանել գրքի 7-8-րդ էջերը:

Չարենցի և մեկ ուրիշի ձեռքով խտանալույնս համառոտված այդ առաջարանում, որի հեղինակը Վ. Ալազանն էր, տեսնում ենք Հովհ. Շիրազ բանաստեղծի առաջին լուրջ գրավոր դեահատությունը: Արդեն փորձառու և ճաշակավոր Ալազանը նախկինում հմուտ գրաչար է եղել և շատ գրքերի առնչվել, որպես «աարտչի սրեա» հրատարակել է մի շարք բանաստեղծական ժողովածուներ և արձակ գործեր, 1920-ական թթ. եղել է Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի նախագահը, 1932-36 թթ. ՀԳՄ վարչությունից առաջին բարտուղարը, նույն շրջանում խմբագրում էր «Գրական թերթը»: Նորագույն Հայ բանաստեղծության ձևավորման շրջանի ոչ-երկրորդական դեմքերից մեկն էր նա. Հավանաբար, վաղուց էր նկատել պատանու գրական բացառիկ բանքերն ու ճշմարիտ ուղղվածությունը, նրա պրոլետարի գրական ու ժողովրդական ակունքներն ու գեղարվեստական մտածողության մի բանի էական յուրահատկությունները, որոնցով այդ բանաստեղծը տարբերվում էր իր սերնդից ու արդեն լուծարված Առողջաջիտի գրողներից: «Դատելով ներկա ժողովուրդի նյութերի մեծ մասից,- գրել է նա,- մենք սկսնակ այս պատանուն կհամարենք նոր գյուղի քնարերգու: Անցնելով անապատատության, որությունը դառն բովից և աչք բացելով մեր կոյունտեստության Հարուստ, բովանդակալից առօրյայում,- նա անսահմանորեն ոգևորվում է, և այդ ոգևորությունն ստեղծում է

մի շարք բառ ամենայնի Հաջող բանաստեղծություններ»³⁶ (ընդգծ.-Ս. Մ.): Ընդգծվածում ուշագրություն գարձենք «նոր գյուղի քնարերգու» արտահայտությանը, որն արվում էր բն-գամենք մի քանի տարի առաջվա պրոլետարական գրականության շատագույնի կողմից: Ալազանն և նրա սերնդակիցների, Հատկապես Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի գունդի աղմկաբարություններից հետո ստպարեղ էր գալիս մի գույլայ բանաստեղծ, որը չուներ իրենց թերությունները և օժտված էր շատ էական առավելություններով: Նա իրենցից օժտված էր ու գրագետ (1920-ական թթ այդ սերունդը հիմնականում չուներ գրական բավարար գրագիտություն), իրենց պես չէր հերքում դասականներին, մեքենա ու արակ-որք, գործարան ու դազգահ չէր փառարանում, «Հրաբխամարչ» չէր երգում, նորարար երևալու ճիգ չէր անում, գալիս էր ոչ թե վերացական տեսություններից, զաղափարական պարտադրանքներից կամ օտար ազդեցություններից, այլ բուն կյանքի իրական տարերքից ու ժողովրդական ակունքներից: Ճիշտ է, սոցիալիզմի, երկրի վերակառուցման արձագանքները նրա բանաստեղծություններում էլ անհրաժեշտաբար կան, սակայն գրանք չեն դառնում քաղաքական շափածո ճառ: Անգամ նրա նց մեջ նկատվում են տաղանդի ցույցերը:

Որքան էլ Հ. Շիրազ բանաստեղծը գալիս էր ուրիշ տարերքից, ուրիշ մտածողությամբ, նա այնուամենայնիվ ուներ իր մեքենավոր ու հեռավոր գրական նախորդները, որոնք էլ իրենց կենսունակ ավանդներով սնում էին բանաստեղծին: Հենց Ալազանն էլ զիպուկ նկատել ու մտանշտույց արել Շիրազի առնչությունները իր գրական նախորդներին Թումանյանին, Խաչակյանին, Մեծարենցին ու Հայ ժողովրդական բանահայտությանը. «Դեռ նոր կազմակերպվող այս պատանու ստեղծագործությունների որոշ մասի վրա ակնարկ է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ազդեցությունը, որի «Համերգ» բանաստեղծությունը եղել է մեր պատանի հեղինակի առաջին

³⁵ Մեք գեր բացատրում ժամանակի գրական նրճուրդին բաշամանք Ե. Չարենցի այսպիսի տարբերումն ընդ մի այլ հնարավոր ու հավանական նպատակ հարձածի տակ չցեն ու տարբերություն հարձածումների թիվս լյարճեն ճոր-ճոր գրական առաջարկ նճող պատանի տաղանդն - Ս. Ս.:

³⁶ Դ. Շիրազ, Գարնամուտ, եր., 1935, 4 Ալազանի «Դովհաննես Շիրազ» առարքանը, էջ 3:

լուսատու աստղը, երբ անապատան իր անցյալում շուկայում գտնվեմ է մթյե մի տուպրակ և վրան կարգում իր վրա ցնցող տպավորութիւն գործող այդ բանաստեղծութիւնը: Այնուհետև նկատելի է խորունկ քնարերգւակ Ավետիք Իսահակյանի և մասամբ Միսաք Մեծարեւնցի ազգեցութիւնը՝ առանձնապես նրա մանր բանաստեղծութիւնների վրա»³⁷ (ընդգծ.—Ս. Մ.):

Մեր համոզմամբ էլ չօվհ. Երբայի բանաստեղծութիւնների ձևնային բնագիտական հան նաև պուշկինյան ներշնչումներ, ինչպես հստակ երևում է անգամ «Զմռան իրիկունը», «Զմռան երկնո» բանաստեղծութիւնների վերնագրերից, սակայն նաև Վտուրմանի «Հացին երգից» ներբանգներ՝ «Արտերի միջով», «Հունձը» և այլ բանաստեղծութիւններում: Սակայն խոշոր վարպետներից կրած ազդեցությունները համարելով բնական երևույթ՝ ողջամիտ Այազանը Երբային չի պարփակել միայն ազդեցությունների ոլորտում, բնդհակառակը, արժեւորել է նրա սեփական մտածելակերպը և կարևոր դիտողութիւններ արել նրա բանաստեղծական մտածողութիւն յուրահատկութիւնների ու մանավանդ ինքնատիպութիւնը հաստատող ոճի վերաբերյալ: Առաջին իսկ գրքով Չ. Երբայը ներկայանում էր որպես իր սեփական ոճն ունեցող ու բուռն մտածելակերպով բանաստեղծ: Իսկ սա արդեն բարձր պոետի ցուցանիշ էր:

Ինչօվ էր Երբայը տարրերվում իր սերնդակիցներից: Նրա ինքնատիպութիւնը զբնորվում էր ոչ միայն դասական ձևի ու պարզութիւն, արդիական խոր բովանդակութիւն, այլև առաջին հերթին զեղարկութեան անսովոր պատկերների, համեմատութիւնների, ոճի մեջ, այսինքն այն ամենին, ինչ անհրաժեշտ էր յուրաքանչյուր իսկական բանաստեղծի համար:

Արդարամիտ այս գնահատումների հետ միասին, սակայն, Այազանը ավագի իրավունքով պատանի բանաստեղծին արել է բարեկամական դիտողութիւններ, որոնք թեև մասամբ արդարացի էին, սակայն անմիջապես շահարկիցին Երբայի՝ պատ-

կերպեր մտածողութիւնից դրեթե զուրկ հակառակորդների կողմից: Նրանք էլ, զուցե և Այազանից փոխ առնելով, տարածեցին այն անհեթեթութիւնը, թե Երբայը պատկերացմով է, առանց պատկերի բանաստեղծութիւն չի պատկերացնում: Երևի միայն իրենք էին պատկերացնում բանաստեղծութիւն՝ առանց պատկերի: Այսինքն՝ բանաստեղծի իրական առավելութիւնը ներկայացում էր որպես աններելի թերութիւն:

Ցույթը, մեզ հայտնի էլ Այազանի առաջարանի ամբողջական տեքստը, չգիտենք էլ Չարենցի և զլավիտային անհայտ անձի ինչ կրճատումներից կամ հավելումներից հետո է մնացել հետևյալ արտահայտութիւնը. «Վերին աստիճանի այս պատկերամուտիւնը» է պատճառը, որ Երբայը հանախ բնկնում է աննպատակ, բարդ ու անըմբռնելի պատկերներ ստեղծելու հետևից, մի երևույթ, որին զոհ է դնում բովանդակութիւնը»³⁸ (ընդգծ.— Ս. Մ.):

Ձեխ և բովանդակութեան՝ հին ըմբռնումներից եկող շփոթ կա այտեղ. հատկապես բովանդակային ձևն ու ձևային բովանդակութիւնը չտարրերակելու պատճառով են ի հայտ եկել նման թյուրմտացութիւնները, որոնք, չարենցյան ըմբռնումով «ձեխն առաջնութիւն տալու» հետևանք էին: Մինչդեռ չի բացայան բանաստեղծութիւններում բովանդակութիւնն արտահայտում է համապատասխան դասական ձևով, և այդ ձևն էլ ունի իր նոր բովանդակութիւնը: Բայց ահա այս բնույթի արտահայտութիւններով Այազանը կամ նրա առաջարանին Չարենցի կրճատումներից հետո միջամտած անհայտ անձը կարծես ակամա հուշում էր ոճանց, թե որն է չօվհ. Երբայի խոցելի տեղը և ինչպես կարելի է նրան հարմարել ու քննադատել: Նրա այս հնչեղ հայտարարութիւնը, սակայն, չի հիմնավորվում որևէ զբաղան օրինակով, և անհասկանալի է մնում, թե որն է չի բացայան այդ դատարարակի պատկերամուտիւնը:

³⁷ Սույն տեղում, էջ 4-5:

³⁸ Սույն տեղում:

Հնաաբբերն այն է, որ Այազանը մատանանչել է գրքում իր Հավանած բանաստեղծությունները, բայց չի նշել գոնե որևէ բանաստեղծություն, որն ունենար իր վիճակոչած թերու-թյունները: Բույր գեպերում, իր որոշ վիճելի Հարցադրու-մների կամ ինքնապահանջության Համար արած որոշ արտահայ-տություններով Հանդերձ, մեր առջև է բնութագրական լուրջ խոսք, որում նկատելի է նրա վաղ գրչակցի ազնիվ մտահոգու-թյունն ու արտացավ վերաբերումները առաջին գրքով ընթեր-ցողին ներկայացող պատանի բանաստեղծի գրական ապագայի Հանդեպ: Հովհ. Շիրազի առաջին գրքում իրոք կան կատարյալ բանաստեղծություններ, որոնք Հնաագայում նույնությամբ կամ թեթև վերամշակումով տեղ են գտել նրա Հրատարակած Հատընտիրներում, ժողովածուներում ու Հատարային Հրատա-րակություններում, դարձել են քրեստոմատիական նմուշներ: «Տխուր-արտում այն փողոցից», «Երեանի շողը», «Ո՛ր էր էր գարունը», «Երգեր Հողին» շարքը, «Արևին», «Արաբրին», «Նրագարա», «Հին աշխարհը չեմ տեսել», «Թոնիրները», «Ա-ղափներները»... Վերջինս իր նախնական տեսքով էլ քնարական իսկական գլուխգործոց է՝ սիրուց ու կարոտից ծնված կատար-յալ բանաստեղծություն, բնապատկերի և մարդկային Հողե-վիճակի գույնգույնության դասական օրինակ, որի տողերում աշխարհընկալման ու վերարտադրման Հենց շիրազյան կերպն է սովորական բնապատկերի և դպացմունքային թանձր շաղա-խի Համագրություն:

Աղափները կանաչ կպերում
Ամեն ստավոս երգում են խաղաղ,
Մաղող արևն է նրանց Համբուրում,
Թույնում, տանում դաշտը լուսալու:

Սիրոս նման է կանաչ կպերին.
Հոգուս կազբից երկի ստավոս
Իր թևին տալով թռավ Աղափներն³⁹

Մի փետուր թողած սրտիս կալի մոտ:

Իսկ «Արևին» ձոնը մի փոքրիկ քնարական գլուխգործոց Հիմներդ է, արևերգության մի նոր որակ, որի մեջ մեծարենց-յան «լուսարագձ Հիվանդի»՝ «Շողա՛, շողա՛, բարի՛ Արև, Հի-վանդ եմ» թախանձադին աղբյուրի փոխարեն տեսնում ենք խեղճուկրակ «մանկության անույս օրերից» կյանք վերա-դարձած պատանու զորեղ կենսաթիրության գրսևորումը՝ որ-պես վայրկյանի կյանք ունեցող զավակի և սերունդների Հա-վերժ կենսատու գորովագույթ մոր Հարաբերության արտա-Հայտություն:

– Իմ բարի, իմ ջերմ, Հարապատ իմ մայր,
Իմ բարի արև, ես քեզ եմ սիրում,
Քեզ եմ երպել կարոտով անծայր
Իմ խեղճ մանկություն անույս օրերում...
Դու անՀուն բաժակ, իմ Հոգու ոլորտ,
Ես՝ վայրկյան, իսկ դու՝ Հավիտյան համփող:

Շուայլիբ դիևիդ իմ Հոգու թատում,
Ուր Հավերժ կյանքի արևն է Հուսում...

մշակվել է: Միս վերամշակված տաղերակը, 1-ին տունը գրեթե անողորմամբ է փոխվել, իսկ 2-րդ տան մեջ փոխվել է 2-րդ տողը և 3-րդ տողի գեխաատով Աղափին դարձել է փոքրատու:

Աղափները ամեն ստավոս
Կազբի վրա ծակտում են անկույթ,
Կապույտ ոճոսն է մրանց կախաղոսում,
Ենցճուժ-տանճուժ դաշտերը կապույտ:

Սիրոս նման էր կանաչ կազբին,
Բայց սրտիս կալից մի պաղ ստավոս
Իր թևին տալով թռավ աղափն՝
Մի փետուր թողած սրտիս կալի մոտ:

Ընդգծված տողերն ու բառերը փոխված են: Հավանական ենք համարում, որ առաջին տաբերակի երկրորդ տան գլխազրով Աղափին պարզ կրիպակ կամ տառասխալ չէ, այլ անճանաչ, և բանաստեղծը նախապես մնալի է ունեցել որոշակի անճանաչորոշյան: Ենթադրում ենք՝ գող Աղափուն: Կարծում ենք՝ բանաստեղծը միտ է վարվել՝ մասնավոր փաստից գնալով դեպ գեղարվեստական լայն ընդհանրացում – Ա. Ս.:

³⁹ Երկայացված «Աղափները» բանաստեղծությունը, վերջին հրատարակություններում պահպանելով հիմնական կառույցն ու գրության տարրերից 1935, մասնակիորեն վերա-

Երեք բանաստեղծութուններից կազմված «Երգեր Հողին» շարքը, որն ամբողջական պոեմի տպավորություն է թողնում հիշեցնելով Վարուժանի «Հացին երգը», աչքի էր ընկնում գյուղական տարրերի բանաստեղծականացմամբ և արձանացել էր բարձր համարման, իսկ «Թռևիները» այս զբոսւմ գետեղվելուց առաջ Ազատի նմանյանի Հիացական գեանահատկանով էր հանձնարարվել «Գրական թերթում» տպվելու:

«Փարսանամուտից» այս բանաստեղծությունները մենք ընտրում ենք այսօրվա չափանիշներով որպես ժամանակի փորձություններից անցած ու քննություն բռնած ճշմարիտ բնարեզուսթյան ընտիր նմուշներ:

Այգազանը իր առաջարկումն նշել էր նաև հաջողված այլ գործեր, ինչպես ժողովրդական ողով ու օճով ստեղծված «Աղջիկը երգում է», «Արքայախորում», «Մարտիչաղ» պոեմից տպված հատվածը՝ «Մարտիչաղի մանկայների երգը», որում կերպավորված են Արժիվ Սորոն և Ազատի նմանյանը՝ ընկեր Ազատին և այլն: Ժողովրդական կյանքի պատկերման և բանահյուսական նյութերի օգտագործման հաջող օրինակներն Այգազանը ուսանելի էր համարում սկսնակ ու երիտասարդ բանաստեղծների համար:

Շուրջ հարյուր էջ կազմող անգրանիկ ժողովածուի համար այսբանը շատ է, թե քիչ: Համենայն դեպս՝ Հասկեր, արևի համբույրներն եք գուշ «Արտերին», Նիպարա, ես քո տարերքն սպիտակ Երկի ժամին գզում եմ իմ կրճի տակ («Նիպարա»), Ձմեռն ի՞նչով Մասի ճերմակ կտարից, Բանակ զարկեց դաշտերում, Ձյան բանակի զորավարը բուքն հանդից Փարսան կարտուն է բերում և այլ պատկերներ բնարուխ, հասուն բանաստեղծի հայտնագործություններ են, որոնք ուրախությամբ ընդունվեցին քարեսիրտ ընթերցողի ու գրական ազնիվ մարդկանց կողմից և հանդիպեցին չարամիտների սվիններին: Որպես ժամանակի համար սովորական «Երկամե գարնան», «Երկամե կամի», «Երկամուտը երկրի երգերի» ու «Մրկանների լիրիկայի» հակադրություն է հնչում Հ. Շիրազի «Երգ գագամուշների» բանաստեղծությունը:

Տիրում էր համբըհասուր օղևորության միջուրտ: Այն-բաններից ու մոխրներից հասնող, վերածնվող երկրի տիրոջ հպարտությամբ է պատանի բանաստեղծը ներկայացնում նրա վերելքի ու ապագայի հանդեպ իր մանուկ հավատն ու մարդկային անկեղծ հրեմանքը, որով կարողանում էր համակել բոլորին: Երկամի ու մեքենայի անիմաստ պաշտամունքի փոխարեն բանաստեղծը ներկայացնում է զգացմունքի պատկերավոր մարմնավորման իրօք հետաքրքիր նմուշ:

Եվ սիրտս որպես բալեն վանդակում՝
Ուրախությունից նոր թևեր ստա՝
Կրճքիս վանդակի ճաղերն է քանդում՝
Հայացքն իմ երկրի վերելքին հասում:

Այգրից և եմ ճիշտ բառագործածություն շնորհիվ, բառի զեղգրտական արժեքի սուր զգացողություններ բնապատկերներ, պատկեր-արձանագրություն, պատկեր-ապրում ստեղծելու, բնարական Հերոսի խոհերի, զգացմունքների արտաստվող գեղեցիկ պատկերագրման հետ միասին գրեկորվում է նաև պատանի բանաստեղծի գեղարվեստական մտածողության՝ թուամանյանական աշխարհից եկող մի այլ կարևոր յուրահատկություն. զա չափածո քնարական նկարագիր և քնարական պատում ստեղծելու հմտությունն է դիպաշարային բանաստեղծության մեջ: Այդ յուրահատկությունը անկաշկանդ գրեկորվել է «Երգեր Հողին» շարքում, «Անտառի կահագանը», «Մարտիչաղի մանկայների երգը» և այլ գործերում:

2.

«Փարսանամուտ» գրքով և նույն 1935-ին լույս տեսած «Միամանթո և ԽՂեզար» պոեմով Հ. Շիրազը Հայտնվեց մի միջուրտում, ուր պետականորեն ամեն ինչ գործադրվում էր ազգային մտածողություն, ոսկոր ու ողնաշար ունեցող բոլոր ճշմարիտ արվեստագետներին լուսեցնելու և ասպարեզից հեռացնելու համար: «Ցարերի գահին բազմած» և «աշխարհը ֆայտան չինած» թիֆլիսցի «Ենդհակապ կինտոյի» հրամանով բո-

լոր ազնիվ մտափորականները ենթարկվում էին դամանագույն բռնութեան ու Հայաժողովների, երկիրը բռնել էր «ձուլածափալ արյան ցոլքը շտապաժին», «միջնադարյան արեղձացյալ կացինը» կտրում էր Հայոց անտառի ծառերը, կտրում ու «լափում էր որձակը մտքի»: Ստալինյան ու բերիական դաման Հոդմը գորչ ու ղեղին տերևների պես Հայաստանից ցրում – Հեռացնում էր Հայրենի Հունդերը, որ գնան և «խչամի դաշտերում մեռնեն» (սա այդ ժամանակներին տված շարենցյան Հանճարեղ բնորոշումն է):

Եղիշն Չարենցը, Ակսիլ Բակունցը, Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը և շատ-շատերը Հորթորվիցին ժողովրդի թշնամիներ ու ոչնչացվեցին, ուրիշները, դարձյալ ստղանդավոր մարդիկ, գրեթե նույնպիսի Հնարավի մեղադրանքներով ու օրակումներով Հայրենիքից վտարվեցին, արտրվեցին Հեռավոր թաղաներն ու տունդրանները: Ծիրիկական այս Հաշվհարդարն ուղեկցվում էր դամանագույն մուուցքով իրականացվող Հոդերը սպանդով: «Մի քանի խղճերի Հախուռն ցնծության ներքո» արգելվում էին նաև Բաֆֆու, Գառիանյանի, Սիաման-Թոյի, Վարուժանի, Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Մահաբուն, նաև Հննց իր՝ Երրագի ստեղծագործություններն ու գրեթե ողջ արևմտահայ ու արդեն ձեկավորվող սփյուռքահայ գրականությունը: Անփոխարինելի Չարենցից Հեռու քանաստեղծական անդաստանը գրեթե ամառացի էր, ասպարեղը մնացել էր մի քանի կույր ու կիսակույր աշուղների՝ նիկողոսների, գրիգորների, առաքելների ու սահակ – նովանների, որոնք մամուլը Հնդեղում էին Ստալինին, գործարանին, արակտորին ու կոլխոզին նվիրված անմիա ձոներգ – փառաբանություններով, իսկ դրանք, կարելի է սասել, նվազագույն աննշույթյուն իսկ չունենին գեղարվեստի Հեռ: Սեպհան զավեշտականն այն էր, որ նրանք քաջալերվում էին պետության կողմից ժամանակի մամուլում ու մանավանդ «Գրական թերթում» էջեր արամադրելով նրանց անարվեստ ոտանավորներին, իսկ Չարենց Հանճարին վտարում էին գրողների միությունից՝ նրա իսկ ընկերների «ձեռքով միաձայն»:

Հայ Հոդերը – մշակութային կյանքի և մանավանդ գրական մտափորականության այս նոր եղանակի օրերին ու նրանից Հեռո Հովհաննես Երրագին էր վիճակված պատմական մի ծանր ու վսեմ առաքելություն՝ անկարելի պայմաններում անմար պահել Հայ քնարերգության Զահը:

Իսկպես, նոր էր մարել «վերջին Զահը»՝ Չարենցը, և գեթ թաքմ էին մյուս նահատակ, քանատարիկայ ու արտրյալ գրողների կորստյան վերքն ու կակիծը: Դժվարին ժամանակներում այդ ողջ ծանրությունն իր ուսերին վերցրեց արդեն Երևանի պետական Համալսարանի ուսանող Հովհ. Երրագը: Նա արդեն գրականություն էր մտել ծրամանալար քնարով, երկինքը Հագու մեջ, գարունը կրծքի տակ, արևը աչքերին, աղբյուրները լեզվին, ձեռագրիկներով, մանուշակներով, մյուսամբույր չունենեղով, Հոդեթով Հասմիկներով, վարդերով ու կակաչներով, սարերից բերած նորարար թարմությանը, մարդկանց Հավիտենական գարուններով երջանկացնելու Հասակ ղեղաղխտական ծրագրով և ազգարարից «մեր երգերի լուսարացը»:

Մանուշակներ ձեռքերիս ու չուշաններ ոտքերիս, Ու վարդերը այտերիս ու գարունը կրծքիս տակ, Ու երկինքը Հոդուս մեջ, ու արև այտերիս Ու աղբյուրները լեզվիս սարից իջև ես քաղաք, – Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց Հոդեմ աչքերին Տեսան ուրիշ մի աշխարհ, գարունն տեսան նորարար: – ԻՆչ թարմություն, – ասացին, – իՆչ թարմություն, – ու բացին Լուսամուտներն իմ առջև, ու ես՝ իմ սիրտը բացել Անցելում էի երգելով ու շող տալիս մայիներն Մանուշակներ ու վարդեր ու Հասմիկներ Հոդեթով, – Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել, – Քաղաք իշկ լեռներից կանցնել գերուխո Հեթումով, Երկրներկիր շող տալով կակաչներն իր ձեռների, Մեր երգերի լուսարացն ու գարունը լեռներ:

Մեքենայի, անկվների, դազկանների, գիգիների, արակտորների փառաբանության փոխարեն՝ գարուն, բնության զարթոնք ու գեղեցկություններ, Համաշխարհային դատանցական Հեղա-

փոխութեան ու «մկանների լիբիկի» փոխարեն՝ Հայրենիք, Հայաստան, մայր բնութուն, Հայոց վիշտ, ժողովրդի պատմական ճակատագիր, ազգային երազանք, միավուսակցական քարոզչութեան ու երգումների փոխարեն՝ մայր ու Հայր, կին ու զավակ, ընկեր ու բարեկամ, սիրտ ու սիր: Սա Խ Արզումանի սաս՝ «սրտի բան» է Ե. Չարենցի սաս՝ «սրտի ուղեւ խաղ» գրելու պատգամախոսութեան կենսապոթմունքն էր նոր ժամանակներում՝ նոր մտածողութեամբ, նոր լեզվով և անձրեցիկ պատկերավորութեամբ:

Նոր բանաստեղծի Հայաստեթյունն աննկատ չմնաց. նրան անմիջապես ճանաչեցին ու գնահատեցին և Հայաստանում, և՛ Սփյուռքում, և՛ Խորհրդային Միութեան բոլոր Հանրապետութիւններում ու այլուր:

Դեռևս 1936 թ. Արշակ Զոյգանյանը մարգարեանում էր. «Կուզեմ աշտեղ գտնեք քանի մը տողով հիշատակել (ավելի լայնորեն անոնց մասին խոսելը թողնելով առաջիկային) տիտղոսները երկու քերթողական գրքույկներու, որ Հայ նոր ու զմայլելի բանաստեղծի մը բերկրառիթ Հայաստեթյունը կը բերեն մեզի, այն է «Կարնանամուտ» (խոկապես գարնանաբույր) տաղերու Հավաքածուն և «Միամանթո և Խճեգրանք» Հայկապոլ վրայերգը Հովհաննես Երևազի, որ երկ անուպատան, «խուժանային» որբ տղնի մը եղած է Խ. Հայաստանին մեծ և այսօր, ըստ իս, Երևանի և ամբողջ աշխարհի Հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը գրավելու արժանի ներշնչյալ, Համայն քնարերգակ մըն է»:

Գ. Մահարին Հովհ. Երևազի մասին իր բնութագրական բազմամտ Նոզվածում որոշակի նպատակով Հնչեցնում է Սփյուռքի մեծ գրագետ, իր գնահատումների մեջ սովորաբար բաճաճ, երբեմն ուշնիսկ ծայրահեղ ու Հակասական⁶⁰ Հակոբ Օշականի կարծիքը. «Այստեղ գարնանային միայն ու զժգարաճաճ քննադատ Հ. Օշականի ջերմ գնահատականն է Հ. Երևազի մասին. «- Այս տղուն մեջ արեւելահայ գեղջուկ

պարզութեանը և արեւմտահայ շքեղ պատկերավորութեանը, ոճագեղութեանը կրնան իրար գտնել... Եթե Վարսեմանի շքեթութեանը որ մը պիտի խառնվի գեղջուկուշունին, կրկարծեն որ իրականացնողը այս տղան պիտի ըլլա»⁶¹:

Հովհ. Երևազ բանաստեղծն ուներ ազգային ու Համաշխարհային դասական արվեստի այնպիսիներ զրա բանաստեղծ իր գեղագիտական դաստնանքը: Նրա և պղնձյա շեփորի ու թմբուկի, մեքենական շոխիչի ու ամբողջ աշխարհը խորհրդայնացնելու մոլագարութեամբ տարված, «միջազգային ցեխային» սիրահար ժամանակակիցների Հետ Հրապարակային բանավեճն անխուսափելի էր և պիտի լիներ անդիլում: Այնպես որ, սկզբից ևեթ լինելով Հոգեբանութեամբ, մտածողութեամբ, նակատագրով ու նկարագրով, ուղն ու ծուծով Հայ բանաստեղծ, ճիշտ կողմնորոշվելով դեպի դասական արվեստի լավագույն այնպիսիներն ու ճշմարիտ քնարերգութեանը՝ Հովհ. Երևազը, ժողովրդական լայն գանգվածների մեջ անվերապահ Համակրներին ու երկրպագուներին բանակ ունենալով Հանդերձ անխուսափելի Հակառակորդներ պիտի ունենար խորհրդային երկրի թե՛ կուսակցական զեկավարութեան, թե՛ մանավանդ, նրա դրական քաղաքականութիւնն իրականացնող Հանձնակատար չինովիկների ու գրական միջավայրի Հանկատար միջակութիւնների մեջ: Նրանց դեմ իր գեղագիտական բանավեճը Հովհ. Երևազը նախ վարում էր քնարական բանաստեղծութեան Համար թույլատրելի սահմաններում, ապա և Հարկադրված էր անցնել բացահայտ առճակատման.

Ինչ դուք երկցեք պղնձյա փողով՝
Ես դժուխտ սարից քնարիկեցի,
Դուք քնքշութեանը Բացքերի բողով,
Ես լացի վիշտը սիրուց ընկածի:
Դուք շեփորում եք արակտորը դեռ,
Ես սիրոն եմ երգում արակտորիստ.

⁶⁰ Իր կազմած «Պայ գրականություն» դասագրքում (Երուսաղեմ, 1942) նա գրել է. «Պայաստեղծի մեք ալ այսօր լեւն Եղնիշ Զարեանց, Գեղամ Սարյան և Գովհաննես Երևազ անուցներով մարդիկ. ուրբոս ոտանախոր կը գրեն իրենց բանաստեղծ չլլալը ապառաջանելու համար»:

⁶¹ «Գովհաննես Երևազի մասին» մոդովածում, էջ 11:



Երանյի Խասայ: Չախում «Փարնանաուտ» Շիրազը, արևմ. արևմ. 1939 թիվը «Իմ անձնայալ տարիքը» անվանող Շիրազը: Ի՞ դեռ, ծան կողմի լուսանկարն է դրված 1940 թ. «Երգ Պայաստանի» գրքում:

Ձեր երգը՝ երկաթ, իմը՝ սիրտ ու սեր,

Ու մի թի սրտին ժանգը կեանքի...

Ձեր երգը՝ երկաթ, բայց մարդն է անվերջ

Զարթնեցնելու Մարդը մարդու մեջ:

Սա «միաշքանի, միտանի», միայն անհեթեթ ու անորոշ «ճիչեր փղձկացող» խրափրակի փոխարեն նոր ժամանակների «խինդ, խանդ ու սեր» ունեցող մարդու «Տորդ Հուլիսը» երգելու շարժեցյալն ափանդների կենսագործումն էր ուղղակի առումով: Այսպես էր պատանի Հովհ. Շիրազը դառնում հայ դասական քնարերգուի մանկավարժական շարունակությունը նորագույն ժամանակներում:

«Փարնանաուտը» ճամփարածան կամ դաղարի Հանգրվան չէր Հ. Շիրազի համար, այլ, ընդհակառակը, ստեղծագործական

նոր վերելքի խթան, ինքնահաստատման գործը կռիվն: Այդ Հաջողությունը ամրապնդելու և գրական նորանոր Հորիզոններ նվաճելու ճանապարհին անչափ կարևոր դերակատարություն ունեցավ Հովհ. Շիրազի ուսումնասիրությունը Երևանի պետական Համալսարանում, ուր նա Հարսուացրեց ու կատարելագործեց իր գրական գրագիտությունը, շփվեց Համալսարանին գրական մեծ ուշխարհի հետ, որը նպաստավոր եղավ իր ձիրքերի և Հանձարի գրանորման ճանապարհին:



Գրական սերունդներ: Սի դոկլադ Պ. Սևակի տուն-թանգարանի պաննո- որմնանկարից

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՀԱՄԱՍԱՐԱՐՆՈՒՄ

Անշուշտ, Հ. Շիրազը իր ժամանակի ծնունդն էր և չէր էլ կարող զերծ մնալ նույն այդ օրերի որոշ պարտազրանքներից: Անխուսափելի էր «Արևի երկիր», «Բենեդի առուժը» պոեմների և օրվա հրամայականով ստեղծված ձանձրղբերի ծնունդը: Կարևոր, սակայն, այն էր, որ Հ. Շիրազը, լինելով ինքնուրույնական ըմբռնմամբ **քնաշխարհիկ բանաստեղծ**, հայոց մայր բուհում սովորելով ապրեց ստեղծագործական բուռն վերելք, ունեցավ հզոր թռիչքներ, որոնց արդյունքը այն ճշմարիտ գլուխգործոցներն են, այն հզոր նվաճումները, որ նրան արժանացրին համազգային փառքի ու համաշխարհային հռչակի:

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում Հ. Շիրազը սովորել է 1936 - 1941 թվականներին:

Համալսարանական հինգ տարիները բանաստեղծը հաճույքով էր հիշում, մանավանդ իր սիրելի ուսուցիչների՝ Հրաչյա Աճառյանի, Արսեն Տերտերյանի, Համազասպ Համբարձումյանի, Մկրտիչ Մկրյանի դասախոսությունները, արվեստի և գրքականության տարաբնույթ հարցերի շուրջ իր և դասընկերների միջև ծավալված բանավեճերն ու մանավանդ իր մեթոդավոր գրական նախորդի և ուսուցչի՝ Ավ. Խաչատյանի գրական դասերը համալսարանից դուրս:

Հետաքրքիր բնորոշումներ էր տալիս իր սիրելի ուսուցիչներին: Հր. Աճառյանի օրվա գրաբարի դասերն էր հիշում, որոնք գարձան բնագրով Նարեկ կարդալու լավագույն միջոցը: Բայց երբ Հր. Աճառյանը լեզվաբանության մի դասին հորդորել էր, որ բոլոր ուսանողները Օնիկից օրինակ պիտի վերցնեն և նրա նման գրեն իր դասախոսությունները, գաղտնիքը բացվել էր: Գարզվել էր, որ նա այդ դասերին ոչ թե դասախոսություններն է գլուխը կախ գրել, այլ ... իր բանաստեղծությունները: Վերափորձել էր գրանից մեծագույն լեզվաբանը և կշտամբել նրան:

«- Գրաբարի դասերին, Օնիկ, քեզ լավ էիր պահում, Ավոն (Ավ. Խաչատյանը - Ս. Մ.) էլ խնդրել է, որ քեզ հատուկ ուշադրություն դարձնեմ: Լավ էլ սովորեցիր գրաբարը. կարծում էի՝ մարդ ես դառնալու, դու մի անի՛ բանաստեղծ պիտի դառնաս: Դրա համար էիր բնդհանրա՛ լեզվաբանության դասերին միայն մարմնով ներկա, իսկ մտքով ու հոգով՝ մուսանների հետ: Ես՝ ա էին գեղեցիկ:

-Գուք էլ եք բանաստեղծություններ գրել, ընկեր Աճառյան. մեկը նույնպես հիշում եմ. Ձեր գրածներից ամենալավն է, իսկական գոհար

Գոհարին տեսա այսօր,

Ինքն էլ անուշ մի գոհար...

- Լավ, լավ, դատարկ բան է, ամեն հիմարություն չեն հիշի. քո գրածներից կարգա, - ասել է Հր. Աճառյանը, - հենց հիմա ինչ գրում էիր նա կարգա:

- Կիսատ է, խանկարեցիք:

- Վնաս չունի, դու այդ խանկարվածի կն՛սը կարգա: Կարդացի.

- Ա՛խ, թի ինչու եմ այսքան անհապիտ՝

Միայն քո հանգիստ աչքերը գիտեն...

- Իսկական գոհարը դա է, Օնիկ: Իմ դասախոսությունները բոլորն էլ գրում եմ, իսկ այ սա միայն դու կարող ես գրել: Գրի՛ր երբ ուզում ես, ինչքան ուզում ես, իմ դասերին ես քեզ չեմ խանդարի»:

Գրեթե ընկերացել էր անտիկ աշխարհի հուճահոսմեական և արտասահմանյան գրականության դասախոս, իր նման բանաստեղծական խառնվածքի տեր Համազասպ Համբարձումյանին:

- Գիտե՛ս ինչ մեծ մարդ էր, իսկը իր պաշտելի Հոմերոսի դյուցազնական ազնիվ հերոսներից: Ինչպե՛ս մեզ սիրահարեցրեց Հոմերոսին ու Վերգիլիտին, Հին աշխարհի մյուս բանաստեղծներին ու ողբերգակներին, Վերածննդի ժամանակների Դանթեին, սոնետների արքա Պետրարկային, Սերվանտեսին,

Շեքսպիրին և ուրիշներին: Գրական նյութերին տիրապետում էր բնագրով, հին հուճարենից շոճորտին Հենց լսարանում էր բուռն ուղևորություն քերականի թարգմանում մեզ համար... Ուրախ եմ, որ հետագայում Հնարագորություն ունեցա Հրապարակավ պաշտպանելու «Իլիականին» և «Ոդիսականին» նրա թարգմանությունները, և խոսքս բանի տեղ անցավ...

Մկրտիչ Մկրյանը նույնպես նրա սիրելի ուսուցիչներից էր: Լավ էր արտահայտվում նրա մասին և չէր թարցնում նաև նրա դասերին իր շարժանությունները: Մկրյանը հանձնարարել էր սեփերատ-գեկուցում գրել Նարեկացու «Մատյանի» մասին և ուսանողների ներկայությամբ կարդալ:

Գրել էր: Կարդացել: Նարեկացուց մեջբերումները ներկայացրել էր գրական արևելահայերենով, երբ գեո Մ. Խերանյանի և Վ. Գևորգյանի թարգմանությունները չկային. Մկրյանը գո՛վաբանել էր՝ տեսելով, թե քաղվածքները գրաբարից Հայակապ թարգմանություններ են, և արդի գրական Հայերենով տեսեք՝ ի՞նչ հրաշալի է հնչում Նարեկացին, միայն թե մի քիչ շիրազացվել է ...

Խորամանկելու համար Շոճ. Երրազը տեղումտեղը զգլիացել էր ու անկեղծորեն խոստովանել.

— Ենթահայություն ընկեր Մկրյան. Ձեր խորհուրդներով եմ գրել. սեփերատի հաջողության համար Ձեզ եմ պարտական: Բայց անկեղծ պիտի ասեմ՝ Դուք գիտելիքների խորունկ ձոր եք, իսկ Ձեր ձայնը այդ ձորի հատակով հասող բարա՛կ առու... Մկրյանը կարծես ուրախացավ, բայց այդ պահին գլուճբեցին մեջս արթնացավ:— Սակայն, ընկեր Մկրյան, պիտի խոստովանեմ, որ ես զրանք գրաբարից չեմ թարգմանել, Ձեր հավանած այդ քաղվածքները Նարեկացու անունից պարզապես ինքս եմ գրել՝ նրան նմանակելով...

— Տես՛ նե, այնքան լավ էիր նմանակել, որ ինձ էլ շփոթեցրիր... Վերջին անգամը լինի...

Դասընկերներից մեկը՝ բանասերուցի Դավիթ Մարգարյանը, Շոճ. Երրազին հիշեցրեց, որ արամարանության դասերին գրե-


թե չէր հաճախել: Ու երբ քննություն ժամանակ դասախոսը Հարցրել էր.

— Բանաստե՛ղծ Շոճհանես Երրազ, դու գիտե՛ս, որ եկել ես արամարանությունից քննություն հանձնելու: Ասա՛ տեսնե՛մ՝ գոնե գիտե՛ս ի՞նչ է դասաղությունը:

Երրազն անմիջապես պատասխանել էր.

— Դասաղությունն էն է, որ ես ունիմ, դու չունիս...

Հիացած էր Արսեն Տերտրյանի դասախոսություններով ու մարդկային նկարագրով: Նա կարողանում էր հայ գրակա-նության արժեքները գնահատել առև և եվրոպական արվեստի չափանիշներով և իր հմայիչ խոսքը հիմնավորում էր անհրա-մեշտ զուգահեռներով:



իր «Երզ Հայաստանի» (1910) գիրքը երախտագետ ուսանող — բանաստեղծը նրան է նվիրել այսպիսի բնորոշ մակագրու-թյամբ. «Հայ գրականագիտության կենդանի կլասիկին՝ ընկ. Արսեն Տերտրյանին՝ իր անառակ աշակերտից: Շոճհանես Երրազ»⁴²:

⁴² Ձարմանալի պատահալակությունքամ այդ գիրքը Դ. Երրազի հիշյալ մակագրությամբ տարիներ առաջ նվիրեց ընկերներիցս մեկը — Ս. Ա.:

Համայնարանից հիշում էր նաև ցավալի դեպքեր՝ կապված Հատիկային 1936 — 38 թթ. Հայ դրոշմների ու մյուս մտափորականների բանտարկությանը, դեղահակաշարութայանը, արտորին, Հայ զբաղանության արժեքների արգելմանը և այլ ողբերգական իրադարձությունների: Պատմում էր, թե ինչպիսի հնարագետ Հանդգնությամբ էր բանաստեղծ Թեան նաչյանը անձնագոհարար փրկել իրեն ստույգ վտանգից:

«— Չարենցի անունը տվորը կրկիններ Չարենցի օրը. էլ ուր մնաց կարողացողը,— ասում էր Հաճախ: — Իմ սերնդի ազնիվ մազդիկ շատ ծանր տարան նրա բանաստեղծության և մահվան գույժը: Ապրում էի Համայնարանի ուսանողական Հանրակազմարանում՝ դազադի շափ մի նեղ սենյակում: Գաղտնի կարգում էի արգեն արգելված Չարենցի 1932 թ. սեակազմ մեծագիր Հատորը և չէի կարողանում արցունքներս զսպել: Թրջվել էին Չարենցի գրքի էջերը, երբ սենյակ մտալ ուսանողական մի ընկեր՝ Գաբրիել Արևյանը, օրը Հետո երկար տարիներ ռադիոյում էր աշխատում:

— Ի՞նչ է, Օնիկ, լա՞ց ես լինում, ինչո՞ւ...

Էլ չկարողացա թարցնել. ստիպված էի բարձրաձայն արտահայտել զժգոհությունս ու վիրաբերանքը:

— Ինչպե՞ս են ձեռք բարձրացրել դարի բանաստեղծական մեծ Հանձարի վրա, «ես իմ անուշ»-ի, բազմաթիվ հրաշք բանաստեղծությունների ու Հզոր պոեմների հեղինակը, ամենախորհրդային, ամենալենինյան մեծ բանաստեղծը մի՞թե արժանի էր նման դատան ու անարդար վերաբերմունքի. նա ու ժողովրդի թշնամի՞... Ինչո՞ւ են այսպիսի մեծ բանաստեղծին բանտարկել, ինչո՞ւ...

Եվ լացոս ու արցունքներս ազատություն ստացան...

Այդ ժամանակներում իմ մասին չարամիտները լուրեր էին տարածել, թե՛ Նիրազ մեծամիտ է, սպեռն է, չի կարգում, զարգացած չէ, իրենից, Թումանյանից, Իսահակյանից ու Ալազանից բացի՝ ոչ մի ուրիշ բանաստեղծի չի ընդունում և այլն:

Երբ հեթանոսական անգամ Հավաքված մի խումբ ուսանողներ այսպես բամբասակ են ինձ, Գ. Արևյանն ինձ պաշտպանելու

Համար ստիպված, բարի մտքով տակ էր, թե՛ ճիշտ չեք ասում. Հենց նոր եմ աչքովս տեսել ու տկանջովս լսել, թե նա ինչպես է Չարենցին զարի բանաստեղծական մեծ Հանձար անվանում. կարգացել էր 1932 թ. նրա սեակազմ մի Հատորակը և իր արցունքներով թրջել այդ գրքի էջերը...

Այդքանից բավական էր: Ես չեմ օրն իսկ Հանրակազմարանի իմ սենյակ մտալ Համայնարանի ռեկտոր Գաբրիել Պետրոսյանը իր շքախմբով: Իրարից վախենած այդ մազդիկ լուրջ զործի էին: Կարծես իրար Հետ մրցելով՝ նրանք իրենա, գրքերս ու ձեռագրերս պատուհանից փողոց շարժեցին, ինձ՝ դռնից: Եվ պարտապարհեցին, որ երեկոյան անապաման ներկա լինեմ Համայնարանի կոմսոմոլի ժողովին, ուր քննարկվելու էր իմ Հարցը: Բազմամարդ ժողովը վարում էր կոմսոմոլի քարտուղար, իսկպես օժտված բանաստեղծ Թեան նաչյանը, օրը Հետո զոհվեց Հայրենական պատերազմում: Իր ձայնին առանձնահատուկ լրջություն ասելով՝ նա դիմեց Հավաքված ուսանողներին.

— Ընկերներ, բանաստեղծական ֆուկուլտետի ուսանող Հովհաննես Կարապետյանը՝ նույն ինքը Հովհաննես Նիրազ Հորը ըրջված բանաստեղծը, թույլ է տվել խորհրդային ուսանողին անվաշել արաբք: Նա կարողացել է ժողովրդի թշնամի, Հակախորհրդային բանաստեղծ Ե. Չարենցի արգելված գիրքը և արցունքներով թրջել նրա էջերը: Նրա այս դատապարտելի արաբքը ի ցույց ենք դնում ուսանող երիտասարդութայանը նման վտանգավոր դաշմակիցություններից Հետ պահելու Համար: Կարողացան այս ուսանողը կոմսոմոլի շարքերում մնալու արժանի չէ: Ուսար առաջարկում եմ խտտագույն պատիժ հեռացնել կոմսոմոլից, այս՝, հեռացնել...

Ուրիշ առաջարկներ կա՞ն:

Բարբախտաբար, ուրիշ կարծիքներ չեղան: Դեռ ուշքի չեկամ և չզգալով պահի լրջությունը՝ մոտեցա նրան, կեսկատակ ու վախվորած՝ շշնջացի:

— Բայց ես կոմսոմոլ չեմ, ընկեր նաչյան, այդ կազմակերպության Հետ օրեկ առնչություն չունեցողին չեզամ տեղը ինչպե՞ս եք ինձ հեռացնում:

Ավելի բորբոքված, ուղղակի բուռնցքներով վրաս հարձակվելով ինձ դահլիճից դուրս հրեց.

— Ինչ հանդիմունք եմ հակառակել, — գոռաց բարձրաձայն, — կրկնում եմ հեռացնել կոմսոմոլից, հե-ռաց-նել!...

Ոչ հասկացա, որ այդ պահին Թեան Խաչյանը, իմանալով, որ ես կոմսոմոլ չեմ, դտել էր ինձ ավելի ծանր պատիժներից ազատում, գուցե ե պարզապես փրկելու միակ ելքը»:

Համալսարանական միջավայրն ու տարիները 1936-41 թվականները, որքան էլ ծանր ու դժգոհին, Հովհ. Երրազի համար արդյունավետ էին: Նախ ապրում էր հասունացման աննախադեպ ընթացք, ընդլայնվում էր նրա մտահորիզոնը, ձեռք էր բերում ընդհանուր դարգացածություն, Հայոց ժողովրդական բանահյուսության, պատմության ու մասնագրության, Արևելքի և Արևմուտքի համաշխարհային գրականության, Հայոց լեզվի բոլոր դրսևորումների առավել խոր մասնագիտական իմացություն, փիլիսոփայության, արվեստի պատմության ու գրականության տեսության և հստակագույն տաղաչափության անկների իմացություն, լայն առումով գրական բարձր գրագիտություն:

Իսկ սա անկասկած նպաստում էր նրա տեղն ու ստեղծագործական վերելքին: Գրական բանավեճներում հղվում էր նրա ճաշակը, կատարելագործվում էր միտքը, կայունացում էին համոզմունքներն ու արժեքորման չափանիշները, զորեղանում երևակայությունը, ունենում էր մտքի թռիչքների և հանճարի ծագման, բնական բանաստեղծական օժտվածության անկաշկանդ դրսևորման առավելագույն հնարավորություններ:

Ստեղծագործական արդյունավետությանը էլ համալսարանական տարիները նշանակալից էին: Պատկանելի էր գրական հուժեքը, քնարական բազմաթիվ բանաստեղծությունների հեռ միասին ստեղծվեցին լայնակալով գործեր. ավարտել էր ժողովրդական ելույթի մշակմամբ ստեղծված «Մոկաց Միբրան», «Ասասունցի Գալիթ» կամ «Վերածնունդ» էպիկական պոեմները, որոնց ձևազարդերի մեծ մասն անհնապասն խոսքը ժամանակներում ու Հանդամանքներում: Արդիական իրականության

անմիջական արձագանք «Բեևեի առումը» և «Արևի երկիր» պոեմները նրա գրական հեղինակությունը բարձրացրին այնքան, որ 1939 թ. պարզևատրվից «Պատվո նշան» շքանշանով: Բայց Հենց այս ու ավելի վաղ տարիներից նրա դեմ ձևափոքում էր գրական նախանձի միջակությունների և անտաղանդների միասնական ճակատը, աստիճանաբար Հյուսվում էր նրա ազդեցության, մեծամտության, հարբեցողության մասին կեղծ, բայց ըստ էության շատ վտանգավոր օտասպելը, որից ժամանակին այնքան զգուշանում էին Ավետիք Իսահակյանը, Ազատի Խանժյանն ու եղիշ Զարենցը:

Իսկ Հովհ. Երրազը, ներքին վիրավորվածությանը ու դատնություններով հանդերձ, արտաբուռ կարծես անտարբեր այս ամենին, ստեղծագործում էր՝ բնութաբանից իրեն արվածն ու ժողովրդից ստացածը անմեացորդ վերադարձնելու պարտքի հստակ գիտակցությանը: Բացի նրանից, որ ժամանակի մասունքն առատորեն սպաղրում էր Հովհ. Երրազի ստեղծագործությունները, համալսարանական շրջանի նրա երկերի մի հետարբերի հանրագումարն էր 1940 թ. լույս տեսած «Երգ Հայաստանի» բավական ծավալուն հատորը: Հնի ու նորի, անցյալի տխրություն և ներկա խնդրության հակադրությունը հանձա էր տարբեր միջոցներով կերպավորվում Հովհ. Երրազի ստեղծագործության մեջ: Նրա գրական ուսուցիչներից մեկն էր Արտյանի «Վերք Հայաստանի» վեպի գրության ստույգ տարեթիվը դեռևս ճշգրտված չէր. ընդունված էր 1840 թիվը՝ և ըստ այդմ էլ լրանում էր նրա գրության 100 տարին: Հենց այս առիթով էլ զբբում տեղ էր գտել «Արձան Արտյանին» բանաստեղծությունը:

Նույն հորեյանական տարեթիվն էլ դարձավ Հ. Երրազի գրքի վերնագրի շարժառիթը. «Երգ Հայաստանի» ի հակադրություն Արտյանի «Վերք Հայաստանի»-ի. «Երգի» ու «վերքի» հակադրություն: «Երգ Հայաստանին» Հ. Երրազի գրելի

⁴³ Չեսազայում կրթի. Պ. Չակոբյանը պարզեց, որ ես Արտյանն իր «Վերք Հայաստանի» գրել 1841 թ. բարեկենդանի օրերին վերսկզբի 9-ը... — Ա. Ս.:

արտակարգ ընդմեջափոխության վտանգի ապագային էր: Գրական մտածողության զարգացման առումով Կեօսեյի են Համալսարանական կրթության Հեսքերը: ձևական նորարարության ոչ մի ճիշդ ամեն նոր ձև արտահայտված նոր բովանդակություն կեօսեյի էր պարզապես, իսկ թե կար Հին ձևը զարմացի նոր բովանդակությամբ, ապա դա էլ գրեթե անհնար էր աշուղագրությանն անհամար անհամար անհամար ու ժողովրդական թմայանքով գրված այն բանաստեղծություններում, որոնք գեղարվեստական են «Աչքը Շիրազ» բաժնում: Այստեղ են ասել ճշմարտարվեստագետը պիտի կատարելագույն տիրապետի գրական արհեստի զարգացմանը: Սալաթ-Նոբալի, Ջիվանու, Շիրամի և մյուս Հայ աշուղների Հանդեպ պարտքի գիտակցությունը Հովհ. Շիրազն այս նշանակով էր արտահայտում, որից, սակայն, չհրաժարվեց մինչև իր ստեղծագործական կյանքի վերջը: Սակայն նույն Համալսարանն էլ նրա առջև բացեց Համալսարանն մեծ գրականության գոտիներ և նրա աշխարհայացքն ու բանաստեղծական մտածողությունը Հարստացրեց Մեծարևելյան ասած «Համալսարանիկ բարախներով»:

Եվ տարօրինակն այն էր, որ այդ ամենով Հանդերձ, մի վերին խորհրդով, բանում էր անգետ ու անստեղծակ երեսու: Բացվում էր այն ժամանակ, երբ գիտունիկները, խելացի ու զարգացած երեսու մարմանով, իրենք էին ցույց տալիս իրենց տգիտությունը: Այդ գեղարվեստն նրանք փրկություն էունենին Հովհ. Շիրազի ճաղրտմանակից:

Համալսարանական միջոցառումի և այնտեղ ստացած մասնագիտական բարձրագույն կրթության, իր գրողական վերելքի ճանապարհին նրա խաղացած բացառիկ դերի խոր բնութագրումով էլ Հովհ. Շիրազն արտահայտել է իր անսահման երախտագիտությունը գրելով երեք հրաշալի բանաստեղծություն՝ «Երբ ես էլ մտա Համալսարան» (1948), «Համալսարանին» (1961) և «Իմ Համալսարան» (1965)⁶⁴:

⁶⁴ Տե՛ս այդ բանաստեղծությունները «Քնար համալսարանի», Երևանի պետական համալսարանից նվիրված բանաստեղծությունների ժողովածու, Եր., 2008, էջ 58-59:

Եվ Հիմա տիեզերքն է մշտաճառ

Մայր Համալսարանն իմ լուսարբ,—

Լուսինն էլ ճաղատ մի դասախոս,

Եվ աստղերն ինձ Հետ ուսանողներ,—

գրում էր Հովհ. Շիրազը 1948 թվին:

1961 թ., երբ արդեն «բարձրագույն բանաստեղծ» էր և անցողիկ ամպի Համեմատությամբ ունեք «սար անուն», կրկին խոստովանում է, որ Համալսարանն է իր «Ջուր ծախողի կուժը» զարժրել մաքի սափոր և թրծել իր լույսով:

Ջուր ծախողի լացող կուժս, որ քեզ բերի մանուկ Հույսով,

Դու զարժրիր մաքի սափոր և թրծեցիր ինձ քո լույսով:

Բայց կույզի այնքան խմել քո Հանճարից սղբյուրներից,

Որ գտնեի անմահության գեղը անՀայտ ծաղկի բույրից:

Մասող, ծարավ ուղեղները կաղապարի իմաստությամբ,

Որ մարդը ճար անուն թողնի, երբ ինքն անցնի ինչպես մի ամպ:

Իսկ 1965 թ. գրած բանաստեղծության մեջ գեղարվեստական Հետաքրքիր ընդհանրացումով ընդգծել է Համալսարանի Համահայկական արժեքը և նրա դերը մեր ժողովրդի նորարար ճակատագրում:

Իմ Համալսարան, իմ Հայ ժողովուրդ,

Բախող կամ, դու միշտ Հանճարից բրուս...

I.

Ազգային հանճարները քիչ են, և այդ հզոր ու անչար քչերը Հինց իրենց ողջութիան ժամանակ ճանաչել, հասկացել ու գնահատել են և՛ նախորդ մեծ գազաթների, և՛ իրար: Այդպես Թուամնյանը՝ Նարեկացուն, Բուշակին, Սայաթ-Նովային, Արովյանին, Դուրյանին, Գառիկանյանին, Հովհաննիսյանին, Իսահայանին ու Տերյանին էր գնահատում, Իսահակյանը՝ Նարեկացուն, Թուամնյանին, Տերյանին, Չարենցին, Երբազին, Վարուժանը՝ Արովյանի, Ալիշանի, Գեղիկաշյանի, Դուրյանի Հես միասին իր մեծ ժամանակակիցին՝ Սրամանթոյին էր գնահատում, Չարենցը՝ Նարեկացուն, ԵնորՀալուսն, Սայաթ-Նովային, Արովյանին, Թուամնյանին, Սրամանթոյին, Մեծարենցին: Իսկ Հ. Երրազը: Վերհիշենք «Ովքե՞ր են Ձեր Հոգեկիցները» հարցին 1974 թ. տված նրա պատասխանը. «Արրում եմ Նարեկացուն և ողորում եմ, որ ինձ շատ ուշ բախտ զիճակվեց նրան կարգալ... Գտնում եմ, որ աշխարհի ամենամեծ բնաստեղծն է, թեև Նարեկացուն Հավասար պատում եմ Եքսպիլիին: Այստեղ չմոռանամ նաև երեքՀագարայա Հոմերոսին: Ի՛հարկն, դա չի նշանակում, թե իմ Հոգու բնակիչները չեն իմ գրական մակությունից մինչև օրս և՛ Թուամնյանը, և՛ Իսահակյանը, և՛ Սայաթ-Նովան, և՛ Դուրյանը, և՛ իր՝ առավել զուսպ հատընտիրով Հովհաննես Հովհաննիսյանը, Վարուժանն ու Թեքիսյանը (իրենց հատընտիրներով), Չարենցը և շատերը»⁶⁵(ընդգծ. — Ս. Մ.):

Այդ շատերի մեջ չպիտի մոռացվեն նաև Ֆիրդուսին ու Խայրամբ, Երզամին ու Խաղանին, Գուշակին ու Լերմոնտովը, Գյոթենն ու Հայնեն, Բայրոնն ու Եկլին, Սրամանթոն ու Եսեյինը և էլի շատերը, որոնց մասին Հանախ է խոսք բացվել մեր

⁶⁵ «Դուլիաննես Երբազի մասին» ժողովածու, էջ 97:

Հանդիպումներում ու գրույցներում: Այնպես որ, Հովհ. Երբազը հայ և համաշխարհային գրականության մեջ ունեցել է պաշտելի, համակրելի նախորդների բավական լայն աշխարհագրություն:

Վերը տեսանք, որ Ե. Չարենցը պատանի Հովհ. Երբազի մասին գգուշավորությամբ է արտահայտվել, և դա ունեն իր պատճառները: Չարենցի նման Հզորագույն երույթը, Հանճարեղ անհատականությունն անդամ չէր կարողանում դիմագրավել «անկար մարդուկներին» չար դավերին: Ի՛նչ պիտի աներ նրանց դեմ նոր-նոր գրական ասպարեղ մտած «սիրելի մանուկը»: Վերհիշենք Հովհ. Երբազին ասած նրա խոսքը. «Աիրելի՛ մանուկ, կարծում ես որ Հանճարը շարժվեց, աշխարհը կփրկե՞ս»:

Այսինքն՝ մեծահանճար Չարենցը «սիրելի մանուկի»՝ Հովհ. Երբազի մեջ արդեն տեսել էր շարժվող Հանճարի սաղմերը և խորապես հասկացել, որ նա «ոչ մեկի թրի տակով չի անցնելու» և անելու է այն, ինչի համար ծնվել է, բայց իր նման էլ երկնակրկվելու է չար, մազձուռ ու նախանձուտ գրչակներին հալածանքներին:

2.

Հովհ. Երբազի գրական ձիրքի մասին շատերն են արտահայտվել. վարժվորած վեհերոտները՝ կիսամայն ու վերապահությամբ, բացահայտ թշնամիները՝ կարուկ մեթոմոսով (քչերը նրանցից քաջություն ունեցան ակամա խոստովանելու բանաստեղծի ձիրքը՝ զուգահեռ Հորինելով իրենց արդարացնող մի սուտ, թե իր իրենք Երբազ բանաստեղծին գնահատում են, իսկ Երբազ մարդուն՝ ոչ): Իսկ ժողովուրդը և գրական ազնիվ մասովրականները բարձրձայն էին արտահայտվում Հովհ. Երբազ Հանճարի մասին:

Կարծիքները որոշակիացան բանաստեղծի մահից Հեսու: Բայց սա այն դեպքը չէր, երբ Հանդուցյալի մասին ասում են միայն լավը և լուռ մատի մասին: Վատը պարզապես չի եղել, մի քանի չարխոսողներն էլ կա՛մ նախանձել են նրա բա-

ցարիկ ու անհասանելի ժողովրդայնությանը, կամ, ինչպես վրաց բանաստեղծ, Հովհ. Երբագի երկերի թարգմանիչ Մորիս Փոցխիշվիլին է նշառ մեկնարանել, նրան չեն ճանաչել ու չեն հասկացել: Այլապես ո՞վ կրացատրի, թե ինչու՞ Քրիիլիսիեց հասկապես այդ բանաստեղծին հանդիպելու եկած վրացի բարեկամին Երևանում համապատասխան օղակների՝ գրողների միության, պետական հրատարակչության պաշտոնատար աշխարհը թեև քաջալերել են Երբագին թարգմանելու նրա նախածնունդները, բայց Գ. Ինժիրյանի ասած այդ «Համատար անմահները կամ հափտանական մահկանացուները», հյուրին հարգելով ու նրան ինչպիսիով, «բարեկամարար» **խորհուրդ են տվել Մ. Փոցխիշվիլուն տեսնելու Երբագին ու նպատակադրված ձախողել են նրանց առաջին հանդիպումը**⁴⁵: Սակայն Հովհ. Երբագին գեուես չտեսած, բայց «Բիրիլիականը» և քնարական մի շարք բանաստեղծություններ արդեն թարգմանած Փոցխիշվիլին հասկացել էր, որ գործ ունի իրական կենդանի հանճարի հետ և երկրորդ անգամ է երևան գալիս ու հանդիպում նրան:

Հակառակն էլ է եղել: Երբագն առաջին անգամ Քրիիլիսի է գնացել՝ սայաթուղիյան վարդապետին մասնակցելու, բայց նույն «Համատար անմահները» Քրիիլիսի հասած Երբագին չեն ընդգրկել Հայաստանի պատվիրակության ցուցակում: Իսկ դա նշանակում էր, որ, ի գարմանս վրացիների, նրանք Հովհ. Երբագին համարել են «անկոչ հյուր», չեն տվել պաշտոնական էլույթի իրավունք, հյուրանոցում տեղ, և վերափորված բանաստեղծը լուռ վերադարձել է Երևան:

Էլ հաշմանքն ինչպե՞ս է լինում...

Իմաստ չունի հիմա ճշտել, թե Հովհ. Երբագի փոխարեն ովքեր են եղել «արժանավոր» կոչնականները, բայց մի չի՞նձուրեկի գլխավորությամբ այդ «հայտնական մահկանացուների» արարքը, իրօք որ ազգային հրաշափառ խայտառակություն

էր: Հաջորդ տարին նոր դեկամբրեթյունն ուղղում է նախորդի կողմն օտարը, և Երբագն իր ներկայությունը առանձնահատուկ չուք է հազորդում վարդապետին. մասնակիցները՝ հայ, վրացի և այլազգի, բուռն ցնծությամբ են ընդունում հանճարեղ բանաստեղծի բովանդակային էլույթը հանճարեղ աշուղ-բանաստեղծի և հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամություն մասին:⁴⁷

Իսկական մեծերը միմյանց նշառ են հասկանում: Հովհ. Երբագի ուժն ու արժեքը հրաշալիորեն գիտակցող խորագրաց Համո Սահյանը նրա գրական 25-ամյակին ձոնել է մի հրաշալի բանաստեղծություն. նրա մի մասն էլ կարող է ամբողջական պատկերացում տալ Երբագ բանաստեղծի՝ համոտահայանական ընկալման ու գնահատման ճանին.

Գովերգելով լավն ու բարին,
 Կոխվ տալով չարերի հետ՝
 Քառորդ մի դար խոտում է նա
 Հայոց հին-հին դարերի հետ:
 Գալիս է նա բյուրեղացած
 Անունքներից ժողովրդյան
 Եվ չի փոխում խոտը իր արգար՝
 Ամենաթանկ քարերի հետ:

Երբագում էլ վարդեր չկան
 Նրա երգի վարդերի պես,
 Զարդեր չկան ուրիշ երգում
 Նրա երգի զարդերի պես,
 Լիացնում է սիրտը մարդու
 Հայրենական արտերի պես
 Եվ աշխարհի ծովն է մտնում
 Մեր Մխերոպյան տառերի հետ:

⁴⁵ Գետն պարզվեց, որ այդ դեկամբր զրոգներն արդիսով կանցել են, որ Փոցխիշվիլին ոչ թե Գովհ. Երբագի, այլ իրենց անդժապարտությունները բարգձանք վրացներն – Ս. Ա.:

⁴⁷ Տես Դավիթյան Երբագի մասին Գ. Դովթարանի վարած զրույցները Մորիս Փոցխիշվիլու հետ:

Էստո է երգել նա մեկ Համար
եվ իջրան է դեռ երգելու,
ժամանակի Հոգուների դեմ
երբեք զլուխ չի թեքելու:
Մեկքը Հենամ Արպազմին՝
Նայում է նա Հեռվից Հեռու,
Մերթ ծիծաղով ու մերթ լացով
Խտուսմ Բառիս սարերի Հեռու:

Իմ բանաստեղծ ընկերն է նա՝
ԼՄարզով բարի, Հոգով կայտառ,
Միտունու պես բազմաճմուռ,
Պատանու պես Հոգով կայտառ,
Համո Սահյանն սաայ. – Երբար,
Դու անտառ ես, ես՝ բարդի ծառ, –
Թող մի քիչ էլ էս ստակեմ
Քու շառաչուն ծառերի Հեռու:

Կարելի է սակ՝ բանաստեղծական այս զեղոնը նաև լրջմիտ ու
ծանրակշիռ խոսք է, մեծ բանաստեղծի արժևորում մի ուրիշ
մեծ բանաստեղծի կողմից, այն էլ այն ժամանակներում, երբ
Հովհ. Երրազը խորհրդային հուսակազմելու գրաքննադատների,
անգամ գրչակից որոշ ընկերների կողմից Համարն էր արժանա-
նում թիկունքից հարվածների: Բայց ահա վերադարձյալ բանա-
ստեղծությունից Հեստ էլ, նույն բանաստեղծ Համո Սահյանի
կարծիքով Հովհ. Երրազը մեր ժամանակների մեծ տանգովածն
էր, երևույթ, որն ուներ ինքնապաշտպանություն միայն իրեն
հատուկ կերպը: Ըստ Համո Սահյանի՝ ամենից հետաքրքիրը
Հովհ. Երրազի ինքնապաշտպանության կերպն էր, նրան յու-
րահատուկը՝ «Էս հասարակությունից, էս պետությունից ներ-
քուստ թելադրված ինքնապաշտպանության մեծն էր: Ինք-
նապաշտպանությանը գրոհի մե էր տալիս, իբր թե ինքն էլ
հարձակվում: Բնության թելադրանքով իր մեջ պաշտպանում
էր մեծ բանաստեղծին իր մարդկային հաճախ անթույլատրելի
թվացող արարքներով... Մենակ Երրազը իրավունք ուներ իրեն

այդպես պահելու: Միայն Հանճարը կարող էր իրեն այդպես
պահել»: Եվ որպես այդպիսին՝ վիշախոչում էր նրա գրեթե
ամենօրյա, սովորական դարձած արարքներ, որոնք ուրիշ-
ներին, բնականաբար, պիտի տարօրինակ թվային: «Աղբատին
կտար իր ունեցած դրամը, Հեստ լաց կլինեի՝ թե ինչու ինքն
ուներ, նա չուներ, ու կողբար նրա ճակատագրի Համար: Իրեն
կհախցնեի ընկերներից, որ իրեն չհասկանան, նրանց դիտմամբ
կվերագործի, կնեղացնեի... կարտսից: Իսկ երբ հասկանում էին,
ժպտում էր՝ « – էդ ազգեան ինչըդ էլ հասկացել է»:

«Հանճար է Երրազն» հարցին Համո Սահյանը հատակ պա-
տասխանել է. « – Բա ի՞նչ է, Երրազը Հանճար չէ, բա ի՞նչ է»:
Հեստ արտասանել է «Թազադրում» բանաստեղծությունը և
բանաստեղծավարի էլ արժևորել տեսեք ինչպես.

Լողիս արթնացավ Հարսիի բույրից,
Ինձ է դուրս կանչում գեիկյուռը նրա.
Չյունն էլ արևի ջահել Համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա...

« – Տե՛ս Հըլը, ի՞նչ մտածողություն է: Ո՛րը կասեր: Տերյանն
էլ մտածողությունը չէր հասել: Հեստ՝ պիտի զար էլ մտա-
ծողությունը: Ջահել Համբույր: Ուրախ լաց... Չյունն ու դաշ-
տը չեն համբույրվողները: Ջահել տղան ջահել աղջկան համ-
բույրել է, հանելի է եղել, բայց Հեստ լաց է եղել էլ աղջկեը:
Ճիշտ այդպես. Երրազի բերանից բառը թռչում էր, ինչպես
թռչունն էլ թռչում իր բնից: Ինքն էլ սա գիտեր: Պատասխանը
նույն վայրկյանին էր տալիս: Մի օր ինձ մի բան սաայ, ես
պատասխանը երկրորդ օրը ավի: Ժպտաց՝ էդ բանը որ երեկ
սանիլ՝ դու էլ Հանճարի կլինեիր»⁴⁸ (ընդգծ. – Ս. Մ.):

Ուրեմն՝ իրոք իր Հանճար լինելը Հովհ. Երրազն ինքն էլ գի-
տակցում էր և արժևորում էր այնպես, որ իր մեջ մարդն ու Հան-

⁴⁸ Նույն գրքում «Երրազին հիշելով կարեկցում ենք մեզ» հարցազրույցը Բանո Սահյանի
նկատ. էջ 50-51:

ճարգ բանաստեղծը իրար չհակասեն և Հավասարակշռության համար մարդուն ենթարկում բանաստեղծին:

Հակառակը գրեթե չէր լինում:

Այսպես էր նա դառնում միաձույլ՝ մարդ ու հանճար միասին, ընդ որում՝ մարդն էր հանճարի թի՛ կամայականութունների սպասավորը և թի՛ հանճարի մտահղացումներն իրականացնողը:

Երբվանի՞ց էր այս գիտակցությունն արթնացել ու ամրակայվել Հ. Երբացի մեջ: Անշուշտ ո՛չ գրական առաջին քայլերից, երբ դեռ չկար այդ ինքնագիտակցությունն ու ինքնագիտահոսությունը, բայց Հենց դրանցով է սկսվում հանճարի ուղին և գիտակցվում է գրական ճանապարհի որոշակի փուլում, որը ղգվար է ուղղակիորեն սահմանադրանքի ու մասնանշելի: Բայց այդ գիտակցությունը, հավանաբար, այն ժամանակներից է ամրակայվել, երբ արդարացիորեն զնահատվել է և միևնույն ժամանակ էլ խիստ անարդար քարկոծվել:

Իսկ ինչո՞ւ: Այս «ինչո՞ւ» առնվազն մի պատասխան պիտի ունենար. ուրեմն ինքը սովորական բանաստեղծ չէ, այլ ...

Հովհ. Երբացի հանճարի ուղին սկսվում է ծննդավայր Գյումրուց, շարունակվում Երևանով և ընդգրկում է Հայոց օղջ պատմական հիշողությունը՝ անցյալի, ներկայի ու գալիքի խաչահանումներով ու նրանց շուրջ մտորումներով:

2.

Գրողը որոշակի միջավայրի, ժամանակի ու հանգամանքների ծնունդ է, մասնավորապես բանաստեղծի ստեղծագործական կյանքում ծննդավայրին է պատկանում վճռական գերերից մեկը: Որքան հին, նույնքան էլ նոր այն ճշմարտությունը, թե գրողն սկզբը է առնում իր ծննդավայրից և իր ծննդավայրն է բերում գրականության, վերաբերում է նաև գյումրեցի Հ. Երբացին: Իրոք իսկական մեծերի ճանապարհն է դա. նրանք նախապես Հայաստան են դառնում իրենց ծննդավայրում ու ծննդավայրով և ապա Հզոր արժեատույժ իրենք են ծննդավայրը ներկայացնում մեծ աշխարհին. Արոյանն՝ իր Բանասերտով, Պատյանն իր Աշտարակով, Թումանյանը, Զորյանը, Հր. Մա-

թևասյանը՝ իրենց Լոռիով, Զիվանին, Տերյանը՝ իրենց Զափարթով, Չարենցն՝ իր Կարսով, Բակունցն ու Հ. Սահյանը՝ իրենց Զանգեզուրով, Ավ. Իսահակյանն ու Հ. Երբացը՝ իրենց Երբակով՝ գյումրեցի ու կենտրոն Գյումրիով...

Թերևս այս իրողությունն է զլխավոր պատճառը, որ Հարազատ ծննդավայրի նկատմամբ սերն ու զգացմունքը տարբեր գրողների ստեղծագործություններում գրեթե բացակասում է աշխարհընկալման որոշակի ընդհանրություններով, բայց և պատկերավոր մտածողության անհատականության ու ինքնուրույն ոճի որոշակի տարբերություններով:

Գյումրին աշխարհին տվել է գրականության ու արվեստի տարբեր բնագավառների բազմաթիվ մեծություններ: Վկա՝ այսօրվա Գյումրու Աբրահամաց փողոցը, ուր Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Երբացի, ՄՀեր Մկրտչյանի և Առլամյան բույրերի առև-թանգարաններն են, քաղաքի պատմաշակութային հուշարձաններն ու մյուս նշանավոր գյումրեցիների աեմեն հիշատակները:

Քիչ վերջ տեսանք Գյումրիում բանաստեղծի ծննդյան, նրա ղգվարին մանկության ու որրությունից ղգվազները, նրա գրական առաջին քայլերն ու հասունացման ընթացքը, «Գարնանատու» ժողովածուի հրատարակվելն ու բուսն ընդունելությունը և ապա Երևանի պետական Համալսարանում սուսմանությունը:

Այժմ պիտի փորձենք գիտարկել Հովհ. Երբացի-Գյումրի Հարաբերությունը կենտրոնանալով Հեռույալ Հիմնախնդիրների վրա.

ա) Ի՞նչ է տվել Գյումրին Հովհ. Երբացի բանաստեղծին և բ) ինչպե՞ս է Հովհ. Երբացը բանաստեղծականացրել Գյումրին:

Արժեատաղետի ձևավորման վրա միջավայրի վճռական ազդեցությունն օրինակ - հիմնավորումներ որքան ուզեք: Հիպոլիտ Թենի ասելով՝ Ծլանդրիայում մարդու աչքը վաղ մանկությունից ստանում է առանձնահատուկ գաստիարակություն, վարժվում է արժեստի գեղեցիկին: Իր՝ որպես բանաստեղծի

տեղծի, ձևավորման մեջ Վարուժանը վճռական էր Համարում ձևնդավայր Բրզնիբի, Հայրենի բնության, Այլս գեան գեղու-տեսիլի արհրի, Պոլսի ու Բուսֆորի, ապա և Բուսպոլսում՝ Վենե-տիկի, և Յլանդը — Բիզպոլսում՝ Գենտի միջավայրի ազդեցու-թյունը: Այդտեղից է Վարուժանի գեղարվեստական մտածու-թյունը Համազրահական բնույթը և բանաստեղծական պատկեր-ների գեղանկարչական հագեցվածությունը: «Հոն կտրեմ ըը-կարչությունը՝ առանց վրձին զործածել զբանալու: Կզգամ, թե Վենետիկի կզուռնազեղե հողիս: Հոն առանց պատկերի անկար-ելիլ պիտի ըլլար ինձի խորհիլն իսկ: Արվեստս փրկված է»⁴⁹, — գրել է նա նամակներեց մեկում: Իսկ Ֆլամանդական գեղա-նկարչության գլուխգործոցները դիտելով՝ խոստովանել է. «Երկու միջավայր ազգած են վրաս — Վենետիկը յուր Թիցիա-նով և Յլանդը իր Վան Տեղներով զորացուցին քնարս: Առաջ-ինին զույնները և վերջնույն բարբարոս իրապաշտությունը հորինած են վրձինս, որ սնափառությունն ունիմ թաթախած ըլլալու միմիայն Հայրենի Հողին որդան կարմիրն մե՛ք և ծովա-ծավալ արշանը»⁵⁰: Գյուժրեցի Հ. Շիրազը, սակայն, այս իմաս-տով չատ էլ նման չէ բանաստեղծության մե՛ք իր ազգակիցներն ու հողահայրեր Իսահակյանին ու Վարուժանին, որովհետև հանդամանքների բերումով նա չունեցավ իր աշխարհազորոս մեծ նախորդների լայն աշխարհատեսությունն ու ճամփոր-դելու հնարավորությունները: Բանաստեղծական ճակատա-գրով նա այնչի չատ նման էր Հովհ. Թումանյանին, որն ընդա-մենը Հայաստանը, Լոռին, Թիֆլիսը, Պոլսը սեսավ, վերջում՝ Մոսկվան ու այլևս ոչինչ չտեսավ, և մի քանի անգամ միայն դուրս եկավ Թիֆլիսից:

Հովհ. Շիրազն էլ անձամբ գիտեր Գյուժրին, Երևանը, Հա-յաստանը և 1954—55 թթ. եղել էր Մոսկվայում Մ. Գորկու ան-վան Համաշխարհային զրականության ինստիտուտի դասըն-թացներում սովորելու նպատակով, և հետո Թիֆլիսում մաս-նակցել էր սայաթևոյան Վարդատունին:

⁴⁹ Գ. Վարուժան, Լանկանի, Եր. 1965, էջ 158.

⁵⁰ Եսլյն տեղում, էջ 198.

Այս է եղել Հովհ. Շիրազի «աշխարհատեսությունը»:

Նախորդ էջերում մասամբ պատասխանել ենք «Ի՞նչ է ավել Գյուժրին Հ. Շիրազին» Հարցին: Ավելացնենք, որ ծնվելով ար-հեստների ու արվեստների, երգի ու բանաստեղծութուն սիրա-հարների քաղաքում, անցնելով որբություն դառնությունների միջով՝ նա վաղ մանկությունից աչքն ու ականջը վարժեցրել էր խոսքաչին ու սրամիտ մարդկանց զուռնազեղ միջավայրին, զրևեարել էր իր բնական տարրեր ձիրքերը՝ ուժեր փորձելով տարատեսակ արհեստների, ապա և քանդակագործության ու նկարչության մեջ: Ասկայն Հ. Շիրազը բանաստեղծ էր ծնվել ու որպես այդպիսին հենց Գյուժրիում էր մկրտվել:

Վաղ մանկության տարիների նրա առաջին բանաստեղ-ծական թոթովանքները լսել ու քաջալերել են Աստղիկ մայ-րիկն ու Թադևոս Հայրիկը, որոնց հանդեպ առասպելական սեր ուներ բանաստեղծը. Գոհար և Մանիկ քույրերը, որբանոցային խուժանացած ընկերները, չուկախի առևտրականներն ու ար-հեստավորները, Գյուժրիում կենտրոնացած մտավորականները, դժվար ապրող վշտահար, բայց պարզ ու սրտաբաց մարդիկ:

Ձևավորվող բանաստեղծի աչքի առջև էր գրական ուսուցչի պաշտելի Վարդան Ավ. Իսահակյանի օրինակը, որ 1926 թ. առաջին անգամ վերագրեցել էր արտասահմանից ու 30-ին նորից մեկնել: Այդ օրերին գրեթե մանուկ Օնիկը նրան միայն հեռվից էր տեսել, զրուցելու առիթ էր հնարավորություն չէր ունեցել: Փոխարենը հաճախ էր հանդիպել զվարճախոս Պոլոզ Մուկուչին ու Երկեն Ալեքին, խելոած ձերմակ Համոյին (Օր է-ղեր է, որ էղեր է՝ ձերմակ Համոն խելուեր էլ)⁵¹, անձամբ լսել նրանց արամտությունները, ամենուր ունկնդրել Սայաթ-Նովա-յի, Ջիվանու, Շերամի, այլերանդրապոլյան աշուղական դպրո-ցի մյուս ներկայացուցիչների սրտահույզ երգերը, թափառիկ աշուղների իրենց սեփական և այլ աշուղների երգերի կատա-րումները:

⁵¹ Խորեղայանցան օրերից միանգամից լրիվ ունկնդրվելու հետևանքով — Ս. Ա.:

Այս էր այն հոգեւոր միջնորդան ու միջավայրը, որտեղ ձեւ-
փոփոխում էր Շիրազ բանաստեղծը: Գառաճական չէր, որ նա
աշուղաներ և առհասարակ աշուղական արվեստի նկատմամբ
գրեւորեց ակնհայտ սեր, ինքն էլ հետագայում կիրառեց
աշուղական բանաստեղծության տեսակներն ու շափերը, ան-
պակ 1940 թ. լույս տեսած «Երգ Հայաստանի» ժողովածուի մի
ընդարձակ բաժին վերնագրել էր «Աչքը Շիրազ», իսկ Երկերի
3-րդ հատորում էլ «Արթը զուսանկանը» բաժինը: Հիշեցրե՞ք, որ
Ավ. Իսահակյանն էլ իր «Երգեր ու վերքեր» անդամների գրքում
ունեն «Ինչպե՞րդ յուս շաղի խաղերից» բաժինը, իսկ Չարենցը
նույն շափերով էր գրել «Տաղարան» շաբբը, որը եզրափակում
էր հանճարեղ «Ես իմ անուշ Հայաստանին»:

Հետագայում՝ իր կյանքի մայրամուտին՝ 1968 թ. Գուրգեն
Մահարին պիտի խոստովաներ, թե սկսնակի նախակիրթարան
չանցած Հովհ. Շիրազը «Հենց սկզբից իր մատը դրել էր
հշմարիտ ժողովրդական քնարերգության զարկերակին»:

Մեծ ծովի՝ օվկիանոսի նավ էր Հովհ. Շիրազը բանաստեղ-
ծության մեջ՝ իր խորհուրդները նետած Հայաստանի «անհող
քարերի վրա»: Գարույք Անակի դիպուկ բնորոշմամբ՝ «անհա-
վատայի հաջողությունների հասած» այդ բանաստեղծի ողնա-
շարի վրա բարձրացավ հեռաբնեցյան չըջանի մեր ողջ գրա-
կանությունը:

Լոկ «մտածումի նավով» աշխարհը շրջելով՝ Հովհ. Շիրազը
միշտ վերագտնում էր նավահանգիստ իր «անուշ ծննդա-
վայր» հարազատ Գյումրի, որից ստացել էր ստեղծագործական
առաջին ազդակներն ու ներշնչանքները, սիրո առաջին զոզն
ու սարսուռները: Նրա սուր տեսողությունն ա՛յս աշխարհում
էր Հայաստանի իր մակդիրների, համեմատությունների ու մեծա-
ֆոր-փոխաբերությունների, հակադրությունների ու նը-
բարանությունների համակարգը կամ նրանց զգայի մասը:

Բայց ա՛հա քնարական ու նպիկական հզոր ու արգասաբեր
միջբերով օտոված, մեծ ապագա խոստացող բանաստեղծի առ-
ջև ծառայել էր ամենից իմար խնդիրը. նույն բնական ու
մարդկային միջավայրը, նույն Արազածն ու Մանթաշը, նույն

Արփաշայն ու Գյումրու խոսքաշեն մարդիկ, մեր ժողովրդին
հոգու խորք ավոյղ նույն ձորերն ու մաքի աստեղային թախիբ
ավոյղ բարձրաբերձ լեռները, նույն «ցորենի ծիրան արտերը»,
նույն երկինքն ու աստղերը մինչ այդ եղել էին Ավ. Իսահակ-
յանի ներշնչարանը: Իսկ նա, Շիրազի համոզմամբ, Շիրակի
ծնունդ լինելով, իրական բացարձակ մեծություն էր՝ մի շաբբ
հատկանշներով, աշխարհի քիչ մեծություններից մեկը, որի
հետ ձեւավորվել էր առանձնակի հոգեհարազատություն: Իր
հիս ատարագած «Ինչու՞ քի նա առանձնանում մեծերը» Հարցին
Հովհ. Շիրազը պատասխանել է.

«— Մեծերը, որ քիչ են, անկեղծ են: Երևի, կուզեիր ասե՞ծ,
թե ինչ է գրական անկեղծությունը: Ինչ գրողն զգում է,
արտահայտվում է թեկուզ ի վնաս իրեն: Այսինքն՝ սիրտը լիզվի
վրա է: Միտքն ասում է՝ չասես, սիրտն ասում է՝ կասե՛մ, և
մոնչում է: Եթե ո՞չ բանաստեղծ չի կարող լինել: Մինչև ճշմա-
րիտ բանաստեղծը որսի վրա հարձակվող վազրի նման ակն-
թարթի մեջ հարություններ է շաղ առլիս: Վայրկյանը կորցրե՞ց՝
որսը կթռչի: Այդպիսի քնարական վազրեր էին նաև Իսա-
հակյանը և իր վաղեմի ուսուցիչներից Քուչակն ու Հայենն,
որոնց զգացմունքը, անկեղծությունը (սիրտը) այնպես են շա-
ղարկված մաքի Հետ, ինչպես մարդը, իր մարմինը և արյունը»²²
(ընդգծ. — Ս. Մ.):

Աս, իհարկե, չիրազյան «արտացոլման սեսություն», ար-
վեստի և իրականության, բանաստեղծի և բանաստեղծություն
զեղազրտական հարաբերության բնորոշման մի կարևոր մասն
է, որ դրսևորվել է հենց Իսահակյանի առնչությունում: Բայց
ա՛հա Իսահակյանը նրա համար կարևորվել էր նաև հենց
ծննդավայր Շիրակի հանդեպ գրեւորած վերաբերմունքով, որը
նույնպես օրինակելի էր:

Հանգամանքների բերումով Ավ. Իսահակյանը տասնյակ
տարիներ ապրել էր արտասահմանում հայրենիքից ու ծննդա-
վայր Շիրակից հեռու: Բայց նա մարմնով էր դրսում ապրել,

²² Հ. Շիրազ, Մի փետր իմ արթիկ կամօք, էջ 45:

իսկ հոգով միշտ եղել էր Հայրենիքի ու մանավանդ Երրակի Հետ: Լճով, Երրազը շատ խորն էր գգացել այս երևույթի էությունը: «Բնին նա շատ երկար տարիներ եղավ Հայրենիքից Հեռու, օտարություն մեջ, բայց օտար պատկերները չտեսիլվեցին նրա հոգում և մանավանդ երգերում: Չպոկվեց նա Արազածից:

Այնպես, ինչպես Ախուրանը, որի ակունքը Երրակն է, Երրակի լիւնները, Արազածն ու Մանթաշը, թեև իր ջրերը Հեռավոր ծովերն են մտնում, բայց ինքն ու իր մեծ քնարը ամբողջովին բաղադրված են Երրակի հողի կախարդական խորհրդով ... Եվ ինքը Ավոն Հեռավոր, օտար Գրեղզեհունւմ էր, որ գրեց «Մանկալ ես, քեզարած ես», Համբուրգում «Այազյազը աստղերի մեջ», Վիննայում Հառաչեց Բինգյոլի Համար...»: Այստեղից էլ բխում է բնորոշ եզրակացությունը. «Օտարության մեջ Հայրենիքի Հետ լինելը ավելի մեծ քաջություն է, քան Հայրենիքում Հայրենիքի Հետ լինելը»⁵⁷ (ընդգծ. - Մ. Մ.):

Գյուժրու նկատմամբ է. Երրազն ինքն էլ ուներ երախտագեղա զավակի առանձնահատուկ վերաբերմունք: Չգրեցա ինչու, Հասուն տարիքում էլ իմաստուն Լճով, Երրազը մտեկան միամտությունը Համոզված էր, թե Գյուժրուց աստղերն ավելի խոշոր են երևում: Մեր գրույցներից մեկի ժամանակ բանաստեղծն անկեղծորեն ասաց.

«Մի որ Իսահակյանին Հարցրի.

- Վարպետ, ինչի՞ց է որ Գյուժրուց երկիրն նայելիս ասաղքեն ավելի խոշոր կերևան:

Իսկ Վարպետը բազմանշանակ պատասխանել էր.

- Որովհետև Գյուժրին երկրերն ավելի մոտ է»:

Սա սովորական մարդկանց հարցուպատասխան չէ, անշուշտ: Հենց այդ անսովոր ու յուրահատուկ մտածողությունը, հիանալու, ապշելու, դարմանալու, դառնանալու, բռնկվելու, հրեմվելու կարողությունն է նրանց բանաստեղծ դարձրել, իսկ այդ մտածողության շիրազյան տեսակն ու որակը դարձյալ գյուժրեական ծագում ունի:

⁵⁷ Լույս տեսում, էջ 46:

Իր զեղարվեստական մեծ աշխարհն ու գրական դպրոցն այդպես էր ժամանակին ստեղծել Ավ. Իսահակյանը: Նրանից տարբերվելու, ինքնահաստատման զգալուությունները և նույն նյութի պարտադրած նմանությունները Հաղթահարելու Համար առանձնահատուկ ուժ էր պետք, ինչպես Երկրի ձգողականությունից տանող գերհզոր Հրթիրն է վիթխարի ուժով պոկվում և տիեզերանավը ինքնուրույն թռիչքի դուրս բերում ուղեծիրը: Նույն միջավայրն ու երևույթներն այլ Հայացքով ու ընկալումով, ուրիշ մտացումով դիտելու, բնական ու կենսական Համայնման երևույթները ինքնատիպ մտածողությամբ ու պատկերավորությամբ ներկայացնելու, Իսահակյանից և մյուս բանաստեղծներից տարբերվելու այդպիսի վիթխարի ներուժով էր օժտված Լճով, Երրազը:

Այնուամենայնիվ, Իսահակյանը իսկական ժողովրդական բանաստեղծի իղեայ էր Երրազի Համար, ուստի միանգամայն բնական էր թե՛ նրան նմանվելու և թե՛ նրանից տարբերվելու ձգտումը: Միմյանց Հեռվից ու վաղուց ճանաչած բանաստեղծներն ունեցել են հոգեկան անխզելի ընդհանրություններ: Արասահմանում աղբյուր Իսահակյանը անհուն հրեմվածքով է ընդունել Լճով, Երրազի բանաստեղծական Հայտնությունը, իսկ Երրազը նրա ստեղծագործությամբ է հաղորդակցվել, ինչպես Խորենացին՝ իր մեկնեսա Մահակ Բազրատունուն: «Բեղ նանաչելուց առաջ հոգիդ ճանաչեցի», - գրել է Պատմահայրը: Ահա և Լճով, Երրազի խոստովանությունը Իսահակյանի Հետ իր առաջին Հանդիպման մասին. «- ...ինչպես Մեծն Խորենացին է ասում իշխան Բազրատունուն՝ քեզ չտեսած քեզ տեսա: 1935 թվականի ապրիլին, երբ լույս տեսան իմ «Փարնանամուտան» ու «Միամանթու և Խաջկարի» պոեմը, Վարպետը Փարիզից Այազանին ու Նորենցին գրել է. «Հողը տալիս է... Այս պատանուն կարգալով միտքս փոխեցի: Ես կարծում էի՝ մի կաղնի եմ, որն արմատներով ծծել էր Երրակի ժողովրդական բառ ու բանը, բանաստեղծական էությունը, բայց ահա նորն է պալիս: Այստեղ՝ Փարիզում, և Հատկապես Սուրբ Ղազարի մի-

արանության մեջ լեծանուններ (ըզնըզներ) են պատմում այդ տղայի մասին»⁵⁴ (ընդգծ. — Ս. Մ.):

Այսպես գրել էր Իսահակյանն էլ՝ առանց Հ. Երրազին տեսած լինելու: Երևանում այդ երկու մեծ բանաստեղծներին՝ այս զեպոսում ավագի և կրտսերի, առաջին Հանդիպումը Հատկանշական է նրանով, որ Երրազը, Իսահակյանին առավածային բանաստեղծ, հիֆերային երեսույթ Համարելով, չի պատկերացրել, թե նա էլ կարող է իր նման մարդ լինել:

«— Նամակեց մեկ տարի Հետո Իսահակյանը վերադարձավ մայր Հայրենիք: Դեռևս ինձ նման պատանի բանաստեղծներ Սուրեն Թարյանն ու Մեսրոպ Մերուսյանը և երկու աղջիկներ քանի՜ որ իրար վրա առում էին՝ «Իսահակյանն ուզում է քեզ տեսնել»: Ես էլ ուզում էի տեսնել Մեծ Վարպետին, բայց չգիտեմ ինչու, մզգուսմ էի. շատ ամոթխած էի: Ի վերջո, մի օր բարձրացանք «Երևան» չլուրստեղ: Ներս մտնելն ու Իսահակյանին՝ ինձ գրելի-Համբուրելը մեկ եղավ: Տիկին Սոֆիկը վրա բերեց չլիին՝ Երրազն է: Վարպետը ինձ բաց չէր թողնում: Կրճքիս զանգում սիրտս լեզվակի պես զարկեց: Ես ցնորքի մեջ ընկա. փոխանակ Համբուրյին Համարելով պատասխանին, մի բան էի մտածում ուրեմն սա էլ մարդ է ... Մինչդեռ ինձ թվացել էր, թե բանաստեղծները հիֆերային էակներ են, գրեթե անշոշափելի, մանավանդ մեծը:

Ինձ Հեռավոր ասող էր թվացել, մի Հեռավոր երևակի պես Հիմա էլ մնում է իմ Հոգուս»⁵⁵ (ընդգծ. — Ս. Մ.):

Պատակցություն եղել է Իսահակյանի՝ Երրազի վրա թողած ազդեցության մասին: Երրազն ինքն էլ չի միտել դա: «Ասում են՝ Չեք պատասնելությունը մտած է եղել Իսահակյանի պարտեզը» Շարքին Հովհ. Երրազը պատասխանել է.

«— Այո՛, ամեն մի առվակ, ուզե-չուզե կմտնի ու կանցնի որևէ անտառով, դուրս գալով այնտեղից՝ թեկուզ մի-երկու

տերեխ բույր կրեր իր Հետ, մինչև գետակվի, ինքնածովա-նա»⁵⁶:

Դեռ «չիքնածովացած» Երրազի ստեղծագործություններում իսկապես նկատելի են Իսահակյանի բանաստեղծական աշխարհից «բույրեր», գույներ ու ներշնչումներ: Ուրիշները դրանք ազդեցություն կհամարեն: Մեր խորին Համոզմամբ՝ դրանք ավելի գրական ազդեցության գրականում են, քան ազդեցության, քանի որ ինչքան էլ անհատապես տարբեր լինեն ծննդավայրի Հանդեպ սիրո և կարտաի գրականումները, այնուամենայնիվ նրանց մեջ Հարազատ և ընդհանուր շատ բան կա, որ մղում է գրեթե Համանման մտածողության:

Հաճախ է պատահել, որ բանաստեղծները, նույնիսկ իրենց պատանություն ու երիտասարդության տարիներին, արտահայտել են իրենց Հնարավոր մահվան ու թաղման մասին: Եթե նույնիսկ Դուրյանի, Մեծարենցի, Գ. Առաքի պարագայում դա բնական Համարենք մտապառ մահվան կանխազգացողության նկատառումով, ապա տասնիննամյա Չարենցի 1916 թ. գրած «Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ, Ինձ էլ կհանձնեն արգավանդ Հողին» բանաստեղծությունը չենք կարող կապել այդպիսի կանխազգացողության Հետ: Իսահակյանն ու Երրազն էլ բացառություն են: Չենք պնդում, թե անպայման, բայց մեծ Կրքարի՝ Տարսա Նեշենկոյի օրինակով երկուսն էլ մահից Հետո իրենց սիրելի Հայրենիքում թաղվելու բուռն փափագ են արտահայտել:

Երբ որ մեռնիմ՝ ինձ կթողեք
Այսպայի լանջերում,
Որ Մանթաշից Հովերը գան,
Վրաս Հեան ու երթան,

Գերեզմանիս չորս դին փովին
Ցորեն արուկեր ու ցուլան,
Եվ ուրիներ՝ մաղիր արձակ,
Վրաս ընկնին, անուշ լան,—

⁵⁴ Լույճ տեղում, էջ 46-47.

⁵⁵ Լույճ տեղում, էջ 47:

⁵⁶ Լույճ տեղում, էջ 20:

գրել է պատանի Իսահակյանը 1898 թ. նոյեմբերի 28-ին Օդեսայում: Մենզավայր Գյուլարու և Երբակի Հանդեպ նույն արդիական սերն ու նվիրվածությամբ ողջ կյանքով արտա-հայտելիս Հ. Երբազն էլ, անշուշտ նույն իսահակյանական ներշնչումներով, 1942 թ. գրել է իր Հնետեյալ բանաստեղծությունը, որը և՛ նման է Իսահակյանին, և՛ տարբեր է նրանից.

Երբ որ մեռնեմ, տաքեք թաղեք
Իմ Երբակի դաշտերում,
Որ մերս զա ու վրես լա՛
Որդու կարտուս աշխրում:
Մորս սրցուկն, ա՛ր, թե ընկնի
Երմիս քարին, ինչպես ցոլ,
Երմիս քարը լուռ կծաղկի.
Կիանաչի ինչպես Հոգ:
Երբ որ մեռնեմ, տաքեք թաղեք
Իմ Երբակի դաշտերում,
Որ մերս զա ու վրես լա՛
Միակ լաղդա աշխարհում⁵⁷:

Հովհ. Երբազի բանաստեղծությունը երկու մտացույժների և բնիկումների խառնուրդ է. որոշակիորեն զգալի է իսահակյանական բանաստեղծական աշխարհի բույրն ու շունչը՝ ազդեցությունը, որից էլ նկատում է շիրազյան ինքնուրույնությունը: Այս բանաստեղծությունը, եթե վերցնենք առանձին, երկու Հեղինակների համար էլ բնորոշ է, բայց ավելի շատ Իսահակյանին, քան Երբազին: Թերևս Հովհ. Երբազն ինքն էլ զգացել է սա և բանաստեղծությունը Հնտապայում՝ ո՛չ վերամշակել է, ո՛չ էլ վերատպել որևէ ժողովածուում, նույնիսկ «Հուշարձան մայրիկիս» բանաստեղծություններով Հյուսիսում պոեմում չի գրել: Նույն ճակատագրին է արժանացել նաև առավել շիրազյան բույրով Հնետեյալ բանաստեղծությունը, որ տեսնում ենք միայն «Երգերի գրքում».

⁵⁷ Գ. Երբազ, Երգերի գիրք, եր., 1942, էջ 53:

Հայրենի Հողի կարտուս իմ սրտում
Չեմ ուզում մարի անտառան ամա,
Ինձ թաղեք զբուխու ուկի Երբակում,
Թաղեք սրտերի ճամփերի վրա,
Որ Հնձվորները, երբ որ Հողեմ գան,
Նստան իմ քարին ու Հանգստանան...⁵⁸:

Շատ ավելի խորն են Երբազ – Իսահակյան գրական առնչությունները, քան պարզ գրական ազդեցությունն է: Դա կարող է բացատրվել ընդհանուր հատկանիշների այն ամբողջ համակարգով, որը Ավ. Իսահակյանին էլ, Հովհ. Երբազին էլ, ներքանց նախորդներին ու Հաջորդներին էլ, այսինքն Խորենացուց սկսած մինչև այսօրվա Հեղինակները դարձնում է գրական ազդակիցներ՝ հայ գրողներ, և միավորում հայ գրականության միասնական ընտանիքում: Ճիշտ այդպես էլ՝ այդ միավորող հատկանիշների շնորհիվ են Պուշկինը, Լերմոնտովը, Տոլստոյը, Գոստոսևիկն, Եսենինը՝ աուս գրողներ և ուսուսական գրականության մեջ, Ենքալիրը, Եկկին, Բայրոնը՝ անգլիացի գրողներ և անգլիական գրականության մեջ, Գյոթենն, Հայնեն՝ գերմանացի գրողներ և գերմանական գրականության մեջ, Ֆիրզուսին, Հաֆեզը, Ջայալեզզին Ռուսին, Օմար Խայյամը, Նիզամին, Աֆղեյեզզին ևնազանին՝ պարսիկ գրողներ և պարսիական գրականության մեջ⁵⁹:

Ավ. Իսահակյանի Հայրենիք վերագառնալուց Հնտո Հովհ. Երբազը հայտնվում է նրա ուշագրություն կենտրոնում՝ պաշտպանություն ու Հարազատի խնամք զստեղծով նրա հայրական

⁵⁸ Գ. Երբազ, Երգերի գիրք, էջ 51:

⁵⁹ Որքան էլ ազդեցվել ուս-իցը դար հետո Անգլոլոնդն խաղաճուն անվանախոսելով դարձնեն խաղաճ Երկամը, Արևելքի մյուս մեծ բանաստեղծներ Լեզամոն, Ֆիզոլուն, մալտոնյան արտերենի տառերով մայրապապամայրուսիրոս) «Որը ի մտ Յեվանյորի Նեմին» պոեմի եռիմակ մեր խալսակ Քեթուդին Դեմիկ Քթթուրու վերանվանեն, մեր ԿՐԱխուս Գանձանեցի պատմիկին էլ իրենցը համարեն, միևնույն է նրանց արտախաղ արդրեանցի լեն դառնա, նրանց ստեղծագործությունն էլ արդրեանախան մշտուս: Լեզամոն հենց նրանց մասին է գրել. «Տեք Աստված, նրք շունն աղեն ստեղծել էի, մի՛թե ուս քիլ էր, որ բուրբն էլ ստեղծեցիք...»:

Հայացքի ներքո: Նրանց միջև շարունակվում է մի հավատարիմ բարեկամություն, որը սասանել չի հաջողվում նույնիսկ պետականորեն գործող նպատակադիր շարամիտներին:

Անանիեի Հովհ. Շիրազի հասցեագրած իր պատասխան նամակում Վարպետը գրել է. «Նախաձեռնեմ եմ քեզ, որ Թափառում ես իմ սիրելի Արփաշայի տներում, Ալադյաղի Հովհաններում, Եիրակի երկնքի տակ, նախանձում եմ նաև, որ սիրո վիշտ ունես.— դրանից ավելի շատ բան չպիտի ունենա իսկական բանաստեղծը — սեր, վիշտ, բնություն, Հայրենիք, և գաղափարական մտաշխարհ: Այդ բոլորը դու ունես, և վրան էլ ավելացրու մատաղ հասակ, նոր բխող աղբյուր.— ուրեմն՝ ստեղծագործի՛ր, սավառնի՛ր, թռի՛ր»⁶⁶ (ընդգծ.— Ս. Մ.):

Սա իսկական քնարերգու Վարպետի և անկեղծ ու ճշմարիտ ուսուցչի քաջալերիչ խոսք չէր միայն, այլ գրական դաս, որի պատվիրանները հավատարմորեն կատարեց մյուս մեծ քնարերգուն՝ Հովհ. Շիրազը: Նա խորապես գիտակցում էր Իսահակյանի ստեղծագործությունից արժեքը և գա արտահայտում էր ոչ միայն բանավոր խոսքով.

Այլ Իսահակյանին սրբանց

Դու Արագանն ես՝ իմաստուն ու բլի,

Փառքդ աստեղիքի մեջ զլիթիդ արեգակ,

ես էլ Եիրակի դաշտն եմ՝ նորածի՛

Ձմրուխտով փռված քո ոտքերի տակ:

Դու Հավերժության բարբառն ես Հյուսեի,

Հավերժությունը քեզ է երազել:

Բովանդակային իմաստով՝ Այվ. Իսահակյանի ստեղծագործությունից զիբավոր արժանիքը Հովհ. Շիրազը համարում էր բարություն ու մարդկայնություն, մարդկայնորեն գեղեցիկի գովերգը: Այդ հասկանիչը, նրա կարծիքով, ստավել խորն է արտահայտվել Վարպետի գլուխգործոցում՝ «Աբու-Լալա Թահարի» պոեմում: Բանի՛ցս ես հնչեցրել է այդ պոեմի խորքն

ու էությունը բացահայտող իր սեղծ ու պատկերավոր, դիպուկ կարծիքը, որը, բանաստեղծին հատուկ զգացողություն և տպավորություն էր ներկայում, չափազանց նման է Նարեկացուն տրված մեծարեցյալն անտրոշումներին («Նարեկացին է, որ գիտն բառերը ծովածայն հնչեցնել և ծիծաղախիտ ժպտեցնել» և այլն), որոնցով բացահայտվում են Մեծարեցի լուսնորգության ու մարդկերգության նարեկյան աղուեքները: Լսենք Շիրազին. «— Եթե մի շար հրաշքով այխարհից վերանայու լինեն բոլոր ուղտորը, այգ հավիանայան ապրելու են «Աբու-Լալա» ուղտերը, որպեսզի իրենց վճիռ արցունքներով անդադար ջրին մարդկային հոգիներում օրեցօր չորացող բարության ծաղիկները»⁶⁷ (ընդգծ.— Ս. Մ.):

Շիրազյան այս բնորոշումը թեևս ավելի խորն է արտահայտում նրա կապը իր նախորդների և մանավանդ Այվ. Իսահակյանի ստեղծագործության հետ:

Որքան էլ այսօր համընդհանուր զարգացման շնորհիվ փոխված լինեն գեղեցիկ բանաստեղծությունն զգալու և արժեքելու չափանիշները, ժամանակի գործոնն անզոր է դասականների՝ Հոմերոսի, Նարեկացու, Շեքսպիրի, Մայսթ-Նոֆայի, Հայնեի, Պուշկինի, Թումանյանի, Իսահակյանի, Վարուժանի, Տերյանի, Չարենցի և նույն Շիրազի բանաստեղծության հանդեպ: Որովհետև նրանցից յուրաքանչյուրն իր ժամանակին մեծ նորարար էր և ստեղծել է մնայուն արժեքներ: Իհարկե, ժամանակը յուրաքանչյուրից մոռացություն իր անխուսափելի բաժինը տանում է. պարզապես ոմնացից քիչը տանում, շատն է թողնում, ոմնացից շատը տանում, քիչն է թողնում, իսկ ոմնաց էլ ամբողջովին է նետում մոռացություն և կեթա գետը:

Ինականորեն ծագում է մի էական հարց. ինչո՞ւ հիշյալ դասականները չեն «Հնանում», իսկ աղմկաբար նորարարներից շատերն ունեն թիթեռների կյանք:

⁶⁶ Այվ. Իսահակյան, Երեմի ժողովածու 6 հատորով, հ. 6, Երևան, 1979, էջ 330:

⁶⁷ Տես նաև Գույի Շիրազի հետ Գ. Գովաքանի հարցազույցը Այվ. Իսահակյանի մասին:

Հարցի հնարավոր պատասխաններից, մեր կարծիքով, ընդունելին հետևյալն է. որքան էլ, քաղաքակրթության ու գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքով թիվազրկած, փոխվում են ժամանակները, կացութամուկները, պետական կարգերը, գիտական առաջընթացը բերում է մտածողության նոր մակարդակ, այնուամենայնիվ մարդկային Հոգիներում ու հարաբերություններում կան արվեստի հիմքը և նյութը կազմող որոշակիորեն կայուն հասկացություններ, որոնք այդ ողջ ընթացքում պահպանվում են նորացված տեսքով, զգացմունքների ընթացք, սիրտ, կարոտ, մարդկայնություն, ազնվություն ու նվիրվածություն հույժները ժամանակի ընթացքում էպիտեզի փոխվում և ընդունելի է տարբեր ազգերի ու տարբեր հասակների մարդկանց համար: Իրական մեծերն իրենց ձրբքը նպատակադուում են մարդկային այդ արժեքները արվեստի նոր միջոցներով ու հնարավորություններով պատկերելուն, մինչգն ազմկարարների ուչք ու միաքը ոչ թե մնայուն գրքմ ստեղծելն է, այլ ուշադրության կենտրոն դառնալն ու իրենց ժամանակավոր փառքը:

Շատերն են այսօր արամատոսությունը, սիլլոգիզմ—մտահանգուումը, խելացի միտքն ու դատողությունը, իրենց տարբրենակ մտազարտությունը մարդկանց զարմացնելու ճիգերը, քաղաքական ճառատությունը բանաստեղծություն համարում մոտանալով, որ բանաստեղծությունը նախ և առաջ պատկերավոր անկեղծ խոստովանություն է, զգացմունքի և մաքի ներդաշնակ միավորում, ներքնատույզ աղոթքի, մենախոսության կամ մանրմիկ երկխոսության արտահայտություն: Հակառակ դեպքում ըլոր խելացի մարդկանց, ըլոր փիլիսոփաների իմաստուն մաքերը պիտի բանաստեղծություն համարենք: Մինչգն այդպես չէք մտածում Հ. Շիրազը, ընդհակառակը, աշանդակական և նորարարական, մեկ և բովանդակության ըլորը եղած բուն բնավեններում ուներ հտակի դիրքողումը: «...Ոմանց թվում է, թե նորություն են հայտնաբերել սպիտակ բանաստեղծությամբ: Շատ ու շատ մեծեր են ասել ու աղբացել, թե լուսնի սակ նոր բան չկա, և բանը ոչ միայն

միտքն է, այլ միաքը կերտելն է, կերտվածքը, շինվածքը, Հյուսվածքը, ոչ թե թիվն է գլխավորը, այլ գորգն է, գորգահյուսվածքը: Ոչ թե կամ է, այլ կավակերտվածքը գավը, կուծը, դավթը: Այսինքն կավը (միաքը) ամենքինն է, բայց բրուտը բանաստեղծը, ձորերից բերում, իր հանճարով իրենն է զարձնում արդեն իր ձեռքով վերափոխվածը որևէ մաքի կորեզը դնելով իր ձրբք կրքի հրեղեն պողի մեջ, որն արդեն ստանում է իր անձնական բույքը, նուշնիակ գույնը:

Քարերը քարահանքին են, բայց ճարտարապետ Տրգատը ահա հազար տարի է ապրում է: Մեկը ապարանք, Անի է կերտում, մյուսները նուշն քարերից խրճիթ»⁶²(ընդգծ.— Ս. Մ.):

Յուճան Օլոշի ըլոր ընկերներն էլ ապրել են նուշն մեղավայրում ու ճաշակել որրությունն նուշն դառնությունները, Գյուճուց ու չրբակայքից, շուկայից ու որբանոցից ստացել նուշն տպավորությունները: Նրանցից ոմանք էլ զուրկ չեն եղել բանաստեղծելու ձրբքից: Մակայն ստացած ամեն տպավորություն, ամեն զգացական ազդակ Հ. Շիրազի գրչով էր դառնում պատկեր ու բանաստեղծություն, իսկ պատկերները, որ հանախ էին ստանում գեղանկարչական հագեցվածություն, մեք էին բերում ընդհանրացման մեծ ուճ: Այսպես էին մեղծված փոքր ու մեծ գլուխգործոցներ, որոնք անկեղծ զգացմունքների բնական բլավմեքներ էին սրտամտա ու հոգահարազատ: Իր ստացածն այսպես էր վերադարձնում Հովհ. Շիրազը, և ժողովուրդը բուն ցնծություն էր ընդունում նրա իրարահաջորդ քնարական հրաշակերտությունները:

Հովհ. Շիրազն այն եղակի բանաստեղծներից էր, որն ակաճատես էր ժողովրդական լայն գանգվածների վրա իր գեղարվեստական խոսքի արտասովոր ներգործությունը: Մանկուշյան ու որրություն թեման ամբամտարող իրական գլուխգործոցներ են «Գոա», «Հին մանկություն», «Սե ընկեր Նորիկը» գործերը. սրանց գեղարվեստական պատկերներում կենսական ճշմարտությունը, կատարված իրողությունները ներկայացված

⁶² 7. Շիրազ, Մի փետր իմ արժիկ կանքից, էջ 69:

են խոր հուզականությամբ և ճշգրտության չափ հավաստի պատկերավորության շնորհիվ դարձել են մի ողջ պատմաչրջանի «մանուկ ծերացած» սերնդի ընդհանրացված գեղարվեստական կենսագրությունը, որը բացարձակապես շիրազյան է՝ նրա «բույրով ու գույնով»: Ահա «Հին մանկություն» բանաստեղծությունը.

Մեկից մի Հայ, մեկից մի սոխ զողանում,
Գնում էինք Արփաշայը լողանում:

Աշխարհն ասես սարի ետև վերջանում,
Իջուղ արևն իրեն Հետ էր մեզ տանում:

Սոված, ծաքավ, բոկոտն ընկնում սար ու ձոր,
Երջում էինք անգիտությունը բախտավոր:

Զգիտինք՝ ով էր ժպտում, ով՝ լպիս,
Ով էր մեզ Հայ, մեր արցունքին լաց տպիս:

Զգիտինք, թե ում կուրծքն էր զարգարում
Ձնծաղիկը, որ մենք էինք միշտ բերում:

Զգիտինք՝ աշխարհն ինչ էր, մարդն ինչ էր,
Մենք՝ զարդի մեջ՝ չգիտինք՝ զարդն ինչ էր:

Ախ, զեռ մանուկ մենք ծերացած, զլիխիոր
Երջում էինք անգիտությունը բախտավոր:

Թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում բանաստեղծի արագ ճանաչման պատճառը պարզ մի ճշմարտություն էր. Երրազը իր ապրած կյանքը, որբանոցային դառն ու սրտախոց հուշերը, իր մարդկային զգացմունքներն ու ապրումները, գեղեցկություն իր ընկալումները, իր մորն ու Հայրենիքը, իր Գյումրին ու Երրազը, իր Արագածն ու Արփաշայն էր բանաստեղծակապացնում և քանի որ շապուրին օժտված էր պատկերավոր մտածողության բացառիկ ձիրքով, անհնկեպ գյուտերով Հարուստ նրա տպավորող բանաստեղծությունները ձեռք էին բերում ներգործուն զեռ ուժ, արտակարգ գրավիչ էին և նվաճում էին համաժողովրդական մեծ լսարան:

Որակական իմաստով գերակշռող էին Հաջողված գործերը: Վաղ շրջանի բանաստեղծություններից քչերը, սակայն, կրելով մամանակի պարտադրանքների գրոշմը, նախ չէին գոհացնում Հենց իրեն՝ Հեղինակին: Կային բանաստեղծություններ էլ, որ չունեին Երրազի քնարին բնորոշ արվեստի բարձր մակարդակը: Դրանք՝ որպես գրապատմական Հետաքրքրություն ներկայացնող փաստ՝ նկատելի են 1940 թ. հրատարակված «Երգ Հայաստանի» գրքի տարբեր բաժիններում: Այդ պատճառով էլ Հետագա ժողովածուներում ու Հատորային հրատարակություններում Հեղինակը զբանցից լավագույնները զեռնող էլ նույնությամբ կամ մասնակի փոփոխություններով, ինչպես, օրինակ, «Իմ Արևին», «Արտեր», «Այդեպան», «Մի կյանքի պատմություն» (որն, ի զեպ, խոհական քնարեգություն մի կատարյալ զլուխգործոց է՝ նվիրված Ստ. Զորյանին, որի ինքնակենսագրական հայտնի վեպի վերնագիրը և «Ընկեր Ստեփան Զորյանին» ընծայականը վերջին հրատարակություններում հանվել է. այս գրքում «Մի կյանքի պատմություն» բանաստեղծությունն ունի «Նամանություն» ենթագրերագիրը), «Եղևնու մրձունջը» և այլն, իսկ իր կարծիքով նվազ հաջողվածները կամ անհաջողները՝ «Տեսարան», «Գնչաժ», «Գատարանք», «Երրակի արտերը», «Իրիկնագեմ», «Լեկինականին» և այլն, կամ՝ առհասարակ չի զեռնողել, կամ էլ վերածաղկել է արժատապես:

Գյումրու՝ որպես ծննդավայրի՝ Հ. Երրազի գեղարվեստական մտածողության վրա ունեցած հակառակ ազդեցության մասին ճիշտ պատկերացում կազմելու Համար պետք է նկատել ունենալ մի կարևոր հանդամանք էլ. նա հավատարիմ մնաց դասական քնարեգության ոչ միայն ձևերին ու բանաստեղծական տեսակներին, այլև թեմաներին՝ սեր, Հայրենիք, մայր, բնություն՝ անշուշտ, քնարեգության ամանդական թեմաների նոր իմաստավորումով: Այս թեմաների բոլոր վերաբարձուներում ծննդավայր Գյումրուց էր Հ. Երրազը գեռնում մեծ աշխարհ: Ահա ինչու շիրազյան բանաստեղծությունները, ար-

տարեանաց ազգայինն ձև ու տարազ զգեցած, խորքում իրացն համամարդկային են:

Հ. Երբագի բնության ու գարնան երգերը, եթե նույնիսկ երևանում են գրվել, ապա, անշուշտ, Երբակի Գյուճբու բնության ու գարնան վերհուշով ու ներշնչումներով:

Հանրահայտ «Գարնանամուտը» լեռներից բաղաբ իջած, քաղաքի մայրերին ու երկրբերկիր ճնճադիկներ, մանուշակներ, կակաչներ, վարդեր ու «Հողեկնով հասմիկներ» շաղ տվող, իրենց լուսամուտները բացած մարդկանց լեռների գարնանային թարմությունը պարզեղոց բանաստեղծի Հաղթարշավի երգն է: Քաղաքում ծնված բանաստեղծը չէր ունենալու բնության ու գարնան այնպիսի զգացողությունն ու ճանաչողություն, որ կարողանար «Բիրխիպանի» կամ «Քաղաքում»-ի հանճարեղ պատկերներն արարել, բնական ջրվեժ շտեմած բանաստեղծը չէր կարող այնպես անձնավորել ու իմաստափորել զահալիմելով ու փշրվելով ծիածան կապող ջրի անկման խորհուրդը, ինչպես Հ. Երբագն է արել:

Փայտից ջրվեժը փշրվում է ցած,

Անդնդում՝ մաշո՞վ կապում ծիածան...

Չնչալի բնական երևույթը ոչ որ չէր պատկերի այնպիսի պարզ, անզամ հասարակ թվացող, բայց ըստ էության մեծ խորք ունեցող գեղարվեստական գյուտով, մարդկային հարաբերություններն ու կյանքը իմաստափորող այնպիսի արատահայտիչ փոխարբությունը, ինչպես դա Հաջողվել է Հովհ. Երբագին:

Չյունը լալիս է, ձմեռն է մեռնում:

Չյան անցած ճամփով՝ դժարթ ու անվիրտ՝

Գարունը գալիս աշխարհն է բունում:

Երանի՜ մեռնող ձյուներին, որ միշտ

Ետեից կանաչ գարունն են թողնում:

«Բնության շունչը» բանաստեղծության պարզունակ թվացող տողերի մեջ անզամ զգալի է շիրազյան շնչառությունը:

Ննջում եմ սփին Արփալայ գետի,

Շշուկն ալիքի լուսն եմ Հողով:

Ցորեն արտերի խշշոցի Հանդով

Չափում է կուրծքս օվկիանը օդի:

Մարդու և բնության խաղաղ ներդաշնակության այս նկարագիրը, սակայն, դեռևս չունի կենսական այն մեծ լիցքերը, որ ընկալվի որպես Հայրենի եղբայրի լիարժեք գեղարվեստական պատկեր, բայց նկատելի է մի Հետաքրքիր օրինաչափություն. Երբակ աշխարհին և Գյուճբուն նվիրված ձոներգերը Հեղինակի Հասունության ու վարպետության աճին զուգընթաց ձևաբան քերիչ լայնք ու խորք, պարզ քնարական բնագավերները և Հայեցական տեսարանները վերածել են կենսական թանձր խառնուրդների, գեղարվեստական ու փիլիսոփայական մեծ ընդհանրացումների: Հետագա Հատորները պարունակում են Երբակն ու մանավանդ Գյուճբին բանաստեղծականացրած այնպիսի ձոներգեր, որոնք լավագույններն են մեր ողջ քնարերգության մեջ:

Հովհ. Երբագի Համար Հայրենիքը սկսվում է Հենց ծննդավայր Գյուճբուց, իր ծնողներից ու մանկությունից և տարածվում Հայաստան աշխարհի ներկայի և անցյալի պատմական տարածքներում: Հայոց պատմության ողբերգական ու Հերոսական զրգազների նպատակային պատկերումներով, Հայրենիքի ոգին նոր սերունդների Հողում պատմաստելով նա մըշտարթուն է պահել մեր ժողովրդի պատմական Հիշողությունը: Այս թեմայում ոչ միայն Իսահակյանի, այլև Խորենացու, Արտյանի, Բաֆթու, Գառկանյանի, Թումանյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Տերյանի, Չարենցի գրական ազգակիցն է նա, երանց անմիջական ու ազնիվ շարունակությունն է և արժանազրելի է բոլոր բանաստեղծների Համար նախանձելի Հաջողություններ: Եվզենի Եվտուշենկոյի «Ինչի՞ց է սկսվում Հայրենիքը» բանաստեղծությունից տամամայակներ առաջ Հայ բանաստեղծը, կանխելով նրան, տվել է Հայրենի Հողի ու մայր բնության անկրկնելի ու անզերազանցելի բովանդակափորում:

Ամենայն անգամ,
Երբ Հայրենիքի մասին են խոսում,
Իմ միտն են գալիս առուն մեր դասն,
Որ մանկությանս Հեքիաֆն է ասում:
Ու արտի եղբին բարդիս մենավոր,
Եվ արտիլը՝ վրան դարնան ձյուն,
Եվ բլրի շրթին՝ դերեզմանն իմ Հոր՝
Որպես քարացած անեծք Աստուծո՛ւ...

Այստեղից սկսվում ու մինչև առասպելական ժամանակներն ու տարածքներն է հասնում Հայ մարդու Հայրենիքը, որի ամենամեծ ու հզոր երգիչներից մեկը դարձավ Լուիզ. Շիրազը:

Խորհրդային ժամանակներում՝ ինտերնացիոնալիզմի տիրապետության պայմաններում, Լուիզ. Շիրազն իսկապես կարողացավ իրագործել անկարելի Հրաչք. իր Հայրենասիրական հրազոր բանաստեղծություններով ու պոեմներով արժնացրեց կոմունիզմի գաղափարախոսության թմրիբի մեջ նիրհող Հանրությանը, բացահայտեց Հայոց մեծ ողբերգության՝ նդեռնի ու կորուստյալ Արևմտյան Հայաստանի մասին պետականորեն քողարկվող ողջ ճշմարտությունը:

Եթե մայրերգության սուպերհուսմ Հայ գրականության մեջ Լուիզ. Շիրազն ուներ իր նախորդները Հանսին Ա. ԵաՀաբլի, Ջիվանու, Լուիզ. Թունանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի ու Ե. Չարենցի, ապա Հայրերգության բնագավառում նա մշտնում է որպես եզակի և անկրկնելի բանաստեղծ: Նրա մեծ նախորդներից ոչ մեկը, սակայն, մոր ու մանավանդ Հոր կերպարներն այնքան համակողմանի ու բազմբանող չի ներկայացրել, որքան Լուիզ. Շիրազը:

Քնարական բացատիկ գլուխգործոցներ կան և՛ մայրական, և՛ Հայրական շարքերում, որոնք շատ ավելին են, քան ծնողի նկատմամբ անկեղծ սիրո և պաշտամունքի պարզ գրանդուրմը: Նկատի ունենք «Մայրիկիս գերեզմանը», «Հայր սեսափ», «Հայրիկիս վերադարձը», «Մայր տանարը» և սրանց որակի բազմաթիվ բանաստեղծություններ: Թե՛ մայրը, թե՛ Հայրը գառնում են մեր ժողովրդի կենսագրությունը, ազգային բնա-

վորությունը, մտածողությունն ու նկարագիրը մարմնավորող, բնդհանրացման մեծ ու ունեցող խորհրդանշաններ:



Շիրազան գրական հանդիպումների հրափրատումներ

Մեր քննադատությունը Լուիզ. Շիրազի մայրական երգերին, թեկուզև կցիտուր, այնուամենայնիվ անդրադարձել է, սակայն փրկիտոփայտական լուսություն է պահպանել նրա Հայրական երգերի հանդեպ: Առանց մանրամասների մեջ խորանալու՝ ասենք, որ «Լուիզարձան մայրիկիս» և «Լուիզարձան Հայրիկիս» պոեմները (Հնդեռնակն ինքն է դրանք անվանել պոեմ՝ Հյուսիսամերիկյան բանաստեղծություններով) կազմող գործերը գեղարվեստական լուրջ արժեքներ են ու արժանի մասնագիտական լուրջ քննություն: Նրանցում Լուիզ. Շիրազը կերտել է իր ծնողների կերպարները՝ մասնավոր մեջ խտացնելով մեր ողջ ժողովրդին հատուկ բնավորության գծերը, ազգային հոգեբանությունն ու մտածողությունը, բարությունն ու աշխատությունը: Այդ կերպարները բանաստեղծին Հնարավորություն են տվել Հայ մարդու նկարագրի զննություն հետ միասին ցուցադրել նաև նրա ճակատագրի գառնությունը՝ ծանր կորուստներին ու դժվարին կյանքին հակադրելով Հայ մարդուն բնո-

բոշ՝ ոգու արիութիւնն ու լափաստութիւնը: Այդ երգերը, որ մեր ժողովրդի հոգու կենսագրութիւնն են, մեր ազգային մեծ երազանքների խոսացված արտահայտութիւնները, նույնպես խորտնջված են ծննդավայր Գյումրու և բանաստեղծի մանկութիւն հիշատակների վրա:

Բանաստեղծութիւններից շատերի գրութիւն շարժառիթ են դարձել մեր կամ հոր այս կամ այն իմաստային խոսքը, նրանց հետ կատարված այս կամ այն իրական գեղարու ու նրա հիշողութիւնը: Դրանք վավերական են որպէս պատմական իրողութիւն և բանաստեղծի գրելով վերածվել են գեղարվեստական նշմարտութիւն, ինչպէս 1941 թ. գրված «Փախեփախի այն գրչի» բանաստեղծութիւն մեջ: Հայութիւնն ընդհանրապես բնաշնչելու իրենց ծրագիրն Արեւմտյան Աշխատանքում իրագործելուց հետո թուրքերը ներխուժել էին Արեւելյան Հայաստան Գյումրի: Սա էլ ջարդի, բռնի տեղահանութիւն մի սոսկալի դրվագի պատկերն է՝ փախեփախի պահից մանկան հիշողութիւն մեջ անջնջելի մնացած:

Հետաքրքիր բնարան ունի բանաստեղծութիւնը, որը ընդհանրացման վերաբերյալ քիչ վերը մեր ասածի աներկբա հիմնավորումն է.

Գյումրին այն է, ինչ Հայրս,

Ինչ չզթաշված սուրբ սար:

Իսկ բուն բանաստեղծութիւնն էլ, իրօք, դասական ձևի մեջ գեղարվեստական ու գաղափարական մեծ խոսացում է.

Ինք տարվա գառ էի, երբ Հայրիկս բուստանից
Բաճը ուսին նիզակված՝ Հողշուտալով Հասավ տուն.

— Թուրք կուգա, Հողնվե՛ք, ու մենք Գյումրի ստանեից

Տնով-տեղով դուրս թռանք՝ ապավինած Աստուծուն:

Եղածիկ էր Հայրս ինձ, ինչպէս Արսից փափշելիս,
Հայրը՝ վերմանն ու Հայրը, Գյումրին մաճով խուճապվեց.

Խառն, այլ ոչ թի ինչպէս կուռեկները գոթթելիս,

Չարաուշակ դու յի միջ մանուկ լեզուս էլ կապվեց:

Օ՛ր, ի՛նչ գաղթող փրկութիւն, մահախուճակն եմ հիշում.
Մայրերն իրար բախկնցին ծառահանուճով ձիերի.

Ինչպէս գայլի երափելի մայրը մանկանն էր քաշում.

Ոտնաորո՛ր՝ պաղանձկեց Հասպանքը դիրբի:

Ու էլ ոչինչ չեմ հիշում. վերմանը՝ հորս մի ուսին.

Մյուս ուսին բաճը սուր, որ, թե թուրքի Հանդիպեց...

Որպէս մանկապն Հայրիկիս՝ մեկ էլ կտորած մի լուսին.

Եվ Արապանն աղչանհար ու ցիր ու ցան ազգը Հեղ...

...Նկեղեցու զանգերն էլ զանգերի պես լսեցին,

Որոնց ուղեղն է Հանված, կտրված է Հայ լեզուն.

Վշտից Մատիս լուսներն էլ մեջքներն ալպես ծռեցին.

Որ ստաղծ էլ ստանալից թույնով լի թաս էր ու ուզում...

Չարգացնելով սմբ. Շահադիդի, Ջիվանու, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի մայրերգութիւն լավագույնն ազանդները՝ Հ. Երազը մի կողմից հասավ մոր աստվածացման գաղափարին, մյուս կողմից աղքատ Հողազօրծ հոր կերպարում խոսացրեց Հայ ազնիվ աշխատավորի նկարագրի վեհութիւնը՝ իր ուժանտիկ խոռոնվածքի համաձայն՝ նրան վերագրելով արքայական Հատկանիշներ:

«— Գիտե՛ս, սաաց մի անգամ, «Չախորդ օրերից» պակաս Հանձարեղ չէ Ջիվանու «Մայրիկ» երգը: Մուրթալ օրդին նեղացել է իրեն լքած մորից և ինքն էլ նեղացրել է նրան, բայց մոր մահից հետո ծանր զղջումով էլի նրան է դիմում.

Ջիվանին եմ, սխալմունքս զգում եմ,

Ես քո հոգու համար միշտ աղթում եմ.

Նեբիք քո մուրթալ օրդուն, խնդրում եմ,

Եղիր երկնքուճը ինձ ստապ մայրիկ:

Անտեղի չէ ժողովուրդը պաշտում Ջիվանուն, ուրախութիւն թե տրտութիւն պահներին սփոթվում նրա երգերով: Կսե՛մ, որ կամաց-կամաց իմ երգերն էլ կերգե: Գրեթե ամեն տեղ երգում են Միամանթոյի երգը՝ «Հիմա ո՛վ է մեզ համբուրում»: Լավ էշան է, բայց Ջիվանին կորցրած Վանս ծովի կորուստ ու կա-

բոս չուներ ինձի պես... Մոր կորուստ ուներ, ամերակ Անիի համար ողբում էր, բայց Հայրենիքի կորստյան կսկիծ չուներ մեզ պես»:

... 1920 թվին, երբ ապագա բանաստեղծը վեց տարեկան էր, Գյումրի ներխուժած թուրքերի ձեռքով սպանվում է Հայրը՝ գյումրեցի բոստանչի Թադևոսը: Հոր կերպարը կերտելիս բանաստեղծն անձնական զգրախոսության պատկերումով հասնում է համազգային ողբերգության խոր զգացողության ու նրա գեղարվեստական մարմնավորման.

Հայրս տեսա՛մ ա՛նավոր
Կոտորածներն Հայկական,
Եվ աշքերում իր մուրը
Գերեզմաններ կան այնքան,
Որ թարթիչներն իր բուր
Աճից ծոված ու մուր
Խաչերն էին՝ խրված խեղճ
Հորս և իմ սրտի մեջ:

Անձնական ու ազգային ողբերգության այսպիսի միաձույլ զգացողություն և այսպիսի պատկեր ուրիշ բանաստեղծներ չունեն: Համազգային այս մեծ ողբերգությունն է Հորից փոխանցվել որդուն և ծավալվել սերնդակերտույն:

Բոլոր զավակներն էլ հավատացած են, թե իրենց Հայրերն ամենազորն են, ամենից ուժեղը, ամենից լավն ու բարին: Բանաստեղծը շուտ էր զրկվել Հորից, որի իդեալականացված կերպարը նա տասնամյակների ընթացքում կերտում էր իր հուշաշխարհի կցկուտը պատասխաններից՝ զրանք ընդելուզելով իր նրնակալությանը: Բոլոր տեսակի կոնֆլիկտում նա հաղթող էր դուրս գալիս. հաղթում էր ձմռան բբին ու սառույցին, վազ զարնան ցրտին, ամռան տապին ու կարկուտին, զեղին երաշտին և այդ ամենով հրեշավոր սովին: Ուստի տասնամյակների հեռավրց էլ նա չէր ժողացվում.

Ո՛վ կարող է մոռանալ այսքան չարքառ Հրաքչին:

Անաեք արգա էր հայրս՝ զլիկ թույն էր լուկ արվին...

Մասնավոր իրական փաստն այսպես է դառնում ընդհանրացման մեծ ուժ ունեցող գեղարվեստական պատկեր, որի ընդգրկունությունը թե՛ զգալի է, թե՛ տեսանելի:

Կյանքից վաղ հեռացած Հայրը իր բանաստեղծ որդուն որպես հարատու թողել էր մի մեծ հուշաշխարհ: Դա որդու հարատու թյունն էր: Ինչպես մոր առիթով էր գրել՝ «Մայրիկիս մեջ ողջ մայրերին ևս կզգամ», Հոր մասին բանաստեղծությունների «Հուշարձան հայրիկիս» շարքը կամ պոեմն էլ մարմնավորում է Հոր կերպարը: Այդ հուշաշխարհում զնգում է նրա արձաթն բաճը, հնչում են բարության ու աշխատասիրության հորդորները, բուրում են համեմների ու թարխունի մարգերը, բայց նույն աշխարհից բանաստեղծը ժառանգել է նաև մի չվայելած երանություն, որն անձայր սիրությունը ուզեցնել է նրան ողջ կյանքում.

Կգար Հայրս շիրակի հովերի հետ իրիկա,
Կշողողար բաճն ուսին՝ սարից կշուղ լուսնի պես.
Կգար Հայրս, կհիշեմ երազի պես երևիկա,
Կարծես աշարհն էր մտնում մեր խրճիթի գունով ներս:

Կգար բոլոր Երթակի բուսանների բույրերով,
Կշողողար բաճն ուսին՝ մեր սան ոսկե հուշախ պես.
Եվ ինձ կասե՛ր ուսերիմ, ու խրճիթում զնդազով
Իմ թոթովանքն էր հնչում Հայրիկ, բուսան կասե՛ն՝:

Բուսաններից միշտ կգար տուն՝ բերելով բույրն հողի.
Ու ևս գիրկը կընկնե՛ի կուտվի եղջ գիշեր
Համեմների մարգերը ու մարգերը թաթխուկի. —
Մանուկ սիրոս հնքիսմի գրափտաներում կըշշեր:

Կգար Հայրս ու բույրով գառաբեր մեր կրեթեր,
Էլ չէի մորս հավատա, թե, ախ, չունենք մենք բուսան,
Թե ուրիշի ջրվորն է ամպի նման Հայրս ձեռ. —
Կգար Հայրս, կհիշեմ ու մանկան պես զես կույսմ...



Շիրակոմ Անուշյանոմ, 1983 թ. ապրիլի 19-ին ընդունում քաղաքում բանաստեղծին

Բանաստեղծի 1910 թ. գրած այս հուշ-բանաստեղծությունը մշտապես ապրող ներկա է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ գրական հայերենի սահմանական բայաձևերի հետ Կարեն Բարսեղյանի Երբակի խոսվածքի բայի սահմանական եղանակի անկատար ժամանակաձևերը, որ այս զեպյուրեմ նաև պատմական ներկա են, կազմվում են ենթացրական եղանակի նմանությամբ. կզար- գալիս էր, կհիշեմ- հիշում եմ, կուլում-լալիս եմ կամ լաց եմ լինում և այլն: Արանով հեղինակին իր բանաստեղծության մեջ ավելի արտահայտիչ է դարձրել իրագրության զգացական կողմը և պատկերավոր միջավայրի գույնային նրբնրանգները:

Մեծ աշխարհի խորագլանքներից ու անարգարություններից հույնած, կյանքի հուզներից զառնացած բանաստեղծի համար Գյուլմերին մի անասկ հուզնոր օտալիս էր, սիրկարար օփ: Երբակ- Երբազ հարարերությունն ինքն է հանձարեղորեն բանաստեղծի:

Երբազը շուկն է Երբակի գուտտերի,
Հանձարեղ իր երկրի գուտանն է, սուտն են:

«Էլի սիրտի Գյուլմերի երկամ»,— ասաց ու զրեց նույն օտոզով սկսվող բանաստեղծությունը: Գրեց Գյուլմերու նշանավոր հիմներգը «Հայաստանի աղն ես, Գյուլմերի» խորագրով, կուսհետով, որ հարագատ ծննդավայրը շուտով կվերստանա իր պատմական-ավանդական անունը: Այնքան էին զիպուկ շիրազյան բնորոշումները և այնքան պատկերավոր, չափատողերն ու ողջ բանաստեղծության կառույցն այնքան երանշտական, որ անմիջապես մեղեդիավորվեց Վ. Բալյանի կողմից և ստացավ լայն տարածում:

Գյուլմերին իր անցյալով, ներկայով ու գալիքով անբաժան է հայոց ճակատագրից: Մենդավայրը, որին հազար թեյերով կազմված էր բանաստեղծը, նրա երգերում արդեն բառ-պատկեր է, որ գարձեղ է համազգային մեծ խնդիրներ արձարծելու հնարավորություն: Բանաստեղծը չտեսավ աղետավոր երկրաշարժն ու նրա ողբերգական հետևանքները, չտեսավ նաև խորհրդային պետության փլուզումն ու իր ծննդավայրի Գյուլմերի վերանվանումը, չիմացավ և արցախյան պատերազմում բողբոջ հայ քաղաքիներին ու մանավանդ Կուշիի գրավման ժամանակ «Երբակ» ջոկատի սիրանքը, որով շատ սիրտի հպարտանար, բայց իր վերջին ստեղծագործություններում, մանավանդ «Հուշարձան հայրկիր» բանաստեղծություններով Հյուսիսում պրեմում հանտա էր գործածում Գյուլմերի անունը, իսկ բանաստեղծություններից մի քանիսն էլ պարզապես կոչել է «Գյուլմերիանն»՝ զուգու հայաստանի անկախացումից ապրիլներ ատաջ կանխազգալով, որ ծննդավայրի Գյուլմերի պատմական անունը վերականգնելու ժամանակը մոտեցել է:

Ողջ Հայաստանի հետ միասին կառուցվող ու բարգավաճող, չենացող Գյուլմերին էր բանաստեղծի հարստան երազանքը: «Արագածին բազմած փառավոր արծիվը», «Հայաստանի աղն» ու «Ճամարտության վաղը», «անձանություն օրորոց» աղջիկների, «հանձարեղ քարագործ» վարպետների հայրենիք, «Հայաստանի երգարան» Գյուլմերին, բանաստեղծի հարտա զգացողությամբ, Հայաստանի հողություն խորհրդանիշներից է, ուստի սերտորեն շաղկապված է համայն հայության ազգային

մեն՝ երազանքներին և դրանց իրականացման հիմքերից ու սուհափառչաներից մեկն է:



Շիրազը գլուճրեցի հարազատների հետ



Գոյի. Շիրազն էր գրաւոր Անիի և Խասր Վանանիի հետ Գլուճրում 1983 թ.

Այսպէս էր իմաստաւորում Հովհ. Շիրազն իր ծննդավայր Գլուճրին, որի հանդեպ նրա եփերյալ զամփակի որդիական վերաբերմունքը նույնպէս ունի համազգային խոր բովանդակութիւն: Ամեն գլուճրեցի և ամեն հայ աղոյթի ու պատգամի պէս կարող է կրկնել շիրազյան հանճարեղ ձոները.

Մտղկիր, իմ սուրբ ծննդավայր, աչքան, որ դամ չհանաչեմ,
Գամ, դրախտում իբր ման գամ, բշուր աչք դառնամ՝ չհանաչեմ,
Եւ ինձ համար խո չեմ ստում. ինձ քո մի բուն հողն էլ է շատ,
Ե՛լ ու ներս բեր Մասիսդ անդամ, որ հովդ անգամ չհամաչեմ...

ՄԱՆ ԵՐՐՈՐ.

ԴԵՊԻ

ՄԵԾ ԱՇԽԱՐՀ

Իր կյանքի և ստեղծագործական բովանդակային ճանապարհն սկսելով Գյումրի ծննդավայրից և անցնելով Երևանի պետական Համալսարանով Հովհ. Շիրազը Հայտնվեց գեղարվեստի մեծ աշխարհում ոչ թե ժամանակավոր Հյուրի կարգավիճակով, այլ տանտիրոջ իրավունքով. աշխարհ, որի մեջ նա ստեղծելու էր իր բանաստեղծական յուրահատուկ աշխարհը: Այդ մեծ ու ընդգրկուն աշխարհը ճանաչել է պետք, սակայն, ցավոք, ինչքան Շիրազ մարդն է ճանաչվել, այնքան էլ նրա բանաստեղծական աշխարհը: Մանկության հիշատակներից սկսվող այդ աշխարհում նախ ստեղծվել է բանաստեղծի Հեռույնացած քնարական Հերոսի կերպարը, Հերոս, որը նորագույն ժամանակների Հայ մարդն է՝ անցած 20-րդ դարի բոլոր փորձություններով: Ստեղծել է ն նսելիքը: Սակայն Հաճախ է կաշկանդվել նրա մտքի ճախրը, զանազան խոչընդոտների պատճառով չի կարողացել լիարժեք իրականացնել կյանքը գեղեցկացնելու իր երազանքներն ու ծրագրերը, բայց միշտ գրեցակցել ու տառապել է իր մարդկային ու բանաստեղծական վեճի մղուկների և զրանց կենսագործումն արգելակող Հակասությունների մեջ: Եվ զարմանալիս այն է, որ նա Հասուն տարիքում էլ, զրհթն միե՛նչ և վերջ չհրատարակեց իր մանկութան երազանքներից, մաքառեց ու ընդվզեց իրեն կաշկանդող մարդկային ու Հասարակական Հոռի երևույթների դեմ.

Կապ մի՛ք զնի գուք իմ լեզվի նուրբ ոտին՝
Միաման էլ նորից զարձնեմ իմ գոտին,—
Փայտն ձիով Վահագնից էլ վեր սուբան,
Կապույտ թռչունն աշխարհ բերեմ, ձեզ կյանք տամ:

... Ա՛խ, ես բերեք մանկությունս աստղանեմ՝
Փայտն ձիով տիեզերքն էլ նվաճեմ...

Նվեր Ափյուռքի Հայույանը

Մի ծաղիկ չի տա օտար Հողը քեզ,
Բայց թեկուզ ծաղկես օտար գառափրին,
Թե Հայրենիքում մի խրճիթ չունես՝
Փրկելի արցունք է քո էլ շուրթերին

Օտար աշխարհը մի Հյուզ չի տա քեզ,
Բայց ինչ պոպոս էլ տա արևի տակ,
Թե Հայրենիքում մի խրճիթ չունես՝
Մուռացված որր ես օտար լուսնի տակ:

Բյուր լեզու գիտես օտար աշխարհում,
Բայց թե մայրենիդ խորթ է քեզ Համար,
Հուր լեզուդ պոկած Հավք ես վանդակում,
Հավես կորած ես Հայրենյաց Համար...

Քո Հայրենիքը Հայաստանն է նոր,
Ուր ամուլ ժայռն էլ ծաղիկ է ծնում,
Ուր թաղված Մեսրոպ Մաշտոցն ամեն օր
Ինձնով քո բախտի մասին է Հարցնում...

Գրական ո՞ր ուղղությունն է բնորոշ Հովհ. Շիրազ քնարերգուի պատկերավոր մտածողության համակարգը, ուսմանտիղզի՞ն, թե՞՝ «նսալիզմի»։ Այս և բազմաթիվ այլ բանաստեղծությունների մեջ, տարրեր պոետաներում զրանդրվել է զուեհիկ ու կոպիտ իրականությունը լավագույն ապագայի բուռն մղումով հակադրվելու, մտերլինկյան հեքիաթի կապույտ թռչունը կամ թուժանյանական հագարան բլրուլը բերելով՝ մարդկանց երջանկացնելու ուսմանտիկական ձգտումը։ Բայց շատ գործերում էլ գերակշռում են դաժանություն հասնող իրական պատկերներ, որոնք բանաստեղծը հակադրվել է իր գեղագիտական իդեալով։ Այս առումով բնորոշ է «Արծիվ է «Արծիվ» այլարանական բանաստեղծությունը, որը դրել է նաև «Առակս գինչ ցուցանե» գրքում։ Մարդու ազատության և մանավանդ գրողի, արվեստագետի ստեղծագործական ազատության մասին բանաստեղծական խոհն այտանդ ստացել է հետաքրքիր պատկերավոր մարմնավորում։ Արծիվ և վանդակ փոխաբերությունների համատեղ գործածությունն արդեն մի կողմից գրող և դարաշրջան, ժողովուրդ և բունատիրություն հակադրությունն է այլարանորեն խորհրդանշում, մյուս կողմից՝ ուսմանտիղզի ու սեալիզմի, երգանքի և իրականության հարաբերությունը։

Վնեց վանդակում ու...երազ տեսավ,

Վանդակից իր հին երկնքին հասավ,

Ու լուռ ճախրում էր, աղատ սավառուում,

Նորից աշխարհի արքան էր գառնում

Արծիվն՝ ազատված իր ժառանգանակից...

Եվ ահա սիրտը թնդաց հրճվանքից՝

Տեսավ սե ցածում, սե ցելում, սե գոտ

Ու դեպի գտը ալացավ նա փար,

Գառնուկին առավ,

Ու երկինք թռավ,

Որ տաներ բույնը, լուսնը, բայց թե

Գույնը դիպավ ճաղին երկամբ,

Ջարթնեց վանդակում, վշտից շփոթվեց՝

Գույնը դիպավ՝ սիրտն արյունավեց...

Ու երազի հետ արժի ուհաղանձ՝

Ազատությունը երկնքում մնաց...

Դանին Վարուժանի նման՝ Հովհ. Շիրազն էլ իր առջև չի դրել այնպիսի խնդիր, որ ինքը անպայման լինի սեալիստ կամ ուսմանտիկ, ընդհակառակը, նա նույնպես համադրական մտածողության կամ «սինդրոսիկ արվեստի» կողմնակից է, և նրա ստեղծագործությունն մեջ էլ, ինչպես Արսեն Տերտրյանն է նկատել Մուրացանի առթիվով, սեալիզմն ու ուսմանտիզմն «մի-սխառնված են՝ վերջինիս տիրապետական շեշտումով»։ Հովհ. Շիրազն էլ «Ջեր կարծիքը սեալիզմի և ուսմանտիզմի մասին» հարցին պատասխանել է. «Եթե որևէ ստեղծագործություն հուզում է մարդուն, իր մեջ կրում է երկուն էլ։ Չգացմունքից զուրկ ստեղծագործությունը փայտակերտ է, թղթի վարդ։ Մ՛ր գանգն է հնչում։ Առանց լեզվակի գանգը չի հնչում։ Հարկավոր է հարված ու հարված՝ զգացմունք և դարձյալ զգացմունք, ինչպես որ գանգի լեզվակն է սրտի պես խփվելով գանգի կրծքին հանում զողանջ կամ հառաչ, շշուռ կամ մոռուչ, այդպես է լինելու արվեստի ինքնարուևս գործը։ Իհարկե, իրականը ուսմանտիզմի շաղկապ է ընդունելի։ Եթե գանգի լեզվակը ուսմանտիզմն է, ապա գանգը սեալիզմն է։ Երբ որ մեկը և՛ Հույժ մարդ է, և՛ Հույժ բանաստեղծ, իր ստեղծագործությունների մեջ և՛ սեալիստ է, և՛ ուսմանտիկ»⁶³ (ընդգծ. — Ս. Մ.)։

Սեալիստ թե ուսմանտիկ՝ երկունս էլ ձգտում են կենսական ճշմարտության բացահայտման։ Իսկ այդ ճշմարտությունը միշտ էլ հարաբերական է. մեկն իր ուշադրությունը կենտրոնացնում է դարաշրջանը, միջավայրը, հասարակական կյանքը և մարդկային հոգեբանությունը «ինչպես որ է» սկզբունքով ճշմարտացիորեն պատկերելու, մյուսը բարձրագույն իդեալի գերբերից հզոր անհատի նպատակաուղաց գործողությունների պատկերմամբ կամ քնարական հերոսի աղնիվ ու վանձ զգացմունքների մարմնավորմամբ աղեղ իրականությունը հակադրը-

⁶³ «Գովհանճուս Շիրազի մասին» ժողովածու, էջ 91:

վելու՝ այն վերափոխելու միտումով: Ահա ինչու են մեծ գրողների ստեղծագործությունն մեջ ռեալիզմն ու ռոմանտիզմը Հնձարն ներթափանցում կամ միավորում: Կարևորը գեղարվեստական բարձրարժեք երկն է, որ գրողն ստեղծում է առանց իր առջև այս կամ այն գրական ուղղություն կամ հոսանքի ստեղծագործական սկզբունքները կիրառելու կամ պահանջները կատարելու Հատուկ նպատակադրման:

Եթե գրողներին գնահատելու լինենք նրանց ստեղծած մտայուն գեղարվեստական արժեքներով, մեր գրականությանը և գեղարվեստական մտածողության զարգացմանը մատուցած ծառայություններով, կյանքի վրա ունեցած ներգործությամբ ու իրականությունը հետ ունեցած գեղագիտական Հարաբերությունում, ապա Հովհ. Շիրազը ամենից պակի բարձր գնահատանքի արժանի Հայ բանաստեղծներից մեկը պիտի հանաչվի: Իրոք, նա ամենաբեղմնավոր, ստեղծագործական կյանքի առումով ամենից երկարակյաց Հայ բանաստեղծներից մեկն է և իսկապես թողել է գրական մեծ ժառանգություն՝ քնարական տարասեակ քերթվածներ ու բանաստեղծական ջրբեր՝ սուներներ, գազելներ, քառյակներ, բայլադներ, առակներ, փոքր ու մեծածախալ սուրբեր, քնարական, քնարակերպական, էպիկական, դրամատիկական պոեմներ՝ արդիական ու պատմական թեմաներով, թողել է նաև որակյալ թարգմանություններ:

Գրական արտադրանքի որակական իմաստով, չհաշված այն ժամանակն ու ջանքերը, որ Հովհ. Շիրազը Հարկադրված վատնել է իր ստեղծագործությունները տպագրելու վրա, անշուշտ, առավել արդյունավետ են եղել 1930 - 60-ական թվականները, քանի որ իրականում այս քառասունյակ ժամանակահատվածում են ստեղծվել նրա լավագույն բանաստեղծություններն ու պոեմները, որոնք էլ զարձան ոչ միայն գեղագիտական ճաշակ, այլև սոցալային ինքնասնտոնողություն, մտածողություն, Հոգեբանություն, քննադատություն ու նկարագիր, մայրնի լեզվի և Հայրենի երկրի ու ժողովրդի նկատմամբ սեր, նվիրվածություն, Հանուն Համահայ սոցալային երազանքների բոլոր կարողությունները նվիրաբերելու, անզամ զոհաբերվելու պատրաս-

տականություն, Համամարդկայնություն զատախարակող ուղե-նշային ստեղծագործություններ սերունդների ճանապարհին:

Արդ, ի՞նչ մտանցումով, ի՞նչ սկզբունքներով պիտի կատարվի բազմաթիվ ու բազմամանր գրական այդ Հարուստ ժառանգության քննությունն ու քննախզումը:

Անշուշտ, կարելի է կատարել և՛ ժանրային - տեսակային, և՛ բովանդակային - թեմատիկ, և՛ մամանակագրական, և՛ զուտ գեղագիտական քննություն: Այս հիմնարկերները, սակայն, ունեն իրենց ենթահարցերը, որոնցից յուրաքանչյուրը կարող է դառնալ գիտական առանձին ուսումնասիրություն կամ ծավալուն մենագրության առանձին գլուխ, և այդ ամենի միասնությամբ, Հայ նախորդ ու ժամանակակից գրողների Հետ ունեցած գրական ազդակցության ու օտար գրականությունների հետ առնչությունների Համալիր քննությամբ է միայն Հնարավոր ստեղծել Հովհ. Շիրազի ստեղծագործության մասին ամբողջական պատկերացում:

Այսպես, առանձին վերլուծություն ու քննախզուման կարող են արժանանալ Հ. Շիրազի և՛ մայրերգությունն ու Հայրերգությունը, և՛ սիրերգությունը, և՛ զարնան ու բնության երգերը, և՛ խոհափիլիսոփայական քնարերգությունը, և՛ մայր-գերգությունն առհասարակ: Ինքնին Հասկանալի է դա ծավալուն ուսումնասիրության խնդիր է, որի քննարկումը չի կարող սպառվել մեկ թնկույտ և ծավալուն մենագրական աշխատության շրջանակներում:

Ներկա դեպքում, սակայն, հիշյալ մտանցումներով առաջնորդվելը և թեմաներից յուրաքանչյուրի առանձին քննությունը Հաղիվ թե իրեն արդարացին, քանի որ ծավալվելու Հնարավորությունը, այնուամենայնիվ, սահմանափակ է, և բոլոր խնդիրների վրա Հավասարապես կենտրոնանալ անկարելի: Մնավանդ առկա է դժվար Հայթաղարելի մեկ այլ բարդություն. Հովհ. Շիրազի քնարերգությունը, մեկ միասնական բանաստեղծական աշխարհի զրեոտրում լինելով, ունի տարբեր թեմաների ներթափանցումներ. սերը և Հայրենիքը, բնությունը և Հայրենիքը, մայրը և Հայրենիքը, Հայրը և Հայ-

քննիչը, մարդը և Հայրենիքը, Հայաստանը և Ափյուռքը, ազգայինն ու համամարդկայինը հաճախ այնպես են համաձուլված, որ իրոք զգվարանում են դրանց թե՛ միասնաբար և թե՛ առանձնացված դիտարկումները: Ընդհրը հիմնադրելու լուծում չի ստանում անգամ քնարերգության իր իսկ հեղինակային թեմատիկ բաժանման անկայությունը: Այսպես, երկերի ժողովածուի I-ին հատորի բաժինները հեղինակն ինքն է կազմել «Մանկություն», «Գարնանամուտ», «Հայտը լեզուն», «Քնար Հայրենիք», «Քնար բայրկներին», «Քանաստեղծի մայրը», «Նժուշներ առականաց», «Աեանի վիշաք», «Քնար փիլիսոփայական», «Հելիկոնի երգը», «Կերք Աբարատին», «Քնար Համամարդկային»: Բանաստեղծություններն, ինչ խոսք, հիմնականում համապատասխանում են հեղինակի կազմած բաժիններին, բայց դրանք շարքեր չեն, միաժամանակյա Հղացման արդյունք չեն և չունեն նախորդի ու Հաջորդի արամաբանական ու զգացմունքային կապը, ինչպես Միամանթոյի, Վարուժանի, Տերյանի, Չարենցի շարքերն են, որովհետև, տարբեր ժամանակներում ստեղծված լինելով, ոչ միայն նրանց Հաջորդականությունը կարող է փոխվել, այլև որոշ բանաստեղծություններ կարող էին զրգվել և ուրիշ բաժնում: Անգամ քառյակների շատ որոշակի թվազուց թեմատիկ բաժանումը չեղուններ ունի, քանի որ որոշ քառյակներ նույն Հաջողությունը կարող էին զրգվել նաև այլ բաժնում:

Ըստ ժողովածուների ժամանակագրական Հաջորդականության բնությունն էլ կանգնեցնելու է այլ բարդություններ առջև. այդ դեպքում ինչպե՞ս վարկենք այն ստեղծագործությունների հետ, որոնք նույնությունը կամ վերամշակված հրատարակվել են տարբեր ժողովածուներում, այն պոեմների հետ, որոնք ունեն լրատակված հրատարակություններ: «Միամանթո և Խիզդար» պոեմն, օրինակ, 1935-ից մինչև 1982 թ. ունեցել է մեկուկես տասնյակ հրատարակություն:

Ահա ինչու ենք հրամարդում հեղինակի՝ ըստ քնարերգության թեմաների՝ նպատակահարմար թվազուց ուսումնասիրության եղանակից և գերազատում առայժմ բնեղ երկերի քո-

վանդակության և արվեստի, բանաստեղծական մասնազուխան յուրահատկություններին վերաբերող մի խումբ առավել կարևոր հիմնահարցեր, որոնք հնարավորություն կտան Հովհ. Ներսիս բանաստեղծին ու մարդուն տեսնելու, դիտարկելու թե՛ իր ժամանակի մեջ և թե՛ նրանից դուրս:

2.

Ժամանակի իշխանություններից որոշ գանձող հանձարներն էլ երբեմն հարկադրված են լինում իրենց գեղարվեստական աշխարհը կառուցել նույն այդ ժամանակի ո՛չ թե նաչակով, այլ նրա ստեղծած իրավիճակի թելադրանքով: Է Նիրազը նոր-նոր էր ափսոսում համալսարանը, երբ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց խորհրդային ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը երկիր ներխուժած հիտլերյան զորաբանակների դեմ: Այդ պատերազմն էլ այլ հուն մղեց գեղարվեստի զարգացումը և թելադրեց նրա ընթացքը:

Բանաստեղծը բոլոր ազնիվ հոգիների պես կամավոր մեկնում էր ազգամահակառ, սակայն սովի և որրություն տարիներն իրենց տխուր կնիքն էին դրել նրա առողջության վրա: Այդ պատճառով նրան ժառանգության չզորակոչեցին՝ համոզելով, որ թիկունքում էլ շատ անելիքներ կան՝ մասնավոր բանաստեղծի համար: Նրա տարեկիցներից ու զառնակերներից շատերը մեկնեցին, կոզնեցին, հերոսացան, վերափորվեցին, զոհվեցին... Թագմաշաշտերից եկած յուրերը երբեմն հպարտությունը, երբեմն ցավով ու կսկիծով էին լցնում բնաստեղծի սիրտը, որից էլ ծնվում, շիկանում էր ատելություն կուր: Նենգարար թշնամու գեծ Հայրենիքի սիրուն համարժեք ստեղծության ու կրթով զրգվեց ընդամենը 6 տողից կազմված հանձարեղ «Էքսպրտմալ» մեր Հայրենասիրական քնարերգության բացառիկ գլուխգործոցներից մեկը, որը պոեմ է անվանվել Ավ. Թաշակյանի խորհրդով:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես.

Դուք հոգմերի պես խուժեցիք վայրազ:

Մենք մեր դեմ կանք մեր լեռների պես,

Գուք Հողմերի պես ոռնացիք վայրաք:

Բայց մենք Համերք ենք մեր լեռների պես-

Գուք Հողմերի պես կիրոշիք վայրաք:

Գեղարվեստական գլուխգործոցները թեև ակնթարթի մեջ են հղանում, նույնիսկ արագ են ստեղծվում, բայց իրականում նրանք Համախ հասունացած են լինում տարիների նախապատրաստությամբ և արվեստագետի սաղանդի ու վարպետության, մտղկային գեղարվեստական մտքի ամբողջ նախորդ զարգացման արդյունք են:

« Գիտն ք՝ «Էքսպրոմտը» Հանկարծակի գրվեց,- սառչ Լ. Երրազը մտերիմների շրջանում,- նոր աշխարհացուցեց պատերազմ էր սկսվել. մեծա կուտակվել էր նախորդ պատերազմի Հանդեպ ողջ ստեղծություն. Հայությանը պատճառած անորակելի աղետը, նրա ողբերգական Հետևանքները ինձ Հանգիստ էին տալիս:

Նոր սկսված պատերազմն ինձ հիշեցնում էր Հայոց աՀաժար Եղեռնը, մեր բղկաված ժողովրդին, միլիոնավոր զոհերին, մեր բռնազավթված Հայրենիքը... Տարնապի մեջ էինք բոլորս: Խորհրդային պետություն, նրա ռազմական ու ժի անպարտատ լինելու, զորքերի հարկադիր նահանջի, բազմաթիվ զոհերի փախու լուրերը աՀարեկիչ էին: Վտանա կար, որ գերմանաթուրքական զորակցությունն այս անգամ էլ նույնպիսի աղետ կարող էր դառնալ արևելահայության ու ՀաղիվՀաղ փրկված Հայաստանիկի Համար: Ես նախապես Հո էլի՝ մտածում, թե այդ պահին ի՞նչ եմ գրելու, բայց մեծա տարիներով կուտակվածը պոռթկաց գրելիս բերանով. և Հանկարծակի գրվեց «Էքսպրոմտը»⁶⁴:

⁶⁴ «Էքսպրոմտը» իբր շատ ակնի լայն ու խոր ընդդրում ունի, քան իր զուտյան ժամանակն ու շարժանքն են ներառել տալիս: Այն եենց աղաքս էլ ընկալել ու գործնալել է Սիրիայի բոլորս համառ քաղալի Դը-Ձորում: Հայոց մեծ եղեռնի անձող գոծորի ինչառասկն կարողաված Սուրբ Լուսնառակաց մատուռում: Ներքին քաղաքացող ետես խալի շուրջ բղբուղ պատիմաններով իննուց խալի իննի շուրջբոլոր տեսնում է

Սեղ իւադ-շ էշէի Սը լեռներտ պե,
Գուի շոշ Սըտ է պե իւա՛մեղիտ վ-սո-ց.
Սեղ իւադ ցու եշ-ւի Սը լեռներտ պե,
Գուի շոշ Սըտ է պե իւա՛մեղիտ վ-սո-ց.
Բայց Սեղ շոշ Սըտ է տէ Սը լեռներտ պե,
Գուի շոշ Սըտ է պե կէջոշէի վ-սո-ց.
Հովհաննէս Չիբրազի
1947թ.

Յուի. Չիբրազի «Էքսպրոմտ» մտածվող

Լովհ. Երրազը թեևակոխում էր բանաստեղծական մտածողության Հասունացման, գրական վարպետության և ստեղծագործական նվաճումների նոր փուլ: Արդեն 1942 - 46 թթ. լույս տեսան նրա «Բնաստեղծի ծայրը», «Նրբերի գիրք», «Լիրիկա» բանաստեղծական ժողովածուները և գրվեցին մի շարք պոեմ-

աշխարհում միակ քաց քաղունը նախատակների գանձը ու ոսկորներ և սակորներ (ցլած Սրմծայն Պայաստանի տաքերը վայրենիք բերված հողով:

Լուսնառակաց մատուռն ունի մահ քանգարան ցուցաբար: Լրա մը ծառն կանգնեցված է Կոկալական մի պատ եղևու կողմերում փաղցված եռաշար տասնյակ մեծաղբ լուսնակարներով: Ար կողմն ճաղեղն եղևու Սրմծայն Պայաստանի չն ու ծաղկուն բնակավայրերի լուսնակարներն են քարկնիք ու բազմանոս հայ գերաստանների պատկերումով: Պատի այս երեսն լուսնակարներից վրն, որպես մակագրություն կամ բնորոշում Գ. Չիբրազի «Էքսպրոմտի» առաջին եղևուտ տունն է:

Մենք խաղաղ մերք մեղ լեռների պես,
Գուք հողմերի պես ոռնացիք վայրաք:

Այսու եղևուքն մույս բնակավայրերի լուսնակարներն են եղևուքի հետո՛ւ ավերակներ ու մութբակուտներ, խշտանգված դիակներ ու կողոպտի ինտերո: Այս լուսնակարների վերևում Գ. Չիբրազի «Էքսպրոմտի» վերջին եղևուտ տունն է:

Բայց մենք հավերք ենք մեր լեռների պես,
Գուք հողմերի պես կիրոշիք վայրաք:

Կարող են վկայել Դը-Ձորի բոլոր ուխտագնացները - Ս. Ս.:

ներ, որոնց թվում և Հանրահայտ «Բիրյականը», «Տիրաւ Անձի վիրաը», «Հայոց զանթեհականի» առաջին տարբերակը և այլն: Արդյունապես էին և Հաջորդ ասանամյակները. «Գիրք սիրո և խաղաղության» (1950), «Հատորար» (1954), «Բնագ Հայաստանի»-ի երեք հատորները (1958, 1964, 1974), «Իմ ընկեր Լորիկը» (1961), «Հուշարձան մայրիկիս» (1968), «Համամարդկայինը» (1975), Երկերի Հինգհատորյակի չորս գրքերը (1980 – 84. Հինգերորդ գիրքը լույս չեստավ): Դեռևս անտիպ «Անի», «Թոնդրակեցիներ», «Քառասուն պատարագ», «Արու Լալայի վերագարձը» ծավալուն պոեմները և բազմաթիվ բանաստեղծություններ ու հազարավոր նամակներ:

Հայ գրականությունը դեռևս Հեռավոր անցյալից, ավելի որոշակի՝ վերածննդի և Լուսավորական դարաշրջաններից խոր ու լայն առնչություններ է ունեցել Արևելքի և Արևմուտքի առաջավոր գրականությունների հետ, օգտվել մեծ գրողների ստեղծագործական փորձից: Եվրոպական ու ասիական գրական ուղղություններին ու Հոստենքներին՝ կլասիցիզմին ու սենտիմենտալիզմին, ասանտիզմին ու անալիզմին, սիմվոլիզմին ու ֆուտուրիզմին արագորեն հետևեցին նրանց Հայկական արձագանքները: Այսօր էլ Հայ գրականության ու գրականագիտության մեջ ազգայինին զուգահեռ գործածվող շատ հասկացություններ ու եզր-տերմիններ Հունական, իտալական, ֆրանսիական, իսպանական կամ պարսկա-արաբական ծագում ունեն, ինչպես՝ նշված գրական հիմնական ուղղություններին և Հոստենքների անվանումները, ժանրերի՝ դրամա, պոեմ, բուլլադ, սոնետ, արիոլետ, գաղղի, ուուրայի և այլն: Կան և նշանավոր գրքերի վերնագրերի արձագանքներ. Բայրոնի «Աղատության ժամեր» գրքի վերնագրի նմանությունը էին ստեղծվել Արդյանի «Պարապ վախտի խաղալիք» և Ս. Շահազիզի «Ազատության ժամեր» վերնագրերը: Չարեցի բնորոշմամբ՝ «Թերհաշար, մարտիկ ու պոետ» Հայրերի Հայնի բնաբանական բանաստեղծությունների՝ ժողովրդական երգը և սոցիալական ու քաղաքական ազատագրության գաղափարները միահյուսող «Երգերի գրքի» Հայրեն թարգմանության 1935 թ. տպագրու-

թյունն էլ առիթ էր զարձել, որ նույնպիսի հսկումներ ունեցող Հովհ. Շիրազը 1942 թ. Հրատարակած բանաստեղծական նոր ժողովածուն վերնագրի «Երգերի գրք»:

Նոր բանաստեղծությունների հետ միասին Հովհ. Շիրազի «Երգերի գրքը» ընդգրկում էր նախորդ՝ «Գարնանամուտ», «Երգ Հայաստանի», «Բանաստեղծի մայրը» ժողովածուներից լավագույն գործեր: Սակայն այս փաստի հետ միասին չի կարելի չտեսնել մի ակնհայտ իրողություն ևս. այսպես կոչված «Հին» բանաստեղծությունները նա մեծամասամբ ներկայացրել է նոր մշակումով, որից էլ երևում է բանաստեղծի գրական հաշակի ու վարպետության անը: Երբեմն արժատական փոփոխությունը, ավելորդ համարած մասերի սղումով, երբեմն մեկ-երկու տողի, մեկ արտահայտություն, բառի, ակնած կենսագրության փոփոխությամբ նա հղկել, բյուրեղացրել է բանաստեղծությունը, զարժրել արվեստի կատարյալ գործ: Համոզվելու համար համեմատներ «Նիագարա» բանաստեղծության երկու տարբերակ: Այսպես, «Գարնանամուտ» գրքում կարգում ենք.

Իմ ուղեկում երալի պես սպիտակ
Յուլում ես միշտ ու բորբոքում միտքս թեմ,
Մեց աշխարհում երկիրն է մեր լույս միակ:
Այլպես և զու. – անուղիական մի ըրված:
Նիագարա, ես քո տաքերքն սպիտակ –
Երգի ժամին՝ դգում եմ իմ կրճքի տակ:

Չմտանանք, որ սա Չարեցի հավանած ու նրա իսկ մեղքով արտագրված բանաստեղծություններից է, որը Հովհ. Շիրազի «Երգերի գրքում» արդեն ունի առավել կատարյալ կառույց և ընդհանրացման առավել մեծ ուժ: Առաջին քառատող տան փոխարեն այստեղ տեսնում ենք երեք երկտող տուն: Նույնությամբ պահպանվել է միայն վերջին երկտող տունը.

Նիագարա, Նիագարա, կի՛րենս ցած՝
Բարձունքներից հավերժորեն խաղված:

Նիսպա՛րա, այս աշխարհում դառն ու ցուրտ
Մայր բնության հավերժական դու գայրույթ:

Նիսպա՛րա, ինչքան գուռա, ախ, կրկին՝
Անգուճեցներդ նեղ են քո խոլ տարերքին:

Նիսպա՛րա, ես քո տարերքն սպիտակ
Երզի ժամին՝ զգում եմ իմ կրճքի տակ:⁶⁵

Չափազանց բծախնդիր էր Հովհ. Շիրազն իր բառի և տողի նկատմամբ: Ես, ով հաճախ է մեղադրվել «չափի զգացման պակասի» մեջ, ավելորդ է համարել «Արևիկ» բանաստեղծու-թյան վերջին երկտող տունը՝

Եռայլի՛ր զինիդ իմ հզու Քսուում,
Ուր հավերժ կյանքի արևն է հոսում...

Նրա կրճատումից հետո այնքան կատարյալ է այս խոս բանաստեղծությունն իր բովանդակությամբ ու արվեստով, որ արժանիորեն անց է նվաճել Հ. Շիրազի հետագա հատընտիր-ներում ու հատորներում:

– Իմ բարի, իմ ջերմ, հարազատ իմ մայր,

Իմ բարի արև, ես քեզ եմ սիրում,

Քեզ եմ երազել կարտոսով անմայր

Իմ խեղճ մանկություն անույս օրերում...

Դու անհուն բաժակ, իմ հողու ոլորտ,

Ես՝ վայրկյան, իսկ դու՝ հավիտյան ճամփորդ:

Դեռ Հայրենական պատերազմից էլ առաջ՝ 1938 թ., Հովհ Շիրազը խորհում էր Հայրենիքի մասին և խոր ներշնչանքով գրում հետաքրքիր բանաստեղծություններ: Ավ. Իսահակյանի «Պանդուխտ որդին» բանաստեղծության հաղիվ զգալի «բույ-

⁶⁵ Դեսպազ մշակումներում Դ. Շիրազը «Նիսպարան» «ազգայնացել» է նախալեզրում ավելացնելով նետալ երևող տուճը

Նիսպա՛րա, նոր քեզ նեղ են ծորեր այս,

Ո՞րք լճեղվի իմ մայր Սրաքսն անձուրազ...

րերով» ու ներշնչումով է գրվել Հայրենիք վերագործող պան-դուխ Հայորդու երանելի հոգեվիճակը պատկերող շիրազյան բանաստեղծությունը, որը տպագրվել է «Երգերի գրքում».

Թափ ավի փոշին օտար ճամփեքիս

Եվ նորից սիրով Հայրենիք մտա՛,

Եվ բացվեց սիրտս , և դարձավ Հողիս

Նորից իմաստուն, նորից երկիսա:

Եվ վարդերիս մեջ արյուրը երգիս

Քիեց ինքն իրեն՝ կարկառով իրա,

Եվ խաչատաց սիրտըս, և դարձավ երգս

Նորից իմաստուն, նորից երկիսա:

Եվ Հայրենիքում թովիչ էր այնպես,

Դրախտ էր բացվում իմ սրտի վրա,

Եվ վառ ժպտում էր աշխարհն էլ ինձ պես՝

Նորից իմաստուն, նորից երկիսա:

Բայց Մեծ Հայրենական պատերազմական շարժման օտագ-նապալի մթնոլորտը Հովհ. Շիրազի բանաստեղծական աշխարհը հարստացնում էր նոր թեմաներով ու արամազրություն-ներով: Նորովի իմաստավորվում էր Հայրենիքը, նրա համար կուլի, անձնագոհությունն ու հերոսության թեման դառնում էր գերակա, բայց այն մարմնավորելիս գրանորվում է քնարեր-գուի գեղարվեստական յուրօրինակ մտածողություն: «Մարդ-կություն ամենհի ոտխի» դեմ պետք է միավորվեն մարդկային ու տարերային բոլոր ուժերը՝ չարի ձեռքը բռնելու, նրան օճ-բամառությունը կասեցնելու, երկիրը ավերումից, մարդկու-թյանը ահավոր ողբերգությունից փրկելու համար:

Քնարերգու Շիրազը դառնում է ոչ սովորական իմաստով ռազմերգու բանաստեղծ, այլ հարստացնում է պատկերաբար-ման իր զինանոցը այնպիսի ներգործուն միջոցներով, որ զգա-լի և տեսանելի են դարձնում ռազմաճակատի և թիկունքի բոլոր իրադարձությունները: Տանկ ու ինքնաթիռ, հրանոթ ու գնդացիք, արկ ու հրացան անմիջականորեն չի պատկերում,

բայց նրա բանաստեղծութուններում, քնարական միջոցներով Հայրենիքը արժեքորելու հետ միասին, ի Հայտ են դալիս Հոգեբանական այն գործոնները, որոնք զինվորին մղում են Հանուն ամենաթանկ սրբությունների, հանուն կյանքի գեղեցկությունների և հերոսության: Սրա համար անհրաժեշտ էր գաստեղծարժան միջոցներով բացահայտել թշնամու հրեշտո՞ր նպատակների բուն էությունը, մարդկության ստեղծած նյութական, պատմամշակութային ու Հոգևոր մյուս արժեքների բունգավթման կամ ոչնչացման, նվաճվելիք ժողովուրդներին Հավիտենական սարկություն գաստպարտելու ստոր նկրտումները: Այս իրազրություն մեք է հնչում Հայ բանաստեղծի ձայնը՝ մարդկության բոլոր առողջ ուժերին ու բնություն տարերքին անագործյն ոտխի դեմ համախմբված ճակատ կազմելու և մարդկությանը համընդհանուր աղետից փրկելու գերազնիվ նպատակով:

Ո՞վ է բանաստեղծը և ի՞նչ արժեք ունի նրա ձայնը: Զուտ փիլիսոփայական պարզ հարցադրում չեն սրանք, որ կապենք միայն գեղարվեստական ընդհանրացման հետ, մանավանդ որ հարցերի շիրազյան պատասխանները, թվում է, արտաբուստ գեղագիտական բնույթ չունեն և չեն էլ առնչվում տեսական Հայտնի կազապարներին: Ուրեմն՝ գիտությունն ինքը պիտի պարզի հարցի շիրազյան պատասխանների բնույթն ու էությունը: Աստված ստեղծել է երկինքն ու երկիրը, և բանաստեղծը նրանց ժառանգորդն ու որդին է: Սա հենց այն է, ինչ ժամանակին թուժանյանն էր ասում.

Տիեզերքի տերն եմ ես, ո՞վ է արյուք նկատել: —

Ահա Տիեզերքի տիրոջ այս իրավունքով է նա ստանձնել մարդու և աշխարհի դաշնությունը պաշտպանելու պարտականությունը: Բայց դա իրազործելու համար համապատասխան ուժ և կարողություն էր պետք, իսկ այդ ուժի Հպարտ գիտակցությունն ուներ բանաստեղծ Հովհ. Շիրազը:

«Բանաստեղծի ձայնը մարդկության ձայնն է».— պատգամել է գերմանացի հանճարը Գյոթենը: Հայ բանաստեղծ Հովհ. Շի-

րազի ձայնն էլ սուկ Հայ մարդու և Հայ բանաստեղծի ձայնն էր, այլ մարդկությանը սպասեացող մեծ վասնզն ազգարող տաղանապի ահագանգ, որի մեք միավորված են և՛ մեր ժողովրդի խաղաղության դարավոր ըզմանքն ու շարին պատճելու վճռականությունը, և՛ «ստղերի լուսն լեզուն», և՛ արատյանների դայլայլը, և՛ տարերային բոլոր գորությունները: Իսկ աշխարհի տարերք կողմերին, տիեզերքի անձայրածիր խորություններին գիմնելու բանաստեղծական իրավունքն էլ նարեկացիական, չհրապիրյան մարդասիրության մարմնական ու շարենցյան պատգամախոսություններով էին մղկրթով: Կյանքի անձաությունը տենչացող, մի ծաղկի մահով վշտացող, մըջունը ոտնատակ չանող բանաստեղծի ձայնն է դա, որ Հայ ժողովրդի անուշից ամենհի ոտխի դեմ կոպի է կանչում բոլոր մարդասեր ուժերին.

*** Ես բանաստեղծ եմ, Հավիթի որդի.⁶⁶**

⁶⁶ Անթրոպական բանաստեղծության մեք շխատով տպված են հավելումները: «Կրտսնական ընթացքը և վերջնական տարբերակի տարբերությունները ճիշտ պատկերացնելու համար բերում ենք 1942 թվին «Երգերի գրքում» տպվածի այն ձևերը, որ ենթարկվել են փոփոխության:

Ես բանաստեղծ եմ, երկնքի որդի

Բայց ես, որ երկնքի եղևիտ բերդի

Ամենի արևի խորտուրդը գարուն

Ես, որ գլուխդի զոճերը բացի

Եվ նրա ճատինն ցույց տալի մարդուն,

Օ՝ մարդիկ, ես որ մահվան դեմ ելա՝

Ամենախորուն տենչաղվ մարդու,

Ես հողազնդի կտուրից անա

Կանյում եմ՝ առեք շամբոն՝ անարկուն...

Ելել է մարդու թշնամին դաժան,

Երա դեմ մահվան անդունդը բացեք՝

Գառավե՞ծ ընկնի անդունդը մահվան...

Յե՛, ոտքի ելեք բվով աստղերի՝

Երկինքը մայրս է, երկիրը՝ Հայրս,
Ես գիտեմ լուսն լեզուն աստղերի,
Եվ արտույտների դայլայլ է մայնս: —
Բայց ես, որ զբեկել, շոյել ուզեցի
Որպես մանկանս՝ աշխարհը զպար,
Ես, որ սրտիս մեջ ծովից խոր լացի
Ուրիշի մի չիմ արցունքի Համար:
Ես, որ մըջյունը չարի ունաստակ,
Ես, որ սիրտ հնա ծածկան զեմ ելա՝
Անմահությունը տեղափոխեցի,
Ես հողագեղի կտուրից ահա
Կանչում եմ հեշտով մայր ծիծուռեակի,
Որի ձայերին ցինն է մտնելում,
Կանչում եմ, գոչում՝ սուր մերկացրեք,
Ելել է մարդու ոտխն ամեհի, —
Դուք նրան մահով կյանք խնկարկեցեք: —
Ես կհամբուրեմ շրթունքը մահի՝
Բայց նրան ներել չեմ կարող երբեք:
Ո՛հ, նա ուզում էր տիեզերքն անհուն
Ինկզղել խավարով այնքան ամեհի,
Որ արևն անզամ խաբխափեր միմուս,
Եվ ես մի լուսն խորշ չգտնեի...
Բայց սիրտս գանձ է գտաւի տազանայի,
Ու խեղճն՝ նրա լեզվովը սուկի,
Եվ ես կանչում եմ, գոչում եմ՝ ելե՛ք,
Հե՛յ, ոտքի՛ ելեք, ելե՛ք ամեհի,
ԼՅՈՒԿՍ, արեւելք,
Սրաբշավ ելե՛ք, —
Ես կհամբուրեմ ոտքերն իսկ մահի՝
Բայց նրան ներել չեմ կարող երբեք: —
Ես, որ տխրեցի մահով մի ծաղկի,

Ես, որ մըջյունը չարի ունաստակ,
Ես մոռնում եմ՝ նա մեռնի՛ պիտի
Եվ Հավերժ բնկնի մահվան ոտքի տակ...

Առաջին տողում ընդգծված **երկնքի որդի կապակցությունը** բանաստեղծը հետագա հրատարակություններում զարժանել է **Հավերժի որդի՝** երկնքին ու երկրին գումարելով նաև **ժամանակի գործոնը**, այդպիսով նախ վերացրել է Հաջորդ տողում **երկնք** բառի կրկնությունը՝ **երկնքի որդի և երկինքը Հայրս է, ապա երկինք — երկիր — Հավերժ** եռամիասնությունը ընդգծել է իր արձատներին և ուժի անասանություն կրտակցությունը: Այս ինքնագատահայտությունը է նա հիմնավորել թշնամու պարտություն անհրաժեշտությունն ու բարի կամքի հաղթանակի անխուսափելիությունը, որի շնորհիվ էլ բանաստեղծությունը դարձել է մարդասիրական մարտակոչ: Թշնամին ուզում էր այնպիսի խաղարով պատել ողջ տիեզերքը, որ «արևն անզամ խաբխափեր միմուս»: Համաշխարհային այդ աղետը պետք է կանխվեր, և մարդասիրական ուժերից, որոնց մարմնացումն է այս պահին բանաստեղծը, թշնամին պիտի ստանար կործանիչ հակահարված. և «Հավերժ բնկնի մահվան ոտքի տակ»:

«Բանաստեղծի մայրին» անմիջապես Հաջորդում է նույն ցավից ծնված նրա երկվորյակը՝ «Տարբերք» բանաստեղծությունը: Հանձարի փայլատակունտներ են սրանք: Գառնիկների արտասովորությունը զարմացնող այս բանաստեղծություններում կուսակցված է մտքի և զգացմունքի զիջիտարի ուժ: Թվում է՝ բանաստեղծի հրամանին ենթարկվելու են անձնագործում «Հավիտենություն պատկ» երկինքը իր աստղե գանդերով, Հավերժության զորեղ ակունք արեգակը, «Հավերժության գահ» լեռները, «բնության բաշ» ջրվեժները, վիշապանդունդ ծովերն ու օվկիանոսները և միանաբար պատուհանելու են «մարդու, արևի և Հավերժության» գեմ՝ ելած ոտխին.

— Էյ-հեյ, չարավեցե՛ք կանչված անտառներ,
Ալեկոմվեցե՛ք, ծովեր մթապին,
Խոյացի՛ր, արև, ի՞նչ է ջրվեժներ,

Մովհր, բարձրացի՛ք, խեղդեցի՛ք նրան,
Օվկիաննե՛ր, բացե՛ք անգուռնե՛րը մեր,
Վիշապների պես կու՛լ ավի՛ք նրան,
Նզո՛վքս նրան թող պատանք լինի,
Եվ մոռացու՛մք՝ Հավիթը գեղեզման...

Հայ նոր քնարերգուի թյան մեջ քիչ են այս ուժի և թափի մարտակոչերը, որոնց նախորինակները կարելի է տեսնել Ալիշանի բանաստեղծություններում, Նալբանդյանի, Պելիկեանյանի, Զիլանու քաղաքացիական քնարերգուի թյան մեջ, Պատկանյանի «Ազատ երգերում», Վարուժանի «Ճեղին սիրտը» գրքի «Կրկեսին մեջ» շարքում, Միամանթոյի բանաստեղծական շարքերում, Իսահակյանի «Հայդուկի երգերում» և Հայրենական պատերազմի շրջանում գրված մի քանի գործերում («Ռազմակոչ», «Հայ նարտարապետությունը» և այլն), Չարենցի տաղերում, ինչպես և աղջային-աղատագրական պոեզիայի շրջանում ստեղծված ուղղմաներում:

Կարելի է երևակայել միայն, թե ոգևորության ի՛նչ լիցքեր էին տալիս շիրազյան այս կրակի բանաստեղծությունները ֆաշիզմի գեժն հերոսաբար մարտնչող խորհրդային զինվորներին: Դրանք նախ և առաջ այդ քաղաքիների մեջ անբապնդում էին Հայրենիքի սերը և նրա համար կենաց ու մահու կռիվ իրավական ու բարոյական արդարացիության գիտակցությունը: Բարեբախտաբար կան նրանք՝ Հիացական վիսուսությունները, Հիչնեք երբեմնի զինվորի՝ Սերո Ռանդազյանի խոսքը այդ բանաստեղծությունների անմիջական ներգործություն մասին: «Երբազը Մեծ Հայրենականի տարիներին հզոր ուժ էր զինվորներին համար: Հաղթի՛ք մահ համաշխարհային ժամանակակից պոեզիայում այսպիսի նվիրվածություն գտնվի:

Իմ սուրբ Հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ո՛չ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքես՝

Դիտչիկ բոցը պիտի հուրհրա»⁶⁷:

Մեր մյուս նշանավոր զինվոր գրողը՝ Մկրտիչ Սարգսյանն էլ մի կարևոր վկայություն ունի: «1944 թվականին Ուկրաինայի Կրասնի Լիժան քաղաքի Հոսպիտալում հանդիպեցի մի Հայ կապիտանի, որն իր գաշառային պայուսակում, մարտական և շարային կանոնադրությունների հետ միասին, պահում էր Հովհ. Երբազի «Երգերի գիրքը», որը լույս էր տեսել 1942 թվականին:

— Բարձրում գնեցի, ուղղմանակառ գնալիս, — ասաց նա: — Երկու տարի է միասին եմք, ամբողջն անգիր գիտեմ:

— Զինվորական կանոնադրերի ընկերությունը չի բռնում, — ասացի ես:

— Սա էլ մարդկային Հոգու կանոնադրություն է, — փայտաց կապիտանը: — Ծակատային ընկերս է, ծանր օրերի ընկերս... »
(ընդգծ. — Ս. Մ.):

Այո՞, Հովհ. Երբազն ստեղծել էր «մարդկային Հոգու կանոնադրություն» և այնպիսի, որ դարձել էր զինվորի համար ճակատային եեղ օրերի ընկեր:

Պատերազմին, սուսկայի արյունահեղությունները և ավերումներին Հովհ. Երբազը հակադրում էր խաղաղությունը, մարդկային Հոգու գեղեցկությունը, ապրում մեր ժողովրդին բնորոշ ստեղծագործ աշխատանքի երազանքով:

Իմ երազի մեջ, կանաչ դաշտի մեջ

Կռիվն անցել էր, մանկալ էի ես:

Իմ երազի մեջ, դպար դաշտի մեջ

Խոփես տակ ընկավ անուշակ մի հեղ —

Ի՞նչպե՞ր դաշտի մեջ, կանաչ դաշտի մեջ

Կարծես թե սիրտս սոսկեցին կրծքես...

Պատերազմի շրջանի Հովհ. Երբազի քնարերգու թյան մեջ Հայրենիքը ներկայացվում է առավել լայն ընդգրկումով ու

⁶⁷ Գ. Դովնաթան, Զրույցներ, էջ 91:

⁶⁸ «Գովհանճես Երբազի մասին» ժողովածու, էջ 78:

իմաստավորումով: Այն միայն կտրհրդային Միությունը կամ նրա պետական սահմաններում ծվարած Հայաստանը է: Դա նաև «չուս ու ամայի» մեծ Հայաստանն է՝ իր ողբերգական ու Հերոսական պատմությամբ, ծանրածանր կորուստներով և արդար հատուցման հավատով ու գայիքի հույսերով: Այլապես չէր ծագի հայ մարդու համար ամենացավագին հարցը՝ ո՞րն է մեր Հայրենիքը:

Միանգամայն բնական է, որ այդպիսի հարցադրում պիտի ծագեր Հենց Հայրենական պատերազմի օրերին, որովհետև Հովհ. Շիրազը քաջ գիտակցում էր, որ գերմանական ֆաշիզմի դեմ հայ ժողովրդի, խորհրդային բոլոր ժողովուրդների, աշխարհի առաջնորդ ուժերի պայքարը Հենց Հայաստանի և Հայասթյան պաշտպանության համար է: Այսպես է ստեղծվել մեր Հայրենասիրական քնարերգության գլուխգործոցներից մեկը՝ հանրահայտ «Մրն է, բարս, մեր Հայրենիք» բանաստեղծությունը:

«Մավերում» կամ գրեթե աննկատ մնացած բանաստեղծություններ կը կան, որոնց մեջ թեև հայրենիքի սահմանները չեն մասնանշված, սակայն ուշիմ ընթերցողը կարող է հասկանալ հեղինակի խոհերի ու զգացմունքների ամբողջ տարրույթյունը: Հայ գինձորը պատերազմ էր մզում Հայաստանից դուրս ուրիշ երկրների տարածքներում: Անգամ այն երկրներում, որտեղ ծավալվում էին ռազմական գործողությունները, պատերազմին մասնակցում էին իրենց ազգաբնակչության 6-7 տոկոսի շահով: Իսկ Հայաստանը մասնակցում էր առանպատանի ավելի՛ իր բնակչության գրեթե երրորդով, որը, անուշտ, հատուկ քաղաքականության հետևանք էր: Այլապես ինչ՞ու այն ժամանակների մեկ միլիոնանոց Հայաստանից՝ Հայրենական պատերազմի շուրջ 600 000 հայ մասնակից, իսկ այդքանից 350-400 000 զոհը սոսկալի թիվ էր:

Պատերազմին մասնակցում էին նաև սփյուռքահայերը՝ իրենց հանգանակություններով ստեղծված «Մասուեցի Դափիթ» և «Մաշալ Բաղրամյան» տանկային շարայուներով և ուրիշ եզանակներով: Փաստորեն դա նաև հայ ժողովրդի Հայ-

րենական պատերազմն էր՝ կորցրած հայրենին աղատագրելու հույսով: Հայ գինձորին հավատացնում էին, թե Բեռլինը գրավելուց հետո Լանն են աղատագրելու...

Եվս մի բանաստեղծություն, որը գրվել է Հայրենական պատերազմի տարիներին և քունիցս վերատպվել է, և որի մասին հուշադիր Ա. Գրիգորյանին իբր հայտնի է եղել 1937 թ. Եսահատակված Չարենիցի կարծիքը դեռ 1934 թվից: Այն ամբողջությամբ տպվել է Մ. Մանուկյանի կազմած գրքում 2002 թ.:

Պարզվում է՝ Հովհ. Շիրազը դեռ 1942 թ. գրած է եղել «Մասիական» խորագրով շարք. այդ շարքից այս բանաստեղծությունը առաջնորդում տպված է եղել արտերթիկ սխալ նշումով՝ 1944, երկրորդ տողի աղավաղումով և առանց ընդգծված վերջին ընդհանրացնող անչափ կարևոր երկու տողի: Բերում ենք Մ. Մանուկյանի հայտնաբերած տարբերակը, որին խմբագրիչ գրիչ ու մկրատ չեն դիպել.

Մասիական շարքից

Կովի գալտի մեջ՝ բնկա վիրավոր,
Օտար մի աղբիկ խոնարհվեց վրաս,
Եվ ապարիվեց ասես վերս խոր,
Երբ բացեց կապույտ աչքերը վրաս,
Թվաց, թե բացվեց հեռվում հեռավոր
Իմ Հայաստանի երկինքը վրաս,
Բացվեց, որ թռչե՛մ ուր հողն ես իմ հոր,
Բեզ զոհվե՛մ, որ ինձ անհաս չմնա...⁶⁹

1942 թ.

Բայց ճշմարտությունը թեկադրում է նաև ասել, որ առանց դուս ազգային թեման մարմնավորող կամ Մասիան նվիրված բանաստեղծությունների և այդ փոխարերությունը ստեղծած բանաստեղծական պատկերների էլ, որոնք նույնպես միայն

⁶⁹ Երկրորդ տողի ասանցն **օտար** բաց տպված է եղել **օտա**, իսկ վերջին ընդգծված եզվտողը հաճել է:

ազգային արժեք չեն, Հովհ. Շիրազը մեծ ու նշմարիտ բանաստեղծ է նաև համամարդկային թեմաների մարմնավորումով:

Ներշնչվելով միջնադարյան տաղերգուներից և Պեշիկմաշչյանի, Հովհաննիսյանի, Խաչակյանի, Մեծարենցի, Վարուժանի ու Տերչյանի պոեզիայով, բայց ավելի շատ իր սեփական բանաստեղծական խառնվածքի ու գեղապիտանական ծրագրի թեկադրանքով Հովհ. Շիրազը «Գարնանամուտից» հետո էլ նոր ուժով հնչեցրեց գարնան թեման՝ նրա մեջ տեսնելով կյանքի նորոգման, թարմության ու վերածնությունից խորհուրդը: Նրա բանաստեղծություններում գարնանային բնապատկերներն ստացան ուրույն բովանդակություն և իմաստ, ներկայացան որպես մշտանորոգ մեր ժողովրդի նորագույն ժամանակների կենսափոխոստիակություն, որպես հարստեման բանաձև:

Երանի՛ մեռնող մյուսներին, որ միշտ՝
Եսեկից կանաչ գաբուն են թողնում...

Բայց, սրանով հանդերձ, այդ «կանաչ գարնան» շարունակվող կյանքի գեղեցկացման ուսմանտիկան ազգային բանաստեղծի մղում էր դեպի աշխարհազգացողության բարձր լարման ոլորտներ, տանում դեպի հանուն մարդկային երջանկության տարերային ուժերի զեմ մաքսառում ու անձնագոհություն:

Նորից գարուն է, սարերը ելենն,
Կայծակների հետ բավված ամպերում...

Հանուն կյանքի այդ պայքարի և զոհարելության մեջ էր բանաստեղծը տեսնում կյանքի հավերժության իմաստն ու խորհուրդը, իսկ իր քնարական հերոսի՝ կենսական գործի կարելիություններով օժտված մարդկային սրտի և ակեր կաղնու ու գառաձայլ արծվի փոխարերական համեմատությունը հենց այդ է խորհրդանշում:

Միրոս ակեր կաղնու մեջ դրի՛
Չորացած կաղնին նորից բողբոջեց,
Բարձրացավ, կանգնեց ընդհեմ հողմերի

Եվ ջահկացած՝ նորից շառաչեց:
Ու մատաղ սիրտս՝ նախքանքի ծարավ
Ջատախ արծվի կրճբի տակ դրի, —
Մեռնող արծվիք թև առավ, Թռավ
Որտի ետևից ջահկ օրերի...

3.

Դասական հայ քնարերգության այդ ազնիվ երակը՝ Հովհ. Շիրազը, որ գրական ազգակցության բացառիկ օրինակ էր նորագույն ժամանակներում, և՛ քնարական, և՛ կալիական արգասարեր միրքերով ու մտածողությամբ օժտված լինելով, իր ստեղծագործությամբ կապակցող կարևոր օղակ եղավ 1930-ական թթ. սչնչացված ու աքսորված բանաստեղծների և իր հաջորդների միջև՝ ծավալելով շուրջ կեսդարյա գրական բեղմնավոր գործունեություն, ջանալով նոր սերունդների գիտակցության ու էություն մեջ մշտադրուն պահել մարդկայնորեն գեղեցիկի զգացողությունը, կորուսյալ հայրենիքի գաղափարն ու այն վերագտնելու հույսը, ազգային զգացմունքը, ոգին ու միտքը:

Այս իմաստով Հովհ. Շիրազն իր ստեղծագործությամբ, ինչպես իրենց ժամանակին Արսլյանն ու Նալբանդյանը, Գասկանյանն ու Լաֆֆին, Թումանյանն ու Խաչակյանը, Վարուժանն ու Սիմանյանն, Տերչյանն ու Ջարենցը, նորագույն ժամանակներում հայոց պատմության, մեր ազգային ոգու և մտքի, մեր դիմագծի ու նկարագրի, մեր սիրտ և նվիրվածության, մեր ազգային երազանքների լավագույն պատմաստղն է սերունդների գիտակցության մեջ: Մրանով հանդերձ՝ նա լայնախոս փոխոստիակ էր իր բազմալար քնարով, որը, հրաշալիորեն գիտակցում էր բանաստեղծության ու բանաստեղծի գերը հայ ժողովրդի կյանքում:

Ես՝ վերջին արջան Հայաստանի,
Ես՝ պոետների արջան ջահկի, —
Իմ Թազը խոսք է իմ ծիրանի,

Որ միշտ իմ զլիւից վեր եմ պահել:
Եվ Արևելքն է իմ ծիրանին,
Ինձ գայտան է գրիչս պերճ,
Եվ իմ սրբունն է երգիս գիւնին,
Ես՝ պատերազմին հավիտյան վերջ...
Բայց թաղս թեկուզ սրս գտանս
Դեռ մանուկ գլխին իմ անհազուրկ,—
Քեզ կխոնարհեմ, ես թեզ ծառս,
Ինձ թաղազրամ իմ ժողովուրդ:
Բայց ինձ գահընկեց թեկույն սրա,
Թե չհամբուրեմ փոշին ճամփուղ,
Թե սանդուղք չանեմ իմ թաղը թեղ,
Որ հողար ու մի Մաախ ելեես...

Բանաստեղծների «Չահել արբան», որի թաղը միշտ իր զլիւից վեր պահած հայրենի խոսքն է, պատրաստ է գահընկեց լինելու, իր գահն ու թաղը վերելքի սանդուղք դարձնելու: Նրա անմահության աննշն անդամ անձնական չէ. հանուն հայության հարատևման՝ նա իր մեծ կոխիչ էր վարում նույնիսկ մահվան դեմ, չէր ուզում «հասփայտյա բուն ունենայ», որպեսզի հետո, «գարը մի օր կենդանություն ունենայով», նորից պետք գա, եթե իր ազգը նեղություն մեջ Հայաստանի:

Լոկ մի բանի համար կուզեմ անմահություն ունենայ,
Այս աշխարհում դարը մի օր կկեղանություն ունենայ,
Որ թեղ նորից գամ սգնություն, ա՛ղկ ու, կրք օր նեղ է բնինս,—
Ահա ինչու չէի ուզի հավիտյան բուն ունենայ:

Անշուշտ, Հովհ. Շիրազի բոլոր ստեղծագործությունները չունեն նրա արգիստին բնորոշ չզոր ուժն ու բարձր մակարդակը: Սակայն թե՛ մանկություն, թե՛ դարձան ու բնություն, թե՛ սիրտ ու ժայրական, թե՛ հայրենիքի, թե՛ խոհանոցի թեմաներն արժարժեցով նա ստեղծել է դասական արժեքներ:

Մարդկային կյանքի ճանապարհի մասին նրա քնարական խորհրդածությունները ձեռք են բերում իրոք համամարդկային հնչողություն: Դրանք փրկիսոփայական մեծ խառցում-

ներ են և չեն հանդուրժում որևէ սահման ու պատճեն: Անբուկղենքի քնական հաջորդափոխության և մահվան անխուսափելիության բնույթումը բանաստեղծին միշտ էլ կանդենցրել են տրեղերական առեղծվածները բացահայտելու, մահվան դեմ կյանքով էլնելու. «գերեզմանի դեմ մանկան սուկի օրոցը գնեալու»՝ անհրաժեշտության հասակ բնույթման առջև, որը նրան մղում էր նաև «վշտին հաղթելով իմաստուն դարձած» մարդուն արարչական հատկություններ վերագրելու, աստվածայինը հենց մարդու մեջ որոնելով հայտնաբերելու բարձրագույն գիտակցություն:

Մարդու սնցողիկության և բնության ու կյանքի հավիտենականության հակասությունը աշխարհի բոլոր մեծ մասնողներին կանգնեցրել է ծանրագույն վշտի առջև: «Բանական արարածս մահվան եմ զատապարտված անբան չորքտանու պես»,— մահվան դեմ իր վեճն այսպես էր բանաձևում Բարձրալից ապրելու իրավունք պահանջող մեծ ողբերգակ նարեկացին, սրա արձագանքը հնչում էր բուշակյան հայրենիներում, «մեծ բեզարածի»՝ Սայաթ-Նովայի խաղերում՝

Ումբրըս կրաքի պես զընայ՝ ծառը չըխերած գիտեմար...

Վաղամեռիկ հանձարը՝ Պետրոս Դուրյանն էր ապրելու իրավունք ազերսում Բարձրալից՝

Երկնքի՛ ստաղիր, հողգույս մեջ՝ ինկեք,
Կայծ տվեք, կյանք՝ ձեր սիրահարին հեղ...

Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Մեծարեղցի բանաստեղծություններում ու պոեմներում, արձակ էջերում նույն ցավի աղաղակն է հնչում: Այս թեման մարմնավորելիս էլ Հովհ. Շիրազն այդ մեծությունների ժառանգորդն է:

Աշխարհը, բնությունը կարծես մի անապրեր հանդիսատես են անվերջ կրկնվող ու շարունակվող, օրորոցից գերեզման ձգվող մարդկային կյանքի ճանապարհներ: Արևելքի և Արեմուտաքի մեծ բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում, բուն կենսասիրության հետ միասին, երգել են «արա-

զաթուիչ զեղեցկութիւնը կյանքի» և արտահայտել «Հափտե- նական կսկիծը բոլոր գոյութիւններին»: Այլ. Իսահայանի այս բանաստեղծով ներշնչված ու սեփարական կենսազգացողութեամբ Հովհ. Շիրազը հյուսել է կյանքի հարաշօտ պատկերն ու մահ- վան դեմ մարդու անզորութեան ցամփ թելազրամ իր երգը:

Գրութեան շարժասխիթ եղել է Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմութիւն» ինքնակենսագրական վեպը, որի Հեղինակին էլ Հովհ. Շիրազը նախապես նմիրած է եղել նույն գերնագրով իր բանաստեղծութիւնը: Հետագայում, զբնթն անխափար պահե- լով բանաստեղծութեան քնազիրը, Հեղինակն այն անվանել է պոեմ՝ նկատի ունենալով այդ ժանրի որոշ հատկանիշները խոստոված արտահայտութիւնը նրա մեջ:

Մայրական ձև ընդ օրոցըն օրոցը.

Գարնան ծիծառներն եկան ու անցան, —

Գայձառ պատանի՝ ծաղկի պես բուրբող, —

Գարնան ծիծառներն եկան ու անցան...

Վառ երիտասարդ՝ սրտանց սեր փնարող,

Գարնան ծիծառներն եկան ու անցան...

Քաղաքի կարիճ՝ կռիվներ վարող, —

Գարնան ծիծառներն եկան ու անցան, —

Գաղկահար ծերուկ՝ մահվան դեմ զինող,

Գարնան ծիծառներն եկան ու անցան, —

Ոսկեզօծ զազալ՝ վրան մի բուռ Հող, —

Գարնան ծիծառներն եկան ու անցան...⁷⁰

⁷⁰ Իմ ուսուցիչ Դր. Յամրազյանը տարիներ շարունակ կատարում էր ինձ. «Քանի զեռ քեզնից չեմ լսել Դր. Շիրազի լավագույն խոհարարական բանաստեղծութիւններից մեկը, չեմ ասի որը, դեռևս քեզ չիրազագետ յիշմարես»: Անայում էի խորհել որը, քայքայ և մտածում էի տեսնու այդ ո՞ր բանաստեղծությունն է, որ ինձը գիտի, ու ես չգիտեմ: Բայց ասա մի օր քնարերգույան ու քնարական քանաստեղծության մասին քանակնին նմանիդ մի քննարկման ժամանակ, նա վճարար սասց. «Դե ի՞նչ կսիր, քն որն է ինչպէս կյանքից ու սրտից զխառ ինչպէս քնարական բանաստեղծությունը, և ինքն սկսեց ներշնչումով արտասանել:

Մայրական ձեռքըն օրոցըն օրոցը.

Գարնան ծիծառներն եկան ու անցան...

Մարդու տարրեր հասակներին և մահվան տարրեր տեսակ- ներին կանառես զարնան ծիծառները մարդու ծնվելուց ա- ուաջ էլ, ապրելու ընթացքում էլ, հետո էլ պիտի գան ու նստե- ղելով անցնեն իրեն մարդկային զրամայի ու ողբերգութեան հավիտյան անտարրեր կանառեսներ: Նրանց ճիշն ու նստե- ղյունը տարրեր խորհրդանշումներ ունեն օրորոցից մինչև գերեզման մարդու հասակին ու վիճակին համապատասխան: Իայց ահա զարմանալի մի լավատեսութեամբ մահվան հզոր իշ- խանութիւնը չի բացարձակացվում: Մահն իր ժամանակագիտը հաղթանակով կսկիծ ու դառնութեան, անշուշտ, պատճառում է մարդուն, որն իր հարազատներին, մտերիմներին կորստյան վշտի մեջ զորեղանում, տակալու ուժ է գտնում տանելու ճակատագրի ծանրագույն հարվածներն անդամ և դառնում է ավելի կենսասեր, հաստատում կյանքը, իմաստավորում նրա հարասն քարունակականութիւնը:

Նման մի խոսացում է և հետևյալ մենախոսութիւնը.

Գազարե՛ք, վայրկյաններ, տարիներ, դադարե՛ք

Ժամանակ, դադարի՛ր հոսելուց,

Ինչ տարաք՝ Հերիք է, ինձ նորից մի՛ տարիք,

Հոգնել եմ ես մահից խոսելուց:

Գադարի՛ք, ժամանակ, Հերիք է՛ք, որ տարաք

Մանկութեան հասակու երազուն,

Հերիք է՛ք պատանի հասակու՝ քեզ ավար,

էլ ի՞նչ ես իմ սրտից գու ուզում:

Ո՞վ դժնի, Հերիք է՛ք հասակս պարմանի,

Ի՞մ սակի հասակը Հերիք է՛ք,

Քարացի՛ր, ժամանակ, դեմի սիրտս մի՛ տանի

Գեթ արժաթն ինձ մնա թող անմեռ:

Կանգնեցե՛ք վայրկյաններ, տարիներ, կանգնեցե՛ք,

Ձեր ոտքին ինձ փոշի մի՛ք անի,

Վայրկյանիս հավիտյան ապրելու դուռն քայքայ,

Կյանքս ձեր ոտքի Հետ մի՛ք տանի:

Քարացի՛ր, ո՞վ դժնի, դադարի՛ր հոսելուց,

Ո՛վ դժեի ժամանակ, մի՛ սուրա,
Հողնեկ է իմ սիրտը իր մահից խտեղուց,
Հողնեկ է սգին էլ իմ ստեղծ...

Ամենից լավատես համարվող հայ մեծ բանաստեղծը՝ Լուի-
Քումանյանն անգամ երբեմն ընկնում էր գորշացող կյանքի
տղեկություններից, իրեն դառնացրած, իրեն օտարացած, վիշա
ու լեզու չհասկացող ապրող «չըբբրի», «անսիրտ, փոքրօգի,
զրծծի ու կոպիտ», «չլրբորեն հանգիստ չնչին մարդուկներից»,
նրանց «հոգու ձգում» և «արտ մփխում» մարդ Հայացքնե-
րից, և «ուճայե արտունջով» էր անցնում իր «սիրած մարդ-
կանց», իր «լլով հույսերի գերեզմանների շարքերի միջով»:
Ողբերգականության հասնող թուժանյանական այս «արտուն-
ջը» ժառանգակաճեղճին փոխանցվել է նրա հաջորդին, որը հա-
մանման կենսական հանգամանքներում կարծես ավելի լա-
վատես է, քան իր հանճարեղ նախորդը:

Գարուն և ձմեռ, սրբոց և գերեզման հակադիր փոխաբե-
րությունները՝ որպես համեմատություն կամ հակադրության եզ-
րեր, համայն են հանդիպում Լուիճ. Նիրադի բանաստեղծու-
թյուններում ու քառյակներում, փոքրիկ գազելներում: Բայց
ստորև ներկայացվող «փոքրիկ» բանաստեղծությունը հազ-
թանակող կյանքի հիմնն է և մահվան անխուսափելիության
գիտակցությունն ունեցող Հայաս մարդու դառը քմծիմազը՝
զգամես ու անողորմ մահվան երեսին:

Այդքան վիշա ու ողբերգություն, ցավ ու դառնություն տե-
սած հայ բանաստեղծը նաև դարձանայի այլասեր էր իր բոլոր
նախորդների ու հատկապես Նարեկացու և Մեծարենցի նման:
«Անասնձնական ուրախության» կարգախոսող ազգային մտա-
ծելակերպի վերածած բանաստեղծը միայն կարող էր գրել.

Ինչքան թարթիչ է ընկել իմ աչքից,
Այնքան մարդիկ են իմ աչքից ընկել,
Այնինչ կուզեի ոչ մեկի աչքից,
Ոչ մեկի սրտից ոչ մեկը չընկներ,
Այնինչ կուզեի պոկել մեղսանքից

Ողջ մարդկությունը՝ սրտին մեջ գրկել...

«Ով ինձ դաժեց, հետո ծղոտաց՝ նրա զավը մոռացա»,
- իմաստախոսում էր բանաստեղծն ու շարունակում խորհել «ողջ
ազգերի վշտերը» որպես իր Հայրենի վշտերն զգալու մասին:
Իսկ սա կենսասեր քնարերգուի մի յուրատեսակ ողբերգական
լավատեսության արտահայտությունն է՝ Մեծարենցի «Համաշ-
խարհիկ բարախումբների» պես մոլորակի բոլոր ծայրերում ու
անկյուններում «Հազար գույնի» ու ցեղի մարդկանց ընկալելի
ու հասկանալի:

Ինչքան գարուններ ձմեռներ դարձան,
Աշխարհը կոկոն, ջահել է նորից:

Ինչպիսի՜ մարդիկ եկան ու անցան,
Աշխարհը կոկոն, ջահել է նորից, -

Անթի՛վ օրոցներ գերեզման դարձան՝
Աշխարհը մանուկ, ջահել է նորից:

Այդ «հայիտյան ջահել» աշխարհի մի անկյունն է բանա-
ստեղծի Հայրենիքը՝ տառապած ու բզկափած հողով, որի մի
փրկված նմիրական պատասխիկ վրտ հայությունն իր նորոգ
կյանքն էր կիրառում խորհրդային ժամանակներում: Բանաս-
տեղծի ըմբռնմամբ՝ այդ փոքրիկ Հայրենիքն իր հող ու ջրով,
իր լեռ ու ձորով ամենից թանկն է աշխարհում՝ որպես աշխար-
հացիկ հայության հույսի փարոս, որն արժանի է ամենախոր
սիրտ և ամենաթանկ զոհաբերության:

Հեռույալ բանաստեղծության մեջ որպես Հայրենիքը մար-
նավորող պատկերավորման-արտահայտչական հիմնական մի-
ջոցներ են գործածվել **ժաղիկ, Հայրենի ջրեր, սև ժայռ և հող**
փոխաբերությունները: Նրանց այլաբանությունը է ձևավորվում
միտք ու զգացմունք միավորող և բանաստեղծի բազմաձև
արտահայտող գեղարվեստական այն քաջատիկ պատկերը, որը
գարծն է Հայրենասիրության բարձրագույն չափանիշ:

Կուզեմ ժաղկի պես բուսնել մեր ափին,
Որ միշտ մեզ նայեմ, Հայրենի ջրեր.

Բայց աչնան ձեռքը կարկն ծաղկին,
էլ ձեզ չեմ տեսնի, Հայրենի ջրեր:
Կուզեմ ձեր ափի սե ժայռը լինեմ,
Բայց նա չի զգում, Հայրենի ջրեր,-
Հող պիտի դառնամ, որ Հավիթ անցնեք
Իմ սրտի միջով, Հայրենի ջրեր...

Առանձնապես ուժեղ է բանաստեղծության ավարտը՝ ընդ-
գծված երկտող պատկերով: Մարզու և Հայրենի Հողի միաս-
նության, Հայրենիք - ժողովուրդ ամբողջակամության և այդ
գերզուլուծունեքին նվիրվածության ծախն, թվում է, ավելին
հնարավոր չէ ասել: Սակայն Հովհ. Շիրազն ավելի է խորանում
այդ միասնության էության մեջ և Հայտնաբերում, որ Հայ-
րենիք-քորթանքը Հայ մարզու ազգային քնափորության, ոգու
և կամքի դայակն ու զատարարակն է, նրա ազգային նկարա-
զրի ձևավորողը: Ահա ինչու նեղ ու միակողմանի են բանաս-
տեղծին այսինչ կամ այնինչ թեմայի, մանավանդ որպես ազ-
գային ցավի ու Մասիսի միայնք երգչի արժեքողները բանա-
ձևումները: Նրա բազմալար ու բազմաթեմա քնափորության
մեջ մանկություն, գարնան, օրը, մոր, Հայրենիքի, խոհական և
Համամարդկային թեմաների կողքին զբեթե անտեսվել են
Հայոց ոգին մարմնավորող դործերը: Թե՛ բանաստեղծություն-
ներում ու քառյակներում, թե՛ արդիական ու պատմափյու-
փայական պոեմներում նա նախ և առաջ իրեն դրսևորել է
որպես Հայ ժողովրդի ոգու բանաստեղծ ու Հողու կենսապիր:
Առիթ կուեննանք անդրադառնալու «Բիրիլական», «Ինքնեք-
զանք» Համամարդկային», «Հայոց դանթնականք» պոեմներում
Հայոց ոգու և Հարատեման կամքի դրսևորման մարմնա-
փորումներին: Այժմ նկատենք, որ «Որպես վշտի օրերն Հայոց»
քերթվածն էլ մեր ոգու խորության ու կամքի բարձրության
փաստարանությունն է: **Չորիք և լուսնք** փոխարենություններն
այստեղ էլ են դարձել հիմնական արտահայտչամիջոցներ, որ
կրում են պատկեր-համեմատության ամբողջ ծանրությունը:
Այնքան միասնական են հակադիր թվացող այդ երևույթները,
այնքան ներդաշնակ՝ Հայ մարզու քնափորությանն ու էութ-

յանը, որ դժվար է որոշել՝ ո՞ր մեկն է մյուսով պայմանավոր-
ված.

Որպես վշտի օրերն Հայոց
Այնքան խորն են ձորերն Հայոց,
Այնքան խորունկ ու այնքան մութ,
Որ գետերը մեր Հորձանուտ
Մթնում ահից մոնչացող
Մորը կորցրած ու դուրս փախչող
Վիշապանոց են ինձ թվում
Մեր ձորերի
Մութ անձավում:
Բայց չզիտեմ՝ ձորե՞րն են մեր
Ոգուն տվել խորքեր խորին,
Թե՛ մեր ոգին է շուսյալի
Իրթնությունն այս ձորերին:

Որպես կամքի դարերն Հայոց
Այնքան բարձր են սարերն Հայոց,
Այնքան բարձր ու այնքան վեր,
Ու քրտինքը մեր ճակատից
Միշտ ամպերի ձեռքն է սրբել,
Ու կթվա՞ր գաղաթներից
Մարդ կարող է
Ասող Համբուրել:
Բայց չզիտեմ՝ մեր ոգի՞ն է
Բարձունք տվել մեր լեռների,
Թե՛ մեր ոգուն՝ սարերն են վե՛հ
Տվել բարձունք սասեղային...

Անձնական խոհերի ու զգացմունքների Համամարդկայնաց-
ման իմաստով էլ է Հովհ. Շիրազը բացատրի: Բանաստեղծու-
թյուններ ունի, որոնք մարդկային ներայնաբնի, պերթվող ու
զրամատիկ Հողեփրեհակների Հանճարեղ մարմնավորումներ են՝
այնաբնի մեծագույն սիրերդակների գրչին արժանի: Զգաց-

մուշքների արտակարգ խորությամբ ու անմիջականությամբ, մտքի զարմանալի հետևողականությամբ օժտված կուռ կառույցներ են դրանք: Քնարական նուրբ ու քնքուշ կոթողների կողքին առկա են սայաթնոջան գերխիտ հզորության տաղեր ու երգեր՝ ափորիզմի հասնող բանաձևումներով, ինչպես՝

Ինձ իմ սիրո պալատներից որք գուրք արին, էլ Ի՞նչ երգեմ...

Բայց ողբերգական այս իրավիճակն ունեցել է իր «նախապատմությունը»՝ «խորն ու կապույտ աչքերով» մանկական դասընկերուհուց մինչև Սուսանն ու Այծյամ, վանուհի Իդա և զեռ էլի ուրիշներ, որոնց նվիրել է բազմաթիվ հրաշալի բանաստեղծություններ: Սակայն կյանքում ավելի շատ կանայք են իրեն են սիրել, քան ինքը՝ նրանց, իսկ սիրո երջանկությունն էլ տանել է «գառը բերկրանքի ու բաղցր տանջանքի» ակնխարթ՝ վիրավոր հոգու հարատև առաջապանքի ծովում:

Ի՞նչ էլ սիրաբ սիրո ճամփին զիպավ քարի, Սայաթ-Նուվա,

մորմոքումով խոստովանել է բանաստեղծը միջնադարի վերջի մեծ առաջադաս սիրահարին՝ Գ. Անակի բնորոշումով «ողբերգականորեն անհույս սիրո երգչին»: Քնարական այդ խոստովանությունն ունի դրսևորման տարբեր ձևեր՝ փոքրիկ վիզնատող զագեղներից ու քառյակներից սկսած՝ մինչև ծավալուն բանաստեղծություններ ու ընդարձակ պոեմներ: Դրանք մեջ շատ են կենսական խոր բովանդակությամբ գերխիտ մանրաքանդակները, որոնք մարդկային բարոյ ու բազմաչեղա կյանքի տեսանելի մասն են միայն, իսկ բանաստեղծի բուն ասելիքն ընդգրկված է գեղարվեստական տարողունակ պատկերի ենթաշերտերում:

Գինասան բաժակի նման ձեռքեձեռք անցած մի աղջիկ,
Ինձ մթնով այցի է գալիս ցնորբով հարբած մի աղջիկ...
Գրեմ՝ ինչ բաժակ է եղել, բայց այնպես մարուր է թվում՝
Երբ ինձ տաք արցունք է բերում աշխարհից խարված մի աղջիկ...

Շատ բանաստեղծություններում ջահելության ու վայելքի գեղեցկությունը զրսևորվել է սիրո վերհուշի ու երագի մեջ,

ուր վշտի հետքն անզամ կարծես չկա: Ստեղծվել է շատ ինքնատիպ մի զուգադրություն, որի մեջ անձնավորված բնությունը, աստղերը, վտակը, ձորը միաձուլվում են մարդկային ապրումներին, աղջկա երագ-աչերին՝ հյուսելով սիրո և գեղեցկության անմոռաց պատկեր:

Ինչպես անուշ աստղերի տակ
Երջում էինք թևանցուկ,
Ինչպե՛ս էին ասող ու վտակ
Մեղ հետևում կամայուկ: —

Ինչպես անուշ էիր խոսում,
Ու վտակը՝ կրթվար՝
Շուկներից մեջ էր հոսում
Ու մեկ տանում ձորն ի վար:

✱ Ինչպես անուշ էիր թարթում
Երագ — աչերդ վրաս,
Ի՞նչ լավն էիր, ջահելության,
Ի՞նչ լավն էիր, ի՛մ և բաղ:

Այսօր դժվար է ասել՝ ով է եղել ջահելության օրերին այդ անմոռաց վայելքը պարզևս գեղեցկուհին, սակայն աներկրա է, որ Հովհ. Նիրարի ճակատագրական ու ցավազին սերը Միլվա Կապուտիկյանն է եղել, որը բանաստեղծին Արայիկ բալիկով երջանկացնելուց հետո պարզևսց սրտի անվերջ մղկտացող վերք ու չմարող, չմեղմացող անհուն կակիծ: 1942 թ. «Երգերի գրքում» տպագրված է «Երգ երգոց» բանաստեղծությունը՝ «Բանաստեղծուհի կնոջ» Ս. Կապուտիկյանին» բնծայականով:

... Ա՛յս, քո երգերից ամենաջինջը
Անգին մանկիկն է իմ սուրբ գրիկ,
Հազար երգ արե՛ն նրա մի ճիշը,
Նա երգ երգոցն է քո երգերի:

Այս բանաստեղծությունը նրանց ընտանեկան երբեմնի խաղաղության ու երջանկության վկայությունն է: Բայց սիրո մեջ

մեծ դժբախտությունը նույնքան մեծ սիրո հետևանք է: Կյանքը երբեմն մարդուն զնուս է առանձնահատուկ վիճակների մեջ, տալիս է կարճատև երջանկություն, որի քաղցրությունը զնուս չվախկեցնում զրկում է նրան ու... ինչպես այս դեպքում, հարկադրում ճաշակելու գառնությունը բաժանելը:

Կորցնելուց հետո է իմաստավորվում արդեն հուշ ու պատրանք դարձած երջանկությունը, որին հաջորդում են անզառնայություն, գիտակցություն պատճառած ցավն ու կակիճը, որոնք միայն ոչու արիությունը կարող էին հաղթահարվել: Այդ մեծ սիրո վշտից են ծնվել բացմամբիվ քնարական գոհարներ, որոնցից հատկապես մեկը՝ 1947 թ. գրված «Ես գաշտի տաղավար էի» սկզբածրոց բանաստեղծությունը, պարզապես անչընկացելի է իր քայքայիկ արժանավորությունների շնորհիվ: Այս բանաստեղծությունը, որը կարծես գրվել է սիրո երջանկությունը կորցրած բոլոր մարդկանց անունից, յուրատեսակ «մի կյանքի պատմություն» է: Ամենից առաջ այն իր՝ Հեղինակի անձնական սիրո ու կարոտի մարդկային դրաման է՝ կարճատև երջանկության ու նրա փլուզման հակադրության պատկերումով: Բայց այն եսև անձնականի միջոցով մարդկային համանման բարդ իրավիճակների ընդհանրացված ու խիտ պատկերն է, որը, սակայն, իր զգացմունքային խորությունը, համայնացման ուժով, բարձր է ամեն տեսակ անձնականություններից:

Ես գաշտի տաղավար էի՝ հեռավոր, կանաչ գաշտի մեջ,

Դու գարնան ծիծեռնակի պես բույն դրիք իմ տանիքի տակ,
Երգելիք թո սերն առաջին, սուաջին գարունը թո պերճ,
Դայլայլը ծիծանս դարձավ ու գրկեց հոգիս բովանդակ:
Ու բուրեց համբույրը սուաջին, ու ծաղկեց տաղավարս հեռվում,
Առաջին սիրո ծաղիկը՝ ձնծաղիկն իմ կրճիքն տեսար,
Երգիկից, թե պիտի քաղես դու վարդն էլ իմ սիրո գաշտում,
Պալս ու տաղավարդ, ասիր, ու գաշտը՝ գմբուխն մի աշխարհ...
Բայց հեռվում դու տեսար իմ միքսած պալատ մի շքեղ,
Ու տարված, կախաբղված թուր օր սիրո տանիքի տակից,
Քո ճամփին աչքը բաց մնաց արցունքիս սովակը բյուրեղ.

Դու պալատ տարար՝ պոկելով գարուններն իմ սրտի գաշտից...
Եվ Հիմա տեսնում ես արդյոք ցնորքիդ պալատից շքեղ,
Թե ո՞նց է փլվում գաշտի մեջ խրճիթի կարոտի Հողմից...

Ինչպե՞ս է գրվել այն, ներքին ի՞նչ այրումով, խորակված սիրո ու շախտակված երջանկության արժեքն ամբողջ խորությունը ըմբռնող ի՞նչ ահեղից ցավով...

Պայմանականորեն ասած՝ խորքահյուս գեղարվեստական ոչ ծավալուն այս երկգրվող կտավում պատկերված է երջանկության ու ողբերգության հակադրությունը: Մարդկային խառցված մեծ ողբերգությունն առավել ցայտուն են դարձնում այլաբանական համեմատությունները՝ խորհրդանշանները: Հեղինակը խորհրդանշանում է հեռավոր կանաչ գաշտի տաղավարով, որի տանիքի տակ բույն է զնուս առաջին սիրով և գարնան պերճանքով երջանկացած ծիծեռնակը: Առաջին այս գրվագում, ինչպես վերը բերված «Երգ երգոց» բանաստեղծության մեջ, թվում է, սերը փոխադարձ է, ու երջանկությունը՝ կատարյալ:

Դայլայլը ծիծանս դարձավ ու գրկեց հոգիս բովանդակ...

Տաղավարը ծաղկում է առաջին սիրո համբույրից, ծնվում է առաջին պտուղ ձնծաղիկը, երջանկացած ծիծեռնակին պալատ է թվում հասարակ տաղավարը, իսկ նրա շրջապատի սիրո գաշտը «գմբուխն մի աշխարհ»: Անհերքելի թվացող փոխադարձ երջանկության մեջ ծիծեռնակը երգվում է վարդն էլ քաղել նույն սիրո գաշտում:

Բուն ողբերգությունը, սակայն, ներկայացվում է բանաստեղծության երկրորդ գրվագում այն պահից, երբ հեռվում հայտնվում է «միքսած շքեղ պալատը»: Նրանով Հրապարակված՝ թողնում է ծիծեռնակն իր սիրո բույնը, թռչում է պալատ համարած տաղավարից, որի համար կործանարար էր այդ ճակատագրական քայլը:

Քո ճամփին աչքը բաց մնաց արցունքիս սովակը բյուրեղ,

Դու պալատ տարար՝ պոկելով գարուններն իմ սրտի գաշտից...

Սիրո ծիծեռնակի Հեռանալուց Հեռո ի՞նչ է մնում բանաստեղծին երբեմնի դրախտանման սազավարից ու «զմբուխտ աշխարհից»։ մնում են «սրտի զաշտից պոկված գարունների» ցածն ու «արցունքի բյուրեղ սովակը», «կարտի Հողմից» փլվող սազավարը, որը լքող-հեռացողը չի էլ նկատում հեռավոր շքեղ պալատից: Այդ անկյալ փնակն է, սակայն, կյանքի Հատակից իր երգի սանդուղքով վեր բարձրացած բանաստեղծին պարզեկ մի «Հպարտ Խորություն», որը նրա անկապտելի ստեղծանքն է և Հաղթանակի առՀավատչյան. գրանով է նա Հաղթում «կյանքի մութ սաստանային»: Այդ «Հպարտ Խորություն» է նրան բարձրացրել Հսկա լեռան պես, որի գազաթին նրա սիրտը կոտորել փորձում է խաչապուժ իջնել լեռան ձյունի պես, որպեսզի «թաղ թվա ամբողջ աշխարհին»: Բայց բարձունքներից նա Հալվում է «կարտի գաղտնի կրակով», գրկեզրիկ վաղուց ու հովտհույս թափառող առու է գառնում ու պղտորվում կյանքի տիզմով և չույն մաքրվելու, նորից վեր բարձրանալու Հնար.

Բարձրացա քեզ էլ ցած թողած, բարձրացա, Հաստ աստղերին,
Բարձրացա երգիս անդուռչքով, և ոչ թե՛ ինձ բարձրացրին,
Վա՛յ նրան, ով չի բարձրացել Աստուծո գրած անդուռչքով,
Նա կընկնի՝ ով ելել է կյանքի մութ սաստանի ձեռքով:

4.

Քիչ է պատահում, որ գրողների մարդկային Հարաբերությունների մեջ զեր չի խաղում գրական նախանձը: Այդպես լինում է ազնիվ հույների պարագայում, և մեր գրականությունն պատմության մեջ էլ կան Հպարտանալու էջեր: Երբ «Հովհ. Մերազին Լենինականից պեղում» բանաստեղծ Վահրամ Ալազանը փերադարձով արտորայիրից և տեսավ Հովհ. Մերազի Հաղթարշավն ու բարձր ժողովրդայնությունն ու իր ողջունած զարնան ամառնային Հաստևությունը, չկարողացավ իր Հիացմունքն ու «զմայլանքը զսպել»: Բոլոր թեմաներով արգեն Հովհ. Մերազն իրոք ստեղծել էր նախանձելի

զլուխգործոցներ ու զարձեղ ընթերցող Հանրության ու մանավանդ երիտասարդության սրբելին:

Գարգալով 1954 թ. լույս տեսած «Հարսնախոր» գիրքը՝ Վ. Ալազանը Հենց նրա կազմի վրա է գրել իր «Հովհաննես Մերազին» ձոներգը: Այն արտահայտում էր սրբերյան արտորայիրում սանձամանիքներից, անհավոր նվաստացումներից և կոտանքներից տառապած և զրա հետևանքով առողջությունը կորցրած ազնիվ Հայ գրողի անկեղծ Հրեմունքն ու Հպարտությունը: Իրականացել էր 1930-ականների սկզբի նրա կանխատեսումը. Հովհ. Մերազի գրական ճանապարհը օրհնած ու Հարթած, «սիրտս ափի մեջ, ու զիրկը լայն բացած, Հողու անրասիր առաջատաները փռած, Գարնանն ընդատալ էլած ու շիրազյան «Գարնանամուտ» ողջունած ազնիվ բանաստեղծի, որն այժմ էլ լիասիրտ Հրեմունք էր նրա Ամառնամուտով.

6

ՌՈՂՅԱՆՆԵՍ ԵՐՈՒՄԵՆ

(Expromto նրա «Յաղընսիրը» կարդալուց հետո)

Մանուշակներ մեռցերիդ ու շուշաններ ուքերիդ,
Ու վարդերը այտերիդ ու զարուներ կրծքիդ սակ,
Ու երկները Հողուդ մեջ ու արև այտերիդ,
Ու սղբյուրները լեզվիդ՝ սորից ի՜նչպիսի թողար:

Ու ես սիրտս ափիս մեջ, ու ես կրկն լայն բացած,
Ու ես Հողուս անրասիր սառցատաները փռած,
Ու ես զարնան կարտով կա Գարնան ընդատալ:

Ու ես սիրտս ափիս մեջ՝ զարձած սիրո արև շեք,
Բորբոքիցի, այրիցի, որ Գարուք տարանա,
Որ շուշանները քեքուչ՝ լույսի նման բողբոջեն,
Որ նոր փթթած վարդերը թերթիկները լայն բանան,
Մանուշակները բուրեն, սղբյուրները խոխոջեն:

Իմ ողջունած Գարուք՝ ռուսյանքով, պերճանքով—
Հաստև Ամառ է զարձեղ՝ սրբակալի Հուր ընդերով:
Ամառն Հանգեղ վարարուն, ստուան Հանգեղ այդ Հսխտուն
Բանաստեղծի իմ սիրուն է զմայլանքով բարսուուն:

10. 06. 1955

Երևան

Ալազան

Արդեն գրվել էին շիրազյան բացառիկ ուժի և արվեստի պոեմներն ու բանաստեղծությունները, որոնք, թարգմանվելով աշխարհի բազմաթիվ լեզուներով, համաշխարհայինացրել էին նրա հոշակը: Բայց նա, լինելով այդքան հզոր բանաստեղծական երևույթ, գերազույն հիացմունքով ու խոնարհումով էր արտահայտվում հայ գրականության ու մշակույթի, իր գրական ազդակիցների մասին՝ մեր ժողովրդի հարատևման մեջ նրանց վերապահելով ամենակարևոր դերը: Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Գր. Նարեկացին, Նահապետ Քուչակը, Սայաթ - Նովան, Խ. Արուսյանը, Գ. Գուրջյանը, Բաֆֆին, Հովհ. Քումանյանը, Ավ. Իսահակյանը, Սիամանթոն ու Վարուժանը, Տերյանն ու Չարենցը Շիրազի անվերապահ պաշտամունքն էին, նրանց հոգեզավակն էր նա ու ողու շարունակությունը նորագույն ժամանակներում: Մաշտոցի մասին ողբությունքն խոսելու պահերին պնդում էր, թե հայ ժողովրդին կյանք տվող մայրը, նրա հարատևության երաշխավորը որձ է՝ այրենաթուր գորավար Մաշտոցը: Բանաստեղծներին հավասար սիրում էր «անմրցելի» Կոմիտասին, «պաշտելի» Արուսյանին ու «ահեղ, հզոր» Բաֆֆուն և համախ, երբեմն չլինելով, երբեմն էլ մոնելով՝ բանաստեղծական ներշնչանքով արտասանում էր վերջիններին արձակ գործերից մարտչական հատվածներ: Գրեթե անգիր գիտեր «Վերք Հայաստանին», բայց ամեն ստարավ գեկտեմերի վերջերին պարտադիր վերընթերցում էր այն ու երկար գրուցում այդ «հեղեղանման պոեմի» գեղարվեստական ուժի և արժանավորությունների մասին, լսարանում, դահլիճում թե փողոցում անգիր արտասանում էր բավա-

Հովհաննես Շիրազի

(Յաղագր. նրա մարտիրոս հիշատակին)

Մաշտոց-հետ պետք է ու շարունակ խնդիր
 ու շարունակ խնդիր ու զարմուկ կրկին չան.
 ու երբեք ընդուն ճեղք ու արեւ - լիւր.
 ու շարունակ խնդիր ու շարունակ խնդիր:

ու է պէտք - սխ ըզ. - ու զարմուկ (Մի բայտ:
 ու է ըզու - ըզ - սխ - ու զարմուկ խնդիր,
 ու է զարմուկ զարմուկ նրա զարմուկ ըշարունակ

ու է պէտք - սխ ըզ՝ շարունակ սխ պե ըզի.
 Իսահակյանը, Մաշտոցը ու զարմուկ զարմուկ.
 ու շարունակ խնդիր (Միտ ըզ՝ հարմուկ
 ու զարմուկ զարմուկ շարունակ խնդիր.
 Մաշտոց-հետ խնդիր, շարունակ խնդիր:

ի պէտք - զարմուկ՝ շարունակ. շարունակ -
 շարունակ Ահա - է շարունակ շարունակ շարունակ
 շարունակ շարունակ շարունակ. Ահա շարունակ շարունակ
 շարունակ շարունակ շարունակ շարունակ շարունակ

20. VI. 1955

Երևան

Մեսրոպ

Ալազանի բանաստեղծության ինքնազեղ

կան չէ՝ ներկաներին էլ պարտադրում էր շարունակել: Մանրամասնորեն գիտեր Հոմերոսի, Ֆիրդուսու, Դանթեի, Բայրոնի, Գուլիերի, Լերմոնտովի, Միցկևիչի պոեմները, Շերապիիր ողբերգությունները, նրա և Գետարակայի սանեաները, Արևելքի և Արևմուտքի մեծ քաղաքների գործերը: Սակայն հայրե-

նիքի և ժողովրդի նահատազրի մասին տխուր ու մտաշտ խորհրդածություն պահանջներն նա համայն էր հիշում ու հիշեցնում Բաֆֆու «Զայն տուր, ս'ի ծովակն» ու վրաց բանաստեղծ Իլյա Ճավախիձեի «Էլիզիա» բանաստեղծության թուժամանյանական անմրցելի թարգմանությունը.

Լուսինն աղոս լույս է փրում
Ի՞մ աշխարհին մայրենի,
Կուլ է գրեում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների:

Ձեն չի գալիս ոչ մի կողմից,
Վրաստանը մութն ու լուռ,
Վերացին է՝ հաղթված քրնից,
Տրնքում տանջված ու տխուր:

Մենակ եմ ես, քնած է նա,
Քնած շուքն և հեռուն. —
Ա՛խ, ի՞մ աշխարհ՝ քնած, քնած,
Ե՛րբ ես սրգոյք զարթնելու...

« — Սա բացառիկ ուժի խոր բանաստեղծություն է, Հայերիս չափազանց հարագատ, — ասում էր Հովհ. Նիրազը՝ ավարտելով բանաստեղծությունը: — Հապա նայի՛ր թուժամանյանի թարգմանությունը՝ էդ խելոր, մեծ ու հզոր քաղաքարնակ գեղացին հատուկ նպատակով է թարգմանել, գրեթե հայացրել է վրացուն, հանգիստ կարող ես ասել՝

Լուսինն աղոս լույս է փրում
Հայաստանին մայրենի,
Կուլ է գրեում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների...

Ձեր հանդուրժում գրական արհեստագործությունը, բովանդակաբան, մտքից ու մանավանդ գրացմունքից զուրկ արհեստածին չափածոն և բնավ էլ հաշտ չէր դուռ ձեռնակն, ինքնանպատակ նորարարության հետ: Դասական պարզությունը և չբեղ պատկերագործությունը նրա տարերքն էին թե՛ գրավոր,

թե՛ բանավոր խոսքում: Օտարագիր Հայ գրողներին էլ համարում էր Եղեռնի հետևանք: « — Մի կողմից լավ է, որ է՛նտք, օտար լեզուներով գրելով, Հայկական ցավը հՀամաճարդկայնացնեն, կենրկայացնեն աշխարհին, ինչպես Սարոյան գիթիարին, ինչպես Մյուրմելյանը, բայց մյուս կողմից ցավ կպատճառեն. էդ տաղանդավոր մարդիկ Հայերեն չեն մտածե, Հայերեն չեն գրե ու Հայոց լեզուն չեն զարգացնե, օտար մշակույթ կհարստացնեն».— ասում էր մասհոգ ու դառնացած:



Դոկ. Շիրազն ու Վլյադ Սարոյանը, միմյանց հանգալով, իրար օգն են նորոգմունքի մեք...

Ուշի ուշով հետևում էր գրական երիտասարդությունը. հրճվում, ուրախանում էր ոչ միայն իր հետևորդ շնորհալիներով, քաջալիքում նրանց, այլև ինքնատիպության ձգտող բոլոր երիտասարդներով, սակայն ցավում էր օժտված, բայց օտար հովերով տարված, բանաստեղծության ազգային սկուլքներին հեռացած երիտասարդների համար: Դա միայն գրական դպրոցի կամ ուղղության խնդիր չէր. ցավում, օխտում էր այն եռանդի ու վատնված ջանքերի համար, որ օգտակար չէին ժողովրդին, չէին նպաստում մեր գեղարվես-

տական մտածողության զարգացմանը: Աիրում էր Հատկապես ուսանողության Հետ շփվել, իմանալ նրա կարծիքն իր ստեղծագործությունների մասին, նրա միջին Հայաստանի իսկական միջր ունեցողներին:

1968 թ. զեկտեմբերի 2-ին Հանրակացարանում ուսանողներով րիջապատված Շիրազին մտանցավ Այովիկ Չիրոյանը, և մենք պահանատես եզանք մի Հնտաքրքրի բանավեներ:

— Հայրենակից, գիտե՞ս ես գրում,— մեծամտացավ Ս. Չիրոյանը, — մտածողությունը չա՛տ է արխայիկ, չգիտես Հիմա աշխարհում ինչն էր ես կատարվում, չա՛տ ես Հետամնաց և նորարարության այլևս բնույթակի չես...

— Միայն բեկ և նման մի քանիսին իրավունք տալիս եմ այդպես մտածելու, որովհետև դու և կաղապարակիցներդ ժողովրդի բանաստեղծ չեք և այդ գիտակցությունը դեռևս չունիք,— ժպտաց Հովհ. Շիրազը: — Բայց գիտցի՞ր՝ երբ որ խելքս թողնեմ և ուզենամ գառանցել, Հազար բեկի պես բանաստեղծ դուրս կգա...

— Ախպո՛ր պես, ի՛նչ կլինի, մի անգամ գառանցիր, էլի,— թախանձեց գիծուցած երիտասարդը:

— Ինչդրեմ, արի ես գառանցեմ, դու էլ բանաստեղծիր. տեսնեմ՝ դու կրե՞ս ինձի պես գառանցել...

Լրջացավ բանաստեղծը, աչքերը կկոցեց ու սկսեց իր «գառանցանքը».

Ես ոտքս կկոխեմ աստու ուղեղի մեջ,

եվ նրա ակնակալիճներից

Մոլորակներ դուրս կծայթեն...

— Հանճարն՝ դ է,— գլուխը բռնեց Չիրոն,— ա՛յ պատկեր եմ տեսել, դա՛ զրիր, դա՛...

— Ինչո՞ք, ես ժողովրդի՛ բանաստեղծ եմ, բեկի պես չեմ, որ ինչ ուզենամ՝ գառանցեմ, ինչ գառանցեմ՝ գրեմ: Գիտեմ, թե իմ ժողովրդին ե՛րբ ի՛նչ է պետք. ժողովրդին կյանքը և բանաստեղծական իմ ներքին բնազդը կկնկալեն՝ երբ «Բիրրիական» գրեմ, երբ՝ «Հայոց դանթիական», երբ՝ «Մարդկանց անունները», երբ՝ «Էպոս խաղաղության», երբ՝ քո չՀավանածները:

Չիրոն պարզապես փախավ:

ԱՀավոր սրամիտ Հովհ. Շիրազը սիրում էր երգիծել և գիտեր ծագրելու բազում հնարներ ու միջոցներ: Ուներ անմրցելի երևակայություն և Հզոր բնազդացողություն, որոնցով կարողանում էր բնական ու Հասարակական երևույթները, իրական կյանքն ու մարդկային Հարաբերությունները ճանաչել ու պատկերել: Մի միտումնավոր կարծիք, որ ժամանակին պարտադրվում էր սուտ ու փուտ ինտերնացիոնալիզմի ջատագով



Վոլի. Շիրազը, Լևոն Բաղդասյանը և Օնիկ Դավանյանը Սյալաքոնցում 1975 թ.

վարչահրամայական իշխանությունների կողմից, իրոք, գիտամամբ նեղացնում էր Հովհ. Շիրազի բնարերգության թեմատիկ բովանդակային Հարստությունն ու բնագրվման սահմանները և ամեն գնով փորձում նսեմացնել նրա քնարի և ստեղծագործության ազգային ու Համամարդկային արժեքը:

Կյանքը Հիմնավորապես ցույց տվեց ժողովուրդը ու Հայրենիք պահող Հովհ. Շիրազ բանաստեղծի ու ազգային գործչի գեղարվեստական խոսքի Հույժ արդիականությունը, նշմարացիությունն ու կենսունակությունը:

ԵՂԵՆՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այնքան Հայոց արյուն գնաց՝ արյուն մանկանց ու կորեմի,

Որ քիչ մնաց մանուշակն էլ դաշտում փոփոխեց ալ կակալի:

Մանուշակներն այն օրվանից թաքնվում են թիփերի տակ,

Կաթնում են, թի լուսնի մաշիկն էլի թուրն է Հայոց դաշնի:

1.

Խորհրդային ժամանակների առաջին բանաստեղծը, որ Չարենցից Հետո նպատակասլացորեն արժարժել է Հայոց մեծ եղևունի ու սփյուռքահայության թեման և զեղարգիստական հրքոր պատկերներով կարողացել է Հասկանալի դարձնել Հայ մարդու Հոգուն ու մտքին, անկասկած Հովհ. Շիրազն է: Նա, Հակառակ հիշվելու անգամ ոչ արժանի, գրականությունից հեռու ժամանակակից որոշ թիրուս իմաստակներին, պատկերավոր Հզոր մտածողությամբ օժտված, Հայ դասական բանաստեղծության ավանդներով սնված բնարար մեծ բանաստեղծ էր՝ Նարեկացի-Թումանյան-Խաչակյան գծի վերջին խոշոր ներկայացուցիչը: Ավանդական թեմաները «ոչ բնարական» ժամանակներում նա արժարժեց նոր մտացույժով՝ զեղարգիստական պատկերի մեջ ներառելով ժամանակին ու խորհրդային պարտադրանքներին անհարթ Հանդուգն Հարցադրումներ, քստեղծագործելով ավելի քան կես դար՝ նա դարձավ Հայության մեծ ողբերգության, նրա Համազգային իղձերի ու ձգտումների արտահայտիչը: Եվ քանի որ նման Հանդուգնությունն անպատճ չէր մնում՝ Ե. Չարենցի, Բ. Բակունցի, Փ. Մահարու, Զ. Եսայանի, Վ. Թոթովենցի և ստալինյան դարաշրջանի բռնաբարքներին զուհ դարձած բազմաթիվ ազնիվ մտավորականների օրինակով, այս սկզբնական շրջանում պետք էր Հայտնաբերել ու կիրառել զգացմունքներն ու գաղափարներն արտահայտման Համեմատաբար «անվտանգ» եղանակներ ու միջոցներ և գործել ժամանակի միջոցառումն Համապատասխան: Սակայն

2. Շիրազ

դա քիչ է խանդարել, որ Հայության Հանդեպ պատմական անարդարության դեմ Հովհ. Շիրազի միշտ ազնիվ բանաստեղծական ընդդիման ունենար զարգացման բնական ու Հետաքրքիր ընթացք՝ մեզմ արտահայտվածներից Հասնելով մինչև գրական բացահայտ ընդդիմության և Հախուռն սոմանտիկական ընդդիման, որը նրա որպես քաղաքացի բնաբերգու բանաստեղծի, բուն տարերքն էր: Միլիոնավոր զոհերի և կորցրած Հայրենիքի ողբերգության խոր զգացողությանը, լավագույնս ապագայի բուռն մղումով, ազգային երազանքների և հույսերի իրականացման տեսլականով նա խորհրդային պետական գաղափարախոսության պայմաններում Հանդուգն մաքառել Հանուն Հայության ազգային ինքնաճանաչման, նրա սոսնահարված իրավունքների ու արժանապատվության վերականգնման, կարողացավ կազմակերպել ու նպատակաձգել Հայ սերունդների հոգեբանությունը, մտածողությունն ու մարդկային նկարագիրը:

Առաջին Հանդուգն քայլը նա իրագործեց 1935 թ. «Գարնանամուտից» անմիջապես Հետո Գ. Արվանձտյանցի «Գրոց ու Բրոց» և «Համով-Հատով» գրքերում բերված ժողովրդական ավանդադրույցի հիման վրա գրելով և նույն տարում Հրատարակելով «Միամանթո և Խաջիկարեն» պոեմի առաջին տարբերակը: Սա, անշուշտ, պայմանավորված էր նախ՝ Հ. Շիրազի բանաստեղծական մտածողության զեպի ժողովրդական քնարերգության Հակվածությամբ և 30-ական թթ. ոչ քնարական միջնորդարին ու ճառագային, տեխնիցիստական բանաստեղծությանը Հակադրվելու բացահայտ միտումով:

Երկրորդ այդ ավանդադրույցի դիպաշարը Հնարավորություն էր տալիս պոեմի՝ բուռն սեր ապրող Հերոսների ներառելիս Հայության մեծանը զուգադիր, նրանց՝ ողբերգության մղող գործողության միջավայրի պատկերումով արժարժելու թշնամու կողմից բռնազավթված Վասպուրական աշխարհի ու նրա Հետ միասին ողջ պատմական Հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի թեման: Այդպիսով նա Եղևունից մազապուրծ, իրենց Հարազատների կորցրած, Հայրենի բնորանը Հարկադիր բռն-

նույնպես լքած, տուն-տեղ կորցրած, աշխարհով մեկ ցրված ու սփյուռք դարձած արևմտահայ զաղթականության, ինչպես նաև Հայրենիքի նոր սերունդների գիտակցությունից մեջ ամբողջությամբ էր պատմական Հայրենիքի Հիշողությունը՝ փայփայելով այն վերագարձնելու հույսը:

Կար և երբորդ խնդիրը: Հայտնի է, որ միլիոնավոր Հայերի Հետ 1915 թ. Մեծ եղեռնի զոհ դարձած բանաստեղծ Ասոս Զարեանյան-Միամանթին, որ նախ Ասոս Միլլազ էր կոչվում, Գարեգին Սրվանձոտյանցի թելադրանքով էր նույն այդ պահեղազրույցի Միփան սարի Հայ Հովիվ Միամանթոյի անունը դարձրել իրեն զրական անուն, որը նույնպես անմիջական ասելություն ուներ Եղեռնի իրողությունից Հետ: Նորագույն ժամանակներում արգելված, մոռացություն գաղտնագրված Միամանթոյի և նրա Հետ միասին Մեծ եղեռնի զոհեր Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի, Ռ. Սևակի և ուրիշների անունները Հաճախ էին հուշվում Հովհ. Շիրազի պոեմի շնորհիվ:

Հետագայում կատարված մեկուկես տասնյակ լրամշակումներով պոեմն ընդարձակվել է ինչպես Հեղինակային խոսքի նպատակաուղաց ծավալումների ու խորացում - խոսացումների, այնպես էլ ներմուծված գեղարվեստական ինքնուրույն միավորների՝ երգ-բանաստեղծությունների («Խնդարերի երգը», «Մնաք բարով, իմ Հայր Միփան», «Միամանթոյի երգը» «Հիմա ո՞վ մեզ համբուրում», որ Հեղինակը Հետագայում վերանվանեց «Իմ երգը» և այլն) շնորհիվ⁷¹: Խորհուրդ կա, անշուշտ, այն իրողության մեջ, որ Հեղինակը զրանք, պոեմից անկախ, Հրատարակել է «Քնար Հայաստանի» առաջին զրթի «Երգեր» բաժնում: Դեռևս 1939 թ. գրված Միամանթոյի Հրամիշտի երգը, մինևնույն ժամանակ Հայ երիտասարդությունից՝ Հայրենիք վերագառնալու երգումն է.

Մնաք բարով, իմ Հայր Միփան
եվ դու՝ իմ մայր Վանա ծով.

⁷¹ Տես մեր «Միամանթո և հյնգարտ» պոեմը ուսումնասիրությանը սույն գրքում:

Ուր էլ լինեմ՝ մեզ Հավիտյան
Զեմ մոռանա իմ լացով...

Մնաք բարով և դու, իմ սեր.

Բայց թող Հայրդ իմանա

Ինչ էլ լինի ես կզամ դեռ...

Քաջն անմուրաց չի մնա...⁷²

Իսկ պոեմն ավարտվում է մեռնող սիրեցյալի և սղբացող Հերոսուհու մի բնութագրական երկխոսությունում.

- Միամանթո՛, ես ի՞նչ ասեմ, երբ այս զուլումն իմանա:

- Խնդարե՛, թե իմ սերն ես՝ թող իմ մաշը լինանա,

Ասա՛ Միփան սարն ի վեր

Վայրի ցուլեր ու զեղեցիկ այժամներ է որում դեռ...

Համեմատարար «անվտանգ» մյուս միջոցը այլարանությունն էր, որի տարանջաններից մեկը՝ մետաֆոր-փոխաբերությամբ, բանաստեղծը հարկադրված էր հաճախակի գործածել: 1930-ական թթ. «խոսքի ազատության» խորհրդային պայմաններում, երբ գլավիտի հրամանով արգելվեցին Հայ դասական երգեհոնի նահատակ գրողների ստեղծագործությունները, և զեղակահարվեցին, բանտարկվեցին կամ արտոթեցին վերը հիշված՝ ազգային օսկոր ու մտածողություն ունեցող գրողները, ամեն կասկածահարույց խոսք ենթարկվում էր գլավիտային մանրակրկիտ գննության: Անզամ եթե սա էլ չլինեիր, իրենց խուզարկու Հայացքներով պատրաստ կանգնած էին Մարենցի ու Բակունցի թշնամիներն ու ժամանակի ազնիվ մարդկանց զոհ առանձնահատուկ շարությունը տրամադրված մարտնչող օե ասպետները՝ պետականորեն հովանավորվող, պետությունը «Հավատարիմ» գրողի ու քննադատի հանդամանքով, որոնց աշխրջությունից չէր վրիպում ոչինչ: Այս պատճառով էլ որևէ գրողի ամեն հանդուգն թեկուզ անմեղ

⁷² Տեղում ընդգծված քաղաքում էլ ինտապայման վերաբերել է, դարձել Դայն անմուրաց չի մնա - Ս. Ա.:

խոսք պիտի ուղեկցվեր խորհրդային կարգերին, առաջնորդներին ուղղված պարտադիր փառաբանական ձոներգերով ու հավատարմության երգումներով՝ առանց որոնց՝ ազգային ու հոգևոր որևէ խնդրի վերհուշն անզան պիտի դատապարտվեր որպես նացիոնալիզմ-ազգայնամոլության գաղափարների արտահայտություն անկանխատեսելի վտանգավոր հետևանքներով, Հայաստանի պիտի ենթարկվին մտավորականները, գրողները, հայ առաքելական եկեղեցին ու հոգևոր գործիչները, ժամանակի քանոնով ու կարկիտով դժգոհ շրջանակներից զուրա նայել փորձող բոլոր ազնիվ մարդիկ: Ի վերջո, Ե. Չարենցի գլխավոր «հանցանշանը» ազգային հավաքակառուցյալ կոչն էր «Պատգամ» քանաստեղծությանը, որի տողերի առաջին բառերի երկրորդ տառերով զագանազարված «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» կարգախոսի բացահայտվելուց հետո նրան չփրկեցին առաջնորդներին ձոնված դիֆերանցներն անգամ:

Մյուս քանաստեղծների համեմատությանը՝ զասական ավանդներով սնված, ասմանտիկ խառնվածքով Հովհ. Շիրազը մի էական առավելություն ուներ. նա իր հույսն էր տարփողում, միամիտ հավատով կարծում էր, թե այնքա՛ն է արգարանիս «ժողովուրդների հայր» հորջորջված «պողպատե առաջնորդը», որ ցանկության դեպքում կարող է լուծել մինչև անգամ հայկական հարցը՝ վերադարձնելով իր իսկ ձեռքով Թուրքիային ու Արցախին նվիրարներն Արևմտյան Հայաստանը, Արցախն ու Նախի՛վանը:

Չարենցյան սերնդի և մյուս գրողների ու մտավորականների գլխատումից հետո աշխուժացած, գրական շնորհքից հիմնականում զուրկ, սիրողական մակարդակից մազաչափ անզամ չբարձրացող կույր կամ կիսակույր և կիսազրազան աշուղներին, այսպես կոչված բանվոր գրողներին ինքնանպատակ ու չինձու ձոներգերում անկարելի է տեսնել ազգային խնդրի, հայության ողբերգության կամ ազգային երգանքի՝ որևէ արտահայտություն: Քիչ չեն նաև Ստալինին նվիրված շիրազյան ձոներգերը, սակայն սրանք նախ առանձնանում են ար-

վեստով, բոլոր դեպքերում հզոր տաղանդով օժտված անհատականության պատկերավոր խոսք էին. սրանց մեջ գրեթե միշտ քաղաքացիական արիությունը բնորոշվում էր անչափ կարևոր մի գաղափար, որ բացակայում էր մյուսների ձոներգերում:

Դու հայրենիք ավիր հային, որ դրսիս է աչքես թվում,

Դու չես թողնի՛ մեր Աբրաամ սարն էլ պանդուխտ մ՛ա հեռվում:

Մի հետաքրքիր օրինաչափություն ևս: Այն գաղափարները, որ Հ. Շիրազը 30 - ական թթ. և 1940 թ. հրատարակած «Երգ Հայաստանի» գրքի որոշ բանաստեղծություններում նախապես արտահայտել էր կիսաշղուկ, այլարանությունը շղարշված կամ հնարագետի խնամքով թաքցրած, հետագա վերանշակումներում դարձրել է բացահայտ:

Անչափ կարևոր է, թե ինչ չափանիշներով ենք դեահատում բանաստեղծությունը: Համախ է պատահում, որ աչքաթող ենք անում քնարերգության նրբույթներն ու յուրահատկությունները և բանաստեղծություն ենք համարում ամեն մի ճամարտակություն կամ լավագույն դեպքում՝ չափածո ձևակերպված որևէ խելացի միտք կամ դատողություն: Մինչդեռ իրականությունից մակարդակած քնարական պատկերն ամենին էլ նույն այդ իրականության պատճենները կամ մերկապարանոց նկարագրությունը չէ, այլ նրա հանդեպ վերաբերմունքի՝ խոհի և զգացմունքի ղեկարգմանական արտահայտությունը պատկերավորման միջոցներով: Բնորոշ Հաջող օրինակներից մեկը «Կանգնած արտումս է կանաչ եղևնին»՝ այլարանական անվերնազիր բանաստեղծությունն է, որի տարբերակների պարզ դիտարկումից անզամ նկատվում է, թե ինչպես «անմեղ» թվացող ստորակական փոխաբերական համեմատությունը որոշակիանալով դարձնել է եղևունի փրկված հայության՝ միլիոնավոր զոհերի և կորուսյալ հայրենիքի ողբերգական հիշողության պատկերավոր արտահայտություն: 1940 թ. տարբ-

բակում (32 տող), որն ունի «Եղևնու մըրմունջը»⁷³ խորագիրը, հարցադրումը երկարարանված է, և պատկերը դեռևս չունի այն հստակությունն ու ակզիցություն ուժը: Այդ տարբերակում էլ թեև առկա է իր մայր անտառից զատված, թախճալի միայնություն զատապարտված ու անճանաչորված եղևնու փոխարևույթը՝ մայր անտառի վերհուշում, սակայն նրանից զեռևս շոշափելիորեն չի բխում հայության որբերգական նակատագրի, կործանված ամբողջի և նրա հանդեպ փրկված մասի վերաբերմունքի բմբունումը: 1958 թ. վերածնունդված տարբերակում, որն արդեն էականորեն կրճատվել ու խտացվելով դարձել է բնդամենը ուժն առ, տեմուն է եք ավելորդություններից զտված, կենսորոնական զազափարը առավել ցայտուն դրանաբող պատկեր, ուր արդեն առկա է «գաղանթի» հեղինակային բացահայտում. դա արդեն գրեթե մտ է վերջնական տարբերակին: Ըստ երևույթին՝ քաղաքական որությունը մեղմելու միտումով հեղինակն ինքը կամ խորհրդային աշաուրը խմբագիրը «նրբացրել» է նակատային արտահայտությունը, իսկ դա է. Երբագի պարագայում հաճախ էր պատահում: Ուշագրբ բնթիբցողը այդարանության խորբում, այնուամենայնիվ, արդեն կեկատեր հեղինակային բուն մտազդատումը. մայր անտառից զատված, զուգված-զարգարված տունազու դարձած եղևնին չէր կարող հարմարվել պարագրբոզ ջերմոցային երջանկությանն ու կեղծ միջավայրին, ցեծու ու հրճվել իր շուրջը երջանիկ անգիտությունը ուրախ պարողների պես.

Այնինչ արամում է մենակ եղևնին.
Իր մայր անտառն է նա մտարբում:⁷⁴

Երկերի քառահատորյակի I-ին հատորում, որը հեղինակի մասնակցությունը է կազմվել, արտաքննապես էական որևէ փոփոխություն չկա: Պահպանվել են նույն ուժն առգրբը. միևնույն ծավալում, սակայն, բնթիբցողը կարող է տեսնել միայն

երեք մակղերների փոփոխություն, որոնցով առավել խտացել, որոշակի է զարձել հեղինակի բնարական խոճ – մտարումը.

Շուրջը թնդում է ուրախ նոր տարին,
Մարդիկ խում են և անհոգ պարուն,
Այնինչ՝ լախ է Հայոց եղևնին,
Մորթված անտառն է նա մտարբում...

Նախկին ուրախ, մենակ և իր մայր մակղերներին համապատասխանաբար փոխարինել են անհոգ, Հայոց և մորթված մակղերները, որոնք հակահակի են զարձնում, որ սա արդեն ոչ թե ինչ-որ եղևնի է, այլ Հայոց եղևնին, որը մտարբում է մորթված անտառը, այսինքն իր հայրենիքում մորթված արեմտահայությանը և պարտական տեսք չէ: Կերջին մշակման մեջ երկատում ենք ավելի որոշակիացում: Երկերի ժողովածուի շորբորգ հատորում, որ լույս է տեսել 1956 թ. բանաստեղծի մահից երկու տարի անց, այն ներառված է «Հուշարձան մայրիկիս» խորագրով բանաստեղծություններից հյուսված պոեմում և արդեն ունի փակագծերում զրված վերնագիր. «Եղևնու մըրմունջը» զարձել է «Եղևնու եղևնին», և նոր փոփոխություններ կան վերջին տան մեջ: Ներկայացնում ենք բանաստեղծությունն իր վերջնական տեսքով.

(Եղևնու եղևնին)

Կանգնած արամում է կանաչ եղևնին,
Այնինչ՝ լույսերը ցեծում են վրան,
Անտառն է հիշում տխրած եղևնին,
Ոսկե լույսերը չեն հուզում նրան:

Շուրջը թնդում է ուրախ նոր տարին,
Մարդիկ ցեծում են և անհոգ պարուն,
Այնինչ՝ ողբում է իմ մայր եղևնին,
Մորթված անտառն է նա մտարբում:⁷⁵

⁷³ Տե՛ս Դավիթ Հիրազ, երգ Ֆայաստանի, Ֆայաստիստա, եր., 1940, էջ 58-59:

⁷⁴ Դավիթ Հիրազ, Ձնար Ֆայաստանի, եր., 1958, էջ 280:

⁷⁵ Դավիթ Հիրազ, Երկեր, հ. 4, եր., 1966, էջ 66:

Նախասկզբին առում ընդգծված բաները բանաստեղծութ-
յանը հաղորում են նոր իմաստ. եթե ողբում է բարձր բացա-
արության կարիք չունի, ապա իմ մայր եղևնին՝ արտահայ-
տությունը խորհրդանշում է Հայաստանում և Սփյուռքում
ապրող հայությանը մեր ողջ ժողովրդին, որը ողբում է եղևնի-
ն հաճատեցիկներին: Այս մեկ բանաստեղծության վերամշակե-
ման ընթացքը գրանցվել կարելի է պատկերացնել, թե Նովհ. Շի-
րազն ինչքան էր կարևորում բարձր, որը գեղարվեստական
բացի նրա համար ուներ նաև բովանդակային ու քաղաքական
արժեք: Իր ստեղծագործություններից շատերն է բանաստեղծը
հետագայում մշակել ու վերամշակել, թեև նրան ոչ միշտ է
հաջողվել պահպանել նախաստեղծ երկի որակը:

2.

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հ. Շիրազի գե-
ղարվեստական մտածողության բարձրաժամիչ հասունության
համար ստեղծվեցին որոշ նպատակադր պայմաններ. համընդ-
հանուր վտանգի պայմաններում պետականորեն թույլատրվել
էր, որ Ֆաշիզմի դեմ համախուժ պայքարի կլան խորհրդային
ժողովուրդները վերհիշեն իրենց պատմական անցյալն ու մա-
նավանդ օտար նվաճողների դեմ Հայրենիքի պաշտպանության
համար մղված հերոսական պայքարի՝ նոր ժամանակների հա-
մար ոգևորիչ Հայրենասիրական զբվազաներ. դա ավելի կար-
ելիցաներ խորհրդային տարրեր ժողովուրդների զինվորներին
և նրանց հանուն խորհրդային միասնական Հայրենիքի կռիվը
իրական սխրանքների:

Հարաբերական այս պատությունը խելամիտ օգտագոր-
ծեցին հայ գրողները և ստեղծեցին պատմահայրենասիրական
թեմայով լավագույն երկեր: Խորհրդային ժամանակներին
բնորոշ նախորդ՝ «անցյալի իդեալականացում» վտանգի պայ-
մաններում Դ. Դեմիրճյանին չէր արտոնվելու գրել «Վարդա-
նանքը», Ն. Զարյանին «Արա Գեղեցիկը», Հ. Շիրազին՝ «Տիգր-
բան Մեծի վիշտը և հավերժությունը», Ստ. Զորյանը չէր կար-
ող հրատարակել դեռևս 1939-ին գրած «Պայ թագավորը»,
չէին վերահրատարակվելու «Սամվելն» ու «Գևորգ Մարգ-

պետունին» և այլն: Բայց այդ հարաբերական պատությունը
հնարավորություն տվեց նաև, որ արդեն 1941 թ. աշնանից,
իմանալով Բաբի Յար կոչված սեղանայրում գերմանացիների
կողմից անգունը նետված հարյուր հազարներով խորհրդային
քաղաքացիների ողբերգությունը և Դոնի Թաստովի ժուռա-
կայքում՝ նոր Նախիջևանի Մեծ Սալա հայկական դուռում
ճիշտ ու ճիշտ թուրքերի օրինակով հզի կանանց մորթելն ու
երեխաների վառվող թունիքը նետելը, Հովհ. Շիրազը գրեց, ա-
վարտեց, բայց և մինչև կյանքի վերջը (14. 03. 1984) տպա-
գրված չտեսավ իր կյանքի դիտարկը գիրքը՝ Հայոց եղևնի-
նապատումի ողջ գրականության ամենանշանակալից երկերից
մեկը՝ «Հայոց դանիթականը» պոեմը⁷⁶: Այսինքն՝ բուրբի պես
նա էլ հնարավորություն ստացավ բարձրաձայն խոսելու հե-
ռավոր ու մոտիկ անցյալի ողբերգական ու հերոսական իրա-
դարձությունների մասին, սակայն կենտրոնանալով հայ իրա-
կանության վրա նա «Տիգրբան Մեծի վիշտը» պոեմում «Հայոց
պարսիստ, բայց անհաղթ արքայի» հերոսական կերպարն ըս-
տեղծելով՝ «Հայոց դանիթականում» էլ պատկերեց Մեծ եղևնի-
նը: Իսկ եղևնի թեման Հովհ. Շիրազի համար պատահական
հետաքրքրություն չէր, այլ մեծ կենտրոնացում պահանջող ու
ողջ կությունը կլանող մի անհերքելի դաժան իրողություն,
որի գեղարվեստական մարմնավորումը նա Միամանթոյի նման
համարում էր իր՝ հայ բանաստեղծի և քաղաքացու անմարելի
պարտքը:

Ինականաբար, հենց պատերազմական օրերին էլ պիտի ա-
ռավ մղվեին, առանձնակի արժեք ու կարևորություն ստա-
նային Հայրենիքի և Հայրենասիրության գաղափարները: Բայց
խորհրդային Հայրենիքի գաղափարին զուգահեռվում էր նաև
հայության կորուսյալ Հայրենիքի և մեր ժողովրդի կրած ծան-

⁷⁶ Այս մասին համաձայնորեն տես նաև մեր «Պատմական փոփոխության ժողով» (Թվ-
հանձնա Շիրազի «Հայոց դանիթականը» պոեմը), «Գրական հանդիպումներ», գիրք Բ, եր.,
2007, և «Կանցրականի երկու ընթացում. Զարեմ - Շիրազ» («Հարձակումները ցուցա-
ցելու», գիրք 8, եր., 2008) ուսումնասիրությունները:

բազույն ողբերգութեան՝ Մեծ եղեռնի, ինչպես նաև Սփյուռքի հայութեան նահատակների խնդիրը, որին Հովհ. Շիրազը մտածելու էր ամենատարբեր բանաստեղծական զգացողությամբ: Մեծ եղեռնի օրերին և անմիջապես հետո ինքն իր սերնդակիցների հետ միասին ճաշակել էր որբության ու անապատան մանկության բոլոր դառնությունները, որ նույն եղեռնի ողբերգական հետևանքն էին՝ մարդկային հոգեբանության վրա թողած անֆնջելի դրոշմով: Ահա 1942 թ. գրված մի բանաստեղծություն.

Մորս աչքերն են լացել
Կոտորածներն հայկական,
Հետքը սրտում մնացել՝
Կաթն է եղձել մայրական:

Այդ վշտից եմ դեռ գուճառ
Ու նրանից, որ կարծես
Մորս կրծքից ու թև կաթի,
Այլ արցունք եմ ձծել ես...

Այդ վշտի մեջ էր թրծվել ապագա բանաստեղծը, անձամբ ինքն զգացել ու շուրջը տեսել էր հետեղեռնյան սերնդի կրած ատառապանքները, որոնք իրենց կնիքն էին դրել նրա հետագա ողջ կյանքի վրա: Վաղ մանկությունից էր նա հասկացել հայթույրբանական հարաբերությունների ըուն էությունն ու տեսել դրանց ողբերգական հետևանքները՝ հայրենագուրդի հայ գաղթականներին ու որբերին, լսել նրանց պատումները՝ սահմանից այն կողմ թողած մեղադատյալի, բռնագաղթված ամբողջ հայրենիքի մասին:

Արդեն նա «Միամանկու և Խաղվարե» պոեմով ուներ հայրենիքը պատմաաշխարհագրական տեղանուն-խորհրդանիշներով մարմնավորելու փորձը, որի համար էլ քիչ կշտամբանքների չի արժանացել: Այժմ՝ առանձնահատուկ սրված բազարական պայմաններում պատմական հիշողությունը մեռք էր բերել առանձնակի արդիական արժեք, պատերազմի և միլիտանավոր զոհերի ողբերգությունը համադրվում էր հա-

յության մտախի անցյալի ծանրագույն ողբերգությունը: Ուստի Հովհ. Շիրազի հիշյալ պոեմում և բանաստեղծություններում ներկան ու անցյալը պիտի կամըջվեին ու զուգարգրվեին, պատերազմի միլիտանավոր զոհերին պիտի միանար նաև եղեռնի զոհերի կոհիծը, վտանգի մեջ հայտնված խորհրդային միացյալ հայրենիքին պիտի համադրվեր հայոց բռնագաղթված հայրենիքը, և Հայոց մեծ եղեռնի հիշողությունը պիտի դառնար արդիական սուր հիշողություն ունեցող տարրուկ նախ գեղարվեստական պատկեր

Թող անցյալ վերքը դատպիրք գառնա
Մամուկ ներկայի սեղանի վրա

չիրացյան բանաձևի տրամաբանությամբ: «Բանաստեղծի ձայնը» և «Երգերի գիրք» (1942) ժողովածուների բանաստեղծություններն արդեն ունեն այդ համադրական պատկերները: Մրանց մեջ թեև ուղղակիորեն չեն մատնանշվում, սակայն հստակորեն նկատվում են եղեռնի հետևանքների ընդգծումները: Հայրենիքի գիտակցությունը Հովհ. Շիրազի համար չի ենթադրում միմիայն խորհրդային Հայաստանի՝ մեղ պտրտագրված 30 000 քիմ սահմաններ, այն «մեր հայրենիք» հստակացությունն էր: Մի օր մանակակիցներից միանգամայն տարբեր ըմբռնում էր: Ահա ինչու «Մերն է, բարո՛ւ, մեր հայրենիք» բանաստեղծությունը մի ուրույն քերթողական կոթող է՝ հայ սերունդներին ու աշխարհին հայ մարդու հայրենիքի մասին լիակատար պատկերացում տալու իմաստով: Մրան լրացնում է կորուսյալ հայրենիքի կարտոն արտահայտող մի այլ բանաստեղծություն.

Դեռ չեմ տեսել ծովը Վանա,
Չեմ տեսել սարն իմ Սիրիանա,
Դեռ չեմ տեսել ՄՇՆրի գուռ
Աղուվաբարսն ահեղպուռ...
Ար, աշխարհում քարեր կան շատ,
Ուրիչ մարմար սարեր կան շատ,
Բայց ՄՇՆրի քարն է քաշում.

Ինձ Միգանա սարն է քաշում,
Ի՞նչ պապերի չբիրմն անգամ
Ինձ քաշում է ամեն վայրկյան
Ինձ քաշում է ծովը Վանա-
Կարծես մորս արցունքն է նա...

Եղևոնի Հետեանքով է Հայության Հայրենիքը մասնատվել ու չարի ձեռքով նվիրարբրվել արյունոտ, թշնամուճ: Մինչդեռ Հայի պատմական Հիշողության ու արդիական գիտակցության մեջ այն զեռն ամբողջական է՝ «Հավերժն աշուղ, ջրերը՝ սագ» Արագածն, «մաղերն արձակ ու գեղանի, նստած Հարսի» նմանվող Սևանի, «աշխարհի թագ, քանց թագավոր ներմակ Մասիսի», Արաքսի ու Տղմուտի ափերին մեր պապերի «մամուտ ու մութ» գերեզմանների տեսքով: Եվ կարևորն այն է, որ բանաստեղծը Համարձակ արտահայտում է ժողովուրդների եղբայրության ուժով Հայության Հայրենիքի միասնականացման գաղափարը՝ Հատկապես ընդգծելով, թե ո՞րն է Հայության Հայրենիքը, և ո՞րն է այդ Հայրենիքի միավորման ու ամբողջացման հույսը: «Ո՞րն է բարո՞, մեր Հայրենիք» Հարցին բանաստեղծության մեջ տրվում է Հետևյալ պատասխանը.

- Էն, որ Ղազրեկն ու Արագած՝
Արաքսու մեջ ախպեր կանդնած՝
Ձեռ կզարկեն գինով թափին
Ու կձենեն մեր Մասիսին,
Թե՛ «Հե՛յ բարս, բավ չէ՛ սենակ՝
Պանդուխտ մնա ամպերու տակ...»:

Նույն 1942-ին, գրեթե նույն ներշնչանքով ու գեղարվեստական միջոցների կիրառումով է ստեղծվել նաև «Երկու նախիրի» բանաստեղծությունը: «Հայոց Համայնապատկերը» ենթախորադիրը կրող այդ բանաստեղծությունը լույս է տեսել չուրջ չորս տասնամյակ հետո՝ 1981 թ.: Պատճառներն անբացատրելի չեն. գա, բուս էություն, երկու՝ Խորհրդային և Պատ-

մական Հայաստանների Համադրական պատկերն է՝ երանց անխզելիության շիրազյան ընկալումներով, որի հրատարակման մեջ խորհրդային գրաքննությունը տեսնում էր քաղաքական լուրջ վտանգներ: Մինչդեռ այդ բանաստեղծության մեջ դասական Հայ քերթողության ավանդներով սեփած Հեղինակը պատկերավոր մտածողության իր քացառելի ձևերն էր ներկայացնում, անուշտ, որոշակի Հայրենասիրական ենթատեքստով երկու Հայաստանների՝ անբաժանելի մի հողի ու մի մարմնի լինելու գաղափարի ընդգծումով:

Դիմառությունը բնության երևույթների և առարկաների անձնավորումը, դեռ միջնադարից եկող պատկերավորման միջոց է: Ն. ԵնորՀայու կիրառած այդ հնարանքը Հաճախ են գործածել Հետագա բանաստեղծները Արտյանը, Ալիշանը, Պատկանյանը, Թուճանյանը, Միամանթոն, Չարենցը: Հ. Երրագի բանաստեղծության մեջ տեսնում ենք Հայոց աշխարհի բոլոր շղթայված լեռնագագաթների՝ բանձնի արժեք ունեցող նպատկազրված անձնավորում հզոր գեղարվեստական ընդհանրացումներով.

Հայաստանի ամեն մի լեռ
Մի քարացած Հայ է անմեռ:

Բայց անձնավորված ամեն լեռ ունի իրեն բնորոշ պատկերավորում. այսպես Աննոս լեռը հույժով է քաջ Բլուրների հուտն իր սուաջ, Աչքն աղոթող՝ ծովն է Վանա Նարեկացին սարն է Սասնա, Վարազա լեռն արժվի պես՝ քարացել է Հայրիկն է, տես, Աբարատը Հայկն է վիժած՝ Երևանվող Հույսի դիմաց, Վար կնայն մեկ Երևան, Հազար ու մեկ՝ դեպ Մուշ ու Վան... Հանգած Հրաբուխ են անձնավորված այս լեռները, որ ծխում ու լուռության մեջ կըք են փնտրում.

Այրվում, նայում Աբարատն
Հուր են ուզում ծայթթել չորս գին
Անց շղթայված լեռներս վե՛հ՝
Ի՞նչ աշխարհ, որ երբե՛հ
Գա՛ս չի դառնա ժանտ ոստի՛ն

Ատոված կիջնի՝ դեռ մեր Հոգին...

Միշտ չենք մնա

Ասպատակված,

Մի՛ պարծենա —

Անզգամված...

Հայաստանի ամեն մի լիռ

Վաղն հրաբուխ է մի ամենու:

Հովհ. Երբազը, կարծես իր ողջության օրերում «Հայոց դանձիմահանը» և «Անի» պոեմների ամբողջական տպագրության հույսը կորցրած, նրանց որոշ հատվածներ հատուկ նըպաստակով ներստել է տարբեր ժողովածուներում, ինչպես, ասենք, «Հայոց դանձիմահանը» պոեմի «Էլեգիա» հատվածը «Քնար Հայաստանի» 1958 թ. առաջին գրքում, «Անի» պոեմի վերջերգանքի մի մասը՝ 1954 թ. «Հասարակություն», նախերգանքը՝ 1964 թ. երկրորդ հատորում, պոեմներից տարբեր հատվածներ՝ հինգ հատորյակի տպագրված հատորներում և այլն:

1982 թ. 2-րդ հատորի «Փոքր պոեմներ» շարքում է զետեղված «Վանեցու ողբը» բանաստեղծությունը գրված 1965-ին: Բաղմամբիվ գաղթական վանեցիներ են անհուն վշտով պատմել Համանման ողբերգական դեպքեր ու իրողություններ, և այդ բալորի խոսքումն ու ընդհանրացումն է գիտարկվող բանաստեղծությունը: Այն բանաստեղծի գրչով վերածվել է Վասպուրական աշխարհի, Հայոց պետության երբեմնի Հայակերտ մայրաքաղաքի՝ դրախտաման Վանի բանազայմման, մեր բնօրրանի և ազգային հարստության կրթում, իրենց երկիրը հերոսաբար պաշտպանած, նույնիսկ երկամսյա անկասություն նվանած, բայց «երկու գլխանի արծվի» հրամանով լքած վանեցիների բռնազաղթի ու կոտորածի մեծ ողբերգության: Ըննդավայրի, այրված Հայրենի տան, հրդեհված Վան քաղաքի ու ողջ պատմական Հայրենիքի կորստյան կակիթք բանաստեղծություն մեջ արտահայտված է ներդործող Հոյր պատկերավորությունը: Կարծես վերակենդանանում է փայնեփայտ այն ստակալի գիշերը. տունը և Հողը լքելուց առաջ վանեցի ծերունին հին կաղնու տակ փորած փոսին՝ իր և պապերի

Հայրենի Հողին է կծով պահ տալիս իր ոսկե խաչն ու քրտինքով վաստակած ողջ հարստությունը՝ վերադարձին գտնելու հույսով: Սակայն Հայրը սպանվում է գաղթի ճամփին, իսկ մոր շալակից մանուկը տեսնում է հրդեհված Հայրենի տունն ու ողջ քաղաքը:

... Ու մի վայրկյան այն գիշեր, երբ որ մորս շալակից

Ես նայեցի մեր տանը՝ նա վառված էր կրակից:

Վանն էր վառված մութ Հեռվում, իսկ լուսինը, ինչ լուսին,

Հուկա կումն էր, որ Հողից դուրս էր ձգել թշնամին,

Հորս կումն էր՝ դատարկված, ունը կոտրած, ամպի մեջ...

Իսկ աստղերը մեր ոսկի խաչի փշրանքն էին խեղճ:

Աստղի արցունք էր դարձնել մոտ խաչը մեր Հույսի

Ու շաղ եկել աշխարհի խոճի մութ Հովաթի,

Մեքն անասնման խավարի, որ դեռ իր ակ պատանքով

Փաթեթվել է Մամխին ու քեզ, իմ մայր Վանա ծով:

Ախ, կոտրել են Հորս մեջքն՝ այն հին կաղնին մեր դուռն,

Հորս թողած այն ոսկու տեղն է կորել իմ աչքից,—

Բայց Հեռավոր մեր Հողի, գերված Հողի սրբուզան

Ամեն մի բուռն ինձ Համար մի կում ոսկի է անբիծ,

եվ աստղային երկինքը՝ կոտրած կուժիս չորս բոլոր՝

Ծրված Հայերն են մորթված, Հայ Սփյուռքն է մեր մոլոր:

Նկատվում է, թե ինչպես է Համազգային աղետի պարզ պատման աստիճանարար վերածվում գեղարվեստական գերխոս ընդհանրացման: Գերված Հողի ամեն մի բուռն լուսնի պատկերով մի կում ոսկի է, իսկ նրա շուրջը շուրջը ստեղծող մորթված Հայերն ու Սփյուռքը...

Իսկպես էլ, ոչ ծավալուն բանաստեղծությունը ձևք է բերում պոեմի հատկանիշներ: Կես դար առաջ կատարված ողբերգությունը չէր արժանացել պատշաճ վերաբերմունքի, «աստվածների պես մեռած» աշխարհի խեղճն ու արդարությունն աննկատ են թողել այն, ոճաբանը չի պատմել, զղջում ու հատուցում չեն կայացել... Ահա ինչու էր հատուցում պահանջող բանաստեղծը մոլեգունում:

— Արդարութիւնն, որան՝ զ ես, ո՞վ չեմքանդ անհնի.

Որ չառար անհամար կտորածներն իմ Հայոց.—

Որ քեզ մօխն հրաբուխն, հոյ վրեժն Հայ ազալոյ.

Որ դու զզջան, դո՛ւ զզջոտ, որ բանաժառ ես թողնում զեռ
Համաձ ոսկին իմ անհուն, մեծ Հայաստանն իմ անմուռ:

2. Երբազր, կարելի է ասել, հակառակ խորհրդային պատմագիտութեան պաշտոնական տեսակետի և զերազանցապես իրենց եմԿԿ պատմութեան կամ գիտական կամեմբիզմի ու ամենեցմի մասնագետ համարելով պարծնեցող գիտնականիկներին, բոլոր մանրամասներով գիտեր Հայաստանի պատմութեանն ու աշխարհագրութեանը, իսկ եղեռնի պատմութեանը գիտեր ոչ միայն մանկական հիշողութեաններին, կարացած վարկարգիւրից, գիտական ուսումնասիրութեաններին, հուշագրութեաններին ու զեղարկեստական երկերից, այլև Զարգի ու բունագաղթի մեծ ողբերգութեանն անձամբ փրկվածների անմիջական պատմաներից: Ավելին. միշտ նրա գրասեղանին էին գերմանացի, ուսու սպաների լուսանկարների այրումներ, որոնք պատկերում էին Հայ կտորածների վաճարական դաման ու սարսափազգու տեսարաններ: Ահա ինչու եղեռնի ողբերգութեանը ներծծվել էր Հովհ. Երբազր արյան մեջ, ահա ինչու նրա սակզմագործութեաններում եղեռնը, Համազգային ու Համաշխարհային վիշտ լինելով, առաջին հերթին անձնական վիշտ ու ողբերգութեան էր և համակել էր նրա ողջ էութեանը: Այս վշտի ամբողջ խորութեանն ու ծանրութեանը զգացող բանաստեղծը դառնանում էր հատկապես սերագործների համառ ուրացութեանից և մեծ տերութեանների քամահրական վերարժեանքից, Հայոց մեծ աղետին կարեորութեան չափող, այն միայն Հայութեան ցնորքը համարող տերութեանների քաղաքական նենդ խաղերից ու խարդավանքներից: Ողջ մարդկութեանը սպառնացող գալիք աղետները կանխելու և բոլոր սերագործների արյունոտ մեռնարկումները խափանելու համար պետք էր դատապարտել եղեռնագործներ և կանգնեցնել պատմութեան դատաստանի առաջ: Բայց ահա հին ու նոր բոլոր եղեռնագործներն էլ իրենց հույսը դնում են մարդկային

հիշողութեան տկարութեան վրա: Ուստի Հայոց աննախադեպ ողբերգութեանը պատկերելով՝ Հովհ. Երբազր նախ ջանացել է արթնացնել մարդկութեան քնած խիղճն ու հիշողութեանը հզոր երևակայութեամբ անդադար փնտրելով արտահայտական նորանոր միջոցներ ու եղանակներ: Այս որոնումների ճանապարհին էլ ծնվում էին բանաստեղծական նորանոր գյուտեր թե՛ բովանդակութեան, թե՛ ձևի իմաստով.

Յնորք չի եղել Հայոց վիշտը մեծ.

Եվ թե հառաչեր մի Հայ բանաստեղծ,

Թե չոր դարերի հողմերով քշված

Լուսնի վրա էլ Հայեր կան ցրված

Ես կհավատամ այդ զտուր խաղին,

Ես կհավատամ, որ Լուսնին անդամ

Քանթի է բոկոտն Հայ թափառ օտքին

Ու դրանից է նա թափումս այսքան...

Այս քո էլ բոկոտն է լուսնական լալիս,

Դու էլ ես պանդուխտ, իմ աղի՛ր Մախի:

Բայց քեզնից էլի կարտուտ առնում,

Երբ քեզ եմ տեսնում՝ մի եռ եմ դառնում,

Մինչ հազար ծովեր զեռ այն կողմ ցրված,

Որբան Մախիներ ունեմ զեռ գերված,—

Ես դարեր խաղված, դարերով զարկված

Նոր եմ բուռնեցրվում լուսնեում իմ լուրթ,—

Ե՛ս որկեկորույս, բայց հավիտ փրկված

Ե՛ս մի Հայ, մի Հայր, մի Հայ մողովուրդ...⁷⁷

Չմոռանանք, որ այս իրոք խիտ, հզոր ու խիզախ բանաստեղծութեանը սպառքով էլ 1958 թվականին: Սա արդեն պատկերավոր բացախտութեան է, Հայոց մեծ ողբերգութեան համաշխարհայնացման ու տիեզերականացման առաջին հանդուգն արտահայտութեաններից մեկը, որ զգացվում և նկատ-

⁷⁷ Շիրազ Չովիանճեւ, Քնար Չայաստանի, եր., 1958, 356:

վում է Հայության դատը ոչ միայն իր՝ բանաստեղծի, այլև ողջ Հայության անունից աշխարհին ներկայացնելու ազնիվ ու մոլեգին մղումը: Ի զեպ, Հովհ. Շիրազի բանաստեղծական Հեռույալ ինքնախոստովանությունը կարող ենք ասվածի լավագույն Հիմնավորումներից մեկը համարել:

Ով Հայոց վշտով Ի՛նձ պես է տարվում՝
Իմաստանում է կամ խելագարվում:

Եվ իրոք, Հովհ. Շիրազը Եղեռնի ողբերգությունը գիտակցում, զգում ու ջանում էր պատկերել նրա պատճառահետևանքային Հարսերբությունների ամբողջ Համապատկերով: Նա խորապես գիտակցում էր իր մեծ բանաստեղծ և մանավանդ Հայ բանաստեղծ լինելը, որ պարզ ուներ ժողովրդի և սերունդների առջև: Այդ պարտքի գիտակցումն էր նրա ուղեցույցը բոլոր ձևանարկումներում, զբաղոր կամ բանավոր բոլոր ելույթներում, տպագրված կամ անտպայ բոլոր ստեղծագործություններում, որոնցով նա կարողացավ պատանել երկաթին վարպույրը, որպես զգոն ու զգաստ զանգահար՝ արթնացնել ժողովրդին, նրան ու խորհրդային ղեկավարներին Հիշեցնել Մեծ եղեռնի միլիոնավոր զոհերին և լուսնային ու ամառային գառապարտված Արևմտյան Հայաստանը:

Հայ ժողովուրդ, դու քնած ես, ես արթուն եմ այս գիշեր,
Եղեռանից քո վշտերով ես անքուն եմ այս գիշեր...
Ա՛ր, այս գիշեր, թե՛ Հավիտյան ես արթուն եմ, դու քնած,
Քեզ էլ քննել ու դատելով՝ իմաստուն եմ այս գիշեր...

Այստեղից պիտի հասկանալի դառնա վերևում մեր մտածանշտած այն նպատակաույաց կենտրոնացումն ու մտասևեռումը, որը Հովհ. Շիրազը զբաղորեց Եղեռնի նկատմամբ: Իսկ նա Հայոց մեծ ողբերգությունն զգում, ընկալում էր ամբողջ խորությամբ, և դա չէր կարող էականորեն չազդել նրա զեղարվեստական մտածողության, անգամ մարդկային խառնվածքի ու ընկալիչության վրա:

Յեղապանազնունքներն իրենց ուսումնասիրություններում հստակ ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյա Հայերը մյուս ոչ թուրք ժողովուրդների համեմատ ֆիզիկապես ամենից խոցելի ու անապահով վիճակում էին, և Հենց նրանք պիտի ենթարկվեին ցեղասպանության՝ տարբեր պատճառներով: Իսլամական այդ կրոնապետության մեջ եմն հանդուրժելի էին մուսուլման ժողովուրդները՝ քրդեր, չերքեզներ և այլն, ապա ոչ-իսլամ ժողովուրդների և հատկապես Հայերի և հույների հանդեպ թուրք կառավարողները դարերով մշակել էին ուրիշ վերարթմունք թուրք ցեղի գերակայություն բոլորի և մանավանդ Հայերի նկատմամբ, որոնց պատմական քեթրքանի՝ Արևմտահայաստանի վրա էր նաև ձևավորվել Օսմանյան կայսրությունը:⁷⁸

Ջենք կրելու իրավունքից զրկված Հայերի մեծագույն զրծբախտությունը, սակայն, այն էր, որ, հպասակ ժողովուրդ լինելով, արքայազնության անհամեմատ առաջադեմ ու աշխատասեր էին ու վերջիններիս կարծիքով՝ վտանգավոր, հակահայ թուրքերի կամքի նրանք իրենց մեղքում էին կենտրոնացրել երկրի անաստության, առևտրի ու նյութական միջոցների զգալի մասը, նրանք էին անօրինակ կրթության ու գիտության, մամուլի, թատրոնի ու մշակույթի ոլորտները: Ուստի ռիսկ ու նախաձեռն լցված թուրք կառավարիչները ձգտում էին ազատվել նրանցից՝ զործազրկելով իրենց պետության ու զաշխակից մեծ տերությունների բոլոր միջոցները:

Սուլթան Համիդը 1894 – 96 թթ. ավելի քան 300 000 Հայ էր կոտորել, և այդ թիվը 20-րդ դարասկզբին նպատակաույաց Հետևողականության ավելացրել էր մինչև իր զահակալության ավարտը: Բայց համիդյան ջարդերն ուղեկցվեցին նաև

⁷⁸ Այս մասին հանգանակորեն անձ Վահագն Տատրյան, Ալեքսիանոս Խայոց գեղասպանության մասին, դասախոսություն Գալ կենտրոնի արևիկն 05թ. 14 նոյեմբերի 2003, Բուենոս Այրես, 197 900 Յեղապանության բանագրան – Ինտերնուտ, «Մայքնեմ» իրառ., Եր., 2004:

Ջեյթուների, Սասունների, Վան-Վասպուրականի Հայերի մզած ազգային-ազատագրական պայքարով, թուրք բռնապետության դեմ Հայաստանի մյուս վայրերում ձագած ժողովրդական ապստամբություններով, ուր Հայ բաժամարտիկները իրենց անօրինակ սիրազորություններով մեր պատմության մեջ գրեցին անժողովուրդի հերոսական էջեր:

Իսկ Հայերի օգնությանը նոր-նոր իշխանության եկած երիտթուրքերը, որոնք, երբանոց Օսյանի համոզմամբ, «մի-մի պղտիկ» սուլթան Համիդ էրն, 1909 թ. ապրիլին իրականացրին Ազանաջի ու ողջ Կիլիկիայի ավելի քան 35 000 Հայության կոտորածը, որից Հայերը, դժբախտաբար, անհրաժեշտ հետևություն չունեցան հայերի համար: Հայերին մոլորեցնելով և Հայ-թուրք եղբայրության կարգախոսներով՝ նրանց իսպառ բնաջնջման ծարագիրը երիտթուրքերը գաղտնի կազմել էին դեռ Առաջին համաշխարհային պատերազմից էլ առաջ՝ 1912-1914 թթ.: Պատերազմը Հարձարադուլն առիթն էր ինձամբով մշակված իրենց դիվային ծրագիրն իրագործելու համար. մինչև 1915 թ. ապրիլը նրանք շարունակում էին Հայերի գինեթափման քաղաքականությունը, իսկ զենքի հասակի Հայ ազատամարզիկանց առանձնացնելով ու ընդգրկելով հատուկ ճանապարհաչափական գումարտակներում՝ մաս-մաս կոտորում էին նրանց: Ամեն ինչ արված էր անզեն արևմտահայության վերջնական բնաջնջումն իրագործելու համար: Սակայն սկսված Հայկական կամավորական շարժման և ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ կոտորածների քափից միլիոնավոր Հայերից փրկվեցին մի քանի հարյուր հազարը, զաղթեցին Արևելյան Հայաստան ու աշխարհի տարբեր երկրներ: Այսպես էլ ձևավորվեց Հայկական Սիյուսթը, որը մյուս բոլոր կորուստների հետ միասին զարձայլ եղեռնի անմիջական հետևանքն է:

Հայերն իրենց հերոսական բնավորությունը ցուցաբերեցին Սարգսրապատի, Ղարաբիլիտայի ու Ազարանի ճակատամարտերում՝ ջախջախելով, հետ շարժելով նաև Արևելյան Հայաստանը բռնազավթելու եկած թուրքական զերալիզիտ օգնությամբ: Նրանք իրենց քաջությունը փայլեցին նաև Խորհրդային Միու-

թյան Հայրենական պատերազմի ճակատներում՝ տալով հերոսների, զորահրամանատարների մի մեծ աստղարույլ: Փայեցին նաև Հայաստանի պաշտպանության ու Արցախի ազատագրության համար մղված մարտերում՝ ծնկի բերելով խորհրդային կայսրության փլուզումից հետո նրա՝ Ազրբեջանում ունեցած ողջ զենքն ու զինամթերքը յուրացրած և մինչև ստամները զինված մուսուլմանական աշխարհի ռազմական, նյութական օգնությանը պատերազմ սանձազերծած Ազրբեջանին:

Հայ ժողովրդի հերոս գաղափարը Հայրենական պատերազմի շրջանում և նրանից հետո հանձնա էին դառնում շուրջ Երբազի ստեղծագործական ոգևորության առարկա, որովհետև առանց կռիվու մեր ժողովուրդը չէր կարող հարատևել.

Այն ո՞վ է սուս, թե մենք սպիտակ
Երամ երբ եղել ապավինների՝
Մասալոց լանջերին՝ անպ ու շանթի տակ,
Հողմերի սուղ բաժովո պղտերի:
Ինչպե՞ս կմնար լեռների միջուս,
Ջյուսն բույնի մեջ քնուշ աղափին,
Ուր մեր լեռների բաշերն են պոկում
Շանթն ու կաշմալը, Հողմերն ու քամին:
Ինչպե՞ս ապավեն գառած Կովկասի՝
Յաթաղակի դեմ գաթեր շառաչեր,
Եվ ինչպե՞ս բույնը դրած Մասիսին՝
Կմնար անմահ, թե Հայն արծիվ չէր...
Այնպիսի բուսում, ինչպես Մասիսն է,
Արծիվ կծնվի՝ արծվից էլ վեհ:

1902 թ. «Մեր նախորդներին» բանաստեղծության հեղինակ Հ. Թումանյանը երանի էր ապիս անցյալի «գովված երգիչներին», որոնց թարմ երգերում դեռևս կար «թևուցե դերի» Հայրենիքի ազատագրության հույսը: Բայց Թումանյանի աչքի առաջ հոշոտվեց այդ Հայրենիքը՝ բանաստեղծի զգայուն սրտի հետ մեկտեղ, միրամի նման ցնդեցին Հայի փրկության

«սոսի երազները»: Այդ Իսահակյանի «Դու չես Հասկանա», «Պատերազմ ա՛հեզ» և այլ բանաստեղծություններում, Տեր-յանի «Երկիր նախրի» շարքի հոգարտ ու ողբերգական նվագներում հնչեց դարի մեծ աղետների հանդեպ անողնակա անզգի անկի վշտի, մենակության և տառապանքի թեման: Բայց նույնիսկ նրանք չէին կարող կուահել, թե գալու է մի օր, երբ Հայն այլևս չի մտածելու հայրենիքի ազատագրության մասին, որովհետև իր բնօրրանից տեղահանվելու, բնաջնջվելու է արևմտահայությունը, և մի մեծ քրիստոնյա տերություն ոչ քրիստոնյա ղեկավարների կամքով ու թուրք-բոլշևիկյան բարեկամության քաղաքական շահերի թելադրանքով այդ հայրենիքը նվիրվելու է դարի առաջին մեծ ցեղապանությունն իրականացրած թուրք եղեռնագործին: Արանով Հասկանալի կղառնա նակ այն իրողությունը, թե ինչու Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում քաղաքացիական ու գաղթնեկեցված Վ. Լենինն այսօրվա Թուրքիայում հենա Աթաթուրքին հավասար պաշտամունքի առարկա է: Ցավոք, Բրեստ - Լիտովսկի խայտառակ հաշտությանը և 1921 թ. թուրք-բոլշևիկյան բարեկամության Կարսի ու Մոսկվայի ամոթալի պայմանագրերով կատարվել էր այն, ինչ գեռ 1919 թ. Վ. Տերյանն էր կանխատեսում:

Ու կլան օրեր ստալին տրտում,
Եվ դժնի՛, դժնի՛, առախ և՛ դժնի՛...

Ահա այն դժնի իրողության մեջ էր Հայտնվել Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի ու Զարինջի հաջորդ՝ Շիրազը, որին վիճակված էր տեսնել իր նախորդների ժամանակներից անհամեմատ ափելի մեծ ու ծանր անարդարություններ:

Արդյանի, Բաֆթու, Պատկանյանի կանխատեսումները չէին իրականացել, Միամանթուրի «Դույցազոտրեն» և «Հայրդինեն» շարքերի՝ ամեն ինչ Հայաստանին և Հայությունը զազախարախտությունը՝ «Կյանքին համար, Հույսին համար, նվիրական Հայաստանին համար» բանաստեղծով, Հովհ. Շիրազի ժամանակներում չուներ նույն հնչողությունը, որովհետև ոչ միայն այդ Հայաստանն այլևս հայինը չէր, այլև Խորհրդային Հա-

յաստանում ապրող Հայությանն էլ պետականորեն արգելված էր նրա և միլիոնավոր զոհերի, բռնի տեղահանված ու աշխարհի չորս կողմերը ցրված Հայության մասին հնչողությունն անգամ: Հովհ. Շիրազի «Հայրենի հրավերն» էլ պետք է տարբերվեր, որովհետև Միամանթուն տարագիր Հայությանն ուղղված իր ստանեկոու կոչերով պանդուխտ Հայորդիներին նրանց իսկ ծննդավայր՝ Հայրենի տուն էր հրավիրում, իսկ Շիրազին արգելվում էր այդ ծննդավայրի պատմական Հայաստանի հնչողությունն անգամ:

Արգելողն ինքը, սակայն, իր վտանգի պահին լավ էլ հնուում էր և իր իսկ Հայածած Հայ եկեղեցու միջոցով կազմակերպեց սփյուռքահայերի՝ այնքա՛ն անհրաժեշտ օգնությունը, որով Փաշիզգի դեմ հերոսաբար մարտնչած և խորհրդային երկրի հաղթանակը մոտեցրած «Սասունցի Դավիթ» և «Մարշալ Բազրամյան» տանկային շարայուներն ստեղծվեցին: Պատերազմում Հայ Հերոսների սիրանքները քաջակերում էին բոլորին. Արևմտահայաստանի ազատագրության խոստումները իրական էին թվում, իսկ կուլի գաշտում ընկածների, անհետ կորածների վիշտը խառնվում էր Մեծ եղեռնի և 1937 թ. զոհերի դեռևս չմարած կակիծին:

Եղեռնից ու Արևմտյան Հայաստանի կորստից Հեռո մյուս գլխավոր աղետը արտաբուստ «չարայաց փոքրազույն» թվացող պանդխտությունն էր: Բանաստեղծի առջև ծագանում էին այսօր էլ իրենց արդիականությունը պահպանող և, ցավոք, դեռևս լուծում չստացած Համաժամանակյա երեք փոխկապակցված հիմնարկերը՝

ա) Եղեռնի Համաշխարհային ճանաչում և միլիոնավոր Հայերի բնաջնջման ու տեղահանման, նրանց Հայրենիքը բռնազավթելու համար ցեղասպանի արդար դատաստան.

բ) հասունցում և բռնազավթված Հայրենիքի վերադարձ սփյուռքահայությունը.

գ) սփյուռքված Հայության ճակատագիր և մանավանդ Ափյուռքում Հայոց լեզվի պահպանության խնդրի՝ մինչև նրանց Հայրենիքի սպառազրումը:

Իսկ Նովհ. Շիրազի քնարերգուիցան մեկ փոխկապակցված աշխարհի հիմնարկները հանգստեան են եկել երբեմն առանձին-առանձին, երբեմն էլ միասին ու համագրված: Երանք գրսեորդի են ասրերը ժանրերի գործերում՝ պոեմներում, առանձին բանաստեղծություններում ու բանաստեղծական տարրերում չարքերում, քառյակներում, անգամ առակներում:

«Ուղերձ իգձերիս» բանաստեղծությունը, ըստ Երկերի Ի-ին հատորի թվագրության, գրվել է 1942 թ.: «Հաղար կողմեր ճամփա բռնած» Նովերի, ջրերի, հավթերի անձնավորման միջոցով բանաստեղծը իր պատգամներն է հղում պանդխտության ուղիներում դեզերող հայությանը՝ «Ասե՛ք՝ ուրիշ բան չի ուղում Ազիզ պահեք հայոց լեզուն», «Ասե՛ք՝ նա մեր գայն է ուղում, Որ ծովանա հայոց անուն»: Եվ բանաստեղծությունն ավարտում է հզոր պատգամախոսությամբ.

Նովեր, ջրեր, հավթեր, Բռե՛ք,

Գեթ դուք իմ ծով կարտան սուր,

Հայոց կարտան հայ Սփյուռքից:

Իմ Արարատ հայոց կուռքից:

Ու թե բան է՝ բյուր տեղերով

Անցնեք խլված մեր հողերով:

Մուսկի ի՞նչք ու իմ տեղով

Համբուրեք հողն հայրենապուն,

Ասե՛ք՝ դուք էլ հայ կմաք,

Քանի կապիք հայոց լեզուն:

Եստ չեք մնա այդպես դերի:

Պիտի գարթի խղճն ազերի:

Արդիական էր Նովհ. Շիրազի իր ժամանակի մեջ: Անկապ կամ: Բայց նա արդիական է նաև իր ժամանակից դուրս՝ մեր օրերում: Հայության համախուժ միասնության անհրաժեշտությունը երբեք էլ հնացող գաղափար չէ, բայց այն առավել ընկալելի է դառնում հենց նրա՝ ստեղծագործություն միջոցով ու նրա՝ պատկերավոր խոսքով:

Լավագույններից մեկը 1946 թ. գրված «Երեանն է կանչում» ստեղծագործությունն է, որը, մասնագիտական ոչ մի դեմահաստիական երբևէ չստացած, 60-ական թթ. միայն արժանացել է Նովհ. Շիրազի «Պատի քարն ու ջրաղացքարը» առակի հերոսի քննադատությունը:

Հետպատերազմյան տարիներին՝ 1946-ից, խորհրդային պետությունը նախաձեռնեց արտասահմանից սփյուռքահայերի մեծ հայրենադարձությունը: Դա առաջ բերեց բուռն ոգևորություն այրի: Մա ունեք թե՛ իր դրական, թե՛ քաջասական կողմերը: Իրական էր, որ հայրենադարձվող հայերը, ձուլման փասնազից փրկվելով, համախմբվում էին հայրենի հողի վրա, հայության սովորացումով հզորանալու էր նորհրդային Հայաստանը, բայց և քաջասական էր, որ նստարանում և թուլանում էին Սփյուռքում հզորացած հայ զարդերները:

Նովհ. Շիրազի համար ոգևորիչ էր առաջինը՝ սփյուռքահայ գերարժեքներով Հայաստանի հզորացումը, իսկ արտասահմանում մնացած հայերի, մանավանդ երեսասարգություն համար նա շարունակում էր արտահայտել իր խոր տագնապներն ու մտահոգությունները:

Մայր հայրենիքի և հայաստանարեակ հայության անունից հենց ծաղկոլղի բանաստեղծ Նովհ. Շիրազն իրավունք վերապահեց իրեն՝ նամակ ուղղելու ախարհի լայնքով ու երկայնքով մեկ ցրված սփյուռքահայությանը: Դա արտայայտվեց հարազատի կարտուի կանչ էր, սուււղարձի մի սիամանթոյական, բայց յուրօրինակ «հայրենի հավթեր», գրքի բոլոր նեղություններին դիմանալով հայ մնալու և հայոց լեզուն պահպանելու ազդիվ հորդք:

Հայոց հույս ու բաղձանքով դուրսը դարուն է կրկին,

Ու ես մի լույս ապստոս փայտալուծ եմ իմ կրճիքին՝

— Իմ կարտուի թևավոր, առ բյուրանալ սիրտս առք՝

Որտեղ մի հայ կուսնեսու տուր իմ սրտից մի պատուս,

Որպես նամակն իմաստուն հայոց երկրի նորակնուս:

Հասիր պանդուխտ հայերին, հույսս սփռվիր կրկերդ:

Ասա՛ մեզ ենք կարտուն և հողերին դես գերի,

Բաղասանն ենք որոնում Հայոց վերջին վերքերի,
Փանդի արզեն կես կապին՝ ուսենու պես կռանում
Մտաբ անտառ դեռ մտած՝ Հայ լեզուն է մտանում,
Իր Հայ որդոցն Հայուհին Հայոց դարոց չի տալես,
Եվ Մաշտոցն է Հայ վշտից այսպես շիրմում շուռ գալիս,
Մուսկի չոքում շիրմում էլ, աղոթում է, իմացի՛ր,
Որ Ափյուռքը կուլ չերթա, ազգ իմ, քիչ էլ դիմացիր,
Քիչ էլ սակա, ախ, քիչ էլ, մինչև արվի չարս անբան
Մինչև քայլի սրտի պես դեպի Մասիս մեր ճամփան:

Հայոց ծանրածանր կորուստներին, շղթայված լեռներին ու գերզած հողերին գումարվում էր այնպիսից վտարված ու օտար թևկուղ Հյուսիսային արևմտյան ժողովուրդներում ապաստանած Ափյուռքի սազնապը: Որքա՞ն կղիմանա, կպահպանե՞՞ արդյոք իր Հայությունը, թե՞ ոսկե գետակների պես կծուլվի կապույտ ծովերին ու օվկիանոսներին ու կկորչի:

Տագնապը նոր չէր: Պատմությունն այսօր Հազիվ է հիշում միջնադարում Անիից ու Հայաստանի այլ վայրերից Ռուսաստան, Ուկրաինա ու Լեհաստան գաղթած հարյուր հազարավոր Հայերին: Պատկանյանն արդեն բանասփեյ էր «Օտարի շահը թույն է մահաբեր»: Տագնապները զնայով սաստկանում էին Ափյուռքի ձևավորումից հետո: Շահնուրն արդեն հնչեցրել էր նահանջի ահազանգը՝ «Կնահանջենք կամա թն ակամա, գիտու՛թյամք թե անգիտու՛թյամք... Լեզո՛ւն, լեզո՛ւն, լեզո՛ւն է որ կնահանջե, մեզա՛՞ Արարատին»: Թուրքի յաթագանին ու Դեր-Ջորի անապատային ավազներին Հայությունը կուլ էր գնում մարմնապես, իսկ Հայրենիքից ու արմատներից հեռու թևկուղ գրախտավայրի նմանվող երկրներում էլ, լեզուն, ազգային հոգևորությունը, գիմազիմն ու նկարագիրը կորցնելով, նախ դառնում էր «իրանահայ, թուրանահայ, քրիստոնյա զուրանահայ, հարափահայ, Հյուսիսահայ, ֆրանսահայ, պրուսահայ, Հայկպահայ, Հարեշահայ, արարահայ, խարահայ, հուճահայ ու անտունահայ»՝ ու այս աստիճանաբար օտարանում ու կորչում: Անկասելի և այսօր սպառնալիցուն շատացող խառնա-

մուսուլթյունների վտանգը կանխազգալով՝ բանաստեղծը պատգամում էր.

Երիտասարդ Հայություն, այս մեկն էլ լավ իմանա՛
Թե կին բերես օտարին՝ կնոջ կինը կդառնաս.
Կաթ չի դառնա Հայ լեզուն օտարի սուրբ ստիկերին,
Օտար ստիկերն օձ է կույր՝ Հայոց մանկանց շրթուներին:

Հայրենազարծույունը կայացա՛յ: Եկան աղնիմ նվիրյալ-
ներ՝ Հայրենիքում ապրելու, այն շննացնելու պատրաստակա-
մությունը: Համընդհանուր ու բախտիթյան մեջ կային և լուրջ
մտահոգություններ: Հայրենազարծներից ոմանք չէին Հար-
մարում անգի պայմաններին, ոմանք էլ հիմնականում ար-
հեստավորներ՝ դերձակներ, Հյուսներ, փակահագործներ, վար-
սպիներ, բաղնիքի քիսաշիներ և այլն, սովորույթի ու ժող
հենց Հայաստանում միմյանց հաղորդակցվում էին իրենց գի-
տեցած օտար լեզուներով՝ հուճարենով, արարերենով, թուր-
քերենով, պարսկերենով: Իսկ Հայաստանաբնակ քաղաքներին էլ
չուցադարար ուսուցիչներ էին հաղորդակցվում: Եղավ մի
չրջան, որ Հայոց մայրաքաղաք Երևանի շուկաներում, բաղ-
նիքներում, բազմամարդ փողոցներում Հայերենը նեղվում էր,
իսկ սա Հայ բանաստեղծի համար ցավ էր, այն էլ համազգային
խոր ցավ: Հովհ. Նիրազն զգում էր այդ մեծ ցավը, իսկ Գ. Ան-
կե թեև զրավոր արտահայտվեց, սակայն 1960-ական թթ. իր
հրատարակային կույթներում քանի՞ցս դատապարտեց այդ
երևույթը:

Հովհ. Նիրազը գրավոր էլ արտահայտվեց.

Մետոպ Մաշտոցն ապա որդիս,
էլ ինչո՞վ ես հույս բերդիս,
էլ Հայրենիք ինչո՞ւ եկար.
Թե պիտ խոսես օտար լեզվով,
եմես Հայոց գրինն նեկտար՝
Կենաց կանչես օտար լեզվով,
Քաղես Հայոց վարդերն ու հեղ՝
Աղջիկ կանչես օտար լեզվով,

Բայց աղջիկը փուշ կտա քեզ,
Թե պաշտչես օտար լեզվով,
Մայր Հայրենիքն էլ ի՛նչ արտով
Փոռոքերն էլ գրկն վարդով...
Ա՛խ, չէ, Մախան Հայպ է քեզ,
Հայոց վշտում դու մեզք չունես,
Հայպ է քեզ Հոյն Հայրենի,
Թող քեզ ջուրն էլ դառնա գինի,
Քանզի Հայոց վայր Ավշուռուցում
Պանդխտությունն էլ դեռ պոկում
Հայ բերանից Հայոց լեզուն,
Օտարն Հայոց մահն է ու գուժ...

Ռեալան է, որ Հովհ. Շիրազը պիտի գործադրեր բանաստեղծական արվեստի բոլոր միջոցները, նույնիսկ իր իսկ նվաճած բարձունքներից նահանջելով՝ առաջ մղել գաղափարական հիմնախնդիրներ՝ երբեմն գիտակցարար տուրք ապրով հանտարականություն աշատեղ էլ ըստ հնարավորին գործադրելով պատկերավոր մտածողության իր գիեանհոր։ Այն, ինչ պետությունը պիտի աներ, ինքն էր անում, և փոխանակ աշակցության արժանանում էր քարկոծումներին։

«Բիրլխականի», «Ասածու գլուխգործոցի», «Ինքներզանք Համաարդկայինի» հեղինակն այդ անում էր հայ ճարտարաները աննամատչելի եղանակներով՝ իր ազգային գաղափարները հասկանալի դարձնելու նպատակով։ Ինքնադարացման համար էլ խոստովանում էր՝ «Բիրլխական բանաստեղծու գուժանկեց», և հաճախ էր դիմում ժողովրդագրաբանական տաղաչափական մեներին ու միջոցներին, հատկապես մուխամազին ու գազելին՝ Մայաթ-Նոպայի, Ջիվանու, Չարենցի «Տաղարանի» և մանավանդ «Ես իմ անուշի» ժողովրդականացած ու լայնորեն տարածված բանաստեղծությունների օրինակով։ Այդպես է նա գրել «Վերջին իրգամ», «Ղարաբաղի ողբը», «Արձան Անդրանիկին», բանաստեղծությունները, «Անի» պոեմի վերջերգը և բազմաթիվ այլ գործեր։

Հայրենիքը, ինչպես տեսանք, Հովհ. Շիրազի քնարերգության մեջ մարմնավորվել է նաև խորհրդանիշ-տեղանուններով՝ մի իրողություն, որ ժամանակին կամ անհասկացողությանը, կամ հասկանալի մտումամտավորությանը սխալ էր մեկնաբանվում, համարվում ազգամոլության ու սահմանափակության արտահայտություն։ Այնքան էր այդ մեղադրանքն առաջիայական ու վտանգավոր, որ բանաստեղծը հարկազրկված էր մեկ մտնելու՝ «Լոկ Մախս չէ իմ քնարը», մեկ էլ, անսալով իր ներքին ձայնին ու համածողոժրդական հայ բանաստեղծի կոչմանը, դեռ 1957 թ. գրած «Հայոց դանդաղ» անտիպ բանաստեղծության մեջ իր շուրջն ստեղծված միջոցառող ներկայացնում էր այլաբանական թափանցիկ մի պատկերով.

Մի խամ աբլոր չէր երկնում՝
Ժամանակից շուտ էր կանչում.
Ազգին շուտ էր հանում քնից.
Որ ծով կարուն ամեն վանից:
Շատ որ կանչեց՝ չ'ուս գայրացան,
Վերի հարկերն իրար անցան,
Թե՛ ի՛նչ Մախս, ի՛նչ է ու գուժ,
Չայն էլ տպիս և երազում,
Կարում մեծաց անուշ բունը՝
Ես էլ քնուտ, բանիկ ք տունը...

Նկատված մեկ այլ օրինաչափություն մեզ պարտավորեցնում է որոշ պարզաբանումներ այդ այնպիսի աղմկահարույց մի խնդրի կապակցությանը, ինչպիսին Հովհ. Շիրազի աննախադեպ ու անկրկնելի մասինբրգությունն է։ Խորհրդային կերակրամանից անվող որոշ քննադատներ արդեն վաղուց ապավոված կոմունիզմի և սուս ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության գիրքերից իրենց խզնուկ մտավարժանքներով բանաստեղծին հարձակումների թիրախ էին դարձնում՝ մատնացույց անելով նրա ստեղծագործություններում նպատակային հաճախ և տարբեր առիթներով առատորեն գործածված տեղանուն - խորհրդանիշները՝ դրանք համարելով նահանջ ճշշ-

մարտ արվեստից, ինքնակրկնության և ասելիքի սպառվածու-
թյան ապացույց: Արարչուստ նրանց ասածը կարող է թվալ
ճշմարտանման, քանի որ, իրոք, ոչ մի այլ հայ բանաստեղծ
այնքան հաճախ չի գործածել Մասիս, Արարատ, Վան, Անի,
Արաքս, Եփրատ, Մուշ, Սասուն անդանուն – խորհրդանիշները,
որքան Շիրազը: Ասկայն նրանք, իրենց մակերեսային բնու-
նումներով ու միտումնավոր միակողմանի տեսողությամբ չէին
էլ նկատում, որ շիրազյան ոչ մի պատկերի մեջ այդ խորհրդա-
նիշներից որևէ մեկը նույնությամբ չի կրկնվել. այլ ամեն ան-
գամ զրանք նոր նրբորանգով են զեղարվեստական պատկեր
կազմել, ինչպես լուսինը «Հայոց դանթեականում» հանդես է
գալիս բազմաթիվ գիշերալյակի տեսարաններում՝ ամեն անգամ
մի նոր զերով ու կեցվածքով: Անյախ՝

Լուսինն էլ ամպի պղտ բարուրի մեջ՝
Իմ աչքին մի որբ մանուկ էր թվում:

Լուսինն Ասածու արցունքի նման՝
Սև նոճիկների թաթթիչից կախվեց...

Ազգի՛ր, այնքան եմ աճեղ զայրացել
Որ թվում է թե լուսնի երևոխի
Իմ ստամոքսի հետքն է մուցեղ...

Ու մեր աչքերին, երբ վեր նայեցի՛ր,
Լուսինն արևի դիտվը թվալ է այլն, և այլն:

«Բառայկներ լուսնապատումի» շարքի վախճանչորս քառ-
յակներում տեսնում ենք նույնքան տարբեր լուսիններ:
Այդպես էլ Արարատն ինքը՝ տարվա տարբեր եղանակներին,
անգամ օրվա տարբեր ժամերին: Համոզվելու համար կարելի է
մեկ անգամ էլ նայել Մայր ամոռ Ար. էջմիածնի՝ տարիներ
առաջ հրատարակած «Արարատ» լուսանկարների պլանոթ, ուր,
խեղապես, նույն Արարատի արտաբուստ նման բոլոր լուսն-
նկարները էականորեն միմյանցից տարբեր են: Այդպես էլ
Մասիս – Արարատի խորհրդանիշը, որն հիմնականում նշանա-
կում է հայերից իլլված Արևմտյան Հայաստան, յուրաքան-
չյուր պոեմի, բանաստեղծության, քառյակի մեջ, որպես փո-

խարերույթ – մետաֆոր կամ համեմատության եզր, ներկայա-
նում է նոր կողմով ու նշանակությամբ: «Գիրք Արարատին»
շարքում էլ այն մի ղեպքում նա Հայաստանի ու Հայության
հավերժության խորհրդանիշն է, մի ղեպքում՝ գերված Արև-
մտահայաստանի, մի այլ ղեպքում՝ բոլոր արվեստագետների և
հատկապես նկարիչների ու բանաստեղծների համար՝ զեղեց-
կության ու վեհության խորհրդանիշն է այլն: Համոզվելու հա-
մար բերենք ի քանի բնորոշ օրինակներ.

- Մասի՛ս, ինչո՞ւ չես փվում քեզ խլոզի սև զլիխն...
- Ի՛նչ Մասի՛ս խված մի ողջ Հայրենիք...
- Շիրազն ստաց Մասիսն է սյունն Հայաստանի...
- Արքանեղ են ընկել անմահ՝ զարքն էլ վեր, ի վեր Մասիս...
- Տո՛ւն դարձեք, Հայի՛ր, որ Հողն էլ տուն զա՛-
Մասիսն էլ նորեն Հայերեն խոսի...
- Նոր Հայաստանի կենացն էլ կասեմ,
Օ՛ր, քանզի նա է հույսն Արարատի...
- Ինձ Մասիսից զրկող ձեռը՝ նեո է, ուրիշ նեո չկա...
- Մասիսն այսքան բարձր է կանգնել, որ ամենքին երևա,
Որ տեսնի հայն ու հայ մնա, ինչպես Մասիսն իր այս վեա...
- Միտք եմ անում, թե պապերիս ի՛նչ պատասխան պիտի տամ,
Երբ որ զարթնեն՝ գերի տեսնեն կպանավոր Մասիսին...
- Մասիս ստաց Արապա՛տի բախտը ինձ էլ կրացվի...
- Տեսնելով ազգի բնաջնջումը՝ Հայ արյունք ծով՝
Արարատն ամպում՝ խաչակերում էր ճակտին՝ կայծակով...
- Հույսս հազար մի է թամբում՝
Շատ չի՛ մնա Մասիսն ամպում...

Բայց ա՛հ և ամբողջական մի բանաստեղծություն, որը
արվեստի հզոր ուժով խոսացնում է Հեղինակային ասելիքը.

Գարուն ձմեռ	Իմ հույսի:
Տեսիլն անձեռ	Դարավուսակ
Մասիսի,	Սև ամպի տակ
Դատավ մեքանն	ԱՀարկու՛
Հավերժ բերանն	Իրար տեսնում,

Բայց չենք հասնում	Հայանք՝
Մեկմեկու:	Վեր խոսանում,
Նայում իրար՝	Վեր է տանում
Խորհում ենք հար	Մեղ Հավերժ:
Ինչ կիսված,	Շղթայված էլ
Ես նոր, նա հին	Արժեքացել
Հայոց ոգին	Ու կրկին
Մտախփած:	Ահ կուտում
Ձի կարկանդ	Հայ է պահում
Գարեում էլ	Հայ սղգին:

Այս օրինակները որքան էլ շատացնենք, իսկ դա հնարավոր է, միևնույն է, արգարամիտ ընթերցողը կեկատի, որ Աբարաա և Մաախ խորհրդանիշներն իրքս տարրերն են բոլոր կիրառություններում, այդպես էլ տարրերն են Արեմաշյան Հայաստանը խորհրդանշող մյուս անուններն գործածությունները:

Բայց աշտու միտումնավորությունն ու հիմնադրել մեղադրանքները հանձնակատար հեղինակները պարզապես չեն ունեցել և չէին էլ կարող ունենալ հայրենիքի ու նրա սրբությունների այնպիսի գիտակցություն, մեր ժողովրդի մեծ ողբերգության այնպիսի խոր ճանաչողություն ու զգացողություն, ինչպիսին Հովհ. Շիրազն ուներ: Հենց նա էլ պիտի իր տարաբնույթ գործերում հետևողականորեն հնչեցնեի Հայոց ողբերգության ու կորուստների թեման՝ ժողովրդից պետականորեն թաքցվող եղանկի իրողությունը խորհրդային հանրությանը ճանաչելի դարձնու և նույն այդ պետության ու հանուր մարդկության առջև Հայոց դատը բարձրացնելու՝ պահանջատիրոջ իրավունքով: Եվ դա անում էր երբեմն այլասացություններ, երբեմն ուղղակի ու բացահայտ, երբեմն՝ շշուկով, երբեմն՝ առյուծային ահեղագոտ մտուելով:

Ահա, օրինակ՝ Հ. Հայնեի բանաստեղծության՝ **Հանդարտ է Գանդհան իմ հեռավոր** տողը բնաբան գործնելով՝ նա առաջինն է Հայ իրականության մեջ՝ 50-ական թթ. խորհրդային գրաքննության պայմաններում տպագրի խոսքով արասհայտվել զեռ գրիակներ տանող Հայոց մայր գետերի և շիրմամբերի ու գանդակոնների, «լուս ու ամայի մեծ Հայաստանի» մասին՝

այդպիսով համախարհայնացնելով Հայոց վշտի ողբերգականությունը.

Հանդիսա չէ Գանդհան հեռավոր, հեծում է իր մուսլ ամբերն,
 Իր երկրի հերարժակ մոր պես՝ զլուխն է բարեբար գտրուում.
 Ա՛խ, նորից հողմերը նրա հուսաշյուսն իմ հողուն բերին...
Հանդիսա չէ Գանդհան հեռավոր, աշխարհով մեկ է հեկեկում...
 Հեծում են, ծառս են լինում շրթեր նրա արտավոլը,
 Հողմակած անապատն անցնող առյուծի բաշերի նման,
 Եվ սիրտ է կտրատում ողբը ինձ հեռու ամբերից հասնող,
 Հանդիսա չէ Գանդհան ահավոր, նա բողոք ունի անասճան,
 Նա քեզ է երազում, Վոլգա, նա մտուել ունի խելահեղ,
 Հանդիսա չէ Գանդհան աղեկեղ, Հանդիսա չեն գետերն հեռավոր՝
 Ա՛խ, նրաքց դիրն են տանում սովտանջ որդոց վիրավոր
 Ու ճամփին գեռ ծառս են լինում՝ որդոցը փետում գերեզման...
 Հանդիսա չէ Գանդհան հեռավոր, հանդիսա չէ իմ սիրտն այստեղ,
 Որ անտուն գիրն են տանում այսօր էլ սուբբ գետերն այնտեղ...⁷⁹

Մեր ընդգծած տողերի Հայ ընթերցողն անմիջապես կեկատի, որ Գանդհանն ու Վոլգան այլարանական խորհրդանիշներ են, փոխանունություն - համբրբուումներն և, ինչպես Դ. Վարուժանի «Ջարդը» բանաստեղծության մեջ՝ Հաննուր, Թեյզը, Մենը և Վոլգան Համապատասխանաբար մասնանշում են Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, այստեղ էլ Գանդհեք՝ Եփրատ, Արաքս ու Հայաստան պետք է հասկանալ (որովհետև 50 -ական թթ այդպես ուղղակի գրել կարելի էր, բայց տպագրելն էր անկարելի), իսկ նրա բողոքն ու մտուելը Վոլգա - Ռուսաստանին են ուղղված:

Ինչո՞ւ գործվեց մեծ ոմբը, ո՞վ է միլիոնավոր անմեղ հայերի թափված արյան պատասխանատուն, Դ. Վարուժանի արտահայտությունը՝ «Վրեմն ո՞վ պիտ կռն»: Հ. Թումանյանը թշնամու էությունը բնորոշելիս ընդգծել է՝ թուրքը «մարգա-

⁷⁹ Զովհ. Շիրազ, Թևր Գայասանի, Եր., 1958, էջ 347:

կեր-գազան մարդու» Հազար դարի զարգացմամբ հասել էր «բերանն արեռա մարդակեր» բնութագրին: Հովհ. Շիրազի համոզմամբ պատճառը մարդու մեջ ապրող գազանն է, որը, նրան աստվածային բարության բարձունքներից իջեցնելով, դարձնում է անզուժ սատանա, խզճի քայակալութունն է սպահութան ու իշխելատենչության համախարհային շարքը, որոնք դեմ պետք է ծափալվի համամարդկային համախումբ պայքար՝ բռնելու չարագործի ձեռքը:

Մարդ – բաձձունքից բնկած մարդն է ընդունակ մեծագույն չարագործությունների: Իսկ բանաստեղծի սիրտը խզճի սափոր է լցված արցունքով, որ նա լացել է աշխարհի համար, մի ծաղկի համար, մի մեղքի համար, «Հայ կտորածի արցունքի համար»:

...Ո՛վ խիղճ, աշխարհը մեղրածով լինի՝

Առանց բեզ, ո՛վ խիղճ, կիտվի թույնի...

Որևն ղ էր դու, ո՛վ խիղճ, որ կյան

Շիրմարուբներն այս եղբայրական,

Որոնք վերբերն են թե՛ դեռ իմ սրտի,

Թե՛ դեռ արնաքամ մայր Հողալնդի:

Հայոց կտորածները Հովհ. Շիրազը համարում էր «մեղքերի մեղքն հողագնդի»: Ուրեմն եղեռնագործի հետ միասին ամբողջ մարդկությունն է պատասխանատու Հայոց մեծ ողբերգության համար, որ լուռությամբ մեղսակցել է ցեղասպանին ու չի դատապարտել նրան: Ահա ինչու մարդկության փակ աչքերը բանայն ու Հայոց մեծ եղեռնի համաշխարհային ճանաչումը Հովհ. Շիրազը համարում էր անաջնահերթ խնդիր: Միայն այդ զեպում էր հնարավոր խեղճի եկած աշխարհի խզճի հաղթանակն ու «խաղաղության կյտն սեղանի» շուրջ ցեղասպանի համաշխարհային դատապարտումն ու հատուցման պահանջ – պարտադրումը: Իսկ բանաստեղծի ողջության ժամանակ, բացի աշխարհի մի բանի մեծ մարդասերներից, ոչ մի սերունդի ղեռնս պետականորեն չէր ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Իսկ սա նշանակում է՝ այսօր արգեն պետա-

կանորեն զործադրվող և քննաքննի մեջ գտնվող ցեղասպանության միջազգայնացման զորքերիմացը Հովհ. Շիրազն սկսել էր տասնամյակների առաջ՝ նախորդ վարչակարգի ընդերքում խորհրդային անկարելի ժամանակներում:

Ներքուկան 1915-ի հուլիս – օգոստոսին Հովհ. Թումանյանը գրել էր մեր քերթության ամենաողբերգական էջերից մեկը «Հօգեհնանդիտա» բանաստեղծությունը: Բայց նա ոչ պատկերացնում, ոչ էլ հավատում էր, թե հայությունը մարդկային մեծ կորուստներից տարիներ հետո ունենալու է նաև բնօրրանի՝ պատմական հայրենիքի կորուստ: Ընդհակառակը, իրեն բնորոշ լավատեսությամբ կարծում էր, թե հայ կամավորների օժանդակությամբ օւսական զորքերը կազատագրեն թուրքերի բռնազավթած Վանը, ինչպես ժամանակներ առաջ Ներսան էին ազատագրել պարսկական լծից: Ավելին. Թումանյանը հույս ուներ, թե Վանի ազատագրումով հայության երկու հատվածները՝ հմրավորվեն, և հայության համար կրացվի կյանքի նոր դարաշրջան: Ծափաք, մեծ բանաստեղծով հայուստեղծը ոչ միայն չբերկանացավ, այլև ընդամենը մի քանի տարի անց, այդքան զոհեր տալուց հետո էլ հայը զրկվեց իր պատմական բնօրրանից, և կես զար հետո հայ ժողովուրդն ու իր նոր բանաստեղծը կանգնած էին լինելու նոր հույսերի ու նոր հուսախաբությունների առաջ: Հովհ. Թումանյանն իր անհուն վշտի մեջ՝ «մինչև Միջագետք, Մինչև Ասորիք, մինչև ծովն Հայոց մինչև Հելլենագետ, մինչև Գոնտոսի ափերն արևից» հօգեհնանդիտա կարգալիտ սուղամ պատվիրում էր Հայոց երկիրն ու ժողովրդի հավերժությունը խորհրդանշող լեռնազապաթներին: «Հայոց հրդեհի կարմիր բոցերից» առած կրակով իր իսկ մեծքով վառելով «Հայոց աշխարհի մեծ կերտները» Հայկական պար, Մրմանց ու Միփան, Նեմրոթ, Թանգուրեք, «մենակ ու հաստատ» Մասիսի նման՝ կանչել է հավիտյան կորած թշվառ հողիներին՝ «Մարդակեր գազան մարդու» զոհերին, բանաստեղծին միացել են նաև Մարդուսեյայ տարից, Ջիրավի ծորից կյան ու ճանապարհ ընկած ամպերը

«Ճաղիւնք բուրելու, բուրմունք խնկելու», ալից ու ձախից «ա՛հնդ ձեննրով» սաղմոս կարգացող Եփրատն ու Տիգրիսն են միացել սրանց: Եվ, բարենբախտաբար, ոչ մեկի մտքով չանցավ Թումանյանին մեղադրել պատմական տեղանունների «չարաշահման» մեղքի մեջ:

Հովհ. Թումանյանի հաջորդը՝ Հովհ. Շիրազը, Ափյուռքի հայության հետ միասին, վաղուց զրկված էր այդ հենարաններից և ապրում էր Արաբսից այս կողմ՝ Չարենցի հանճարեղ բնորոշմամբ

Այստեղ, այս անիրական Մասիսների դիմաց,

Այս խորշակալ՛, անդո՛ւ և Արարատյան դաշտում...:

Գաղտնիք չէ, որ «գարնան թագավոր» և «պոետների արքա» թագադրված Հովհ. Շիրազը անենաճուտաչի կամուրջն էր Հայրենիքի ու Ափյուռքի միջև, և նրա դիտավոր մուսան, ոգեշնչման աղբյուրը բիրյիական Արարատն էր՝ իբրև խորհրդանշելը ցեղասպանության հետևանքով մեզանից անաբղաբորեն խլված մեր բնօրրանի՝ ողջ Գառմական Հայաստանի՝ իր գեռկանցուն և ավերակ սրբություններով:

Սակայն այս հանգամանքը նենգափոխելով՝ ժամանակի զեկախարությունն ու պաշտոնական հանգանատը քննազատությունը, աչք փակելով և քար չուսթյուն պահպանելով թուրքական ռեպրեզենտությունների հանդեպ, բանաստեղծին ու բուրդ աղնիվ հայտրդիներին մեղադրում էին զանազան չգործած հանցանքների մեջ: Հատկապես դժգոհում էին, թե Հովհ. Շիրազն ապակողմնորոշում է Հայաստանի երիտասարդությանը, հակադրվում է խորհրդային կայսրության ինտերնացիոնալիստական քաղաքականությանը, Մասիսից բացի ոչինչ չի տեսնում և այդ ու մյուս սրբազան անունները հաճախ կրկնելով՝ ծանծրացնում է ընթերցողին: Այնինչ իրականում Հովհ. Շիրազը աշխարհացիր հայ ժողովրդի խոսափողն էր, նրա զարթոնքի չեփօրհասը, նրա իդձերի ու ձգտումների անենաճար արտահայտիչը, հայոց հոգեքի, հայոց լիզվի ու հայ դատի անձնավ պաշտպանը, թուրքերի եղեռնագործությունը՝ 20-րդ դարա-

սկզբին մարդկության դեմ նրանց զործած մեծ ոճիրը գատապարտող և հատուցմանը հետամուտ աղնիվ, մուշեղի, խիզախ պատգամախոսը:

Մի բան հիշու է. Հովհ. Շիրազը անենաճանողական մասերեղական էր Բաֆնուց ու Չարենցից հետո, որի համար Մասիսը ողջ կորցրած Արևմտահայաստանի և բռնազավթված մյուս հայկական տարածքների խորհրդանիշն էր: Բանաստեղծի զբլխավոր մտահոգությունը, մանավանդ վերջին տասնամյակներին, պատմական արգարության վերականգնումն էր, Հայաստանի հզորացումն ու մեր ժողովրդի բարգավաճումը: Անկարելի ժամանակներում նա առարկայացրեց, նյութականացրեց և սերունդների գիտակցության մեջ ամրապնդեց մեր միասնական հայրենիքի, Հայաստանի անկախացման և աշխարհացիր հայության համախմբան գաղափարը: Իսկ ժամանակի և տարածության ուրույն բժրոնումներ ունեցող Հովհ. Շիրազի պատկերացրած ու պատկերած Հայաստանը չէր կարող սահմանափակվել միայն խորհրդային սոսկա պետական սահմաններով, և պատմական անցյալին ուղղված նրա հայացքը ավելի շատ միտված է ներկայիս ու գալիքին:

Հայ կուտորածների հավերժասուգին նվիրված «Հայոց դանթեականը» պոեմը նա 1962-ին հանձնել էր հրատարակման՝ ապավինելով իր մտերիմ Գեորգ Հայրյանի հեղինակությանն ու բարյացակամությանը, սակայն տպագրելու ոչ մի հույս ու երաշխիք չկար:

Հովհ. Թումանյանի խորին համոզմամբ՝ բանաստեղծների տարբերությունը մեծ չափով պայմանավորված է ոչ այնքան նրանց տաղանդի ուժով, որքան ժամանակներով ու հանգամանքներով և զեղարվեստական մտածողության զարգացման ընթացքով: Գամառ-Քաթիկան տաղանդի պակասություն չուներ, նրա թերությունները, պակասությունները իրենը չէին, այլ ժամանակներինն ու հանգամանքներինը, որոնց էլ Թումանյանը վերադրում էր իր առավելությունները: Այդպես էլ, ահա, խորհրդային ժամանակներն ու հանգամանքները քացահայտեցին Հովհ. Շիրազի բնական միբբերը և թելադրեցին նրա

տաղանդի ուղղութիւնը: Թուամայանի՝ երանութեան արժանի նախորդների թարմ երգերում կար մի Հայրենիք՝ «գեհնազանծ, խրոխտ, թեկուզև դերի», Թուամայանի աչքի առջև Հոյսազնեց այդ Հայրենիքը, և մերժի նման ցնդեցին նրա փրկութեան Հույսերը: Բայց Թուամայանն այնքան Հույսի պաշտ ուներ, որ ամենաողբերգական 1915-ին էլ կարծում էր, թե իր «քնական ուսասիրտութիւնը կհաղթանակի», և Հայ ժողովրդին ավելի Հեշտ կլինի Մայր անոռ Սուրբ Էջմիածնից Հանել, քան եմբարտի ու Այաշկերտի Հայոց սրբազան Հովիտներից: Մինչդեռ Շիրազը զրկված էր ... Հայոց սրբազան Հովիտներից ու աստվածանիստ լեռներից:

Մեծ Հույսերը չիրականանալու դեպքում վերածվում են նույնքան մեծ ողբերգութեան: Հ. Թուամայանի 1902 թ. գրած «Տրտուե՛ն» բանաստեղծութեան քնարական Հերոսի Հեռ նույնացած Հեղինակը «ուճայն տրտուե՛նով» գնում էր «իր սիրած մարդկանց, իր լավ Հույսերի գերեզմանների շարքերի միջով»: Մեծ եղևուխ օրերին նույն Թուամայանը «Հազար – Հազարով փռված ու ցրված» անմեղ զոհերին մխիթարում էր Հոգեհանգրուտյան պատարագով:

Հանկ'ք, ի' մ որբեր, իզո՛ւր են արցունք, իզուր և անչա՛ւ.

Մարդակեր գազան մարդը գեռ էպան երկար կըմա...⁸⁰

եզ նույն օրերին գրած «Հայրենիքին Հեռ» բանաստեղծութեան մեջ փայտալուծ էր «նոր ու հոր Հայրենիքի» Հույսն ու գաղափարը: Այդ Հույսն էր փոխանցվել նաև Փաշիգմի դեմ մղված Հայրենական պատերազմում հաղթանակած երկրի քաղաքացուն՝ Հովհ. Շիրազին, որը նախ Հովատում էր գալիքում Արևմտահայաստանի ազատագրմանը, ապա Հովատացնում էր ողջ Հայութեանը: Նա արդարութեան ու ճշմարտութեան զինվոր էր և Հույսի ազնիվ քարոզիչը: Բայց չիրականացող մեծ Հույսը բանաստեղծի Համար դառնում էր մեծ ողբերգութիւն: արդեն 1960-ական թթ. նա զրկված էր Հույսի բոլոր Հեռարաններից: Սփյուռքի Հայութիւնը ոսկի վտակներով ձուլվում էր օտար կազույտ ծովերին ու օվկիանոսներին, Հայրենի-

քում վտանգի մեջ Հայոց լեզուն⁸⁰, Նախիջևանը վերջնականապես հայաթափվում էր, Զափաքն ու Արցախը ենթակա էին նոր տերերի կամաչականութիւններին, իսկ «յուս ու մայրի մեծ Հայաստանի» մասին խորհրդային դեկադաները պաշտոնապես հայտարարում էին, թե իրենք Թուրքիայից տարածքային որևէ պահանջ չուեն: Վ. Մալոտովի, ապա և Վ. Պոզդոնուս ապակիի, բայց անցանկալի այդ հայտարարութիւնները ճանրագույն հարգածներ էին հայութեան Համար. նրանք առանձնապես զստնացրել ու հուսահատեցրել էին գերզգայուն Հովհ. Շիրազին, մղել հայութեան նահատագրի մասին ծանր ու մտալ խորհրդածութիւններին:

Թե որ անցի Հողար տարի

Հայ կմես՝ աշխարհում... –

Միտք է անում սիրուս բարի,

Միտք է անում ու տիրում: –

Մի խել ծով էր ստա՛լ. Հիմա

Նա դարձել է մի խուլ գետ,

Վախեւում եմ՝ գետն էլ գետ

Այս նորապար երթի Հեռ:

Միտք եմ անում, կարում քու՛նքս

Ու չգիտեմ, ո՞վ աշխարհ,

Իմաստուն է տիրութիւնս,

Թե՛ քեզ նման խելապար... –

Մերն էր ելքը: Փակուղային իրադիմակում Հայտնված ժողովուրդը ինչ չէր կարող պահանջել այն ժամանակվա եղանակած պետութիւնից՝ սեփական ազգամական ուժից զուրկ և ամեն ինչով Մասկվայի հրահանգներին ենթակա Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան Գերագույն խորհրդից ու ՀԿԿ

⁸⁰ Այս մասին հանցամատուր են տես մեր «Սնտսյակ Մաշտոցը Հովհաննես Հիրազի և Պարույր Մանի հայացքով» ուսումնասիրությունը. «Գրական հանգրվաններ», գեղք Ա, էր. 2003:

Կենտրոնից, պահանջում էր իր բանաստեղծից, որը թեև մի յուրօրինակ ազգային պետութիւն էր խորհրդային պետութիւն մեջ, սակայն ինքն էլ էր ծանր որոնումների բալկոններում, անգամ Հերոս նախնիների ոգուն էր գիտում նրանցից պատասխան ակնկալելու անհույս հույսով: Ահա ինչ է գրել նա 1967 թ. Հունիսին Ուլանուս Անդրանիկի արձանի բացման առթիվ.

Արձանացար, բայց դարն է լուս, Անդրանիկ,

Ինչպես պաշտան մտած մի թուր, Անդրանիկ,

Բանաստեղծը սարերն ինչպե՞ս տուն բերի,-

Գտնե՞ դո՛ւ և՛ Մասիսն ի՛նձ տուր, Անդրանիկ:

Իրեն ապագինած ժողովրդի Հարցադուժներին իրատեսական պատասխանի որոնումներում Հովհ. Երթազը նախ Ջարնեցի «Ո՛վ Հայ ժողովուրդ, քո միակ փրկութեանը քո հավարական ուժի մեջ է՞» ծածկագիր պատգամախոսութիւնն էր կրկնում իր մի քանի բանաստեղծութիւններում, միաժամանակ, նույնպես գաղտնագիր-արքայադատով, առաջադրեց իր «Մանչա՛, Երթա՛զ, ազատութիւն Մասիսին» և «Մանչա՛, Երթա՛զ, պահպանութիւն Հայոց լեզվին» պատգամ-կարգախոսները, գրեց «Սփյուռքի հինքը» (երբ գիրն դառնամ իմ գլխի տերը), «Հայոց Հույրը», «Մասիսի Հույսով» բանաստեղծութիւնները, որոնց մեջ արդեն ամենից լավատես Հայ բանաստեղծներից մեկը, Հայոց Ողբու և Հույսի մեծ երգիչը, որ ազգային արժեհամակարգի կրողն ու փոխանցողն էր և իրեն պատասխանատու էր զգում ոչ միայն ներկայի ու գալիքի, այլև նախնիների հիշատակի առջև, Հույսի մասին արտահայտում էր վախճիրած ու երկրայորեն: Խորհրդային Հայաստանի պետութիւնն իր բոլոր առավելութիւններով Հանդերձ ազգային պետութիւնն չէր, քանի որ էր իր լուծում ազգապահպանութիւն, Հայոց լեզվի առաջնայնութիւնն և Հայութիւնն միավորման հարցերը, որքան էլ նրա զեկազարները լինէին խեղամիտ Հայրենասերներ: Ավելին, ամենարուսն ցանկութիւնն զեպքում անգամ նրանք չէին կարող վերագործնել Հայաստանից իրված

ու հարեաններին բուսակցած հոգաւարանները ո՛չ Թուրքիայից, ո՛չ էլ խորհրդային հանրապետութիւններից: Չէին կարող կանխել ճերմակ Զարդի ձուլման վտանգը ո՛չ Հայրենիքում, ո՛չ էլ մասնավանդ Սփյուռքում: Ընդհակառակը, ազգային-քաղաքական լուրջ խնդիրներ արծարծելիս նրանք էլ էին Հայտնվում անկախութեամբ ինչ պատասխանների սեփական ժողովրդին: Պատմական անցյալի Հայոց արքաները, գտնե՛ Հայաստանի Հզորութիւնն ժամանակներում, ունեին իրական աւելախոսութիւն և ինքնավարութիւն: Խորհրդային Հայաստանի ծագումն ու բարգաւաճումը, ճիշտ է, ողևորիչ էր, բայց անցանկալի երևույթներից դժգոհ բանաստեղծն ավելի խորն էր զգում անկախ պետականութեան անհրաժեշտութիւնը: Ահա ինչու էր նա հեռավոր ժամանակների Անուշավան Սոսանվեր թաղավորի հիշատակին ձեռնում «Դո՛ւ ես, արքա...» պատրանք-բանաստեղծութիւնը: Հովհ. Թումանյանի «Պատրանքը» ըզվանդակային խորութեամբ ու ձևի կատարելությամբ հանգրձան էր շրջանակ էր ընդգրկում և արժարժում էր կենսական բնական խնդիրներ: Պատրանքային մի պահ մեջ վերակենդանանում են մանկութեան հուշերը, սարերը, մութ անտառը, հովիտական կենցաղը, զոգորի հարձակմանը եկնակա հուր «Իր թեից» Հսկող, «վեր կացած» Չալաի շուներ, մութ անտառում նրա հետևից գնացող «քաղ ախպրերը»: Բնարական Հերոս Հեղինակին պատրանքի մեջ իզուր թվում է, թե վաղուց ձեռք աշխարհից զնացած» սիրելիները կվերադառնան, բայց նրանք հեռացել են բանաստեղծի ականջում թողնելով միայն իրենց երբեմնի զոյութիւնը հիշեցնող «դիւ ձեները»:

Այլ ընդգրկում ունի շիրազյան պատրանքը, որն արտահայտում է Հայոց երբեմնի պետականութեան վերհույր.

Հայոց Սոսայց սուրբ անտառում

Սոսանվեր արքայի պիս

երազիս մեջ լուս թափում՝

Հիշում էի, արքա իմ, քեզ:

Եւրջս անվերջ շրջում էին
Սոսիները անձն ուսկա,
Երբ ներս մտա՛ն սոսափեցին՝
Ինձ սասցին՝ «Ին՛ւ ես, արքա»:

Ի՛նչ պատահան տայի, տեր իմ,
Սոսիներին րո՛ մտերիմ,
Մով կարտին, երբ որ նորս
Հուսալանբով գտար խոսքի
Կրկնում էին՝ «Ին՛ւ ես, արքա»,
Հապա ո՛ւր է թազդ ոսկի...»:
...Ու մինչ այսօր՝ ողջ կյանքիս մեջ,
Հայոց Սոսաց անտան Հսկա
Հուսալում է պտտարանքիս մեջ՝
«Հապա ո՛ւր է թազդ ոսկի»:

Հայոց Սոսաց Հսկա անտարբ՝ ժողովուրդը, կա, խորհրդային ժամանակներում արքան էլ ձեռակտորեն կա, բայց չկա պետականությունը՝ ոսկյա թազը: Եվ այս իրավիճակում բանաստեղծի Հույսը ազգահավաքն էր, Սփյուռքի Հայության փերադարձով Հայաստանի Հզորացումը, Հայ Հողերի վրա՝ Արարատի Հայացքի տակ, Հայության Համախումբ միասնությունը:

Հույսս տուն գպն է ցրված սասողերիս,
Նրանք էլ՝ անհող՝ ինչպե՛ս դան իրար,
Էլ ինչո՞վ Հայոց ստաղն արեանար,
Էլ ինչո՞վ բազում բերե՛ր վերքերիս...

...Եվ Հույսս՝ մաղ էլ գաւնա՛ չի կտրի,
Փերի լեռներին քաշով մեկ է նա, —
Կապտովի՛ գերված Հոգս բյուրավնյա,
Ես չեմ Հավատում չար նակատագրի...

Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի, միջպետական շահախնդիր Հարաբերությունների պայմաններում Հովհ. Շիրազի փայփայած Հույսի իրականացումը, ցավօք,

միայն Հայության կամքից չէր կախված. բանաստեղծը դա լավ էր գիտակցում: Ուրեմն պետք էր ապավինել բարեպատե՛հ ժամանակների, երբ աշխարհի քնած խիզճը կարթնանա, և կգա Հատուցման պահը:

Եկելքի կդա աշխարհի խիզճն, այսպես քնած չի՛ մնա,
Ինչպես մոր կուրծքն ուղող մանկիկ՝ նա՛ էլ մի օր կտրթնանա,
Իսկ թե քան է՛ քնած մնա, ո՛՛հ, թե խիզճը չզարթնի՛
Ո՛հ, թե խիզճը խեղճի չգա, բայց չէ՛, կդա,—

Հավատում ու Հավաստացնում էր նա: Հավատարիմ իր և մեր ժողովրդի բնական խաղաղասիրությունը՝ նա շարունակում է Հույս կապել ազգերի եղբայրության, խորհրդային երկրի Հզորության և մարդկային քնած խզճի արթնացման հետ:

Եղբայրության գործն է վսեմ՝ Մասին Հանել բանդից,
Թեկուղ ինչ-որ ցեղ մի նսեմ յաթաղանով խանդից,—

զրեկ է Հ. Շիրազը մի այլ բանաստեղծության մեջ: Բայց խորհրդային եղբայրությունը, բարեկամությունը նրա համար էին, որ կարողանան պահպանել Հողագեղի մեկ վեցերորդ մասում ստեղծված աննայածիր կայսրությունը և Հայրենազուրկ Հայությանն էլ պարտադրեին լռել ու համակերպվել արդեն կատարվածին, թուրքիայից չպահանջել միլիոնավոր զոհերի դիմաց Հատուցում և բռնազավթած կամ նրան նվիրաբերած պատմական Հայրենիքի վերադարձ, Աղբրեջանից չպահանջել դարձյալ իր նվիրած Արցախն ու Նախիջևանը:

Բարեկամը որ քեզ խլեց, էլ թշնամին բան կտա՛ ես,—

անպատասխան մորմորում էր բանաստեղծը, բայց դա ամբողջ Հայության մորմորն էր՝ շիրազյան Հանդգնությունը արտահայտված: Ուրիշ ելք չէր մնում. պետք էր Համախմբել Հայությանն ու բռունցքել բոլոր ուժերը:

Բավ է, Հայեր, ցրված մեաք մասներին պես, —
Բռունցքվե՛լն է Հավիթությունն Հայաստանի...

Հուլիսյան Հայ ամեն բանաստեղծ Հայրենիքի գինյոր է, մեծ բանաստեղծները՝ զորահրամանատարները: Իսկ Հովհ. Շիրազը թե՛ գինյոր էր, թե՛ հրամանատար: Չնուանանք, որ նա ամենից հզոր գրական ընդգրկմությունն էր խորհրդային օրերում, Հայրենիքի և Միջուսքի միջև իրական ու Հուսույի կենդանի կամուրջը, եղեռնազարհ Հայության պատմական հիշույթիան ճիշդ:

Հայության վերջին ուսանը՝ Խորհրդային Հայաստանը, որ-բան էլ փոքրացված ու «երկաթյա վարագույրով» առանձնաց-ված, այնուամենայնիվ Հույսի փարոս էր: Բանաստեղծի Համար էլ այն սիրելի էր որպես Հայրենիք, որը կառուցվում էր, օրեցօր հզորանում ու գեղեցկանում, դառնում էր արդիական գիտու-թյան ու մշակույթի, գարգացած արդյունաբերության ու գյու-ղատնտեսության երկիր, որը սխյուսարհայի Համար էլ դառ-նում էր Հայրենի տուն: Բայց այդ երկրում ամեն ինչ սիրելի չէր, ուստի չէր կարող լրարժեք գոհացում սուլ Հայության ձգտումներին: Իր առաջնություններով ու թերություններով Հանդերձ՝ այդ էր մեր Հայրենիքը, որն էլ՝ ավելի կհզորանար ու կգեղեցկանար աշխարհացիր Հայության տունդարձով: Ահա ինչու էր Հովհ. Շիրազն ստանենել Հյուրընկալ տանտիրոջ ու երայնագործի դերը:

Գիտեմ, սիրում եք, ո՞վ իմ պանդուխտներ, Հայոց ուսանը

Եվ ավագ, գիտեմ՝ ինչը չեք սիրում,

Գիտեմ սիրում եք, պաշտում եք, տեսչում մայր Հայաստանը,

Եվ ավագ, գիտեմ՝ ինչը չեք սիրում, -

Սիրում եք, պաշտում ձգտում եք Հստեղ մեծ Հնուստանը,

Ես էլ չեմ պաշտում՝ ինչը չեք սիրում...

... էլ ո՞վ մեր Հայոց լեզվով մուշտ,

Դարձեք, որ Աբուբակ Հայերեն Հոսի,

Տո՛ւն զարձեք, Հայեր, որ Հողն էլ տուն զս՝

Մասիսն էլ նորեն Հայերեն խոսի...

Իր բանաստեղծություններով ու պոեմներով նա Հայ ազգի արթնացրեց երբևից, զատտարակեց նրան Հայոց պահանջատի-

բուլիան ողով ու Հայության Հանդեպ թույլ արված մեծ ան-արդարությունը բարձրաձայն զատապարտեց անկարելի ժամա-նակներում: Նա զարմավ 1960-ական թթ. գարթոնքի զանգա-հարն ու արցախյան ազատամարտի հերոսական սերնդի գաղա-փարական առաջնորդներին մեկը: Ավելի քան կես դար առաջ է նա գրել իր աննախնդար բանաստեղծություններից շատերը, որոնք ուսմբի պես պայթում էին դահլիճներում ու հրապա-րակներում, արդարության ծարավի մարդկանց համար դառ-նում էին միս ու արյուն, Հայ մարդկանց հիշեցնում պետակա-նորեն թաքցվող մեր ծանր կորուստներն ու Մեծ եղևնի ահալոր ողբերգությունը: Այդպիսիք էին կորուսյալ Հայրե-նիքին նվիրված ձեռքից ձեռք, շուրթից շուրթ և սրտից սրտ աճեցող բանաստեղծությունները, որոնք ընդգրկում էին մո-ղովորական լայն զանգվածներին և ուղղորդում նրանց մտա-նողությունն ու գործնականը: Հասկանալի է, որ այդ հրեղեն բանաստեղծությունները, որ մեր քաղաքացիական քնարե-րգության գլուխգործոցներից են, խորհրդային իրականության պայմաններում չէին տպագրվելու, բայց և զարմանալի է, որ Հայաստանի անկախացումից ու Արցախի ազատագրումից հե-տո էլ դրանք անխաթար ամրողջություն չեն տպագրվել: Այն-ինչ հեղինակը հանուն գրանց 1975 թ. հրատարակեց խորհրդա-յին երկիր բարձրագույն պարզնիք՝ Լենինի շքանշանից:

ՀԿԿ Կենտկոմի միջնորդ - պատվիրակը՝ Հովհ. Շիրազի իրա-կան մտերմներից էր՝ ականավոր գրականագետ, եռանդուն ու արդարամիտ քննադատ Ս. Ազարտյանը: Մի լավ խնդիր լուծած մարդու ուրախությանը մի օր նա, Շիրազի տուն մտնե-լով, ասաց.

- Կենտկոմից լավ լուր եմ բերել, Շիրազ, - Մոսկվան համա-ձայնել է քեզ Լենինի շքանշանով պարգևատրելու:

Կուսակցության անհրաժեշտ բան բանաստեղծը տեղնուտեղը հարցրեց.

- Ինձնից ինչ կուզեն:

- Քեզ Համար մեծ բան չէ նրանց ուզածը, - ասաց գրակա-նագետը, - դու ավելի լավերն ունես և դրանով չես հասել հա-ձայնարհային հռչակի: Փողովորդի մեջ քո անունով այնքա՛ն

չառ բանաստեղծութիւնն է թափառում, որոնց Հնդիւնակը դու չես... Իսկ դու Հիմա ընդամենը մի տեղ, թեկուզ մի երկրորդական թերթում հաղորդում ես, թե իբր լավ չես հիշում, որ այդ բանաստեղծութիւնը դու գրած լինես:

— Բայց ո՞րք, Սուրեն, — զարմացավ բանաստեղծը: — Է՛ն, է՛ր, առեգական չափով գրած «Ղարաբաղի ողբը», որը մեծ ցամափ է հանել: Սփյուռքի մամուլում սպվել է, և ամեն դահլիճում ու հափաբում արտասանում են: Աղբրեջանցիներն ու թուրքերը բողոք են ներկայացրել Մոսկվային:

— Բայց դա, Սուրեն, հաստատ ե՛ս եմ գրել, որովհետեւ ուրիշը չէր գրել, և հենց Մոսկվայի՝ համար եմ գրել: Էլ ինչո՞ւ աղբրեջանցիների բողոքին մոտկաներում կարևորութիւն են տալիս, իմ խոսքին՝ ոչ: Այնինչ մեր ժողովուրդն անմիջապես կանկեց այն, երգի վերածեց ու արպես չբանջան՝ ոչ թե իր կրծքին՝ դրսեց կկրել, այլ իր սրտի մեջ կպահէ:

Ղեկողներդ ասա, որ Երրազը իր բանաստեղծութիւնն է համարում իր շքանշանը...

Ահա թե ինչպիսի Հովհ. Երրազը հրամարմեց Լենինի շքանշանից: Սա ես վերահաստատում է մի հշմարտութիւն. Հովհ. Երրազը, ներազույն քնարերգու լինելով, սրտի ու պոսթիվումի բանաստեղծ էր քաղաքացիական քաջատիկ արիւթիւմը, և նրա հրաբխային այս բանաստեղծութիւններն իրենց հանապարհ վազուց էին հարթել զպիս ընթերցողի սիրտը: Դրանք հանուն պատմական արդարութիւն վերահաստատման համախմբեցին, կոզի կոչեցին խաղաղասեր հայ մարդուն, գրանք Արցախի ազատագրութիւնն և Հայաստանի պաշտպանութիւն համար մարտնչող հայ զինվորի շուրթին էին, հոգուն ու մարում և նրան առաջնորդում էին զկոզի նպատակասլաց ու հաղթանակաբեր գործողութիւններ:

Մի անգամ ես ընազրային հշգրտութեամբ ընթերցեցի իր պատմական զերը կատարած շիրազան փոթորկաշունչ այդ բանաստեղծութիւնը, որը նախ կազմակերպեց արդարութիւն ծարավ հայ երիտասարդութիւն միտքն ու կոփեց սրին, նրան նպատակամղեց ու կամավոր տարավ ազգմի դաշտ և աշտօր ու

միշտ հայրենիքի հայրենիքի զինվոր է, քանի զեռ չեն իրականացել նրա բոլոր պատգամներն առաջադրութիւնները:

ՂԱՐԱԲԱՂԻ ՈՂԸ

Ղարաբաղը մօրս կանչն է,
Ինձ է կանչում հուշով արտում,
Ղարաբաղը իմ կանչն է՝
Կարծիր, բայց սե ունի սրտում...

Դու էլ, դառած կովածաղիկ, իմ բաղին ես այ՝ Ղարաբաղ,
Միզըդ օտար մեղվին ավոյ իմ ծաղիկն ես այ՝ Ղարաբաղ,
Հայաստանից քեզ պոկողը Հայաստանի երբայրը չէ՝,
Նրկուսիս մեջ դու էլ մուր իմ բաղին ես, այ՝ Ղարաբաղ:

Քանի՜ բանան դաման տարի Հայ բերանին ախ ես դառել,
Փոխել հայոց անունըդ Արցախ, օտար Ղարաբաղ ես դառել,
Դարձել օտար շողացին ջուր, աղիկը սրտին դառ ես դառել,
Էլ չեմ կարող միշտս լուել, մայ՛ն ինձ ու քեզ, հայ՛ն Ղարաբաղ:

Դեռ էն զլիցի հայոց հող ես, ստովածընձս իմ լուսնածօր,
Քո զբախտից ձեռ քաշող հայն՝ հայոց մայն է, ո՞վ մեղքածօր,
Թե եղբայր են՝ ինչո՞ւ ես քեզ մեր մեջ դարձրել կովածանձօր,
Ասովածընձան ինչպե՞ս թողնես սատանային փայ՛ն, Ղարաբաղ:

Կթուամեն անարիւման՝ այլկուսնիդ ձեռքից դատված,
Երբաստի ես խաղած լուս՝՝ Կոմիտասի երգից զարկված,
Քեզ չեն թողնի իշխան մնա՝ մայր Սեանի զղից դատված,
Քեզ կուլ կուսան մաղամները, զսուր կաննե՛ր գայ՛ն, Ղարաբաղ:

Դու՛ չես թոկվել, քեզ իւլել են, որ մտանառ երգերն հայոց,
Երկերիդ պես խորացել են անդեղափոր վերքերն հայոց,
Ախ, և՛րբ պիտի լուսնեիրդ պես վեր բուռնեցրվին ձեռքերն հայոց,
Որ չթողնեն հայոց արժիվն օտար ծովին ճայ՛ն, Ղարաբաղ:

Բայ՛ աչքերիդ, անզու՛ւնըդ տես, եկ, մի՛ ձուլվիր օտար զարմին,
Իմ օտարիքը հայոց կուռնել, և՛ կ, խոսմովիք քո երամին,
Մեղ չի՛ կարող մահն էլ դատել, մի՛ հոգի ենք ու մի՛ մարմին,
Դու իմ Կարօ, իմ Սասունի, իմ Մատիսի թայ՛ն, Ղարաբաղ:

Մենակ դու չես որ դիմանամ, չոքը զբախտ ունեմ իլլված, Վասն ծովը, Կարսն ու Վանը, Արիան սարը, Անին փլված, Հայկ Նահապետ Մասիսի Հետ զիս բանտում են՝ ծուևներ ծալված, — Տարաբառ է Տարոնը զիս, ո՛ւր ես, Ավարսյր՝ Դարաբաղ...

Ասում են, թե չեն է կյանքըդ, սուանց սողդի չենն ի՛նչ անեմ, երբ չի գնդում Հայոց լեզվով՝ դիմով թաղի մենն ի՛նչ անեմ, Հյուսիսն ինքն էլ ստացուու է, էլ իմ անդրը քենն ի՛նչ անեմ. — Գինիդ ստար թասն է խմում, սրցունքըդ՝ Հայը, Հայ Դարաբաղ:

Բարեկամը որ քեզ խնց, էլ թշնամին բան կաս՝ ես, թե լուս մաս քար աշխարհը շարք կարս ու Վան կաս՝ ես, ի՛նչ զուտ բսխեմ, որ ծիծաղեմ, ասեմ՝ Նաթիլան կաս ես, Մուրթիլ եմ ես էլ քեզ պես, պի՛ղծ է աշխարհն, այ Դարաբաղ:

Քանի իմ Հոգն ինձ չեք տվել՝ ձեզ ելուդակ պիտի ասեմ, Ավարայրի Վարդան զասած՝ ես ձեզ Վասակ պիտի ասեմ, երբ իմ բուր Հոգերն ինձ ստաք՝ ձեզ Հրեշտակ պիտի ասեմ, Պիտի պաշտեմ ողջ ազգերիդ, երբ որ չասեմ վայ՝ Դարաբաղ:

Դու էլ Հայոց գրկից խաղած իմ բաղիկն ես, իմ Հեռավոր, Գունկալուրթի բախտի ոտքին խաղաղի ես, իմ լնուստոր, Բայց ինչքան էլ բաղիկիս պես մեր մեջ մասս կուզվանձոր Երբայն սասց՝ աշխարհն անյնի՛ Հայ գաղթի ես, Հայ Դարաբաղ:

Մեծ եզեռնի 50-ամյակի նախօրերին պատմական մեծ անարդարությունը դատադարտելու, միջինավոր անմեղ նահատակներին ողբելոցել և նոր սերնդին ինքնաճանաչման բերող նոր խոսքը պիտի հասունանանք ու ծնվիր քիչ հետո:

Որպես լրացում կամ շարունակություն թուամայանի «Հոգեհանգիստ» բանաստեղծության նոր իրավիճակի թելադրանքով Հովհ. Երբաղը Հանդգնեց գրել «Իմ Հոգեհանգիստը» բանաստեղծությունը, որով զարմայա աշխարհի ու մարդկության քնած խղճին էր դիմում անզոր Հուսահատությունը:

Երկ՝ Թուամայանի ժամանակներում, «անզոր օրենքով մեր ստափածային» քրիստոնյա մարդկությունը զոնն ննջեցյալ-

ների Հոգեհանգստյան Համար գերեզմաններին պարսաճանաչորեն խունկ էր ծխում, իսկ այսօր

Սուևկի բույր տեղ գերեզմաններին գինի են ջուղում,

Որ Հարբի, ենջի անՀանդիստ մեռյալն իր մի բուռ Հողում...

Այսօր փոխվել են ժամանակներն ու բարքերը, գլուխներ բանտոց, ծով շղթայոց մարդ-ստատանան՝ աշխարհը խառնել է այնպես, որ

Ավա՛ղ, ոչ խունկի, ոչ աղթթի են այժմ Հավատում,

Մարդն է ստատան, որ նմանին է Աստուծոց գատում,

Լեռներ է բանտում, ծով է շղթայում այս մարդ — ստատան,

Եվ դեռ ասում են՝ ավիխի գատթար պիտի գատանան:

Եվ Հոգու Համար էլ չեն աղթում և սուանց խունկի՝

Քամում են միայն լուս ողորմաթան իր քուստուների:

Կարո՞ղ է սրկյոք Եղեռն տեսած և խլված Հայրենիքի դիմաց ոչ մի Հատուցում չստացած Հայ մարդն առՀասարակ Հանգիստ ունենալ կյանքում կամ Հեամահու. անՀարցադրում, որը «մեր Հայրենի օրենքովը Հին» դեռևս ընդունելի էր Թուամայանի Համար, իսկ Երբաղի Համար ոչ: Ուրիշ ժամանակների և հանգամանքների բանաստեղծ էր ես, որը, սնվելով նույն թուամայանական ամանդներից, պարտավոր էր և չէր էլ կարող չըջանցել Հայության անջն ծառայած ևսազանգարուր էր և չէր էլ կարող չըջանցել խնդիրները: Նրա Համոզմամբ՝ Հայոց մեծ ողբերգությունն իր անելիությունը ընդունել է տիեզերական չափեր, բայց մարդկության կողմից դեռևս չդատապարտվելով՝ կրկնվում, ազեռ է դառնում նաև ուրիշ ժողովուրդների Համար: Սեփական ուժերի գերազանահատումն ու անպատժելիության գրտակցությունն է թայտաթնքերից, էնկրներինց Հետո Հեպրեներին մղել նոր ոճբազորություններին, նույն անպատժելիությունն ու աշխարհաբաղաբական շահերը, նույն ազահույթյունը, ուրիշ ժողովուրդների իրենց Հարևաններին իշխելու տենչը պատճառ դարձան, որ 1991 — 94 թթ. Աղբերջանը պատերազմ սանձազերծեր Արցախի ու Հայաստանի դեմ, ինչ-

պես և ծափալվելին արխագական ու օսական ղեպերը: Իսկ Քուրբան ամբողջ Կովկասը իր բոլոր մողոլուրդներով, նրանց հողերով, պատմությամբ ու մշակութիամբ իր երկրի հյուսիսն է համարում և եթե չունենա զսպառապիկ կշարունակի նվաճողական պատերազմը իր պատմական արտոնակն գոհացում տալու համար: Ազդրբջանն էլ անամոխարար հայտարարում է, թե «Երևանն ու Էջմիածինը կառուցված են աղբրեջանական հողերի վրա», իսկ Նոյեմբերյանն էլ ոչ ավել ոչ պակաս Ազդրբջանի հյուսիսային մասն է»:

Մինչդեռ Հովհ. Շիրազը բանաձևումով՝

Հայոց եղևունն սնդազալ ու անթալ է Հավիտյան, —

Տիեզերքն է դազալը եղևունամեռ հայության:

Քանի յաթաղանի մեղքը չի դատապարտվել, անհողի աշխարհի առաջ մորթված Հայոց անհամար զոհերի՝ «մեր աստեղնաթիվ ձերի ու մանկանց» հողեհանգիստը աշխարհնաշխարհ չեն կարողացել, քանի Հայոց գերի լեռներն ու հովիտները, գետերն ու լճերը, քաղաքներն էլ անները չեն վերադարձվել՝ Հայ հանդուցյալը չի կարող հանգիստ ունենալ, թեկուզ նրա գերեզմանը «գրենձով կղզի դարձնեն»:

Ազգի՛ք, ի նկեռմ եմ ալի արցունքս ձեր աղուհացին,
Գրե՛մ՝ կհենձի արդարությունը մի օր իր սուրբ ձին,
Մատիս վրա կույր բաժախ աչքը պիտի քաղցրանա,
Որ հայն էլ, ձեզ հետ ծխածանվելով, Մախր բարձրանա,
Որ ճերմակ Մատիսն հակա և Հավիթ մամի պես լսին՝
Վառենք իմ Հայոց կտորածների շիրմապառտերին,
Վառենք սարկվյալն անհիկ եղևուն անյուսի վրա,
Որ անապատն է գիշերաթեղար պատանդը նրա:

Մայր Հայաստանը քանի գեռ այսպես կիսում կմնա՝

Հանդիսա չի նեջի հայ շիրիմն անզամ, եթե հայ է նա...

Սորհրդային ժամանակներում Հայաստանում և Աֆյուռում ամենուր հնչող, ձևօրից ձևօր անցնող շիրազյան բանաստեղծությունները վիթխարի ներգործության ունեցան սե-

բունդների վրա, դատախարակեցին նորագույն ժամանակների զարթոնքի հայ սերնդին, աղկեցին նաև ժամանակի գրական մտածողության վրա և Գ. Անակի, Ս. Գալսեհիցի ստեղծագործությունների հետ միասին դադափարապես նախապարտատեցին արցախյան ազատամարտի հերոսական սերնդին: Այս իմաստով, «Հայոց դանիթնակտը» պոեմից բացի, առանձնահատուկ կարևորություն ունեցան «Ղարաբաղի ողբը», «Վերջին իրձ», «Իմ հողեհանգիստը», «Հայոց հակառակորդը», «Մեծ եղևունը», «Հանձարեղ խելագարը» բանաստեղծությունները, մի քանի «Կտակ»-ները, «Հուշարձան մայրիկիս», «Հուշարձան հայրիկիս», «Գիրք Արարատին», «Քառյակներ մարտապատումի», «Քառյակներ Հայոց լեզվապատումի», «Քառյակներ հայրենապատումի» շարքերը:

Անկաս զբաքենական արգելքներից՝ Հովհ. Շիրազը ծափուն նամակաբույրություն ունեց պիտուքահայության հետ: Կար և փոխադարձ սերն ու հավատը մեծ բանաստեղծի նկատմամբ:

Հայաստան եկած ամեն սփյուռքահայ պարտը ու գերազույն երջանկություն էր համարում Հովհ. Շիրազին հանդիպումը: «Անի» հյուրանոցում հանգրվանած կանազահայերի 30 հոգիանոց մի խումբ՝ Հրաչ Բոյաճյանի ղեկավարությամբ, բուռն ցանկություն ունեց Հովհ. Շիրազին հանդիպելու նրա տանը: Ինձ որ հարցրեց՝ ինչ պիտի անենք, սաացի՛ ավելի ճիշտ է՝ մենք գնանք «Անի» նրանց հանդիպներ: Հավանեց: Մյուսանախորհիցիներ ու գնացինք: Դիմավորելու եկավ Հր. Բոյաճյանը՝ տիկնոջ հետ: Ողջունեցինք իրար, բայց տիկինը՝ շքեղ մի գեղեցիկուհի, Շիրազին իր գրեկն ստավ ու բաց չէր թողնում: Շիրազը զբեթե հրելով ազատվեց նրա բուրավառ գրկից ու չլզազարող համբույրներից: Այդ բնթացում ներքև իջան խմբի մյուս անդամները, որոնց մեջ կային ավելի շքեղ գեղեցիկուհիներ: Ու երբ նրանցից ավելի շքեղ մեկը ևս Շիրազին իր գրեկն ստավ ու սկսեց շքեծ համբույրների տեղատարափը, բոլորիս համար զարմանալի մի հարց ավել նրան Շիրազը.

— Իս, է՛լ ևս Հրաչ Բոյաճյանի կնիկը...

Հովհ. Երբագն ինքն էլ էր փոփոխուած գնալ Ափյուռք՝ իր ազգակիցներին հանդիպելու և նրանց բախարհելու:

Երան հանդիպման էին հրավիրուած գրեթէ բոլոր ափյուռքահայ կենտրոններէջ: Բայց այդպիսի հնարավորութիւն տրուած էր միայն որոշակի գրողներին: Իսկ հրավիրողներին Հովհ. Երբագի մասին այստեղից տալիս էին աննպաստ գնահատականներ, թէ իբր անկառավարելի է, հարբան է... Այնտեղից էլ թերթերուց գրում էին. «Մենք հոս շատ տեսած ենք խորհրդային հարբան եկամուտներու, մենք մեր Երբագը կուզենք թեկուզ հարբան ըլլալ»:

Տարածի ժողովրդական երգերի ու պարերի հանրահայտ կատարող Արմենուհի Գեոնչյանը բանի՝ անգամ նրան Փարիզ հրավիրեց... ապառքյուն: Բեկումուս հրավիրել էին բանաստեղծին՝ նրա 50 - ամյակը նշելու, բայց հուսախար հրավիրողները բանաստեղծին էին ուղարկել լեփ-լիցուն դահլիճի, ընդ խորքում նրա մեծազիք նկարի և հատուկ Հովհ. Երբագի համար նախատեսուած գահահանման մի գատարկ աթոռի լուսանկարը:

Այդ հրավերներից մեկի վրա մի որ մակագրեց.

Կանչի՛ր Ափյուռք, կանչի՛ր՝ գամ,
Մեկ էլ տեսար՝ էլ չկամ...

Եղիպտոսի «Ջահակիր» թերթում տպուած էր մի թղթակցութիւն Կահիրեում պատահած մի միջադեպի մասին: Տիկին Քոչինյանը՝ ի պատասխան բազմաթիւ այն հարցումներին, թէ այսբան խնդրում, աղերսում ենք, որ գոն մեկ անգամ թույլ տար, որ Հովհ. Երբագը եղիպտոս գա, ինչո՞ւ չեք արտոններ... Իսկ Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղարի տիկինը իբր զարմացել է, թէ ինքը չի իմացել, որ Ափյուռքի հայութիւնն այդքան բուռն փոփոխ ունի Հովհ. Երբագին տեսնելու, և պատասխանել էր. «Եթէ գիտնայի Հովհաննես Երբագի պարագան հետո հոս կրերին»:

Այս և բազմաթիւ նման լուրեր, հրավերներ ափյուռքահայ մամուլում կարգաւորով Հովհ. Երբագը մի որ որոշեց զանգա-

հարել Անտան Քոչինյանին: Ինքը գատառող էր և անկողնուց պատկած: Ինձ խնդրեց, որ հալոցքն մի հեռախոսահամար:

— Հաճելի ծայնով մի տիկին կկիցընե՛. դու սաս, որ Երբագը ընկեր Քոչինյանին է ուզում:

Հանգահարեցի: Հեռախոր վերցրեց իրք հաճելի ծայնով կիր, և երբ Երբագի առածը հաղորդեցի, անմիջապես պատասխանեց. «— Ընկեր Քոչինյանը պէնուսուս խիստ զբաղված է, հեռախոս վերցնել չի կարող»: Լսածս փոխանցեցի Երբագին:

— Իրնք բան ընկեր Քոչինյանի կեղծ մասին Երբագը կարեոր բան ունի տեսնու: Անմիջապես հաղորդեցի: Կրնի ստաց սպասեք, և քիչ հետո, լսելով Քոչինյանի ծայնը, ընկալուչք փոխանցեցի բանաստեղծին:

— Հովհաննէ՛ս, բարև:

— Բարև, Անտոն: Տիկինը եղիպտոսում ասել է, թէ ես չեմ իմացել որ այդքան շատ եք ուզում Երբագին տեսնել: Ահա նրա խոսքը՝ Կահիրէի «Ջահակիր» թերթը վերնադիր է գարձրել. «Եթէ գիտնայի Հովհաննես Երբագի պարագան, հետո հոս կրերին. կրտ տիկին Քոչինյան»: Հույս ունենա՛մ, որ դա նաեք թ կարծիքն է:

Գատախոսանք, որ ես մտ կանգնեմ՝ ազոս էի լսում, Երբագի հալոցքումս հետեյալն էր. «Ես բարձր եմ գնահատում քո տաղանդը և միշտ էլ պատրաստ եմ օգտակար մի բան անելու: Գիտեմ, որ Ափյուռքի հայութիւնն էլ բոլորից շատ քեզ է ուզում տեսնել: Բայց բարդութիւններ կան: Բեւով չեմ կասկածում քո ազնիւ մի անկեղծ հայրենասիրութիւնը, դու ոչ մի գեղով գտարանդի չես գտնաւ: Բայց դու, սիրելի Երբագ, Ափյուռքը լավ չես անաչուս և չես պատկերացնում, թէ ինչ կրին հետո, երբ հայտնվես այս երկրին թշնամի կուսակցութիւն գրիկը: Հետո ո՞նց ենք քեզ վերադարձնելու: Ինձ ժամանակ տուր, որ մի լավ բան մտածեմ ու նախաձեռնեմ»:

Իսկապէս էլ նախաձեռնել էր: Մի որ բանաստեղծն ինձ գանգահարեց, թէ՛ պատրաստվի՛ր, Քոչինյանն իր խոսքի տերը եղալ, միտան արտասահման ենք գնալու: Երբ հանդիպեցինք, բացատրեց.

— Ինձ կանչեցին Օվիբ կոչված հիմնարկն ու ասին, թե ընկեր Քոչինյանն է հանձնարարել, որ Ձեզ արտասահման թույլատրենք, բայց մի պայման ունենք. ո՛չ մի ձեռագիր, ո՛չ մի գրիք Ձեզ հետ չեք տանելու: — Համաձայն եմ պայմանին, ասացի, բայց մի պայման էլ ես ունեմ: Համապարտումեմ մի ուսանող կա Սամվել Մուսարգյան անունով, նրան էլ պիտի թողնեք հետո գա: Խոստանում եմ նա էլ իր հետ ո՛չ մի ձեռագիր, ո՛չ մի թուղթ չի բերի: Ասացին լավ, կտուգվեք, Ձեզ կհայտենք: Ընկախ որ պատրաստվիր:

— Հասկանալի էր ասել, սաացի, հենց ինձ ճանաչելով ու իմ պատճառով քեզ էլ չեն թողնի:

Տարիներ անցան: Մեր հանդիպումներից մեկի ժամանակ հանկարծ էրչեց.

— Ճիշտ կրտսիր, տեսա՞ր օնց շիտղիս... կղիմեմ ներկա ղեկավարութեանը. էլ քո անունը չեմ տա:

Եվ իսկապես էլ դիմեց: Նրա՝ 1979 թվախիբ այդ բովանդակությամբ վերջին դիմումը՝ զբված իր յոթ գավակների լուսանկարի զարմերեսին՝ «Հայաստանի գլխավոր ղեկավարութեանը» վերառույթյամբ, ՀԿԿ Կենտկոմում ընդունվել է 1981 թ. փետրվարի 9-ին՝ 002897 թվահամարով և, ինչպես սպասելի էր, մնացել է անպատասխան: Բանաստեղծը «ոչ թե ինչպես ասողը՝ ամպից, այլ մանուշակը թփից» իտևարարար խնդրում է, որ իրեն ևս թույլ տան այցելելու Միխուշի գաղթավայրեր: Արտերկրի մեր ազգակիցները շուրջ 30 տարի շարունակ բազմաթիվ հրավերներ ու կանչեր էին ուղարկել, անգամ թեթևաբեռում էին իրեն խնդրանք ներկայացրել հայրենի կառավարութեանը՝ Հովհ. Երարգին թույլատրելու այցելել իրենց: Բոլոր հրավերներն ու կանչերն էլ պետական համապատասխան օրակներում մերժվել էին, իսկ բանաստեղծը չէր կարող անպատասխան թողնել անձամբ իրեն ուղղվածները:

Վատարանութունները, շարախոսութուններն էլ իրենց սև գերն էին կատարել, և բանաստեղծը տեղյակ էր ամեն ինչին: Ահա ինչու էր իր «վերջին դիմումը» մեջ գրել. «...և քանի որ այս կենդանի ծաղկեփունջն է սրբութեան վկաները, լիտատա-

նում եմ), որ ես ինձ այն տեղերում առավել լավ կպահեմ, առավել նարեկացյան, քան Հայրենիքում եմ... Պիտի որ զեն մղեք սև կասկածի ակնոցները, որ ձեզ են տարիս, ձեր խղճի աչքերին են դնում իմ նախանձուս «թշնամիք» կիսադրականները անդրավետ»⁵¹:

Ես կուզեի այցելել նախ Բեյրութ, այդ Թեհրան, Բազդադ, Փարիզ, այդ Կահիրե, հետո Ամերիկայի միայն Հայաստանյուզուններին, որոնք զբով էլ սպասում են (ներեցեք, որ տասմ)... բանաստեղծին, և ես այցելել կուզեմ որպես այսպիսին: Աշխարհում երկու Հարյուրից ավել Հայոց գաղթավայրերից գոնե յոթը, հնարավոր դեպքում՝ 12-ը տեսնեի:— Նոր այն պահերին նրանք ևս կհանգստանային... Առանց Հայաստանի չեմ կարող մնալ թեկուզ մեկ օր, առանց այս մանկիկներին՝ արևս դժոխքի խավար է, էլ չեմ ասում առանց ժողովրդի քերեցմանի, առանց Մատիբ, առանց Արարատի, ես ինքս եմ բազմաազգայնամիշտ սփյուռք եմ... Ուտար խնդրում եմ Ձեր իմաստութեան արթնացումը.— ես երբ դնամ, այցեմ՝ փաստաները խելքի են գալու, հայ Հողը լքողները Հող են փնտրելու, որ մեջը մտնեն, ես որ կամ Մասիսն ավելի է խոյանալու և Երևանը վեր է մասիվելու, Հայաստանը գուշգ Մասիսներ է նվաճելու...

Լավ... Ի՞նչ կմաստվի գալիքում, եթե այս նկարագրող նամակ արևերես էլիք, ի՞նչ կասեն սերունդները, մի՞թե կխորհեն, թե իբրև բանաստեղծը կարող էր այսքան մանկանցը լքել, մի լիքը փեթակ թողնել կույր և տեղում բախտ խաղերին և ինքը հայրը, չվեր, ինչպես չվեցին շատ Հայապանդղվածներ...

Ո՞վ կհավատա, որ Հովհաննես Երարգը կլքի Հայաստանը յուր պաշտելի... Գալիք ոչ թե անմեղիս, այլ ձեզ կհշտամբ, ո՞վ ներկայիս էլ սթոնապահներ...

Մեզք են բալիկներս, եթե կասկածեք բորի և սուրբ հոր վրա...

⁵¹ Անգրավետ — նրաստեղծ քառ: Կազմել է բուրավետ, ծաղկավետ, սփյուռվետ և այլ բառերի համաքանդակը ան- ժխտական նախանձուցով: Գործածվել է գրի հետ կապ, անուշաբույս յունեցող նշանակությամբ — Ս. Մ.

Ահա՛ Հովհաննես Շիրազը (ամենայն հայոց արքան, բանասերը...): (Երեզմ.— Ս. Մ.):

Որպես ստորագրութիւն՝ մերենագիր դիմումի վերջում նա ավելացրել է իր մի քառյակը.

Երբազն սասց՝ Մասին է սյունն Հայաստանի,
Հայեր քաղոյ մազնիս է մյունն Հայաստանի
Բալ է, հայեր, ցրված մնար մասներին պես,—
Բառուցքովին է հավերժությունն Հայաստանի:

Ժողովրդի բանաստեղծն էր Հով. Շիրազը. նրա գեղարվեստական խոսքը ոչ միայն չի հնանում, այլև ավելի բնկալելի է դառնում մեր ժամանակներում, երբ անկախացած Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան գլխավոր առաջնահերթություններից է Հայոց ցեղասպանութեան հաշտարհային ճանաչումը: Այդ խնդրի իրագործման ճանապարհին իր վիթխարի դերը կատարել է Հովհ. Շիրազը, և դեռ կատարելու է նրա օտեղծագործութիւնը: Հով. Շիրազի մանն ստեղծագործութիւնն, նույնիսկ ամեն մի առանձին գեղարվեստական պատկեր, որ շոյափում է եղեռնի և սպառնալու հայութեան թեման, վավերագրի արժողութիւնն ունի և ցեղասպանութիւնը դատապարտող բանասէն է, ինչպես այս մեկը.

Քրիստոսին խաչող Հուլան վերածնվի՛ կիսալեմ,
Մեղք կա՛ դարեր էլ հնանս՝ չի փրկվի, կիսալեմ.
Իմ սուրբ ցեղին եղևո՛նողի մեղացն՝ ամ ու ժամ չկա,
Հազար սարվա իր օս մեղքն էլ ով չբա՛լի՛ կիսալեմ:

Սա հենց այն գնձն է, որից զուրկ է իր նախնիների մեզքը ուրացող, ցեղասպանութիւնը հերքելու անպտուղ ճիգեր անող, բայց դեռևս ժամանակավոր նախընտրելի վիճակում գտնվող մեր հակառակորդը: Նրա դեմ զազափարական պայքարում հարկավոր է խնչացի օպտագործող վավերագրի ու բանասէն արժեք ունեցող այդ գնձը՝ Հովհ. Շիրազի՝ Մեծ եղեռնին վերաբերող գործերը տարբեր լեզուներով ու հենց թուրքերենով թարգմանելով և աշխարհի առջև դնելով:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԳ

ՊՈՒՄՆԵՐԻ

ԱՇԽԱՐՀԸ

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Կարգադրությունը 1978 թվականի հունիսի 27-ի թիվ 10-ի որոշմամբ հաստատվել է հետևյալից.

Պոսի՛ ժանքը Հայ գրականության մեջ արմատավորվել է Հեռավոր ժամանակներում: Հնագույն ասացողները մեր դուրս-ցազուհներին ու պատմական Հերոսների սիրտսրբներն ու փառքերը վիպելիս հաճախ են դիմել ծափալուն պատուհանների՝ Հյուսիսում անգիր վեպեր ու վիպերգեր, մեր հեթմանսական էպոսն ու «Սասնա ծաեր» դուրսցազներգութուները: Եվ եթե՛ գրանք ամբողջութամբ էլ չափածո չեն, ապա ունեն չափածո հատվածներ, որոնք օրգանապես միահյուսված են ընդհանուր վիպական կառույցին: Սակայն անանուն հավաքական հեղինակներից բացի՝ եղել են նաև հանճարեղ անհատականություններ, որոնք, յուրացնելով հին քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների մասնավորաբար հին հեղինակների ու հույների, հունացիների ու եգիպտացիների, պարսիկների ու արաբների ստեղծագործական փորձն ու այն համադրելով ազգային մտածողության մեկերին՝ կատարելագործել են չափածո ծափալուն պատումի արվեստը, ստեղծել դարեդար փոխանցվող կենսունակ ալմանզներ, որոնք բնորոշում են առհասարակ գեղարվեստական մտքի զարգացման ընթացքը:

Համբոսի, Վերգիլիոսի հուշակավոր երկերից Հեսոս Հայ Խրականություն մեջ Դավթակ Քերթոթի «Ողբ Ի մահ Մեծի Ջուանչիրին», Գր. Նարեկացու «Մատյան օղբերգության» երկերն արդեն ունենին պոսի՛ հատկանիշներ, որոնք լուրջ հիմքեր էին միջնադարում ու նոր ժամանակներում այդ ժանրի զարգացման համար: Ն. Ենորհայրն իր «Ողբ Աղբեր» և «Հիսուս Որդի», Գր. Մադիրտուրը «Հաղարտողյան առ Մանուկ», Հովհաննես Իմաստասերն իր «Բան Իմաստության» և Հ. Թլկուրանցին իր «Տաղ քաղի Լիպարյան», Առաքել Սյունցին իր «Աղամզերք» պոսեմներում ազգային գեղարվեստական մտածողությանը համադրում էին հին հունահուհունական, աստվածաշնչյան ու պարսիկ-արաբական կենսունակ ալմանզները, ստեղծում էպիկական ու քնարական, պատմական ու ուսուցողական ազգային պոսեմներ, որոնք պատմաճանաչ

նաչողական հեսո միասին ունեն գեղարվեստական լուրջ կշիռ ու արժեք: Ն. Ենորհայրն և Նահապիրյանների կողմից արվել էին նաև ամբողջ Հայոց պատմությունը չափածո չարադրելու փորձեր: Սակայն չափածո ամեն ծափալուն չարադրություն զեռես պոսն չէ այդ ժանրի ալմանզական ըմբռնումով, որովհետև նրան յուրահատուկ է որոշակի առանձնահատկությունների համակարգ, որով բնորոշվում են ծափալուն չափածոյի տարատեսակները:

Եվ հակառակն էլ կա. կարճատև ծափալով որոշ չափածո ստեղծագործություններ էլ պոսեմն բնորոշ կատարվածքային ու գեղարվեստական հատկանիշների շնորհիվ պոսն են անվանվել հենց հեղինակների կողմից: Այդպիսիք են, օրինակ՝ Ռ. Սևակի վեցադասուց «Հայաստան» ենթախորագրով բանաստեղծությունը, Ե. Չարենցի տասնվեցադասան «Վահագնը», Հ. Երազի վեցադասան «Էրազրումը» և այլն:

Մափալուն չափածո երկեր գրելու արվեստում առանձնապես հմտացել էին Հայ կլասիցիստ հեղինակները: Նրանք ոչ միայն գրաբարով թարգմանեցին անարիկ ու միջնադարյան դասականների և ուշ շրջանի նվիրողական կլասիցիստ հեղինակների երկերը, այլև պոսեմի ժանրով ստեղծեցին իրենց սեփական երկերը: Ի՞նչ դարի սուաջին կեսում նրանցից առավել հայտնիները Հովհան Միրզա Վանանդեցին իր պատմական ու իրացարանական թեմաներ արձարծող պոսեմներով «Արփիական Հայաստանի», «Սուկեղար Հայաստանի», «Տեսարան Հանդիսիցն Հայկա, Արամա և Տրգրանի», և Արսեն Բաղրատուհրին տաղանդով ու ներշնչվածքով գրված իր «Հայկ դուրսցազն» դրսցապատմական վիպերգով նշանավորում էին ծափալուն չափածո խոսքի նոր որակ ու մակարտակ: Սակայն գրաբարալեզու այդ երկերը լայն տարածում չուներան ժողովրդի մեջ, իճապայեցին այն նպատակին, որի համար ստեղծված էին, իսկ այսօր առավելագույնը գրապատմական արժեքներ են:

Նախաթուճանյանական շրջանում իրենց քնարական ու էպիկական չափածո պատումներն ստեղծեցին Մ. Թաղադրյանը («Սոս և Սուղբայի»), Խ. Արովյանը («Աղասու խաղ»), Դ. Ա-

իշանը («Բլբլույն Ավարայրի»), Ռ. Պատկանյանը («Զարմայր նահապետի մահը», «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»), Ամբ. Շահազրգը («Լևոնի վիշտը»), Ղ. Աղայանը («Տորք Անգեղ և Հայկանուշ Գեղեցիկ»), Վ. Միրաթյանը («Լալվարի որսը»), Հովհ. Հովհաննիսյանը («Սյունյաց իշխանը»):

Սակայն մեր գրականության պատմության մեջ պոեմի ժանրի զարգացման նոր դարաշրջանն ու իսկական վերելքը կապված են Հովհ. Թումանյանի անվան հետ: Գեղարվեստական ազդային բացառիկ մտածողությամբ օժտված մեծ լուսնիչն, յուրացնելով նաև Արևելքի ու Արևմուտքի բանաստեղծական հոսանքների՝ Հոմերոսի, Վերգիլիոսի, Դանտեի, Տորկվատո Տասսոսի, Ֆրեդուսու, Գյոթեի, Բայրոնի և Հատկապես ուսուսկան Հաննարենը Պուշկինի, Լերմոնտովի ազնվյեցիներ, «պոեմայի ձևը» իր էպիկական, քերական ու քերաստիկական գրեթե ամենամեծ շնորհքից աննախադեպ բարձրության ու կատարելության, ստեղծելով իր հրաշակերտությունները՝ նոր սկիզբ դրեց Հայ պոեմի և առհասարակ գեղարվեստական մտածողության զարգացման պատմության մեջ: Նախքան Հովհ. Շիրազը՝ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. առաջին տասնամյակներում իրենց հզոր պոեմներն էին գրել Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Է. Վարուժանն ու Սյ. Զարենցը:

Տարբեր դարաշրջաններում և գրականության զարգացման տարբեր շրջափուլերում փոխվում է նրա ժանրային կազմը: Երբեմն չափածոյի ժանրերն են գերաշուկ, երբեմն էլ արձակի ու թատերգության: Վերոշարադրայից երևում է, որ այս կանայն շրջափուլում պոեմի արտոն զիմե են ոչ բոլոր բանաստեղծները, և կամ ոչ բոլորի համար է պոեմը եղել ստեղծագործական հիմնական ժանր: Ոմանց համար գա պարզապես եղել է իրենց ստեղծագործական կարողությունները փորձարկելու միջոց, ուրիշները Հաջողության են հասել միայն այդ ժանրում, ինչպես Վ. Միրաթյանը «Լալվարի որսը» գրելով: «Լևնի-Թիմուր» պատմական և «Կյանքի տեսիլը» փիլիսոփայական պոեմները Դ. Դեմիրճյանին ճանաչում էր իրեն, և չուրջ երեսնամյա բանաստեղծական ծանր տառապանքից հետո այդ

գրողի տաղանդը փայլեց պատմվածքներում, վեպերում ու դրամատիկական երկերում, մինչդեռ Հ. Թումանյանը համաժողովրդական ճանաչման արժանացավ նախ և առաջ իր ստեղծագործության ողնաշարը կազմող պոեմներով ու բալլադներով, զուգահեռաբար կամ հետո ծնվեցին նրա հանճարեղ բանաստեղծություններն ու բառայակները:

Դժվար էր ասել, թե առհասարակ բանաստեղծի և մանվանդ քնարերգու բանաստեղծի գեղարվեստական մտածողության ուժը հատկապես ո՞ր ժանրերում է առաջիկ լիարժեք դրսևորվում: Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Վարուժանը, Ս. Զարենցը, Հ. Շիրազը, Գ. Սևակը, Վ. Դավթյանը քնարական բանաստեղծություններ գրել են նաև պատմափիլիսոփայական ու արդիական խոհաքնարական ձև ու փոքր պոեմներ: Եթե Գ. Դուբյանի և Մ. Մեծարենցի պարագայում, նրանց կարճատև կյանքի ու այլ հանդամանքների թելադրանքով, հատկանայի է գտնվում մեծ ծավալի չափածոյի չգիմելու իրողությունը, ապա Վահան Տերչյանը չի գիմել մեծակապ չափածոյի ժանրին, իսկ Համո Սահյանն արել է ընդամենը երկու փորձ, որոնք պարզապես նրա գեղարվեստական մտածողությանը բնորոշ քնարական մեծախոսություններ: Եվ այս իրողությունն ամենևին էլ չի նսնամայնում նրանց բանաստեղծական նկարագրերը: Նշանակում է՝ որևէ հեղինակի պոեմ գրելու կամ չգրելու խնդրում իրենց վճռական գերն ունեն առհասարակ ստեղծագործական խառնվածքն ու պատկերավոր մտածողության յուրահատկությունները և մանվանդ գրողական նշանությունը:

Համանման երևույթ սեղի է ունենում և արձակում. թերևս ամենից բնորոշ օրինակը Գր. Ջոհրապետ է, որին «կյանքի մեծ գեղեցիկը առանձնապես չէին հուզում», և հենց այդ պատճառով էլ բանաստեղծության մեջ ու վիզյական փորձերում գնահատելի հաջողությունը չհասած կամ գրեթե ձախողված գրող իր կարողությունները լավագույնս դրսևորեց «Փոքր արձակում» և դարձավ նորավեպի խոշորագույն վարպետներից մեկը ոչ միայն Հայ գրականության մեջ:

Գաղտնիք չէ, որ բոլոր չափառ ստեղծագործությունների մեջ կենսական մեծ տարածքներ ընդգրկելու, իրականությունը լայնքով ու խորքով պատկերելու առաջնապայան Հնարավորություն ունի պետեն իր ժանրային տարատեսակներով: Իսկ պոեմ գրելու համար, ցանկությունից ու նախաիրությունից բացի, գրողին անհրաժեշտ են առանձնահատուկ միջոցներ պոեմի ճարտարապետական հյուսվածքին տիրապետելու կատարյալ հմտություն, էթիկական գոյծողությունների և գրանք իրականացնող հերոսների կերպավորման լայն ու հզոր շնչառություն, հեղինակի հետ նույնացած կամ նրա էությունից գուրս գտնվող քնարական հերոսի կերպավորման վարպետություն, նրանց մարզկային քնալորություն, զգացմունքների ու խոհերի պատկերավոր բացահայտման լուրջ կարողություն:

Հայ գրականության և հասկացնա պոեմի պատմության մեջ այս միջոցով ու հատկություններով Հովհ. Երրագի նախորդներից առաջնապայան չափով օժտված էին Գր. Կարեկացին ու Ն. Ենթհային, Հովհ. Քուսնեյանն ու Ավ. Իսահակյանը, Դ. Վարուժանն ու Ե. Չարեկը:

Հովհ. Երրագը պոեմի ժանրում էլ սրանց ազնիվ ժառանգորդն ու շարունակությունն էր նորագույն ժամանակներում ու հանգամանքներում:

2.

Գնաբերդական ու էպիկական արգասաբեր միջոցներով օժտված այդ հզոր բանաստեղծը պոեմի ժանրին դիմել է զեռես ստեղծագործական վաղ շրջանում: 1935 թ. նա «Գարնանամուտ» քնարական բանաստեղծությունների ժողովածուի վերջում սպազբնի էր ընդարձակ հատվածներ «Մարտիզազ» խորագրով պոեմից, նույն տարում այդ գրքի հետ միասին հրատարակեց «Սրամանթո և Խիջարան» պոեմը: Ըստ որոշ փաստերի՝ նա 1934-35 թթ. սկսած և 1936 թ. ամբողջացրած, բայց մեծ մասով կորած «Մոկաց Միրզան» պոեմից հետո հրատարակեց նաև «Բեռնի առու» (1937) պոեմն ու «Արևի երկիր» (1938) չափառու վեպը, իսկ 1939 թ.՝ մեր սպազային ժողովրդա-

կան էպոսի հազարամյակի տոնակատարության օրերին, գրեց «Սասունցի Դավիթ» կամ «Վերածնունդ» պոեմը, որից պահպանվել են միայն 1-ին Մոսկիտարի անձնագրությունն ու Սանասարի և Բաղդասարի սխրանքները, Սասնա բերդի հին նազրուժը պատկերող «Մոսկիտար», և Փոքր ՄՀԵԻՆ ներկայացնող «Վերածնունդ» խորագրով գլուխները: Իսկ պոեմի այն գլուխները, որոնցում կերպավորված են եղել Մեծ ՄՀԵԻՆ ու Սասունցի Դավիթը, դարձյալ կորել են խառը ժամանակներում ու հանգամանքներում:

Հովհ. Երրագի վաղ շրջանի պոեմների առաջին հանգամանակից քննությունը կատարել է գրականագետ Ս. Սողոմոնյանը: Եվրոպական գրականության այդ հմուտ գիտակր, որը առանձնակնքով ուսումնասիրել էր Հոմերոսի, Վերգիլիոսի, Դանտեի, Տաստյի, Գյոթեի, Բայրոնի և այլ մեծությունների պոեմները, որոնք գրական արժեքների գնահատման ստույգ և կայուն չափանիշներ և Հովհ. Երրագի պոեմներն էլ արժեքորում էր որոշակի սկզբունքներով հանախ շրջանցիկով նաև գրականության գնահատման կուսակցականության խորհրդային կազմակերպներն ու սոցիալիստական անալիզի կարծրատիպերը:

Իր «Հովհաննես Երրագ» ուսումնասիրությունը նա ավարտել էր 1965 թ., երբ զեռես լույս չէին տեսել բանաստեղծի պոեմներից շատերը՝ «Հայոց գանձնականը», «Անի», Թոնդրակնցիները», «Աբու-Լալայի վերագարձը» (վերջին երկու ծավալուն պոեմները զեռես անարկ են), իսկ հրատարակվածների մասին էլ կային միայն հայ և օտար նշանավոր մտավորականների հատուկ նախադասականներ, որոնք առաջին սպազորությունից այն կողմ չեն անցնում:

Ժամանակի վախճարած գրաքննադատությունն էլ լիարժեք մասնազրտական խոք չէր տուժ: Այնուամենայնիվ, Հ. Երրագն ուներ նաև Հր. Քամրաղայանի, Ս. Աղարաբյանի նման խիզախ պաշտպաններ, որոնք, սակայն, իրենց հոգվածներում կամ դիմանկարներում հղանցիկ անզրադառնում էին նաև չիրազյան պոեմներին: Այդ պայմաններում էլ Ս. Սողոմոնյանը մգտել առաջին ամբողջական խոքն անկ բանաստեղծի ու

Նրա հրատարակված պոեմների մասին, փորձել է պարզարանել ինքնատիպ այդ բանաստեղծի պատկերավոր մտածողության յուրահատկությունները: Նրա շատ տեսակետներ, հասկանալի պատճառներով, թեև արդեն հնացել են և կամ ընդունելի են մասամբ կամ որոշ վերապահումներով միայն, սակայն նրա առողջ գիտարկումներն այսօր էլ պահպանում են իրենց թարմությունն ու գիտակցությունը:

Անդրազուռնանք Հովհ. Երրազի վաղ շրջանի պոեմներին:

«ՄՈՎԱՏ ՄԻՐՁԱՆ»

Տխուր ողիտականի է արժանացել Հովհ. Երրազի «Մովաց Միրզան» պատմական բնարալպիկական պոեմը, որից ընդամենը 14 տողից բաղկացած մի պատասխիկ է պահպանվել և մեկ գրեթե ամբողջական գլուխ: Այս կապակցությունը հարկ ենք համարում ընդգծել, որ առայժմ հայտնի այս հատվածների բնությունը կարևոր մանրամասներ է բացահայտում:

Պետք է ներթափանցել, որ սա ծրարված է եղել «Միամանկն և Խաջեղարե»-ից աղվելի վաղ կամ նրան զուգահեռ, քանի որ «Մովաց Միրզան» պոեմի տպագրված հատվածի առկա նշված են 1934 — 35 տարեթիվերը: Հնարավոր ենք համարում, որ եթե նույնիսկ գրվել է նշված ժամանակում, ապա պոեմն ամբողջացել է 1936-ին՝ Աղասի Խանջյանի սպանությունից անմիջապես հետո, և տպագրության է հանձնվել «Գրական սերունդ» ամսագրին: Սպայեև կարծելու հիմք մեզ առաջ է այն, որ այդ գրվածքի առաջին տարրերում է հեղինակը փորձած պոետի լինելու կերպավորել միջնադարյան վիպերգի հանրահայտ Հերոս Մովաց Միրզային՝ առանց նախապես Ա. Խանջյանին նկատի ունենալու, և 1936 թ. հուլիսի սկզբին՝ վերջինիս ողբերգական սպանությունից հետո, վերածնակելով ամբողջացրել է՝ Մովաց Միրզայի կերպարում ցայտունացնելով ու տեսանելի դարձնելով համայնավարական բանաստեղծության նահատակ, ազգային մտածողությանը ու գործնականորեն հա-

մամտողըղական սիրտ՝ արժանացած եղերաբանա հայ պետական գործչին:

Ավամեր լավագույն հիմնավորումն այն է, որ խորհրդային իրականությունն ու կոլտոզային կյանքը պատկերող «Մարալագ» պոեմի «Արժիվ Սորոն համալուծմար է գնում» ընդարձակ հատվածում, որը տպագրված է «Գարնանամուտում», տարբեր առիթներով վկայակոչված է Աղասի Խանջյանը որպես հմուտ, երկիրը շինացնող ղեկավար, որի հանդեպ մեծ գտաճուխյուն ունենի համալուծմար եկած գյուղացիները.

Ազգարարում է գանդակը բեմից
Մրահում երկա՛ր-երկար զողանջում.
Ընկեր Աղասին ելնում է դեմից...
Նորից ձափերի ջրվեժն է գոլում:²⁷

«Մարալագ» պոեմը ևս ամբողջությունը հայտնի չէ. նույնիսկ դժվար է ասել՝ ավարտվել է. թե ոչ: Պահպանված հատվածները հարազատորեն փոխանցում են ժամանակի շուռը, պատկերում նվիրյալ մարդկանց՝ բանվորներին ու գյուղացիներին, կուսակցական այն ղեկավարներին, որ աղվորեն լծված էին երկրի վերաշինության գործին. նրանցից առանձնանում է «ընկեր Աղասին», որին զիմում են պատգամավորները տարբեր հարցերով: Արժիվ Սորոն նույնպես ելույթ է ունենում, ներկայացնում աշխատանքային հաջողությունները և տեղնուտեղը զիմում է Խանջյանին, բայց ո՛չ անձնական խնդրանքով, այլ կոլտոզին տրակտոր տրամադրելու աղնիվ պահանջով.

— Կոլտոզի համար տրակտոր ենք ուզում,
Ես թեզ եմ դիմում, ընկեր Աղասի,
Էլ վարի համար շտանջվենք իդուր,
Թող մենք էլ հասնենք էլ մեծ մուրալին:
Ասաց ու նայեց նա ղեկավարին.

²⁷ Գ. Երրազ, Պարնամանուտ, եր., 1935, էջ 100:

Ու զեկամարը արտաքին ծագաց,
Ինչպես արևը Ալպալպ սափն
Ցանի շողերն իր ու Համրուշքը տաք:

Դեռևս սառյակեան բռնութիւնները չէին հասել խստագույն դաժանութեան, և մարդկանց խանդավառուսւմ էր սոցիալիստական հրապուրիչ Հեռանկարը: 1936 թ. Հուլիսի 9-ին սիրելի զեկամարի Ա. Խանջյանի սպանութիւնը, սակայն, երկրում ծավալվող այրուճալի իրադարձութիւնների նախասկիզբն էր զեռ, որով խաթարվում էր բնականոն կյանքը, և ժողովուսէմ էր Հայութեան գլխին պայթեղ նոր փոթորիկը:

Թեև պաշտոնական վարկածով Ա. Խանջյանն իբր ինքնասպանութիւն էր գործել, սակայն բուն ճշմարտութիւնը Հայտնի էր ինքնապաշտպանութիւնինց գրեթէ լիովին զրկված մտավորականութեանը, ազնիվ արգիստազեաններին, որոնք այդ ոճրագործութիւնը բացահայտ դատապարտել, ճիշտ է, չէին կարող, սակայն այնուամենայնիվ վերաբերմունք արտահայտելու փորձեր անում էին:

Մանր ողբերգութեանն առաջին արձագանքողը Ե. Չարենցն էր, որի «Դո՛Քին նարբական» ստեղծների շարքը Համընդհանուր սարսափի օրերին չհրապարակվեց և Հայտնի դարձավ ու սպազորվեց բանաստեղծի Հետմահու արգարացումինց էլ երկար տարիներ անց:

Եղբորաբայտ Ա. Խանջյանի ողբերգութեանն անմիջաբար արձագանքողներից մեկն էլ Հովհ. Շիրազն էր, որը 1930-ական թթ. միջուորսում անհնայա նմանութիւն տեսավ միջնադարյան վիպերգի Հերոսի՝ դավադրարար թունավորումով սպանված Մոկաց Միրզայի և Աղասի Խանջյանի՝ Թիֆլիս հրավիրվելու և այնտեղ դավադրարար զնդակահարութեամբ սպանվելու իրողութեան միջև: Հավանաբար, բանաստեղծը Հենց այդ օրերին էլ անմիջական սպազորութեամբ արթողջացել է իր «Մոկաց Միրզան» պոեմը և հասկանալի պատճառով հրատարակման ներկայացրել ուրիշ տարեթիվով 1934 - 35:

«Գրական սերունդ» Հանդեսի զեկամարութիւնը, սակայն, զգալով այս պոեմի ուժն ու ազգային ոգին և ճանաչելով միջ-

նադարյան վիպերգի Հերոսի կերպարում մարմնավորված, դավադրարար սպանված Աղասի Խանջյանին, իր բնավորութեան ու վարքագծի համաձայն, տպագրելու փոխարեն մի զրգարտագրի Հետ միասին ուղարկել է խորհրդային պետականագրութեան Համապատասխան մարմիններին՝ երիտասարդ բանաստեղծին Հասցեագրելով այն ժամանակների Համար քաղաքական ծանրագույն մեղադրանքներ: Ու թեև Մ. Մանուկյանը կամ խնայելով, կամ ինչ-ինչ նկատառումներով չի մատնանշել այդ Հարազորների անունները, սակայն նրանց ինքնութիւնը զժպար չէ պարզել Հատկապես Չարենցի ու մանավանդ Ա. Բակունցի զեմ իր ստոր գրական քաղաքականութեամբ ու ամօթալի գործունեութեամբ աչքի ընկած այդ պարբերականի որևէ Համար աչքի անցկացնելով:

Խնդիրը պարզարանում է բանաստեղծն ինքը՝ դուժմեցի Արամայիս Շիրազունու անմեական արխիվում պոեմինց պահպանված տաննչորս տող պարունակող խունացած ձեռագիր Հատվածի վերաբերյալ իր Հուլիս կարևոր բացատրութեամբ, որը պատկերացում է առայն ժամանակի գրական կյանքի ու միջուորսի, պոեմի ստեղծագործական պատմութեան և Հ. Շիրազ բանաստեղծի գրական ճանապարհի անասելի զժպարութիւնների մասին:

«Մա, - զրել է բանաստեղծը, - այն պոեմի վերանշնչելից է, որ զրելն էի «Գրական սերունդ» ամսագրին, բայց տակովն արին: Բայց Հետո իմացա, որ զավագութիւն էր. մաղի եմ պրծել: փրկել է միայն պատանի Հասակս: Կիրքեի, քանի որ պոեմի տեսանելի բողի Հետևում երևում էր սպանված Աղասու ինքն Աղասին էր, որին կանչում են այլազգի տիրակալները և... սպանում, վասնզի ազգապաշտ էր...ուզում էր ծաղկեցնել մի բուռ Հողն այս... մինչև Հասնիկը այն ծովածիր Հայաստանին, և աՀա Հույան սպանվեց, իղձն անկամ...»

Այսպանն սասց, որ մաղից եմ պրծել, Հետո կիմանա, Հետո կասնմ, թե ուր են զրկած եղել պոեմն և զրպարտապիրը, - և իմացա, որ ամսագրի խմբագիրը և պատ. քարտուղարն էին

գաղափարներ... Այդ երկու մարդանկերներից մեկը Վանի գյուղերից էր և նույնիսկ ծախել էր իր Հայրենակցին՝ Խանջյանին... Եվ Հեսո ջրերը պարզելով՝ բացեցին ավելի վառափայլ, այն, որ Չարինցին կերել էին դրանք՝ այդ երկուսը և այլք, միասին, վանդի Չարինցը տաղանդ էր, իրենք պարզապես չնահանջել լուսնի վրա:

Մի իմ աստված, ինչպե՞ս խնկեմ քեզ, որ իմ պատանի թիկունքին կանգնած ես եղել...» (ընդգծ. — Մ. Մ.):

Հասկանալի է, որ Վանի գյուղերից իր Հայրենակից Խանջյանին ծախող խմբագիրն այդ ժամանակների իր գաղափարախելի գործունեությունը Հայտանի և Չարյանն էր: Ա. Խանջյանի սպանությունը օրերին, երբ Չարինցն այդ ահափոր սղբերգությունն ծանր զգացողությունը գրում էր «Խոֆին նախապահան» ստեղծանքի շարքը, հիշյալ խմբագիրը «Փրական թերթում» իմաստակում էր. «Խանջյանի կրակոցը կրակոց էր Հայ ժողովրդի նակատին»:

Ավելի ուշ «Հարցազրույց իմ և իմ միջև» զրգամբում Հովհ. Շիրազը հիշում է նաև այդ պոետի կորչելու Հեսո կապոված այլ մանրամասներ, որոնք մեջ Հատակ երեւում է բանաստեղծի և նրա ստեղծագործությունների նկատմամբ Ավ. Խահաչյանի զրբերդրույթը. «Մոկաց Միրզյան» անունով պոետ էի գրել... Խամ տղա էի. փոխանակ մեքենագրել տայի, ձեռագիր Հանձնեցի «Փրական սերունդին»: Չապեցին, բայց ես էլ չտվին, իբր կորցրել են: Խահաչյանը և Ալազանը, երբ իմացան պոետի բովանդակությունը, կշտառեցին ինձ: Ալազանն ասաց. «Ինչո՞ւ է ինձ ցույց չտվիր... Ինչ գնով էլ լինի գնա ես վերցրու ձեռագիրը»: Ես ասպնապի մեջ ընկա՝ կուհեկոմ ոչ բարին: Մի բանի անգամ արշավեցի խմբագրություն՝ պահանջելով պոետին ձեռագիրը: Վերջը բռնը Հասով «զրգամեթաշուն», ծնծկառվեցին: Գրողների մեծադաշնին ժողովում խիստ Հարձակվեցին վրաս, մինչդեռ ես ճշում էի՝ պոե՛տն, պոե՛տն ավեր, ի՛նչ կա պոետին մեջ, վարդանոց է ասանց փշերի... Եվ նույնիսկ արտասանեցի, որ գու՛թի բերեմ.

Հաղա՛ր արեսս Մոկաց Միրզե՛ն,

Հաղա՛ր արեսս էլ-Աղասին,
էլ ես չի գա Հայոց բազեն
էլ Հույս չկա Մեծ Մատարին...

... Այնուամենայնիվ, զիջատիչների գաղանի կառուցից ազգմուս ազատեց արծիվը (թող ըսեն, որ Համեստ էլ է Շիրազը), բայց միտում է սիրտս տակալին Արազի այն ափին իր բոստանը խլած Հորս ծխամորեքի պես, որ կորավ ու կորավ «Մոկաց Միրզեան»:

Հաղա՛ր արեսս իմ Միփանա
էլ-Աղասին Հայոց Վանա»²²:

«Փրական սերունդ» ամսագրի խմբագրություն արբիժում և այլուր պոետի որոնման Մ. Մանուկյանի ջանքերը, ցավոք, մասամբ զոհացնող արդյունք են տվել. առայժմ Հայտնաբերվել են միայն այն մասունք-հատվածները, որոնք տեղ են գտել Հովհ. Շիրազի՝ նրա հրատարակած ժողովածուում, իսկ դրանք ընդամենը Ա. Շիրազունու արբիժում պահպանությունն» ամսագրի 1938 թ. 6-րդ համարում տպագրված չորրորդ զլուխն են, վերջինս, «Ավանդարդի» Հայտնաբերությունն արձագանքելով, Մ. Մանուկյանին արժանացրել էր գրող Մեծազկան Թարյանը: Գահպանված չորրորդ զլուխն ամսագրում տպագրվել է «Մոկաց Միրզյան (Մի զլուխ համանուն պոետից)» վերնառույթով:

Ի՛նչ էլ տայիս մեզ պահպանված այդ չորրորդ զլուխը, և Հնարավոր է այդ երկու Հատվածների քննությունը պատկերացում կազմել կորած պոետի ամբողջության մասին կամ կուհեկոմներ անել նրա կերպարների, գործողությունների ու գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ:

²² Հ. Շիրազ, Մի փետուր իմ արծի կյանքից, «Հայաստան» հրատ., եր., 1984, էջ 63-64: Այս էջում բերված չափավոր խառնվածքով լինա՞լ Մ. Մանուկյանի «Դոկումենտ Շիրազ» հրատեսվող ստեղծագործությունն» գրքում — Ս. Մ.:

Քերես, մասամբ, այո՛, որովհետև առկա են չզգրեցիք «բեմուքաց Կոլոտ փաշայի» կողմից Մոկաց Միրզային խարդախությամբ թունափորելու, և Ա. Խանջյանին Քիֆլիս կանչելով դավադրաբար սպանելու ակնհայտ նմանությունն ու ընդհանրությունը:

Անշուշտ, շատ կարևոր է, թե ի՞նչ սկզբունքներով է Հ. Շիրազն օգտագործել բանահյուսական նյութը: Այս հիմքի վրա ստեղծված նրա պոեմների բնութայույնը պարզում է մի հետաքրքիր օրինակաբանություն. ժողովրդական նյութի մշակման թուժանյութական փորձը նա կիրառել է յուրովի. պահպանելով բանահյուսական նյութի հիմնական տարրերը՝ կերպարները, բովանդակությունը, գաղափարը և ոգին՝ նա դրանք ենթարկել է իր մտահղացմանն ու զեղազրիտական ծրագրին՝ ստեղծելով միանգամայն ինքնուրույն գրական երկ: Նա չի պարզակվել պատմական կամ բանահյուսական նյութի դիպուշարի կազմադրային կաշկանդուններում, այլ իր մեծ նախորդների թուժանյանի, Իսահակյանի ու Վարուժանի պես պատմական վիպություններում և բանահյուսական փշրանքներում հայտնաբերել է ներկայի ու գալիքի համար անհրաժեշտ տարրերը և հենց դրանք դարձրել իր երկերի առանցքը: Ինչպիսիք պատկերավոր ու սահուն շափածո վերապատմւմի մեջ նա հզոր երևակայությունը ստեղծել է գործողություն միջավայրի տեսանկյունի ու շոշափելի այնպիսի պատկերներ, որոնք ներդաշնակ են հերոսների ներաշխարհին ու մարդկային ապրումներին: Այդպիսիք են նրա «Միամանկն և Խճեզարի», «Սասունցի Դավիթ», «Տիգրան Մեծի վիշտը և Հայկերեսությունը», «Մամիկոնյան սուրբ», «Միրանամեծ» և պատմական թեմատիկայով այլ պոեմներ, որոնցում քառերգու բանաստեղծը զրսեօրել է նաև իր էպիկական հզոր մտածողությունը:

Արտաքուստ «անկողմնակալ» թվացող էպիկական պատմը, սակայն, Հովհ. Շիրազի պոեմներում հաճախ է մեռք բերում քնարական մտա երանդներ: Բայց էպիկականն ու քնարականը նրա մեծակամով ստեղծագործություններում համակույզ են, այլ հանդես են գրվա երգեմեն մեկի, երբեմն

մյուսի գերակայությունը: Եվ այս հանդամանքը, տեսակային բազմազանության հետ միասին, դժգոհացնում է շիրազյան պոեմների գրականության տեսության հայտնի սկզբունքներով ու չափանիշներով տեսակադրումն ու գնահատումը, թեև ակնհայտ է, որ «Միամանկն և Խճեզարեն», «Միրանամեծ», «Տիգրան Մեծի վիշտը» և «Մամիկոնյան սուրբ» պոեմներում ընդգծված է էպիկական տարրերը: Ավելի ուշ գրված «Երիբլխակներում» գերակշռում է քնարական-խոհափայլական համանվագը, իսկ «Անի» և «Թոնդրակեցիներ» երկերը հեղինակն ինքն է որակել պատմափիլիսոփայական պոեմներ և «Հայոց դամբնական» էլ՝ անվանել ողբաժողովը գաւաստանամատյան:

Գարզ է, որ այս պոեմների ժանրային վերոհիշյալ բնութագրումներում որոշ զեպրերում կիրառվել են դասական-ադանդական սկզբունքները տեսական հայտնի որակումներով, ուրիշ զեպրերում էլ պոեմների բնույթին ու տեսալը որոշելիս հեղինակը զերազանցապես հաշվի է առել բովանդակային հատկանիշները որոշ զեպրերում էլ, չբավարարվելով ավանդական կազմադրանքով, ստեղծել է նոր կառույցներ: Գեոսեմ վաղ շրջանի զեղարքիտական մտածողության մեջ զրսեօրված և նրա անհատականությունն ու սինն բնորոշ այս յուրահատկությունն էլ Հովհ. Շիրազ բանաստեղծին, որոշակի ընդհանրություններով հանդերձ, տարբերակում է թե՛ իր մերձավոր ու հեռավոր նախորդներից, թե՛ ժամանակակիցներից ու հաջորդներից: Ինչ խոսք, առավել ցայտուն են տարբերությունները, որոնք նրա զեղարքիտական ինքնատիպ մտածողության զրսեօրումներն են:

Դասելով քոսանամյա Հովհ. Շիրազի «Մոկաց Միրզան» պոեմի հայտնի հատվածներից՝ այն գերազանցապես էպիկական պոեմ է՝ քնարական տարրերի խառնուրդով: Բանաստեղծը մյուս պոեմների նման այստեղ էլ հեղինակային պատկերավոր պատմը հազեցած է քնարական հուզականությունը, իսկ հերոսների գործողությունների նկատմամբ զրսեօրվում է հե-

զինակային անմիջական վերաբերմունք: Պահպանված կամ մեզ Հայաստանի Հաստատված, սակայն, հասակ ուրվագծված են պոետի հերոսները՝ հեղինակային գիտուկ բնորոշումներով՝ դավադրության զոհ մոկացի հովիվ հսկա Միրզան, որ ճամպիրից կայմակներ էր քաշում, Միրզային սիրահարված «չքնազ ու հեղ Ջուլան», խորհրդա ու խորամանկ շահ, նրա մեծ ու փոքր դուստրերը: Թուևադորոզ գահինը, որի աչքերից կարծես «սփեր են ելնում», դավաճան ու բուռ Հայ տերտերը, դարբին Գույն ու Հայոց երկրի մյուս քաջարի պահպանները, որոնք նույնպես դառնում են դավադրության զոհ:

Այսքանը պահպանված ու մեղ հասած մի գլխում:

Իսկ թե ի՞նչ է նախորդ երեք գլուխների բովանդակությունը, և շորթորդ գլխին ի՞նչ շարունակություն է հաջորդել չենք կարող ասել, քանի զեռ կորած մասերը չեն Հայտնաբերված: Սակայն հնարավոր ենք համարում որոշ կոանուսներ՝ պահպանված հատվածների պարզ քննությունից ելնելով:

Չնայած պոետի անավարտ լինելուն կենտրոնական հերոսը՝ Մոկաց Միրզան, կերպավորված է զորեղ վրձնահարվածներով: Էպիկական գործողությունների առանցքը հենց նա է՝ մոկացի հսկա քաջ հովիվը՝ օժտված առնական զեղեցիկությամբ, վիթխարի ուժով ու մարդկային այլ բարեմասնություններով: Ահա՛ սկիզբն ուժի տեր այդ գլուցյազնակերպ անզարեակի հսկային հնարավոր չէ հաղթել աղբիվ կոմիտե՝ կամ մեծանարտուն, ուստի միայն դավադրությունն ու խորհրդաությունը կարող էին ծնկի բերել ժողովրդանվիր ազնիվ հերոսին: Եվ նենդավոր թշնամին, քաջ գիտակցելով այդ իրողությունը, իր նանազարհեց Մոկաց հսկային վերացնելու համար դիմում է հենց այդ ամարդի միջոցներին:

«Մոկաց Միրզա» ժողովրդական վիպերգը, ինչպես Մ. Արեղյանն է նկատել, ընդհանրացումն է միջնադարում Հանսի կատարված համանուն գեպերի»: «Ապա ավանդությունն ասում է, — գրել է մեծանուն Հայագետը, — թե Ջղիրս քաղաքի թուրք Կոլոտ փաշան նրան սիրալիր նստակ է գրում, կանչում իր մոտ և նենդությունը թուևադրում: Այս պատմական երգի

մեջ պահված է, ուրեմն, մի հատուկ զեպեր հիշողություն, բայց դա ունի միամասնական ընդհանուր պատմական դույն էլ: Դրա մեջ հանված է քաղամարտի նույնանուն եղևությունների ընդհանուր պատկերը իբրև մի հավաքական ընդհանրացում այն զեպերի մի տեսակի, որոնցով օտար բռնապետները, ամենահին ժամանակներից ի վեր, ոչնչացնել են ապի տեղական Հայ ազնվականությունը»⁵¹:

Բանահյուսական վիպերգում կան մի շարք էական մանրամասներ. Մոկաց Միրզայի կողքին որոշակիորեն հիշվում են նաև նրա մշակը, հրեղեն մին «բոզ ընդավին» իր «թամբ սագաֆի»-ով, Միրզային հակադրվող Ջղիրս քաղաքի նենդ ու քաղցրայնիզու թուրք Կոլոտ փաշան, որին միջնադարի երգիչն ու ժողովուրդը հիշում են հավիանական անեծքով: Դեպքը պատմվում, գործողությունը ներկայացվում է այսպիսի անհրժեշտ մանրամասներով, սակայն աների կրկնակներում բացորոշ արտահայտվում է նաև համաժողովրդական անմիջական զգացական բուռն ու հակադիր վերաբերմունքը գործող հերոսների հանդեպ.

Հաղա՛ր ախոս Մոկաց Միրզան,
Թեևուրազ կեներ Կոլոտ փաշան:

Կան և այլ կարևոր մանրամասներ, որոնք ամբողջացնում են զեպերվանապական պատկերը: Ըստ միջնադարյան վիպերգի՝ զեպեր կատարվել է «ուրբաթ, լույսն ի շաբաթ» օրը, «Ջղիրս քաղաքին»: Մայրաքաղաք քաղաքն ուղարկված «թղթիկն» է գարսնել Մոկաց Միրզային «քաղցրիկ լեզվով» թուևադրելու միջոցը.

Օրն էր ուրբաթ,
Ըստն էր շաբաթ,
Գաշտու էրին ենք Մայրաքաղաքին.
Թղթիկ մ'էկավ Ջղիրու քաղաքն.

⁵¹ Տես Մ. Արեղյան, երկեր, հ. 4, ԳեճԱՊ ՊԱՍ հրատ. ըր., 1966, էջ 501:

Տգին ի ձեռ Մոկաց Միրզեն. —
Հազար արսու Մոկաց Միրզեն:
Առավ կարգաց. քաղցրիկ լիզվեն
Առավ մաղզեն, շից աչքեր, ծովից չանեն,
Քաղվով կարծիր գույն երևեն.
Հազար արսու Մոկաց Միրզեն...

Կանչեց, սասց յուր մշակին՝
— Դու՛ս քաշիր Բագ — Բեղավին,
Վերս գրեք Թամբ սաղավին.
Սախար կ'երթամ չուր Ջրվիրեն.
Գնաց Հասավ չուր Չամբարեն,
Խաթուններ Թափան փանջարեն,
Քափան Մոկաց Միրզի Թամաչեն,
Չկեր իր նրժան բուր գունինին:
Գնաց Հասավ չուր Ջրվիրեն,
Եկան, ժողվան քաղար զրմեն:
Մոկաց Միրզեն՝
Կ'արծր քաղար զրմեն:
Հազար արսու Մոկաց Միրզեն...
Բեմուքաց կնիեր Կուլու փաշին:
Խեր չաեսներ Կուլու փաշեն,
Բամն էր կուլու, բըբլամ երկեն:

Հովհ. Շիրազն իր պոեմի՝ մեզ Հայասի տպագրված չորրորդ գլխում իրոք հարազատ է մնացել ժողովրդական զիպերգի ոգուն և էությունը: Պահպանելով զիպերգի միջնուրորտին բնորոշ շատ կարևոր մանրամասներ՝ նա Հավելի է նաև գործողությունների ծավալման տարածքին՝ Արևմտյան Հայաստանի Մոկաց աշխարհին բնորոշ և իր ստեղծագործական մասհաղացման անհրաժեշտ ստորերը: Դրանք, բացի Առնոս սարից, Վանա ծովից ու այն եզերող մյուս լեռնապագաքենից, մեզ Հասած Հատվածներում այնպիսիք չեն, որ կարողանաք Հասակորեն սահմանադատել ու մատնանշել, սակայն այնքան զիպուկ են Մոկաց Միրզային թունավորող նեղ ու քծնածպառ,

զյուրուխյամբ գունափոխվող դահճին բնորոշող մակդիրներն ու փոխարեքական համեմատությունները, որ նրա կերպարը դարձնում են գրեթե առարկայական ու ամբողջական.

... Գահինն խալույն կարծիրն Հանեց՝ Հալավ կապան սպրտավ.
Ու ձեռքն սառած մի երեսը թունավորած սուր գունակ
Այդի մտավ և ժպիտավ դուրս տվավ արբային,
Ապա կտրեց մի ձեռուկ՝ կարծիր ինչպես նուրս էրն.
— Կերք. — սասց. — երանությամբ Թոզ մեր սիրտը Հովանա,
Ոչ թե բաղի ձեռուկ է, այլ վարդադույն մյուսն է սա:
Եվ նրա նեղ, նեղ աչքերից կարծես անք գուրս եկան,
Երբ որ կերտավ, թունավորվեց Մոկաց Հովիվ մեծ Հեկան:
Գոլաց Հեկան, և ծնուտից Թափվեց մալը նորածի...⁶⁶

Ամբողջականացման միտում ունեն նաև մյուս կերպարները և Հատկապես Մոկաց Միրզան, որը կերտված է քնտրական միջոցներով, թայց և էպիկական Հզոր շնչով: Արվեստի տեսանկյունից առավել կարևոր է, անշուշտ, որ երեսուսորդ բանաստեղծը էպիկական Հերոսներին ներկայացրել է որպես որոշակի Հողբանություն, բուն հասարակական վարքագծի մեջ նկատվում են համապատասխան տեսակին բնորոշ քեղահանուր հատկանիշներ: Այսպես, իր ներաշխարհն ունեցող քաջ Հովիվ Մոկաց Միրզայի կերպարում խտացված է Հայրենի լեռնաշխարհի ու մայր ժողովրդի ուժը, բանազատիչ խարդախ թշնամու դեմ ժողովրդական արդար ցասումը: Մինչդեռ նրա փառքին նախանձող և նույնիսկ նրա զխախից և մարմնից պոկված արնակայյակ սրտից վախեցող փաբրոգի արքան ստորություն մարմնացումն է: Հերոսն ուժն ու բնավորությունը վարպետորեն ցուցադրված են էպիկական գործողության մեջ: Նույնիսկ թունավորված և արգեն ուժասպառվող Մոկաց Հեկայի դեմ անզոր էին արքայի զինվորները, նրանց սրերն ու նետերը չէին

⁶⁶ Սեջերուճեճեղ ըստ «Գովասենն Շիրազ, Նրխախյալ ստեղծագործություններ, Խայտաբարք, զրի ստավ ու կազմեց Մամուկ Ամունկանը, «Մուրնի» իրան., Եր. 2002» գրքի:

Հասնում նպատակին: Խարդախ ու նենգ արքան տեսնում է իր դավադրությունը Հասկացած մտիզին ցատուն անկասելի այդ Հերոսի, որը վերջին շնչում էլ դիտապաստ տապալում է իր դահճին ու նրա գինիփորներին, թռչնում նրանցից շատերի գլուխներն ու ջախջախում ձիու սմբակների տակ:

Գողաց Հսկան, և մտափոց թափփոց մաղը նորածիլ
Երբ Հասկացավ՝ զայրամուռն է թուփ Հեծավ նա իր ձին,
Ցուլաց թուրք մառիկ մեջ, ինչպես կայծակն անկերում,
Նա շողարձակ մի Հարվածով գլուխներ էր վար բերում:
... Դահլիճն րնկավ արնաշաղախ՝ արնոտ աջքը պալատին,
Մեր Հսկայի ձին ջախջախեց սմբակներով նրա դին:
Արքան տեսավ, որ նրա զիմ իր քաղերըն են Հակվում,
Այսպես գոռաց իր պալատից, սարսափի Հուրն աչքերում.
- Բավական է մեր սրերի ունայն կարհուտն Հեղեղեր,
Երկաթաուս փանդակներից առյուծներս բաց թողեր:
Եվ սարսափով բաց թողեցին, իրենք փախան, մտան սուռն,
Գազանների օղակի մեջ մնաց Հսկան աննկուն:

Գեղարվեստական կերպարի ուժի և Հերոսություն այս գո-
վերգն, անշուշտ, սերում է ամբողջածին Հերոսների պատկեր-
ման բանահյուսական ակունքներից: Վիշապամարտի Հերոս-
ներն էլ էին ներկայացվում ցուցադրող կայծակի թրով, ինչպես
մեր կտորի Հերոսները՝ Հրեղեն ձիով ու թուր-կեծակիով:

Մոլեղին Հսկան իրեն թուեափորած ստոր դահճին արժանի-
որեն պատուհասելուց, արքայի գինիփորներին ջախջախելուց
Հետո ողբ ի բռնի օրհասական կոթիվ է մղում իրեն օղակած
կրքը առյուծների ճրճ և զոհվում Հերոսավայել: Սակայն
նրան, ի վերջո, վախճորած ու թաքուն չարանենդներ չեն ան-
ձամբ սպանում, այլ գերիշխողի վերին Հրամանով նրան Հո-
շտում է իր փանդակակիցների ստակելով տեսած ամենի առ-
յուծը՝ այն էլ մեծանդ Հսկայի թուեափորված, ուժակորույն և
ուշակորույն պահին պոկելով նրա գլուխն ու պատռելով
կուրծքը: Արյունարբու թշնամին էլ Հենց զա էր ուղում
սպանված ու վտանգազերծված Մոկաց Միրզա...

Առանց Ծահի ավագ դստեր Հրապուրիչ Հրավերի՝ Մոկաց
Միրզան չէր ներկայանալու այդ խարդախ Հյուրասիրությունը:
Ընդ որում, եթե ավագ քույրն իրոք իր Հոր Հանցակիցն էր,
սպա կրտսեր քույրն իսկապես սիրահարված էր Մոկաց Հսկա-
յին, մի բան, որ որևէ արժեք չուներ շարաննեց Հոր Համար:
Ավելին՝ նա ողբերգության պահին արտասովոր է միայն իր
սպանված առյուծների Համար և տեղնուտեղը պահանջում է
իրեն հանձնել զոհված Հերոսի գեռես արնաթափախ սիրտը,
որը, սակայն, վախ էր ներշնչում նրան.

- Ափս՛ս, - սասց, - առյուծներիս, և նա գոռաց անձպուր, -
- է՛յ, Հանեցե՛ք նրա սիրտը, արնաթափախ բերեք ինձ -
Եվ Հանեցին Հովիի կրծքից սիրտ Հսկա և անրիծ
Եվ վեր տարան լուռ, անկապիչ, սակայն սիրով անօղորդ,
Արքան բռնեց, մեռքը գողաց ծանրության տակ այն սրտի,
Նայեց սրտի՞, ասես տեսավ, ինչպես Հսկա Հայլու մեջ
Ժողովրդի ուժն էր Հորոված արևներով իր անշիջ:
Գալիս էր նա պալատի դեմ՝ Հազած բոցեր ու զրահ,
Որ առյուծնա Հին աշխարհը Հրդեհի մեջ Հուրհրա:

Արքան գիտակցում ու գնահատում է ժողովրդի սիրելի Հե-
րոսի արժանիքները, գիտակցում է և իր նենգություն անհա-
փորությունն ու իր պատասխանատվության չափը, երկյուղում
է ժողովրդի ու Հասկապես դարբին Գոշի արգաթ ցատումից:
Բայց ունի Համախոհներ ու գործակիցներ, առանց որոնց
անկարելի պիտի լիներ Մոկաց Միրզայի սպանությունը: Հան-
ցակիցներից մեկը իր ավագ զուտարն է, մյուսը՝ դավաճան
տերտերը, որի միջոցով արքան կամենում էր վերացնել նաև
Հայոց երկրի մյուս պահապաններին: Նույն այդ թշնամին է
արյունահեղություններ Հրահողը, անագորույն մի թշնամի,
որը, շիտակ ու ազնիվ լինելու քաջությունը չունենալով,
զիմել է ակներև խարդախության իր ստոր որոշումն
իրականացնելու ճանապարհին իրեն Հանցակից դարձնելով

եան ավագ դասերն ու զոհարերելով կրտսեր աղջկա սերն ու երջանկությունը:

Գանձի այս հատվածի սեղմության մեջ անգամ երևում է, որ աղջիկը նկատելիորեն դժգոհ է ոչ միայն հոր, այլև հենց իր արարքից և մտահոգված է կրտսեր քրոջ ճակատագրով: Հոր գովասանքին, թե՛

- Ապրես երկրիս արևի չափ, որ բերեցիր հսկային,
- Գեղեցկությանն ու սուր խելքին աշխարհի մեջ չկա գին,
- Ահա նրա խելգուսի փրոջը՝ իր նստույզի գլխի չափ.
- Սրան երբեք չէին հաղթի ոչ մի անկող տենդ ու ստալ.
- Միայն լուսին հունքերը քո, ծով աչքերդ հաղթեցին...

Մինչդեռ աղջիկը լուս գղձուժով է արտահայտվում արգելն կատարվածի և իր քրոջ ճակատագրի մասին.

- Եվ աղջիկը՝ վարդ շուքիթերով, հորը այսպես քրմնջաց.
- Արևիկը տխուր է շատ, միշտ աչքերն ևն տեսնում թաց:—
- Ասաց փոքրիկ քրոջ մասին, հայրը լսեց արամությամբ,
- Նրա աչքից մեծ աղջկան ծածկեց կարծես մի գորջ ամպ:

Ընդգծված գորջ ամպը բնութագրվում է հոր և աղջկա նոր հարաբերությունը. այլևս նրանք հարազատներ չեն:

Ստոր արքայի մյուս գործակիցը Հայ տերտերն էր՝ ազգակիցը մեր էպոսի չորրորդ ճյուղի Մատաղավանքի դավաճան տերտերների, որոնց մասնությունը համար սպանում են Փոքր ՄՀերն ու Քեռի Թորոսը և վանքը վերանվանում Մատնավանք: Էպոսից եկող ցավայի այս իրողությունը, որ ընդհանրական է Հայ հոգևորականության համար, այս պարսպայում էլ Հ. Շիրազի պոեմում պատկերված իրադրությունն է մեջ դժբախտաբար իրական է թվում:

Ահա քահանան արքայից ստանում և սրբորեն կատարում է ստոր հանձնարարականը՝ թունավոր խաչով սպանելով Հայրենիքի մյուս պահապաններին.

- Թող քահանան խաչն արմաթյա այս սուրը ջրում թափվի. Ամեն ըմբոստ համբուրողի թարթիչներեց ճաշ կաթի:

Այս խարդավանքի զոհն են դառնում Մոկաց երկրի պահապան մյուս յոթ հովիվները, բայց քահանան սարսափով նկատում է, որ թունավոր խաչը համբուրելու չեկեղ գարբին Գոչը.

Համբուրեցին յոթը հողի՝ շրթուներեքով վարդահաս. Նրանք Մոկաց հսկայի պես հովիվ էին բաժաթի, Որ դուռն էին պահում սիրով զարկիչներից նենդ ու դե: Ու երբ ի՞նչով դիչերը սե, թունավորված, լուս հանդան,— Որոնց մեռեցին օժիր էին նենդ տերտերի հանդիման: Բայց խոբհում էր տերտերը դեռ, թե ուր մնաց Գոչն անկղ. Նա չէր եկել որհնարելու Մոկաց Միրզին փառանկղ:

Այստեղ էլ ջգվոր, ավարտվում է Հովհ. Շիրազի «Մոկաց Միրզան» պոեմի պահպանված գլխի գործողությունը, իսկ չլպահանվածների կամ դեռևս չհայտնաբերվածների մասին մասին ոչինչ ասել հնարավոր չէ:

«ՄԱՍՈՒՆՅՈՒՆ ԻՆՎԻՏԻՆ» ԿԵՐ «ԾՈՎԻՆԱՐ»

Հայկական ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսի գրական մշակման լավագույն օրինակը դեռևս 1902 թ. տվել էր Հովհ. Թումանյանը: Սակայն նա էպոսի երրորդ ճյուղը մշակել էր դպրոցահասակների համար՝ հաշվի առնելով նրանց տարիքային հոգեբանության յուրահատկությունները: Ռիչա է, որ Հովհ. Թումանյանը ջանացել է պահպանել էպոսի ոգին՝ մեր ժողովրդի ինքնապաշտպանական կոթիվներով ստոր նվաճողների դեմ հերոսաբար մարտնչելով հայրենիքն ազատարկելու վճռականությունն ու խոսքով աշխատանքի երազանքը, դարերի հոյություններում մեկտրված նրա ազգային բնավորությանը յուրահատուկ մյուս լավագույն գծերը: Սակայն ժողովրդական կյանքի բուռն տարերքի գեղարվեստական պատկերը, հենց վերը նշված պատճառով, նրա պոեմում լիարժեք չէր:

Ահա ինչու մեծ լուսեցուն չէր բազմաբարձում մանկական հասակի և դպրոցական տարիքի համար իր ստեղծած «Սասունցի Դավիթ» պոեմը և մինչև կյանքի վերջը երազում էր էպոսը ամբողջությամբ մշակել մեծահասակների համար և ավարտին հասցնել իր «Հազարան բլուրը», սակայն խառը ժամանակներն ու հանգամանքները հնարավորություն չտվին նրան այդ մասհզացումներն իրագործելու, և մենք զրկվեցինք հայ «Ելիսականն» ու «Որբականք» ունենալուց, չունեցանք նաև «Արևելքի «Փառուսք»»:

Արդեն կային Ավ. Իսահակյանի և Ե. Ջարենցի մշակումները, որոնք ենթարկվել էին նորագույն ժամանակների գաղափարախոսությանն ու օտար թշնամիների դեմ հայրենիքի ազատության համար մղված պայքար պատկերելու փոխարեն խորհրդային հրամայականով շեղվել էին դեպի սոցիոլոգիզմ ու դասակարգային պայքարի քարոզչություն: Հենց առ էլ. գեղարվեստական խոշոր առավելությունների կողքին, նրանց պոեմների ակնհայտ պակասությունն էր, որ պայմանավորված էր նորագույն ժամանակների գաղափարական պարտադրանքներով և բխում էր ժողովրդական էպոսի արդիականացման ձգտումներից:

1939 թ. էպոսի ստեղծման հազարամյակի տոնակատարության օրերին, ողջ խորհրդային երկրում մեր դուռը ցանկալի պլանով համընդհանուր ուշադրության առարկա: Գրողների հետ միասին նրանով խանդավառվեցին նաև երաժիշտները, քանդակագործներն ու նկարիչները:

Խանդավառվածներից էր նաև Հ. Շիրազը, որն այդ օրերին էպոսի հիման վրա նախորդների օրինակով փորձեց ստեղծել իր «Սասունցի Դավիթ» պոեմը, որից, ցավոք, դարձյալ հատվածներ են պահպանվել միայն: Իսկ որ նա իրաք բունն ոգևորությամբ գրել է ամբողջական պոեմ, որոտ է ամեն կասկածից: Այնպես որ՝ ավելորդ են որոշ զրականագետների այն պնդումները, թե Հ. Շիրազը «Սասունցի Դավիթ» խորագրով

պոեմ առհասարակ չի գրել:⁶⁶ Հենց այն հանգամանքը, որ բանաստեղծն իրոք մեր էպոսով և նրա հերոսներով ու մանավանդ զլխավոր հերոս Դավիթով ապրել է ստեղծագործական բունն ոգևորություն մի շրջան, հավաստում է էպոսի հազարամյակի օրերին մտերիմ ընկերոջը՝ Վարդան Ծախախախունուն ուղղված նամակներից մեկի հետևյալ հատվածը. «Իմ մեջ դորդում է «Սասունցի Դավիթ» ուրվականը: Իմ գրական մեծ գործը դա է լինելու: Ապրում եմ գրանով ու շնչում Դավիթի հետ»:⁶⁷ (ընդգրծ.՝ Ս. Մ.): Ընդգրվածների ամենինն էլ պատահական չեն:

Կան և ուրիշ վկայություններ: Գրքարում է, որ Հովհ. Շիրազը, հայոց Գազինի թագավորի դստերը՝ Մովինարին, համարելով էպոսի առաջին ճյուղի զլխավոր գեմքը, իր պոեմի առաջին գլուխը վերնագրած է եղել ոչ թե «Սանասար և Բաղդասար», այլ Հենց «Մովինար», որը, սակայն, բանաստեղծի ընկեր Միրան է հետագայում փոխելով դարձրել «Սանասար և Բաղդասար», իսկ Փոքր Մհերին պատկերող վերջին գլուխը, որը տպագրվել է «Նորհրդային գրականություն» ամսագրի 1940 թ. 2-րդ համարում, հեղինակն անվանել է «Վերածնունդ»: Նշանակում է՝ առայժմ կորած են պոեմի Մեծ Մհերին ու Սասունցի Դավիթին վերաբերող գլուխները: Այսինքն՝ էպոսի երկրորդ և երրորդ ճյուղերի շիրազյան մշակումները կամ նրա պոեմի երկրորդ և երրորդ գլուխները ոչ թե չեն գրվել, այլ պարզապես կորել են ու գեոսու գտնված չեն:

Ինչպես վերը տեսանք, մի որոշ շրջան իր զլխավոր գործն այս երկը համարած հեղինակն ապրում էր էպոսով ու «Նշում Դավիթի հետ»: Այս պարագայում անբնական են դառնում բոլոր այն կասկածները, թե Հովհ. Շիրազը կարող էր և գրած չլինել պոեմի այդ մասերը, առավել ևս՝ պոեմն ամբողջությամբ: Իսկապես էլ, որտեղից են «Դավիթի ոտանձայնը» և մանդակ խաթունին ուղղված շիրազյան հարսներգի հատվածները, եթե

⁶⁶ Տե՛ս Մ. Սամուկյանի բացատրությունները նրա կազմած ինչյալ զրքում, էր 19-22:

⁶⁷ Տե՛ս նույն տեղը, էր 19-20:

ոչ պոեմի երրորդ գլխից կամ Դավթի ճյուղի մշակումից. մի գովերգ, որում Հեղինակն ինքն էլ կարծես կարծես Խանդուկինն գովերգող խանդավառ ու կրակված գուսաններից մեկը կինի: Լովհ. Քուսանյանն էր 1904 թ. ծրագրել պատկերելու Դավթի ու Խանդուկի Հարսանիքը և ընկերներին էլ կատակով Հրապիրտը էր Հարսանիքի: Յովոր. Քուսանյանական այդ նախաձեռնությունն էլ շատերի պես անկատար մնաց: Կուսչին է, որ Լովհ. Շիրազն իր պոեմում Հազարամյա Հեռավորությունից պատկերած է եղել դյուցազնավայել այդ բացառիկ Հարսանիքը: Կարող ենք վերհիշել այդ գովերգից Հենց առուղա-գուսանական մոխամմազ Հանրահայտ չափով Հյուսիսում մի պատարիկ, որն իր բովանդակությամբ ու ողով Համապատասխանում է կպոսի գոնե այն զրվազին, ուր Խանդուկի գովերգին միահյուսված են Հույժ արդիական Հարցադրումներ.

Խանդուկ թափու, Հիմի չկա, Հե՛յ վախ, թե կա՝ բարով գառ զու.

Հարսանիքն է՛ նորից Դավթի, իր մասունու բարով գառ զու:

Արի՛, լուսնյակ աղչիկներին շվարջ քիչ արեի պես.

Վանա ծովի Ծովինարով, Հայոց Սասնա սարով գառ զու:

Հարսանիքը երկրով մեկ է, Հարսն էլ թե գա՛ խառ կլինի,

Թե Բինդյուլն էլ Հնոդ քերես՝ գինին Սևան – Թառ կլինի,

Արի՛ Խանդուկ, Աբազն անդամ գովերգ ասող սաղ կլինի. –

Հազար ու մի Հայոց սարով, Հայոց բախտի գարով գառ զու:

Արի՛, մուրաղ ձեռով գրի, գովքը ասող գուսան կա շատ,

Քո ճամփեքին մարդ-փեսանդ, վարդ, բալասան, լուշան կա շատ,

Թե Սևանում Սասուն չկա կպո... ուխտ, բախտան կա շատ,

Դավթի կարտան է քեզ կանխում՝ ուխտի Արթմարով գառ զու:

Կարեօր է, անչուշա, և այն, որ այս գովասանքի մեջ հիշվում են նաև կարծի մյուս գլխավոր Հերոսները՝ Սանասարն ու Առյուծ Մհերը, Չենով Օհանն ու Արմազանը, Դավթի անեքրով անմահ և անմահանց մնալու գառապարտված Փոքր՝ Անմահ

Մհերը: Իսկ սա նշանակում է, որ նրանք նույնպես եղել են բանաստեղծի ուշադրության կենտրոնում.

– Հե՛յ Սանասար, Առյուծ Մհեր, Չենով Օհան, ո՛ւր եք, Հասեք, Դու՛, Արմազան, Անմահ Մհեր, Հարսանիքին Հյուր եք Հասեք, Ես շայտ բախտի գինին բերող անմահ ծովադրյուր եք, Հասեք. –
Ես շոք Դավթի խաչկարայրն եմ, Հայ քոչարի պարով գառ զու:

Ուրեմն, իսկապես լուրջ հիմքեր կան պնդելու, որ նա դրած է եղել ամբողջական պոեմ: Մ. Մանուկյանի քերած վկայությունները կասկածի հիմք չունեն, մանավանդ որ մյուս վկայողները բանասեր-աշուղագետ Կարո Դուրդարյանը, Վարդան Շահխաթունին (Շիրազի մտերմիկ զինուկում Եսթոնի – Ս. Մ.), Միրաբը, Վարդգես Սարգսյանը դյուրեցից պատկանելի մտավորականներ են, գրական մարդիկ և բանաստեղծի իրական մտերմները: Նրանք Հենց պոեմի գրվելու շրջանում էլ են շփոխել բանաստեղծի Հոսն և ստուգապես վկայում են այդ պոեմի գրված լինելը: Լովհ. Շիրազն անձամբ Միրասին է ասել պոեմի առաջին «Մովինար» Հատվածի ձևագիրը, իսկ վերջինս Հեռագայում Հանձնել է Մ. Մանուկյանին: Սակայն բանաստեղծն իր ձևագիրը Միրասին Հանձնելիս Հեռակայն է ասել. «Հարիկ (Մովինարի) ձևագիրը) թող մնա քեզ մոտ, իսկ շարունակությունը խորագրի տեղակալ Վարդգեսից վերցրու կերևա, որ չի տպե»⁸⁸ (ընդգծ. – Ս. Մ.):

Ուրեմն իսկապես եղել է «Մովինարի» շարունակություն, որը «Բանվորի» խմբագրությունը ինչ-ինչ պատճառներով չի կամեցել տպագրել և խառը Հանդամանքներում կորցրել է

⁸⁸ Տե՛ս նույն տեղը էջ 21: Գրչալ Վարդգեսը, մեր խորհի համոզմամբ, այն Վարդես Ասր-գեսյանն է, որը 1960-ական թթ. Լենինականում և Շիրակի գյուղերում հանրության աջակցությամբ էր գալիս Գ. Շիրազի մասին ինտելեկտուալ քննարկումներ անցկացնելու: Բանաստեղծի խնդրանքով նա եղան էլ է եղել և, 1963-ին կարողավ Գ. Շիրազի «Ինքնորոշում» պոեմի մեքենայից, այն գուլգուտել է Լարնեպետ: Աստվածի հետ և նրա վերջին էջի վրա մակառել. «Մարդու և Աստուծո ստանձանների քննելը միայն Լարնեպետ օճաշնորդի յե» – Ս. Մ.:

ձեռագիրը: Իսկ ո՞րն է «Մովհնարի» շարունակությունը, եթե ոչ «Մեծ ՄՀերի» ճյուղի մշակումը:

Փաստորեն պահպանվել են եզրային գլուխները, իսկ մեջտեղի երկու կամ երեք (անհավանական չէ, որ 2. Շիրազի պոեմն ունեցած լիներ թի՛ «Մովհնար» և թի՛ «Սանասար և Բաղդասար» գլուխների) գլուխների բացակայությունն ստայմ մեզ պարտադրում է բավարարվել եղանո՞վ՝ առաջին՝ «Մովհնար», և չորրորդ՝ «Վերածնունդ» գլուխներով:

Ի՞նչ են տալիս մեզ 2-րդ. Շիրազի «Սասունցի Դավիթ» պոեմի պահպանված այդ գլուխները: Դրանց ուշադիր ընթերցումն էլ բերում է այն համոզման, որ բանաստեղծն իսկապես ամբողջացրած է եղել պոեմը, և պահպանված գլուխներն իրականում մեծ ամբողջի բազմազրկչներ են: Նրանց գեղարվեստական որակի մասին մեր խորհրդածությունները, սակայն, հենց այդ մասերի բացակայության պատճառով չեն կարող լիարժեք լինել:

Հովհ. Շիրազին էպոսի դեպքերի չափածո պարզ վերապատմումը կամ կերպարների կրկնօրինակումը չէր կարող բավարարել. նոր ժամանակները թելադրում էին հին նյութի վրա նոր տեսլիքի պատմաստում: Այս պատճառով էլ բանաստեղծը Հայտնի գործողություններից թույլ է ավել որոշակի շեղումներ՝ թե՛ իր գեղատպական խնդիրները լուծելու, թե՛ կերպարների բնավորության ու Հոգեբանության բացահայտման նպատակներով: Էպոսում հայտնի Գագինի թագավորի դուստր Մովհնարը, իմանալով խալիֆի՝ իրեն կնուխյան ուզելու պահանջը և զիտակցելով մերժման հետևանքները, նախապես է կանխում խալիֆի հնարավոր հարձակումը Հայաստանի վրա՝ անձնվիրաբար համաձայնելով գնալ Բաղդադ՝ խալիֆին կնուխյան՝ այն հետևակարով ու մտահոգությունք, որ

— Ես մեկ ջան եմ,

Ազնվին էն է՝ ես էրթամ կորսվմ,

Ուրիշ մարդու թող բան չըլլի,

Ես կանդենն իմ հոր թերևն.

Որ ես էն կուտալալս թագավոր չամեն՝

Էնի տի գա մեր Հայաստան էրդիր ավերի,

Էն հապար-հապար հոգիք կորուսանին:

Հովհ. Շիրազի պոեմում Հայկական կոզմը՝ Գագինի թագավորը և Սանա կամ Ազնանց տան ջոճերը, հրաժարվում են խալիֆի պահանջով Մովհնարին կնուխյան տալ, և խալիֆի մեծաբանակ հրոսակների և Կապույտ բերդի սակավաթիվ քաչարի պաշտպանների միջև սկսվում է յոթն օր տևած ծանր ու կորտափոր պատերազմ: Հայերի կրած ծանր կորուստներն ու նեղությունները տեսնելով՝ Մովհնարը դիմում է հորը՝ Գագինի արքային.

— Հայրիկ, տու՛ր ինձ այդ խալիֆին՝

Բարձր մնա բերդըդ Կապույտ.—

Լավ է կորչի մի կայծ աղբիկ,

Քան արեղակ մի ժողովուրդ:

Շիրազյան անհատականության գորշմը կրող այս հատվածը ժողովրդական էպոսի վերը բերված զրվազից արտաքենապես, միայն ձևակերպումով է տարբեր, իսկ բովանդակությամբ գրեթե նույնական են նրանք: Այդպես էլ էպոսի ողուն հարազատ են շիրազյան պոեմի մյուս զրվազները: Միայն որոշ հատվածներում, որոնց մեջ բանաստեղծը ջանացել է արդիականացնելով մարմնավորել նորագույն ժամանակների շուշը, ստեղծվել են աններգաշնակություններ: Հատկապես Փոքր ՄՀերի կերպարում նկատելի է Հեռավոր ժամանակների էպիկական հերոսին քսաներորդ դար ու մասնավորապես խորհրդային իրականություն տեղափոխելու երիտասարդ հեղինակի ճիգն ու ձգտումը:

Փոքր ՄՀերի «ձուռությունք» գերազանցապես պայմանավորված է դրուխյան կոմիզոմով և նորագույն երևույթների անտեղյակ ՄՀերի թյուրբժրանողությունք: Հերոսների աշխարհընկալման ու գործելակերպի արդիականացման այս հան-

դամանքը ոչ միայն անհարթ է էպոսի ոգուն, այլև իր անհամոզությամբ լրջորեն մտանկ է պոեմի գեղարվեստականությանը: Էպոսի հերոսների գործողությունները խորհրդային իրականություն փոխադրելու կամ քսաներորդ դարի երևույթները էպոսի մեջ տեղափոխելու փորձերը, որքան էլ հետաքրքիր, չեն կարող հաջողված կամ ստացվել: Արանք արդիականացման անհաղոջ փորձեր էին համ ժամանակին տարածում գտած տեխնիցիզմի արձագանքները, որոնց դեմ նույն ժամանակներում իր քնարական բանաստեղծություններով ու պոեմներով սկզբունքային պայքար էր մղում նույն Հ. Շիրազը:

«Սասունցի Դավիթ» պոեմի պաշտպանված հատվածները Հ. Շիրազի ոճին ու լեզվամտածողությանը բնորոշ պատկերների պահպանություն չուներ, քայքայ երկրորդ և երրորդ դրուխտների բացակայությունն անկարելի է դարձնում պոեմի ամբողջականության գնահատությունը:

Ակնհայտ է, որ Փոքր Մհերին Աղավաթարից դուրս բերելու, ոչ թե պատմական Մասունում կամ Վասպուրականում, այլ խորհրդային իրականության մեջ՝ Երևանի, Արագածի ու Սևանի միջավայրում նրա գործողությունները ծավալելու փաստն ուներ իսահակյանական ներշնչումներ: Մհերին ու զեկիցող ծնր հովվի հնա հերոսի զրույցներում ներգրվել է նորագույն ժամանակների մտածողությունը: Թուր-Կայծակին ձեռքին գալարագեղ այգիներ ու արտեր մշակող մարդկանց ողջունելու, «փոխված աշխարհի» առատ բերք ու բարիքով հիանալու, վագրեր ու արծիվներ բռնելու Փոքր Մհերի արարքները, ինչպես նաև նրան մոտեցված Բերդ-Կրեմլի հնա կապելու, նրա կողմից ինքնաթիռը «Իրեն ծաղրող խենթ արծիվ», իսկ զնայքը վիշապօձի և լուսարձակներով ավտոմեքենաներն ու քաղաքի լույսերը զեկին հնա շփոթելու զրվագները բռնագրոսիկ են ու արհեստական:

Օրն էր լողում՝ ինչպես ծովը սրբի տակ,

Ձիերն էին խաղում շորք, քայլում կրկին,

Երբ որ հեռվից անցավ խեղեղ մի կիլ զնայք,

Ու Մհերը թռավ, քաշեց Թուր-Կայծակին.

– «Վիշապ – օձ է, մեր դեմ կուգա, թող սպանեմ».

– Մհեր, օձ չէ, զնայք է դա, բեռ է կրում».

Ու շշմուշ Մհերն իրեն ու խեղապեմ՝

«Շատ է փոխվել մարդն աշխարհում»:

Կամ՝

– «Բոց աչքերով զեկր կուգան, թող սպանեմ».

– «Ձկ, գո՛ւ Մհեր, ճրպուկներ են մեր աշխարհի»:

Իրափնանիք բուրբուլին չի փոխել նույնիսկ Մհերի՝ Երևանում իր Հոր՝ Դավիթի արձանին հանգրվանելու զրվագը.

Եվ Մհերին շշմում է ծերն իմաստուն.

– Բո Հայրն է դա, մեր Դավիթն է, ինձ Հավատու...

...Տեսավ Հայրն էր ու դարձացավ ու խոնարհվեց.

– Հայր իմ, էհե՛յ, ձայն չես հանում, գարձեղ ես քար,

Թուր-Կայծակին ձեռքդ ես առել, ու Հուտալեց.

– Հայր իմ, Հայր իմ, Հույն է փոխվել, սրբ՝ աշխարհ:

Դուրս եմ եկել քարածառից սև Աղավաթ,

Յորևնի Հատն ինչպես մեկ-մեկ մասուր սեսա:

Եվ նայում էր Մհերն իր Հորն ստանց ցավի.

Լուս նայում էր սեզ արձանին երկրի վրա:

Մի կարևոր իրողություն չի կարելի շրջանցել. ինչո՞վ կրացատրվի այն հանգամանքը, որ Հ. Շիրազը վաղ շրջանում գրած մի շարք պոեմներն ու բանաստեղծություններ հետագայում նույնիսկ մի քանի անգամ վերամշակել է ու հրատարակել, իսկ «Սասունցի Դավիթ» պոեմին այնուհետև բուրբուլին չի անդրադարձել բացառությամբ երրորդ ճյուղի հերոսունուհուն նվիրված «Խնայում խաթուն» գովերգի: Գտաա-

խանը պարզ է. Հեղինակն ավելի խորն էր զգացել իր պոեմի թե՛ ուժեղ և թե՛ թույլ կողմերը և նրան Հետագա անդրադարձը կամ վերամշակումը Համարել է անիմաստ: Այլապես նա իր կազմած վերջին ՀինգՀատորյակում, բացի «Պանդուխտ խաթուն»-ից, նախատեսած կլիներ գոնե մեկ ուրիշ Հատված էլ:

«ՄԻԱՄԱՆՈՒ ԵՎ ԽՁԵԶԱՐԵ»

Հովհ. Շիրազի հրատարակած առաջին պոեմն է սա, որը թեև գրվել է պատանություն տարիներին և լույս տեսել 1935 թ., սակայն Հետագայում Հասուն շրջանում, ունեցել է մեկ տասնյակից ավելի լրամշակված հրատարակություններ՝ 1942 (Ավ. Իսահակյանի խմբագրությունում լույս տեսավ «Երգերի գրքում»): Գրքի մյուս խմբագրող Հանձն էլ էր առել պոեմի խմբագրությունը, 1947, 1949, միայն 1954 – 1955 թթ.՝ չորս հրատարակություն, 1957, 1958, 1970, 1979 թթ. (վերջինը՝ ժողովրդական նկարիչ Գրիգոր Պանջյանի ձեռագրումով ու նկարազարդումով) և, վերջապես, 1984 թ.՝ Երկերի ժողովածուի երրորդ Հատորում:

Մեկ ստեղծագործության բազմակի մշակումներն ամենևին էլ ինքնանպատակ չէին. առաջին տարբերակների պակասությունները նախ և առաջ Հեղինակն ինքն էլ զգացել և Հետագա լրամշակումներում ջանացել է լրացնել այն ասելիքի ամբողջական բացահայտումով:

Առաջին իսկ տարբերակը երիտասարդ բանաստեղծի՝ դեպի ժողովրդական նշամբիտ բնարեղություն կողմնորոշման ակնառու վկայություններից է և Հայոց ժողովրդական բանահյուսական նյութերը զբաղեցնող մշակմամբ արդիականությունը ծառայեցնելու ամենից Հաջող փորձերից մեկը, որը և կրկնապատկեց «Գարնանամուտի» նորարարող Հեղինակի փառքը:

Սակայն դյուրին չի եղել պոեմի ճանապարհը, քանի որ սկզբից ևեթ նրա վերաբերյալ միասնական կարծիք չի գրանորվել: Այն ներկայացված է եղել մրցանակաբաշխության, մրցանակ տրվել է՝ 200 ուրբի, բայց պոեմի վերնագիրը չի նշվել թերթում ավգամ մրցանակակիրների ցուցակում: Գարգվում է՝ այս վերաբերմունքի պատճառը եղել է մյուսի նախագահ Ե. Չարենցը: Հետագայում է՝ Շիրազը բացել այդ դաղտներից՝ Չարենցի Հետ ունեցած իր առաջին Հանդիպումը վերհիշելով: «Այսպես եղավ իմ առաջին Հանդիպումը Չարենցի Հետ: Դեռ չէի տեսել նրան, մինչդեռ լսում էի երիտասարդ գրողներից, որ Չարենցը ուզում է ինձ տեսնել: Եվ ահա մի ոսկե աշուն Թ. Չարյանի Հետ Հայտնվեցի Չարենցի տանը:

– Դո՛ւ ես, Օնիկ, – սասց Չարենցը:

Ես դարձաքս, որ ինձ Օնիկ սասց, քանի որ արդեն Հովհաննես Շիրազ էի, և միայն Ալազանն էր ինձ Օնիկ ասում: Ի դեպ, այն ժամանակ կարծիք էր տարածվել, թե իբր Շիրազը գրածանաչ էլ չէ: Երեի այդ պատճառով էլ Չարենցի երկրորդ Հարցը եղավ:

– Ի՛նչ ես կարդացել Գուշկիներից:

Ես լուեցի, Չարենցը կրկնեց.

– Մանո՞թ ես «Եվզենի Օնեգինին»:

Ես թեպես չէի կարդացել (թարգմանություն չկար), սասցի.

– Ետս է երկար:

Չարենցը ժպտաց և սասց.

– «Միամանթո և Խջեզարեն» երկար չի՞, որ դրկել էիր մրցանակաբաշխության: Իսկ ինձնի՞ց ինչ ես կարդացել:

Ես սասցի՝ «Ամբոխները խելագարված», մեր դասագրքում կա: Չարենցը ծիծաղեց: Վրա բերի.

— Բայց Ձեր ամենից լավը «ես իմ անուշ Հայաստանի» տաղն է:⁹⁹

— Որտե՞ղ ես կարդացել, չէ՞ որ իմ ոչ մի գրքում չկա:

— «Գրական գոհարներին» մեջ, — ասացի ես:

— Է՛, սիրելի պատանի, սիրելի Օնիկ, դա էլ, «Ախամանթո Խեղարեններն» էլ անցած էտապներ են...»:

Ես մաքրի մեջ զարմացա և իսկույն կռահեցի, թե ինչու իմ «Ախամանթո և Խեղարեն պոեմի Համար մրցանակ տվել են, բայց թերթում պոեմի անունը չէին գրել, ստացել էի 200 ուսուրի գրամ»¹⁰⁰:

«Ախամանթո և Խեղարեն» պոեմի առաջին տարբերակն արդեն իսկ գեղարվեստական այնպիսի լուրջ արժեք էր, որ Հարթնեյ իր ճանապարհը գեպի ժողովուրդ և ըմբռց միայն ինքնզրդային Հայաստանի սահմաններում: Դեռևս 1936 թ. այն արժանացավ նորաճաշակ ու խորագրաց Աբշահ Չոպանյանի հիացական գնահատությանը: «Անահիտ» Հանդեսի էջերում Ափյուռքի բարձրագույն գրագետներից մեկը գրել է. «Գուղեմ այստեղ զոտն քանի մը տողով հիշատակել (այելի լայնորեն անոնց մասին խոսելը թողնելով առաջիկային) տխրողաները երկու քերթողական գրքույկներու, որ Հայ Նոր ու զմայլելի բանաստեղծի մը բերկրաթիթ Հայանությունը կրբրեն մեղի, այն է՝ «Գարնանամուտ» (իսկապես գարնանարույր) տաղերու

⁹⁹ Ինչու՞ վար «ես իմ անուշ»-ը 1932 թ. սկսեցի մեծադիր հատրում, փնտրելի չգրվա. քանի՞ս ասել է Գ. Կիրազը մեր հանդիպումներում իր և Չարենցի հարաբերություններն արժանաբան - Ս. Մ.:

¹⁰⁰ Ե. Չարենցը Գ. Կիրազին չի բացատրել, թե ինչ հարնակումներ են եղել իր վրա Գ. Աուրխաթյանի «Գրական գոհարներում» 1922 թ. տպված «ես իմ անուշ»-ի պատճառով: Այդ պատճառ ինչպե՞ս ասել է. «Գարալյանի դատաարտոջ խոսքը. «Սուրխաթյանը կոմունիստական ղեղավակ կառնիր Կուրդով փաթարում և որպես գրական կոմիտեայան է անցկացնում Չարենցի ցանցունդիտական-հակահեղափոխական գրվածքը «ես իմ անուշ Դայաստանին» - Ս. Մ.:

Հալաբաժուս և «Ախամանթո և Խեղարեն» հռչակալ վիպերը Հովհաննես Երբաղի, որ երկի անապատան որր տղեկ մը եղած է և. Հայաստանին մեջ և այսօր. ըստ իս, Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը գրավելու արժանի ներշնչյալ, հմայիչ քնարերգակ մըն է»¹⁰¹ (ընդգծ. — Ս. Մ.):

Գոեմը Հանրահայտ բանահալաբ ու բանագետ Գարեգին վրդ. Արվանձայանցի «Բրոց ու Բրոց» (1874) և «Համով Հոտով» (1884) գրքերում ընդգրկված ժողովրդական պատումների շիրազյան գրական մշակումն էր: Կար և այդ պատումի քրդերեն տարբերակը՝ «Ախարանդո և Խեղարեն» խորագրով, որը Հ. Երբաղից հետո մշակել ու հրատարակել է քուրդ գրող Ջաւրմե Ջալիլը: Հովհ. Երբաղը հենվել է սրվանձայանական տարբերակներ վրայ և նրանցով Հյուսիսի քնարավիպական իր շքանալ պոեմը:

Ժողովրդական նյութն իր պարզություն մեջ ուներ չբացահայտված խոր շերտեր ու ծալքեր և հնարավորություն էր տալիս սիրո ոգրերգություն պատկերում իրականացնել ընդամենը մեկուկես տասնամյակ առաջ՝ Մեծ եղեռնի հետևանքով թուրքերի բռնազավթված և բուշեիկները հետ կնքած բարեկամության պայմանագրերի վավերացումով նրանց արված Արևմտյան Հայաստանի բանաստեղծականացմամբ: Գոեմում սկզբից ևեթ Հ. Երբաղը շնանցել է լուծել թե՛ գեղագիտական, թե՛ գաղափարական խնդիրներ: Սակայն որքան էլ զվավորին լինի միաժույլ գեղարվեստական պատկերի մեջ զաղափարականի ու գեղագիտականի զանազանումը, այնուամենայնիվ նկատելի է, որ պոեմի մշակումները գերազանցապես ընթացել են գեղագիտականի պահպանման ու զաղափարականի՝ այս

¹⁰¹ «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., էջ 30:

գեղարվեստի և գրականության հարցերի վերաբերյալ

Հետաքրքիր է պոետի ստեղծագործական պատմությունը, որով բացահայտվում է, թե իրականում ինչ փոփոխություններ է կրել այն՝ լրամշակումների ընթացքում: Խոսում է այն իրությունների, որ վերջնական տարբերակը ծավալով ստեղծված երկերի գերազանցում է պոետի առաջին հրատարակությանը: Իսկ սա նշանակում է, որ առաջին տարբերակներում (1935, 1942, 1947, 1949 թթ.) Հեղինակը չէր սպասել իր ասելիքը և հետագա տարբերակներում նա, ժողովրդական նյութի նորանոր շերտերի ու ծաղիկների բացահայտումներով, փանայել է անզգալոր խորացնել ու հարստացնել իր գեղարվեստական խոսքը՝ պոետի կառույցին ու բովանդակությանը հաղորդելով առավելագույն ամբողջականություն: Սրա շնորհիվ գերազանցապես սիրո գեղեցկությունն ու ողբերգությունն պատկերող պոետը հետագայում վերածվել է նաև ազգային ողբերգություն և նպատակագրումներ մարմնավորող համապարփակ ստեղծագործության:

Հովհ. Թումանյանի «Անուշ» պոետի առաջին (1892) ու վերամշակված (1902) տարբերակները համեմատելիս նկատում ենք, որ մեծ լուսեցին գրեթե երեք անգամ կրճատել է իր պոետի ծավալը՝ բնոստիպիզով ու հեռացնելով նույնիսկ գեղարվեստական ինքնուրույն արժեք ներկայացնող ամբողջական հատվածներ, անհրաժեշտ կրճատումներով մաքրելով «ավելորդություններից» և ոճական շտկումներով բյուրեղացնելով՝ այն հասցրել գեղարվեստական կատարելության: Այս պարագայում միանգամայն բնական հարց կարող է ծագել. Հովհ. Երբայց տասնյակ վերամշակումների ընթացքում, Հովհ. Թումանյանի ստեղծագործական փորձին հակառակ, նոր հավելումներով ու լրացումներով է ծավալել գրեթե եռապատկանումով «Միամանկն և Խնկարն» պոետն արդյոք չի՞ ժանրաբեռնել ավելորդություններով կամ նրան շնորհաշնակող հատված-

ներով ու այդպիսով խախտել նախնական համաչափությունները և դրանով չի՞ խաթարել երկի ավանդական դիպաշարն ու վնասել երկի գեղարվեստականությանը:

Դժվարին այս հարցադրումը պարտավորեցնում է կատարել պոետի մեկուկես տասնյակ տարբերակների համեմատական լուրջ քննություն՝ պարզելու համար մշակումների ընթացքում Հեղինակի կատարած փոփոխությունների՝ հավելումների կամ կրճատումների բնույթը, ինչպես նաև նրանց զազափարական ու գեղարվեստական արժեքը վերջին տարբերակի գեղարվեստական ամբողջության մեջ: Այդպիսի անհրաժեշտ, բայց ոչ բավարար ուսումնասիրություն մեզանից առաջ փորձել են կատարել երեք պրոֆեսորներ՝ գրականագետներ Սողոմոն Սողոմոնյանն ու Սուրեն Աղաբաբյանը և լեզվաբան Սենեքերիմ Մելքոնյանը⁵²:

Ս. Սողոմոնյանն իր «Հովհաննես Երբայց բանաստեղծական արվեստը» ծավալուն ուսումնասիրությունը գրել է 1954-62 թթ. և նրանում զգալի տեղ է հատկացրել այս պոետին. փաստորեն նա առաջինն է մեղանում կատարել պոետի Հինգ տարբերակների համեմատական քննություն և լրամշակումների ընթացքի խոր ուսումնասիրությանը արդարացիորեն կուսել, որ այդքանից հետո «Հեղինակը նորից է անդադարապես «Միամանկն և Խնկարն» պոետին» նոր վերամշակման համար⁵³ (ընդգծ.՝ Ս. Մ.):

Եթե նույնիսկ վիճարկելի են նրա որոշ դրույթներ ու դիտողություններ, ապա դրանցից շատերն ընդունելի են եղել

⁵² Տե՛ս Ս. Սողոմոնյան, Ժամանակակից հայ բանաստեղծներ, գիրք երկրորդ, եր., 1967, գլուխ երրորդ, էջ 47-72., Ս. Սելբոնյան, Գովհաննես Հրեպեղ «Միամանկն և Խնկարն» պոետի ստեղծագործական պատմությունից, «Արևիկ» և «Ժամանակ» (Խաչապ Գլուխուց), Գյումրի, 2009, թիվ 1 - 2, էջ 48-54:

⁵³ Տե՛ս նվ. աղյ., էջ 72:

նույնիսկ Հեղինակի՝ Հ. Երբազի համար, որ նկատում ենք 1954 - 57 թթ. լրամշակումներում: Ըստ երևույթի, անձնագրի մտերիմ լինելով, քննադատն ու բանաստեղծը համախ են իրենց հանդիպումներում քննարկել ստեղծագործական բնույթի, այդ թվում նաև «Սիրամանին և Խջկարեն» պոեմի հետ կապված հարցեր: Դրա վկայությունն է հետևյալ խոսույն փաստը: Լովհ. Երբազին նիբիրված առաջին ծավալուն և խորունկ ուսումնասիրություն ավարտելուց հետո գրականագետն իր տանը տեսել է բանաստեղծի շատ կարեւոր Հետևյալ նամակը, որը խելամուտքն գրել է իր աշխատության վերջում:

Մեր խորին համոզմամբ՝ հատուկ ուշադրության է արժանի ստորե ներկայացվող նամակի չափածո հատվածը՝ որպես գրական փաստ: «Մի անգամ ուշ երեկոյան տուն գալով, - գրել է Ս. Սողոմոնյանը, - գրասեղանիս վրա տեսա ծոցատարի՝ ծայրը պատռված մի թերթիկ հետևյալ գրությունամբ. «Զգիտե՛մ ինչու չես ուզում ինձ հանդիպել. - գրել է Հ. Երբազը: - Վախենում ես գուցե խոսումնազանցությունդ խուփելուց: Բայց ո՛չ, հանդիպիր և «Ս. Խճկարեն», և՛՛՛՛՛ հնարավոր է, բեր: Գոհմը վերամշակում եմ՝ պետք է հիեր: Ենդիրս չմերժես.

... ո՛վ քննադատ,

Վազված սրտիս հո՛վ քննազատ,

Կամ թե խաղաղ սիրոց վառող

Դու կրակե բո՛վ քննադատ, -

Այնպես արա, որ ստե՛ն քեզ՝

- Ա՛յ քեզ խելիքի ծով քննադատ»²⁴(Ենդր. - Ս. Մ.):

Ընդգծվածներինց երևում է, որ բանաստեղծն ու քննադատը իրենց նախորդ հանդիպումներում քննարկել են նաև «Սիրամանին և Խջկարեն» պոեմը և խոսել նոր վերամշակման անհրաժեշտության մասին: Իսկ թե ինչու էր քննադատը խու-

սափում բանաստեղծին հանդիպելուց կամ ի՛նչ «խոստումնազանցություն» մասին պիտի խոսվեր՝ դժվար էլ ենթադրել: Ս. Սողոմոնյանը, ճանաչված քննադատն ու գրականագետն լինելով, ժամանակին նաև խորհրդային կուսակցական բարձրաստիճան պաշտոնյա էր, եղել է նաև կոմկուսի Երևանի քաղկոմի քարտուզար, հավանաբար, նա Հ. Երբազին խոստացած է եղել իր Հեղինակությունամբ ու կուսակցական լուսկենրով ազնվորեն աջակցել նրա ստեղծագործությունների սպազրությունները, բայց կուսակցական ու զաղափարական արելիքներն անկարելի են զարժրել տված խոստումներին կատարումը, ուստի և խուսափելը բնական էր: Բայց անհերքելի է, որ նույն Ս. Սողոմոնյանն իր ուսումնասիրությունամբ խորհրդային սարիներին կերտել Հ. Երբազ բանաստեղծի ամենինց ընդարձակ ստեղծագործական ղեկմանկարը այդ ինքնատիպ ու խորապես ազգային բանաստեղծին ստյով ժամանակին համար համարձակ բնութագրումներ: Հենց նա էլ քննարկվող պոեմի 1954 - 57 թթ. տարբերակների վերլուծությունամբ արժանի է երկը և արձանագրել այն իրողությունը, որ Հ. Երբազը բանահյուսական սիրային պարզ ավանդազրույցին, իր պոեմի առաջին տարբերակների թերություններին ինչպիսիս առ քալ շուկումով, հավելումներով ու կրճատումներով, զրվակների տեղափոխումով կոմպոզիցիոն կառույցն առավել կու՛ռ զարժնելով, լեզվաճական բարեփոխումներով ստեղծել է նորապույն ժամանակների՝ թեմայով ազգային-Հայրենասիրական, ժանրով քնարականիկական, բովանդակությամբ փիլիսոփայական և գեղարվեստական կատարելության ձգտող գլուխգործոց պոեմներից մեկը:

Ընդգծենք նաև, որ այս գրականագետը չէր կարող անգրադատնայ հետագա՝ 1970, 1979 և 1984 թթ. լրամշակումներին, քանի որ ինքը վախճանվեց զրանց հրատարակումինց առաջ: Սակայն այդ քննադատը, ինչպես ասացինք, Հեղինակի հետ ունեցած առանձնատրույցներինց ու քննարկումներինց կանխատեսում էր պոեմի նոր ու առավել հիմնավոր լրամշակման ան-

²⁴ Լույս տրոնում, էջ 227:

խուսափելիությունը, մի բան, որ Հեղինակն ինքն էլ էր գիտակցում, սակայն կային դժվար լուծելի գեղարվեստական խնդիրներ, որոնց Հասունացումը տևական ժամանակ ու նպատակովոր պայմաններ էր պահանջում:

Լեզվարան-ոճագետ պրոֆ. Ս. Մելքոնյանը, որ տասնամյակներ շարունակ բարեխղճորեն ուսումնասիրել է Հայ բանաստեղծների ու մանավանդ Շ. Երսուզի ստեղծագործության լեզվի ու սեփ խնդիրները, պոեմի ավելի քան տասը հրատարակությունների համեմատական քննությունը ոչ միայն բնութագրել է լրամշակումների ընթացքում կրած խմբագրական-ոճական փոփոխությունների դերը նրա գեղարվեստական կատարելության ճանապարհին, այլև լուծել է գրականագիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող մի էական խնդիր՝ ուրվագծելով պոեմի բովանդակային ու գաղափարական հարստացման ընթացքը տարբերակից տարրերով: Անշուշտ, այդ քննությունը կատարելիս նրան գերազանցապես հետաքրքրել են լեզվական-ոճական խնդիրները, որոնց վրա էլ կենտրոնացել է:

Մենք ես, պոեմի տարբերակների քննություն կատարելով, նկատել ենք իրոք հետաքրքիր այն օրինակափոխությունը, որ Շ. Երսուզը, պոեմի 1942 թ. հրատարակությունից սկսած և Հասունացան վերջին տարբերակներում, ավանդական գիպաչարին էական հավելումներ կատարելով, Հայրենի բնության մեջ Հերոսների սիրո գեղեցկությունն ու վեհությունը պանծացումով, աղնիվ ու անազարտ զգացումներների բարձրարժեք մարմնավորմամբ, մարդկայնորեն գեղեցկի ու ողբերգականի Հակադրության ընդգծումով՝ գեղալիտականի Հեռ միասին աստիճանաբար ավելի խորացրել է ազգային-Հայրենասիրական ու գաղափարական խնդիրների արժարժումները: Պայտելի էակի ու Հայրենիքի Հանդեպ նախագես սիրո համակուռություն ստեղծելով, իսկ վերջին տարբերակներում նույնիսկ վերջինիս գերակայությունը հիմնավորելով՝ Հեղինակն իր «Մեխանիստ և

Խեղդարե» պոեմը, բազմաթիվ այլ ստեղծագործությունների Հեռ միասին, նպատակամղված դարձրել է մեր ժողովրդի պատմական Հիշողության ու ազգային ինքնագիտակցության արթնացման, Հայության նոր սերունդների գիտակցության մեջ ազգային իրավունքների ճանաչման ու ամրակայման, բունագլխավոր պատմական Հայրենիքի պահանջատիրությունը շեփոթելու միջոց՝ պատկերավոր խոսքի ներգործությունը գործողացնելով մտքի և զգացմունքի ներդասակությունը:

Պրոֆ. Ս. Մելքոնյանն իր Հիշող աշխատության մեջ, երկի վերամշակման տևական գործընթացը հիմնականում ընդունելի կերպ տարբեր փուլերի բաժանելով, արտաբնուստ ճիշտ թվացող այն վիճահարույց սեսսիան է Հայտնել նաև, թե բանաստեղծը վերամշակումն իրականացրել է խորհրդային երկրում ազատ խոսքի թույլատրելիության տարբեր չափերին ու աստիճաններին համապատասխան⁵⁰: Սակայն, մեր խորին Համոզմամբ, խնդիրն այսպես ներկայացնելը, մեզմ ասած, քիչ է մտա ճշմարտությանը Հենց այն պարզ պատճառով, որ Լույճ. Երսուզը Համազգային խնդիրների արժարժման իմաստով անվերապահ առաջամարտիկ էր ու առաջնորդ: Իրականում այդ բանաստեղծը ո՛չ թե սպասել է պետական որևէ թույլտվության ու Հրահանգի կամ հարմար ժամանակի ու բարեպատեհ առիթի, այլ ընդհակառակը, Հենց նրա՝ բարձրացրած ազգային խնդիրներն են խորհրդային կուսակցական մարմիններն ու անվերպ գործող պետական զրահատարակական մեքենան մերժել կամ ըստ Հարկին թույլատրելի կրճատելով անթույլատրելի արտահայտություններ, պատկերներ, Հատվածներ, անգամ արգելելով ամբողջական ստեղծագործություններ:

Ընդ որում, թույլատրել են Հատկապես այն ղեպերում, երբ Խորհրդային Միության ու Թուրքիայի միջև ծագած է ե-

⁵⁰Տես նույն տեղը:

զիչ որևէ անհամաձայնություն կամ նրանց Հարաբերություններում առաջացել է, թեկուզ ժամանակավոր, նկատելի ստանություն: Մնացած բոլոր դեպքերում կա՛մ արդելել են շ. Շիրազի որևէ գրքի կամ առանձին ստեղծագործությունն ապագությունը, կա՛մ նա իր ազգային այս ու այն անթույլատրելի գաղափարը հնարամտությամբ թաքցրել է այլարանական պատկերներում, կա՛մ արքայատիրոջ անկողնից դուրս գալուց հետո:

Հնաշարենցյան ժամանակներում իր բանաստեղծություններում ու պոեմներում, առ նաև Ս. Մելիքոյանն է հավատում, հայության ճակատագրին առնչվող խնդիրներ արծարծելու իմաստով առաջնությունը գափնին ստուգապես է. Շիրազին է պատկանում: Բոլոր մեծ արվեստագետների նման՝ նա հավատում էր զեղարվեստական խոսքի ներգործող ուժին և եթե չգիտակցեր իր պատմական առաքելության կարևոր նշանակությունը հայոց պահանջատիրության ու սերունդներին հայ ողով դատարարակեցու գործում, այս լինի այդքան հետևողական ու նպատակասույց և էլ էր հայտնվի խորհրդային պետության հատուկ հսկողական ուշադրություն կենտրոնում:

Համայնագրական պայմաններում մեծ հաջողություններ էր սիրո զգացմունքի և ազգային-հայրենասիրական մտորումների, ավանդական թեմաների բանաստեղծականացումը: Անձնական քնարերգության ու հայրենացու թշնամի գուհիկ քննադատության գաղափարը էլ էր խնայում ոչ մեկին: Իսկ 1935 թ. անցյալին դիմելու և «Նացացած» ու «արհամարհված» բանահյուսական նյութի մշակմամբ «Միամանթո և Խջեղարի» ապագություններն իրոք որ հասնեին հակաակց գեղու և հերոսության պես պես էր: Առաջին իսկ տարրերում միավորված էին թե՛ գեղեցիկ ու ողբերգական սիրո անկասելի հասանքը, թե՛ կրոնայուղ հայրենիքի զեղարվեստական պատկերը՝ զեռու սաղմնային վիճակում (պոեմի հերոսների գործողությունն վայր, ինչպես «Սարն Սիփանն» երգում, զեռու մատ-

նանչված էր միայն Սիփան սարը՝ որպես Արևմտյան Հայաստանի խորհրդանշան):

Խորհրդային իրականության գաղափարական պարտադրանքներին անհարթ այս թեմաներն արծարծելու պատճառով էր նաև, որ 1930-ականներին շեքերցին ո՛չ Ջարենցին ու Բալիսեցին, ո՛չ Մահարուն ու Քոթոլենցին, ո՛չ էլ Ջ. Նասանին ու մյուսներին: Իսկ շ. Շիրազին, ինչպես ինքն է տարբեր աթիթներով խոստովանել, այդ ժամանակներում փրկել են միայն պատանի տարիքը, Վ. Ալազանի և Ավ. Իսահակյանի բարյացակամությունն ու հովանավորությունը:

Գոեմի բովանդակային հարստացման ու զեղարվեստական զորեղացման առաջին շրջափուլն, այսպիսով, սկսվել է Հայրենական մեծ պատերազմի օրերին՝ 1942 թ. վերամշակումով, որը լույս տեսավ բանաստեղծի «Երգերի գիրք» ժողովածուում: Գրահրատարակչության պատմության մեջ հազիվ թե գտնվի մի նախօրինակ, որ մեկ գիրքը երկու մասերի համար ունենա առանձին խմբագրեր: Փոքրադիր ու ոչ ծավալուն այդ գիրքը իրոք ունեցել է երկու խմբագիր՝ Ռուբեն Ջալալյան և Ավետիս Իսահակյան: Ընդ որում՝ խմբագիրների անունները նշված են տարբեր էջերում: 4-րդ էջում՝ բանաստեղծություններից առաջ, նշված է՝ «Խմբագրեց Ռ. Ջալալյան», իսկ 62-րդ էջում՝ «Միամանթո և Խջեղար» պոեմի տիտղոսաթերթի գործերեսին զրգով է՝ «Խմբագրեց Ավ. Իսահակյան»:

Առաջինը, որքան էլ ճաշակավոր էր ու աշխուրջ զգուշավորությամբ, խմբագիր էր միայն բնարական բանաստեղծությունների համար, իսկ նույն զբոսում ապագրված «Միամանթո և Խջեղար» պոեմի խմբագրումը, այսինքն՝ նրա ապագրության ողջ պատասխանատվությունը, ստանձնել էր Ավ. Իսահակյանը: Խորհրդային տարիներին Վարպետի հայրենասիրական գործունեության բարձրագույն գրեթե ամենամեծ մեկը շ. Շիրազը համարում էր հենց իր պոեմի խմբագրումն ստանձնելու խիզախությունը:

Գորուսյալ գրախոսավարի՝ Արևմտյան Հայաստանի մեծ ու փոքր լեռնազագաթների՝ Մասիսի, Սիփանի, Մոզմասարի, Աւեստի, Վարագի, Նեմրուժի, Գրգուռի, Անդուկի, ինչպես նաև Վանա ծովի ու Նազուկածովի, Հայոց ձորահովիտների, գետերի ու աղբյուրների վկայաբոլուսմանը, նրանց գեղարվեստականացումը 1942 թ. և հետագա լրամանկումներում ամենեւին էլ ինքնանպաստակ չէին: Գրանք, պոեմի հերոսների գործողության միջավայրի պատկեր լինելուց բացի, ինչպես Արզմյանի, Բաֆու, Թուսմանյանի, Իսահակյանի, Չարենցի մի շարք նրկերում, ունենին Հայրենագիտական կարևոր խորհուրդ և դերակատարություն. դրանք ուղղակի Հայոց հին ու նորագույն պատմության, աշխարհագրության բացառիկ դասեր էին և Հայության հին ու նոր սերունդներին հիշեցնում էին ցավալի կորուստների կարտան ու կսկիծը և նրանց գիտակցության մեջ արթնացնում գերազարձի Հույսը: Երկրորդ՝ Ավ. Իսահակյանի խմբագրած Խորհրդակցում արգեն տեսնում ենք որոշակի ենթատեքստ պարունակող Սիփան, Վանա ծով, Գրգուռ աշխարհագրական տեղանուններով ստեղծված խոսուս պատկերներ: Եթե պարզ քննադատների մեջ գործածված տեղանունները վտանգավոր չէին, ինչպես՝ Սիփան սարը դանդաղ Հազավ դիշերվա սև յափուենջին, անգամ Սիփան սարի դուխն արծաթ ահա ոսկու փայլ առավ և այլն, ապա մտառ կարելի է ասել՝ նույն չեզոքությունը չունեն հետևյալ տողերը, ուր նույն Համատեքստում Սիփանն արգեն ունի բոլորովին այլ նշանակություն.

Եվ նույն գիշեր Սիփան սարը հովիվ տեսավ ուրիշին,
Սիամանթոն սարից իջավ, աչքը՝ սար մշուշին:

Վշտով անպից Սիփանը սև, աշնան Թուխպերն իջան վար,
Երբ Հեռացավ հով զողանից Սիամանթոն վշտահար...

... Սերն էլ այն է, որ Հեռանա՝ չմոռանա սիրամին,
Եվ սիրահար Սիամանթոն ահա Հեծավ դարձի մին:

Հեծավ, բշեց դեպի Սիփան, դեպի գիրկը իր սարի,
Դեպի կարկան իր կարտած հայրենապաղ աղբյուրի:

Հասավ, ու Թուխ դեմքին դիպավ չունչն իր աղիզ Սիփանի,
Սիրտը բացվեց, հոդին լցվեց ծաղկոնց բույրով Հայրենի:

Տեսավ դուռի աղբիկներին, ինչպես ծանոթ ծաղիկներ,
Բայց նրանց մեջ թաղնե չկար, ու պաղ էր սարն ու անաբ:»⁵⁶

Հ. Շիրազի մի կարևոր խոստովանությունը, որ ներկայացնում ենք ստորև, մի կողմից նրա յուրատեսակ «արտացոլման տեսություն» հետաքրքիր մեկնաբանությունն է, մյուս կողմից՝ իր ուսուցչի՝ Ավ. Իսահակյանի՝ խորհրդային ժամանակների Հայրենասիրական գործունեության մի գրվագի բնութագրումը. «Սիամանթոն և Խջեզարե» պոեմը Արարսի այս ափին զբված «մեծ Հայելի է», որն արտացոլում է այն ափը՝ «ողջ Արևմտյան Հայաստանը՝ իր Վանով ու Վանա ծովով, իր Սիփանով և Աղթամարով, իր Սասունով ու Նազուկածովով, իր նեմրուժով ու Գրգուռով, իր Արածանիով ու Եփրատ-Տիգրիսով, իր Սիսով ու Մասիսով: Եվ ահա խմբագրող հանել էր գրքից պոեմը: Չէր ստորագրում, որ գիրքը տպագրվեր: Ես բողոքեցի, և դարձյալ Իսահակյանն էր, որ քաջություն հանձն առավ պոեմի նավը հրել դեպի կյանքի ծովը: Ես այս բանը համարում եմ մեծ բանաստեղծի Հայրենասիրության գերուխտ գորգի Հիմնաքիչերից մեկը»⁵⁷ (ընդգծ. - Ս. Մ.):

Հետաքրքիր է, որ 1947 թ. Հրատարակության մեջ Հեղինակը նախադիքին էջում, ինչպես դրամատիկական նրկերի նշագրումներում, ներկայացրել է իր հերոսներին, ազից պոեմի որոշ Հիմնաբառերի և Արևմտյան Հայաստանը խորհրդանշող տեղանունների բացատրություններ.

⁵⁶ Հ. Շիրազ, երգերի գիրք, Քայնտեսա, Եր., 1942, էջ 74, 78 - 79:

⁵⁷ Տես Հ. Շիրազ, Սիփանի իմ արժի կարծիք, Եր., 1984, էջ 64:

Արամանթո - լեռնական Հայոց դու անուն

ԽՉեղարի - Ջարեհ բեկի ազնիվը

Այծենակած - իսկական Հայերենը՝ յափունջի

Բարո - Հայրիկ

Մալու - սիրտը կտորած

Խուդան - ճակատագիրը - աստված

Մարս - եղնիկ

Ղուլ - ծառա (տարերում Հոտաղ)

Թառլան - աղիղ, արծիվ

Ճան - վեգ

Խենջար - գաշույն

Արիան, Աստու, Գրդու, Մովսաթ, Վարազ լեռ -

Սասունի, Վանի, Մոսկոի շրջակայքի իրար նայող բարձրագագաթները:

Կարելի է ասել՝ նորագույն շրջանի Հայ գրականության մեջ Ջարենցի հանրահայտ ու զաղտնազրկած պատգամախոսության և բակունցյան «Միրանի փող» պատմվածքի անմեջական արձագանքն ու շարունակությունն էր Վ. Շիրազի «Արամանթո և ԽՉեղարեն» իր զաղափարական ու գեղագիտական խիզախ հաղագրումներով: Պոեմի գլխավոր հերոսը Հովիվ Արամանթոն, որը աղգային պատկանելությանը Հայ է, դարձել է այդ հաղագրումները կրող մի հզոր գեղարվեստական ընդհանրացում, որը մարմնավորում է իր պատմական Հայրենիքից զրկված Հայության ճակատագիրը, նրա իղձերն ու ձգտումները: Նա նախապես ոչ միայն սիրահարված է կիսաՀայ կամ կիսաբրդուհի ԽՉեղարենին, այլև Հայության պատմական բնօրրանին, ավելի ճիշտ՝ այդ երկուսի միասնությանը:

Մեծ ոճբազոր՝ Ստալինի մահից հետո երկու տարում 1954 - 55 թթ., Հով. Շիրազի պոեմն ունեցավ չորս լրամշակված հրատարակություն: Նրա մի տարբերակը այն ժամանակների գերասանական լավագույն ուժերի ջանքերով հրատարակ

որեն բեմադրվեց Հայաստանի ռադիոյով: Արևմտահայաստանից բռնազաղթած, իրենց կորցրած ծննդավայրի ու պատմական Հայրենիքի կարոտով այրվող Հայության ու մանավանդ վասպուրականցիների, սասունցիների ու մշեցիների համար իսկական մշակութային տուն էր այդ պոեմի բեմադրության յուրաքանչյուր հաղորդումը, երբ գյուղերում հավաքվում էին ռադիո եղած տանը կամ գյուղի՝ բարձրախոս ունեցած հրապարակում, և հիացմունքով ու հափշտակությանը ըմբոշխունում էին երգախառն հրաշալի ասմունքով հնչող պոեմը:

Խորհրդային ժամանակների ազգագրային քննադատությունը չուշացրեց այդ պոեմը վարկաբեկելու և նրա բացառիկ ժողովրդականությունը միայն ռադիոյի ռեժիսորեմականացմանն ու գերասանների վերադրելու իր ձախող փորձը: Հայաստանի կոմկուսի կենտկոմի մի պատասխանատու աշխատող՝ Լը. Գրիգորյանը, գրական ճաշակից ոչ ամենևին զուրկ մի մարդ, կոմունիզմի զաղափարախոսության ու սուտ ինտերնացիոնալիզմի գիրքերից կուսակցական-քաղաքական պատվեր էր կատարում պոեմն և նրա հեղինակին վարկաբեկելու իր ախուր ու անփառունակ առաքելությամբ: Կարծես 1950-ական թթ. կենտրոնի հարություն էին ասել Ջարենցի 1920 - 30-ական թթ. քննադատները՝ տակնուվրաս անելու գրական հշմարիտ գեղեցկությունները և քաղաքական ծանր ժողդրանքներով ու անհեթեթ պիտակավորումներով քարկոծելու նրա մեծատաղանդ հեղինակին: «Արամանթո և ԽՉեղարեն» պոեմն այդ քննադատող ոչ ավել ոչ պակաս համարել է «զաղափարական-քաղաքական լուրջ ձախողում», «իդեալիստական անհեթեթություն», «մասալար անմտություն» և «հեղինակի քաղաքական անզրագիտություն» (ինքը մանավանդ քաղաքականապես ու մասնագիտորեն շատ էր գրագետ. դրա համար էլ պնդում էր, թե ռադիոբեմականացման մեջ հեղինակային խոսքը ոչ թե նախաստեղծ է. Շիրազին է, այլ... զիկուր-խոսակիրը, սակն՝ Հրաչուհի Ջինանյանինը, իսկ պոեմի ժողովրդայնության

գաղտնիքն էլ իբր թաքնված է սեփարի և մոնտաճոդի հմտության մեջ, որոնք, որպես թե, վարպետորեն սղել են ավելորդություններն ու տաղտկալի երկարարանությունները⁵⁰ և այլն, և այլն:

Այնուամենայնիվ, այդ օրերին էլ գտնվեց լուսամիտ ու համարձակ մի քննադատ՝ Հր. Թամբազյանը, որը «Ընդդեմ սուբյեկտիվ քննադատության» խորագրով պատասխան հոգեվածով (1956 թ.) պարզում էր աշառու և միտումնավոր քննադատության պղտոր ակունքներն ու հեղին նպատակները:⁵¹

Եվ իբրք, սուբյեկտիվ այդ քննադատությանը հակառակ՝ 1957 թ. պոեմը նոր մշակմամբ ու մեծ տպագրանկով պատկերազարդ հրատարակությանը հրամայեց հանրությանը: Պոեմի երգվող բազմաթիվ հատվածները, որ մեղեդիավորել էին Ա. Մերանգույանն ու Վ. Բալյանը, նույնիսկ ամբողջ պոեմը երգվելով շուրթից շուրթ էր անցնում⁵², որովհետև իսկապես մտքի ու զգացմունքի ներդաշնակությանը ստեղծված սրտի երգ էր: Պոեմի պահանջարկը իսկապես մեծ էր. 1970 թ. 50 000 օրինակով տպագրվելուց հետո էլ 1979 թ. Գր. Խանջյանի նկարազարդումներով հրատարակվեց նախափերջին մշակումը՝ 60 000 տպաքանակով: Պոեմն արդեն վաղուց թարգմանվել էր աշխարհի տասնյակ լեզուներով ու հիացական գնահատականների արժանացել Հայրենի և օտար բազմաթիվ գրական մտավորականների կողմից: Ավ. Իսահակյանի խորին համոզմամբ՝

այդ պոեմն արժանի էր զրգվելու կազմվելիք համաշխարհային գրական գունդերի մեջ, իսկ «խորհմաստ «Բիրլիականի», ծագկաբույր «ԽՆԿարքի» և մյուս պոեմների ու բանաստեղծությունների կախարհը հեղինակը հետհոկտեմբերյան ամենամեծ հայ լիբրեյն է»:

«Արամանթո և ԽՆԿարեն» միայն ազգային երևույթ չէր. նրանով հիացած էին Փրանսիացիներն ու Բուսները, լեհերն ու չեխերը, ուկրաինացիներն ու արաբները, պարսիկներն ու վրացիները, մերձբայթյան ժողովուրդներն ու քրդերը: Ձեռն թարգմանչուհի Յանա Շարորըլը զրել էր. «Շիրազի «Արամանթո և ԽՆԿարեն» պոեմը... ինչ քնարերգություն, ինչպիսի՜ պատկերավոր լեզու, անկրկնելի լիբրիկա... Արևելքի մեծագույն ստեղծագործություններից մեկն է սա»:

* * *

Արժև հիշել նաև պոեմի արար թարգմանիչ՝ Նիգար Խալիլի խիստ բնութագրական խոսքը, որը նա Հենց Հայերենով մակագրել է պոեմի՝ հեղինակին նվիրած արարերին թարգմանության ապագիք օրինակի վրա. «Աիրելի Հովհ. Շիրազին. Ձեզ կուղարկեմ Ձեր անմահ «Արամանթո և ԽՆԿարեն» արարերին թարգմանությունը: Կհուսամ հաջողակ ըլլալ փոքրիս մեջ՝ հանդիսանալով կամօրջ մը հայ և արար գրականություններու միջև»:

Պոեմի տարբեր հրատարակությունների պարզ համեմատությունն իսկ պարզում է, որ վերջին մշակումներում հապսուրեղավորվել է գեղարվեստական գառակը, խորացել է ողջ պոեմի բովանդակությունը, հարստացել նոր շերտերով, նոր նրբերանգներով ու գույներով, որոնք համահարթ, եղել են հեղինակային նախնական մտահղացումներում: Առաջին տարբերակները՝ 1947 թվականինը ներառյալ, երեք երգից էին կազմված, 1954 թվականինը՝ արդեն ուներ երեք զլուխ և վերջինն զլուխ, իսկ վերջին՝ 1970, 1979 և 1984 թթ. հրա-

⁵⁰ Տես Գր. Գրիգորյան, Գրական ակնարկներ, եր., 1955, էջ 152-183:

⁵¹ Տես Գր. Թամբազյան, Գրական ուղիներում, եր., 1961, էջ 278-284:

⁵² Օրինակ՝ 1966 թ. աշանդ Աշտարակի շրջանի Ազգային գյուղում, որի այսօրվա քնակիների մեծ մասի նախնիները Արևմտյան Հայաստանի Աշտուրից գավառից են, լսելով գյուղացիների՝ արքան ամբողջ պոեմը միայնաց շարունակելով երգելը, Գ. Շիրազն ինքն էլ էր գարնացել ու ակամքիս ասաց:

— Ի մեջ, ուրիշն ասեր լի հավատա, կանեմ՝ս ամբողջ պոեմ իրենք մեղեդիավորել կերպն, որքան ծիշու լի պոեմիս վրա եքան տասապես, Խ է արդուները: Երևանում լսեմ ու իմանամ կկատից: Այս է բուն ժողովրդականությունն ու ժողովրդասուրբունը: Թճնադատմեն ու գրավանդայան տեսարանները թող գալ տեսնին, հետաքրքիր է ի՞նչ պոետ ասե՞ն Ս. Ս.:

տարակուսյուններն արդեն տասներեք զլուխ ունենին (տասն-մեկ զլուխ՝ հուժարած նախափերջին ու վերջին զլուխները): Չորս նրկատղ տուն էլ ավելացել է նախերգանքին, որը վերջին տարրերակուս ունի 28 տող՝ նախկին 20-ի փոխարեն:



Ծափից «Միամարտ և կերպար» պոեմի արտա թարգմանիչ Եղգար Խաչիչը

Արդ, ինչ են տվել պոեմին վերամշակման ու խմբագրման ընթացքում ավելացված մասերը, և ինչպե՛ս են նրանք ներգաղչնակվել պոեմի ընդհանուր Հյուսվածքին:

Միսենք նախերգանքից: Գոեմի նախերգանքը, ըստ Հայտնի տեսության, այն սկզբնական Հատվածն է, որի մեջ Հեղինակի ընդամենը ակնարկում է պոեմում ծավալվիլիք բուն գործողու-թյունները՝ ընթերցողին Հոգերանորոնն ու գեղագիտորեն նախադարձաբանելով պատկերվիլիք իրադարձություններին: Այդպիսին է նաև «Միամանթու և Խջնգարն» պոեմի նախերգանքը: Գոեմն բոլոր տարրերակներում ակնարկվում է Թուրքիայի բունազգայնաց Արևմտյան Հայաստանում՝ Միփանա տարերում,

Վանա ծովի գեղատեսիլ եզրերներին երազներով իրար գտած, բայց «անապատի բերանն ընկած երկու կաթիլի ջրի պես կորած» սիրահարների անհույս սերը, որը վերամզում է ցավալի ողբերգություն: Ահա՛ վաղ տարրերակներից մեկը, որն ընթերցողին տանում է դեպի գործողու-թյունների վայր, դեպի երազ-ների նվիրական երկիր:

Եյա նորից Միփանն ի վեր, որ ի՞նչ երգի սափորով

Միքո ոսկի աղբյուրներից պաղ ջուր սուննե ջերմ սիրով:

Վերամշակված վերջին տարրերակում բառապատկերային խմբագրումներով ու հավելումներով հին տարրերակների համեմատությամբ պոեմի թե՛ նախերգանքում, թե՛ զլուխներում իրոք կատարվել են լուրջ բարեփոխումներ: Դրանք արժեքավոր են բովանդակային ու գեղագիտական նպատակալացու-թյան իմաստով և այնքան են ներգաղչնակ ընդհանուր Հյուս-վածքին, որ թվում է՝ Հենց սկզբից էլ գրված են եղել միասնաբար ու հնազգայի ներմուծումներ չեն: Մակայն անկասկածաբան գրավոր ու բանավոր կարծիքներից, թե Հ. Շիրազն իբր վերամշակելով փչացրել է իր պոեմը, ակնհայտ է լրամշակմամբ պոեմի գեղարվեստական որակի բարելավման իրողութ-յունը. քնարաէպիկական պոեմը մի ողբերգական սիրո պարզ պատմությունից սասիճանաբար վերածել է Հայրենագիտական ու Հայրենասիրական Հզոր ու բարձրարժեքա Համանվագի:

Գոեմի Հերոս Միամանթուի ազգությունը (1942), երբ պատե-րազմական իրավիճակը խորհրդային ազգային գրահանու-թյուններին տվել էր որոշ ազատութայուններ ու ցուցումներ՝ ժողովուրդների պատմական անջայտի Հերոսական գրգռվելի պատկերման և Հանուն Հայրենիքի մարտնչած որոշ ազգային Հերոսների կերպավորման իմաստով: Առաջին տարրերակնե-րում, ըստ սկզբնաղբյուրի, պոեմի Հերոսներն իրար երազով գտել էին «սուրբ սարերում ցողալազ»... մինչդեռ վերջիններում

արդեն Միամանթոն ու ԽՊԿարեն, բանաստեղծին այնի գալով, նրա կուրծքն են մտնում «աչքերի դարպասով» ու իրենց Հետ տանում զեպի Հայության երազների այխարհը՝ պատմական բնօրրան, ուր դատեման ճակատաբիրը նրանց նորափթիթ սերը պատկում է «լուկ փշով»:

Հողի տարան զեպի Սիփան, զեպի ծովան իմ Վանա,
Տարան զեպի գրափոփառուր բաթունքները Սիփանա,

Տարան ուխտի աղբյուրը սուրբ, տարան մինչև Ախիմամբ,
Որ չթողնեմ՝ զեթ իմ երգով՝ սիրո մեր ուխտն անկատար...

... Բայց թե՛ եկեք, ո՛վ աղջիկներ, եկեք Սիփան ձեզ տանեմ,
Գեթ երգի մեջ՝ ասովամային սիրո ճամփան ձեզ Հանեմ:

Ում սրտի մեջ զեռ դատարկ է սիրո սափորն Հայրենի՝
եկեք տանեմ ձեզ Վանա ծով, որ աղբյուրն է Սիփանի:

Մինչև 1957 թ. հրատարակությունը ներառյալ՝ պոեմի առաջին զուտն սկսվում էր «Սիփան սարը Հազավ զանդազ գիշերով սև յափունջին, Ու մակաղեց Միամանթոն Հոտը սարի մի լանջին» առդերով: Իսկ սա նշանակում է՝ 1970 և 79 թթ. տարբերակներում են ավելացել առաջին երկու և բոլոր մյուս այն զուտները, որոնք բացակայում էին նախորդ հրատարակություններում, ինչպես նաև Հեղինակային խմբագրմամբ ու լրամշակմամբ այն փոփոխությունները, որ կրել են նախորդ տարբերակներում արդեն երգած զուտները: Սակայն այդ Հավելումները եղած Հին շինության վրա նկատվող նոր կարկատաններ չեն, որովհետև Հեղինակը, քանդելով նախկինը, թե՛ ճարտարապետական ավելի ընդարձակ ու ընդգրկուն կառույց է Հյուսիս նախորդ մշակումների լավագույն ձևաբերումները պահպանելով զեղարվեստական առավել ընդարձակ տարածքում և թե՛ զործածել է նախկին Նորինվածքին Համապատասխան շինանյութ՝ ճարտարապետաշինարարական ըմբռնումով՝ քար ու շաղախ, ամրաններ, Հենասյուներ ու աստղած, քիվեր ու կամար-

ներ և այլն: Գրեթե այսպես է ստեղծվել պոեմի զեղարվեստորեն կառարչալ նոր կառույցը կամ, ինչպես Լևոն Շանթը կասեր՝ «բանաշյուսական ճարտարապետությունը»: Միայն այս կերպ էր Հնարավոր, նախկին կառույցը օրգանապես նորի մեջ ներառելով, ստեղծել բովանդակությամբ ավելի Հարստացած զեղարվեստական ներդաշնակ ամբողջություն, որը նախորդներին զերազանցում է ոչ միայն ծավալով, այլև օրգակապես բովանդակությամբ ու զեղարվեստական արժանիքներով:

Իսկ զեռես գրավոր ու բանավոր Հեղեղ այն զգոհություններն ու արտունջները, թե՛ Հ. Շիրազը վերամշակելով իրրև թե՛ «փշացրել» է պոեմը, եթե ոչ Հարամտության, տապ գրական երկի ճանաչողության, ճաշակի և իմացականության Հարց է: Եթե այդպես մատողներին զոհացնում է պոեմի 1935 - 1949 թթ. տարբերակների մակարդակը՝ իրենց խնդիրն է: Համենայն զեզո դա չի զոհացրել Հեղինակին, և գրական լուրջ մատուցականությունն էլ այլ կերպ է մտածել: Ընդգծենք, որ լրամշակումների մասին, մեզմ ասած, գրական են արտահայտվել Ավ. Իսահակյանը, Ս. Աղոտնոյանը, Հր. Թամբազյանը Ս. Աղաբաբյանը, Ս. Մելքոնյանը և շատ ուրիշներ: Մյուսներին որոշ շափով արդեն անդրադարձել ենք. այժմ դիմենք Համարվածոր գրականագետ-քննադատ Ս. Աղաբաբյանին, որի՝ Հ. Շիրազի մասին ազնիվ ու խիզախ գրավոր էլույթների մի քանի բնութագրումներն էական են ինչպես Հարցադրումը ճիշտ պատկերացնելու, այնպես էլ լրամշակված վերջին տարբերակները զեռնատելու սեսակետից:

Գրականագետին գրավցրել է այս պոեմի Հանդեպ քննադատության թերահավատությունը, նրա զեռնատություններում «գրական շնչի շուտատելու կենրին», գերիշխող «Հարցականների, կախման կետերի, չեզոք շեշտերի» և «Հեռանալակ» ու «ժամանակիբեկ» արտասուց խարանների առկայությունը:

Ընդհակառակը, չթերազնահատելով սուսին տարբերակը, Ս. Աղաբաբյանը վկայախոչելով պոեմի բովանդակությունը

ճիշտ ըմբռնած ուսւ քննազատ Մ. Օգնէի այն քննողուձը, թն «Նիդամու, Ծիրզուսու, Դանտի ու Ենթուպրիի Հազիբժական թնժան ի գննս խորհրդային բանաստեղծի (իմա՝ Զ. Երբագի - Ս. Մ.) գտն է ոչ այնքան ժողովրդական լեզնեղի նոր մեկնաբանին, որքան մաքուր և Հայաստարթմ զգացմունքի Հազիբժական թնժան Հայ պոեզիայուձ արտիստական շնեղ մարմնացնողին»՝ նա պաղարտանել է, թն այդ պատուձը պահանջուձ էր «լրացուցիչ շնետեր՝ ժողովրդական Նյուսթի միջոցով Հնեկեցնելու նաև ազգային պատմութայնը բնորոշ թնժաներ»¹⁰¹:

Ըստ էութայն՝ այս էր իր պոեթի առաջին տարբերակները Հեղինակի անբավարարութայն պատճառը, որ նրան տասնամյակներ շարունակ անհանգստացնուձ էր ու մզուձմ նոր լրամշակուձներով ամբողջացնելու իր սանելըը: Այսինքն՝ «տարբերակից տարբերակ» - գրել է Ս. Ազարարյանը, - նա մզուձմ էր, որ ժողովրդական Նյուսթի մշակուձը գտննա առավելագույնս «չիրացայն», որ սիրային մտաթիլի արժարժուձների Հնե միասն և զրան Հավասար պոեթուձմ տեղ ունենան նաև տարիներ շարունակ իրեն մտահոգող ազգային-Հայրենասիրական խնդիրներ»¹⁰² (ընդգծ. - Ս. Մ.):

Աթն վկայակոչել ականավոր գրականագետ - քննադատի երկու կարևոր ընդհանրացուձն ևս, որոնք էական են զիտարեվող պոեթի բովանդակութայնն ու լրամշակուձ-Հազիբուձմների արժեքը գնահատելու և մեր ասածը Հիմնավորելու տեսանկյունից.

«Արտասյուձնտային քայլերը» ո՛չ միայն զուրս էնն ընկնուձմ գործողութայններին շղթայից, այլև, Հակառակը, խորպան մերվուձմ են և միասնառնուձ, իսկ միասնացման «մեթոտեր» ինքը բանաստեղծն է, որ լեզնեղի միջոցով տաղարեղ է Հանել իր անհատականութայնը՝ Սիրահարի և Ըղձասացի, և՛

¹⁰¹ Տես Ս. Ազարարյան, Արդի հայ պոեզիայն պատմություն, ԳԳ ՍՍԱ իրատ, հ. 2, եր., 1993, էջ 207-210:

¹⁰² Տես նույն տեղը:

ր. Սիամանթոն իրպես Երբագի «բանաստեղծական կրթնորոշն» է:

Մրանք Հաստատուձմ են տարբերակների Համեմատական քննութայնը: Հետագա լրամշակուձներուձմ Հերոսների սիրս Հոգերանութայն բացահայտման զեղպրտական խնդիրը Հեղինակն իրոք նպատակադրված է տնեղել կորուստյա Հայրենիքի ճակատադրին, որի շնորհիվ վերջին տարբերակներուձմ պոեթը մոտ է լերել նոր խորութայն, անմեական սերը Հարստացել է Համազգային բովանդակութայնը:

Արդեն 1954 թ. տարբերակուձմ, որի վրա էլ ստեղծվել է Հայտնի ռադիոբնեմականացուձը, Հեղինակային այս նպատակամիտուձը գարձել է անքող ու բացահայտ. Սիամանթոնի խոսքի ու երգերի մեջ մարմնավորված են Համայն Հայութայն իղձները, սրղեն կան Հանրահայտ «Մեա՛ք բարո, իձ Հայր Սրիփան»-ն ու «Ճամփա՛ տվեք»-ը, կան բանամեկ արժեք ունեցող պատկերաքանդակներ, որոնք Հայրենարագձ Հայի անեղերի ու ձգուձմների արտահայտութայնն են.

- Ճամփա՛ տվեք Հալք ու Հովեր,

Հալք ու Հովեր՝ միուս թեր,

Ճամփա՛ տվեք, քար ու կավան

Ճամփա՛ տվեք, մոր ու ծաղան.

Կերթամ՝ Վանա պանդուխտ յարիս

Կամ թն կերթամ շիրմարտիս...

Ու Թինգլայից Հասավ Սրիփան, լեց սրտունըն աղբյուրի,
Դեմից մեռքով կանչեց Հոր պն նրան Սրիփանն իր բարի,
Վանա ծովի Հովն էլ մոր պն շրջաց՝ ո՛րք ես, իձ դարիք,
Վանա ծովը կապույտ մի աչք, Կտուց կղզին՝ սուկ բիր...

Մովասարը, Սրիփան սարը Մասիսի պն գյուլիական,
Վանա ծովի ափի գարկված վրաններն են Հայկական:¹⁰³

¹⁰³ Գույն. Երբագ, «Սիամանթոն և իսրեղպերն», «Բանաստեղծություններ» զրոտ, Գայգետիզատ, եր., 1954, էջ 129-135:

Սակայն սա էլ չի բավարարել, և Հեղինակը ձգտել է Հայրենասիրական թեմայի առավելագույն խորացման և սահմանից այն կողմ գտնվող Հայրենի սրբությունների առավել պատկերման:

«Հեղինակի բանաստեղծական կրկնորդ» Հերոսի սերը, որը թեև սկզբնական տարրերակներում էլ միմիայն անձնական էջը, վերջին հրատարակության մեջ առավել ևս վերահան է անիրավի մասնակցի ու անտրակելի ուղբերգության դատապարտված ողջ արևմտահայության կորցրած Հայրենի եզերքի նկատմամբ անսահման, անթաքույց սիրո և Հատուցման պահանջատիրության արտահայտություն: Իսկ սա պապարտադրում էր զեղարվեստական հիմնավոր Համոզություն, Հերոս – գործողության միջափայլ – Հայրենիք Հարսերության առավել խոր ըմբռնում ու բարձրարվեստ մարմնավորում՝ ժողովրդական ավանդաբանության զրկազարի և նախորդ տանայակ տարրերակներում կուտակված ողջ լավագույնի ու բովանդակային զլխավոր տարրերի պահպանումով:

Ահա այս պարագայում էլ ծագել վերջին տարրերակներում երկու սերերի զուգակշիռ և զբանց միասնացում ստեղծելու զժպրտին խնդիրը, որի լուծումը Հնարավոր էր միմիայն Հեղինակային Հզոր տաղանդի ու զարպետության, սեևուուն կենտրոնացման ու նպատակաաղացության ու շնորհիվ:

9. Արվանձայանցի «Գրոց ու բրոց»-ից և «Համով Հոտով»-ից վերցված պարզ ավանդաբանության մեջ չէին կարող լինել այն մտահոգությունները, որոնք Հնուագայում ողջ Հայության ու Հենց Հ. Շիրազի Համար պիտի դառնային գերխնդիր: Դեռևս չկային այն շարադեա իրողությունները, որոնց հետևանքով պիտի տեղում բնաշնչվեր կամ բնազգաթիմ ճամփաներին ու արարական անապատներում, հրենագրմանաթուրք միասնությունը ստեղծված մահանամարտներում ոչնչանար բռնի տեղահանված ու իր բնօրրան – Հայրենիքից արտաքսված և նույն այդ պատճառով էլ սփյուռք գարձած արևմտահայությունը:

Անտեղյակ մարդկությունը տանամայակներ հետո պիտի իմանար ու մինչև օրս էլ դեռևս չի հասկացել, որ էնվերի, Թայեաթի, Զեմալի, Բեմալի միայն իրենից Հայրենիքից տեղահանված Հայությանը բնաշնչելու Համար ստեղծած մերժավորարևելյան ու իրանյան մահանամարտները Համաշխարհային պրոպետարիատի առաջնորդ Հորջոթիված Լենինի և ժողովուրդների Հայր Հոչակիված Ստալինի ու սրանց Հաջորդ Հիտլերի ստեղծած Համակենտրոնացման մահանամարտների նախորինակներն էին, իսկ Հնուագայում կրկնված տարրեր ժողովուրդների զանգվածային ցեղասպանությունները Հայոց Մեծ եղեռնի շարունակությունն էին՝ վերջինիս ոճրագործ Հեղինակներին Համաշխարհային դատաստանի շարժանացնելու պատճառով:

Ռեքեմ՝ պետք էր գտնել Համապատասխան լուծում, որը զեղարվեստի լեզվով ներկայացներ Հայոց մեծ ողբերգությունն ու ծանրագույն կարուստները, որոնք Հատուկ խնամքով թաքցնում էին խորհրդային պետական մեքենան և իրենց պիղծ լուծված ցեղասպանին Համերաշխոջ շահախնդիր գերտերությունները:

Կար և անտեսված մեկ այլ իրողություն, որը կարևոր է մեր խորին Համոզմամբ: Գոեմի վերջին՝ 1970, 1979 և 1984 թթ. հրատարակումները Հ. Շիրազի իրականացրեց այն ժամանակներում, երբ գրեթե կորցրել էր Մեծ եղեռնի մասին իր ողբանչուունց դատաստանամայանը՝ «Հայոց դանթեականը», իր ողջությունն օրք տպագրված տեսնելու հույսը: Հեղինակային իրավունքի ստանաարումով անհանելու հույսը: Հեղինակային իրականությունն ու զեղարվեստական կողմն աղճատաց առարակելի կրճատումներ, որոնց բնականաբար չէր Համաձայնելու խորհրդային հրատարակություններին ու մանավանդ զլավլիտից գժգժ բանաստեղծը: «Դիտմանը կզոգես վայրենի կրճատումների կառավարկեն, որ ես հրամարվեմ, և իմ մահից հետո ինչպես ուզենան՝ էնպես տպեն», – իրավիճակը այսպես էր մեկնաբանում բանաստեղծն ինքը: Այս երկու «Միամանթո և

եղեգարն» և «Հայոց զանձնականը» պոեմների առնչակցութեան լավագույն ասացույցն է քննարկվող «Միամանթն և եղեգարն» պոեմի 1979 թ. հրատարակութեան՝ մեզ նվիրած օրինակի՝ Հեղինակի ձեռքով զբօսած ընծայականը.

«Շատ սիրելի Մամվիլին, այն արկնիվ երիտասարդ բանաստեղծին, որը Հայաստանի դրժն ըստ պոետ հեղձանների գլխի վրայով բռնութեանց օրերում էր ժողովրդի սիրտը խրեց Հայոց մեծ եղեռնին նվիրված պոեմ»՝ «Հայոց զանձնականը»...

Ձեռքաչելով իմաստանալից գլխից՝ շատ Հուշ քերից ի Հուշ պոեմի ճակատագրի:

Հ. Երրազ:

Ուրեմն՝ Հայոց մեծագույն ողբերգութեան դատապարտումն ու կորուստների վերագարծը նա տեսնում էր ազգային Հազարականութեան ու միասնութեան մեջ և իր ասելիքը երբեմն ուղղակի բացահայտ, երբեմն այլաբանորեն պոետի ներկայացնելու բանաստեղծական տարբեր տեսակներով, այլազան ձևերով ու միջոցներով՝ պոեմներով, բովանդակներով, բանաստեղծութեաններով, քառյակներով, անգամ առակներով ու նրանց մեջ զազտանագրված եղբայրողբերով ու եղբայրաներով արտահայտելու իր մտասանեումը:

Ե. Չարենցի «Փառգամ» բանաստեղծութեան մեջ զազտանագրված «Ով Հայ ժողովուրդ, քո միակ փրկութեանը քո Հազարական ուժի մեջ է» կարգախոսը կարելի է տեսնել քննարկվող պոեմի իններորդ գլխի 1-ին փոքրիկ Հատվածում, որն առաջարկում ենք ընթերցել նախ ամբողջութեամբ, սպա ուշագրութեան դարձնել առաջին տողերի ընդգծված սկզբնաբաներով արտահայտված պատգամին.

Ով իսկի է Հայ Միփանը՝ անհուղա է, անասոված,
Հայ լեռներից զբված Հայր մուկ է՝ ծովից դուրս նետված:
Ժողովուրդ իմ, չի կտրվի քո սիրտը քո Միփանից
Քո Հողն ինձմով բեզ կկանչն քո Գողթանից, քո Վանից:

Միակ սուրբը մայրենին է, Հայրենին են մասխաված,
Փրկութեանը այն կամուրջն է, ուր քո վշտերն են կրտաված:
Քո լեռները բեզ են կտրտո՞ քո վանքերով այն գեմ,
Հավաքական իմ հուշերով էլ Միփանի ո՞րն ասեմ,
Ուժի աղբյուր կամնաղբյուր էր, թե՛ հրաշք ծովն իմ Վանա,
Մեջ յոթներաբար քո լեռների, ուր Հովերն են ներգամա,
Է՛, ի՛նչ, երբ որք են Միփանը ու քաջերը Միփանա...

1930-ական թթ. Ե. Չարենցը նույնիսկ զազտանագրված, քոզարկված այս կարգախոսի Համար կյանքով Հատուցեց, որովհետև վախճորած գիտունիկ-իմաստասկների կողմից Համարվեց Հակաժողովրդական ոտնձգութեան խորհրդային պետութեան դեմ գրանդից բխող վտանգավոր ու ողբերգական Հետևանքներով: 1953-ից Հետո այդ վտանգը թեև մեղմացել էր, սակայն չէր վերացել. Հայոց ողբերգութեան ու կորուստների, պատմական անարդարութեան, մանավանդ Հայոց դատի և պահանջատիրութեան մասին Հեռարեւոյցայն շրջանում բարձրաձայն արտահայտվելը գերազանցապես Հ. Երրազի և Գ. Սեակի նման խենթ-խիղիարների բացատրիկ մեղանշորհն էր: Հ. Երրազը 1941-ից գրում էր «Հայոց զանձնականը», եղեռնի թեմայով բազմաթիվ բանաստեղծութեաններ, Գ. Սեակի՝ 1957-58-ին «Անլուելի զանդակատունն» ու 1965-ին «Ետաձայն պատարարը»: Հովհ. Երրազի «Անի», «Հայոց զանձնականը» պոեմներն այնքան էին «վտանգավոր», որ բանաստեղծի ողջութեան օրոք չտուգաբարեցին, իսկ Համեմատաբար «անվտանգ» թվացող բանահյուսական նյութն ուներ նախորդ տարբերակներում դեռևս չբացահայտված Հնարավորութեաններ: Այսպես է Հ. Երրազի «Միամանթն և եղեգարն» պոեմը սատրիտանաբար լրամշակվել ու քայլ առ քայլ հասկանալի Հարստացել՝ անցյալում անկարելի ժամանակներում շատվածով: Այսպես է ստեղծվել պոեմի վերջին տարբերակը՝ որպես նախորդ լրամշակումներում

ստեղծագործական հեղափոխական աշխատանքով մեղքերով մաքրվում են խոստովանելու և խոստովանվելու:

Քանի որ 1984 թ. ամենավերջին տարրերակը՝ երկերի 3-րդ հատորում տպվածը, հավան տարրերություններ չունի 1970 և 1979 թթ. առանձին հրատարակությունների համեմատությամբ իսկ սրանց նախորդ տարրերակներում ստեղծագործական գործընթացը դեռևս ավարտված չէ եղել, մենք բննարկելու ենք Հենց նշված տարրերակը, իսկ նախորդներին անզրպատնալու ենք ըստ անհրաժեշտության:

Ի դեպ, վերջին տարրերակում Հեղինակը պոեմի գրության թվականը նշել է միայն 1935, մինչդեռ ճիշտ կլիներ նշել նաև վերջին լրամշակման տարեթիվը ևս, այսինքն՝ 1935 – 1979 կամ 1935 – 1984:

Լրամշակումների ընթացքում Հեղինակի՝ Հաջողությամբ իրականացրած նպատակագրումներից մեկը կորուսյալ Հայրենի եզրերի՝ որպես գործողությունների միջավայրի, գեղարվեստականացումն էր, նրա համակողմանի այնպիսի պատկերի ստեղծումը, որ պատմականորեն և աշխարհագրորեն լինելը Հավաստի ու ճշգրիտ և Հերոսների արարքներին, նրանց խոհերին ու զգացմունքներին ներդաշնակվեր կատարելապես: Պատկերը նրա նկատմամբ հավատ քննադատ ընթերցողի համար էլ պետք է լիներ կենսականորեն ճշմարիտ ու հավաստի, այլապես անկարելի պիտի լիներ գեղարվեստական համոզությունը:

Անձնավորված Հայրենիքն այսպիսով պոեմում դարձել է սարդոլ ու շնչող կենդանի գոյություն, պոեմի գործող Հերոսներից մեկը, որը թելադրում է զրկիթ բոլոր գործողությունները և ներազդում դրանք իրականացնող մարդ-Հերոսների բնավորության, վարքագծի, մտածելակերպի ու ներաշխարհի վրա:

Երազում տեսած ու նրա հետ մատանի փոխանակած գեղեցկուհու հանդեպ ինքնամոռաց սիրը գործել էր ու բնական, սակայն նույնքան բնական ու ավելի գործել պիտի լիներ սերը Հայրենիքի հանդեպ: Այդ երկու զորավոր սերերը պոեմում ոչ թե հակադրվում, այլ միասնալիցում են Հերոսի ներաշխարհում ու փոխադարձ հարստացմանով ստտիանաբար անսակահեցնում են պատանուն, իմաստավորում զգացմունքներն ու նրան մղում թե՛ սիրած աղջկա և թե՛ Հայրենիքի համար նպատակալաց գործողություններին:

Ճիշտ է, որ խնդրի լուծումն անմիջաբար անելվում է Հեղինակի աշխարհընկալմանն ու Հայրենագազապոլությանը, սակայն վճռական գերերից մեկն էլ պատկանում է նրա զրական հասունացմանն ու վարպետությանը, որոնց շնորհիվ կերպարվորված Հերոսը՝ որպես Հեղինակի ձայնափող կամ Ս. Աղաբաբյանի ասած՝ «բանաստեղծական կրկնորդ», իր հոգում ու մտքում միավորելով երկու սերեր՝ Հայրենիքի և սիրած աղջկա, գարձել է դրանց թիվարանքով գործող ընդհանրացված անհատականություն:

Տարրերակների համադրումը բացահայտում է նաև Հերոսի հասունացման ընթացքը: Պատանեկան «խալ ծիրան» սերը, բնական պոթիկուն զգացմունքները տարրերակից տարրերակ վերանում են Հայրենիքի նկատմամբ դիտադրված սիրո, Հանուն որի Հերոսն արդեն պատրաստ է անձնազոհվել:

Պարզ քարոզչությունը, մերկ գաղափարաստությունը երկր պիտի զրկեն գեղարվեստականությունից, քանի որ Հերոսների գործողությունները չէին ունենա մարդկային, ազգային ու հոգեբանական պատշաճ հիմնավորում:

Ուրեմն՝ պետք էր գեղարվեստականացնել նաև գաղափարը՝ շաղախելով ու ներդաշնակելով ընդհանուր հյուսվածքին: Այս հանգամանքն էլ պայմանավորել է պոեմի վերջին տարրերակների կառույցը՝ նախ՝ Հայրենիք-միջավայրի գեղարվեստական-քնարական արժևորում, ինչպես Լ. Թումանյանի «Անու-

չի» «Առաջին երգի» երեք քնարական հաստատումներում է, ապա՝
գեղարվեստական այդ տարածքում Հերոսների էպիկական գոր-
ծողությունների պատկերում:

Գարձայ «Անուշի» օրինակով՝ «Միամանթո և Խջեզարեի»
առաջին տարբերակների երեք մասերը կոչվում էին երգեր՝
«Երգ առաջին», «Երգ երկրորդ», «Երգ երրորդ»: Վերջին տար-
բերակներում, սկսած 1954 թ. մշակումից, պոեմի երգ-մասերն
արդեն կոչվում են գլուխներ: Նախերգանքին Հաջորդող առա-
ջին գլուխները նախազրույթյան գեր են կատարում՝ բանաս-
տեղծականացված Արևմտյան Հայաստանը ներկայացնելով
որպես գործողության միջավայր:

Անուշտ, բանահյուսական նյութը չուներ և չէր էլ կարող
ունենալ պոեմի բովանդակային Հարստությունն ու գեղարվես-
տական խորքը՝ մանավանդ գաղափարագեղագիտական Հար-
ցադրումների և Հերոսների հոգեբանություն բացահայտման
իմաստով: Ինչպես նաև մեր գուճազեղությունը, պատկերա-
փորձման այն շրջությունը, որոնցով օժտված է պոեմը: «Գրոց
ու բրոց»-ի տարբերակում Հերոսները դրեթև անպետև են. **սև
տղա և աղջիկ** անվանումները ընդհանրական են: «Համով -
հոտով»-ի տարբերակում երանք արդեն անմանված են՝ Միա-
բանդո և Խջեզարե, որոնք իրենց հոգեբանությամբ գեղես
լիաբյուս կերպարներ չեն: Այս պարագայում Հ. Երևազը գրա-
կան ազգակցություն հետևորդն է իր մեծ նախորդ Հովհ. Թու-
մանյանի, որը նույնպես բանահյուսական շնչին նյութից,
պահպանելով նրա ոգին և էությունը, կերտել է գեղարվեստա-
կան գլուխգործոցներ՝ Հերոսների հոգեբանության խոր բացա-
հայտումներով: Այդպես է նա արարել «Փարվանան» ու «Ախ-
թամարը», «Անրախա վաճառականներն» ու «Մուկիկի մահը»,
«Ազգայնու վանքը» և «Թագավորն ու շարչին», «Մի կաթիկ
մեղրն» ու «Զարի վերջը», ինչ վերջինիս հետագա լրամշակ-
մամբ՝ «Անբուն Կիոն»:

ժողովրդական նյութին հավասարմությունը, սակայն, Հ.
Թումանյանին չէր խանգարել նրա թաքուն շերտերի ու մալ-
քերի բացահայտմամբ ստեղծելու միանգամայն նոր գործեր,
որոնց արժեքը չէին ըմբռնում գրամրյանները, հայկունիներն
ու «Հովհանի» և «Մշակի» մյուս մասավոր բնագագտները,
որոնց Թումանյանը «տրպ» էր անվանում: Այդ «տրպերն»
սակա էին նաև Հ. Երևազի մամանակներում, որոնք չուշացան
խորհրդային գաղափարաբանությունում ու սոցիալիստական ռեա-
լիզմի գիրքերից հանգես գալ բանաստեղծին «ոչնչացող»
բնագագտական հոգվածներով: Իսկ զրանք 1930 - 50-ական
թթ., անգամ խորհրդային ավելի ուշ մամանակներում կարող
էին չափազանց վտանգավոր լինել բանաստեղծի հակատաղրի
համար: Բ. Պատտեռնակ, Ա. Երվանդիսյանի և խորհրդային
երկրից վտարված կամ զատապարտված այլ գրողների և հենց
իր Հ. Երևազի նկատմամբ կիրառված բռնությունների օրինա-
կը խոսուն էր և առարկայական: Սակայն քաղաքացիական
բարձր նկարագրի սեր բանաստեղծը չընկրկեց ոչ կուլիա, ոչ էլ
չէ նեղանուրը հայամանքների ու բարդությունների առաջ և
պոեմի հատկապես վերջին լրամշակումներում թափանցիկ պե-
նարկներից ու ալլուսացությունից անցավ բացահայտ ինքնար-
տահայտման: Միամ աղջիկ հանդեպ զգացմունքների ու նրա
գեղեցիկության փառաբանմանը խիզախորեն զուգադրեց կո-
րուսյալ հայրենի եղբորի նկատմամբ սիրո նպատակազրկված
գրովերջը և, ինչպես պիտի գեռ տեսներ, ընդգծեց նրանց
անխզելի միասնությունը:

«Միամանթո և Խջեզարե» պոեմի հիմքում ընկած է ոչ մի-
այն Միփան սարի ու Միփանա հովտի երկու սիրահարների ող-
բերգության մասին Գ. Մրվանձայանի «Գրոց ու բրոց» և «Հա-
մով - հոտով» գրքերում ներկայացված ժողովրդական ավան-
գաղրույցը, այլև զրանք այն էջերը, որոնք վերաբերում են Ա-
րևմտյան Հայաստանի պատմությանը, ուխտարձագրությունն
ու ազգազրույթյանը, աշխարհիկ ու հոգևոր պատմամշա-

կուսիային հուշարձաններին: Այդպիսին է ժամանակորապես մե գլուխը, որի սրվանձայանական պատումի մեջ եղած բնութագրումներից շատերն են Հ. Շիրազի պոեմում վերածվել բանաստեղծական շքեղ պատկերների: Իր մեծ նախորդի՝ Թումանյանի պես նա էլ է բանահայտական նյութի մեջ նկատել նորագույն ժամանակների հերն ու իր հարցադրումների արժազանքը: Ազգային ինչ արժեքներ է կորցրել Հայությունը եղևուխի և խորհրդայնացման Հեռուներով. սա է այն Հայւձ արդիական ու կենսական հիմնահարցը, որը նոր սերունդների առջև համարձակորեն դնում էր Հ. Շիրազը և յուրովի փորձում էր սալ դրա գեղարվեստական պատասխանը:

Այն տպավորությունն է ստեղծվում, թե բանաստեղծը պոեմի առաջին իսկ տարրերակը գրելիս էլ խորապես ըմբռնել է ժողովրդական նյութի հնարավորությունները և նախապես ունեցել դրանք բացահայտելու հետանկար: Գ. Սրվանձայանցի «Գրոց ու բրոց»-ում Հ. Շիրազն ընթերցել է հետևյալը. «Մ-ՓԱն լեռնադաշտի մը անունն է, որ նեմրուքի գոտին է, և կերկարի Հարևելս կազվելու այն մեծ ու շատ բարձր սարին սուքը, որ Միփանս սար կանվանվի, որպես թե նեմրուքն լինը Բելը, և Միփանը մեր Հայիկ, որ գրեկն իր սուքին տակ կապած է: Վերին և ներքին Միփան անունով Հայ գեղեր ալ կան այս գոտիին վրա, և ուրիշ զանազան գեղեր ալ: Երեստ անվանի է խոտավետ և օդավետ լինելով, ուստի կոտեսվի ետեկն Բուլանիսա մեկ մասն և Մանազկիրտ, իսկ առևն են Խլաֆ ու յուր գեղերը. Արծկեն և յուր գեղերը. Խուռանց մեծ գեղը. Սբանչելագործի վանքը և այլն: Այս առևնի մասն անվանածս Վանս ծովու երեսն է, և ընդհանրապես ծառազարդ են բնակությունները, և բավական գաղտնիք դիրք մը ունենալով, պատվական և առատ պաղպաղ ջրեր կհասնեն. բնակիչը կվայելի Վանս ծովու անմահական օդը, անոր գեղամիժաղ երեսը, Վանս բերդին ու իր Այգեստանայաց, Արտամետու ծառաստանայաց, և Հայնկույս եղած ծովեզրյա բոլոր շինից և ավանաց սքանչելի տեսարանը,

ամենացանկալին Վարազա լեռը, Հայոց ձոր, Ռշուունիք, Եստախու և Մոկաց լեռները, Նարեկացվո Առ Տերը, Աղթամարա, Կառուց և Լիմ անապատաց սուրբ տանարաց երկնանման գմբեթները»¹⁰¹(ընդծ.— Ս. Մ.):

Դատմաաշխարհագրական այս պարզ նկարագրության մեջ ցույանում է Հայության պատմական Հայրենիքը: Այս է Հայոց բնաշխարհի իրական պատկերն ըստ բանագետ-աղագրագետ-մաթեմատիկոս Երանյանի և իր աչքը բացել Հայ ժողովուրդը, մայրենի լեզվով ստեղծել աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկը, բուսական ու կենդանական աշխարհներին, երկրագործությանն ու արհեստագործությանը, բժշկությանն ու միակարգերին, կենցաղավարությանն ու մարդկային հարաբերություններին վերաբերող բոլոր հասկացություններն ու եղբույթները: Իսկ այդպիսի ստեղծվում են միայն բնորոշում և տեղաբնիկների կողմից:

Գ. Սրվանձայանն իր գրառումներում բարեխոսորեն ներկայացրել ու արդարացիորեն մեկնաբանել է դրանք որպես հայրենի տեղաբնիկ լինելու անհերքելի հիմնավորումներ:

Հայությունը 20-րդ դ. առաջին տասնամյակներին իր միլիոնավոր զավակների հետ միասին հենց այս աշխարհն է կորցրել, իսկ իսկ նրա համար չփակվող վերք է, ծանրագույն, անմոռուց կորուստ, որի մասին առեն ու անդից զրկված ավագներից բոլոր սպառնալիքներով արգելված էր բարձրամայնել, իսկ նոր սերունդներից էլ հետևողականորեն քողարկվում, թաքցվում էր ազգերի եղբայրության համայնավարական կեղծ կարգախոսներով:

Հայրենի երկրի բնակավայրերի ու անդառուներին, բնական հարստություններին ու գեղեցկություններին, դիտարժան վայրերի ու տեսարաններին, անկրկնելի լուսարացներին ու մայրա-

¹⁰¹ Վրոց ու բրոց. ֆրազերց Գ. Վ. Սրվանձայանց. Գոլիս, 1910, էջ 35-36:

մուտների նկարագրությունները բազմազան առաջ են Գ. Արվանձայանցի գրքերում: «Իրրև մեղու ապրած ու աշխատած» Հեղինակ - բանագետը մեծ կարևորություն է տվել մանավանդ տեղանուններին, որոնք իրենց մեջ կարևոր գաղտնիքներ են թաքցնում երևելի նախնիների սիրանքների, պատմական նշանավոր իրադարձությունների ու բնական երևույթների մասին: Իրանցից յուրաքանչյուրին առնչվում է մի վեպ, այնպես էլ: Իրանցի կամ պատում, որոնք նա ներկայացրել է նույն վիճակով, ինչպես գտել է, «մերկ, պարզ»՝ առանց պատճառների, «առանց նույնիսկ Հայոց պատմության ու բանաստեղծությանը դարձնելու ու նմանությունը անելու տալու»: Մակայն նա՝ ժողովրդական մտածողությանը Հավատարիմ Արևմտյան Հայաստանի՝ Վանա ծովը եզերող լեռնազագաթներից գերազատություն է տվել Սիփան սարին:

Ականավոր բանագետը խոր աստուանք է Հայասնել, որ շրջակա բնակիչներից լսած պանդազրույցների մեջ անձնավորված Սիփանի մասին եղած շատ կարևոր տեղեկություններ էլ ինքը գրել էի առկ: «...Եվ շատ ավելի բաներ, որոնք չկրցա ամբողջն իմանալ ու գրել: Ախսո՛ւ»¹⁰⁴: Իրոք աստու, որ անգարձ կորել են այդ «շատ ավելի բաները»: Պահպանված գրառումներում, սակայն, առանձնապես տպավորիչ են աստվածաշնչյան Հովր Երանելու Հնա Սիփան սարի Համեմատությունը և շրջակա գավառների բնակչության Համար նրա բացառիկ նշանակության սրվանձայնական բացատրությունները՝ ըստ որոնց՝ «Սիփանը այդ շրջապատող գավառներու առհասարակ բնակչաց Ոլիմպուսն է և Պառնաս, իրենց սերն ու դուռնազնությունը անոր կնվիրեն: Մուսայից և քաջաց միանգամայն շնորհատու կգալանեն գայն: Ավազակները անոր մեծ ու բնագրավ խորշերու և այրերու մեջ կապանանին, զենքի և ձիու

կրթությունը Սիփանա լեռնազաշտին մեջ կուսանին...»¹⁰⁵ (ընդդ. - Մ. Մ.):

Ավանդազրույցներում նաև պատմվել է, թե «Սիփան սարը Հայոց մեծ թագավորի բերդն է եղել», և ժողովուրդն այդ սարի Հանդեպ ունեցել է ակնածանք ու պաշտամունքային գերաբերմունք և նրան վերաբերել է Հովանավորի դեր ու առանձնահատուկ պատիվ: Այդ սարի Հանդեպ ակնածանք են ունեցել նաև քրդերը. ով սիրահարվել է՝ փախչեցած աղջկա Հնա աղագիհել է Սիփանին և ապաստանել այնտեղ՝ նրա Հնապես այլև չեն գնացել ու չեն Հնապեսգնել՝ պատկառելով սրբազան սարից: Պատահել է, որ «Ոչխար կթող բուրդ աղջիկները՝ երբ երիտասարդ խոթ¹⁰⁶ հովիի մը սիրահարին, նախիրեն կրտեն կրտած մը մը և գույր Հեծած անոր գավախին, ուղղակի կքչեն Սիփանա սարի ստրամանդները: Ձրու գյուլթը ետ կգարձեն, վարոց մը կգարնեն, ձին կգառնա յուր երամին՝ ամենայն հավատարմությանը գաղտնապահ լինելով և ոչ ումեք պատմելով իր բնուին ով լինելը»¹⁰⁷:

Սիփանը նաև քաջերի ապաստան է եղել ու Հպարտության խորհրդանիշ, որով երգվել են Հանախ ու որի անունով գարգարել ու Համեմել են իրենց տաղերն ու երգերը: Սիփանա քաջերի մասին Հայերենով ու քրդերենով բազմաթիվ երգեր կան, զբանցից մեկն էլ Կոմիտասի «Սիփանա քաջերն» է, ընդ որում քրդերեն (ոչ քրդական) երգերն էլ մեծ մասամբ Հայերի ստեղծածն են: ԱՀա ինչ էլ գրել այդ մասին նշանավոր բանագետը. «Այս է պատճառը, որ այդ Հանանցի քրդերը իրենց քաջաց հաղթելուն երգը կամ քաջարքս մենանելու եղերը միշտ Սի-

¹⁰⁴ Լույս տեղում, էջ 38:

¹⁰⁵ Խոթը - անտույզ քառ: էջ. Աղայանի «Արից հայերենի բազառաբայան քառանգն» ու Դևիթ Գև «Ժամանակեղից հայերենի բազառաբայան քառանգն» յունեն այս գրութայնը քառ կամ քառաբարբայուն: Երևում էլ ունեն խոթը քառանգ, որը 5-րդ իմաստով փոխաբերաբար նշանակում է տխուր, խոթով, սիրող երտրած:

¹⁰⁶ Սնա Լույս տեղ, էջ 39:

¹⁰⁴ Սնա Լույս տեղ, էջ 38:

փանա կոչու՞մով կ'ոգևորեն, անոր անունով կ'օծեն իրենց տա-
ղին տողերը, և բանին բառերն ու տունները և անոնց սիրա-
հարսական շատ մը երգերու զարդն ու խանդը Սրփանն սարն է,
Քեպտա լինեն ասոնք բրդերեն լեզվով, բայց շատերու Հորի-
նողք Հայեր են: Նշանավոր է այն խաղը, որ կոկոխ այս բա-
ռերով. «Սարն Սրփանն...», որու մեջ կպատմվի սև տղայի մը
ու աղջկան մը վեպը»¹⁰⁰ (ընդգծ. — Ս. Մ.):

Գ. Սրփաննայանցի բացատրութունները, մանավանդ Սր-
փան սարի՝ ժողովրդական ավանդազարդյունների վրա հիմնված
այս դավերգը, սիրավեպից անկախ էլ, Հ. Շիրազի համար կա-
րող էին և իսկապես էլ դարձել են ոգեշնչման աղբյուր: Սիրա-
հարսների գործողութան միջավայրի պատկեր ստեղծելիս բանա-
ստեղծը ոչ միայն պահպանել է ժողովրդականի ոգին, այլև այն
ներկայացրել է նոր փայլով ու զեղեցկութամբ՝ անմշակ չափա-
ծա պատուճ Հարստացնելով բովանդակային այնպիսի տար-
բերով, մակերային ու փոխարեքական այնպիսի արտահայտա-
միջոցներով, անակնկալ սքանչելի Համեմատութուններով ու
զեղարվեստական գյուտերով, որոնք նրա խոսքը դարձրել են
պատկերավոր, ներգործող ու ազդեցիկ:

Փաստորեն, Գ. Սրփաննայանցի պատումներում պատմասչ-
խորհրդաբանական ու ազգագրական գրեթե ճշգրիտ մանրամաս-
ներով արդեն ներկայացված էին Արևմտյան Հայաստանն ու
մանավանդ Վասպուրական աշխարհը: Ժողովրդական նյութը,
սակայն, բանագետը չի զեղարվեստականացրել, որովհետև դա
ի՞ր նպատակը չի համարել, այլ հաջորդներին՝ զեղազեղ
ստեղծագործողներինը: Հովհ Շիրազն է առաջինը ձեռնարկել
ավանդաբույսի գրական մշակումը, որը Հայաստի ընդմիջում-
ներով տեսել է շուրջ կես դար: Այդ ընթացքում նա, անշուշտ,
ավելին է արել՝ բանաստեղծականցնելով վիպական աշխարհը և

¹⁰⁰ Նույն տեղում:

ստեղծելով Արևմտյան Հայաստանի մթնոլորտին բնականորեն
ներդաշնակ զեղարվեստական կերպարներ:

Շիրազյան պոեմն սկսվում է արևածաղի հրաշալի պատկե-
րով. բարձրագագաթ լեռները, արևն օստուս փոխանցելով, Հա-
նում են Սրփան սարերի զագաթը, ուր արեւ «առափսյան է
թագազրուճ, վերածնում հույսը հին»:

Սրփան սարը, Սրփան սարը թագն է Սրփան սարերի,
Գրկել Հայաց կես աշխարհը՝ երթն է Հսկում դարերի,
Մաղկ ուրբը Վանա ծովում, զլուխն՝ աստղ ու ամպերում,
Առնուից վեր, Անդուկից վեր, Արագածից էլ վեմ՝
Իր Հայտրուճն կանչում է սուն՝ «եկ ինձ՝ վիշտդ կկիսեմ»:
Գագաթին՝ թուք, լանջերին՝ խուճկ, վանք ու մասունք ու նեկտար,
Իր երկնաբույսը ձորերն՝ աղբյուր՝ ուխտ չեն թողնում անկատար:
Գլուխը՝ ձյան, կուրծքը՝ դարուն, գլուխը՝ թագ, կուրծքը՝ կախ,
Վեր խոյանում, խոյ է գառնում վարսանքների գառնաչառ:
Լանջերը՝ ճոխ, ծաղկույն ու ցուղ, մերթափնթակ են վայրի,
Հեռվից էլ՝ տե՛ս, ծաղկահանգես ծխանակված՝ քեզ կայրի:
Խորհրդավոր ձորերն էլ խոր, երբ մեծաղկն է Հանում:
Հաղնում վարդիք՝ քաղում սրտեր՝ սիրո խորան են գառնում:
Նդինիկ տուն, արժվի բույն քերծերով էլ սարը սեղ
Կանչում է, կանչում է քեզ՝ «Թե՛ դու Հայ ես՝ գրկու եկ»:
Մերթ Համբույրով, ծաղկանց բույրով կույս Հարսի պես կղյուժի,
Մերթ էլ աղջիկ փափցնողի պես՝ մայան շրթով շամթ կուտե:
Գրգուռից վեր, նեմուքից վեր, վեր իր Մասնա սարերից՝
Հայկ ու Բելի կովից էլ իլուք է բերում զարեցից...
...Սարերն՝ իրեն, ինքը չբնաղ Վանա ծովին է նայում,
Որպես միակ իր սիրուհուն՝ ծաղկուճքով է փայփայում:
Չյունաթարթիչ թագ աչքերից աղբյուրներ է Հանում նա,
Որ Վանա ծով իր թագուհին երբեք ծաղավ չմտ:

Ահա աշխարհագրորեն ճշգրիտ, պատմագիտորեն հովաս-
տի, զեղարվեստորեն գունազեղ այսպիսի մանրամասներով է

Հյուսիսից Հայաստան «երկիր դրախտափայլի» քանդակային ու զեղանկարչական տեսանելի և շոշափելի պատկերը, որը, ինչպես ընկալելի է, ամենեին էլ «չեզոք» աշխարհագրական միջավայր չէ, այլ Հայություն պատմական բնօրրանը՝ աշխարհի շար կամքով դարավոր ստիսի ձևերն անցած, որի Հանդեպ Հեղինակային անմիջական վերաբերմունքին դուժարվում են անձնավորված Միփանի, Սասնա սարերի, մյուս բարձրագագաթ լեռների, ինչպես և Հովիտների ու գետերի, Վանա ձուլի ու Ազիթամարի, մյուս վանքերի ու տաճարների, պատմաձագուստային ու Հոգևոր կոթողների Հորդորները «Եկ ինձ՝ վիշաղ կկենսեմ» և «Թե զու Հայ եմ՝ գրիս եկ», որոնք Հնչում են որպես անհայ մնացած մայր Հողի կանչ ու պատգամ ուղղված աշխարհացիր Հայությունը:

— Եկ՛ք... բույրի ու Համբույրի կարոտաներ իմ պանդուխտ,
Ձեզ Համար եմ այսպես դուզվում Հրաշքներով իմ գմբուխտ:
Միփանս սեզ արերն Հիշեր, բավ է տանջվեք շար Հեռվում,
Ձյունս տեսեք՝ գրիս Հասեք՝ թե կարտոնից եք վազվում...

Կար և մի այլ նական խնդիր՝ կապված Հերոսների ազգային պատկանելության հետ: Ովքե՞ր են նրանք քսա ավանդադրույցի, և ինչպես է նրանց պոեմում ներկայացրել բանաստեղծը: Ս. Մելքոնյանն էլ է նկատել, որ առաջին տարբերակում Հասակ չի մատնանշվում Հերոսների ազգային ինքնությունը, և 1942 թ. տարբերակում է մատնանշված Միամանթոյի Հայ լինելը:

1954 թ. Հրատարակությունը թե՛ ծավալով, թե՛ գեղարվեստական Հարստությանը Հայաստան տարբերվում է նախորդներից, այստեղ արդեն պոեմի մասերը երգի փոխարեն անվանված են զույտներ, ընդարձակված ծավալում Հասակվել են Հարցադրումները, այլասացությունները դարձել են բացասացություններ, զորեղացի է Հեղինակի թե՛ քնարական, թե՛ էպիկական շնչատությունը:

Նախերգանքի երկուսը մի տունը կարծես որոշակիացնում է Հերոսների ինքնությունը:

Ուր որ Հանել մի Հայ չորան ու բուրդ տղիկ մի սիրուն
Երակներով իբրս գտան մեր Միփանս սարերում:

Վերջին լրամշակումներում ընդգծվում է նաև քրդուհի **Խնկարեի** Հայ մորից ծնված լինելը, Հանգամանք, որով ավելի է բարդանում պոեմի Հանդույցը, և սիրավեպը ձեռք է բերում բովանդակային նոր երանգներ, նոր հիմնավորում ու Համոզություն:

Անձնավորված Միփանի ու իլված ողջ Արևմտյան Հայաստանի Հիշյալ Հայրենականչին նախ արձագանքում է պոեմի պատանի Հերոսը՝ իր Հայրենի երկրի և կես-բուրդ, կես-Հայ Խնկարեին ինքնամոռաց սիրահարված Հայ Հովիվ Միամանթոն, որն իր Դուրբանվեր Հայրենասիրությանը օրինակելի պիտի լիներ թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ Միյուսքում սարող Հայ նոր սերունդների Համար: Գիշ վերն ասացինք, որ լրամշակման ընթացքում պոեմի Հերոս Միամանթոն աստիճանարար դարձել է իր Հայրենիքից բռնություններ վտարված արեմտահայությունից ընդհանրացված կերպորը, որի անհատական արարքները պոեմի էպիկական Հյուսվածքում դառնում են զորմուտության առաջնիչ ուժ: Հեղինակը գեղարվեստորեն հիմնավորել է, որ ստեղծված իրադրության մեջ նույն կերպ էր վարվելու ցանկացած Հայուրդի, ուստի և Միամանթոն՝ իդեալականացված այդ Հերոսը, իրոք Համայն Հայության ճակատագրի կրողն է ու գառի պաշտպանը, նրա իլվերի ու ձգտումների խիս մարմնացումը:

Հայրենի Հարստատ եղբրեց նրա վանդումն ու զեկզվում է Հոխորտացող թշնամու սպանալիքներով Զարեհ բեկը Միամանթոյին մերժելիս ու վանդելիս ոչ միայն ցեղային, դասային ու կրոնական զրգապատճառներն է մատնանշում, այլև այն, որ իր թիկունքում է կանգնած Իրանն ու Թուրան՝ ողջ մահմե-

դական աշխարհը, և իր հրացանն էլ նվիր է ստացել անձամբ թուրք սուլթանից.

... էլ չերևա զու այստեղ.

Մոմասարը քո տեղը չէ, ոչ էլ Սիփանն այս շքեղ.

Ոչ էլ Վանա ափերն ու ծով... վկա՛ իմ թուրն ու զուբան,

Քե ու թիկուճք են ինձ գտուի այժմ Իրան ու Քուրան:

Այս թվանքն էլ, որ քնած քա՛ղ սկսողս պես է նիրհել՝

Լա՛լ իմանա, որ ինձ թուրջաց սուլթանն ինքն է նվիրել...

Այս հանգամանքներում էր, որ «Նույն գիշեր Սիփան սարը հովիվ տեսավ ուրիշին»:

Նկատելի է, որ գեղարվեստական պատկերի մեջ արտացոլված են Հայ - Թուրքական, Հայ - քրդական ու մանափանդ Թուրք - քրդական հարաբերությունները, որոնց զերը հական էր արևմտահայության տեղահանման, ջարդերի, Արևմտյան Հայաստանի հայաթափման ու բռնազավթման խնդրում: Ազգային-քաղաքական այս խնդիրները, սակայն, շոշափվում են ոչ թե մերկապարանոց Հայտարարություններով կամ բացահայտ կոչ ու քարոզչությամբ, այլ հերոսների մարդկային էությունն ու ճակատագրին միահյուսված: Իսկ դա Հարստացում է պոեմի բովանդակային տարածքն ու գեղարվեստական հյուսվածքը, կերպարները դարձնում Հայության պատմական բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում Հնարավոր կենդանի գոյություններ ու մարդկային բնավորություններ, որոնք գործում են ազգային կյանքի ու կենցաղի, Հայ-քրդական և Հայ-թուրքական հարաբերությունների Համապատկերում՝ կենսական իրական հանգամանքների թելադրանքով:

Գտնում առկա է գեղարվեստական համոզիչ լուծում պահանջող ըստ էության բարդ հանգույց: Բանահյուսական տարրերակներում կա մեկ հիմնական բախում-կոնֆլիկտ, որ ծագում է Միամանթոյի և Զարհ ընկի միջև: Մինչդեռ Հ. Շիրազի պոեմի վերջին տարրերակներում, զրա հետ միասին, տեսնում

ենք լուծումներ պահանջող ճյուղավորված այլ կոնֆլիկտներ: Այդպիսիք են՝ համայն հայության ազգային ճգնաժամներ և անարդար պատերազմով ու զիջմանագրատական խարդախություններով Արևմտյան Հայաստանի բռնազավթման հետևանքով Հայ-թուրքական կոնֆլիկտը, Հայ-թուրքական հարաբերություններին միահյուսված Հայ-քրդական կոնֆլիկտը, որոնք ի վերջո, զրևորվում են Միամանթո - Զարհ ընկ կոնֆլիկտի միջոցով: Այս ամենին գումարվում է նաև Միամանթոյի ինքն իր մեջ և ինքն իր հետ ներքին բախումը, որ գեղարվեստական համոզչության իմաստով առանցքային է և անմիջաբար առնչվում է մյուս բոլոր բախում - կոնֆլիկտներին:

«Միամանթո և Եղեգարե» պոեմի գեղարվեստական որակն, այսպիսով, պայմանավորված է ոչ միայն դիպաշարի ու գործողությունների փայլուն ու պատկերավոր ներկայացմամբ, Արևմտյան Հայաստանի իմաստավորված գեղանկարչությունում ու անձնավորված կերպավորումով, այլև բախում - կոնֆլիկտների ու գործողությունների մեջ հերոսների հրաշալի կերպավորմամբ և նրանց հոգեբանության ու մարդկային նկարագրի բարձրարվեստ պատկերմամբ:

* * *

«Միամանթո և Եղեգարե» քննադեպիկական պոեմի դիպաշարի հիմքում, ինչպես տեսանք, ընկած են ժողովրդական ավանդազարույցի երկու պատում: Առաջինը Գ. Մրվանձոյանցի զրատած և «Գրոց ու բրոց»-ում տպագրված տարբերակն է, երկրորդը՝ հիմնականը, որը Հ. Շիրազի կողմից վերամշակված է լրամշակված, այնին ընդարձակ է և զրեթև ազատ չափածո հյուսվածք, բանահյուսական նույն նյութի՝ Լեն և Մարտուգյանի տրամադրամն է, որը Գ. Մրվանձոյանցը տպագրել է նախ «Արևելյան մամուլում», ապա իր «Համով - Հատով»-ում:

Առաջին տարբերակը՝ «Ասեր Սիփանն...» խորագրով, բառացիորեն հետևյալն է ամբողջությամբ «Նշանավոր է այն խաղը, որ կսկսի այս բառերով՝ «Ասեր Սիփանն...», որու մեջ կպատմվի սե աղայի մը ու աղվան մը վեպը, որք միմյանց սի-

բաճարելով փախած են Սիփանա գլուխ և երեք օր ու զիշեր առանց Հացի դիրսօր սիրելով միայն ապրած են, բայց երբ քաղցը նեղեր է գիրենք, սև տղան Հրացան առեք էլեր է որս մը զարնելու՝ գոնև գայն ուտեն ու քիջ մը կազդուրվին: Աղջիկն ալ քարի մը վրա կանգնած կդիտե: Սև տղան կպատահի եղնիկի մը. Հրացանը կպարպե, կդիպցնե եղնիկի մը. արշուճը կհոսե, եղնիկը կեղնի վիրավոր և կուզե վազել, բայց կիյնա... Սև տղան զինքը կծգե որ եղնիկը բուեն չբախցնե, և աճա ինքն ալ գաճավե՞ծ կհասի քարերեն և կտոր-կտոր կիյնա մեռալ: Աղջիկը, ծնկերուն զարնելով, վարտերը փետելով, կնստի քարին վրա, աջ ձեռքը երեսին, ձախ ձեռքը վեր ձծերուն դրած, կսկսի սրտառուչ սպասուսով մը յուր ողբը ողբալ. Հորում կիշտամբե սև տղայի խառատությունը, թե՛

«Ինչո՞ւ, մենակ ելար որսի»:

Թե՛ ինչո՞ւ զարկավ եղնեկին, որ գուցն այն ալ սիրական մը ուներ այս վայրերուն մեջ՝ մեզ պես:

Թե՛ Ահա սիրո Ասավածը արզար ու վաղահաա ըրավ յուր դատաստանը:

Կանի՞ն խառատիրա մարդիկ՝ որ արգելք կլինին բնական սիրո և այսպիսի սոխտոց առիթ կլինին:

Թե՛ Իրեն Համար ելավ լեռը ինքն, իրեն Համար և իրեն Հետ կմեռնի»:

– Եվ աճա ինքն ալ կզաճավի՞ն քարերեն ի վայր սև տղայի սիրուն ու մահվանը վրա»:

Ինչպես տեսնում ենք, «Գրոց ու բրոց»-ի այս տարբերակը Հ. Շիրազի պոեմի զիպաչարի կմտաբն է միայն. որպես գործողություն վայր Հիշատակում է միայն Սիփան սարը, ինչպես պոեմի 1935 թ. առաջին տարբերակում է, չկա որևէ Հերոսի որոշակի անուն, այլ մատնանշվում է «սև տղայի և աղջկա մը» սիրո վեպը: Եվ քանի որ առաջին իսկ տարբերակի վերնագրից սկսած կան Հերոսի Միամանթո և Հերոսուհու Խաջեղարե անունները, նշանակում է բանաստեղծն առաջնայպես

Հենց երկրորդ՝ «Սարե Սիփանե կամ Միամանդոն և Խջեղարե» տարբերակն է հիմք ընդունել: Սակայն Հետագա տարբերակները ստեղծելիս նա ողջ խորությունը ու բոլոր մանրամասներով է ուսուսմասիրել բանահյուսական ու պատմաագագագրական բոլոր սկզբնաղբյուրները:

«Սարե Սիփանե...»-ի առաջին պատումի և իր կողմից քրջերենից Հայերենի վերածած երկրորդ տարբերակի ընդհանրություններն է տարբերությունների առնչությունը կարևոր բացատրություններ է տվել Հենց Գ. Մովսեսյանն ինքը: Ըստ նրա՝ բովանդակային պլանում ողու և էություն իմաստով ընդհանրություններն այնքան չառ են, որ երկուսը դառնում են գրեթե նույնական: Տարբերությունները գերազանցապես զբոսնորում են արտահայտության պլանում: Առաջինում գործող Հերոսներն ընդհանրական անուններով են՝ սև տղա և աղջիկ մը: Երկրորդում՝ գրոցը արդեն Հանդես են գալիս որոշակիացված անուններով՝ Միամանդո և Խաջեղարե: Գրգերեն սիւսս և է նշանակում, իսկ մարդո կամ մանդո՝ տղա, դեռահաս:

Համոզվելու Համար Հիշենք Գ. Մովսեսյանցի քայքայությունը: «Արեևիյան մամուլ» պարբերականի խմբագրին Հասցեագրած նամակում վերջինս Հետևյալն է գրել. «... Իրտեք, որ «Գրոց Բրոցի» 60-րդ կրեսին Հիշատակած եմ «Սարե Սիփանե» երգ մը և անոր իմաստը թեթևակի իմն ծանուցած: Այժմյան գրկանս այն է՝ պ. Լևոն Մարտոսյանի միջոցով ձեռք բերած՝ ի Գուլանըխ, քրդերեն թարգմանված է, որ սակայն քավական վաստակնույց զիս մինչև այս վիճակին վերածեցի»:

Ինչպես ընթերցողն պիտի գտնե «Գրոց Բրոցի» Սարե Սիփանեի և սույն գրվածքիս մեջ՝ ինչ ինչ ոչ Համանման, այլ գրեթե ոգին և նյութը նույնն է՝ ինչ բանին Հյուսվածքը: Բնականաբար տարբերություն տեղի կունենա ամեն բանի, երբ անգլի կըլուցվի բերանն ի բերան»¹⁰ (Ընդգծ. – Ս. Մ.):

¹⁰ Գ. Մովսեսյանց, Երկր, հ. 1, ԳնԱԳ ՉԼ հրատ., Եր., 1978, էջ 499:

Այսինքն՝ Գ. Սրվանձառյանը երկու պատումների ոգին ու նյութը ոչ թե Համանման, այլ գրեթե նույնը գիտելով՝ տարբերությունները Համարել է «բերանն ի բերան» անգիր զրուցվելու» արդյունք։ Եվ սա միանգամայն բնական է։

Բանաստեղծի Համար՝ ժամանակին, մեզ Համար՝ այժմ Հետաքրքրող ուրիշ Հարցեր էլ կան ականափոր բանազետի բացատրություններում։

Քանի՞ ցս ընդգծվել է, որ բանահյուսական նյութը թարգմանվել է քրդերենից։ Դարերով կողք կողքի ապրած և միմյանց հետ անմիջական շփումներ ունեցած ժողովուրդների Համար բնական են ոչ միայն կենցաղային ու Համայնքային սովորույթների, փոխօգնությունների, միտակերպ արարողությունների նմանություններն ու փոխերթմափոխանցումները, այլև Հոգևոր մշակութային անմիջական առնչությունները։ Մանավանդ Սիփանա սարերում ուշ ժամանակներում 17-18-րդ դարերում հայտնված ու Հայերի Հայրենասիրությամբ ապրած քոչվոր քրդերը, որ «անգիր ժողովուրդ» էին, գյուրություններ էին Հաղորդակցվում լեռնազափառացի Հայերի հետ, որ նույնպես զգալի մասով «անգիր» էին և քրդերեն կամ գրեթե, կամ քրդախոս էին։ Այս պայմաններում Հնարավոր էին բանարվեստի ու երգարվեստի փոխադարձ ընդունելի նմուշների Համասեղ ստեղծումն ու տարածումը երկու լեզուներով։ «Քրդերը, - գրել է Գ. Սրվանձառյանը, - Հայոց հետ երկրացի և կենցաղակցի, շատ նյութ կրճածային Հետաքրքիր եղողներուն՝ Հայոց կյանքին, և որովհետև անգիր ժողովուրդ են քրդերը, ինչպես և անոնց շափ անգիր են նաև մեր լեռնազափառացի Հայերը ու տեղ-տեղ քրդախոս, բանահավաք մը կրնա պատվական վաստակներ ձեռք բերել նույնիսկ քրդերեն Հորինված երգեր կամ վեպեր գրելով»¹¹⁷ (ընդգծ. - Ս. Մ.)։

¹¹⁷ Լույս ստեղծ։

Առիթ ունեցել ենք ասելու, որ քրդերեն երգերի ու զրույցների զգալի մասը Հայերի ստեղծածն է։ «Սարն Սիփանն» քրդերեն երգ - ավանդազրույցն էլ Համանարար Հայերն են քրդերենով ստեղծել, և այն Հարազատ ու սրտամտա է եղել երկու ժողովուրդներին էլ։ Ավելին. Գ. Սրվանձառյանը տարբեր ասացողներից անձամբ էլ լսել հենց այն, ինչը քրդերենից թարգմանված և «Համով-հոտով»-ում զետեղված ավանդազրույցի մեջ պետի Հետաքրքրի ու ոգեշնչի Շերաղյան. «Կուգամ հիշել նաև, թե՛ որքան և քրդերենն կառնում զայս, բայց ես լսած ունիմ այլևայլ ասողների, թե Սիամանդուն է Հայու տղա՝ Աև Հարուն, իսկ Խըջն-Ջարին արգարք քրու աղջիկ է, և զըզրգակցի անվանյալ էլին (ցեղին) մեծտասն ծնունդ։ Խըջն կամ կըճն կնչանակի աղջիկ, Ջարն կամ գուցե Ջարհ, հոր անունն է, որով կհասկցվի Ջարհի աղջիկ կամ Ջարհի»¹¹⁸ (ընդգծ. - Ս. Մ.)։

Ինչպես ցույց են տալիս «Սիամանթո և Խըջարն» պոեմի ստեղծագործական պատմությունն ու տարբերակների Համադրական քննությունը, Հ. Շերաղյա լրամշակումները կատարելիս ու երկի գրպաշարը զարգացնելիս հենվել է Գ. Սրվանձառյանցի այս բացատրության վրա, որն իրականում բավական ամուր կռվան է սիրային ուղղվածություն պարզ վեպը աղգային-հայրենասիրական բովանդակությամբ Հարստացնելու Համար։ Վերջին տարբերակներում արդեն Խըջարնն ոչ թե զուտ քրու աղջիկ է, այլ արդեն կես Հայ - կես քուրկ կամ պատկերավոր՝ կես վարդ - կես տուզա, բանի որ նրա Հայ մորը փախցրել էր քուրկ Ջարհհ բեկը։ Իսկ սա նշանակում է՝ քրդերի կողմից ընդունված ավանդազրույցի մեջ իր պոեմը լրամշակելիս բանաստեղծը հայտնաբերել է այն Հայացնելու և Հայ իրականության հետ կապելու բոլոր Հնարավորությունները։

¹¹⁸ Լույս ստեղծ։

Նրա այս փարձուքի մեջ ծայրահեղություն չկա, և այս գեղօրում էլ չիրազյան գեղարվեստական ճշմարտությունը չի հակասում կենսական բուն ճշմարտությանը, որովհետև իրականում էլ կային քրդերի կողմից հայ աղջիկների և հայերի կողմից քուրդ աղջիկների փախեցնելու բազմաթիվ դեպքեր, որոնց արձագանքներից մեկն էլ «Ասրի Սիփանն» երգն է: Բանահյուսական «Ասրի Սիփանն կամ Սիամանդո և Խջեզարն» ավանդազրույցը որքան էլ հարուստ է Հերոսների սիրո համատարժան և փոխադարձ նվիրվածության դրսևորումներով, այնուամենայնիվ չունի և չէր էլ կարող ունենալ շիրազյան պոեմի բովանդակային խորությունն ու գեղարվեստական գունագեղությունը: Պատկերավոր մտածողության բացառիկ միջոցն ու ստեղծագործական հզոր երևակայությունը կատարել են իրենց բարերար դերը, և ժողովրդական նյութի վրա հյուսվել է ըստ ամենայնի շքեղ մի երկ՝ հայ քնարաչպիկական պոեմի գլուխգործոցներից մեկը:

Բնակարիչներն իրենց նյութը սովորաբար վերցնում են մայր բնությունից: Բայց բնություն պարզ տեսարանը, որքան էլ բնականորեն գեղեցիկ, այնուամենայնիվ մարդու ստեղծագործություն և արվեստի երկ չէ և չի կարող ունենալ արվեստագետի ստեղծագործ մտքի և երևակայության արգասիք գեղանկարի հմայքն ու գրավչությունը: Այդպես էլ Հ. Շիրազի պոեմում բնական և կենսական նրբույթների, ազգային շարաբերությունների, մարդկային նվիրական զգացմունքների, ճակատագրական բախումների, գեղեցիկի ու ողբերգականի գեղարվեստական համադրական պատկերն ափելի խորն է ու հարուստ, քան Ք. Արվանձտյանցի գրառած երկու տարբերակներում, որոնք Քանկարժեք անմշակ բնակությունից ափելի չեն: Վերջիններս բնականաբար չունեն պոեմի նախնորգանքը, միջավայրը՝ Արևմտյան Հայաստանն ու մանավանդ Վասպուրական աշխարհը՝ ներկայացնող ճոխ ու շքեղ բնապատկերները, մարդու և հայրենի բնաշխարհի բազմաշերտ առնչությունը:

Ների պատկերումները, Հերոսների սիրո հոգեբանության նուրբ ու խոր բացահայտումները, դրանց գեղարվեստական հիմնավորումները, ինչպես և գաղափարական այն հարցադրումները, որոնց գեղագիտական լուծումներն առկա են Հ. Շիրազի պոեմում: Իսկ ժողովրդական նյութի ողբուն հեղինակի հարազատության ու համատարժանության զլխավոր ապացույցներից մեկն այն է, որ պոեմում առկա են ավանդազրույցի բոլոր զրվագները՝ անհրաժեշտ մանրամասներով ու հավելումներով՝ ընդելուզված գեղարվեստական ընդհանուր հյուսվածքին:

Ավանդազրույցի երկրորդ՝ «Համով - հոտով»-ի տարբերակը, որը փաստորեն պոեմի բուն սկզբնաղբյուրն է, սկսվում է Սիամանթոյի և Խջեզարի՝ միևնույն գիշերվա երազում միմյանց մատանիները փոխանակելու զրվագով.

Սիամանդոն երազով էր երջեզարին,

Երազի մեջ յուր մատնին փոխանակեր էր

Խջեզարիի մատնիկին.

Նույն բանը պատահեր էր Խջեզարին ու

միևնույն գիշերին¹¹³.

Ինչպես տեսնում ենք, Հերոսների մասին գեուես չկա որևէ նախնական տեղեկություն և միջավայրի ոչ մի պատկեր: Իսկ գործողությունն էլ սկսվում է առանց նախապատրաստության, որով և անորոշ է մնում Հերոսների հոգեբանությունը, նրանց սիրո զգացմունքը չի ցուցաբերվում իր ծագման ու զարգացման ընթացքով՝ որպես մարդկային ներաշխարհի գեղեցկության, ազատասիրության, նվիրվածության ու անձնագոհության բարձրագույն արտահայտություն: Երազում միմյանց մատանիները փոխանակելուն անմիջապես հաջորդում է Խջեզարիի հարանիքի զրվագը.

¹¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 501:

Ազոթքան էր, կանուխ, քան գառավոտ
արթընցավ Միամանդուն,
Հեծավ յուր աշխույժ և Հավասարին ձինը,
Գլուխն ուղղեց, արշավեց դեպի Ջըռընկացոց էլին,
Ինչով, Հյուրընկալից մի պատավի կոտի տակը:
Դամբ դամբի և գուռուայի ծայնը կը զբղջողեր ողջույն էլը.
— Ինչի՞ է այս ուրբաությունը, և որո՞ւ Համար
այս Հանդեսը, ո՞ մամիկ:

Պատասխանեց պատավն.
— Խըջեզարեի Հարսանիքն է, սրգի,
անոր Հարսնաուն եկեր է,

Այս եզավ երեք գիշեր և երեք ցերեկ
այս ուրբաությունը կը կառտարի:

Միամանդուն արտասովալից աղերսեց, խնդրեց պատավին,
Որ նշան մը իրմեն տանի Հասցունն Խըջեզարեին:¹¹⁸

Այսինքն՝ ժողովրդական ավանդազրույցում դիպաշարի գործողություններն իրականացնող Հերոսները՝ Միամանթուն և Խջեզարեն, չեն բարձրացել զրական կերպարի՝ որպես եզակիով արտահայտված ընդհանուրի միասնության աստիճանի, զեռևս չունեն ներանձնական կյանք ու Նոգբանական խորք: Նրանք նախապես Հանդիպած չեն լինում. երազում առաջին իսկ Համադիպման պահին սիրահարվում են ու մտանքներն փոխանակում: Նրանց երազային սերը թվում է իրականանալի, նրանք զեռևս չունեն կորցրած սիրո վիշտ ու տառապանք, նրանց զգացմունքների փոխադարձությունն էլ էր բնազդային և զեղարվեստորեն ներկայացված ու պատշաճորեն Հիմնավորված չէ: Միամանթուն զեռևս չի ներկայացել Խջեզարեի Հորը՝ Զարեհ բեկին, ուստի և նրանց միջև սկզբից ևեթ չէր եղել բախում: Այսինչ պոեմում նախերգանքին Հարորում է միջավայրի՝

¹¹⁸ Նայ՛ց ստեղծում:

Արևմտյան Հայաստանի և մանավանդ Վասպուրական աշխարհի քնարական-գեղանկարչական պատկերը, և Հերոսները առտիճանարար են ներառվում էպիկական գործողության ոլորտը՝ քայլ առ քայլ զբեկոթելով իրենց բնավորությունն ու զգացմունքներն աշխարհը:

Մրվանձոյանական Հրապարակումները որոշ իմաստով իսկապես հիշեցնում են արևելյան Հայտնի սիրավեպերը: Համաձայն ենք, որ նախապես Հ. Շիրազն էլ սրանց նմանություններ էր ասքաղատում: Բայց Հետագայում դա նրան այլևս չի գոհացրել, և իրարահաջորդ լրամշակումները գարձել են անխուսափելի: Վերջին տարբերակներն և սիրավեպերի ոչ թե արտաքին նմանություններն են նախան, այլ ակնասու տարբերությունները, որոնց հստակ ու հրաշալի դիտակցումով բանաստեղծը Հետեղականորեն իրականացրել է իր կեղարյա ստեղծագործական աշխատանքը այս մեկ պոեմի վրա:

Հանրահայտ «Լեյլի և Մեջնունն» իսկապես էլ պատկերում է սիրո ողբերգություն՝ սիրահարների ազնիվ զգացմունքների, հավաստարժանության ու նվիրվածության պանծացումով: «Միամանթուն և Խջեզարեն» պոեմն իր բնույթով ու բովանդակությամբ, անձնագոհ սիրո վեհություն փառաբանմամբ ու ողբերգականի հուզումնալից պատկերմամբ սրա և նմանների «Աշուղ Ղարիբի», «Ալյի և Քարային», «Ազվան և Օսանի» Հեռ նկատելի ազդերն ունի: Սակայն մի նախան տարբերություն իր քնարական մեծախոսության մեջ Հատկապես ընդգծել է Հ. Շիրազն ինքը, որը ողջ պոեմում կերպարավորված է Հենց իր Հեղինակային խոսքով, Հերոսների ու գործողությունների հանդեպ իր անձնական ու զգացմունքային անմիջական վերաբերմունքով.

Մեջնուն, քեզ մի զարդ էր տանջում՝ դարձը Լեյլի քո յարի,
Այնինչ կուլա իմ Հայրդին յարի Համար ու արի,

Յարի Համար, սարի Համար, ծովի Համար իր Վանս,
Յարի Համար ու ողջ գերի երկրի Համար Սիփանս,
Գանդիսանյով իր սպգի Հեա, աչքը լուսնին դարձնում,
Իր Հեռավոր երկրի մասին լուսնից էլ էր Հարցնում...

Ինչպես Հ. Թումանյանի «Դեպի Անհունը», «Անուշ», և «Քեմկարերգի առումը» պոեմներում, այստեղ էլ, զեղարվեստական պոմանականությունը Հեա կազմած, կա քնարական ու էպիկականի, իրականի և գերբնականի Հորարերակցության ու մանտիանոց երազի արժևորման խնդիրը, որը չպետի Հակասեր զեղարվեստական ճշմարտությանն ու Համոզությունը: Բայց եթև «Անուշը» բանահյուսականին Համեմատաբար քիչ է առնչվում, իսկ «Դեպի Անհուն» էլ ունի որոշակի մասնական խորհրդագրություն, այսպես «Միամանթն և Խնկարեն» իր Հիմքով բանահյուսական է և նրանում ներմուծված արգրականության տարրերը պետք է որդանապես ներդաշնակ լինեն նախանյութում առկա ավանդական ու միտոկական պատկերացումներին: Այս կնճիռը լուծելիս Հ. Շիրազը դառն է լավագույն ելքը դիմելով Հերոսների՝ Հայկական ժողովրդական Հեքիաթներում և ավանդազրույցներում Հանախ Հանդիպող կերպարանափոխություններին:

Առաջին տարրերակում Հերոսները նախ իրականում ազրուրի ժող են Հանդիպում, Հեաո՝ երազում: Սա Հեղինակին Հետազայում Համոզիչ չի թվացել, ուստի այդ զրգավը Հանել փոխել է վերամշակելիս: Այնլի բնորոշ ու Հատկանշական է թվացել ավանդազրույցում եղածը՝ Հենց երազում մասանինների փոխանակությունը: Հետագայ տարրերակներում արդեն այս երազից Հետ է Միամանթն Հանդիպում «կարապետվի կծրով» ազրուրը եկան և «ձորը ծիածանով լցրած» աղջիկներին, որոնց մեջ էր երազի աղջիկ Խնկարեն:

Հեքիաթային մասնողությունը բնորոշ աղջիկ – եղնիկ կամ եղնիկ – աղջիկ փոխակերպման մի տարրերակ արգեն գործածել

էր Ավ. Իսահակյանը «Ալագյազի մանինը» պոեմի «Հեքիաթը» Հատվածում, ուր արքայազնի Հետապնդության փախչող եղնիկը աղջիկ դառնալով Հայտնում է, թև քաջ Հովվի Հարսն է ինքը: Այստեղ էլ որսիանից փախչող եղնիկն աղջիկ է դառնում այն էլ կրկնակի երազում՝ երազ՝ երազի մեջ. ինչպես շեքսպիրյան Հանճարեզ գյուտը՝ բեմի վրա բեմ.

Այնինչ Հովվին երազի մեջ սարից ահա իշավ ցած,
Մինչև տըրյուր ճամփա տվին վայրի վարդերն արթնացած,
Բայց ազրուրին դեռ չՀասած՝ տեսավ կանկան մի եղնիկ,
Որ իրեն էր նայում անթաթթ աշիկներով գեղեցիկ,
Ուզեց զարկել, բայց եղնիկը Հանկարծ դարձավ մի աղջիկ –
– Մի՛ սպանիր, ես քո բախան եմ, քեզ խնայիր, ի՛մ սիրած –
Ասաց աղջիկն, ու տղան ձեռքից առնողն ընկավ ցած –
– Դու ո՞ր սարի եղնիկն էիր, քեզ ո՞ր ճամփան ի՛նձ բերեց –
Ասաց տղան ու աղջկան երազի մեջ Համբուրեց:
– Մեր՝ ճամփան, – ասաց աղջիկն ու, Հանելով իր մատից,
Իր մատանին Հովվին տվին տվեց՝ որպես սիրո խոսքն անրի:
Ու երազով Հովվին ինքն էլ իր մատանին կուսակավ՝
Որպես իրա բախտի ասաղը՝ անխոս տվեց աղջկան:
Եվ ուզում էր գրկել նրան, կրճքին սեղմել, բայց Հանկարծ
Նորից եղնիկ դարձավ աղջիկն ու ծիածանով իր անգլին
Թուով կորավ քերծերի մեջ՝ չվար թողած որսկանին...

Բացատրության կարտո են երազում փոխանակված մատանիների իրական լինելն ու Հետազայում Հանախ կրկնվող երազները (Գիշերն էլի լավ էր, զոհն երազի մեջ կանանք, բայց ցերեկը Միամանթն չէր իմանում ինչ աներ): Դրանցից մեկն էլ դառնում է ճակատագրական.

Ու մի գիշեր երազ տեսավ, բայց այս անգամ չար երազ.
Տեսավ, իբր, Խնկարեն Հարանցել է անմուրազ...

Այս գեղջբուս բանաստեղծն ազգայինն էլ գեղարվեստական պայմանականությանը և ժողովրդական ընկալումներին ու ըմբռնումներին: Հովհ. Թումանյանն էլ երգչներին մեծ կարևորություն էր տալիս, հիշենք թեև ուզ «Թմկաբերդի առումը» պոեմում իշխան Թաթուլի՛ր երգում տեսած վիշապը կամ «Դեպի Անհունը» պոեմում Հասմիկի՛ր երգում ազգային դառնալը:

Լուկ երա՞գ էր այս: Բայց երա՞ց է՛նչ է:

Երազ թե աթթուս — այդ միթե մի՛նչ էլ:

...Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք:

Երկուսն էլ անցյոթ, երկուսն էլ պատանք:

Մեր նոր քնարերգությունն մե՞ջ Ավ. Իսահակյանի «Կյանքը երազ է, աշխարհը՝ Հեքիաթ» բանաձևից առաջ էլ միջնադարյան տեղիները կային, Շահաբղի «Երազը» կար, և Թումանյանն ու Տերյանն էլ մի քանի այլ նախադեպեր էին ստեղծել: Հ. Շիրազի Միամանթոն էլ ԽՂեղարքին տեսել ու սիրահարվել էր երգում:

— Երազիս մե՞ջ ես զարթնեցի,

Քեզ բունեցի երազիս մե՞ջ,

Քեզ բունեցի, Համրիս եցի՞

Երազ դարձա՞ր երազիս մե՞ջ:

Ահա այս երազային սիրով խանդավառ Միամանթոն Զարեհ բեկին էլ ջանում էր Հավաստիացնել, թե ինքը նրա դստեր Հետ մատանի է փոխանակել... երազում, բայց երբ նա ստացած մատանին պատասխի Հետ ուզարկում է ԽՂեղարքին, վերջինս պատասխի թաշկինակի շամիչների մե՞ջ տեսնում և ճանաչում է իր իսկ իրական մատանին:

Ինչպես լուսինն ստաղիկի մե՞ջ իր մատանին շողշողաց...

Քեզեցկություն Հանդեպ Համարանքն ու Հրապուրանքը ոչ միշտ են փոխարկվում սիրո և անձնվոր վերաբերմունքի: Հա-

մակրելի կարող են լինել շատերը, սակայն սերը դրսևորվում է մեկի՛ առանձնահատուկի Հանդեպ և ունենում արտահայտություն տարրեր մեկը: Փ. Սրվանձոյանցի գրառած տարրերակներում գրեթե խոսք չկա սիրահարների զեղեցկության և ըզպացմունքների ծագման ու ընթացքի մասին: Դա նախապես չի արտահայտվում և քաղապական երևում է ԽՂեղարքին փախցնելու և Միամանթոյի սպանվելուց Հետ սրբեցյալի ոգրի դրվագում: Մինչդեռ շիրազյան պոեմում պատկերավորման ազգու միջոցներով ներկայացված են թե՛ ԽՂեղարքի, թե՛ Միամանթոյի արտաքին բարեմասնություններն ու հոգեկան զեղեցկությունը, զգացմունքների փոխադարձությունը: Գատկերված է այնպիսի իրավիճակ, որում սիրահարվելը դառնում է անխուսափելի, իսկ նրանից հրժարվելը՝ անկարելի: Կեռ՞ զեղեցկություն այնպիսի պատկերումներ, որոնցով լիարժեք բնութագրվում է Հերոսուհին, Հայ քնարերգության մե՞ջ անկա են մեր էպոսում (Չեմնով Հովանի և այդ Դավթի առջև դուստանների Խանդութի զեղեցկության զովերգը) ու ժողովրդական երգերում, թշկուրանցու տաղերում ու քուչակյան Հայրեններում, նազաչ Հովնաթանն ու Մայաթ-Նովայի խաղերում, Դուրյանի ու Մեծաբեկիցի տաղերում, Տերյանի ու Իսահակյանի բանաստեղծություններում և Հատկապես «Ալազաղյի մանիններում», Վարուժանի քերթվածներում ու մանախանգ «Հարցը» պոեմում: «Միռնոցին քեզմեն կու առեն անձանկան զիզ գիշարկ պես», — բազմում ու բնութագրում էր Մայաթ — Նովան աշխարհում իր շնորհներով միակ ու քաղառնիկ գոգաչ-զեղեցկուհուն: «Մով են աչքերը Զավաթի գտեր, Ու կորչում է մարզ նրա Հայացքում», — բնորոշել է Թումանյանը Թմկա արբուհուն, «Հույժ զեղեցիկ» էր Խորենացու վկայած ու Վարուժանի կերպավորած «ասնձակոտոր պարոզ ու ճարտոզ» արշալույստանրաչ նազեներին: Մրանջ շատ է նման, բայց և էությունը շատ է տարբեր Միամանթոյի նվագով Հափշտակված շիրազյան զեղեցկուհին. ԽՂեղարքն նույնպես քաղառնիկ է իր կենարար զեղեցկությունը:

Ու վեր նայե՛ք... Ախ ի՛նչ աչքեր, — շրշուց Հովիվն սուչելով,

Քվաց. թե վեր նայեց ձորից Վանա ծովը գիշերով.

Բայց ծովն ի՞նչ էր, ա՛խ, ի՛նչ աչեր, Հայացքն Համույր ու

Նեկուսք.

Չմեռ մարդը թե ներս մտնե՛ր՝ գարուն դառած դուրս կգար:

Բարսակ մեջքը Վանա ծովի կարողի վիզն էր կաթմես,

Ու թե գրկես բարակ մեջքը՝ անձանություն կզրկես...

... Նա էր իմ վիթի երկնզարին՝ րեկի դուստրը մանկամարդ,

Երեսը կաթի, իսկ բերանը՝ այն կաթի մեջ ընկած վարդ:

Այսպիսի գեղեցկությունն իրոք կարող էր կարեկվեր սիրա-
հար գարձնեկ պատանի Հովվին ու նրան մզել իր սիրո իրա-
վունքը պաշտպանելու վճռական միջոցների սոցիալական ու
կրոնական, ազգային խտրականությունն ու բազում այլ աթ-
ղիկների դեմ: Բայց ահա ծագում է գծիվարագույն խնդիրը.
երկու սերբերից ո՞րն է նախընտրելին՝ մե՛կը, թե՛ մյուսը, թե՛
երկուսն էլ Հավասարազոր են կամ մեկը զորեղ է մյուսով:

Առաջին տարբերակներում մինչև 1954 թ., պահպանվում էր
սիրած էակի Հանդեսը իրոք խոր զգացմունքի և անձնվեր սի-
րու գերակայությունը. սակայն այնուհետև աստիճանաբար
ծանրանում է Հայրենիքի սիրո նմարը. երևույթ, որ պոեմի
Հերոսը Հաղթահարում է ներքին բարդ երկվության ասուա-
պաղրին Հաղթահարումով: Հոգեբանական այս Հիմնախնդիրը,
որն անմիջաբար առնչվում է Հերոսի՝ Հայրենիքից երեք ան-
գամ բռնությունը վտարվելու և երեք անգամ Աբասը՝ այս-
ինքն՝ Հայրենի պարտադրված Հայ-թուրքական սահմանն անց-
նելու Հանդուգն արարքի Հետ, իրոք պահանջում է գեղար-
վեստական ու մտքգեղարված-հոգեբանական ծանրակշիռ Հիմնա-
վորում: Եվ այս անհրաժեշտության խոր գիտակցումով է Հ.
Շիրազը իրականացրել պոեմի վերջին լրամշակումները:

Պոեմի գրեթե բոլոր պոետներում, ինչպես վերն ասացինք,
առկա է Արևմտյան Հայաստանի անձնավորված կերպարը՝
որպես ապրող ու շնչող, Հեղինակի և մյուս Հերոսների Հետ
Հաճախ երկխոսության մեջ մտնող կենդանի և Հարապատ

գոյություն: Այդ կերպարն է մարմնավորում կորուսյալ գրախ-
տավայրի անկրկնելի գեղեցկությունը: Այս իմաստով Հ. Շիրա-
զը գրական ազգակցությունը շարունակել է Սիամանթո - Տեր-
յան - Չարենց գիրը: Ինչպես Սիամանթոյի «Հողին ձայնը»
բանաստեղծության մեջ ու ողջ «Հայրենի հրավեր» շարքում,
այնպես էլ Հ. Շիրազի պոեմում Հայրենի Հողը Հարազատ մոր
պես Հորդորում, կանչում է Հայության նոր սերունդներին, որ
զեն նետեն պանդխտության ցուպը, ազգահավաքով մայր
Հողի գրկից գան ու նրան տեր դառնան:

Իր ժողովրդի պես Հայրենազրկված, փտարանդի պատանու
գիմաց ահա խլված Հայրենիքն ու սիրած աղջիկն են: Սերն
իմաստավորվում է Հայրենիքով, Հայրենիքը՝ սիրով: Մեծ ու
գորեղ էին Հայ պատանու մեջ այդ կորուստները վերագործնե-
լու բուռն ձգտումն ու զգացմունքների չափը, որոնք անընդ-
հատ բորբոքվում են ծննդավայրի, մանկության ու պատանու-
թյան Հուշերով, Հայրենի գեղեցկությունների արժևորումով:
Բանաստեղծն այդ զգացմունքների ուժն ու չափը ցույց առա-
համար գիմել է արտահայտչական ամենատարբեր միջոցների
արժարժել է Հենց իր՝ Հեղինակային խոսքում, երկիրը գրախ-
տավայրի նպատակային նկարագրություններում ու անմրցելի
բնապատկերներում, Սիամանթոյի ու Խյնզարեի մենախոսու-
թյուններում ու մանավանդ պոեմի երգային Հատվածներում,
որոնք չեն իջնում ժողովրդի շուրթերից: Ահա գեղարվեստա-
կան այդ գերբխա պատկերներից մեկը, որի ստղերում գազա-
փարեներն ու նրանց ներդաշնակված զգացմունքներն իրենց
միասնությունը անստնու են բարձրագույն լարումի.

Լիժա ս"վ է ձեզ Համբուրում,

Մովսաթիս ծաղիկներ.

Ի՞նչ որսկան է ձեզ ցած բերում

Ի՞մ Սիվանի եղնիկներ:

Վանա ծովին կզուլ վրա.

Ինչպես թիւ տալիս մեջ.

Կա՞ մեր տանարն Այթմարաւ.

Ուր կաղտիքը մայրս խեղճ:

Ո՞վ է խմում Համբույրն Հիւս

Ապարանջան աղբյուրին.

Այթմարա վանքիս վրա

Կա՞ քոց թողած աղակիս:

Ո՞վ է նայում Վանս ծովիս.

Ափին Վանս, քույն կա՞.

Ա՛խ, Սիփանս ծաղկաւնովիս:

Գառներս կան՞ շուն կան՞:

Ո՞վ է ծողվում անտառներիս

Մեղրադալպե մանանան.

Փարսիները թուխ գառներիս

Իրենց տեղը կմնան...

Գնալով ահագնանում, անհաղթահարելի են դառնում Հայրենիքի սերն ու կարօտը, մանազանդ որ այնտեղ էր անորոշութեան ու անհուստութեան մատնելով սիրած աղջիկը՝ Խջեղարեն, որին Հարկաղբի պիտի ամուսնանցնենի Ազիզ բեկի հետ, որը, որպես դայան – գլխազին, խոտացել էր Հազար ոչխար՝ «Հազար զլուխ, Հազարն էլ թուխ, Հազարն էլ նոր ծնելիս»:

Տարիների թափառումների բնիացրում Հայրենիքից ու սիրածից զրկված պատանի Միամանթոյի մեջ կարծես խոտացել են Հայրենակարոտ Հայության զգացմունքները, նպատակներն ու ձգտումները: Հանախ էլ հեղինակն է միաձուլվում հերոսին իր Հայաստնչիկ ապրումներով (Կարծես ինձնից շատ էր կարոտ սար ու ձորին Հայրենի): Հերոսն տպիկ է առնականանում, մեափորժող այրական Հասակին Համապատասխան զորեղանում է նաև ժառոց ու քանականությունը, ազգային ինքնագիտակցությունն աստիճանաբար գերիշխում է զգացմունքներին: Իր կորուստները գիտակցելով՝ ապրում է ներքին բարդ

երկվութունն ու տառապանք, որի մեջ Հասուճանում, թրվում-ամբանում է նա թե՛ Փիղիկպապե, թե՛ բարոյապա: Ենթերին պատերազմը, թե ինչու ինքը, հայ լինելով, պիտի սիրահարվեր թնկուց կիսահայ – կիսաքրդուհի Խջեղարենին, չկա՞ր իրեն արժանի մի Հայուհի, ինչո՞ւ էր նահատազրական սերը չեղավ Այթմարա վանքի կույսերից մեկը, ու՞ր էր Հայոց աստված, որ չկանխեց նորածաղ բռնկիժող սերը, և ինչո՞ւ քրդի իտուզան Հաղթանակ տարավ...

Սերը՝ գերի, Հայրենիքը՝ գերի, ինքը՝ վտարանդի: Նման անելանելի իրավիճակում հերոսի համար ի՞նչ արժեք և իմաստ պիտի ունենար անսեր ու անհայրենիք կյանքը՝ անհույս վշտից ու դառնախոց հուշերից անընդհատ ասատեղացող տառապանքի մեջ.

Ու քիչ մնաց ինքնապան լինեք անդուս իր վշտից,
Երբ որ հեղեց վաղվիլը Վանս, Մուշի իր դառախց:
Երբ որ հիշեց ասավածատուր գաղպեն՝ երկնի ծանանս,
Երբ որ հիշեց իր Թոր ու ժոր գերեզմաններն Հառաչող,
Նարեկա վանքն ու Վարպանս ու Վանս ծովն՝ Հայ կանչող,
Երբ որ հիշեց իր ալխարհը, որ գերի է գեւ այնտեղ,
Երբ որ հիշեց այս ամենը՝ սունձը կտրեց խկաւհեղ,
Վանս ծովի տակին հիշեց, որ օտար է շամփրում, –
Եվ Հայրգի Միամանթոն պանդխտութեան շամփրում
Ինքնապան ուղեց լինելի, այս ամենը երբ հիշեց,
Հազար ու մի լուս հիշելով՝ գլխից իրավ մեւ քաւեց, –
Ինչո՞ւ օտար երկրում մեռնեմ, կորչեմ սնկից քարերում,
Ինքնապան կըլնեմ այնտեղ՝ իմ Սիփանս սարերում,
Այնտեղ, այնտեղ իմ պապերի Հողին պիտի խաւնվիմ,
Հորս, մորս գիրքը կերթամ թե որ բան է քուրքվիմ...

Այսպես թե այնպես՝ մահն է գերադասելի անիմաստ ու տանջալից կյանքից: Ուրեմն՝ այլընտրանք չկա. կամ մահ, կամ նպատակի իրագործում: Ահա ինչու է Միամանթոն յոթ տարվա թափառումներից հետո, երբ Հայրենիքն արդեն նրա գիտակցութեան մեջ դարձել էր գերազույն արժեք, գերմարդկային

ճիզեղով, աներեակայելի զգժտություններ Հաղթահարելով
անցնում է սահմանը, համարումս Մատիսի Հողն ու քարը.

Հողն Հացի պես բերանն առավ, ասես ծանց կարտով,
Հողին լցվեց վարդի, մեղրի, նուևուֆաթի սուրբ Հոտով...
Թվաց, թե մոր ստինքն առավ իր մանկացող շրթունքին,
Ասես լիւ չէր համբուրածը, ասես Հայր էր, Հոր ոգին:

Երեկ անՀավատայի էր թվում, այսօր՝ իրական: Այլ տես-
քով ու բովանդակությամբ է նրան այսօր երևում թողջքած
Արևմտյան Հայաստանը, արդեն ուրիշ խորհուրդ ունեն ման-
կության վայրերը՝ Բինդոյուն ու Վանա ծովը, Սիփանն ու Մո-
վսասը, Մուշն ու իր ծնողների շիրիմը պահող Արտամանը:
Այս ամենը իրականում տեսնելով՝ ցերեկները չար աչքերից
թաքնվող, գիշերները զեպի նպաստից պաշտող Միամանկուն մի
նոր երազ է տեսնում՝ Համայն Հայության երազը.

Ու պարուբեց խոր մի քնով քնի կարտ Հայորդին,
... Երազի մեջ ազգի և իր հարսանիքն էր իր չորսդին:
Գինին Վանա ծովով մեկ է, Հարբում է սարն էլ Սիփան,
Ինքը Հայոց Բաղավորն է, օ՛, սուրբ երազ Հայությամբ...
Ինքը Մատիսն է թամաղան հարսանիքում Հայ ազգի...
Բայց երբ վարթնեց Միամանկուն՝ կրծից մկանն իր բաղկիւ—
Ձէ՛, երազս կկատարվի, կկատարվի վաղ թե ուշ,
Անհարսանիք չենք մնալու, իմ թամաղա, Վան ու Մուշ...
... Բերանքսիվայր բնկավ Հողին՝ նախ լուսնադաշտն Համբուրեց,
Բերանի մեջ Հայրենի Հողն իր մոր կաթի պես բուրեց:
— Ա՛յ, Հայրենին ուրիշ բան է, իր քարից էլ կրանեմ,
Որ իմ Սիփան սաթերն Հասա՛ եղնիկիս էլ կհասնեմ:

Այսպես էր Հ. Շիրազը իմաստաբարում զերված Արևմտյան
Հայաստանը և պատմական անարդարությունը զատապար-
տելն ու Հայրենիքի ազատագրության համար մարտնչելը հա-
մարում բոլոր Հայորդիների սրբազան պարտքը:
Խնկարքի վիճակն էլ է հուսահատական: Նրա աղերսանք-
ները ոչինչ չարժեն քարսիրա Հոր Համար, բայց համառում է

Խնկարքն, դիմում ծայրահեղ միջոցների, որ կարողանա Հորը
համոզել Միամանկոյին ետ կանչելու համար.

... Համ սարին ես խել, Հայր իմ, համ էլ յարին ես խլում,
Գիրեզմանս եմ տեսնում Հայոց Վանա ծովի Հայելում...

Այսպես զգում ու մտածում և Հենց այս է քուրջ Հոր երե-
սին ասում Հայ մորից ծեղված ասնջահար Խնկարքն: Ու թեև
ներքին ու արտաքին այս բայում-կոնֆլիկտներն անբեղհաս
սրում են իրազրույթյունն ու շիկացնում լարվածությունը, գոր-
ծողությունների զարգացման բնիացքն աստիճանաբար գնում
է զեպի արամարանական հանգույցալուծում:

Յոթը տարի իր երկրից վոնդված և արդեն քսանամյա Մի-
ամանկուն վերջին հանդիպմանը ողջամիտ համբերությամբ կուլ
է տալիս անկուտրում համառությամբ Հոտորտացող Զարեհ բե-
կի խստությունները, սպառնալիքներն ու վիրավորանքները,
որովհետև ամեկտորեն չէր կամենում փոխադարձել ու վիրա-
վորել սիրած աշխկա քարսիրա Հորը՝ հուսալով մարդագիտու-
թյամբ զուլթ արթնացնել նրա մեջ: Սակայն Սիփանին տեք
գարձած խորամանկ քուրջ բեկն անզիջում էր, անզի տալով
միայն Միամանկոյի ուժի առջև՝ սիրալիք նենգությունը մոլո-
րեցնում է նրան ու նեղը զցուծ, և օրհասի մեջ Հայանված
պատանին սառյալ մահից փրկվում է միայն լուս աշխկու-
թյամբ: Նույն Զարեհ բեկի՝ Համո, Համո, Համո քուրջ խույմ-
ների, որոնց Հեռ նա վաղուց էր պիպերացել: Զարեհ բեկն էլ է
նկատում, որ իր ծառաները մի ձեռքով սուտ հարվածում,
մյուսով մթնում ճամփա են ցույց տալիս իրենց «Թայգաշ» Հայ
Հովվին: Նույն քուրջ Հովիվներն էլ Միամանկոյին օգնում են
հարսնառի ժամանակ Խնկարքին փախցնելու զրգալուծ:
Նրանք հավատարիմ են մնում իրենց երզմանը՝

Ախպերն փապոր սարյուրն է,
Երբ ծարավից պաղ շուրն է,
Թե թշնամիք վրա տան՝
Ախպոր թիկունքն ու թուրն է:

Յոթը գիշեր ու ցերեկ իր պես անհանգիստ ձիով վարզելով՝ Սիամանթոն Մովսեսից հասնում է Սիփան, հյուրընկալ բարի պառավից իմանում էջնվարիի հարսանիքի յուրը: Հանց պզտոր գինեգետ հոտոց մի հարսանիք, որի ափին երեք գիշեր ու ցերեկ «Սիամանթո» կանչող հարբ, սակայն, «մի ուսի էր գլխիկոր»: Իսկ առապագաների մեջ թրծված Սիամանթոն, որի գլխի համար բեկը հարյուր գառ էր խոտացել, առնականացել, հասունացել էր այնքան, որ բակական հերոսի պես պատրաստ էր զննական գործողությունների: Եվ պոսեի գեղարվեստական ուժի ցուցիչներից մեկն էլ հեղինակի իր հերոսին աշխարհի ճակատագրական գործողության համար նախապատրաստելն ու հասունացնելն է: Իսկապես, այլևս առաջվա հայեցող խնցճուկրակը չէ նա, այլ նպատակն իրագործելու պատրաստ, զննական մենակի գիտակցությունը մի հերոս համոզված, որ մեկին փրկելով կազատագրի նաև մյուսին: Նա ցուցաբերում է հանդուգն խելագարություն, կատարյալ հերոսական բնավորություն, որը ձևավորվել ու ամրացել էր տարիների ընթացքում: Պատկերվող էպիկական գործողությունների մեջ է ցուցադրվում նրա հերոսական բնավորությունը, մանավանդ գինեգետ քուրջ հարսանքավորների վրա միայնակ հարձակվելու դրվագում: «Իր Սասնա տան Կաթնաբլուրից ընդ խամ խալվի պես» Սիամանթոն հոգևրանդոնի պատրաստ է նույնիսկ գերմարդկային սիրանքների ու զոհողությունների: Այդպես էլ իր ազգային երազանքներն իրականություն դարձնելու համար պիտի հասունանար հայ երեսասարդությունը:

Իրագործվում է անկարելի թվացող նպատակը. Սիամանթոյի անակնկալ ու շանթանկուս հարվածներից ընկնում է հարսանուհի մահախուճապ խառնամբուրը, փեսա Ադրի բեկի սիրտը ահեց դատում է «մի կորեկի շափ», նրա եղբայրն անգամ հալով ճողոպրում է մաքում է յուսելով վրիժառություն իր սուտայնը՝ «Փայլն առյուծի հախից կգա միայն ճամփով ազվես»:

Գործողության բարձրակետում ձիավոր ու զինավառ, իր սիրտ գինը գիտակցող մուգեղնած Սիամանթոն իր տարերքի մեջ է.

Բայց սիրածին Սիամանթոն տեսավ թարքին ձեր բեկի,

ու կրծքի տակ սրտի զարկը թվոց հարված մի տեղի, ու մուգեղնեց Սիամանթոն, մահով բաղկե իր ճամփան, թուով խնց բեկի գրկից իր երազի աղչկան, ու ձախ ձեռքով գրկեց ամուր, աշով գարկեց թշնամուն, Ձգեց ձիու ոտների տակ ու խթանեց իր ձիուս, ու արժվի պես իր ազվանուն իր գրկին տաավ ու թուով, Երեք օրվա ճամփեն մի ասուն, մի զարկ ու մի շունչ արավ...

Պոսեի վերջնամասում էլ Հ. Շիրազը համատարիմ է մտացել ժողովրդական էյուսթին. նա ոչ միայն պահպանել է ավանդազրույցի վիպական կարևոր մանրամասները, այլև զբաղք ներկայացրել է իր բնկալուժով ու գեղարվեստական մեկնությունը.

Մաղկանց միջով, լեռանց լանջով, մուրալ ձիով անվեհեր Սիամանթոն սիրածն ասած կելնը Սիփան սարն ի վեր.

Կարծես սիրտ հափքածան ասածն մտա էր բարձրանում, Որ վերջապուճան իրբև ոսկի հարսնաքոլ էր ծածանում...

Բարու և չարի հավիտենական հակադրությունն այս անգամ էլ խորհրդանշվում է ալիտակ և սե զույներով: Ալիտակ ձիով Մովսեսից դեպի Սիփան սյացող հաղթանակած Սիամանթոյին հետապնդում էր «սև ձիավորն այն վայրի», որը «բարխոթ գտած սիրահարի ճակատագիրն էր պարան»:

Իրենց կարճատև վայելքի մեջ սիրահարները չեն էլ նկատում հետապնդողին, Սիփանի երանափետ բարձունքներում՝ «աղբյուրների կանաչ գլխին գարկած բախտավոր վրանում» մի համուրյով ցրում են «յոթ արտալ ծով ցավերը», ոչ միայն մոռանում են շարերին, այլև իրենց երջանկությունը ուզում են լցնել ամբողջ աշխարհն ու այն գարձնել սիրտ թագավորություն:

Գազանիք չէ, որ, որպես քնարերգու, զբական ազգակցությունը Հովհ. Շիրազն իր անմիջական նախորդներից ալիեի շատ Ավ. Իսահակյանի հետ էր կապված (սա առանձին բնությունն էլ), և բանաստեղծական մասնողությունն որոշակի նմանություններ նրանց ստեղծագործություններում պիտի գրանորվեն ոչ միայն ձեռագրավայրի ու բնաշխարհի, այլև աշ-

խորհայացքի և կենսափոխափայլության ընդհանրությունների ու ասմանտիկ խառնվածքի պատճառով: Հ. Շիրազի սիրահար Հերոսներն էլ Համբույրը այնպես են իմաստավորում, ինչպես Իսահակյանի քնարական Հերոսը «Ալազղազի մանրեր» պոեմում.

Էդ Համբույրը, որ ինձ սիրք,
Էնպես ան՛ըմեղո՛ւ էր,
Էզպես պտուղ ծառ ու ծաղիկ,
Մով ու ցամաք չի մնար:

Էդ Համբույրն մի Հաս էլ տո՛ւր՝
Տանիմ աշխարհս ման տամ,
Ինչքան դուր սրտեմ տեսնե՛մ
Տամ, Հոտն ստե՛ին, անուշնամ:

Աշխարհը գեղեցիկությամբ ու սիրով լցնելու, «զառը սրտերը» քաղցրացնելու նույն Համամարդկային ձգտումով էլ Հ. Շիրազի Հերոսներն են օժտված. նրանց սերն էլ է փթթում սարում Միփանի մեղրապղնձերում, և մեծարենցյան «անանձնական ուրախության» թելազրանքով՝ չեն զոհանում տարերևերով սպասված իրենց անձնական վայելքով.

Սաթի գիշեր, սիր՝ գիշեր, մեղրապղնձեր Միփանի,
Սիր՝ գիշեր, տաթի՛ դարձիր, Համբույրները մի՛ տանի,
Հովեր, Հովքեր, ծաղկո՛ւնք, ջրեր, ծայտեր, սառղեր, եղևիկներ,
Դու՛ւք էլ, զո՛ւք էլ Համբուրդիցեք, պսակվեցե՛ք այս գիշեր:
Ա՛յ, անուշնամ թող Համբույրով սիր՝ վշտերն ու աշխարհ.
Ու Հավիցեն սիր՝ բոցին, աշխարհն ստես էլ չկար,
Սաթի՛ գիշեր, սիր՝ գիշեր՝ ասողաշարը ճակատին,
Երազն ստամ, մուրազն ասամ՝ Հանգուսն սաթի գողաթին:

Որպես զաղափարագեղագիտական կարևոր ընդհանրացում տպավորիչ է դեռևս «Սասնա ծառ» էպոսից ու մեր ժողովրդական երգերից եկող ու Հայ ժողովրդին բնորոշ խաղաղ աշխատանքի ու երջանկության երազը, որ վերջին անգամ տեսնում է Միամանթոն սիրածի գրկում.

Սուրբ օշափի իր ծուխն ահա մինչև Միփան է Հասնում.
Ինքը սաթի Միամանթոն, իր որդեղ Հեռ պստանի,
Միփանի տակ՝ իր ծովափին, Հոզն է Հերկում Հայրենի.
... Գերանգի է սրում ահա Միամանթոն սրի տեղ,
Իր երազած սրան է Հնձում որդիներով նորաքեղ,
Վանա ծովի Հովն է երգում, ու Հովի պես անթթիլամ՝
Արտ է գալիս երջեղաբն, Հացն է բերում իր թխած
Եվ սրբում է Միամանթոն բրտինքն ահա ճակատից,
Մի՛ Հասկ փչում, շշնջում է. «Մեկին յաթն է իմ բախտից»:
Եվ առուն է սակեորվում, ու մեծ աղան իր փով
Հայ մի աղջիկ է փակցնում, գյուղը դարձնում գինու ծով...

Հայ մարդու բնականորեն գեղեցիկ երազանք, և դաժան ու կոպիտ իրականություն: «Մարդու բնույթը այնպիսին է, որ չի կարող առանց արհամարհանքի, առանց զգվածքի դիակն ուրիշի երջանկությունը»։ Մարդու ներքին աղմուկն ու աննպատակ շարունակը խաթաղանոց չեքսպիրյան այս իմաստախոսությունն անգամ, այնուամենայնիվ, մարդկային քաղաքակրթի Հարաբերությունների արտահայտությունն է: Քուրդ բեկն ու նրա «սուտ որս փնտրող» զարանակալ եղբայրը շատ էին Հեռու այս մասնադուրբույնին: «Որական գաբիտոլ որս» վերափոք ցույլի Հարվածի Հեռ Միամանթոյին «ժայռի ետև թաքնված» նեոահարող բեկը երբոր արյան վրեժից բացի ուներ նաև «չույսի կտոր» երջեղաբնի տիրանալու մարմաշը: Նա է բնութայն Հեռ միտանի մահացու խոցանոց սիրածի Համար երջեղաբնի ողբի միակ ունկնդիրը, որ նրան առաջարկում է իր կինը զստնայ: Երջեղաբն, սակայն, գերազասում է սիրածի գրկում մեռնելը և «աչքը բաց» անզուկն է նետվում, «ժայռին փլվող ալքի պես» փչրում ժառաղ կուրծքը, ու Միամանթոյի Հեռ «սիրտը սրտի լուռ Հանգան»:

«Համով— Հոտով»-ի ավանդազրույցում սիրահարների եղբրական վախճանը գրեթե նույն կերպ է պատկերված: Իրենց սիրո երգածանը Հավասարի՛մ սիրահարները թե՛ զրույցում, թե՛ պոեմում վերջին շնչով միմյանց անունն են Հաղիվ արտա-

ստեռւմ: Ավանդագրույցում կարգում ենք մեռնող Միաման-
գոյի և սգացող Խընկարների սրտաբուխ ողբերգը:

– Մի՛ լար, իմ Խընկարս, մի՛ լար...

Քու լացը ինձի ավելի ցամ է... մի լար...

...Միամանդ, ինձ ճամփա մի սուր բովզ զպու,

Ճամփա մը ցույց տուր, դամ քեզի Շես Հոգի առու:

Փայտատ ու թի բերք, բերք պղտը ու զընաբներ շրջեցիք,

Խընկարսն ու Միամանդն մեկտեղ քարերուն տակ թաղեցիք...

Այս կրսն ու աչքը կը խրվի,

Ջրնրն՝ ի վայր կը Հոս, մեկ անգամ միայն կ'ավաղե.

– Ի՛մ Միամանդ...

եվ Միամանդն Հաղիվ արձապանք մը կը աս.

– Ի՛մ Խընկարս...

եվ երկոքյանն մեկանց կը լռեն...

Կը մեռնին...

Հոն են...¹¹⁵

Բանաստեղծին, սակայն, չէր կարող բավարարել ավանդա-
գրույցի այս «չեզոք» ավարտը, քանի որ պոեմի Միամանթոն
Հայրենիք էր գնացել նախ իր սիրածով երջանկանալու, իսկ
Հահառակի դեպքում, ինչպես վերը տեսանք, գոնե Հայրենի Հո-
գում ինքնասպան լինելու և այնտեղ թաղվելու նպատակով:
«Անսպասի բերանն ընկած երկու կաթիլ ջրի պես» կորած սի-
րահարերի վախճանն այսպես է պատկերել Հ. Շիրազը.

Կանչեց Խընն ու աչքը բաց նեւովց ձորը դիլիվայր...

Փայտին փշվող ալիքի պես նաղուկ կուրծքը փշվից:

– Ախ, ի՛նչ արիւր, – վերջին շնչով Միամանթոն ձայն տվեց:

Ու Հեծենց Խընկարսն վերջին շնչով իր անձայն.

– Միամանթո, – ու փշրված՝ սիրտը սրտի լուռ Հանգան:

Վերջին անգամ Հոգն Հեծենցը սասն շուռնջ էր սողայի.

– Խընկարս՛ն... – ու Հաղիտյան լռեց անդուեղն ամայի

¹¹⁵ Գ. Մովսեսյան, 624, գիրք, էջ 506-507:

Սրիան սարի Հաղիթավախ Հոնքերի տակ Հայրական
Ու մայրական մըռունջի տակ Վանա ծովի տիրամայն:

Մովսեսյանցի գրառած գրույցում չկան ընդգծված վերջին
երկու տողերը, որտեղ էական են Հ. Շիրազի գաղափարական
նպատակագրման տեսանկյունից: Այդ տողերով է արտահայտ-
վում Հեղինակի, ինչպես նաև մայր բնության ու Հայրենիքի
վերաբերմունքը կորցրած զավակների նկատմամբ:

Գոեմի վերջերգ-ամփոփումը գարձի պտեղծված է ժող-
գրական ավանդագրույցի մշակումով: Գ. Մովսեսյանցի գը-
րառման մեջ կարգում ենք. – «Ավանդութունը կ'ըսե, այն տե-
ղը երկու ծաղիկներ կը բուսնին՝ Համանման, և երկու թիթեռ-
նիկներ կուզան կը թռտին ու կըթրվաբան այդ խորհրդավոր
ծաղիկանց շուրջն ու վրան»¹¹⁶:

Ահամա հիշում ես Հ. Թումանյանի «Փարվանա» բալլադի
կարիճներին, որ թե՛ են առել ու թիթեռ դարձել...

Սակայն Շիրազն իր պոեմի վերջերջն ստեղծելիս «սիրտ
սուրբ ճամփի կեանք ընկած» սիրահարների ողբերգութունն
ընդգծող Համապատասխան ավարտ է ընտրել: պահպանելով
ավանդագրույցի երկու ծաղիկների մասին ակնարկը, կենտրո-
նացել է «Իրենք կարմիր, սրտենքը սև՝ իրենց էն սև բախտի
պես» կակաչների վրա և չի անդրադարձնել նրանց «շուրջն ու
վրան» թուփացող թիթեռնիկներին՝ իր մշակմանը Հաղորդելով
միանգամայն այլ խորհուրդ և բովանդակություն, որը բխում
է պոեմի ամբողջ ընթացքից: Ահա այդ վերջերգը.

Բայց այն ձորում ամեն տարի, ամեն գարնան բացվելուն

երկու ծաղիկ են Հայտնվում՝ երկու կակաչ տրտմունք:

Ասում են, թե չկար երկրում ոչ մի ծաղիկ՝ սիրտը սև.

Այն օրվանից աշխարհ եկան կակաչները սրտատև,

Երբ որ Խընն, Միամանթոն ընկան սիրո կես ճամփին,

Ընկան, Հանգան, բայց սուրբ սիրուց աշխարհ եկան վերտախ

¹¹⁶ Լուսն տեղում, էջ 507:

Աշխարհ եկան կազալ գառած, որ բացվում են դու աչսպես
Իրենք կարծիր, սրաները սև՝ իրենց էն սև բախտի պես:

Ահա ինչու շուտ են թափվում նուրբ թերթիքը կակաչի,
Շատ վիշտ տեսած՝ շուտ են թափվում՝ Հենց որ մի չար մեք
դիպչի:

Բայց թերթիկով գլուխի գլխի՝ Հավերժ իրար են նայում,
Մահվան մեջ էլ Հավերժ սիրով Հավերժ իրար փայտայում...

Ինչպես տեսնում ենք, պոեմի վերջերգում ազգային-Հայրենասիրական բնույթի ակնարկ կամ որևէ հիշեցում անգամ չկա: Եվ չպիտի լինեն, որովհետև բուն պոեմում հերոսը և հանախ նրա հետ նույնացող հեղինակը ազատ էին սիրո և Հայրենիքի, մեր ժողովրդի ճակատագրի մասին իրենց նվիրական խոհերն ու զգացմունքները գրեևորելիս արտահայտվել էին ոչ թե շատ կամ քիչ, այլ այնքան, որքան հեղինակը հարմար էր գտել:

Վերջերգը վերստին հաստատում է, որ պոեմն իր ամբողջությամբ մեջ մարդկային ամենազեղեցիկ զգացմունքը՝ սիրը և նրա հավերժությունը փառարանող կատարյալ հիմներդ է՝ գաղտնիքային ազնիվ ու առողջ, պատկերավորությամբ չքեղ, զեղարվեստական գյուտերով հարուստ, պատմաճանաչողական նշանակությամբ ու ազգային-Հայրենասիրական գաստիրարակության իմաստով բացառիկ մի երկ, Հայ բանաստեղծական խոսքի բարձրագույն նվաճումներից մեկը:

ՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԷ

ԲԻԲԼԻԱԿԱՆ

ՀՆՉԱՌՈՒԹՅԱՄԲ

«ԱՄՅՐ» «ԲԻՐԱԿԱՆՆԸ»

Հովհ. Շիրազը 1940-ական թվականներ էր թեև ակոխում արդեն ակնառու մեղքերումներով. ստեղծագործական աճն ու հասունացումը ինչպես բանաստեղծության տարբեր տեսակներում, պոեմի ժանրում էլ արձանագործ էր նորանոր հաջողություններ ու թափփրեր: Դրանցից հզորագույնը 1942 թ. կերտված «Բիրլիական» խոհանարարական սրանչելի պոեմն էր, որը սպազորվեց երկու տարի անց՝ 1944-ին, և բաղձապատկեց նրա հեղինակի բանաստեղծական հասկը: Բոլոր հանձարեղ գործերի նման՝ այս պոեմն էլ միանշանակ ընդունելություն չարժանացավ. ժամանակի մեծերի անփերապահ հիացական գնահատականների կողքին հայտնվեցին աղքատիմաց չարամիտների թեր և դեմ կարծիքները: «Մեր է տանում մեզ Շիրազը յուր բիրլիականներով. ստալինյան լուսավոր իրականությունը թողած՝ աստղերի մեջ է կյանք որոնում»- և բացահայտ նենդ համախոսականը, որն ըստ էության քաղաքական ծանր մեղադրանք էր, ստորագրել էին 26 գրող ու քննադատ: 1976 թ. ՀԳՄ 7-րդ համագումարում, որին ներկա էին ստորագրածներին շատերը¹¹⁷, իր կույթում Հ. Շիրազը ցավով հիշեց և հիշեցրեց այդ դեպքը՝ արձամուրթին հայտարարելով, թե «Ե՛ս եմ առաջին տիեզերագնացը, որովհետև մեր Գաղափրիներն իմ հետևից եկան...»:

Իսկ Երևանի պետական համալսարանում նրա հիմնադիր դասախոսներից մեկի՝ բանաստեղծ ու փիլիսոփա և Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսական» պոեմները հին հունարեն բնագրից թարգմանած Համազասպ Համբարձումյանի ծնեղյան 100-ամյակի տոնակատարությունից օրը, որին ներկա էր և հորելյարի որդին՝ դժգոհին ժամանակներում պոեմը բարձր գնահատ

¹¹⁷ Գ. Շիրազը նրանց անունները չսփռեց, շայն ասաց. - էստեղ նստած եմ. եք անուններդ տա՛մ, կենանքի գարնամայի՛ն այս պայծառ օրը բաց պատահաններից ազատվե՛ր ու զնշանգվե՛ր ներս մտնե՛ն...

տած ու հեղինակին պաշտպան կանդնած աշխարհահռչակ աստղագետ Վրկյուրը Համբարձումյանը, նա դարձյալ հիշեց տանեամյակների առաջ կատարված չարարատիկ այդ զեպքը:

«- Կարդացի և թերթը մեղքիս լացակումած գնացի Ավետիք Իսահակյանի մոտ, - ասաց Շիրազը և լեկուիցու՛ն դահլիճի առաջ բացեց մի փակագրիժ.

- Վարպե՛տ, տե՛ս՝ ի՛նչ են գրել և ստորագրել 26 հոգով:
Կարդաց Իսահակյանը, դառը ժպտաց և ինձ հանդարտեցնելու համար ասաց.

- Մի՛ նեղվիր, Օննիկ գրանք ոչ միայն 26 հոգի են, այլև 26 ատամանի:

Ես էլ ապուշ-ապուշ հարցրի.
- Բայց Վարպե՛տ, չէ՞ որ մարդը 32 ատամ ունի:
- Այո՛, 32 ատամ ունի մարդը, - հաստ-հաստ ու հատակ ասաց Իսահակյանը, - իսկ գրանք մարդ չեն, չուն են. իմացիր, չենքը 26 ատամ ունենա:

Այս է եղել «Բիրլիականի» գառնացած հեղինակի միակ սփոփանքը: Վ. Համբարձումյանը տեղյակ էր այդ պատմությանը և հաստատեց բանաստեղծի խոսքը:

Ստեղծագործական Հզոր վերելք ապրող Հ. Շիրազի հանձարի Հզոր բռնկումներից էին աստվածաշնչյան թեմաների վերարժարձումներով ստեղծված այն պոեմները, որոնք նա վերջին հրատարակությունից 2-րդ հատորի մեկ բաժնում ներկայացրեց «Բիրլիականներ» ընդհանուր խորագրով: Ինչպես բանաստեղծական շարքում, պատմվածաշարում կամ վիպաշարում միավորվում են ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեցող, բայց բովանդակային ու գեղարվեստական որոշակի ընդհանրություններով օժտված միավորներ, այդպես էլ Հ. Շիրազը նպատակահարմար է գտել իր ութ պոեմները գետեղել մեկ ժբերի մեջ: Ահա դրանց ցանկը՝ «Բիրլիական», ««Բիրլիական»-ի վերջարանը», ««Բիրլիական-ի» երկրորդ արարչականը», «Աստուռ գլխուխործոցը», «Ինքննրգանք համամարդկային», «Ջևսի մաղիկը», «Սիրո և իմաստություն սրինգը», «Շղթայված մեղեգիներ»:

Հեղինակն այս պոեմները մի բաժնում համախմբելու իրա-
վունք, պատճառ և նպատակ անշուշտ ունեցել է: Ամենից ա-
ռաջ այդ պոեմները կարող էին միտարթել թեմատիկ – զագա-
փարական և զեղարքիստական այլ հասկանիչների ընդհան-
րության հիմքով, և Հովհ. Երրազը պնդում էր, թե կրթանք
բոլորն էլ «Բիրլիականի» զարմից են: Եթե Հեղինակային այս
պնդումն անվերապահ չընդունենք էլ, նրանում կա ճշմար-
տության մեծ բաժին: Թեև այդ պոեմներին ոչ բոլորն են անմի-
ջաբար առնչվում աստվածաշնչյան թեմատիկային, ինչպես, ա-
սենք, «Ջևեի ծաղիկը», «Սիրո և իմաստության սրինգը» կամ
«Շղթվաված մեղեդիները», սակայն դրանք բոլորն էլ, ի վերջո,
մարդու բնույթի և հույժյան, մարդկային և աստվածայինի,
ազգերի և ցեղերի հարաբերակցության, մարդու և բնության,
մարդու և կենդանական աշխարհի, մարդու և տիեզերական ա-
ռեղծվածների բազմատեսակ առնչությունների շուրջ բանա-
ստեղծական ու փիլիսոփայական խոհերի՝ միմիայն Հովհ. Եր-
րազի պատկերավոր մատածրվյալը բնորոշ գեղարվեստական
բացատրիկ դրսևորումներ են:

Նախ՝ 1942 թ. գրվել է, պայմանական ասած, «մայր» «Բիր-
լիականը» (այգվել 1944-ին), մյուս՝ անանցյալ պոեմները, հետո
են գրվել: Սակայն Հեղինակը, ըստ երևույթին, մի որոշ ժամա-
նակ է համակերպվելով *Библейская – Бирлиական* վերնագրին¹²⁵,
որը հրատարակություններ վերադարձել էր «Պոեմ անխորա-
գիր» (1954), իսկ արդեն «Քնար Հայաստանի» I-ին գրքում
(1958) և հետագա հատորներում վերականգնել է նախկին
վերնագիրը: Ի զեպ, մայր «Բիրլիական» պոեմը Հ. Երրազի այն
ստեղծագործություններից է, որ գրվել է մեկ թափով ու շնչով
և հետագայում Հեղինակային փոփոխությունների գրեթե չի
ենթարկվել:

¹²⁵ Այդ բանը արժեստական նկատմանով արգելված էր: Նույն պատճառով էր, որ 1946
թ. գրված «Սատու զլիգործող» պոեմը երկար ժամանակ թի տպագրվում: Այն որչափ
փոփոխումները հետո առաքել անցան հրատարակվեց «Քնար Հայաստանի» գրքի 2-րդ
հատորում «Բնության գլուխգործոց» խորագրով – Ս. Ս.:

«Բիրլիականի» թեմայի առնչությամբ Հեղինակն իրականում
ուներ պոեմում չգրեկորված բազմաչերտ ասելիք, և նա, բարե-
բախտաբար, մայր պոեմի կառույցը չի խախտել՝ նրա վրա հա-
վելումներ անելով, այլ Հավելյալ ասելիքն արտահայտել է մայր
«Բիրլիականին» անանցյալ, բայց նրան պորտապարով կապված
մյուս պոեմներում:

«Բիրլիականները» կարող էին ստեղծվել միայն այն Հեղի-
նակի գրչով, որը Աստվածաշնչի, Անտիկ աշխարհի իմաստա-
սերների Լուկրեցիոս Կարի «Իրերի բնությունը» փիլիսոփա-
յական հայտնի պոեմի Հեղինակի, Հերակլիտի, Թալեսի, Պյա-
տանի, Արիստոտելի, միջնադարի Երբակացու, Ջորգանո Բրու-
նայի, Գալիլեյի ու Կոպերնիկոսի, նոր ժամանակների փիլիսո-
փայական ուսմունքների, բանաստեղծական նվաճումների՝
Նարեկացու, Գյոթիեի, Հայնեի, Բայրոնի, Պուշկինի, Թունանյա-
նի ստեղծագործական փորձի յուրացմամբ հանդերձ ուներ խոր
կենսազգացողություն, ստեղծագործական հզոր երևակայու-
թյուն, մտքի անկասելի թռիչքներ, բնական երևույթների ան-
փրեպ հանաչողություն, զբանց անձնավորման ու իմաստա-
վորման բացատրիկ ձիրք: Նրա ձիրքի այս առանձնահատուկ-
յունները խորապես բերումում ու գնահատում էր ավագ գրչեղ-
բայր Ավ. Իսահայանը. «Երբազը հոյակապ դեմք է մեր
պոեզիայի Պառնասում, հորգարտի ու ճշմարիտ բանաստեղծ:
Նրա ամեն մի բանաստեղծությունը մի անըրկնելի գլուխ է՝
զարմանալի պատկերներով: Բնությունը նրան օժտել է փիլի-
սոփայական խոր ինտուիցիայով: Համաշխարհային զբաղման
գոհարներ կեն կազմվեն, նա մեծ սիրով տեղ կտայի «Էքստ-
րոմպտին», «Բիրլիականին» և այլ բանաստեղծու-
թյունների: «Բիրլիականը» փիլիսոփայական մեծ տաղանդի գործ է:

Յորթմաստ «Բիրլիականի», ծաղկարտի «Ենկզարեի» և
մյուս պոեմների կախարհ Հեղինակը հետևողականորեն ամե-
նամեն հայ լիրիկն է: Հ. Երրազը հայ ժողովրդի վշտի զարավոր
մատախուղից ծաղած աստղն է (ենք չմազած ասող էիր
մատախուղում երգի): «Բիրլիական» պոեմը գրված է
վայրենի տաղանդով:

Վարդանի այս գնահատականը բնավ էլ չափազանցություն կամ պատահական ոգևորություն արդյունք չէր: Սա, ինչպես նաև Հայրենի և օտար զորքների ու մտավորականների (Առի Արազոն, Բողզան Գեմբարակի, Գիեռ Գարաֆ, Նիկոլայ Տիխոնով, ԱՀճնդ Շամյուն, Նիգոր Խալիլ, Գուրգեն Մահարի, Վիկտոր Համբարձումյան, Մահմուդ Ալի Սալիդ, Մորիս Փոցխիշվիլի, Մարիտա Շահինյան, Վիլյամ Սարոյան, Դերենիկ Դեմիրճյան, Յանա Շարոբլ, Ս. Գալաթ, Լևոն – Ջավին Սյուրենյան, Սուրեն Ազարաբյան, Հրանտ Փամբազյան, Համո Սահյան, Վահագն Դավթյան Մ. Օչին և շատ ուրիշներ) բազմաթիվ շնորհակցական գնահատականները, տարագրի մտավորականների ու մեր ժողովրդի իր հանդեպ պաշտամունքի հասնող սերը Հովհ. Շիրազը նվաճել է իր ինքնատիպ ու բարձրարժեք, համաժողովրդային հարուստ բովանդակությամբ առիցուն ստեղծագործությամբ, որը խորհրդային տասնամյակներում մեր ժողովրդի ստեղծած ամենաբարձր և անգնահատելի ազգային ու համամարդկային արժեքներից է: Եվ եթե նրանց գնահատումների մեջ չափազանցություն կ'ուր, ապա, կրկնենք Գ. Մահարուն, իրենք մեղավոր չեն, Շիրազի ստեղծագործությունն է այդպիսին:

Ընդ որում, առաջին «Բիրյուականի» մասին հասարակագետների, գրողների և այլ արվեստագետների, ստեղծ Ավ. Խահակյանի, Մարիտա Շահինյանի, Սերո Խանդազյանի, Բողզան Գեմբարակու, Մորիս Փոցխիշվիլու և այլոց բարձր արժեքումների կողքին առկա էր նաև բնագետների անվերապահ հեացական գնահատությունը: «Բիրյուականն» Ավ. Խահակյանը կարող էր որակել որպես «կոսմոսական տարերք ունեցող» և «փիլիսոփայական մեծ ազդանդի գործ»՝ զրված «վայրի տաղանդով», պարսիկ բնագառ ԱՀճնդ Շամյունը՝ «Հայ ժողովրդի Հոգու ճիշդ, մուռնը», պոեմի լեզ թարգմանիչ Բողզան Գեմբարակին էլ Հայաստեք, թե «Միայն մեծ վշտից հառնած ազգի զավակը կարող էր երկնել «Բիրյուականը», կամ Ֆրանսիացի բնագառ Գիեռ Գարաֆը, նրանցից բուրբուրվի անկախ, բարձրամայնել, թե «Հ. Շիրազի «Բիրյուական» պոեմի

մեջ վերանմուծ, շքեղանում է հայ ժողովրդի հանճարը իր անբողջական արեղերական գործությամբ: Հոգին շնչավորվում է: Նշմարվում և հայտնվում է երգի ընթացքի սուկ թելը, որ «Բիրյուական» պոեմը միացնում է Վիկտոր Հյուգոյի «Հնդկական մոգեր» պոեմին և Գյուլթագրի «Լուսերեցիտան», մեծ խորհրդագետներին: Ջնոսանամ նշել այդ պոեմի հունական փիլիսոփայական արժեքը»:

Այսպես մտածել է Ֆրանսիացին, որը քիչ տեղեկություններ է ունեցել Հայություն ու Հայաստանի մասին: Բայց Հայրենական պատերազմից հաղթանակով նոր վերազարթած, դաժանություններ ու փորձություններ հաղթահարած զինվոր Սերո Խանդազյանը վկայել է, թե ինչ ներգործություն է ունեցել Հովհ. Շիրազի «Բիրյուականը» իր և սերնդակիցների վրա.

«-Բիրյուականը» զարագուր կազմող գործ է: Համաշխարհային պոեզիայի մեջ, իմ համոզմամբ, այդ գործը շատ քիչ համարժեքներ ունի: Հայրենական պատերազմից վերադառնալով հանդիպեցի բանաստեղծական փոթորկի. հանճարեղի հանճարեղ գործը տպագրվել էր 1944 թվականին: Եվ երբ կարգացի զինվորիս կրակված, նաև հաղթանակած սրտով, վերազարձա դեպի լիարժեք կյանքը՝ անձուն բերկրանք զգալով: Դա հանդիպում էր նոր նարեկացու, նոր Արոյանի, նոր Դանթեի, նոր Լերմոնտովի, նոր Գյոթեի ոգու հետ: «Բիրյուականը» աշխարհաստեղծման նոր Ատոմածառուն է: Տնցված էր: Շիրազը աներևույթ աստուծո հրեւույթ է գործնել, իջեցրել երկնքի խորթ հնուններից... Այստեղ պիտանին ու հարկավոր մարդ է, մարդու հաղթանակը «անհայտ ոգու» նկատմամբ»¹⁷⁹:

Այս կարգի գնահատումներն ինքնին հասկանալի են. Հայ թե այլազգի՝ նրանք գրողներ են, գրական մարդիկ ու մտավորականներ, որոնց խոսքերը, ինչպես և Ս. Սողոմոնյանի, Ս. Ազարաբյանի ու Հ. Քամբազյանի, բոլոր դեպքերում մասնազրկական գնահատականներ են:

¹⁷⁹ Յ. Դովնաթուի «Շիրազը երկնայն պարզ է. նրա զիլն է մեր պոեզիայի բազմազրկ Սերո Խանդազյանի հետ. Չուլյան, Եր., 1992, էջ 94:

Բայց այդ պոեմում ի՞նչ պիտի տեսած ու զգացած լինե՞ր աշխարհահաշտակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը՝ գեղարվեստական այդ երկի մասին այսպես արտահայտվելու համար: «Շիրազի «Բիրլիական» պոեմը Հայ գրականության մեջ անսովոր երևույթ է, մատերիալիստական փիլիսոփայական իմաստով չափազանց խորը, նա միաժամանակ ունի բարձր գեղարվեստական գրվածքի բոլոր արժանիքները: Շիրազին բնորոշ պատկերների թարմությունը և օրիգինալությունը պահպանվում են այս պոեմում, այդպիսի զուգակցում են նաև Համբարձումյանների, անսպասելի հակադրությունների Հետ: Շիրազը մեր սրտից է խոսում, ինչքան ազգային, այնքան Համարդկային է նա: «Բիրլիականից» ես գեղազիտական մեծ հանույք ստացա»¹²⁰ (ընդգծ. — Ս. Մ.), — գրել է նա:

Հետագայում «Հարցազրույց իմ և իմ մեջև» գրվածքում Հ. Շիրազը վերահաստատել է ոչ միայն ժամանակի երկու մեծությունների՝ Ավ. Իսահակյանի և Վ. Համբարձումյանի խաղացած փնտական դերը պոեմի տպագրության հարցում, այլև այն, որ նրանք խոսեն ու փոսնդավոր ժամանակներում եղել են Հեղինակի և նրա պոեմի ջերմ պաշտպանները ընդդեմ միտումնազոր ու շարժման քննադատության: Իր իսկ առաջադրած «Ի՞նչ աչքով էր նայում Իսահակյանը, երբ «Բիրլիական» պոեմը կրակի տակ էր առնելու այն օրերին» հարցին Հովհ. Շիրազն ինքն էլ պատասխանել է. « — Լավ Հարց տվիր: Այն աչքով, ինչ վարպետ մարդու աչքն է լինում: Այժմ տեղ չէի կարող տպագրել, նույնիսկ գրական ամսագրում: Խոյի բերանում վազրի ժանիք էին որոնում, երկի, աչքի սպիտակուցը սպիտակ ժանիք էր թվում, վասնզի չէին խորանում պոեմի սրտի մեջ:

Բայց վարպետ պաշտպան կանգնեց: Խղճիս բերանը չեմ կարող գոցել: Վիկտոր Համբարձումյանն էլ պոեմի ամպ ու թուխվել մեջ աստղեր տեսավ և միացավ Իսահակյանին: Եվ զույգ հակառակ ուսերի սանդուղքով պոեմը բարձրացավ դեպի

ժողովուրդը: Այսպիսով, Հեղեղի վրա գերան զգվեց, և պոեմն անցավ հույսի ափը:

— Եվ զարմանալիս այն է, որ ինչ երկի Փարիզում («Լեկթր ֆրանսեզ» շարաթաթերթում) հայտնի գրականագետ Պիեռ Պարսֆը գրեց, նույն կարծիքն է, ինչ Իսահակյանը գրեց քսան տարի առաջ:

Իսկապես, մեծերի հաշվը դժվար է խոստովում ժամանակի այլերևիք վայրիկերումների մեջ: Որքան Հիշում եմ նույնիսկ պատկերային միախոսք անմանություն կա...»¹²¹ (ընդգծ. — Ս. Մ.):

Այսօր հազիվ թե գտնվի մի շարժման, որ այս կարծիքների մեջ փորձի կողմնակալության հետքեր որոնել. Հովհ. Շիրազի պոեմն իսկապես ունի մատենաչափ գեղարվեստական արժանավորությունները: Դեռ ավելին, բանաստեղծն իր այս պոեմում համարել է գիտաանալոգիական ու գեղարվեստականը, ստեղծել բնութային օրենքների, ինքնակա նյութի շարժման ու զարգացման դիալեկտիկայի, Աստուծոց հզոր՝ չեղած հրաշքներ սրարող մարդու վերընթացի գեղարվեստական պատուժը, դրանով իսկ դարձել իմացական բանաստեղծության ամբողջի վարպետը Հայ գրականության մեջ՝ դրսևորելով մտքի տիեզերական անկասելի թռիչքներն ու զգացմունքային անհատակ խորությունները գեղարվեստական պատկերում ներդաշնակ արտահայտելու միայն իրեն յուրահատուկ քայտաիկ հմտություն: Դա Հենց այդ բնորոշ բանաստեղծի ոճի գլխավոր յուրահատուկությունն է, նրա ինքնատիպության և հզոր անհատականության գլխավոր Հայտանիշը:

Պոեմը ժամանակին իսկապես արժանացել է բուռն քննադատության: «Ես այսօրվա պես Հիշում եմ այն արտասովոր ընդունելությունը, որին արժանացավ պոեմը, — գրել է Հր. թաճարյանը: — Արտաբուստ կարող էր տարօրինակ թվալ ընթերցողներին և գրական մարդկանց ոչևորությունը: «Բիրլիականը» իր նյութով և տարազով կարծես մի ժամանակափոքր երևույթ էր այն օրերին, երբ ժողովուրդը սրտուն էր ապիտ պատերազմի

¹²⁰ Տես այս կարծիքները Գ. Շիրազ, Երկեր, հ. 2, եր., 1962, էջ 341 — 349:

¹²¹ Գ. Շիրազ, Սի փետուր իմ սրտիկ կանթեց, եր., 1984, էջ 52:

զաշուում, անհուն տառապանքով պահում Հոգի ու Հայրենիքը: Այստեղ, — շարունակում է նա, — մենք կրկին դեմ ենք առնում մի գաղտնիքի: Ի՞նչն էր կապում «Բիրլինականը» ժամանակից Հոգեբանություն հետ: Ի՞նչ մի քանակ պահի շեղում էր, թե՛ ժամանակի օրինաչափ ծնունդ: Ընթերցողը այս անգամ ավելի նրբանկատ էր, քան իննադասը, նա թափանցում էր բիրլինական տարալից ներս՝ կապվելով պոեմի տարբերքի և բուն փիլիսոփայության հետ»¹²² (ընդդժ. — Ս. Մ.):

Հովհ. Շիրազի ստեղծագործության անդրադարձած բարյացակամ գրականագետներն ու քննադատները՝ Ս. Սողոմոնյան, Հր. Թամրազյան, Ս. Աղաբաբյան և ուրիշներ, ջանացել են մտանանշել նաև պոեմի գեղարվեստական արժանավորությունները, կատարել են ուղեւնշային դիտումներ, սակայն, ցածր, «Բիրլինականին» Հայանցիկ են անդրադարձել. փորձել են Հովհ. Շիրազի գրական ժառանգության Հանապատկերում այդ պոեմն ընդհանուր գծերով արժևորել որպես ստեղծագործական բարձրագույն նվաճում: Նրանք բոլորն էլ արդարացի գծող-հույսեր են Հայասնել պոեմի Հանդեպ ժամանակի քննադատության միտողական վերաբերմունքից, անգամ ուշացումով գերինդիր են Համարել արդարացին Հովհ. Շիրազին և դատապարտել պոեմում նրա Հայեցակետը իդեալիստական ու կրոնամիստիկական Համարած քննադատներին: Ահա ինչպես է Ս. Սողոմոնյանը Հարկազրկած եղել գիտական անթերիքի և գիտական կոմունիզմի Հաղթարշավի ժամանակներում փորձել պաշտպանել քանաստեղծին: «Բիրլինականը» ժամանակին սուր վեճերի առարկա էր դարձել. փիլիսոփայության մարզի աշխատողները նույնպես կրթատ ելույթներ են ունեցել: Կարելի է ասել սա Շիրազի ամենից շատ քննադատված և, զժամատարար, ամենից քիչ գնահատված գրվածքն է: Բննադատողները «Բիրլինականում» միստիկական գծեր են տեսել, ուրիշ լուրջ թիրու-թյուններ են նշել: Ամենից աններելի մեղքը Համարել են իդեալիստական կոնցեպցիան, երևի նկատի ունենալով պոեմի

սկզբը... Դասել են, որ սյուժեառային զարգացման Հիմքում ընկած աշխարհն արարող անհայտ ոգին այլ բան չէ, քան եթե իդեալիստական մտածողության եղանակ, ըստ որի առարկայական աշխարհը զուրկ է ինքնուրույն գոյությունից, Հիմնականն ու նախապայմանական ոգին է»: Շարունակելով այս «գաղտնապաշտպանական» մի քիչ էլ վարանոտ փաստարանությունը՝ գրականագետն այնուհետև եզրակացրել է. «...կարելի է աներկայություն ասել, որ սա Շիրազի, եթե կարելի է այսպես ասել, ամենամտերիակալիստական գրվածքն է: Աշխարհն արարող անհայտ ոգին, որով սկսվում է պոեմը, նախնական շրջանի պրիմիտիվ գիտակցության պոետական պատկերն է և ոչ թե Հեղինակի տեսակետը»¹²³ (ընդդժ. — Ս. Մ., ամենամտերիակալիստական բառի ընդգծումը Ս. Սողոմոնյանին է):

Հիշյալ գրականագետների ընդունելի այդ բնութագրումները, սակայն, չեն դարձել երկի էությունը Համակողմանիորեն արժեքող գիտարկումներ և քիչ են տարբերվում վերը հիշված Հայ և օտար մյուս մտավորականների ընդհանուր Հիացական կարծիքներից: Մինչդեռ խիտ ու քաղմաշերտ «Բիրլինականը», որ իրականում մեր բանաստեղծական մարի Հզոր թռիչքներից մեկն է, ինչպես նաև շարքում ընդգրկված մյուս պոեմները, կարտո են Հանգամանակից խորքային քննության ու գիտական արժեքման այստեղ գիտանելուց:

«Բիրլինականները» պոեմաշարի սկզբում Հովհ. Շիրազը Հնի և նորի գիտելիտիկական Հակադրամիանությունն ու շարունակականությունը Հատատող մի քառատող քանաստեղծություն է գրել, որը չենք գտնում նախորդ Հրատարակություններից և ոչ մեկում:

Հերվա մեռած մանուշակի

Ուտի վրա՝ նոր մանուշակ,—

Բարդ է խորհուրդն այս պարզ կյանքի՝

Առանց Հնի չկա նոր կյանք:

¹²² Գր. Թամրազյան, Երկեր, Գ, Լաբիրի հրատ., եր. 2010, էջ 717:

¹²³ Սես Ս. Սողոմոնյան, Եզվ գիրքը, էջ 125-126:

Սա իսկապես բնորոշ է Հովհ. Շիրազի բանաստեղծական մտածողությանն ու ողջ կենսափրկափառությանը, առաջելիս՝ «Բիրլիականները» շարքին, ուր պոեմները գեղեցկամ են գերազանցապես այս միավորիչ հատկանիշով: Այս քառատողք թեև հղացվել է Երևանի ժողովածուի երկրորդ հատորում հիշյալ պոեմները միավորելու առիթով, այսինքն՝ գրական ուղու գրեթե վերջում՝ 1982 թ. սակայն նրա գեղարվեստական մտածողության զարգացման նախորդ շրջափուլերում ժողովրդական կենսափրկափառությունից, առօրյա ողջախոհությունից բխող նույն զարգաբարի մարտնչությունն այլ օրինակներ, կյանքի և մահվան, մարդու անցողիկությանն ու բնության հավերժության հակադրությունից ծնված խորհրդածությունների բազմաթիվ դրսևորումներ կան: Ահա, օրինակ, դրանցից մեկը.

Թե չթափվեին տերևները Հին՝
Մասն ինչպե՛ս տեղ սար նոր տերևներին...

Հնի ու նորի շուրջ քնարական-փրկափառական պատկերափոր այս խորհրդածությունը արտաբուսա թվում է առօրյա ողջախոհության բանաստեղծականացում, սակայն, ինչպես քիչ հնուս պոետի տեսնենք, այն յուրահատուկ տեղ ունի Հ. Շիրազի ողջ գեղագիտական համակարգում և, որ այս պարագայում առավել կարևորվում է, հատկապես «Բիրլիականներ» շարքի պոեմներում:

Մայր «Բիրլիականի» համար որպես բնաբան նա սկզբից ևեթ օգտագործել է ժողովրդական հայտերի սուտյթը՝

Յալը տվեց սարերին՝ Մաքիը չարան,
Յալը տվեց մարդուն՝ Մաղը տարավ: (Մորս խոսքերից)

Փակագծերի նշագրման մեջ մայր ասելով, անշուշտ, բանաստեղծը նկատի է ունեցել ոչ միայն իր մորը, այլև հայ ժողովրդին՝ առհասարակ:

¹²⁸ Սա իր Գովհանես Շիրազի հնդիսականաց բացատրությունն է այն բանից հետո, երբ Փ լարամիս գրախոսել էր, թե «Շիրազը ժողովրդի խոսքն է իր ձորն է վերագրել»: «Սևորո

Աշխարհաստեղծման աստվածաշնչյան աստապելը նորագույն ժամանակների՝ 20-րդ դարի հայ բանաստեղծի համար չէր կարող լինել ճանաչողության ու իմացության անքննելի և անվերապահ ընդունելի աղբյուր: Գիտության զարգացումն ու քաղաքակրթության նվաճումները շատ բան էին փոխել մարդու աշխարհայացքում, սկզբնապատճառի բացահայտման և աստվածային բնկալման պարտում, և ավանդադրույցներն ու աստապելականի նկատմամբ վաղուց ի վեր գրեղորվում էր գիտական վերաբերմունք: Սակայն արարչագործության հանդեպ գիտական մտեցումներն ու բացատրությունները, որքան էլ ճշգրիտ ու առարկայորեն համոզիչ, բանաստեղծի տեսանկյունից անբավարար էին, որովհետև պատկերավոր մասնադրությունը թելադրում էր աշխարհն արարող անհայտ ուժով՝ Աստուծու, և նրա ստեղծագործության, լայն առումով՝ Մաղը — Աստված հարաբերության միանգամայն այլ ընկալում ու մեկնություն: Ահա ինչու բանաստեղծը, նախքան

Որ ոչ թե Աստված ստեղծեց մարդուն,
Այլ մարդն իր աճից ստեղծեց Աստուծուն

Հայտնի գիտական-փրկափառական բանաձևումը, պետք է ստեղծվեր նրա նախադրյալները գեղարվեստական այնպիսի Հիմնավորմամբ, որ չհակասեր մի կողմից աստվածաշնչյան լեզվին ու նրա ժողովրդական ըմբռնումներին, մյուս կողմից՝ գիտության արդի մտեցումներին: Ի վերջո, բիրլիական — աստվածաշնչյանն այստեղ, ինչպես նկատվել է, արտաքին տարբեր է միայն, միջոց է և ոչ թե նպատակ կամ գիտությունն ու կրօնը հայտնեցնելու փորձ:

«Բիրլիականը» Հովհ. Շիրազի այն ստեղծագործություններից է, որի ստեղծումն ու պատկերներում ակնարկ անգամ չկա Հայաստանի և Հայության մասին, սակայն հենց դրանով

խոսքից»-ն է ծիշող. այդ չարամանկին ո՞վ պիտի հասկանցի, որ նա Փր քաղվանքն ան հայ ժողովրդի, ուրե՞նք ժողովրդի է իմ մայրը, և նա քաղվանքի իրականում ունեմ մորս խոսքն օգտագործելու», — դամացած ասում էր բանաստեղծը — Ս. Ս.:

էլ այն դասունս է Հայկական Համամարդկայնութեան բարձրագույն գրեթորումներէց մեկը: Այս զգացողութեամբ ու Համոզմունքով էլ պոեմի լիճ թարգմանիչ Բողոքան Գեմբարսեկին գրել է: «Միայն մեծ վշտից Հասնած ազգի զավակը կարող էր երկնել «Բիրլիական»: Գոեմի սրանչելի երեսը Համամարդկային խոհն է, աստուր՝ խորունկ ազգային ցավը...»:

Քնարական— փրկութեամբական խորհրդածութեաններէ Համամարդկային Համապատկերը Հայտնում է պոեմին էպիկական շունչ Հողորդող մի փորձիչ Համբաւայտ զիպաշարի Հենքով:

Աշխարհն արարող Անհայտ ոգին, որ զար ու զարեք Աստված է հոշովել, ստեղծել երկինք, արեւ, ծով ու Հող, ստեղծել «Համայն տիեզերքը մեր» և «բիրտ Հողից» աշխարհ է բերել մարդուն», նրանց է բաժանել է իր աստվածային անհուն բարիքները, իր ուրախութեան բոլոր վարդերը շուշուրեն շող տվել «նորաստեղծ երկրին»:

Այստեղից սկսած՝ քնարական պարզ պատումն արդեն վերածում է բանաստեղծական կատարյալ հրաշքի. Հողում են իմաստավորված փոխաբերութեաններն ու մակդիրները, Համեմատութեաններն ու Հակադրութեանները, բնական երևույթների անսովոր անմեղաբարեւոյնները, որոնք գեղարվեստական իրար անակնկալ գոյուտեր են ու զարմանալի պատկերավորութեան են ստեղծում.

...Լույսի հրճմանը տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ մպիտը սպունգ ձյուներին,
Վեհութեան խիռը լեռներին տվեց,
Դաշտերին՝ կանաչ մպիտը գարնան,
Դայլայլը տվեց Համբ ու Հովերին,
Հողին բերկրանքը տվեց մայրութեան,
Մերո խայտանքը տվեց ամենքին
Ու բոլոր վարդերն իր ուրախութեան
Շող տվեց այսպես նորաստեղծ երկրին...

Կարելի է ասել՝ Հովհ. Շիրազը նարեկացուց Հեռու Համեմատութեան ու Հակադրութեան խոշորագույն վարդերն էլ Հայքնարեցութեան մեջ: Հաճախ է նա պատկերավորման — արտահայտական այդ միջոցները զարժնել Համեմատող կամ Հակադրող առարկաներն ու երևույթները Հատկանիշների բնդհանրութեամբ կամ Հակասող զիտանկյունից մեկը մյուսով բնութագրելու միջոց: Նրա ոճին բնորոշ յուրահատկութեաններէց այս մեկն, ինչ խոսք, ավելի տեսանելի է «Ինքնիդրանք» Համամարդկային պոեմում, սակայն կիրառված է նաև մյուս գրեթե բոլոր գործերում:

«Բիրլիականում» բարիքն ու «ուրախութեան վարդերը», որոնք արդեն շուշուրվել են աստվածաստեղծ երկրին ու երկրային գոյութեաններին, մի Հակակշիտ ունեն միայն աճավոր ու ստեղծելի ցավը, վշտի խայթը, որ «Աստված ինքն էլ չէր կարող տանել» և ջանում էր ամեն կերպ ու ամեն գնով ազատվել նրանից:

Աստվածային գույթը Բարձրայլին պարտավորեցնում էր վիշաղ տալ արարածներից նրան, ով կարող էր այն «գեթե մի գիշեր անխոսով տանել»: Ծափն անտեղյակ էին Աստծո շրջափոր ու անշունչ արարածները՝ ծաղիկներն ու Հովերը, թռչուններն ու գաղանթները, լեռներն ու գաշտերը, ծովը, երկրինքն ու աստղերը. ուստի բոլորը իրազող գոյակցում էին «երջանիկ անգիտութեամբ»: Երկրում անասունն թափառող Աստված վիշաղ նախ փորձում է տալ նուր արարածների ծաղիկներին ու Հովերերին, ապա և՛ երջանկութեանից իրար խնեթորեն Համբուրող գաղանթներին: Սակայն ցածն ազարտում է տիեզերքի նախաստեղծ գաշտութեանը, ծաղիկները սզում են, թռչնում աշնան տերևների պես, վայրի գաղանթները ցածից ռոնում, կորցնում են լեզուն ու գոյութեան կոճում իրար են Տոչառում.

Եվ իսույն աշնան տերևների պես
Ցածից սզպին Համբ ու ծաղիկներ,
Եվ կամպուների սիրտը սեպտավ.—
Այն օրից իրենց լեզուն կորցրին

Այս գիտ նետում են կապկանձով անբառ
Փազաններն իրենց անձեքը լուսնին:

Արարիչն ինքն է նկատում, որ ծաղիկների, թռչունների ու գազանների համար անասանիկ է ցավը, որ այդ արարքով ինքը խախտում է տիեզերքի և իր իսկ ստեղծած բնության ներդաշնակությունը: Աստվածային գույթը Հորիազորում է արարչին շտկել ողբալի կացությունը և «ահաբի պարզեն» ուրիշի սուլ: Բայց անասանների ոգին աստվածորեն գթում է նաև ցավին չգիտացող լեռներին, ծափն ու գաշտերին, երկնքին ու աստղերին: Նրանց յուրօրինակ իմաստալիցություններից, փոխարենիան անձնավորումներից յուրաքանչյուրը շիրազյան խոսքի ուժը հավաստող մի-մի բանաստեղծական Հայտնագործություն է, պատկերավոր խոսքի բացառիկ ու անմրցելի գլուխգործոց:

Խորասիկ է երկրային աննից ակնառու երևույթներից մեկին՝ Հպարտորեն կանգնած լեռների «գոռոց կնցվածքը»: արտաբուսա փտաաՀայտնություն ներշնչող «խրոխտ ու վեա» լեռներին արարիչը ցավը տալիս է այն պարզ նպատակով, որ «քիչ խոնարհվեն ու խորհեն իր պես»: Մական լեռները նույնպես անկարող էին ցավը տանել:

Եվ հատուկն լեռները դափեր:
Ցավից լանջիրեն խոցի բայվեցին,
Անուկները դարձան ու խորանուզով՝
Այն սեղ լեռների տունքանքն են լայիս,
Իսկ գագաթներին՝ ձյուն հավերժացած՝
Աստած արցունքն է, որ ցած չի պալիս...

Ցավն անկարող են տանել նույնիսկ ամեն ինչ հանդուրժող անասնաման ու անհող գաշտերը, որոնց կրճրին, ցավն ստանալուց հետո, բացվում են աննկողախոր վերքեր, իսկ դրանց հետքերն էլ մնում են «անառպասանները որպես սպիներ»: Հողը ծարավից առչորվում է այնպես,

Որ անպատում օձն էլ իր ձաղի
Աչքի արցունքը ծարավից խմեց...

Ճանապարհի պատկերների այս համանվագը համարվում է նոր հայտնագործություններով: Իր կապույտ խաղաղության մեջ ծփացող ծափը նույնպես անկարող է գիտնալ ցավին. «մառ կենդաններով» եղծվում է նրա երեսը, ցավն ընդունելով՝ ծափն անդնդից կատաղի էլնում, մինչև աստղերը ծառ է լինում ցավից:

...Այնպես ծառ եղավ, որ կոհակների
Մտաները կարծես աստղերն էանցին՝
Որպես սչբերը անգույն Աստուս,
Որ նույնպես լային...

Դար ու դարեր ցավը մնում է երկնքում, բայց երկինքն էլ էր անգոր, իրար ծպտացող աստղերն ու ողջ տիեզերքն էլ:

Իսկ հավերժական ցավից հոգաված
Աստղերն, այն որից ասուպներ դարձան,
Թան ու մեռան իրար գրկի մեջ,
Եվ դարեր ցավը երկնքում մնաց՝
Ցրեց աստղերի դաշնությունը պերն:

Աստվածաստեղծ գոյություններից տիեզերքում չկար Ցավին գիմազայող մի երևույթ: Ահավոր ցավը սարսափ էր ազդում նույնիսկ իրեն՝ Արարչին, որի պատճառով էլ նա արդեն երկյուզում էր:

Ու ցավն ստեղծով՝ արարողն էլի
Խորհում էր՝ ո՞ւմ տար, որ գեթ մի գիշեր
Անխուով ամանի պարզեն ահալի,
Որ, ավաղ, ինքն էլ չէր կարող տանել:
Մոտեց, թե ցավը կմտա իրեն...

Բայց ահա մի որ երկրային մի Հովտում Աստված տեսնում է վազրի ճանկերում ծպտացող մարդուն, անասաններիորեն նրան է տալիս ցավը, և ինքը թեթև «այանում եթեր»:

Գարեկի է ասել՝ Հենց այստեղից, այս պահից էլ սկսվում է մարդու արարչագործ ուժի շիրազյան փառաբանումը: Մարդու

գարգացման տեական ու շարունակական ուղին ձգվում է միևնույն քարայրի մանուկ ուղեղից մինչև նրա «Լուսնի վրա մաշեք» և «աստղերի վրա կյանք նշմարելն» ու «մտքի ձեռքը» աստղերին մեկնելը:

Ենդադավում է Արարչի «Ինտոյլյալ Հոգին» սկսած այն պահից, երբ զգում է, որ միայն մարդը կարող է տանել իրեն սարսափեցնող երկրային վիշտը, ու Հնունում է նրա ընթացքին որոտոցից մինչև գերեզման: Վիշտն է բացում մարդու աչքերը, դառնում նրա մտքի դայակն ու ճանապարհի Հավիտենական ուղեկիցը:

Մարդկության «մանկության շրջանի» զեղարվեստական այս պատկերում Հատակ տեսանելի է, թե ինչպես է զեռես քարայրաբնակ նախածարդը քայլ առ քայլ իմաստանունում և Հայտնաբերում իր ցավերը դարձանելու միջոցները: Մանուկ մարդն աստիճանաբար ձեռք է բերում կենսափորձ, ընդլայնում տեսողաշուն ու իմացության շրջանակները, Հասկանում է կյանքի գաղտնիքներն ու անեղծվածները, զգում, որ «երկու անգամ չի կարող անցնել մինևսյն գետի նույն ջրով անցնող», զգում, որ «մահն է վիշտն ամենամեծ» և կովի է կլնում «մահվան գեմ մաշով»:

Գերեզմանի գեմ զննելով մանկան
Ոսկի օրացք էր Հույն օրարից,
Իր մահը գարձեց դոյի Հոլովում՝
Ու սերնդաչար սպրեց վերստին՝
Տանելով գժնի վիշտը մոր մաշված,
Դիմացավ որդոց անհես կորստին,
Տարավ դառնանուչ տանձաքը սիրո,
Տոկաց բնության խոյ աղեսերին,
Ու լցված կյանքի ծարավուտ սիրով՝
Դիմացավ այրող վերքերի ցավին:

Սակայն Աստված մարդուն տալիս է նաև գոյության կովի ցավերը: Մարդն իր նորարդորձ իմաստանությանը ողորում է բուրբ ցավերի գեմ, տինգերբը լցնում «իր վշտի ծխով», մայ-

ուրից լույս ու կրակ է կոխում, Հույսի մեջ խեղզում բոլոր ցավերը, Հաղթում այն վշտին, «որից խղական մամուսը կուրավ»: Այս տեսնելով էլ՝ անհայտ ոգին մարդու մեջ «պղտոր գետերով» քանում է ողջ տինգերքի բոլոր ցավերը, որոնք Հաղթահարելու նոր միջոցներ պիտի փնտրեր ու գտներ նա:

Իր մտքի լույսով, խառնականությունը ու ձեռնբերցությունը գազաններից աստիճանաբար տարբերվող մարդը, սակայն, անմիջական աննշույթյուն շուններ անտեսանելի Աստծու Հես, որին ազգային էր ինքը գտերը շարունակ: Իմացության ընթացքը աստիճանականություն էր ենթադրում: Ինքնագո նյութի ներքին շարժման, նրա մեռնելու և ծնվելու անեղծվածը չի մանաչով մարդն ինքը երկնեց ոգի, որին վերագրեց իր դեռևս չճանաչած երևույթների, Հակադրությունների պայքարի և միասնության գաղտնիքները: Վայրի քարայրից, գազանի ճանկից մինչև աստղերն Հասած մարդը ողջ այդ ընթացքում որոնել է ցավն իրեն լայված անտեսանելի Աստծուն, որը Հրամայել էր բնությանը՝ մարդու առջև բարիք չփուլ, որ մարդը անզույ տրուկյամբ ու նակատի քրտինքով վատակի Հանապազորյա Հացը: Գոյության կովի Հողոգույթում վշտին Հաղթելով իմաստանացած մարդը, սակայն, գտնում էր աշխատանքով իր ցավերը դարձանելու, արարուժով վշտին դիմակայելու նորա-նոր միջոցներ ու Հնարներ:

Այդ աշխատանքն էր, որ ինչպես դարբին
Կեց ու կովեց Հողերի սալին
Բիրա անբանից մարդ և մարդուց Աստված՝
Փառանի ճանկից մինչև աստղերն Հասած:

Կատարելություն ձգտող մարդն այլևս բնության տարբարային ուժերի ստրուկը չէր, արդեն նա ինքն էր իշխում բնությանը և աշխատանքով ստեղծում բարիքներ, Աստծուց էլ Հզոր ինքն էլ արարում «չեղած Հրաշքներ աշխարհի վրա»:

... Ու մարդը խորհեց և մտ գաղտերից
Փսխած գետերը ձորերից Հանց
Եվ անապատված գալտերում սփռեց՝

Եվ զինի բամեց դաման դաշտերից,
Եվ մեղրապետեր բրանքով բամեց:
Եվ դժնաստեխի Հոգեւորով կլավ,
Գեղեց ծովերը, լեռները սեղեց,
Աստու թաքցրած գանձերը գտավ
Ու մարի մեռքը աստղերին մեկնեց՝
Եվ լուսնի վրա մահեր նշմարեց
Ու կյանք նշմարեց աստղերի վրա,
Եվ մահվան աճից իմաստանաւազով՝
Գտավ Հյուսիսի Հողովումն անմահ:

Բոյոր փորձութիւններին զիմացրամ մարդու զարգացման ընթացքը հսկող ոգին, որ նախապես թերահաճաւ էր մարդու կարողութիւններին հանդեպ ու արահուում էր՝ կարող է նա արդյոք դիմանալ ցափին, երբեմն էլ զգալի է զարձրել իր ներկայութիւնը, և մարդն ունեցել է նաև աստվածահայտնութեան պահեր: Վերջին հայտնութեան ժամանակ նա ուղղակի դիմում է մարդուն.

— Դու,— ասաց մարդուն,— վշտին Հալթեցիր.
Փառանգիր ասա տիեզերքն իմ մեծ,
Քո մտքի թաղով իր սրբան զարձիր,
Վշտին Հալթողը իշխանն է խնկոյի,
Իշխիր զսղանապից տիեզերքն Համայն,
Ի՛նքզ ստեղծիր Հողը զրափտի
Եվ սնիր, որ Հար վառիկ նրան...

Մարդուն աստվածային կամեցողութեամբ տրված է անզուլ արնութեամբ երկնելու և «սրբոյունից մինչև աստղերը» իշխելու իրաւունք: Դա մարդուն ի վերուստ արված աստվածային շնորհն է: Դարերի Հողովութեամ իմացութեան սանդուղքով անզուգար բարձրացող մարդը իր Հնարագիտութեամբ և մտքի արտանական ուժով հզորանում է բոյոր արարածներին, ունակ է շլջված ու շտեմեմված հրաշքերի զործելու և անզամ իր արարչազորութեամբ Աստու Հետ չափվելու, բայց նա դեռևս կատարյալ չէ. քանի դեռ ինքը չի բարձրացել «կատարը

կատարելութեան» և չի կատարել աստվածային վերջին պատգամը.

Դարերի անտես սանդուղքով կեկնես
Դեպի կատարը կատարելութեան,
Որ միջօրի սփի նման
Փայտտես սովերն Հողուչ շարութեան
Եվ սղավնանա քո նմանի դեմ,—
Որ քո նմանի վիշտն էլ ճաշակես
Ու նոր լինես մարդ ու ծաղիկն որպես
Ազնիվ իտացվածքն աճող բնութեան՝
Հասնելով ողու ներզաւնակութեան:

Ազնիվ իտացվածքն աճող բնութեան. այսինքն՝ «բնութեան ամենամաքուր աստղերից Հյուսիսում վե՛հ ու վա՛ն», բարոյապես կատարյալ, անսահման բարութեամբ, մտքի և ուժի ներզաւնակութեամբ չարի դեմ մաքառող, կյանքը գեղեցկացնող այն մարդը, որ նաև Նարեկացու, Շերապիքի, Թումանյանի, աշխարհի բոյոր մեծ մարդանրերի նվիրական երազանքն էր: Մարդու կատարելութեան չափն արտահայտվում է իմաստնալից անձնագործունեւորով. բնութիւնն ապշում է զարժանահրաշ մարդու արարչազորութեամբ, այդ ապշանքի Հավաստումն են քացաւք ծովերը, իսկ

Երկնակամարն էլ Հոնքն է՝ վեր բաշված՝
Հալթիւյան սաղած մայր տիեզերքի
Արեղակնարի կապուտակ աչքի...

Անկանց որոնումների ընթացքում վայրի անկեղու զագանից մինչև աստղային բարձունքներն Հասած մարդն ինքն էլ է հրանում իրենով ու իր ստեղծածով, սակայն նրա կատարելութեան ձգտումն անկանց է ու անվերջ: «Տիեզերախույզ մըտքով» ու կրթով զար ու զարեք թափառելով մարդը որոնում է իրեն ստեղծողին՝ գտնելու և նրա Հետ չափվելու անկասելի նպատակաղգրմամբ: Ու թեև ամենատեսեղծ ու ամենակալ Աստուն իր անզուգար որոնումներում նա ոչ մի անգ ու ոչ մի

անցած չի գտնում, սակայն որոնումներն անպատշաճ ու պարզյուն չեն անցնում. նրա «վշտի սափոր» սիրտը երկնային բարձունքներում լույսով է լցվում ու անընդհատ մղում նոր որոնումներին.

Ու երբ չգտավ՝

Այն բիրիլիան

Հարզպողը արած իր մտքի ճամփան,—

Ու երբ չգտավ՝ ելավ նորախուհ,

էլ չսպավիճեց նա ո՞ր մի ասածո

Ու ոչ մի ոպու, որ իբր ասի

Տեսիլն է անդռ այս տիեզերքում.—

.....
Այնինչ ներհում է Աստված իր Հոգում:

* * *

«Բիրլիականի» աննախընթաց Հաջողությունը, խորհրդային և աշխարհի ուրիշ ժողովուրդների լեզուներով թարգմանությունների առթիվ հնչած հիացական գնահատականները Հովհ. Շիրազի համար զարժան ստեղծագործական նոր ողևորության սղբյուր, մանավանդ բազմախորհուրդ ու բազմաշերտ այդ թեման՝ բնության գիպեկտիկայի իր տիեզերական ու Համամարդկային խոր ընդգրգումներով, բանաստեղծը մի պոեմում չէր սպասել: Որքան էլ կառուցվածքով կուռ, փխրափայլական բովանդակությանը խիտ ու հարուստ, զեղարվեստական անառարկելի արժանիքներով հազեցած՝ մինևուչն է, արժարժող թեման ուներ բացահայտության և զեղարվեստական մեկնություն արժանի բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց արժարժույթը բանաստեղծը պիտի իրականացնե՞ր Հետագա տարիներին գրված նոր պոեմներում, որոնք մայր «Բիրլիականի» Հեռ միասին կազմեցին մի ամբողջ պոեմաչաք՝ «Բիրլիականի վերբարձր», «Բիրլիականի երկրորդ արարչականը», «Ասածու գլուխգործոցը», «Ինքներգանք՝ Համամարդկային», «Ջևարի-գլիկը», «Սիրո և իմաստության սրիցը», «Շղթայված մեղեդիներ»: Թեև Հեղինակը նշել է զբանջից ոմանց գրություն տա-

րեթիվը, սակայն, մեր կարծիքով, պարզարանման անհրաժեշտություն, այնուամենայնիվ, կա¹²²: Սակայն կա և պարզարանման արժանի ավելի կարևոր ու բարդ հիմնախնդիր. եթե ճշմարտություն է, որ բանաստեղծը աշխարհի զեղարվեստական ճանաչման ու պատկերավոր խոսքով ներկայացման նպատակադրում ունի, իսկ գիտական ճանաչողությունը գիտականների սեպուհ պարտքն է, ապա իրողությունն է և այն, որ «Բիրլիականները» խորագրով պոեմների Հեղինակը Հանդես է բերել բնական, կենսական ու Հասարակական երևույթների զեղարվեստական յուրացման ընդհանուր նպատակադրում, որն իրականացրել է պատկերավոր Հզոր մտածողություն:

Այս պարագայում էլ, սակայն, ծագում է նոր հիմնախնդիր. Հետագայում գրված հիշյալ պոեմները, զեղարվեստական ինքնուրույն միավորներ լինելով, թեմայի, բովանդակության, զազափարական ու զեղարվեստական Հարցադրումների Հարադասության ֆունկցիոնալ աստիճանով են կապված մայր «Բիրլիականին» և միմյանց:

¹²² «Մայր «Բիրլիականի» գրության տարբերիչը 1942, ստույգ է. ժխտ է և այն, որ «Բիրլիականի» վերբարձրը գրվել է 1947-ին, քայքայ անա «Աստուծո գլուխգործոցը» թվագրված է 1970 - 1980, որը կատարել և ճողողմանի տեղիք է տալիս: Լախ այդ պոեմի մեքենագիր մի տարբերակը տողերիս գրողը «1946 թ.» հեղինակա՞նց նշումով կարգացել է 1962 թ., երկրորդ նույն այդ պոեմի մի տարբերակը «Բնության գլուխգործոցը» խորագրով, տպվել է 1964 թ. «Մնար Գայասամի» երկրորդ գրքում: Դեռ «Բիրլիականի» աջով աղծուկ շորշոփները չլին վերացել, և այն ժամանակների գրական մթնոլորտի և կուսակցական ժառանգների արեխտական տրամաբանության գլուխոյուն չունեցող Աստված չէր էլ կարող գլուխգործոց ունենալ, ուստի հնարավոր համարվեց պոեմի տպագրությունը «Բնության գլուխգործոցը» խորագրով: Այդ եղևու տարբերակների պաղը համաձայնությունը կեանք է քերում ոչ միայն վերնազորի, այլև տեքստային որոշ տարբերություններ, որոնք լրամշակման արդյունք են: Ինքնուրույն համամարդկային» գրության 1950 տարբերակ էլ ժխտ է այնքանով, որ գուցե գրության սկսման թիվն է, քայք Գ. Շիրազի մտերմներն ու հարազատները գիտեն, որ քանակապես այդ պոեմի «Մնար Գայասամի» երկրորդ գրքում տպված տարբերակի վրա բուն ոգևորության աշխատել է 1962 - 63 թթ., իսկ 1974 թ. «Մնար Գայասամի» երկրորդ գրքում և 1982 թ. Երևանի ժողովուրդների 2-րդ հատորով լույս են տեսել նրա լրամշակված վերջին տարբերակները այն էլ ոչ անբողջականությամբ — Ս. Ս.:

Շարքում պոեմների հեղինակային գասափորությունից և ուշադիր պարզ ընթերցումից էլ հասկանալի են դառնում այդ երկերի հարազատության, առնչության անմիջականության և ուժգնության տարրեր աստիճանները: Անհնչայտ է, որ անհամեմատ ուժեղ է մյուս պոեմների՝ մայր «Բիրլիականին» անհնչացությունը: Թվում է՝ հեղինակն ինքն էլ այդ հղացքները միավորելիս ավելի շանացել է այդ ուղղությամբ: Այսպես, համեմատաբար համառոտ «Բիրլիականի վերջաբանը» մայր «Բիրլիականում» սկսված Աստուծո - Մարդ երկխոսության շարունակությունն է կարծես: Մի բուն վայրի Հողից ծնված նախկին քարայրարձակը ցամաք իրեն տված Անհայտ ոգուն անզազար փնտրելու ճանապարհներին բացահայտել է տիեզերքի իրեն հասու գազանիքները, դուռ է «Աստուծո թաքցրած գանձերը», բախվել է մահվան վշտին, գերեզմանի դեմ մանկան օրոցք է գրել, ճանաչել կյանքի գեղեցիկություններն ու դառնությունները, կատարելության սանդուղքով մագլցել է վեր՝ Բարձրային գտնելու և նրա հետ չափվելու համար, Հավերժի տեղանքով «մտքի ձևօքը» մեկնել է աստղերին ու արևին, բայց դեռ Աստուծո հորդորով անզամ չի նեջում կամ հանգստանում:

« - Ինչո՞ւ ես մինչև աստղերը հանել
Մտքիդ գլուխը, Ի՞նչ վիշտ կա նորից,
Երբ մի բուն Հողից վայրի բնության
Գու թեղ հասցրիր կատարելության...
Ինչո՞ւ չես նեջում?»:

- Ձեռ նեջի երբեք,

Քանի գաղտնալից տիեզերքն այս սեղձի
Քի բացել իմ դեմ ծալբերն իր բուրբ,
Քանի դեռ մուլեն է ու խորհրդավոր,
Քանի դեռ անզուռ առեղծված մնա
Գոյության գաղտնիքն ու բերս մահվան,
Քանի չեն դարձրել Հավերժ պատակի
Իմ հայտնություններն իմ իմաստության...

Հավերժի դեմ մի թիթեռնիկի կյանքով ապրող մարդու գլխավոր կոբիմ, այնուամենայնիվ, մահվան դեմ է, որքան գեղեցիկանում է կյանքը, այնքան ազնվանում է մահը: Անմահություն տեղացող մարդն իր արագաթիռի կյանքում ձգտում է իմացության առավելալույսին, նպատակադասությամբ համախմբում է իր հոգեմտավոր ու ֆիզիկական ուժերը իմաստավորելու ապրած յուրաքանչյուր պահը: Այս գաղափարը բանաստեղծը մարմնավորել է ոչ միայն այս պոեմներում, այլև բազմաթիվ խոհարարական բանաստեղծություններում ու քառյակներում:

«ԲԻՐԼԻԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՉԱԿԱՆԸ»

Այս պոեմի գրությունն տարեթիվը նշված չէ. սողերիս գրողն այն հիշում է 1962 թ. հայ գրերի գյուտարար Մներսող Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարության օրերից «Մաղիկների ծնունդը», ապա և «Լեզուների ծնունդը» խորագրերով «Հայոց հրաշքը» պոեմին գրեթե զուգահեռ: Հավանաբար վաղուց սկսված այս պոեմն էլ լրամշակվում էր այդ օրերին, երբ պետական շուքով ու հանդիսավորությամբ ընթացող մաշտոցյան տոնակատարությունը Ափյուռքում հայրի ծուլման ստույգ վսանգի և Հայաստանում վտանգավոր չափեր ընդունած օտարալեզու դպրոցների գերաւատության պայմաններում ստեղծել էր Հայոց լեզվի շուքը համազգային տաղանակների մասին բացախոսությամբ կամ այնխոսությամբ արտահայտվելու միտդորս: Հովհ. Շիրազն իր բանաստեղծություններում ու պոեմներում օգտագործում էր արտահայտման բոլոր հնարավորություններն էլ:

Աշակերտության և ուսուցչության, բուհերի ուսանողության ու գիտահետազոտական ինստիտուտների, բանվորական կոլեկտիվների ու գյուղական համայնքների հետ գրեթե ամենօրյա բազմամարդ հանդիպումները, որոնք սովորաբար վերանում էին զրական սոնահանդեսի, Հայ դատի պաշտպանության և Հայապահպանության քարոզչության, ավարտվում

էին Հովհ. Ներսիսի կրակոտ ելույթներով: Դրանք բարութեան և պնդութեան, գեղեցկի գնահատութեան, հայրենագիտութեան ու Հայրենասիրութեան բացառիկ դասեր էին իրենց հոգեկերտիչ, ազգային մտածողութեան, նկարագիր ու բնագործությունն ձևավորող անդնահատելի ու վիթխարի նշանակությամբ: Այսպես էր Հովհ. Ներսիսը նպատակն մեր ազգային զարթոնքին, գանձուն նոր սերունդներին գաղափարական առաջնորդը: Վերագրանելով այս պոնտին սաներ, որ բանաստեղծներ Հմտորեն էր կիրառում իր պատկերավոր խոսքի գործիչները բոլոր լեզուների գոյությունն իրավունքի պաշտպանությամբ հիմնավորում հայոց լեզվի հարատևության իրավունքը:

Բանահյուսական նյութի՝ արդիականությանը համահունչ տարրերի գեղարվեստականացումն այս դեպքում էլ էր արդարացունքն իրեն: Ըստ բիրյանական ավանդապատմաններից մեկի՝ բոլոր գոյությունների պես՝ ծագիկներն էլ Աստու ստեղծածն են, և ծագիկացիներն էլ նախապես հաղորդակցվում էին իրենց լեզուներով: Ամեն ծագիկ ինքնատիպ ու գեղեցիկ էր ոչ միայն իր տեսքով ու գույնով, այլև իր լեզվով, և բնությունն էլ գեղեցիկ է իր բաղմբերանգությամբ ու ճոխ լեզվահամերգով: Միապույն ու միաձև բնությունը գեղեցիկ էլ, միապույն ծիսան չի լինում, միալեզու և միացից մարդկությունն էլ աղետ կրկներ հենց իր համար ազգային ու մարդկային Հարստությունների համակիսունըրգանության խախտման իմաստով: «Կամուհիգիմ նպատակը ազգերի ձուլումն է» կարգախոսը, որ 1960-ականներին անթաքույց հնչեցնում էին գրատական կոմունիզմի խորհրդային տեսարանիկները, գարծն էր փոքր ժողովուրդների հարատևության համար խիստ վտանգավոր սպառնալիք: Ավարացի Հայտնի բանաստեղծը՝ «Դադառանի աստղը» գրքի հեղինակ Ռասուլ Համզաբովը, հենց այդ օրերին գրեց.

Քն պիտի մեռնի փայր իմ լեզուն՝

Ավիլի լավ է՝ ես այսօր մեռնեմ:

Հովհ. Ներսիսը՝ որպես հայ ժողովրդի բանաստեղծ, իր ստեղծագործություններով ու հատկապես այս պոնտով ընդգզում էր

այդ գաղափարների ու կարգախոսների դեմ, և արտահայտման թույլատրելի համեմատաբար «անվտանգ» միջոցը բանահյուսական ավանդապատմիչի գեղարվեստական մեկնությունն էր այլարանորեն: Ըստ այդ մեկնության՝ Աստու հետադաշումն ստեղծած գլուխգործոցը մարդը, դեռ լեզու չունեի, մարդացեղները գուրկ էին իրենց ցավերն ու ավախանքները, իրենց գրգամունքներն ու երազանքներն արտահայտելու հնարավորությունից, հաղորդակցվում էին «ձևը լեզվով» կամ խուլ ու համբերի պես: Մինչդեռ բույրերի, գույների, տարածություններից բավարար էին անցավ ծագիկախարհի հաղորդակցության համար: Բնութեան այս անարդար աններդաշնակությունը պետք է կարգաբերվեր, այլապես երկրոտանին չէր մարդանալու, միայն չէր ձևավորվի, և մտածողությունը չէր զարգանա.

Երբ Առավոտն տեսավ իր հաղարավիշտ, բայց համր մարդուն,

Ասաց. «Իմ լեզվին պետք չունեն անվիշտ ծաղուներն հաղարան,

Այս հաղարացավ մարդոց են վաշի լեզուներն համայն,

Իմ նուրբ ծագիկացը պետք չէ հուր լեզուն,

Անլեզու վիշտն է լեզու երազում երկրի քառուսն:

Մարդն համավ վիշտ է, և թող գարնուսն, երբ վիշտը սեղմի,

Թող խոտն մարդը, թող ցավը պատմն, որ վիշտը մեկմի,

Թող լեզվավորվի, երբ աղատ խոտի՝ նոր իմաստանամ,

Իմաստանալով ողջ տիեզերքի զապուկիքը բանս,

Բացի գաղանիքից իմ ասավանային...»:

Աստվածային իմաստությունն էր պետք որոշելու համար, թե որ մարդացեղը ո՞ր ծագիկալեզվով պիտի խոսի: Ենդիրը լուծվում է Աստու հայրական իրավունքով: Նախ հրամայում է, որ ծագիկամտորը լռի, համարան, ապա ծագիկների լեզուն մեկնիկ-մեկնիկ պրկելով ու նշխարելով պատվաստում է տարացեղ մարդկանց պատգամելով, որ հավերժանան իրենց լեզուներով ու պահպանեն տիեզերքի գեղեցկությունը.

- Թեկուզ աշխարհում այս իրարանքը
Հավերժ են բուրբ լեզուներն Հավերժ.

Իրենց նախաձայր ծաղիկների պես այն Հագարպուլույն,-
Հավերժ է խոսուն կազաչանունը իմ Հայոց լեզուս,
Հավերժ է, քանի կակաչները կան:

Հավերժ է խոսուն ճնճաղիկամին ուսուց լեզուս՝
Ձնճաղիկները քանի աշխարհ զան:

Հավերժ է իմ նուրբ նարգիկից ծնված իմ Հունաց լեզուս,
Հավերժ է, քանի նարգիկները կան:

Հավերժ է Քարսի՝ նու.ու.Քարսածին լեզուս էլ խոսուն՝
Հավերժ է, քանի նու.ու.Քար քաղաքի:

Հավերժ է խոսուն մանուշակամին լեզուս արարի՝
Քանի մանուշակն արցունքը թափի...

Հավերժ է լեզուս այս մարգարեկված արևածաղիկի՝
Քանի իր գուշնով արևը ծաղիկ:

Հավերժ է մեխակ ծաղիկից էլ ծնված լեզուս լիռնազուս,
Քանի զեռ Համր մեխակները կան:

Հավերժ են բույր սպգ ու ցեղերի կրպակ ու լեզուս,
Քանի կան Հոյր, արև ու օվկիանս...

...Մաղիկներին Հեռ Հավիտյան պիտի ցեղերն աշխարհ զան,
Ու ցեղավորված՝ ծխածանակերպ պաշտելի մնան,-
Այս է զեղեցիկն աստվածախորհուրդ՝
Հավիտենություն ծառային անհագուրդ:

Աշխարհաստեղծման ու արարչագործության թեման, որքան էլ հարուստ ու բազմաշերտ, արդիական մեկնակետից մարմնավորելու համար ունեն նաև գաղափարական ու գեղագիտական ընդհանուր հարցադրումներ. այդպիսիք առկա են անգամ տարրեր հեղինակների՝ միևնույն բնաշխարհը կամ միջավայրը պատկերող ստեղծագործություններում. ասենք՝ Լոռու բնաշխարհի ու մարդկանց պատկերումները Թուամսյանի ու Հր. Մաթևոսյանի արձակում կամ միևնույն Արագածի պատկերները Ավ. Բառհանյանի և Հովհ. Շիրազի բանաստեղծություններում: Առաջինը ընթերցելու գեղարվեստի հնարավոր է նկատել բնական ու Հասարակական երևույթների, զարգացման օրինակաբանությունների՝ Ինձ մայրս ծնեց, օրհնություն նրան, Բայց ո՞վ է կղզի մայրը մարդության, Ի՞նչ է շարժումը կամ

Ի՞նչ է Հյուլիի Հյուլիի Հյուլեն, «Ինչո՞ւ, ինչպե՞ս» փրկափայլական Հարցադրումների պատճառահետևանքային Հարաբերությունների տարբեր բանաձևումները, երբեմն էլ Համանման պատկերներով մարմնավորումը Հովհ. Շիրազի արարքն ստեղծագործություններում: Նյույթի թելադրանքով Համանման պատկերները ստեղծվում են ո՞չ այնքան ասածը կրկնելու, որքան պարզապես սակիբը կրկնապատկելու համար:

«ԱՍՏՈՒ ՂԱՌԻԿՈՒՐՇՈՅԸ»

Բնական է, որ մայր թեմայից սկիզբ առած կամ նրան անձնցված ստեղծագործությունները, որքան էլ ինքնուրույն գեղարվեստական միավորներ, ունենում են Հարազատության ոչ թե հավասար, այլ ուժեղ կամ թույլ զրևորումներ: Ուժեղ կապի զրևորման բնորոշ օրինակը, թերևս, Հովհ. Շիրազի «Աստու զլուխորոցը» պոեմն է, որը արարչագործության գեղարվեստական մարմնավորման իմաստով անմիջականորեն առնչվում է մայր «Բիրլիականին», իսկ նրա «Վերջին գլխի» երկրորդ հատվածը նախորդ «Բիրլիականի երկրորդ արարչականը» պոեմի թվացյալ կրկնությունն է, որտեղ վերստին Հանգրպում ենք ծաղիկների բազմաբանությունն և նրանց լեզուներով մարդկային ցեղերի Հարատևման արգեն Հայտնի պատկերին¹²⁶:

Այս դեպքում բնական Հարց է ծագում. մայր «Բիրլիականին» Հետո ինչո՞ւ զրվեցին մյուս «Բիրլիականներն» ու «Աստու զլուխորոցը», և ի՞նչ են դրանք Հավելում նախորդին:

Առաջինը պատկերում է «գարեր ու զարեր» Աստված կոչված անհայտ ոգու արարչագործության արդյունքները՝ առանցքում ունենալով վշտի թելադրանքով ցավի դեմ մաքառող և ստեղծանարար իմաստասցույց մարդու կատարյալ

¹²⁶ Յճու. Նախորդ պոեմից վերոբերյալ հատվածն է Գ. Շիրազ, Երկրի մուղալան, հ. 2, Եր., 1962, էջ 87-88:

Հաղթանակը բնության տարերային ուժերի նկատմամբ: Բանական մարզու ամենազոր ուժի փառաբանումը մայր «Իբրիականում» իրոք որ գեղարվեստորեն կատարյալ է. սակայն բանաստեղծին չի բավարարել մարդու էություն՝ ինչու, ինչպիսի հարցադրումների գեղարվեստական մեկնությունը, որը թեև փրկստփայլաբան պատմություն գրեական հիմնախնդիրն է, սակայն միևնույն ժամանակ գեղարվեստական գրականության Հավիտենական, մշտապես արձարժող ու անսպառ թեմաներից է պատկերավոր մարմնավորման հին ու նոր դրսևորումներով:

Արև, երկիրք, ծով ու Հող, կենդանական ու բուսական աշխարհներ ստեղծած Աստված ի՞նչ նախանյութից և ինչպես պետք է արարեր իր գլուխգործոցին՝ մարդուն, որն արժանավորապես կատարյալ ու Հզոր լինելով, «ողջ արարածոց իշխանը դառնար», իր իմաստնությունը պեղեր, բացահայտեր երկրի ու տիեզերքի անեղծվածներն ու զագանիրենրը, իր մտքի գերազանց ու անմրցելի ուժով Հսկեր «մըջյունեց մինչև մամոնան ամենի»:

Արարչի ստեղծագործական գերագույն ոգևորության ու ներշնչումի պահն է՝ Հորիզոնի Հայելում իրեն նայելով՝ աշխարհից փերացած և միայն իր Հանճարեղ զաղափարի իրազորման վրա կենտրոնացած՝ բոլոր մյուս արարածների ներկայությունը Աստված

Յոթերորդ օրը կերտում էր մարդուն՝

Իրեն պատկերի և իրեն Հանգույն:

Որպեսզի մարդը երկիրն ու տիեզերքը ժառանգել կարողանալու Համար ոգով ու մտքով զորեղ և կատարյալ լիներ, Աստված նրան կերտում է մի շաղախից, օրը Հուճեցված էր «լույսի մարմնով Հուճ ստեղծանյութով, մամոնաի արտով, առյուծի կաթով, բարու բնազդով, սիրո ցանկություն ցավով, երազանքների փուլզուսից՝ ծնունդով նորից, ոգու խոյանքից ու անկուսից, լուսն ավայտաբերից, քնքուշ սամճանքից ու սուրբ մրմնջանքից, նուրբ Հառաչանքից, մութ կասկածանքից, անուսու Հովատքից», լավագույն այլ Հատկություններից, ան-

գամ նրան էր խառնել իր աստվածային կամքը, բարությունն ու իր ազնիվ սրտից մի պատառ: Սակայն «մի նոր աստծով Հղի» Արարչին աստանայի Հետ միասին չըՖապասել են տաղնապաՀար ու ակնդես նայող մյուս արարածները՝ զիպուկ մակդիրներով բնութագրված: Նրանցից ամեն մեկն էլ «անույշ զույգ նախանձով» ուղուճ էր իրեն տեսնել կամ իր մասն ունենալ նոր ստեղծվելիք Աստու գլուխգործոցի՝ իր ապագա իշխան մարդու մեջ:

Խոր իմաստ կա պոեմի այն պատկերում, որտեղ արարիչ Աստված մարդուն կերտում էր երկնային բարձունքներում, ստեղծում էր ինքնամոռաց ոգևորությունը, բայց և ծանր տքնանքով: Ողջ տիեզերքն ստեղծելիս նա ընդամենը բրտիքի գես էր Հոսեցրել, իսկ մարդուն երկնելիս՝ ծով: Եվ քրտնքի կայախները, նրա ճակատից Հոսելով, ոչ միայն մարդացուժի շաղախին են խառնվում, այլև ամպե թաշկինակով սրբվելով իջնում են երկիր՝ ծնունդ տալով Արաքսին ու Տիգրիսին, որոնք «նորածին Մատիան առան իրենց մեջ»:

Ներշնչումի պահին իր արարումով Հիացած՝ ինքնամոռաց Արարիչը չէր էլ նկատում, թե ինչպես մարդու աստվածային շաղախին իր սրտի տիզմից մի ճանկ է խառնում՝ նենդամիս աստանան, նրա «զազա Հրամանով»՝ օճք սև թույն է խառնում շաղախին, ասես իրար Հետ մրցելով՝ ծաղիկները գեղեցկություն ու քնքշություն են խառնում, արմավենիները՝ քաղցրություն, անզդին Հակընդդեմ՝ արծիվն իր սրտից է խառնում, վազրին Հակընդդեմ առյուծն իր սրտից... Սրանք, զես սաղմնային փճակում, մարդու քաղձաշնոր քնափորության նախահիմքն են այլարանորեն խորհրդանշում: Սակայն Աստված, որ մարդուն երկնում էր իր տեսքով ու պատկերով Համոզված էր ինքը կատարելություն է ստեղծել: «Աստանան չար է, բայց միտքն իմաստուն», — խորհում է Աստված ու Հենց աստանայի Հետ է քննարկում մարդու կատարելության խնդիրը՝ էլ ի՞նչն է թերի: Նենդամիս աստանան չարսխոզորեն «որպես բարիք» է Հուշում նոր շնչավորվող մարդու բոլոր թերությունների՝ նախանձի, չարության, ազաՀության, դավաճանություն, քի-

նահանգրութեան, որկրամտութեան, անբարոյականութեան և աշխարհային հետ միասին նաև սպանութեան արատը: Ու երբ Աստուծոյ լեզու տվեց մարդուն ու պահանջեց, որ նա ինքն ընտրի իր արատը:

Մարդն սասց՝ «Որկոր»,— ու դեռ անհրապ
Մարդու ստաջին երազն եղավ այս
Ու մինչև օրս դեռ նույնն է կյանքում:
Սատանի սիրտը ծախ տվեց կրթում,
Որ Հենց գոյութեան ստաջին օրից
Դուրս նայեց ինքը մարդու որկորից:

Այսպես էր Արարիչն ստեղծել իր գլուխգործոցին՝ մարդուն, և սպասել էր ամբողջ շաղախը: Բայց միայնակ մարդը չէր կարող մարդկություն ծնել և «լցնել ամայի երկիրը կյանքով»: Ու երբ եկավ նույն սատանայի խորհրդով կնոջն ստեղծելու և մարդուն մի «նուրբ ընկեր տալու» գաղափարն իրականացնելու պահը, պետք էր նոր շաղախ ու նոր նախանյութ՝ «կնոջ մեջ մարդու կեանք կրկնելով», բայց ի՞նչ տարբերից:

Ինչպես մարդուն արարելու, այնպես էլ կնոջն ստեղծելու դրվագներում զրևեորվել է բնածին բանաստեղծի պատկերավոր մտածողության բացասակի ձևերը: Իբրևաճարող բանաստեղծական ինքնեկ գյուտերն ստեղծվել են զարմանք Հարուցող բնազդացողության և կենսաճանաչողության, պատկերավորման արտահայտչամիջոցների այնպիսի կիրառմամբ, որ սովորովի կամ ձեռքբերովի չէ: Հինց դա էլ Երկազ բանաստեղծի գեղարվեստական մտածողության գլխավոր շարժիչ ուժն է:

Նա արամախտանելու, փկիխտախելու Հատուկ ճիգ չի անում, այլ ստեղծում է պատկերավոր խոսքի արամարանական այնպիսի կառույց, որում բնական ու կենսական երևույթներն ստանում են լիարժեք բնութագրում ու մեկնություն: Անձնագրումը, մակդիրը, փոխաբերությունը, փոխաբերական Համեմատությունը, Հակադրությունը, Համընթացումը, ներքարանությունը, զուգադրությունը, աստիճանագրումը երբեմն առանձին-առանձին գործածվելով, իսկ երբեմն էլ Համադրվելով

ուժգնացնում են խոսքի ներգործունեությունը: Ահա անսովոր պատկերներից մեկը.

Ու գտավ կախարհն ամենակարող.
Քնուցը վիթխարի մի բբուտի պես
Երեց արևի սիրտը Հրակեց
Եվ սպա խրեց Հողի սիրտը մեծ,—
Կնոջ անհազուրդ զգվանքի Համար
Հող ու արևի կիրքը վերցրեց,
Ամենաստեղծ կիրքն ամենամայր,
Անձար կիրքը մեծ, և, ի սեր կնոջ՝
Քամեց արևի Չեմությունը ողջ,—
Բայց գիտց մարդուն ու իսկույն գտավ
Մեզմութիւնն ստավ ամոթխած լուսնի,
Լուսնի ձյունասիրտ ստուտութիւնն ստավ,—
Աղա շըճողիկ զեփյուտից, Հովից
Ու մարդարտազուրկ փրփուրից բերեց
Թեթևությունը բնույթը կնոջ:

Կնոջ արարման գործընթացը նույնպես սատանայի և մյուս արարածների ներկայությամբ էր կատարվում: Աստված ապագա կնոջն օժտում է բնավորություն և էություն ձևավորող անհրաժեշտ բոլոր տարրերով և ամենից առաջ՝ ծնելու կարողությամբ և Հանուն զավակի մայրական անձնվեր սիրով (Այնի երկիրը կինը երկունքով,— Կյանքն ինչքան ծնի՝ մահն այնքան սունի, Որ դայակ Հողն էլ զլուխ չՀանի): Սակայն Տաշվի առնելով կնոջ զուգընկեր մարդու Հանգամանքը և նրան գիթայով վերցնում է այնպիսի բազադատարրեր, որ «Կինը կրքի մազնիսը լինի»: Ըստ անհրաժեշտության Համադրելով վերը նշված պատկերավորման — արտահայտչական միջոցները բանաստեղծին իր խոսքը դարձրել է ստավել տպավորիչ ու ներգործող, կենսականորեն Համատեղ և գեղագիտորեն Համոզիչ:

Արարիչը կուս աղամանեղից կնոջ կամքն է վերցնում, դողողը եղեգնեց՝ նրա թույությունը, խաղողից՝ գինի և օժից՝

թույն, կեղորդիւսից՝ նրա արցունքը և «անձեղ աստղերից՝ ժպտանալու» թը, ծաղիկներից ու շաքարեղեգից՝ մեղր ու քաղցրութիւն, բայց և քինաքինայի դառնութիւնը, աղմուկից՝ խորամանկութիւն և շնից՝ մի մաղ Համադարմութիւն, իր գեղեցկութեամբ Հպարտացող փեհաշուք սիրամարդից՝ սնափառութիւն, բայց քնքշարույր մանուշակից՝ Հեզութիւն ու նրբութիւն: Վերջնում է վազրի անգթութիւնն ու նապաստակի փախկոտութիւնը, զրախար Հողից մի բուռ և նույնքան էլ զժոխքի տիղմից, մի բուռ՝ ժպտացող աստանայի սրտից, բայց նույնքան էլ իր աստվածային սրտից:

եվ այսպես քսմնց
Ողջ նախանալու թը Հոծ տիեզերքի
եվ այս ամենով կեռ զարմնց՝
ժխորեց չաղափն իր Հուսկ հրաշքի:
Այս նուրբ քսասով կեռ ըր կրկնց՝
Քամկով նրան ողջ տիեզերքից
(Ի՞նչ կին... Տիեզերքն ասես նա կրկնց
Մի բուռ կեռ զ...):

Ստեղծվել էր մարդուն արժանի գուգրեկներ, որն իր մարմնական Համաշարփութիւնների ներգաղչնականութեամբ ոչ միայն Համապատասխանում էր գեղեցկի աստվածային ըմբռնումներին, այլև գերազանցում էր դրանց թն՝ Աստուծու, թն՝ Աստանային իրապես գայթակղելու աստիճան:

Բայց կինն այնքան էր մարմնակին ու Հեզ,
Այնքան ամբխած, նազելի ու վառ,
Այնքան մարմնամտի, մարմնափրփրաղեզ,
Այնքան էր կիւր չընտղ ու վարաք,
...Որ քիչ էր մտում
Մի վեճ վայրկյանում
Աստուծու Հայացքից կինն Հղիանար...

Աստված իրականացնում է իր գլուխգործոց մարդու և նրա գուգրեկներ կեռ արարածը, նրանց տալիս շունչ ու Հոգի և

աստանայի ուղեկցութեամբ երկնային զրախարից աստուծու երկիր, որտեղ որկորի խափարի մեջ «կորցրեց մարդը սանդուղքն աստղերի»: Վայրի բնութեան մեջ սկսվում են երկրաբանակ մարդու մաքառումները, աստապանքի ու բերկրանքի, սերնդափոխութեան շրջանները: Իրար են Հաջորդում մարդու զարգացման աստիճանները խորհրդանշող վայրենութեան, քարե, բրոնզե, երկաթե դարերը: Ճիշտ ու ճիշտ մայր «Բիրքիականի» նման անկասելի են վայրենամարդու բնազգային վերելքն ու առաջընթացը ժմիւն քարայրից, գոյութեան անգիբում կսվում վայրի արգանքների Հեռ բախումներից, Համայնակցութեան նախնական զսևորումներից մինչև Հանրային կացութեան բարձրագույն մեները, Համաբարի նախնական մեները կուսպարտութիւններից ու բազմաստված Հեթանոսութիւնից մինչև քրիստոնեական միաստվածութիւն ու մյուս Համաշխարհային կրոնները, վայրենական բնազգից ու մանկամտութիւնից մինչև Խալիքարհի գիտական մանաշողութիւն ու վերին իմացականութիւն, մինչև Հասարակական կյանքի ու մտածողութեան բարձրագույն մեներ:

Հազարամյակների ընթացքում մարդը կամ Աստուծու գլուխգործոցը զրսևորում է իր բնույթի՝ միմյանց Հակասող աստվածային ու աստանայական կողմերը, դառնում զարմանալի Հակադրամիանութիւն՝ աստվածայինի գերակայութեամբ: Մահակից ու քարե կացնից նա Հասնում է նեւ ու աղեղի, բրոնզե գեներից ու զործիքներից՝ երկաթե սրորի ու այլ պարագաների, որսորդութեան Հեռ միասին սկսում է երկրագործութիւն, մայրիշխանութիւնից անցնում Հայրիշխանութեան:

Չարգացման այս բնական ընթացքի գեղարվեստական Համոզիչ պատկերն ստեղծվել է ոչ միայն մատերիալիզմի և իդեալիզմի պայթարի, այսինքն՝ փիլիսոփայութեան ողջ պատմութեան, իմացութեան տեսութեան, Հեագիստութեան ու ազգագրութեան, գեղարվեստի պատմութեան, լայն առումով Հասարակագիտութեան խոր իմացութեան, այլև բացառիկ կենսագրացողութեան ու ստեղծագործական Հոգի երեակայութեան ու աշխարհամանաշողութեան շնորհիվ:

Գիտական Հասկացությունների ու տրամաբանությունների փոխարեն Հովհ. Շիրազի պոետում տեսնում ենք մարդու ինքնաճանաչման ու զարգացման աստիճանական ընթացքի տարբեր դրվագների գեղարվեստական շքեղ ու տարողունակ պատկերներ, որոնք դուրսում են իրենց անկրկնելի գուճազուրկության ու կենսական Հավաստիւթյամբ:

Թերևս զրական ուրիշ ոչ մի երկում Աստված – Մարդ – Աստանա – Կին Հարարերությունը չի ստացել գեղարվեստական այնպիսի խոր ու բազմերանգ մարմնավորում, ինչպես դիտարկվող պոետում ու մյուս «Բիբլիականներում»: Այս իմաստով Հովհ. Շիրազը արժանավոր ծառանդորդն է միջնադարյան «զրական Հակայի» Գր. Նարեկացու, որի անմրցելի Մատանում պարզապես Հանճարեղ են աստանայի և զանազան «չբրտիներէ» զրգմամբ երկրային մեղքերի մեջ թաթախված, ներքին Հակասություններով լի, բայց աստվածային կատարելության ձգտող ու չհասնող մարդու ողբերգական տառապանքի պատկերները: Անզաղար խոստովանություններով պապախարոզ, մեղքերից ազատագրվելու ձգտող մարդու վերելքը կաշկանդում են «օտար չարի խմբերը», զոջանում մարդու օրտի ու մտքի ողջ ունեցվածքը, ավելացնում նրա անբարի ցանկությունները, որոնց պատճառով մարդը երկնային ուղուց նորից անդունդներն է գլորվում, բարձրագույններին Հասնելու փոխարեն գաճակիծում է իր իսկ նվաճած բարձունքներից, «չնչին բաների Հետեից ընկած անզարմ գրկվում է կարևորներից»:

«Ասածու գլուխգործոցում» կերպավորված մարդուն, սակայն, մոլորեցնում, խանդարում, Աստուծոց ու աստվածայինից Հեռացնում են ոչ միայն նրա որկորում ընակվող անտես սատանան, այլև նրա իսկ եղձած գաղտնի զայնակիցը՝ զժոխք ու զբախտ իր մեջ կրող գեղամարմին և «օձամեջք» կինը: Աստված նրան երկնելիս օժտել էր Հազար ու մի ցանկալի և աստանայի կամքով Հազար ու մի անցանկալի Հատկություններով: Իր Ժայտով ու Համրույթով մարդուն թողելու, նրան տիրելու, «մեղքի մթին քարայրում» նրան իր և աստանայի

կամքին ենթարկելու անեղծվածային կարողության Հեռ միասին՝ ի սեր մարդկության՝ նրան տալիս է նաև գերազույն արժանիքը՝ մայրական սերը՝ ճնելու և ի սեր զավակի զօհարեղծելու պատրաստակամությունը: Մարդուն նախապես թվում էր, թե «գիշերային մեղրավայրիցանուձ» կնոջ գրկի մեջ ինքը Հասնում է կատարելության, որովհետև

Մեր սիրող սրտում և նրակնոջ մեղուչ ազանդում

Քաղցրաչավ կինը աչքբան, որ կարծես քաղցրը դառնացավ:

Գրականագիտությունը շատ է խոսել Նարեկացու «Մեղեդյան տաղում» Տիրամորը երկրային չքնաղ կնոջ տեսքով ու արտաքին բարեմասնություններով պատկերված լինելու մասին: Ամանք ասանց պատկառելու նույնիսկ Նարեկացուն իրականից ավելի աշխարհիկ ներկայացնելու միտումով Հայտարարեցին, թե նա Տիրամորը ներկայացրել է «լանջարաց կնոջ» գեղեցկությամբ:

Սակայն միջնադարականության պայմաններում Հասկանայի պատճաններով Նարեկացու տաղերում, բացի կնոջ պատկերով ստեղծված Աստվածամոր վեհությանն արժանի փառաբանություններից, չկա և չէր էլ կարող լինել կնոջ էություն Համակողմանի ու լիարժեք պատկեր: Իր բանաստեղծություններում «Ի՛նչ կինը», «Ամեն ինչ ես զու, ով կին», «Ինչ որ չունեն ծաղիկները նրբների», «Կինը գրբբ է», «Կինն Հավերժական», «Միայն սերը» և այլն, Հովհ. Շիրազը Հաճախ է արժարժել է Աստված – Կին Հարարերությունը: «Միայն սերը» բանաստեղծության մեջ նա որոշակիորեն բանաձևել է.

Կնոջ մի բուռ սրտից տիեզերքն է Հյուսվել,

Կնոջ սիրան է արմատն այս աշխարհի կանաչ,

Անզամ Նարեկացին կնոջն է երազել

Աչքերի մոտ Հազել Աստվածամոր առաջ...

Բայց թե տեսած լիներ կյանքում գեթ նա մի կին՝

Կին չէր թվա երբեք Աստվածամայրն աչքին:

Աստված — Մարդ, Աստված — Կին բարդ հարաբերությունների խոր ու արտադրական գեղարվեստական հակադրամիասնություն պատկերներ ենք տեսնում «Աստու գլուխգործոցը» պոեմում: Այստեղ էլ, ինչպես մյուս պոեմներում ու բասստեղծություններում, հակադրությունն ունի երկու հիմնական եզրույթներ՝ Աստված և Սատանա, որոնք խորհրդանշում են Մարդու աստվածային ծագումն ու սատանայական միջատությունը: Թե՛ Մարդուն և թե՛ Կնոջը Աստված արարել էր հրեշտակի անմեղությունը ու աշնվությունը՝ «անուղիղ գանգի» նմանվող ամայի երկիրը կյանքով լցնելու, երկնային դրախտը երկրում կրկնելու գերազույն նպատակով: Սակայն դեռևս արարման գործընթացում սատանան նրանց ազնիվ շագարիկն Աստուց աննկատ պատվաստել է իր ու այլևայլ շքոտիների արատները և դեռ երկրում էլ հազարամյակներ շարունակ փորձում է ուղղորդել նրանց արարքները: Իր պատկերով ու վեհ նպատակներով գերազույն ոգևորությամբ երկնած մարդ — արարածի ճակատագրով մտահոգ Աստված, սակայն, հետևում է նրա երկրային կյանքին, մարդու էություն, բնագործության ու վարքագծի մեջ ներդրած աստվածային հետմիասին տեսնում սատանայականի ու զազանայինի բնագրական դրսևորումները:

Պոեմում երկու անգամ պատկերված է Աստու զարույթը, առաջինը՝ երկրում արարման զրգագուն սատանայի վրա, երբ սա հորդորում էր իրենից մի մաղ խառնել մարդու շագարիկ, երկրորդը՝ երկրում մարդու վրա, երբ Աստված, մարդու վարքագծում իր կանխազգածից չեզումներ նկատելով, նրա մեջ զգում է սատանայի որոշակի ներկայությունը, տեսնում գոյություն կազմում նրա ամարդի ուժը, զազանային ճիբաններն ու անգիությունը, ըմբռնում, որ իրենից զոգացված ոգու լույսը մարդուն է տրված, և մարդն է ունակ բացահայտելու տրեղերի գաշնությունը խախտելու ձգտող այն զազանիքը, որն ինքը թաքցրել էր Հյուլեի մեջ:

Աստու ստեղծած մարդն իր իսկ ուզածը չէր, նա ինքն էլ զլուխ չէր հանում իր գլուխգործոցից, որին, այնուամենայնիվ, դեռևս պակասում էին աստվածային գույքն ու մարդկային խիղճը: Սակայն մանկամիտ մարդն անգամ ուներ այն առաջնությունը, որ գիտակցում էր իրենից վեր ու բարձր մի բանի հանդեպ հավատի ու նրան ձգտելու անհրաժեշտությունը: Հավատքը և «սոսկալի հորից» երկուղը զարեք շարունակ մարդու մեջ մեղմել, զսպել են զազանայինն ու սատանայականը, բայց չեն վերացրել: Իսկ հավատքը մարդուն լույսի հետ միասին սնում էր և խափարով, ու խափարը երբեմն թանձրանում էր այնքան, որ խաչն ու Հավատի մյուս խորհրդանշանները փոխարկվում էին սրի և նոր պատերազմների ու արյունահեղությունների պատճառ դառնում: Իսկ զա արդեն սատանայի լուս հաղթանակն էր Աստու և Մարդու դեմ: Սատանան զարգացող մարդու իմաստությունն ու իմացություններն էլ էր կեանքում ծառայեցնել աշխարհակործան իր նպատակներին:

Անհիմն չէր բանաստեղծի՝ «Մերթ մի նորոգ նարեկացի, մերթ թվում ես ցնդած» ինքնարնությունը: Աստու և սատանայի, երկնքի ու երկրի, ցածի ու վերի հակադրություններով Շիրազն իր «Բիրլիականներում» ու մի քանի բանաստեղծություններում ստեղծել է հենց Աստու ներքին երկվությունը ու բարդ պատերազմի, իր ստեղծած մարդու հանդեպ անսահման սիրո, նրանով Հյուսիսում վեհ նպատակների փլուզման հանճարեղ պատկերը: Այս իմաստով էլ «Համամարդկային» խորագրով բանաստեղծությունը կարծես «Բիրլիականների» և ալիքի շատ՝ «Աստու գլուխգործոց» մանրակերտը լինի:

Մայրս սուուն էր՝ միշտ սուրբ կոց, որդիս,
 Երկնքից նայում՝ հսկում է Աստված,
 Ա՛խ այս ի՛նչ զարու հասանք, որ չորսդիս՝
 Իր ստեղծածից սուսկում է Աստված:

Յաճում ելնում են օրոցքի Հովտից,
 Իրար են զրկում ցածու՝ մարդոցս,
 —

Մեկ մեկու համար մեռնում են վշտից՝
եթերից նայում, ժպտում է Աստված:

Յածում անմեղին մեղավորն Հայթում,
Ահլից պաշտվում է սատանան ստված.—
Յածում ծաղկունքն էլ իբրս են խեղդում՝
Կապույտից նայում՝ տիրում է Աստված:

Յածում բախվում են օրոցս ու շիրժ,
Յածում՝ կյանք ու մահ իբր շաղախված՝
Բախվում են Հավիթը Հաշտ ու ռիսիթի.—
Անհայտից հսկում՝ սգում է Աստված:

Ինչո՞ւ է ժպտում և ինչի՞ց է ողորմ կամ սգում Աստված:

Այս հարցադրուածներին պատասխաններն ինքեին հասկանալի են, սակայն դրանք առափնի ցայտուն են դրսևորվում «Աստծու զուխործոցը» պոեմում, որը, մեր խորին համոզմամբ, մյուսներից ավելի խոր ու անմիջական աւնչություններն ունի մայր «Իբրլիականին»: Աստված իր Հոգում ամենուր իր ստեղծողին փնտրող մարդու կերպար կրթեա նախորդի շարունակութունն ու մեկնությունն է միաթամանակ: Տարածության բափղներում ու ժամանակի հարահասում մարդկային հասարակության և իբրահաշարդ ու տարբեր կացութամենքի զարգացման հետևանքն այն եղավ, որ

Մեղքին մարդիկ վերեն Աստծուն,
Բայց դեռ սպում է սատանան ստված:

Սակայն մարդուց ունեցած բոլոր զօգհուսթյուններով հանդերձ՝ նրան ուղղված ծանրածանր նշոքրից հետո էլ Աստված սիրահարվել էր իր ստեղծածին, մարդուց էլ զազանի ինքնասպան լինելով նույնիսկ ինքն էր ուղում ձուլվել իր պատկերակցին, զուրս մղել նրանից սատանային, կանխել մարդու միջոցով սատանայի իրազորմելիք շարամտություններին, կործանարար ահավոր աղետներին վտանգը.

... Որ թն մարդուցն իրավ մարդանա՝
Նրա մեջ նորից ինքն ստավսանա,

Ինքն՝ աշխարհաստեղծ սարսրդը մեծ,
Որ մարդու մեջ էլ սատանան դժեք
Գոյության կռվում, մարդու խղճի մեջ
Աստծո հայացքից այնպես սասանի,
Որ սրևանա խղճի աչքն անշեջ,
Որ մարդն իր մեջ էլ սատանին Հայթի,
Որ խիղճը գտնա զուրս գրախոի,
Որ մարդն այտուհետ՝ Աստված իր Հոգում՝
Աստված չփնտրե ողջ տիեզերքում...

Նարեկացու զարաշրջանից ամբողջով՝ զեպի ստավսանային կատարելութուն մարդու ձգտումն անվերջ է, հավիտենական, քանի որ ժամանակների շուրջությունում մարդկային մարի և իմացություն զարգացմանը համապատասխան թե՛ Աստծու և թե՛ կատարելության ըմբռնումներն ու պատկերացումներն փն-անդազար փոփոխվում: 10-րդ դարի և 20-րդ դարի մարդու ոչ միայն ստավսանային, այլև բնապաշտական ըմբռնումների, աշխարհընկալման ու աշխարհահասանալիության տարբերությունն ակնհայտ է. «Մատայնի» քնարական հերոսի համար մարդու «ընտիր շնորհներով ստավսան լինելու» դիտակցություն «ասելն իսկ ահավոր էր»: Շուրջ մեկ հազարամյակ հետո նրա ժառանգորդ Հովհ. Շիրազի համար բնության հետ ձուլված, արևի, հողի, շողի ու ցողի հետ նյութականացած Աստծու ողջեկն բնակավայրը ոչ թե երկինքն է, այլ մարդու հողին, ուր նա, իբրասանեթ ու հակառակյա տարրերի հետ մաքառելով, շարունակում է իրազորմել սատանային ստանանարար զուրս մեղու և մարդուն կատարյալ զարմենելու իր ստավսանային առաքելությունը: Երկու բանաստեղծներն էլ մարդու և մարդկայինի խնդիրը քննել են բարձրագույն մարդասիրտության դիրքերից: Մինչև 20-րդ դար մարդու զարգացման ընթացքի շրթադյան ղեկադիտական ընկալումն ու լավատեսությունը և՛ նման են նարեկացուն, և՛ տարբեր են նրանից: Եթե Նարեկացու քնարական հերոսը հուսալով հավատում էր մարդու ստավսանայու հնարավորությանը և ծանրագույն ողբերգությունն էր սպում մեղքերի խոստա-

վանութեամբ և թողութեամբ մարտահրժմելով Բարձրալին ձգտելու և չհասնելու իրողութեանից, ապա Հովհ. Շիրազի Հերոսի նպատակն արտաբուսա ավելի «համեստ» է կրելու: Մայր «Բիրյիակնում» նա արգեն բանաձևել էր՝

Որ ոչ թե Աստված ստեղծեց մարդուն,
Այլ մարդն իր ահից ստեղծեց Աստուծո:

«Աստու զլուսագործոցը» պոեմի առանցքային Հերոսը Աստու զտակերտով ստեղծված, աստվածային բոլոր առարկե-նութեաններով օժտված, բայց և աստանային դեռևս չհաղթա-հարած մարդն է, որը, սակայն, Հաղարամյակների անդուզ գարգացմամբ էլ ակնհայտ անկատարութեաններ ունի: Բայց նա տինգերքի և հավերժութեան առջև կանգնած բանաստեղծի, նաև Աստու և մարդկութեան իդեալն է, որին վիճակված է մինչև աստվածանայլը «բյուր հաղար դարեր» անվերջ ճանա-պարհների իր մտքի և խղճի ուժով դժվարութեանների հաղթահարումով: «մարդուց վեր բանի» հավատարմով ու անվերջ նրան ձգտելով, իր մեջ եղած աստանային ընկճելով կատարելապես մարդանայլը:

Ինչն ապարանքում,

Բայց բարայրն Հողում,

Եվ Հատուում էլ բարթելի խիղճը պարզ:

— Ով մարդ, մի բանի պիտի Հավատաս,

Մարդուց վեր բանի, որ Հասնել ձգտես,

Թե աստանանոց չես ուզում նորից

Մի լույս ցնորքի պիտի խնդրելից

Որ ձգտես Հասնել անհատին անրիժ:

Ողորես այնքան, մինչև կարելիք

Փան ու չբռնան բյուր Հաղար դարիք

(Ինչքան դարիք են տեղի քո զլիսով),

Որ ոչ թե մինչև մարդն աստվածանու,

Այլ այս թվացյալն այնպես մարդանու,

Այնպես վեհանա քնքշութեամբ համակ,

Որ մենք էլ աչքին գազաններ թվանք:

Վայրի գազաններ թվանք գալիքին,

.....
Մենք, որ աստված ենք թվում մեր աչքին:

«ԻՆՔՆԵՐԳՈՒՆԷ՝ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ»

Հովհ. Շիրազն իր մեծ ուսուցչին՝ Գր. Նարեկացուն, բնու-թագրում էր աստվածապիղ մակդիրով¹⁷⁷: Իրականում Նարե-կացին, կարելի է ասել, նույնքան էլ մարդապիղ էր: Ավելի քան մեկ հազարամյակ հետո նրա ավանդները շարունակողն ու զարգացնողն ինքն էլ այդպիսին է: Նորագույն ժամանակների մարդու էությունը գերազանցապես բացահայտումը նա իրա-կանացից «Ինքներգանք Համամարդկային» պոեմում: Այն ունի նաև «Էպոս քնարական» ենթախորագիրը, որի մեջ այդ երկու բաների պարագործային համադրումը պարզապես նշա-նակում է էպիկականի և քնարականի համաձուլում մեկ ստեղ-ծագործության մեջ: Սակայն Հովհ. Շիրազն ունի էպիկականի և քնարականի յուրօրինակ ըմբռնում. գերազանցապես քնա-րերգակ էր նա օժտված նաև էպիկական մտածողության Հզոր ու արդասարիք միրքերով: Այս պոեմը, սակայն, իր բնույթով քնարական — խոհանակ է՝ գրեթե զուրկ պատմողական տարրե-րից: Թեև երկերի 2-րդ հատորում նրա գրություն թիվը նշված է 1950, և մեր գրույցներում հանախ մանկական հրճվածքով ասում էր՝ Ջահել ժամանակս եմ գրել, սակայն հեղինակն այն գրեթե ավարտուն տեսքով ներկայացրեց 1962-63 թթ., երբ հանդիսավորությամբ նշվում էր Մայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Այդ ժամանակներում բնդունված էր ուշ միջ-նադարի վերջի հանճարի ծննդյան թիվը 1712-ը համարելը, և նոր-նոր էր Գ. Սևակը բանավիճելով ճշգրտում ու հիմնա-

¹⁷⁷ «Գայոց դանթականը» պոեմում աշխարհի մեծերի ոգիներին հրավիրելու այսպես է դիմել Նարեկացուն.

Պայտեմք և դու, մեծ Նարեկացի,

Ով աստվածապիղ, զո՞նք և դու...:

գորում 1722-ը: Դեռևս նախորդ տասնամյակներից հայտնի էր և Հովհ. Շիրազի բուսն վերաբերմունքը մեծ աշուղ-բանաստեղծի նկատմամբ: Արդեն «Երգ Հայաստանի» գրքում նա ամբողջ մի բաժին վերնագրել էր «Աշուղ Շիրազ», ուր զետեղված էին աշուղական, Հատկապես սայաթնոյան շափերով գրված բանաստեղծություններ: Հորքինական այդ օրերի միջնուշտրում էլ ձեռագրի ոչ միայն Սայաթ-Նովային նվիրված նոր ձևերգերն ու աշուղական շափով գրված մի շարք բանաստեղծություններ, այլև գտնվեց «Ինքներգանք Համամարդկային» պոեմի Սայաթ-Նովայից վերցված բնարանը՝ «Ամեն մարդ չի կանա կարգա. իմ գիրքն ուրիշ գրեն է...»:

Հովհ. Շիրազի գիրն էլ էր «ուրիշ գրեն»:

Գոեմի քնարական տարբեր, ինքնատիպ մեն ու կառույցը թելադրված են նրա բովանդակությունում: Հեղինակի հետ նույնացած քնարական հերոսը երկխոսության մեջ է հանրություն հետ, որը թեև, ինչպես աննիթական նախադասություններում, կասկելի է սրպես գործողություն իրականացնող սուբյեկտ, սակայն վերականգնելի է: Այդ չվերականգնվող ենթական է իր իրարահաջորդ Հոնտորական Հարցադրումներով բացահայտում քնարական հերոսի էությունը: Իսկ այդ հերոսը ոչ թե «Քիրիթականի» կամ «Աստու զլուխըրծոցը» պոեմների զարգացման ճանապարհ է բռնած, բնություն տարերային ուժերի դեմ գոյություն կապում մարտուղ և դարերի ստեղծողով բարձրացող արարածն է, այլ քաղաքակրթության բարձրագույն նվաճումների հասած նորագույն մամանակների մարդն է՝ իր բարդ ներաշխարհով, Համամարդկային խոհերով ու Համազգային անընթաց, ուժի և տկարության, արատները և առաքինությունների զրսևորումներով, մարդկության բախտի և ազգային ճակատագրի շուրջ խոր տաղանպներով ու մտահոգություններով:

Կեղադրատական ընդհանրացման «Ես եմ Համայնը, և ամենքինն է պարփակված իմ մեջ» նաբեկացիական բանաձևն այս պոեմում ստացել է նոր շիրազյան մեկնություն: Մաքերի և զգացմունքների կանոնակարգված, բայց և անշափակչի

հեղեղ է այս պոեմը, որի մեջ ամբողջ ուժով արտահայտվել է Հենց միայն Հովհ. Շիրազին բնորոշ պատկերավոր մտածողությունը:

Գրականագետներից քչերն են պոեմին անդրադարձել. միայն Սերգեյ Ախարեյանը՝ Շիրազ-Նաբեկացի աննչությունները գիտարկելիս, և Սուրեն Աղաբաբյանը, որը դեռ ձեռագիր վիճակում նկատել էր այդ ստեղծագործություն բացառիկ ուժը. «Անկրկնելի է՝ բացառիկ թափի, մեծ զգացմունքի և մեծ մաքերի հեղեղ է:— Հայկական պոեմի սուր էջերից մեկն է, գրված է հրեղեն զգացմունքներով և կրակված սրտով: Գոեմը պատարանում է մարդու բանականությունը և Հզորությունը, պոետական մեծ թափի և արվեստի արտահայտություն է»:

Հովհ. Շիրազի բանաստեղծական աշխարհում այս պոեմի հայտնությունն անակնկալ չէ, ունի իր ստեղծագործական նախապատմությունը, որը թաքնված է այդ հեղինակի ստեղծագործական փառանջների, մտածողության յուրահատկությունների և մինչ այդ գրված պոեմների ու բանաստեղծությունների մեջ: Իոյր ուսմանտիկներն էլ նախընտրել են կենսական հակադրի հանդամանքների, հերոսի և միջավայրի ներհակությունների, հակադրվող հերոսների կամ միևնույն հերոսի ներքին հակասությունների պատկերում: Հովհ. Շիրազին նույնպես հարազատ են ուսմանտիկական տարերքն ու նրա գեղագիտությունը բնորոշ գրանորումները: Իսկ Հզորը երևակայությունն ու սուր կենսազգացողությունն առավել տեսանելի են դարձնում իրականության մեծ ու փոքր, տեսանելի և անտեսանելի հակասությունները նույնիսկ այնքան, որ նրան կենսամեծի թուր երզվյալ ռեալիտետները: Հենց այս պատճառով էլ Հովհ. Շիրազի որոշ ստեղծագործություններում ու մանավանդ «Ինքներգանք Համամարդկային» պոեմում նրա պատկերավորման-արտահայտչական գինանոցից առավել լայն կիրառում ունի **Հակադրությունը**: Ավելին՝ «Ինքներգանք»-ում հակադրությունը մյուս արտահայտչամիջոցների նկատմամբ ունի այնպիսի գերակշռություն, որ վերջինները հարակրկնություն մեջ «անհրամսելու շեղումների» սպափորություն են թող-

նում: Արտաքուստ միտքի՜նակ, գերազանցապես նույնասիկզբ տողերով Հյուսիսյան բանաստեղծում Հեղինակի հետ նույնացած քերական հերոսի հակասական խոհերի ու զգացմունքների բարձրարժեք մարմնավորմամբ Հովհ. Շիրազը հասել է կենսական ճշմարտությունների խոր բացահայտման ու գեղարվեստական լայն ընդհանրացումների:

Առավել հզոր ընդհանրացման բանաստեղծը հասել է «Ինքնեքրանք համամարդկային» պոեմում: Կնո՞ւք Աստուծո ստեղծած «Հոգու կանխիկ» համարելն, անշուշտ, նրա էությունը բացահայտող հասարակ պատկեր չէ և սովորական բանաստեղծական մտածողության արգասիք չէ, այլ Հենց շիրազյան պատկերավորությունը ստեղծված բանածե: Շեքսպիրյան Հանրահայտ «Թույլություն, անունդ կին է» մաքուրիզմի՝ «Ո՞վ սև գործություն, անունդ կին է» հայկական տարբերակն ստեղծած բանաստեղծը գրել է.

Մերթ առում ես, թե կինն Հոգու կանխիկն է մարդարտյա,

Ով կանխիկին շատ յուզ լցնի՜ նրան նա լույս կտա.

Այն կանխիկն է, որ կերտված է Աստուծո սրտի դողով,

Բայց վառվում է Ստաստայի ուղեղի մտի թուլզով:

Գրողի գլխավոր առաքելությունը մարդ ճանաչելն է, — հաճախ առում էր բանաստեղծը, առանց դրա նա չի կարող կերպար ստեղծել: Ինքնանձանջման և ինքնարտահայտման բարձրագույն աստիճանի հասած գրողը միայն կարող էր համաներկականն ու ռեալիստականը միավորելով՝ սեփական կերպարի ստեղծումով հասնել մարդկային էության լիարժեք և անկողմնակալ բացահայտման մասնավոր անձի նկարագրի և քննադատության ծայրերում նկատելով հանուր մարդկության առավել բնորոշ հատկանիշները.

Այսպես, ո՞վ մարդ, դու քո զգասնի ծայրերի մեջ համուս,

Ո՞վ բանաստեղծ, քեզ բացելով՝ մարդկությանն ես բացում:

Արդ, զեղարվեստական ի՛նչ հատկանիշներով է այս պոեմն առնչվում մայր «Բիրլիականին» և շարքի մյուս պոեմներին:

Գլխավորն, անշուշտ, մարդու և մարդկայինի արժեքման խնդիրն է, որն այս պոեմը կապում է մայր «Բիրլիականին», «Աստուծո գլուխգործոցին» և այս շարքում Հեղինակային կամքով զետեղված մյուս պոեմներին:

Գիտություն գազաթնների ու քաղաքակրթության բարձրագույն նվաճումներին հասած մարդը դեռևս կրում է վաղնջական ժամանակների ընդդային այնպիսի հատկանիշներ, որոնք նա զսպում ու քողարկում է մտքի և բանականության ուժով: Եվ որքան մեծ ու տիրական է ինքնատիրապետման այդ ուժը, այնքան էլ բարձր է մարդու զարգացածության ու քարեկրթության աստիճանը: Բայց ահա զսպումի և ինքնատիրապետման արտաքին թվացյալ խաղաղությանը վարագործված են ներքին բուռն ընդդիմաները, դրսից հազարաքարզ կյանքի թվեպղծած հակասական մտքերի ու զգացմունքների՝ ուրիշներին անտեսանելի այերախումները, ներհակ ուժերի հակադրամիասնությունն այն հավասարակշիռ ու «խաղաղ գոյակցությունը», որը Հենց մարդու՝ Աստուծո գլուխգործոցի բուռն էությունն է: Այդ համակշիռության ու ներգաշնակության ամեն մի խախտում կարող է ստեղծել անբնական լինանք: Հենց այդպիսին է պոեմի քերական հերոսը, որն իր ժամանակակից, խառնվածքով ու նկարագրով, իր նյարդային համակարգով, հազար ու մի տեսանելի և անտեսանելի թվերով շողկաղված է այն ժամանակին ու միջավայրին, կենսական այն հանդամանքներին, որոնց արդյունքն է ինքը: Սա սեպի՜ղմ է թե ուժանախոս, բայց սա «Բիրլիականում» և «Աստուծո գլուխգործոցում» կերպավորված մարդու նոր սրահն է՝ հասած զարգացման բարձրագույն մակարդակին: Այս պոեմի հերոսը բարդ հարաբերություններ հանդուցակետում Հայտնված, աստվածանալու ճանապարհով բնթացող, վեհությունն ու սրանչիլքների ընդունակ մարդն է՝ աստվածային լույսի, արարչագործ ուժի և տիեզերախույզ կամքի կրողը, որի մեջ, սակայն, դեռևս պահպանվում են նախաստեղծ ժամանակների ստատանայական տիղմի շհաղթահարված մնացուկները, որոնք կրքեմն գլուխ են

բարձրացնում և որոշակի իրավիճակներում դառնում զգալի ու նկատելի:

«Ինքներգանք՝ Համամարդկային» պոեմն ունի Հրատարակված երեք տարբերակ. մեկը խմբագիր Կ. Հալլջյանի կրճատումներով լույս է տեսել «Քնար Հայաստանի» երկրորդ գրքում 1964 թ., մյուսը՝ Վ. Բալայանի խմբագրությունը՝ 1974 թ. «Քնար Հայաստանի» երրորդ գրքում և երրորդը՝ Երկերի ժողովածուի 1982 թ. Հ. Գեղեքյանի խմբագրությամբ լույս տեսած Երկերի 2-րդ հատորում:

Եվ ոչ մեկն էլ ամբողջական չէ:

Այդ Հրատարակությունների պարզ Համեմատությունը երևան է բերում ակնառու տարբերություններ, որոնք Հե-տևանք են թե՛ խորհրդային ժամանակների խմբագրական ու գլխավորման կրճատումների և թե՛ Հեղինակային Հավիումների: Լրամշակված Համեմատաբար ամբողջական տարբերակը պիտի լույս տեսներ 1974 թ. երրորդ հատորում:¹²⁹

Վերջին տարբերակներում էական կրճատումները մասամբ վերականգնված են, իսկ Համարակալված Հատվածների սկզբում Հեղինակային երկտող լրացումներն այնքան էլ էական չեն, որովհետև կրում են բնղամներ պարզաբանող, Հեղինակային տակիբը ընթերցողին առավել մատչելի դարձնելու

¹²⁹ 1978 թ. 7. Շիրազը իրատարակության էր պատրաստել մի հասերմտի, որը պետի լույս տեսնել Ս. Արարայանի Խաչաչի առաջաբանով և խմբագրությամբ: Սեղ առայում անհայտ պատճառներով այն չի իրատարակվել, բայց բարեխաղաղ պահպանվել է զբոյ տեղատը այն ժամանակների համար ընտրող մատուր իրատարակություններից կտրված ու ստանդարտ թղթերի վրա փակցված, հոնեմակային ուղղումներով: Բոլոր էջերն ունեն իրատարակության կնիք: Այստեղ էլ փակցված է «Ինքներգանքի» ամբողջական տարբերակի չարվածքային ցնուշը (օտտիսեղ), որի նախալեզրին էրի վրա է գրել վերնագիրը. Ժամուլը և էրը Երոզ հեռույալ դասանիշը (արգանտուրան). «32 թմար Դայաստանի, գիրք 3, 497»: Իսկ սա Եշանակում է եթ նույնիսկ պոեմը զբոյ վերջին անղեղաբերությունն է, ապա այդ գեղեր պետի լույս տեսնելը անվավան 32 Ժամուլ Ժակայում և 500 էրը ավելի: Մինչդեռ գիրքը լույս է տեսել 416 էրով, և պոեմն էլ դրված է «խաղը երգեր» բաժնի 357 - 369 էջերում: Ուրեմն զբոյքը կրճատվել է շուրջ 100 էջ, և պոեմն էլ կրճատվել նմ այն մասերը, որոնք բարեխաղաղաբար պահպանվել են փորձանուշի այդ փակցված էջերում:

ծածանդակ բնույթ: Դրանով նաև Հավատվում ու ընդգծվում է նարեկացուց ու Առայաթ-Նովայից ժառանգած Հեղինակային մի կարևոր միտումը՝ իրենով ողջ մարդկությունը ներկայացնելու անբարդ ձգտումը: Ահա դրանցից մի երկու օրինակ.

Առայեա, սիրտ իմ, դու՛ բացելով քո գաղտնիքը մուր՛
Դու բացում ես ողջ մարդկության գաղտնիքները բուր:

Դեռ բաց, դեռ բաց, սիրտ իմ, դու՛ քեզ, դեռ բաց, որ խոր բացվի
Ողջ մարդկության մեծ կյանքը ողջ՛ մուլբը լույսով լցվի:

Առավել կարևոր են վերականգնված Հատվածները, որոնց բացակայությամբ պարզապես աղավաղվում, աղճատվում էր պոեմի առաջին Հրատարակությունը: Այն ավարտվում էր

Հազար տարի Հետո էլ դեռ - դու գալիք ես անուռ,
Տիեզերքում, ո՛վ բանաստեղծ, տիեզերք ես մի բուռ

տողերով: Այնինքն՝ ամբողջությամբ կրճատված էր վերջին՝ ներկա 13-րդ հատվածը՝ հանրության Հետ երկխոսության մասն Հեղինակի խոսքը, առանց որի ամբողջ պոեմը մնում էր որպես երկխոսության հիմնականում մի կողմի արտահայտություն, այսինքն՝ քնարական Հերոսը, թեև կողմ իր խոսքով, ներկայացվում էր գերազանցապես հանրության կարծիքով. Հեղինակին ասում են (ովքե՛ր), թե նա մերթ այս է, մերթ այն, մերթ այսպիսին է, մերթ այնպիսին, սակայն Հեղինակային պատասխան խոսքը, որով ավում է, թե իրականում ո՛վ է ինքը և ի՛նչ իրավիճակում չի ապագրվել: Նկատի ունենք այն, որ երկրորդ տարբերակում էլ ինչ-ինչ պատճառներով 13-րդ հատվածի

Գիշեր կյանքս կարոտ մնաց զեթ սեր մի դիշերի,

Ներսից ես իմ աչքն եմ Հանում, գրեցի ուրիշների:—

տողերից առաջ «Ճարտար» ու «Բարխիդզ» խմբագրման Հե-տևանքով բացակայում է երկու մասերի սահուն անցումը և կապն ապահովող բնագրային երկու տող.

Ա՛յ չէ, ասեք՝ զանդակն ընկած արժվից անգոր ես դու,

Բախան Հետամուտ Հազար որսկան, իսկ դու՛ մի լսր ես դու:

եվ սա արվել է իբր «չափության» կարգով պոեմի տպագրութեան արտոնութիւնն ստանալու և Հովհ. Շիրազիին աստիճանով գիտի ի՛նչ պատիժներէք փրկելու համար:

Սակայն դատեանք բուն պոեմին:

Ըստ էութեան՝ Հովհ. Շիրազն իր պոեմում ստեղծել է Հեղինակի հետ նույնացած, հայկական համամարդկայնութիւնը մարմնավորող մեկ քնարական հերոս՝ Հանրութեան և իր իսկ կողմից բնութագրվող **բանաստեղծ** — **մարդը**: Այդ հերոսը, որ խոսքովածքն է իր սաղի և ողջ մարդկութեան, ժամանակի զգայնաչափն է՝ անցյալի, ներկայի և դալիքի ցուցիչներով: Այդ հերոսի որևէ գործողութիւն պոեմում չի պատկերվում, սակայն նրա էութեանը բնութագրող նույնասակիքը տողերով ամեն պատկեր մարմնավորում է կենսական շարժական իրա տարածք, ավելի ճիշտ՝ յուրաքանչյուր պատկեր մի մեծ կյանքի խոսքովածք է՝ ստեղծված հզոր երևակայութեամբ ու խոր կենսազգացողութեամբ:

Բուն իրականութիւնն այնքան կենսաառաջ է լինում, որքան գերազանցապես Հակադրութեամբ կազմված, մտքի հզոր ճարտարներով ու կրակված, իրոք հրեղեն զգացումներով ստեղծված այդ շքեղ պատկերահանգաններում:

Պոեմն սկսվում է նարտասանական հարցադրումներ պարունակող տողերով, որոնց պատասխանները պետք է փնտրել 13 հատվածներում ընդգրկված դարձյալ նարտասանական տողերում: Ահա այդ սկիզբը.

Ինձ ասում են՝ ինչո՞ւ անվերջ զլխավոր ես, պոե՛տ,
Այնինչ երգով դու ամենքից բախտավոր ես, պոե՛տ:
Ինչո՞ւ դու մերթ մահկամպետ, մերց արցունք ես թվում,
Մերթ ծովանդունդ մարգարիտ ես, մերթ փրփուր ես ծովում,
Մերթ ճակատող կենսութում է, ինչպիսի վանքի խաչքար,
Մերթ բարձունք ես մշտաձուլուի, մերթ անդունդից էլ վար...

Մերթ — ով սկսվող տողերի քանակը քառասյութիկ գերազանցում է մյուսներին, և եթէ նկատի ունենանք, որ Հակադրութեան մյուս եզրը կազմող տողակետերն էլ են սկսվում **մերթ**

ով, դրա կիրառութեան քանակը կմտտենա մի քանի հարյուրի: Ընդամենը 500 տող կազմող մեկ պոեմում այդքան **մերթ** — շատ չէ՞: Բա ո՞ր մնացին բառի գեղագիտութիւնն ու շափի զգացումը:

Բնական այս հարցադրումը կպարզարանվի և կարգարանա միայն պոեմն անուշադիր կարդալու զեպրում: «Հազար ու մի մերթ ես, պոե՛տ, բո՞ւր մի մերթն ասեմ» — գրել է բանաստեղծը՝ կարծես հուշելով, որ յուրաքանչյուր **մերթ** «հազարապարզ, հազարարարդ ու բազմարարդ» կյանքի բնորոշ մի իրադրութեան, մարդկային մի հոգեվիճակի պատկերավոր արտահայտութիւնն է, և իրավիճակները շատ ավելին են, քան ներկայացնում է բանաստեղծն ինքը, սակայն ես իրականում Հենց ամբողջն է ներկայացնում զեղարվեստական ընդհանրացման շնորհիվ:

Քննարական Հերոս բանաստեղծը Համաշխարհային երկու պատերազմներով, դամաճազույն ցեղասպանութիւններով, Հեղափոխութիւններով, փոքր ազգերի մեծ ողբերգութիւններով, ստեղծվող ու փլուզվող մեծ ու փոքր կայսրապետութիւններով, սպառազինութիւնների մրցավազքով ու միջուկային պատերազմի սպառնալիքներով բնորոշվող 20-րդ դարի մարդն է, որը տաղանպում է մարդկութեան բախտով, տառապում է անկասար երազներին, մեծ հույսերի ու զրանցից ավելի ծանր հուսախաբարութիւնների ոլորտում: Իրարամբեր զգացմունքների, հոգին պատակտող ավայտասերների պատկերման իմաստով 20-րդ դարի բանաստեղծն ավելի անբարենպաստ վիճակում է: «Տեսքով միշտ ժպտուն, բայց մարդ խոցված, Դեմքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ» նարեկացիական Հերոսը նորագույն ժամանակներում պիտի ունենար ավելի ծանր ու կողկողազին մորմարումներ: Ահա ինչու է Հովհ. Շիրազը երբեմն զիմում նարեկացու փորձին՝ նորագույն ժամանակների մարդու ներաշխարհը, նրա երկվութիւնները, ինքնակեղեքումները, կյանքի ու տիեզերքի հետ ունեցած տարաբնույթ ընդհանրութիւններն ու Հակասութիւնները պատկերելիս.

Այսպիսի՝ դու բաց ողջ մեղքերդ, ինչպիսի նարեկացին.

Ով մարդ, իրավ, և՛ արծիվ ես, և՛ ազավնի, և՛ ցին:
Մերթ Հուստանեղզ վշտապիչնե՛ր՝ անՀատակ ես մութով,
Մերթ անեմքի Հրարուխ ես, մերթ մայր՝ ներող զութով:
...Մերթ ստու՛ւ ես լուսինն ինչո՛ւ բափտա վրա խնայց,
Մերթ մի նորող նարեկացի, մերթ թիվում ես ցնգամ:
Մերթ մարմնական, մերթ ոգի ես, մերթ կրակ ես, մերթ ջուր,
Մերթ Հույզիքի պառուտաՀողմ, մերթ ճըՆաշուուչ պուճուր:
Մերթ Հայ մանկա՛յ՝ ոգի Հերկող, մերթ վե՛հ ոլիմպացի,,
Մերթ խղճի խիղճն ստազմանաթոր, մերթ բիրտ մի լեռնցի:
Մերթ մարդկության ճակատագրով մըՆնի մահն ես ողբում,
Աստմայի՛ն անեղծվածով աստծու պես ես թխալում...

ԱնասՀաման են իր մեջ բնության ոգին և մարդկության ոգին խտացրած բանաստեղծի մտահորիզոնը, տեսողաչան ու ընդգրկման Հնարավորությունները, բնական տեսողության ու արվեստագետի զիտողականության Հետ միասին նա ըստ անհրաժեշտության կիրառել է ստողազրիտակ ու մանրազրիտակ, և կարծես ոչինչ դուրս չի մնացել նրա ամենատես Հայացքից: Բնարուխ բանաստեղծի խոչոր առաջնությունն է սա արհեստավարժ բանաստեղծից. նա իմաստուն երևալու Հատուկ ջանքեր չի գործադրել, ստեղծած պատկերներով զարմացնելու նպատակ չի Հետապնդել, այլ իր խո՛հերն ու զգացմունքներն է Հանձնարալայի պատկերավորությամբ արտահայտել:

Անկ ներ, որ պատկերավորման միջոցներից Հանարաղեպն այս պոեմում Հակազրություն է, սակայն Հովհ. Շիրազն առատորեն ստեղծել է նաև Համազբաղկան աշխարհի պատկերները, որոնց մեջ իրենց տեղն ու գերն ունեն Համեմատությունն ու փոխարեկությունը, մակերթն ու նրբարանությունը, Համըճրու՛ւմն ու պարազորը, նույնակերպն ու աստիճանավորումը, չափազանցությունն ու նվազարեկությունը: Այս ամենի ճըմուռ զործածությամբ են ստեղծվել ընդգրկուն ու տարրու՛նակ այն պատկերները, որոնք պարզապես շնչում ու բարխում են կյանքով: Այդ պատկերներում բանաստեղծի անձնական կյանքը միահՀուսված է անձնավորված բնությանը, Հայության պատմական բախտին ու Համայն մարդկու-

թյան ճակատագրին: Նրա մեջ միասնամանակ «բարախում են»՝ օճի սիրտն ու փղի սիրտը, նրա սկանչին Հասանելի է նույնիսկ «բացցած մըՆնի Հուսաչանքը», նա փառքից փախչող աստու՛ւ չափ Համես է և բրբջացող սասանայի պես մեծամիտ.

Մերթ մարդուկն ես, մերթ գերմարդը, մերթ նոր, մերթ Հուրյա, ետացվածքն ես որը՛ մարդկության, ողջ բամու՛կ ես նրա... ԱՀա մարդը ողջ քո մե՛ջ, ողջը քո մե՛ջ մեկված, Իրաքաներձ ու ներդաշնակ բյուր Հույզերով բեկված, Այս խառնուրդով բացմաշաղափ այս խառնուրդով Հուսթի՛ Տիղերբում, ո՛վ մարդ, մի բուռ տեղերք ես սրտի, Թեկուզ մի բուռ քո ուղեղով Աստծու Հետ ես չափվում, Մերթ իր ա՛հլը՝ մշտամոռուչ քո լեզու՛ն է կապվում: Մերթ Հողումն ևս զու սարկու՛ց, մերթ տեղնում ես գարի, Որ ժամն Հաննի՛ զու էլ սուբառ նոյան սարերն ի վեր, Մերթ ծիծաղում մահվան վրա, մերթ մահից ես ստակում, Մերթ ոգեկե՛հ մախավիլով՝ Հայ ոգին ես Հսկում...

«Գահընկեց անձեան մե՛ջ էլ զահՀավոր» և «Աբարաուր ճակատագրով վերավոր» բանաստեղծը՝ ազգային ժանրային կուրուստների կսկիծը արտում՝ զատապարտված էր անՀույս ու անսփոփ մենակություն: Իր պատկերավոր մտածողության Հրգոր լուսարձակով նա էր զիտում ու տեսնում խորՀրդային իրականության վարագուրված ու անտեսանելի կողմերը, ուտի խիստ զժգո՛ւ նր գրքից, զժգո՛ւ էր մարդուց, գերՀոր տեքությունների շահամո բողաթախարությունից, Հայոց մեծ եղևունի Հաղեպ աշխարհի անամոթ լուսթյունից, եղևնագործին չգատապարտու՛յց, պատմական արգարություն վերականգնման Հույսերի փյուղումից՝ Ազգային այնդեղներից ու մայրենի լեզվից նահանջող Սփյուռք ձուլման վտանգի մե՛ջ էր, և Հայրենի Հողերի վրա Հայության ազգահավաքի երազանքը չէր իրականանում... Նախի՛Յնանն ու Ղարաբաղը Հայաթափվում էին, նրանց վերադարձի Հույսերն ի գերև էին կելում, խորՀրդա՛՝ Թուրքական բարեկամությունը սերտացել էր, իսկ խորՀրդային ղեկավարները Թուրքիային նրա բուճա-

զավթած ու իր նվիրած հայկական հողերի պահանջը չներկայացնելու պաշտոնական հայտարարություններ էին անում: Մրանք ընկնում, դառնացնում, հուսահատեցնում էին բանաստեղծին, բայց այս իրավիճակում անզամե ես ջանում էր հավատալ խղճին ու արդարություն հաղթանակին և լավատեսորեն փայտալուծում էր հայության ապագայի հույսի շողը:

Մերթ թո գարի զորավիզն ես, մերթ ընդդեմ ես գարի,
Մերթ ապստամբ Արապան ես, մերթ Մամիսն ես գերի,
Մերթ մի դույն ես դու թո սղզով, մերթ ծիածանն Հանուր,
Մերթ Հիշելով կուտորածներն Հայոց Հաղար ու բյուր՝
Քիչ է մտում պոկես մահելին հանց պլյաշի եղջյուր¹²⁹,
Կուզես նետել Հոգազուեզն էլ անզուեզները մահվան,
Մերթ աստղերից ես Հարցնում Հայոց հույսի ճամփան...
Մերթ վախում ես, թե հայ լեզուդ զողացվում է գաղանի,
Մերթ ծիծաղում վախից վրա, մերթ լալիս ես Հայանի:
...Մերթ լուսն ես անողահազ, մերթ սղզահապց զողում՝
Թն ախ, ո՞վ է հիմա Մշո շուշաններս քաղում,
Ո՞վ է բռնում Վան տառխն հիմա Վանս ծովից,
Արդյոք պիտի Համբույք չառնեմ իմ մանան Հովից:
Տեսես մեկ էլ պիտի խեղճ աղբրից Աղարանջան,
Արդարությունս արդյո՞ք պիտի բռնի խղճն ճամփան:
Ելնենք պիտի Սասնա տարերն Հաղար ու մի օրսի, -
Մերթ Հույսերի ծխովոր ես, մերթ ոտավոր Հույսի:

Ազգային գործունեի գանդահար բանաստեղծն իր ստեղծագործություններով սերունդների գիտակցության մեջ աստիճանաբար նյութականացրել էր կորուսյալ հայրենի հզորքի՝ Հայոց պատմական բնօրրանի վերագարծի գաղափարը: Ես հայությանը հետևողականորեն գաստրիպանկել էր հայրենի հողերի վրա սղզահավաքի, «իր գլխի տերը լինելու», «Հայոց

¹²⁹ Այս տողից հետո գլավիտը 1982 թ., անշուշտ, ասանց հեղինակի համաձայնությամբ, հիմնովով հանել է 1974 թ. աղբյուր տպագրված հայրերով 4 շղատա ստղբը: Սենսարաբուրյունը բողոսում ենք ընթացողին - Ս. Ա.:

զրոյակի՞» անկախ պետականության անհրաժեշտության գիտակցությամբ, սակայն ինքն էր զգո՞ւ՞հ իրենից:

Որքան էլ «մերթ խելագար, մերթ հանճարեղ խոհերում կորած», «անհույսից խելագարվելով՝ ինքն իրեն կորցրած ու զստած» բարձրագույն պատասխանատվություն էր զգում իրեն Հավատացող մայր ժողովրդի հանդեպ, որը, իրեն մասնազուրկ հարցերին ուրիշ ոչ մի սեղից պատասխան չսակնկալելով, իր իղձերի արտահայտիչ բանաստեղծին էր աղավիճում, նրան էր համարում իր գաղափարական առաջնորդը, սպասում էր նրա սփոփելի ու հուսադրող խոսքին:

Ժողովրդի հանդեպ պարտքի գիտակցությունն էր հարկադրում հայրենաշունչ բանաստեղծին խոստովանելու.

Ախ, ես արժիվ պիտի տայի իմ երգերի ճակոթով,
Հալիվ մի խեղճ գիտուր տփի - էլ իմ ի՞նչն է բախտով:
Ես ծով պիտի տայի ձեզ, ծով, Հալիվ տփի մի դեռ,
Զեզ ծիածան պիտի տայի, բայց ցեղեցի անհետ:
Հաղար Բինդյոլ պիտի տայի ծաղախներին Հայոց,
Հալիվ հույսի մի թաս տփի այն էլ արցունք ու բոց:
Ես ձեզ արև պիտի տայի, երկինք մի աստղալից,
Ավ՛ղ, Հալիվ մի աստղ տփի բախտով իմ թավալից:-
Թե հանճարի Հանք էր վերուստն իր անմարմին ոսկով՝
Վարուստն Հալիվ ցնորք հանեց փրփրամարմին խոսքով:
Կո՞ւմ մշտապես մի հանրավոր, հանքա՞ Մամիս գերի,
Հալիվ հույսի մի շող տփի ոսկուց իմ հանքերի:
Ասեք՝ Աբարատի նման մենավոր ես այնքան,
Որ թվում է՝ դու ես Հայոց աստվածն անողնավան...
Դու աստվածը՝ աստանախար այս անաստված դարում,
Որ մասինաված իմ գլխին էլ դու սե յուսն են դարում,
Թողք փակեմ ճարգարեի աչքերն իմ Արզուրի, -
Վարենում եմ՝ տիեզերակազման սե զալբերից խոսք...¹³⁰

Ստուճասիրությունը բերում է այն Հանողման, որ մարդու էությունն արագահայտման, նրա բանականության, մտքի և ստեղծագործ ուժի փառարանության տունավո՞ւ մայր «Բիրբիա-

¹³⁰ Ընդգծված վերջին յոթ տողերն էլ որևէ իրատարակությամբ մեջ չենք գտնում - Ս. Ա.:

կանին» անմիջաբար աննշվում և կամ նրա գրեթե օրգանական
շարունակությունն են զիտարկված պոեմները:

Շարքում միագործած մյուս պոեմները՝ «Զևսի ծագիկը»,
«Շղթայված մեղեդիները», «Սիրո և խմաստության սրինդը» ևս
իրենց փոխափայտական ու զեղազիտական հարցադրումներով
ընդհանրություններ ունեն մայր «Քիրլիականի» հետ: Այդ պո-
եմները նույնպես կարող են արժևորման և միմյանց ու շարքի
մյուս պոեմների հետ ունեցած ընդհանրությունների բացա-
հայտման:

ՄԱՆ ԱԵՏԵՐՈՂ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԾԻՉԸ

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՎԻՇՏԸ ԵՎ
ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ»

Հին աշխարհի մեծ տիրակալներից մեկը՝ Հայոց Մեծն Տիգրան արքան, դարերի հոլովություն արժանացել է Հայ և օտար ազգագետանների, պատմիչների, պատմագետների ու ժողովրդի գեանհատությանը: Հին աշխարհի Հզոր տերությունների՝ Հռոմի, Իրանի և Ասորիքի Հարևանությանը, նրանց հետ մրցակցող մեծ Հայաստան ստեղծած այդ Հզոր պետական ու սոցիալաքաղաքական գործիչը առասպելական Հերոս է դարձել, արժևորվել դեռևս իր ու Հետագա ժամանակներում ստեղծված ժողովրդական անգիր գրությունում: Պատմաճոր գրառման շնորհիվ փրկված մեր Հին գիպագրի «Տիգրան և Աժդահակ» ճյուղն էլ նրան է նվիրված, թեև այնտեղ կերտված էպիկական Հզոր կերպարը միավորում է երկու՝ Երվանդյան և Արտաշեսյան Տիգրաններին: Իհարկե, Պատմաճոր «Պատմություն Հայոց» աշխատությունում քարեխճճորեն հիշված են նաև Հայոց Հնագարի մյուս Տիգրանները, սակայն Հայոց կենտրոնաձիգ Հզոր պետականության ջատագով նույն Խորենացին առավել կենտրոնացել է Ք. ա. վեցերորդ դարի Երվանդյան Տիգրանի վրա և 95 - 55 թթ. զահակալած Տիգրան Երկրորդի սխրանքներն էլ նրան վերագրելով՝ ստեղծել միավորյալ Տիգրան Մեծ: Տիգրանին իր կարևորությունը և ազգանպաստ գործուենությունը Համարելով երրորդը՝ Հայկից և Արամից հետո, և Հայոց թագավորների մեջ իններորդը՝ նրան կերպավորել է որպես սոցիալաքաղաքական Հզոր գործիչ և մարդու՝ որինսակելի բնավորությունը ու վարքագծով, փառարանելով նրա աշխարհաշին գործունեությունն ու սխրանքները, որոնց շնորհիվ Հայաստանն ապրել է իր պետականության, փառքի ու Հզորության անկրկնելի ժամանակները: «Անցյեներք այսուհետև գրելու Տիգրանի և նրա զործերի մասին, - գրել է Պատմաճայրը: - Որովհետև սա մեր թագավորներից ամենաՀզորն ու ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, Հույներին էլ ոչ բիշ ժամանակ

նվաճելով իրեն Հնագանդեցից, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով Հասցրեց մինչև Հին բնակության սահմանների ծայրերը: Բոլոր իր ժամանակակիցներին նախանձիկ եղավ, իսկ Հնատ եկողներին ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը»¹³¹:

Պատմաճայրն, այսպիսով, պատմական իրողությունը ճշմարտացիորեն ներկայացնելով՝ ստեղծել է նաև զբաղված Հնատաքրքիր մի ավանդույթ, որն իր զարգացումն է ունեցել թե՛ միջնադարում, թե՛ նոր ու նորագույն ժամանակներում:

Տիգրան Մեծը, Հայ և օտար պատմագետների, տարարույթ Հնտաքրքրությունների կենտրոն լինելով, գարծել է նաև արվեստագետների ներշնչանքի աղբյուր, ազգային հպարտության Հնարան, երգերի, բանաստեղծությունների, նաև վեպերի Հերոս: Խ. Արովյանի, Թ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Ս. Շահազիզի ստեղծագործություններում նա ներկայացված է որպես Հայոց պետականության ու սոցիալական Հզորության խորհրդանիշ, նրա կերպարով են ոգևնչվել Հնտագա ժամանակների, այդ թվում և 19-րդ դարաբերնի, 20-րդ դարսկզբի ու դարավերնի ազգային ազատագրական պայքարի ու մանավանդ արցախյան Հերոսամարտի Հայ Հերոսները:

Խ. Արովյանն իր երկերում տարբեր առիթներով հիշել է Տիգրան Մեծին, սակայն մեր նոր բանաստեղծության մեջ Տիգրան Մեծի կերպավորման առաին փորձերից մեկը պատկանում է Ամրատ Շահազիզին. «Միջին Տիգրան» խորագրով նրա բանաստեղծությունը գրվել է 1864 թ. Հունիսի 2-ին: Այստեղ քնարերգու բանաստեղծի ճարտասանական - գեղումային Հարցադրումներին Հանդրդուն են Տիգրանի մեծությունն արժևորող մի շարք արտահայտություններ, որոնք նպատակաձգված էին Հայության փառաշուք անցյալ ու անմխիթար ներկան Հակադրելու և հատկապես ժամանակի եր-

¹³¹ Մովսես Խորենացի, Չայոց պատմություն, Եր. 1981, էջ 85:

տասարդութիանն ուղղված աղիքի հորդոր էին՝ իրենց անցյալի փառքերը և մեծագործ նախնիներին ճանաչելու:

Տիգրան, փառահեղ Հայոց թագավոր
Եվ աշխարհակալ անթիվ ազգերի,
Ո՛ր է կազմածքը թո Հանդիսավոր,
Ո՛ր է պետություն թո Հրապալի,
Ո՛ր Տիգրանակերտ, մեղ պատասխանիր,-
Այդ ճոխ բաղաբը՝ աղլոցը գանձով,
Որ Հափշտակեց բազուկը Հաղթակիր
Եվ մի Հաղվաղյուտ զարդարեց Հրաչքով,
Ո՛ր զնոց, տաս, թո կարողություն:
Գու մի՞ր կաց, կանգնիր, - Ի՞նչ ենք տեսանում-
Այստեղ փլատակ, այնտեղ պղծություն,
Միայն բուերի ձա՛յն ենք մենք լուսմ:

Հարուստ պատմություն ու մշակույթ ունեցող ժողովուրդների անցյալը թաղաբական որոշակի նկրտումներով դատապարտող խորհրդային կոլտնտեսականությունը Հայրենական մեծ պատերազմի շրջանում ֆաշիզմի դեմ մարտնչող խորհրդային ժողովուրդների Հայրենասիրական ու մարտական ոգին բարձրացնելու նպատակով ազգային զրականություններին արտոննց վերապատկերել անցյալի Հերոսական զբոսագները, պատմությունեց վերցնել քաջություն օրինակներ, կերտել Հայրենիքի ազատության Համար թշնամու դեմ մարտնչած Հերոսների օգնուելը կերպարներ՝ անկախ ազգային պատկանելությունեց: Հայրենասիրական ուղղվածությունն ունեցող պատմագիտությունական շատ երկերի հետ միասին այդ մեթոդորակ մուուելն էր նաև Հովհ. Շիրազի «Տիգրան Մեծի վիշտը» պոեմը, որը 1942 թ. Հրատարակվելուց հետո 1960-70-ական թթ. ենթամակերպ ներկայի ու գալիքի Համար անհրաժեշտ Հեղինակային լուրջ լրամշակման, ու երկերի 1982 թ. երկրորդ հատորում ապագրվեց «Տիգրան Մեծի վիշտը և Հավերժությունը» խոսուեն վերնագրով:

Թող զարմանալի չլի՞մ, եթե ասենք, որ բանաստեղծ Հովհ. Շիրազը Հայոց պատմության լավագույն գիտակներից մեկն էր. ընդ որում այդ պատմությունը նրա Համար զեպքերի և իրազարմությունների պատճառահետևանքային շարակազու-
թյուն էլք միայն, այլ ներկայի ու գալիքի Համար անհրաժեշտ կենդանի գոյություն, մեր Հայրենիքի ու ժողովրդի ուսանելի կենսագրությունը՝ կազմավորման օրերեց մինչև նորագույն ժամանակները: Հպարտանում էր նրա Հերոսական էկերով ու մեր ժողովրդի մեծագործ որդիներով՝ անվանագրի նախնի (Հպոնիմ) Հայկով ու Հայոց պետականությունը Հզորացրած Արամով, Արտաշես Աշխարհակալով ու Տիգրան Մեծով, Մաշտոցով ու Խորենացիով, Նարեկացիով ու Արո՛վյանով, Անդրա-
նիկով ու Թումանյանով: Գտտահական էլք, որ նրա տան նեշարան - աշխատասենյակի պատերը զարդարված էին պատմական Հայաստանի տարտեսակ քարտեզներով՝ կենտրոնում, իհարկե, «Հայաստանը Տիգրան Մեծի ժամանակներում» քարտեզն էր՝ եզերված ազգային հիշյալ սրբությունների նկարներով:

Իր այս պոեմը գրելիս Հովհ. Շիրազը չի բավարարվել միայն բանաստեղծական երևակայությամբ և չի գրել սովորական ձևերգ. նրա ներշնչանքի աղբյուրը Հենց Տիգրան Մեծի կենսագրության քաջխմացությունն էր հիմնված Խորենացու, Մ. Չամչյանի, Լեոնի, Ստ. Մալխասյանցի, Հ. Մանանդյանի երկերի ու պատմագիտական այլ աշխատությունների վրա: Որ Հովհ. Շիրազը տեղյակ էր Տիգրան Մեծի Քարտեղյալ նաև օտար աղբյուրների վկայություններին ու բնութագրումներին, երևում է նրանից, որ իր այս պոեմի Համար որպես բնարան վերցրել է Փրանսիացի արեխագետ Ուրեն Գրուսեի բնութագրական խոսքը. «Տիգրան թագավորը՝ այս զեռես չճանաչված Հզոր սիրակալը, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հրացած է պատմությունը, մասնավորապես նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «Ինքնասպանության մեղք իր պետությանը», մինչդեռ

Տիգրանն իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց Հափթուժյան Համար»:

Ի՞նչպե՞ս է համոզվել, որ Հովհ. Շիրազը հրաշայի իմացել է Տիգրան Մեծի դարաշրջանը, իր իսկ բնորոշմամբ «Հայոց ապարտա, բայց անհաղթ արքայի» Հետ կապված բոլոր մանրամասները, բայց նա պատմադեռ էր և Տիգրան արքայի կենսագրությունը բոլոր մանրամասներով չափածո շարադրելու մտադրություն էլ չուներ:

Նա իրագործում էր գաղափարազեղադիտական ուրույն ըրազիր, ուստի ընտրությունը պիտի գործածեր իմացած բազմաթիվ փաստերից միայն նրանք, որոնք Հնարավորություն կտային իրեն՝ իրագործելու իր նպատակադրումը: Ահա ինչու նա Ս. Շահադիզի նման չի օգտագործել Գոմպետի, Լուկուչյուսի, Գրատտի, Բադրափանի և ուրիշ գործիչների անունները, չի պատկերազարդել Տիգրան Մեծի՝ Հռոմի և Գարսկաստանի դեմ տարած դիվանագիտական ու ռազմական մեծ հաղթանակները, մզած բոլոր Հերոսական նահատամարտերը, այլ իր մտաւեռումը կենտրոնացրել է արքայի կյանքի մի կարևոր դրվագի վրա և դա Հիմք է դարձրել գեղարվեստորեն բացահայտելու նրա ուժը պայմանավորող գաղտնիքը, որն էլ, նրա Համոզմամբ, Տիգրան արքայի պատմական մեծ դասն էր ներկայի ու գալիքի հայ սերունդներին:

Այս մտտեղումով են թելադրված պոեմի թե՛ կառույցը, թե՛ գաղափարական ու գեղարվեստական շարքադրումները, որոնք ստացել են գեղարվեստական համապատասխան լուծումներ:¹³²

¹³² Չովի. Շիրազը առանձնաի կարևորություն էր տալիս իր այս պոեմին: Երկերի երկրորդ հատորի՝ մեզ միտած օրինակում մա, որպես հավանության նշան, բովերմներ է դրել այն պոեմների վրա, որոնք պիտի ընթացվեին առանձնահատուկ ուշադրությամբ: Այս պոեմի առաջին էրի վերանմատում բողջիկի տակ մաս երկու գծով է դրել, բողջիկներ է դրել մաս իր հավանած մի շարք տողերի ու պատկերների վրա, որոնք կազմում են պոեմի գաղափարազեղադրվեստական հենքը: Պոեմներ պարունակող այդ հատորի անվանաթերթին էլ գրել է ռուսերազ ընծայականը, «Սուրբն զսուր պես անցածքերի մնա, Սամվել Մուղալան: Սիրելի — իսկև հայրենասիր ոտելից ընկերք» Ասմվելին, իմ ստեղծագործության զետեղին, ազնիվ, քանիքուն հային: Գ. Շիրազ Ե - Ս. Մ.:

Մրն էր Տիգրան Մեծի զորավարական Հանձարի այդ խորհրդավոր գաղտնիքը. դա նախ և առաջ գերագույն նպատակադրումն էր՝ թշնամուռն դիժած Հակոբական Հողերի վերադարձը, իր նախնիների սկսած՝ հայկական Հողերի միավորման գործընթացը և այդ՝ այդ նպատակը իսկամիտ ու նպատակալույց իրագործելու հետևողականությունը:

Մինչև այստեղ, մինչև այս պահը պատմազեղան ու զրոզը բալլում են Համբլթաց, բայց հենց այստեղից էլ սկսվում է մամփարածանը, այսինքն գիտնականի և գրող - արվեստագետի տարբերությունը: Այսինքն պատմազեղան գիտնականորեն է բնութագրել անջայտի նշանավոր ուսումնարանազեղան գիտնականորեն է, իսկ զրոզը ներկայի գիտնականից կենտրոնացել է նրա մարդկային որակների վրա, կերտել մարդկային կենդանի բնավորությունը, որը գործում է որոշակի պատմադարաբանական հանգամանքներում: Գրողը բացահայտում է նրա արարքների և գործողությունների Հոգեբանական դրդապատճառները:

Մեկի նպատակը նյութի ուսումնասիրությունը Տիգրան արքայի գործունեության մասին գիտական ճշմարտության բացահայտումն է, մյուսի գերխնդիրը՝ նույն այդ Հիմքի վրա Հերոսի մարդկային էություն, նրա բնավորության ու Հոգեբանության, զգացմունքների ու արամադրությունների պատկերումը:

Պոեմի նախորդանքում արդեն իսկ առկա են այն թափանցիկ ակնարկները, որոնք «Հուշում» են Հեղինակային ասելիքը, պարզում նոր սերունդների համար անհրաժեշտ՝ հեռավոր գալերի ու ներկայի ուսանելի առնչությունները: Սկզբից ևեթ Հայոց աշխարհի մյուս լիանադազաթների և Մասիսի Համեմատությանը կարծես մատնանշվում է Տիգրան Մեծի գերակայությունը, ընդգծվում նրա գործի վեհությունն ու նրա ժամանակների Հայաստանն ու ներկայի Հակադրությունը: Անձնավորված Մասիսը պոեմի թե՛ սկզբնամասում և թե՛ վերջերգում ներկայացվում է որպես զերված ու չլքված Տիգրան Մեծ:

Արքաների արքան է վեհ,

Թաղն է Հայոց լեռները,-

Բայց Առաված իմ, այս ինչ սե է

Եղիան օտ ու ձեռների...

Նայում է ինձ՝ կարծես զերված
Տիգրան Մեծն է ինձ նայում,
Մերթ ամպում է ու մերթ քայված՝
Ինչ-որ հույս է փայփայում...

Աս Հենց այն միջուկն է, որի շուրջ Հյուսիսիլու էր Հեղինա-կային ասելիքը՝ Հնադարի Հոր արքայի գրամատիկ Հոգեկի-նակի, նրա խորագետ ներքին ու արտաքին քաղաքականու-թյան և սխրանքների պատկերումով:

Նախերգանքին Հաջորդում են կտիկական գործողություննե-րը՝ Հայոց պատմության մի կարևոր դրվագի չափառն պա-տում, որտեղ պատմական իրադարձությունը ներկայացվում է պատկերավոր գեղարվեստական խոսքով: Կարծես բացվում է պատմության վարագույրը, և թատերարժեքում՝ գործողու-թյունների կենտրոնում, հայտնվում է իր իշխաններով շրջա-պատված Տիգրան արքան, որը ծանր վշտի մեջ է: Նախ՝ Հեղի-նակային պատումով, այդպե՛ս՝ Հերոսի ներքին մենախոսու-թյամբ ու նրկխոսու-թյուններով ներկայացվում է Հայաստանի քաղա-քական անելանելի կացությունը և Հենց այդ պատճառով մոտասանջու-թյունների մեջ և Հոգեբանական բարդ իրադի-նակում հայտնված Հերոսը՝ իր մի ճակատագրական խորհրդա-ծու-թյամբ:

Պատմության մոտայան հավիթ է դառնում,

Երբ սերունդներն են ավանդում իրար,

Եվ ահա իմ զեմ հարու-թյուն ատնում,

Ելնում է աղնիվ արքան ու մթաթ՝

Կանչում է զբոված իր իշխաններին՝

Որսի զնայու: Բայց պահ մի լռին

Նստում գետափին, զինի է խնդրում:

Ելնում է իր մայր Արարսն ասիերին,

Ասես արքային զինի է բերում,

Բայց մու-թն է զեմբը, ու զինին քանում,

Կարծում է՝ իր մոր արյունն է խմում,
Նստելով Հեռվում զերի Մատիսին՝
Այսպես է խորհում իր վշտի մասին.
— Դեռ իմ մայր ազգին մի բան չափած՝
Պիտես է պատճառն իր Հոգի իված:
Երկի ես էի պատանդն Իրանի,
Այսօր՝ մեծագույն մասն Հայաստանի:
Հայրս գլուխս պատանդ էր թողել
Իրանի վաղրին Հոգի տեղ, սակայն,
Ահա վանդակից զլուխս ազատվել
Վանդակ եմ ձգել Հոգերն իմ Հայկյան,
Ազա՛ղ, զրեթի կոպից եմ քափել,—
Ես եմ այս կոտրած Անուրպա թողել
Իմ ազգի գանձերն ազգին ոստիխն...
Է՛՛ջ այս դաշտերի Հայն հարամ է ինձ,
Քանի չեմ ցանել այս Հայն այն Հոգին...

Գերագանցապես քնարերգու բանաստեղծն այս պոեմում էպիկական Հոր շնչով է կերակր պատմական Տիգրանի կերպա-րը՝ նրան ներկայացնելով որպես մեծ Հայրենասերի, Հանձարեղ ուսպմազեռի ու քաղաքագետի ներդաշնակ միասնություն, որն ասելիք ունի ներկայի և գալիքի սերունդներին:

Չափածու և պատկերավոր վերելու շիրազյան արժիսան, անշուշտ, որտեղից աղերսներ ունի ինչպես մեր ժողովրդական էպոսի ու Արտյանի Ազատու, այնպես էլ Թուժանյանի Թա-թուլի և Զարենյի խմբապետ Շավարշի Հեա: Իսկ Հոգեբանա-կան դրամայի առումով Տիգրան Մեծը՝ որպես զբական կեր-պար, առաջին Հարազատ է վերջինին: Հարրած խմբապետ Շա-վարշը՝ «մի հաղթի տղամարդ», որն իրեն Համարում էր «մի հրաշք ծնված հայ ցեղի արզանդից», Հյուրանոցում Ղաչազի երգի ուղեկցությամբ «բնում էր, խմում ու մուժով լցվում»: Իր ազգակիցների կյանքի ու պատվի համար թշնամու զեմ Հերոսաբար կոպած խմբապետի Հիշողություններում արթնա-նում են ջարդի ու զազթի ծանր պատկերները, որտեղ շուրջ

խորհրդածուծ է նա ամբողջ գիշերը՝ «առավոտ մեզին» Դրոյի հետ ճակատագրական հանդիպման դեպուստ ատաջ:

Շիրազյան Տիգրան Մեծը նույնպես ազավիճուծ է գիճուծ ու երգին հավատացած, որ «գիճով ու երգով սիրան է անխաթր գալիս»: Ընդհանուր այս նմանութունները միայն արտաքին են, որովհետև այդ հերոսները հակադրոն տարբեր են թե՛ իրենց ժամանակով ու հանգամանքներով, թե՛ բնավորութիւնով ու վարքագծով, թե՛ նպատակներով ու գործողութիւններով:

Պատմարաններն իրենց գիտական ուսումնասիրութիւններուծ գերազանցապես կենտրոնացել են փաստերի, զեպերի ներքին առնչութիւններին վրա և չեն թափանցել պատմական անձնավորութիւն մարդկային խոհերի ու զգացմունքներին աշխարհը: Իրողութիւն է, որ որքաճ պատմութիւն հպատակը չէ և չենց պատմականութիւն գործողութիւն նպատակով է փաստերի բնարութիւն կատարուծ: Սակայն սա ամենին էլ չի նշանակուծ, թե նա կարող էր հանուծ գեղարքութարի բուհանց վերաբերմուծը գրեւորել փաստերի նկատմամբ: Ընդհակառակը, չենց պատմական փաստերի հովաստութիւն, չին Հայաստանի պետական կառուցվածքի, իշխանական աների և պետութիւն, երկրի աշխարհագրութիւն, հարեան երկրներին հնա հարաբերութիւններին պատկերման առուծով պատմական պոնան այնքան է ճգրիտ, որ նրանով կարելի է Տիգրան Մեծի դարաշրջանին Հայաստանին ու սահմանակի երկրներին ֆիզիկական ու վարչական հովաստի բարտեցներ կազմել: Իսկ սա նշանակուծ է պոնար գեղարքութեական համոզլութիւն հնա միասին ունի և գրտական հովաստութիւն:¹³³

¹³³ Եղև եմ պրեմ պոն Թ. Գալոբյան, Ստ. Սևիթ-Բալշայան և Գ. Բարսեղյան կազմած «Հայաստանի և հարակից շրջաների տեղանուններ բառարան» Ա հատրի (Եր. 1986) հրատարակչական ինքաբերը: Մինչ լույս տեսնել 1980-ական քք, սերճերին, երբ հեղինակներ տարրեր ունորով շարադարները միասնականացնան, քառասուցաների կառուցվածքի սերունդները մշական փուլուծ՝ հեղինակային կազմի հետ հաջորդապոններ համախախի էին: Երեքով՝ սովորաբար ունեն երեկուցը՝ քննարկումները շարունակել Օղակայն գրտայալուծ շրջով: 1983 թ. նրանք բարձրաման գրուցները մեկի ժամանակ պատահաբար հանդիպուծ է Գ. Շիրազը: Պա հաշոր օրը Բաբարան աշխատանքները գիտավորող Թ. Գալոբյանը, որ շատ անմեղական մարդ էր ու երտուն

Հայոց յոթանասուն հովաններն իրեր փրկագին թշնամուծ վճարով պատանդից աղատվուծ Տիգրանին հանդիսա չեն տալիս ներքին տվայտանքները: Անտոնի վիճակուծ նա ելք է որոնուծ, խորհուծ իր ճակատագրական սխալը շակելու մտարին: Երան տանջուծ է Հայրենի Հողերն իր աննի պատուութիւնը փոխարինելու գիտակցութիւնը, բարդագույն մի իրավիճակ, որը գեթին չի տարբերուծ կովից փախուծ, իր «կտորան մեղքով» իր սզգի գանձերը ոսրիին թողած զավանանի կարգավիճակից: Սեփական մեղքի գիտակցութիւն համեմատ այնքան խիտա է ինքնադատափեսուծը, որ մարդկային ներքին դրաման հասնել է բացատրի լարվածութիւն:

Տիգրան արբան պոննի սկըրուծ ներկայացվուծ է մարդկային ծանր վշտի մեջ՝ իր գլուխն աղատելու գիտաց թշնամուծ գիճուծ Հողերի համար մարդկային տվայտանքով, կորուստը վերագործնելու աներկրա վճարականութիւնը: Ողջամիտ ու հեռատես պետական գործչի խոհերն ու զգացմունքները կենտրոնացած են իր սեփական մեղքը բազկելու, Հայաստանն ամբողջ

աշխարհակոն - պատմագոն, կանցեց ինձ և սաաց անխալը - զիտն քո մտքոնուծ բանատեղծ Շիրազի հետ, նրանի քեզ, հալալ է, անպե: Ասուծ էի»՝ շինք հավաքուծ: Մեճել երևել մանք կարնուծ էինք, քե Գ. Շիրազը օրտա բանատեղծ է, այն էլ անլուծ: Երևա աշխեցոցն քս հայոց պատմութիւն ու աշխարհագրութիւն իր թնացութիւնը: Մեր բարձրաման վեճը լսելով՝ մտնեցավ, բարեան ու հարցոցն.

- Գիտնականներն ր. Կո ինչի՞ մասին կ'իմեք:
- Ես տղանցը (Գ. Բարսեղյանն ու Ստ. Սևիթ-Բալշայանը - Ա. Ս.) կատակով ասացին, քե մեք գիտնական ենք, քատարան ենք գրուծ, վիճուծ ենք տեղանունների մասին երեքով տարեր կրալ ենք հիշուծ, քե հորոնացինց այսին տեղանունան մասին ինձ է ասել, որու բանատեղծ մարդ ես, քեզ ի՞նչ է հետաքրքրիլ է մեր լուր վեճը:
- Կատեցինք՝ հոնա կտոնել կիտեսա: Սակայն նա, երեքս համար էլ անպատելի հարցոց՝ որ տեղանվան մասին է ինչ վեճը: Ասացինք և սաացանք չճնել ու պատախան.
- Գե մեկ է ժիշտ չեք հիշե: այդ տեղանվան մասին հորոնացինց այսին գլուծ գրտարով այսուծ է ասել, Ստ. Սևիթայանն էլ քարճանել է այսպես, ընդ որում քնագրի և քարճանութիւն միջև, մի փորը անհամեմատյալուծ կա:
- Այքերը կոցոց ու անմիջապես արուստանցը հորոնացոց մի ծավալուն հասկանք քե՛ գրտարով, քե՛ աշխարհաբար բարճանարուծ ու «եղը»՝ սաեղով մեզ հրաճեցալ տվեց: Մյաճը վաղ ատակոտյան եկանք համակարան, քարտարանով ու քնագրով ստուգեցինք, հանով կեցինք, որ բանատեղծը ճշգրիտ ու բազայի էր հիշուծ հորոնացու վայարուծը: Բեզ է հետուկ կանչեցինք՝ մեր հիպոնուծը հայտնելու, որ հարդրոցս իրեն - Ա. Ս.:

Հայեցելու և ժողովրդի ապագան իր ու իր իշխանների միացյալ Հանրերով կերտելու սրբազան նպատակի շուրջ:

Այս իրողությունը Հոգեբանորեն Հիմնավորելու և զեղարկմանորեն մարմնավորելու գործընթացը պետևում իրականացվել է բացառիկ Հաղոթություն, որովհետև իրենց նպատակապես դերն են ունեցել պատմության զեղարկության սուբ ընկալման ու արդիականության գիրքերից պատկերավոր վերարտադրման բանաստեղծ – արվեստագետի բացառիկ միջբերը:

Ինչպես Հ. Շիրազի ուրիշ ստեղծագործություններում (բանաստեղծություններում, քառյակներում, «Մամիկոնյան սուրբ», «Հայոց դանիթեականը» պոեմներում և այլն), այստեղ ևս նպատակադասց գրեկորվել է Պատմական Հայաստանն իր բուրյր քնակավայրերով, լեռներով ու հովիտներով, ձորերով ու գառանքով, լճերով ու գետերով, վանքերով ու բերդերով ներկա և դալիք սերունդներին ճանաչելի դարձնելու և Հարազատացնելու խորենացիական – արտյանական – ալիշանյան – բաֆֆիական – թուամանյանական – սիամանթոյական – չարենցյան ավանդույթը: Սա Հենց գրական ազգակցության լավագույնյն գրեկորումներից մեկն է, որ իրականացրել են Հայ գրողները Հեռավոր 5-րդ դարից մինչև նորագույն ժամանակները: Սակայն սրանով ստեղծվում է նաև պատմական Հեռավոր գաղափարական և Հերոսի գործողության միջավայրի անուագեղ պատկեր, որտեղ Հերոսը գործում է ոչ թե Հեղինակի կամքով, այլ միջավայրի, ժամանակի ու հանգամանքների թելադրանքով:

Հայության կենսատարածք – բնօրրանում Հայրենի Հողերի վրա, Հայ ժողովրդի ցանուցիբ Հատվածների միավորում, միացյալ ուժով Հարևան և այլ թշնամիների նվաճողական նկրտումների չեղզոցացում, ազգային Համախումբ միասնություն, աճա Շիրազի գաղափարական ու զեղարկության արդիական Հարցադրումները, որ խարսխված են Հենց Տիգրան Մեծի քաղաքական ու ուղղմական գործունեության պատմական փորձի վրա, անկախ դրանց՝ նոր ժամանակներում կենսազործվելու Հավանականությունից կամ Հնարավորությունից:

Այս պատգամներն ունեն իրենց որոշակի հասցեատերերը նորագույն ժամանակներում: Հայության նոր սերունդները զգացել և զգում են այդ գաղափարների արդիականությունն ու հրատապ անհրաժեշտությունը: Հայրենական պատերազմի և Արցախյան ազատամարտի օրինակով վերստին Համոզվում ենք, որ երբ գաղափարները ներկայացվում են զեղարկության և պատշաճ մակարդակով ու Համոզությունը, ձեռք են բերում ներգործության վիթխարի և անկասելի ուժ:

Տիգրան Մեծը թշնամու դեմ վճռական կռվի ելնելուց առաջ Հաղթանակ է տեսնում նախ իր երկրի կենտրոնախույս ուժերի նկատմամբ: Կորցրած Հայրենիքի վիշտը նրան մղում է ծանր մտորումների, բայց և վճռական գործողությունների: Իրատես ու Հեռատես էր նա, Համոզված, որ ինքը Հեռապնդում էր իրագործելի նպատակ: Ինքն իր արքայական մի բուռ բանակով չէր կորցրել այդ նպատակն իրագործել, իսկ ի՞նչ նրան միավորվին Հայ իշխանների գորարանակները, Հաղթանակը կդառներ Հավաստի:

«- Թե միարանվեն սոքա... իմ ազգով՝
ես կարող էի լուսինն էլ զկեղել,
Բայց ամեն իշխան՝ ինքնիշխան բազկով՝
Իբար դեմ դառանի ժանիք են սրել,
Իբար դեմ լարվում՝
Ձեռն միարանվում,
Մեջտեղ Հայ քալստի աչքերն են Հանվում...»:

Հայ իշխանները, ցավոք, չուներին միասնական Հայրենիքի և Հայոց պետականության արժեքի գիտակցություն, չէին համարժեցվում Համացգային ու Համապետական նպատակների շուրջ, իսկ սուսնց միարանություն, առանց միացյալ դիրուժի անկարելի պիտի լիներ կորցրած Հողերի վերադարձը: Հույսը Հայ իշխանների միացյալ կամքն ու զորքն են, բայց իշխանները ոչ միայն արքայի Հետ Համերաջու են, այլև թշնամարար են արամադրված մեկը մյուսի հանդեպ: Հայրենի մեծ Հողատարածքները թշնամուն թողած՝ ներքին եղբայրասպան պատե-

բազմներով ջանում են ընդարձակել իրենց պատկանող Հայրենիքները: Թշնամու՝ «Իրանի փաղիք» գեմ կոխվել շատ ավելի գլուխքին պիտի լիներ, քան արքայի ներքին բարոյական պատերազմն ու իրար հոշտող իշխաններին խաղաղեցնելով նրանց «բազմացրիվ զորքերը» Հայոց պետության շահերին ծառայեցնելը: «Ի՞նչ գահն է տենչում ամեն Հայ իշխան», — տխուր խորհում է արքան, և զրանից ավելի են սաստկանում նրա գառնությունն ու ցավը:

Ահա թե ինչու խմում էր այնքան՝

Հայոց սպարափոտ, բայց անհաղթ արքան:

Որտեղ պատրվակով իշխանների հավաքը, Հատուկ նպատակով Հենց Մասիսի դիմաց՝ մայր Արարիքի ափին կազմակերպված խնջույքը, երեք գուսանների (Ներքից մեկը Հայրն էր երկուսի, Թափառիկ ու կույր մի գուսան էր նա՝ Հանց Հազարերորդ թուն Հոմերուսի) Հայանությունն ու նրանց անբարբառ նվազը դառնում են Հայրենասեր արքայի վշտի պատճառը հիանալիորեն բացահայտող միջոց: Մակայն զրանով բացահայտվում է նաև պետական մտածողությունից զուրկ Հայ իշխանների ու իշխանիկների անձնասպառաժ ճգնաժամների էությունը: Այս զրգավում էլ արքան զնուսն է իր անելիքը:

Ինչպես Հ. Թումանյանը «Հաղարան բլրուլ» անավարտ Հեքիաթում՝ Հ. Շիրազն էլ իր պոեմում կարևորում է երգի գեղը՝ էպիկական գործողությունների մեջ հանդես բերելով երեք գուսաններին: Սրանց սափիղիների Հնչեցրած անբառ երգի ներգործությունից կարող էր նույնիսկ գեղը կանգնել, վայրագ փաղբը կանգնել ու ականջ դնել այն Հնչում էր ինչպես «Համր մոր մրմուն մեղեդին, ինչպես սոխակի արտունջը վարդին»: Ինչպես ողբացող առյուծ, որ վայրենի մոռունջով «կորած ձագին իր զիրկն է կանչում»:

Իմաստուն երգչի մուսյլ մեղեդին բոլորին գցում է խոր մտորումների մեջ, և արքան «բաժակակից քաջից» պահանջում է մեկնել նրա խորհուրդը՝ «Ի՞նչ էր սուրբ խորհուրդն այս անբառ երգին: Մեղեդու սպափորությունից ազլահար իշ-

խանները մեկ-մեկ խոստովանում են իրենց անմիջարար զգացածը, մեկը իր սիրած աղջկա կարոտը՝ սիրո վիշտն էր տեսնում նրա մեջ, մյուսը՝ Թշնամի իշխանի թաղումը կամ նրա հանդեպ իր վրեժխնդրության իրադրությունը:

– Թաղումն էր այս երգն իշխան Արշամի,

Նա, որ իմ որդու արյունը խնեց,

Բայց իր արյունն է իմ գինին Հեմի

Մինչև իսկական արյունը թանձ: —

Իր օրոցներն էլ իմ հուր միերի

Հաղարանակ քերամով ծամեմ,

Որ հոգին սարսի դոմբի հոգում...

Ու դիրու թաք մեսքի մեջ փռեց,

Ասես Արշամի կոկորդն էր սեղմում,

Ու մտքում... նրա արյունը խնեց:

Այսպիսիք էին ու համանման՝ հարբած իշխանների «զլխահակ ցնորքները», որոնց Հայոց արքան հակադրում է մեղեդու բովանդակության իր բմբուռումը, պատմական պահի սուր զգացողությունը արքային համախմբման կենսական անհրաժեշտությունը:

Գեմի այս զրգավում կերպավորված է պետական բացառիկ մտածողության օժտված, Հայրենիքի ճակատագրով մտահոգ հզոր քաղաքագետը: Դժվար է համոզել պատակաված նախաբաններին, որոնցից «Ամեն մեկը իր ամբողջում Թաղավոր է իրեն կարծում»:

Վճռական դեր է խաղում գուսանների անբառ երգի՝ արքայի մեկնությունը, որը նա կատարում է «խուրթի թրերով»:

– Մառյլ մեղեդին այս իմաստունի՝

Չուներ կարոտը սիրած աղջկա,

Մառյանն էր Հայոց ճակատագրի:

Ու ես նրա մեջ տեսեք՝ ի՞նչ տեսա,

– Տեսա երգի մեջ ես հրաշք մի բան,

Տեսա, իրեն թե, իշխաններն Հայոց

Խելքի են եկել, դարձել միարան,

Դարձել միափրտ ու միամտոց,
Խելքի են եկել ի սեր Հայրենյաց,
Ի սեր այն Հոգի, որ զերգված է գեռ:
Հանց ցրված աստղեր՝ եկեք դիրկի զրկի՝
Հյուսելու արևն Հայոց տերութեան,-
Այս էր սուրբ խորհուրդն այս անբառ երգի...

Իսկ անտառից ընրած քառասունն ճյուղերի զատ-զատ ջարդելու և նորից բերված քառասունն ճյուղերի Համախուժմբ ջարդել չկարողանալու օրինակը կարծես Հայ իշխաններին ի սեր Հայրենյաց խելքի բերելու լավագույն ճնարն էր, որովհետև նույն այդ երգի մեջ Տիգրան արքան տեսնում էր Հայ իշխանների ու նրանց ցաքուցրիվ զորքերի Համախմբումը, միացյալ ուժերով թշնամուց Հայրենին ետ խլելու միակ միջոցը: Ավելին, արքան իշխանների առջև պարզում է միասնական Հայրենիքի գաղափարը, որն իշխանների վրա ունենում է սթափեցնող ներգործություն.

« - Պիտի խմբեմ զորքերն Հայկյան.

Չկա Սյունիք, կա Հայաստան,

Չկա Սյունիք, չի՞ք Սիլուսիք,

Կա բյուրաբերդ մի Հայկունիք,

Չկա Սյունիք, չկա Վանանդ,

Կա ողջ մի Հոգ Հայրենավանդ,

Չկան Գողթան, Գեղարքունիք,

Չկան Սյունիք, Բաղրատունիք,

Չկա Երբակ, չկա Գուգարք,

Չկա Թուսարք, չկա Ոստան,

Չի՞ք Վայկունիք, կա Հայաստան:

Չկան Չյունիք ու Ռշտունիք,

Չկան Արցախ, Արշարունիք,

Չկա Տարսն, չկա Սասուն,

Կա Հայաստան մի գահադուռն,

Կա միաթագ, միակերպ

Հաղարարեղ մի Հայրենիք...»:

Գուսանների երգի՝ արքայի մեկնությունն ըմբռնած իշխաններն իրոք իրենց զորքերով Համախմբվում են արքայի շուրջը:

Հայ բազմացրիվ զորքերը եկան,

Դարձան զորք թաղերհն իր արքայական...

Արքան ցնծում է այդ ճակատագրական հրաշք միասնությամբ. այդպիսի ուժով, այդ բազմահազարանոց զորքով Տիգրան Մեծը կարող էր իրազործել իր բոլոր նպատակներն ու ազգային երազանքները: Ի սեր Հայրենյաց խելքի եկած, Հաշտված ու եղբայրացած իշխանները Համոզվում են, Հավատում արքայի այն խոսքին, որով Հավաստվում էր՝

« - Հյաստանն ստանց կենտրոնապահ՝

Առանց ինձ ու ձեզ՝ ճանկում է մահի:

Քաղաքազետ արքան իրականացրել էր դժվարին Հաղթանակը յուրայինների և իր վշտի նկատմամբ. (Վշտին Հաղթողը իշխանն է խելքի). մնում էր ուղղակիան Հաղթանակը, որն արգեն երաշխավորվում էր արքայի, իշխանների և Համայն Հայության Համախուժմբ միաբանությունը: Դրանից ցնծում էր արքան, որովհետև Հասել էր պատմական պահը, իշխանները, արքայի սրի վրա երզվում էին թեկուզ մահով փրկել Հայրենին: Հրաշք միասնությունից ցնծում էր նաև զերված Մասիսը, որի անձնավորումով կերտվել է Հոյակապ պատեր.

եվ քառասուն թուր խաչաբառվեցին՝

Արքայի սրի վրա երզվեցին՝

Մեծ Հայաստանի երազով գերված,

Թվաց թե՛ իրենց առջև չափազած

Հեռվում էլ ծայռն Մասիսն էլ Հուզվեց,

Չյունն՝ իբրև ճերմակ թաղկենակ պարզեց...

Իսկ ազգամարտական Հատուցմամբ փայտղ արքան, որ վաղուց էր սպասում միարանության այդ երանելի պատմական պահին, արգեն իր տարերքի մեջ էր.

... Ու զորավարեց զեպի մարտն այնպես՝
Վաթսուն բյուր հազարն այն հեղեղամին,
Որ նիզակավոր վաշտերով կարծես
Սոսյաց անտառներն իր հետ դնացին:
Ու քանի զնաց, այնքան ամբոխով
Աղեղվոր արքան իր իող բանակով,
Հայոց սուրխին սրառչավ բախվեց,
Իր ձին թրոցրեց բերդերի գլխով,
Կանչեց. — Հայ հողն է Հայ ձեռքի մարավ,
Տվե՛ք հովիտներն իմ յոթանասուն.
Իմ հողն ի նձ ավեք՝ արշուն չե՛մ ուզում,
Չե՛մ կտրի գլուխն անզամ մի ծաղկի,—
Թե խաթրով շատք կտաք ինձ զոտով...
Ու խուժեց զաշտերն իր Հայրենիքի:

Նա ուրիշի հողատարածքները չէր բռնազավթում, այլ ազատագրում և վերադարձնում էր հայոց կորցրածը: Ու երբ իրազործվում է գերագույն նպատակը, չքվում է վիշտը, արքան իր թագը դնում է Մասիսի գլխին, թագադրում նրան ու նրա հետ հավերժանում: Սա պոեմի՝ «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը» երկմաս վերնագրի խորհրդի հեղինակային մեկնությունն է:

Իր պատմական սիրաներով արքան հաղթել է վշտին, հավերժացրել Հայաստան աշխարհն ու ինքն էլ հավերժացել է նրա հետ: Բանաստեղծը Հայկական լեռնաշխարհի, ողջ Հայաստան աշխարհի հավիտենականության մեջ էր տեսնում Տիգրան Մեծի հավերժությունը, ավելին՝ Տիգրանին ինքն է վերանվաճել այդ լեռնաշխարհն ու հանձնել Հայ սերունդներին:

Բացառիկ է շիրազյան այն փոխաբերական Համեմատությունը, որով Հայկական լեռնաշխարհն ու նրա սարերն քնկալվում են որպես Տիգրան Մեծի խլիված հավերժական վրանների շղթա.

Երբ նայում եմ լեռնապարին՝
Սեզ սարերին մեր հայկական,
Թվում է, թե Տիգրան Մեծի
Վրաններն են Հավերժական:

Աշխարհացույց կովից դարձել՝
Ա սա է Հավերժ նա բանակել,—
Դարե՛ր անցան, բայց ոչ մի հողմ
Ոչ մի վրան զեռ չի պղկել:

Դեռ չի պակել ու չի պոկի,
Ու Սեանը թվում է, թե
Լույս վաճանն է հաղթանակի,
Տիգրան Մեծի վաճանն է վեճ:

Եվ Հրազդանն արծաթախալ
Սուրն է անձաճ զորավարի,
Որ մերկացած՝ զուրս է դալիս
Մով պատյանից լեռնապարի...

Ու Մասիսն է գլխին պահում
Ոսկե թագը Տիգրան Մեծի,
Որ շողում է՝ ինչպես պահին
Աշխարհակալ վերադարձի:

Մեծ է խորհուրդը այս պատկերաշարի, որով Սեանը բնորոշվում է որպես Տիգրան Մեծի վեճ վաճան՝ Հայ ժողովրդի նոր սերունդների մեքսում, Հրազդանը որպես անձաճ զորավարի արծաթախալ սուրբ, և Մասիսը, որ գլխին պահում է Տիգրան Մեծի ոսկե թագը, նրա հաղթական ու աշխարհակալ վերադարձի հույսն է ու առհավատյան:

Այսպես է Հովհ. Երրազը հաղաթաթյակների վրայով ծիածանի կամուրջ նետել դեպի Հայոց փառքի հեռավոր դարերը՝ նորագույն ժամանակներում սերունդների պատմական հիշողությունն արթնացնելու և Տիգրան արքայի հաղթական վերադարձի հույսը անմար պահելու նպատակով:

Տիգրան Մեծի մոնոմենտալ կերպարի կերտումով, պատմության փորձի՝ արդիականության համար անհրաժեշտ վկայակոչումով՝ Հովհ. Երրազը խորհրդային ժամանակներում վերաբարձրում էր ազգային միասնության ու այդ միջոցով Հայոց կորուստների վերականգնման գաղափարները: Այդ գաղափարների արդիականությունն ու կենսունակությունը հասկանալի դարձավ նաև վերջին տարիների մեր հաղթական Հերոսամարտերում, ուր Արցախի ազատագրման և մեր միասնական Հայրենիքի սահմանների ամրապնդման համար մարտնչող և հաղթանակող զորամասերից մեկը կոչվում էր «Տիգրան Մեծ»:

Նորօրյա հերոսների այդ մարտախմբերը գաղափարապես դաստիարակված էին և՛ Հայոց պատմության ու Տիգրան Մեծ արքայի գործունեության փորձով, և՛ Հովհ. Երրազի պոեմում կերտված Տիգրան Մեծի վեճ կերպարի Հայրենասիրության ոգով և օրինակով:

«ԱՆԻ» ՊՈԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

1.

Լայն մտահորիզոն ու ընդգրկուն տեսադաշտ, կյանքի խոր ճանաչողություն և ժողովրդի հանդեպ պարտքի բարձրագույն գիտակցություն ունեցող բանաստեղծը միայն ներկայով էի ապրում: Հանուն գալիքի նա երբեմն էլ պեղում է անցյալը՝ նրա մոխրի մեջ գտնելով նարեկայի ու գալիքի համար անհրաժեշտ կրակներն ու խորհուրդները:

Իր շուրջ կենդարյա ստեղծագործական կյանքի ընթացքում՝ Հովհ. Երրազը հաճախ է գիմել Հայոց պատմական անցյալին, գեղարվեստականացրել նրա ողբերգական ու Հերոսական մի շարք զրվապներ: Ծիշտ է, որ բանաստեղծը պատմագետ չէ, բայց նա, ի տարբերություն պատմագետների, ունի պատմության գեղագիտական ընկալում, ամբողջ խորությամբ է կցում և ճանաչում ոչ միայն պատմական իրադարձությունների պատճառահետևանքային առնչությունները, այլև նույն այդ պատմությունը կերտողներին, նրանց մարդկային բնավորությունն ու հոգեբանությունը:

Այդպես են Հայ գրողները, անդրադառնալով 4, 5, 10, 14, 18, 19, 20-րդ դարերի դրամատիկ անցքերին, պատմության խորքերից Հայաստանի իրենց հերոսներին: Այս իմաստով էլ Հովհ. Երրազը Հայ դասականների աչքիվ ժառանգորդ էր և մեր պատմագեղարվեստական գրականության լավագույն ավանդների կենսագործող խորհրդային հետաշարենցյան ժամանակներում:

Բայց նա հեռացավ պատմական թեմատիկայով իր գլխավոր գործերից մի քանիսը՝ «Հայոց դանթեականը», «Անի», «Թոնդրակեցիները» ծավալուն պոեմների տպագրությունը չտեսած: Առաջինը լույս տեսավ նրա մահից վեց տարի հետո խորհրդային պետության մայրամուտին՝ 1990 թ., երկրորդը հիմա

է սպազորվում, իսկ վերջինիս սպազորութեան խնդիրը գեռու լուծված է:

Արցախ կատարած մեր ուղևորութիւններից մեկի ժամանակ, երբ խոսք բացվեց Հովհ. Շիրազ բանաստեղծի, նրա «Ղարարագի ողբի» և այլ ստեղծագործութիւնների մասին, Երևանի պետական Համալսարանի ուսկուռ Արամ Միսոնյանը Հետաքրքրվեց նրա մեղադրելով ու անտիպ երկերով և անկեղծորեն զարմացավ, որ մեր վերջին Հզոր դասակարգներից մեկի այցքան արժեքավոր ստեղծագործութիւններ գեռու մեծ են անտիպ: Դրանց կարևորութեան, մեր ժողովրդի Համար անհրաժեշտութեան գիտակցումով էլ նա նախաձեռնեց երկու երկերի՝ «Անի» և «Թոնդրակցիներ» պոեմների՝ Երևանի պետական Համալսարանի Հրատարակչութեամբ լույսընծայելու Հայրենանվեր զորքը: Բանաստեղծի զավակները, առանց նյութական անկակութեան, մեզ բարենշուքար տրամադրեցին «Անի» պոեմի մերենագիր այն տարբերակը, որը բանաստեղծը տասնամյակներ առաջ Հնա էր վերցրել Հրատարակչութիւններից չՀամաձայնելով այն ահագոր կրճատումներին ու աղճատումներին, որ նրան պարտադրում էին խորհրդային դավախոս ու խորագիրները:

Հովհ. Շիրազը բանաստեղծ մեզի էր և իր կոչումը Համարում էր ժողովրդին անմնացորդ ծառայելը: Նրա Համար գրելը, ստեղծագործելը միշտ էլ եղել է գերազույն բավականութիւն (Նոզեղեան եմ առանց երգ, Ես երգով եմ Հրեղեն), բայց իր ստեղծագործութիւնները դավախոսի գաղափարական մանրագիտակից ու խմբագրական մկրտաբան փրկելով անխաթար սպազորելը՝ ծանրագույն տառապանք: Երբեմն Համաձայնում էր փոխզեղումների և ամբողջը Հրատարակել կարողանալու Համար ու Հատարելում էր իր բանաստեղծական իսկական գլուխների ու ճատնագործութիւնների մի մասը, բայց Համար դա էլ չէր փրկում, և Հիշյալ պոեմներն այդ պատճառով են մնացել անտիպ: Ե՛վ ահա իր զրգիւց վեց տասնամյակ Հնտո «Անի» պոեմն արժանացավ առանց կրճատման ու աղավաղումների սպազորվելու բախտին՝ ինչպես Հեղինակը կուզենար:

«Անի» պոեմը զրգիւ է ստալինյան ժամանակներում 1950 - 51 թթ. և սկզբից էլ Հանդիպել լուրջ դիմադրութեան: Բայց եթե բեղավոր մեծ ոճագործի կենդանութեան օրերին բանաստեղծի որոշ զրվակիցներ ու քննադատներ, զրական նաժանձի կամ իրենց ներքին վախի թելադրանքով, բաղաբական ծանր մեղադրանքներ առաջադրեցին նրան պնդելով, թե «Շիրազն իրավունք չուներ գրելու «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ», սպա խուշուրվան «ձեռնալի» և խորհրդային Հետագա տարիներին ու մահավանդ Հայաստանի անկախութեան ժամանակներում Հովհ. Շիրազի այս և մյուս գործերը չսպազորելու ու անտարբերութեան մատենը որևէ արդարացում չունեն:

1954 թ. «Հատընտիր», 1958, 1964, 1974 թթ. «Բնար Հայաստանի» գրքերում Հ. Շիրազն «Անի» պոեմից որոշ Հատվածներ սպազորել է, որիչ Հատվածներ մեղագիր չըլի են ժողովրդի մեջ, արտասանվել բեմերից, տարածվել Սփյուռքում, բայց պոեմի ամբողջական Հրատարակչութեան իրականանում է առջին անգամ:

Խորհրդային տարիներին պոեմն ընդգրկվում էր Հրատարակչական պլաններում ու տեղափոխվում ասրուց տարի: Բանաստեղծը Հույսով սպասում էր, նույնիսկ ոգևորվում Հրատարակիչների խոստումներով: Այդ ոգևորութիւնը երբեմն այնքան մեծ էր լինում, որ բանաստեղծը պետՀրատի 1-ին սպարանի տացանք թղթի դիմափաթեթների վրա աղնիվ միամտութեամբ մատիտով գրում էր «Անի»-խա Համար է», ու ստորագրում էր: Բայց գրելի մեծ էին Հուսատարութիւնն ու խոստումութիւնը, որովհետև նրան Հրատարակչութիւնից ուղարկում էին Հրատպետում, այնտեղից Կենտկոմ, և այս կարուստիլ մեջ ժողոված բանաստեղծը չգիտեր ինչ աներ:

Հրատարակչական բեղավախի որոշ պաշտոնյաներ էլ որդեգրել էին յուրօրինակ այսպնելի վաբքգրիմ կարծելով, թե Հանձնար իրենք են ու ոչ թե Շիրազը իրենց գլուխն ազատելու Համար վերինները բանաստեղծի գրավոր դիմումները մակագրում էին ներքիններին, ներքիններն էլ, դուցն Հատուկ Հանձնարարութեամբ, այնքան էին տանում-բերում, որ բանաստեղծը

տեղձը հրասթափում էր բոլորից: Կամ նրան մատուցում էին անտարբերության, կամ էլ, լավագույն դեպքում, կուստորեն ոտնաՀարելով Հեղինակային ու մարդկային իրավունքները՝ բանաստեղծին առաջարկում էին այսինչ պոեմի կամ այնինչ գրքի կարևոր հատվածների այնպիսի անհնթեթ կրճատումներ, որոնց բնականաբար ու զմարար դեմ պիտի լիներ բանաստեղծը: Դասանցած, վիրավորված Հովհ. Շիրազը, մտածելով ավելի լավ է չապփի, քան այդ վիճակով ու տեսքով ապփի, հրատարակչություններից հետ էր վերցնում մեռալիքը: Քանի՞ ցա հնչել է նրա բարձրամայն ազազակոզ և բոլորին լսելի պատկերավոր դժգոհությունը.

— Գրե՛ք՝ ինչի կնճանին էսոնց կրճատումները. տանք թե՛ մեր խորհրդային մեծ պետությունը որոշել է Հեղհաստան կամ աֆրիկյան հեռավոր սովահար մի երկիր, որպես մարդասիրական շտապ օգնություն, հարյուր վազոնանոց շարժակազմով ցորեն ուզարկել: Բայց կատարող ողորմելիներն ու սահմանապահները կրսն, թե թեղ շատ ծանր է, զնացքր տեղ չի հասնի: Հատկապես ծանրացնում են «նացիոնալիստական խորուկով» բեռնված մի քանի մտանդավոր վազոններ, դրանք պարտադիր պիտի հանենք, ինչպե՛ս կարելի է...

Ես էլ սառւմ եմ համաձայն եմ, բերե՛ք դրանք հանենք. չէ՞ որ միլիոնավոր սովահարներ մեր օգնությունը՝ այդ ցորենին կուպանեն: Բայց իմ համաձայնելուց հետո՝ երբ խորագրելու, կրճատելու մասնակից կուզա, էտոնք Հենց առջևից շոգեքարչը կհանեն: Էլ է՞ղ զնացքր ի՛նչպիսի շարժի, ցորենը ո՞նց տեղ հասնի: Հա՛ թող սոսիյաներն օպանան: Եղպես էլ սպասողական վիճակի է մատնված մեր ողջ ժողովուրդը»:

Հովհ. Շիրազի շուրջ ստեղծված անբարեհաճ մթնոլորտի ու բարդ իրավիճակի մասին կատարյալ պատկերացում կարող է տալ հետևյալ վավերագիրը՝ կազմված «ԱՆի» պոեմի ազգազրույցյան հետ: Բանաստեղծը դիմել էր բոլորին՝ վերևից ներքև և ներքևից վերև: Տեսնելով, որ հրատարակման պայմանագիրն ստորագրել են, բայց Հոնորար տալու մտադրություն չունեն, 1968-ին նա մի գրավոր դիմում է գրել՝ փոխելով հասցեա-

տերների անուն-ազգանունները. մեկի անունը՝ մյուսի ազգանունով կամ հակառակը. դրանով կամեցել է ասել, թե բոլոր պաշտոնյաներից ես չեմ մարդիկ եք: Մասնույի պետական կոմիտեի նախագահն այն ժամանակ Հայկարամ Ութմազյանն էր. «Նախրի» հրատարակչության անօրենք՝ երկար Բարսեղյանը, նրա գլխավոր խմբագիրը Մկրտիչ Մարգոսյանը, զեղարվեստական գրականության բաժնի վարիչը և գրքի խմբագիրը՝ Լևոն Միրիջանյանը: Ահա Հովհ. Շիրազի դիմումը նրանց խոստած անուն-ազգանուններով.

«Արիել»
Խիկար Ութմազյան – ին,
Հայկարամ Բարսեղյան–ին,
Մկրտիչ Միրիջանյան–ին,
էլի վերևների ... ո՞մանց

Հ. Շիրազից

Ի՞նչ է՛ք ամաչում, որ ինձ թողնում եք կարոտության ու կարիքի մեջ, մինչդեռ իմ մեռողները ծովանում են... և սակայն չեք թողնում, որ իմ իրավունքի տերը լինեմ, արդար իրավունքի ստանա՞մ ինձ հասանելիք Հոնորարը «ԱՆի»-ից...

Ի՞նչք խի՛ղճ, խի՛ղճ, խի՛ղճ, խի՛ղճ ունե՛ք, թե՛ ոչ: Ի՛հարկե՛ս, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ»¹³⁴.

Տասնամյակներ շարունակ այս իրավիճակը բանաստեղծի համար ստեղծել էր մզձովանջային դրամա, որի բնորոշ արտահայտություններից է հետևյալ բանաստեղծությունը.

Ոչ մի քաջի կուպարճ
Այնքան նեւ չի տեսիլ,
Ինչքան իմ սիրուը քաջ,
Ա՛խ, կտրիճ եմ ե՛ս էլ:
Ա՛խ, կտրիճ եմ, կտրիճ,

¹³⁴ Տես Մ. Մանուկյան, Գովանցես Շիրազ. Տրտախալ ստեղծագործություններ, էք 278-279, նաև ամբողջ «Շիրազի արիթմիկային ճանաչանքը» բաժինը:

Որ նետերով այսքան
Պոզվում, մպուում եմ Քինջ՝
Ինձ խոցողին անդամ...

Նույն այդ հրատարակչներն էլ Հորինել էին ինքնադա-
րացնող կեղծ մի առասպել, թե իբր իրենք շա՛տ-շա՛տ են ու-
զում Երրազի սանգմագործությունները տպագրել, սակայն բա-
նաստեղծն ինքն է իր թշնամին, «ինքն է խանգարում իր գրքե-
րի տպագրությունը, ձեռագրերը հետ է վերցնում ու չի բերում,
որ տպենք»:

Եվ այս ոչ պարկեշտ «արդարացումն» էլ Չանցել են Հիմ-
նավորել իրենց Հորինած գրավոր ստերով: Կարգացե՛ք Խ. Բաբ-
սեղյանի հուշագիրքը և կտեսնեք, թե բանի՞ անդամ է նա Եր-
րազին գրավոր «խնդրել», որ հետ ընթի «Անի» պոեմի ձեռա-
գիրը, իսկ Երրազն էլ, իբր, այդպիսի ազնեիվ Հորդորին չի ա-
ծագանքեմ... էլ չի ասում ինչո՞ւ է բանաստեղծը հետ վերցրել
ձեռագիրքը և ինչո՞ւ հետ չի բերում: Բայց Հենց նրա տնօրեն
կեղծ ժամանակ էր՝ 1969-ի զարնանք, որ հրատարակչու՞թյու-
նում, ուր տողերին գրողը նախադրիպլոմային արտադրական
պրակտիկա էր անցնում որպես ԵԳՀ հայ բանասիրության
ֆուկուլտետի ավարտական կուրսի ուսանող, պատահեց Հե-
մակայ հետաքրքիր միջադեպը:

Հովհ. Երրազը համախ էր հրատարակչու՞թյուն գալիս ու երբ
նա հայտնվում էր այդ աշխատավայրի երկար միջանցքում,
գրեթե բոլոր ավագ ու կրտսեր խմբագրիչները, սրբագրիչները
զուտա ին թափվում իրենց աշխատասենյակներից ու բա-
նաստեղծին շրջապատում նրա սրամտ կատակները լսելու:
Մի օր էլ նրանցով շրջապատված Երրազին մտանցավ մի ըս-
փյուռքահայ, որը երեկ գրող էր և ինչ-որ գործով եկել էր հրա-
տարակչու՞թյուն³⁵: Ակնածանքով ու վախճարած՝ նա մտանցավ

հրատարակչության աշխատակիցներով շրջապատված, զվարթ
կատակող բանաստեղծին ու հարցրեց.

- Գու՞ք իրական չովհաննես Երրազն եք...

- Ի՞նչ է, նման չե՞մ... Ե՛ս եմ չովհաննես Երրազը, ուրիշ
Երրազ չկա: - եղավ անմիջական պատասխանը, - ինձե՞րք ի՞նչ
կուզեա:

Մարդը անակնկալ ծուկ շոքեց, բռնեց Երրազի բանկոնի
փնջը և սկսեց երկյուղածորեն համբուրել, ինչպես երազյալ
սրբի քղանցքները համբուրելին:

- Ա՛րք էլ, այ մարդ, ի՞նչ կուզես ինձե՞րք:

- Պարտի՞ բանաստեղծին կրե՛նք Հարցում մը ունիմ մի-
այն, - կանգնելով ասաց մարդը: - Սփյուռքի մեջ շատ եմ լսած
Ձեր «Անի» պոեմի մասին. Բնյու՞թ թե Հայնա՞յ միայն ձեռքե-
ծե՞ք խվող սքանչելի պատարկիներ են հայտնի. ե՛րբ պիտի
պոեմը ամբողջու՞թյամբ տպվի, Սփյուռքի Հայու՞թյունը ան-
համբեր աղճը կպատես:

Բանաստեղծն այդ սփյուռքահային հավաքվածների ներկա-
յու՞թյամբ բարձր ասաց.

- Խաթիրս համար, եղբայր Չան, արի հարցը հասն'զ տուր:

Նրա թեկեց բռնած՝ Հովհ. Երրազը բուլբուլ ուղեկցությունը
տարած հրատարակչության տնօրենի ընդունարան, քարտու-
ղարու՞հուց ճշտելով, որ տնօրենն իբրք տեղում է, դուռը բացեց
և այնպես ասաց, որ հատկապես նա՛ լսի.

- Դե՛ հիմա հարցը կստեղ բա՛րձր կրկնի՛ր, որ դիրկնադրը
լսե. չնայած «Հուշարձան մայրիկին» գրքին տպագրությանն
օդնկ է, բայց «Անիին», «Հայոց գանթեականին», «Թոնոգրակե-
ցիներին» զեպրում նրա սրտի մի սկանչը խուլ է, հոգու մի
աչքն է՛լ կույր...

Մարդը հարցը կրկնեց, և բոլորը լսեցին Հովհ. Երրազի
խկապես անօրինակ պատասխանը.

- Իմ «Անի» պոեմն երկա՛ր ժամանակ վերևների սառցա-
փրա արձևերի, առյուծների, բորենիների, գայլերի, շնագայլերի,
աղվանների ժանիքների, գիշանդղների կտուցների ու ճիրան-
ների մեջ էր: Բրիտանի շարժարանքով ինձ մի կերպ հաշողվել

³⁵ Այս դեպքը հետագայում պատմում էր նաև Ներկաներից Օնեկ Խամաչարանի հայա-
գետական կենտրոնի տեղանունները բառարանի աշխատակից, բանաստեղծ Բագրատ
Տալալը - Ս. Մ.:

է պոսեմս նրանցից պոկի: Բայց հիմա էլ նրա, ինչպես և «Հա-
յոց զանթեականը» պոսեմս ճակատագրիբը վտաճվել է այս-
անցի այս հրատարակչության բունքին ու գոսեմներին, մո-
ճակներին ու մշակներին, մթշուկներին ու ճիճուներին, ճան-
ճերին ու շնանճներին, որոնց անճնորյա մահացու խայթոցնե-
րից պոսեմներս փրկելու ոչ մի հույս չուներ... Եթե Աստված
հաղթի, «Անի» պոսեմս Հովանաբար պիտի տպագրվի Բագրա-
տունյայ ազատագրված ու փրաշինված Անի մայրաքաղաքի
ապարանուս...:

— Հիմի տեսա՞ր՝ ով որ պետք էր լսից, բայց փիլիսոփայորեն
լսեց ու չպատասխանեց, իսկ դու և Սփյուռքը զոնե հասկա-
ցաք ինձ... Գոնե զուք հասկացաք՝ դիմեց նաև հրատարակ-
չության աշխատողներին:

Սփյուռքահայի հարցմանը Հովհ. Երրազի պատասխանը,
տնորենի հասկանալի լուսթյունն ու բանաստեղծի ճարտասա-
նական հարցն այնքան տպտիչ էին ու տպագորիչ, որ բոլորն
էլ, իհարկե, հուզվեցին, անգոր ու անխորհուրդ լսեցին ու
ցրվեցին:

Իսկ շիրազյան բնութագրական և ընդհանրացնող պատ-
կերավոր խոսքը միայն իրեն ու իր ստեղծագործություններին
չէր վերաբերում, այլ սահասարակ զբաղան այն մթնոլորտին
ու հանգստանքներին, որոնցում արդեն տասնամյակներ առաջ
վճռվել էր Ե. Չարենցի «Կիրք ճանապարհի»-ի և հենց այդ
պահին էլ վճռվում էին Գ. Սևակի «Եղիցի լույս»-ի ու իր՝ Եր-
րազի պոսեմների բախտը: Եվ ճակատագրի ի՛նչ հեղանք. Գ.
Սևակի արդեն տպագրված «Եղիցի լույս» գիրքը կայանալու-
թողն ու նրան հանորակից զրկողը, Հովհ. Երրազի «Հայոց զան-
թեականը», «Անի», «Թոնդրակեցիներ» պոսեմները չապագորող
հորջորջվում էր «մե՛ծ հրատարակիչ»...

Այսպես են մթնոլորտի ու իրենցից փախեցած մարդիկ ի-
րենց մեղքը բարձրի բանաստեղծի վրա և տասնամյակներ
չարուտակ «մարքսիզմ-լենինիզմի դրոշով» հայածել նրան,
խանդակել նրա հիշյալ պոսեմների ու բանաստեղծական մո-
ղովածուների տպագրությունը: Բայց հենց նրանք էլ, հետմա-

հու բարեկամ ու մտերիմ ձեռնաշուք, շտապել են արագորեն
տպել իրենց հուշագրքերը, իրենց կապել Հ. Երրազի և Գ.
Սևակի անունների հետ և «սեփականաշնորհել» այդ բանա-
ստեղծներին,

Քանզի սիրուն էլ ավազակ՝
Մարմաջ ունի հիշատակի...

Նույնիսկ մամուլում փառաբանվեցին որոշ գրքեր, ոմանք
էլ մրցանակներ ստացան: Դրանցից մեկի մասին «Ավանդա-
րը» տպել էր մի զավեշտական գրախոսություն, որի մեջ ընդ-
գծվում էր այն միտքը, թե «ճակատագրի բերումով իրար էին
հանդիպել մեծ բանաստեղծն ու մեծ հրատարակիչը» այն դեպ-
քում, երբ մինչև հիմա չտեսանք այդ «մեծ հրատարակիչնե-
րին»: Որքան էլ փորձենք նրանց արգարացնել՝ թե նրանք չէին
մեղավորը, այլ «վերեներն» ու ժամանակները, մինևույն է
նրանք ունե՞ն մեղքի ներկեց բաժինը: Դրանց պատճառով չե՞ն
մինչև այսօր ձղձղվել մեծ բանաստեղծի երկերի հրատարա-
կությունները, իսկ շատ գործեր էլ լույս են տեսել ցավալի կըր-
ճատումներով ու աղճատումներով, զրանց պատճառով են
զուեև անտիպ մնացել բանաստեղծի մի շարք պոսեմները, բազ-
մաթիվ բանաստեղծություններ, 1978 թ. հենց իր՝ Հովհ. Երրա-
զի ձեռքով կազմած և Ս. Աղաբաբյանի խմբագրած, տպագրու-
թյան պատրաստ բացառիկ «Հատընտիրը», չուրջ 4 000 նա-
մակները...

Դեռևս ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը չի էլ նա-
խանձնել բանաստեղծի ամբողջական երկերի գիտական-
ակադեմիական հրատարակությունը, բայց այսբանից հետո էլ
ստում ենք «մե՛ծ հրատարակիչ»: Իսկ բանաստեղծի ման-
կություն ընկերներից մեկը Ն. Գալստյան-Մշեցին էլ աղերիվ
միասնությունը կարծել է, թե իրեն իրենց տներում այդքան
«խավ ընդունած», հարգալից վերաբերմունքի արժանացրած
երբեմնի մանկություն ու գծով օրերի ընկերները՝ արդեն
խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաներ են. Բարեկցանն
ու Հ. Բաղդասարյանը, այն ժամանակներում պիտի հարգեին

իր միջնորդությունը և տպագրելն Հովհ. Շիրազի բոլոր գործերը, եթե բանաստեղծն ինքը նրանց չխանդարի իր տարօրինակ վարքագծով, կամայականություններով ու քմահաճույքներով...¹³⁶

Նրանի՞ հավատացնո՞ւյ...

1968 - 1982 թվականների միջև 14 տարի կա: Որն է մեկը պատկերացնո՞ւմ է այդ տասնչորս տարին մի Հեղինակի համար, որը դեռ 1951 թվից, այսինքն՝ երեսուն տարի արդեն սպասում էր իր պոեմի տպագրությանը: Բանաստեղծ Գևորգ Օճանյանը, որ մամուլի պետական կոմիտեի պատասխանատու աշխատողներից էր այն տարիներին, Մ. Մանուկյանին է արձանագրել Հովհ. Շիրազի 1982 թ. մի նամակը՝ դարձյալ «Անի» պոեմի տպագրության գերարհրչյալ:

«Հայաստանի մամուլի կոմիտենին

Ավելի քան տարիներ որ մարդը կարող է կես վայրկյանում (լուծել), պետհրատը տարիներ տպարան չի ուղարկել այս գրքույկս... Եվ ահա դեռ անտիպ է:

Ես բողոքում եմ այս լուսնի ղեկի և սպասում եմ մի բարի մարդու հայտնությունը, ինչպես կայծը բարից: Բայց չէ՞ որ կայծն ստանց բարի հարգամբի չի ծնվում: Ուրեմն՝ ո՞ւմ գաբկեմ, որ մեռա չկտորվի, ինչպես այս գրքիս ես ուղի... կտորել...

Հ. Շիրազ:

Մամուլի կոմիտեի նախագահի տեղակալ Բակունց Անանկյանն էլ, որ մի ընկերական միջավայրում մի լավ գործ արած մարդու նման հպարտացավ, թե ինքն արդեն ընթացք է տվել Հովհ. Շիրազի «Անի» պոեմին, ընդամենը մակագրել էր.

«Ընկեր Գ. Օճանյանին

Ենդրում եմ պարզել գործի էությունը և գեկուցել»: Ստորագրություն և ամսաթիվ 15.03.1982 թ.¹³⁷:


Մրանից Հետո էլ դարձյալ ոչինչ չի փոխվել:

Ձի կարելի տակ, թե բանաստեղծի պոեմը լիակատար անտարության են մասնել: Զբաղվել են, խմբագրել, գիրքներին գաղտնի...գեկուցել: Բայց ի՞նչ: Նրան աննպաստ բաներ, քանի որ Հետևանքը Հայտնի իրողությունն է՝ պոեմի ցայտ անտիպ մնալը: Իսկ եթե նայենք «Անի» պոեմի՝ հրատարակչության Հանձնված և արդեն խմբագրված մեքենազիր տարրերակին, կրացվի բուն նշմարությունը: Իսկպես կատարվել են այնպիսի կրճատումներ, որոնց կապակցությամբ Հնարավոր է լսել Հեղինակի զայրույթի նիշը նրա զրավոր դժոհություններից: Խմբագիրն ունեցել է անսահման իրավունքներ, Հեղինակը՝ ոչ մի: Հովհ. Շիրազի Հանձնարեց տողերն ու պատկերները էջերով կրճատելիս խմբագիրը չի բավարարվել սովորական Հանձնան նշանով և նրա կողքին գրել է նաև «Հանել» բառը: Հ. Շիրազն էլ այդ բառի վրա հարցական է գրել «Հանել» և կողքին ավելացրել «Աչքը»: Բազմաթիվ էջերում պահպանվել են «Մնա: Հ. Շիր», «Վերականգնել», «Ինչո՞ւ, ես Հանել, ի՞նչ է մազ», «Ով է Քնջի ինքը Քնջի...», «Ինչո՞ւ Հանել, Հանվելի՞», «Մերկա Լեռն...», «Ախր ինչո՞ւ, ինչո՞ւ», «Վա՛յ ես բու...», «Մամուլի սրկիս, Հանող» և այլ մակագրություններ: Ստորև ընթերցողին ենք ներկայացնում լուսանկարը բազմաթիվ այդպիսի Հանված էջերից միայն մի քանիսի, որոնց վրա շիրազյան մակագրություններն են: Ի՛նչ կարող է մտածել այս լուսանկարում կողք կողքի զրված այդ էջերին Հովհ. Շիրազի մակագրությունների ընթերցողը: Պիտի մտածի, որ բանաստեղծն ստիպված է ետ վերցրել իր մեռագրերը: Սա արդյո՞ք նշանակում է, թե Հ. Շիրազն ինքն էր խանդարում «Անի» պոեմի տպագրությանը... Շիրազյան այս մակագրությունները հասկանալի են դարձ-

¹³⁶ Ես և Ն. Բախտյանն էլ կազմակերպել է նրա գրքի տպագրությունը, անգամ ինքն է գրքի խմբագրող, որովհետև ընկերություն այդպես օգնելով նրա մեղքով «վավերաբեր» է ստեղծել իր շիրազափրության և Շիրազի գրքերի տպագրության խանձարող լինելու օտարձ - Ա. Ս.:

¹³⁷ Տես Ա. Մանուկյան, Ելզ. գիրք, էջ 279:

նում, թե ինչու էր բանաստեղծն իր պոեմը Հնա վերջրել և ինչպե՞ս է իրականում խափանվել պոեմի սպազբուժյունը:



2.

Անիի պատմության վերաբերյալ կա հարուստ գիտական ու գեղարվեստական գրականություն: Հայոց պատմության այս ցավալի գրքագիր՝ Անի մայրաքաղաքի կրթմանն պատմության գեղարվեստականացման փորձեր եղել են զեռեսա Կերեսես Ենորջյու սամանակներին: Հայկական, բյուզանդական, վրացական աղբյուրներում ասկա սեղանությունների, վիճազրական արձանագրությունների, հատկապես Ն. Մասի, Հ. Օրբելու կողմից կատարված Անիի ավերակների հնագիտական պեղումների նյութերի, կիսավեր ու կանգուն տաճարների հորինվածքների շափաղբուժյունների, միջնադարյան քաղաքաշինության, Անիի ճարտարապետական բացառիկ արվեստի ուսումնասիրությանը հայ և օտար գիտնականներն ստեղծել են պատմագրիտական, հնագիտական ու արվեստագիտական բազմաթիվ աշխատություններ: Իրանց մեջ առանձնանում է Լեոյի «Անի» մենագրությունը: Բիչ չեն նաև Անիին նվիրված տար-

բեր ժանրերի գեղարվեստական գործերը¹²⁶: Իր Հերոսական ու սղերգական պատմությանը, ճարտարարվեստի իր գլուխղործողներով Անին Հովհ. Շիրազից առաջ էլ հաճախ էլ դարձնել աշուղների, բանաստեղծների, արձակագիրների ու թատերագիրների ոգեշնչման աղբյուր: Խ. Արուսյանն իր բայաթիկներից մեկում սղրում էր Անիի քանդված լինելու համար՝ կրկնելով վիճազիր արձանագրություններից մեկի «Քանդողից տունը քանդվի» արտահայտությունը, իսկ «Վերք Հայաստանի», «Ազկոթուժյուն զեպի Անիի ավերակները» երկերում Հիացմունքով է խոսել Բագրատունյաց երբեմնի չեն ու ծաղկուն մայրաքաղաքի մասին՝ երազելով այն դարձնել քրիստոնյա Թուսաստանի հովանու ներքո վերականգնվելիք Հայոց նորոգ պետության մայրաքաղաք:

Անիից ստացած ներշնչումի արտահայտություններ են Ա. Աբարադյանի «Անի քաղաք նստեր կույա», Թ. Գատկանյանը «Անիի առումը», Ջիվանու հանրահայտ «Անի» երգը, Գ. Վարուժանի «Անիի ավերակներուն մեջ», Ավ Իսահակյանի «Եմ քարավանը», «Անի», «Ա՛խ ինչքա՛ն, ինչքա՛ն կուզեի լինել», բանաստեղծություններն ու պոեմները, Բ. Այվազյանի «Անիի կործանումը» վեպը, Լ. Ծանթի «Շղթայվածը», Գ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի», Հր. Նազդալյանի «Անին ծախված է, աղաս» գրամաները և բազմաթիվ այլ գործեր: Անշուշտ, Հովհ. Շիրազը գրանցից շատերին էր ծանոթ, մանավանդ Արուսյանի, Ջիվանու, Լատուժանի, Դեմիրճյանի, Իսահակյանի, Լեոյի երկերին և երանցից էլ ստացել էր «Անի» պոեմի ստեղծման գրական ազդակները, բայց նա, չիրակացի լինելով, մեղավորան գիտնականի պես ուսումնասիրել էր նաև պատկերվող դարաշրջանի վերաբերյալ հսկայական գիտական գրականություն, նույն դարաշրջանի ժողովրդական քերականությունն ու ծախվանդ խաղիկներն ու հայրենները:

¹²⁶ Գանձամարտն տես ընդ «ԱՅԻՈ հայ բանաստեղծության մեջ» ուսումնասիրությունը, Գրական հանդեսներ, զիդր Ա, եր. 1, 2003:

Հովհ. Շիրազի «Անի» պոեմն, անշուշտ, առաջինկայում կու-
նենա իր մեկնարաններն ու արժեքորոշները, և գրականագի-
տությունը կասի իր խոսքը նրա մասին: Բայց դա պահանջելու
է տեղական ու հանգամանային ուսումնասիրություն՝ հատկա-
պես պատմական փաստերի շրջադաս զեղարվեստական բն-
կայման ու բանաստեղծականացման արժեքների բնութագրման
առումով: Այն առատ նյութի կարող է մատակարարել և լեզ-
վարան-ոճագետներին՝ գործածված բառապաշարի տարրեր
շերտերի՝ հնարանությունների, նորարանությունների և նո-
րակազմությունների և պատկերավորման-արտահայտչական
բազմազան միջոցների ուսումնասիրության համար:

Հեղինակն իր երկին տվել է Հարմարագույն ժանրային բը-
նութագրի՝ պատմափիլիսոփայական պոեմ: Որքան էլ գե-
ղարվեստական երկ ու ստեղծագործական հոգր երեակայու-
թյան արդյունք՝ շուրջ 10 000 տող կազմող այդ պոեմը Հեն-
ված է պատմական իրողությունների պատկերման և պատ-
մական անձնավորությունների կերպավորման վրա: Ուշադիր
ընթերցողն այս երկում կտեսնի 11-րդ դ. առաջին կեսի Հայ
իրականություն ամենից բարդ ու լարված զրվագներից մեկի
գեղարվեստական լայնակողով պատկերը:

Բազրատունիների՝ շուրջ 100 000 բնակիչ ունեցող շքեղ ու
վաճառաշահ մայրաքաղաքն ապրում էր բուռն կյանքով: Առ-
ևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելով այդ
քաղաքը քարափամային լայն կապեր ուներ Արևելքի ու Արև-
մուտքի, Հյուսիսի ու Հարավի՝ այն ժամանակներում Հայտնի
գրեթե բոլոր երկրների հետ, ուներ բարձրագույն նարտարա-
պետություն, զարգացած արհեստագործություն, գիտակրթա-
կան ու մշակութային կարևորագույն կենտրոն էր, թե՛ ներ-
սերձուսում էր, թե՛ արտահանում: Արևելքի այդ մարզաբնան իր
Հարստությունը ու նոխարությունը, աննկարագրելի գեղեցկու-
թյամբ դարձել էր Հարևան գիշատիչ տերությունների՝ Գար-
կաստանի ու Բյուզանդիայի, ինչպես նաև արարների ու սեյ-
ջուկ թուրքերի նախանձի առարկան, որոնք էլ Անիին տրեղու-

համար հաճախակի հարձակվում էին՝ Հայոց պետությունը ներ-
կայացնելով անկարելի պահանջներ:

Գազրիկ Ա թագավորի մահից հետո թուլացավ Բազրատու-
նիների պետությունը, սաստկացան ներքին երկպառակույթ-
յունները՝ հատկապես նրա որդիների՝ Հովհաննես-Ամրատի և
Աշոտ Դ-ի միջև: Հովհաննես-Ամրատ արքան այնքան թուլա-
կամ գտնվեց, որ գաղտնի կտակով հետկարով, Անին Հանձնեց
բյուզանդացիներին: Սակայն զրան ընդդիմացավ մայրաքա-
ղաքի պատվախնդիր ազնվականությունն ու Հայրենասեր բը-
նկչությունը և սպարապետ Վահրամ Պահլավունու զխա-
վորությունը ուժեղ դիմադրության ցույց տվեց Հայոց մայ-
րաքաղաքը պաշարած բյուզանդական ու տարակական զոր-
քերին:

Ահա այս դրամատիկ անցքերն է պոեմում պատկերել Հովհ.
Շիրազը՝ պատմական միջավայրի խորապատկերում ստեղծելով
հիշյալ անձնավորությունների բարդ կերպարները և, որպես
մարդկային կենդանի բնավորությունների, նրանց ներկայաց-
րել Հարուստ ու խաղաղույն գործողությունների համապատ-
կերում:

Իր ստեղծումից շուրջ վեց տասնամյակ հետո Կազարովոյ
այս պոեմն այդ ժանրի դասական նմուշներից է: Թե՛ իր ընդ-
գրվածով ու ծավալով, թե՛ իր բովանդակությամբ ու անցյալի
գեղարվեստականացման բարձր արվեստով մի սքանչելի կոթող
է այն, որի էջերում բառիս բուն իմաստով ներկայացել է Հայոց
պատմական անցյալի մի կարևոր գրվողը: Բազրատունիների
փարած ներքին և արտաքին քաղաքակրթության, թագավորա-
կան և իշխանական տների ներքին հակասությունների, քա-
ղաքական ու հոգևոր կյանքի, աղանդավորական ազգապա-
ռակալի խմորումների, զստային ու սուևտրական Հարստու-
թյունների, բանաստեղծության, նարտարապետության, մյուս
արվեստների և ու արհեստագործության հրաշալի իմացու-
թյամբ է Հովհ. Շիրազը կերտել միջնադարի Հայ իրականության
գեղարվեստական պատկերը:

Պեճմով բանաստեղծը վարպետորեն է իրականացրել պատմությունը ներկային ծառայեցնելու մեծ արվեստագետի իր ստաբիլությունը: Ժանրով պատմափիլիսոփայական՝ բայց այն հեռավոր ժամանակներից հայտնիանող հուշագրող զոյարանական, ազգաբանական կարեորագույն խնդիրների գեղարվեստական արժարժույթն է՝ որքան պատմական, նույնքան էլ արդիական շեշտազրույթային: Բայց Հովհ. Շիրազը ոչ թե արդիականացրել է պատմությունը, այլ, նրան հաղորդելով գեղարվեստական հավատարմություն, հեռավոր է կեղծ պատմական բուն ճշմարտության բացահայտմանը, որն էլ արդիական արժեք ունի:

Պեճմի հաջողվածության գաղափարներից մեկն էլ զարարչական բնորոշ մարդկային բնավորությունների ու կերպարների ստեղծման բարձր արվեստն է:

Հեղինակի իդեալը մարմնավորված է Վահրամ Պահլավունու կերպարում. նա հայոց պետականությանն ու հայրենի սրբությունների պահպան հրեշտակն է, որ չի խնայում ոչ մի դավաճանի, թեև ուզ նա լինի Հովհաննես-Ամրաս արքան: Իսկ վերջինս կերպավորված է Հզոր արվեստով: Նա ուզողագիծ դավաճան չէ: Մարդկայնորեն հասկանալի են, սակայն բնավ չեն արդարացվում նրա մարդկային թուլությունները, պարսկուհի հարձի հետ հարարերությունները, բյուզանդացիների հարկազրմամբ Անին հանձնելու զայտնի կտակի՝ հետևարի ստորագրումը, իր արարքից ներքին խոր ամոթ զգայն ու զղջման դրսևորումները, ապաշխարության համար Հռոմոսի վանքի կառուցումը, բյուզանդական կողմի շքեղ նվերները չընդունելը, նախնիների ուրվականների հետ առերեսվելն ու, ի վերջո, ինքնապաշտան լինելը:

Պատմականորեն ու գեղարվեստորեն հավաստի, լիարյուն կերպարներ են նաև Պետրոս Գեոպարժը, Տրդատ ճարտարագետը, Այծյամը կամ Այծնիկը, ծերունի որսորդն ու նրա որդի Վարպիկը, պարսկուհի հարձը և ուրիշներ:

Անշուշտ, Անիի կյանքի լայնակետով պատկերվածը, նրա կործանման պատճառների բացահայտումն ու վերաթմարումը ինքնանպատակ չէր: Այն Հզոր արվեստագետն էր Հ. Շիրազը,

որը խորապես գիտակցում էր պատմության և նորագույն ժամանակների կապը, հազարամյա անցյալը վերակերտում էր ներկայի և գալիքի տեսանկյունից:

Հեղինակն ինքն էլ մի յուրօրինակ գործող Հերոս է, որ ներկայանում է ոչ միայն հայոց պետականության, հայտնիության տալանապալի ճակատագրի մասին քնարական, խոհափիլիսոփայական խորհրդածություններով ու աղնիվ մտորումներով, այլև տարբայով՝ միայն է իր նախընտրելի Հերոսների գրական կերպարներով:

Ներքին ու արտաքին թշնամիների պատակահիշ գործողությունները, Հայաստանին ու մեր ազգային անվտանգությունն սպառնացող շարիքները չեզոքացնելու, հայոց լեզուն ու մշակույթը, հայ բնությանը, ազգային մյուս արժեքները միաբանված պահպանելով ու զարգացնելով մեր հայրենիքը հզորացնելու և թշնամուն դիմագրավելու կարգախոսները, ինչ խոսք, Հեղինակային մտահղացման՝ արդիական հնչողություն և բանական արժեք ունեցող գեղարվեստական դրսևորումներ են:

Պեճմի հաջողվածությունը պայմանավորված են ոչ միայն կերպարների, մանավանդ զավաճանների հոգեբանության, նրանց ներքին հակասությունների, Հերոսների սիրո Նոգեբանության խորաթմայանց բացահայտումները, այլև Անիի ճարտարապետական հրաշալիքների, նրանց «կույսի Հոքերի նման» կամարների ու զարդաքանդակների, քաղաքային աշխույժ կյանքի, աշխարհի բարեքերտով լեցուն շուկայի և առևտրի, ինչպես և ինքնապաշտպանական կոփներձմ անցյալների անօրինակ խիզախության ու հայրենասիրության, բազմամարդ անասրանների, պատմական զարարչմանի ոգու և բովանդակության հարազատորեն ներկայացնելը:

Շիրազյան պատկերավոր մտածությունն այստեղ էլ հրաշքներ է գործել: Հաճախ նրա պատկերները մրցում են «հայ արվեստի փրչված Մասիս» Անիի զարդաքանդակների հետ վերստին ցուցադրելով Հեղինակի բանաստեղծական Հզորությունը, մեր ոսկեդարիկ մայրենիի ճոխությունն ու գեղեցկությունը:

«Դանթեականի» երկու ըմբռնում. Չարենց – Երբազ: Վաղուց նկատվել է, որ Հայոց մեծ եղևույթ միջնադարյան չափանիշներով գնահատելու առաջին փորձերը և 13-րդ դարի իտալացի բանաստեղծ Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմի առաջին «Իտոլթ» մասի հետ համեմատությունները մեղանում կատարվել են շուրջ մեկ դար առաջ, և գրական այդ ավանդույթը մեր նոր բնարհիվության մեջ սկզբնավորել է Միամանթուն: Ա. Աղաբաբյանը Հովհ. Երբազի «Հայոց գանթեականը» պոեմի հրատարակության առիթով գրած համառոտ Հոդվածում ակնհայտորեն վրիպել է՝ գրելով. «Արդեն Միամանթոյի «Ելուցաղնորեն» շարքում Հայոց ճակատագիրը համեմատվեց գանթեական ճանապարհի հետ»¹³⁹: Այնինչ ակնավոր գրականագետը պիտի վկայակոչեր ոչ թե նույն Հեղինակի «Ելուցաղնորեն» կամ նույնիսկ «Հողմվարքի և Հույսի ջանքեր» շարքերը, որոնց բաղադրիչ – բանաստեղծություններում առկա են դեռևս Մեծ եղևույթի առաջ Հայոց ազնավոր իրականությունը ներկայացնող սարսփազգուս և սահմրակեցուցիչ պատկերներ, այլև Կիլիկիայի ավելի քան երեսունհինգ հազար Հայերի շարքի առիթով գրված «Կարմիր լուրեր բարեկաման» ժողովածուն և մասնավորաբար նրա «Թթենին» բանաստեղծությունը, որի մեջ «արյան մզձափանջի և քմբոստություն երգիչ»¹⁴⁰ Միամանթուն իսկապես էլ վկայակոչել է Դանտեին ու եղևույթի իրողությունն անվանել «մահերու և մոխիրներու գանթեական ճանապարհ»:

Մինչ՝ մահերու և մոխիրներու մեր գանթեական

¹³⁹ Ա. Աղաբաբյան, Գոլի.Շրիտառ «Հայոց գանթեականը»: Գեմի 1990 թ. հրատարակություն, էջ 338:

¹⁴⁰ Բանաստեղծի տրված այս դիպուկ քննադատը 1910 թ. Միամանթոյի Բոստոնում հրատարակած «Անթողալան երկեր» գրքի առթիվ ընծայատ Գալուսյան Արարիկյանի գովախոսության վերնագրից է՝ Ա. Ս.:

Ինձ ուղեկցող ընկերուհիս մանկան մը պե՛ս սկսավ լալ...

Թուրքիայում 1909 թ. գարնանը՝ ապրիլ ամսին, իշխանափոխության օրերի հեղափոխական կարգախոսներն ու Հայ-թուրք եղբայրության կոչը, Թուրքերի բաեկամանալու հայկական պատրանքներն ու խաղաղամտությունը գե՛ս չմարած՝ անհնկեալ սլայթում է Կիլիկիայի հայկական բնակավայրերի ավերման և Հայերի շարքի բոլը: Այն Հանձնաժողովը, որ մեկնում էր Կիլիկիա կատարված ողբերգությունը տեսնելու և աղետալիների համար օգնություն կազմակերպելու նպատակով, միայն մեկ կին անդամ ուներ՝ արիասիրտ Զուպել Ետայանը, որը նավով, կառքով, միով, ոտքով համփորզելով, իր ազգակիցներին օգտակար լինելու գիտակցությամբ մի կողմ էր գրել անձեական կյանքը, հանձն էր առել այդ Հոգեմտչ ճանապարհի Քույր զմիարությունները հողթնահարելու զոհողությունն ու պատրաստակամությունը: Իսկ Մերսինում, Ազանաբյում, Հալընում, Չորթ Մարզպանում կատարված դեպքերը իրոք որ ցնցող սպազորություն են գործում զգայուն Հայունուս վրա: Ամուսնուն նկարիչ Տրդան Ետայանին, Մերսինից 1909 թ. Հունիսի 18 թվակիր նամակում գրել է. «...ոչ մեկ Հույս, ոչ մեկ ապագայի նշույլ ... մահ, ավերակ, անթույնություն, հիվանդություն և բանա...երկիր մտած միջոցնիս առաջին տպավորությունն այն է, որ մեռելի տուն կը մտնամ կոր, այն ալ դեռ թրաղված, քարձ մեռելի տուն»¹⁴¹ (ընդգծ.՝ Ա. Մ.):

Իսկ ինչպե՛ս է նա ճանաչել ու բնորոշել իր երկի իրազործած ցնցատպանությունից այսօր դեռևս Հոխոտայով հրամարդող ոճբազօրծ Թուրքին. «Վերջապես ահա մասին, ոճբապարտ և թշնամի, անկուշտ թշնամի ցեղ մը մեզ փչացնել ծրագրած և գործադրած է. ներքախյալ պիտի գտնես պատեր մը, որ առևժամ է մաքրուսեն. Հորիզոնին վրա գտնված դիժը մշակութուններն են այդ տեղերուն, իսկ առգին գտնված կմարքերը՝ մշակներուն կմարքերը. մարդակիրներն իսկ վեր են այս ճի-

¹⁴¹ Ձ. Ետայան, Լանսլեթ, Եր., 1977, էջ 93:

վաղներին. գոն անոնք իրենց անոթաթյուրը Հազիցնելու Համար զիրար կուտեն»¹⁴² (ընդգծ. – Ա. Մ.):

Ե. Չարենցը, որ Դանտեին զմեկ է տարբեր առիթներով, 1915 – 16 թթ. ազգամանակատային անմիջական տպավորություններով գրած իր պոեմը վերնագրեց «Դանթեական առասպել», իսկ 1933 թ. գրած «Մահվան տեսիլ» պոեմում՝ եղեռնի դժոխերով երևակայությամբ պատկերած անզրչիրմյան տալային, «մասամուրի նազով» Համափորզուիթյան ընթացքում, իրեն առաջնորդ էր ընտրել Դանտեին:

Հովհ. Թումանյանն էլ 1916 թ. գրեց «Դժոխքի Հանդեպ» բանաստեղծությունը, ուր զարծյալ ակնհայտ է Դանտեի պատկերած դժոխքի Հես անմիջական զուգահեռը:

Ընդամենն ա՛յս է եղել մինչև Լ. Նիրազը եղած դանթեական վկայակոչումների պատկերը Հայ գրականության մեջ: Այս ամենը, սակայն, անգամ Չարենցի «Դանթեական առասպելն» ու «Մահվան տեսիլը», որոնց էջերում անմիջականորեն պատկերված են Հայկական եղեռնի տեսարաններ, ակնհայտորեն չեն բավարարել բանաստեղծին, թեև Նյութի գեղարվեստական մարմնավորման համար նախորդները ստեղծել էին ավանդներ ու մասնանշել իտալացի հանճարի Հայոց ողբերգություն պատկերման միջոց զարձնելու հնարավորությունը: Այս հիմքի վրա էլ Հովհ. Նիրազը գրեցի էլ «Դժոխքի» Վարպետ Դանտեին, պոզատելով նրան բերել էլ Հայ իրականություն՝ աշխարհի ուրիշ մեծերի ողբերկի Հես ցեղասպանության դժոխքի իրական պատկերը ցույց տալու և ոճրագործին զատի կանչելու ազնիվ նպատակադրումով:

Վաղ չրջանի Չարենցը թե՛ ազգակցություն, թե՛ ազգեցություն կապված էր Հայրենի գրականությանը, իր մերձավոր նախորդներին ու ուսուցիչներին Թումանյան, Մեմարենց, Տերչյան, Միամանթո, և միայն անմիջական կամ միջնորդավորված ազգեցություն համաշխարհային գրականությանը, ուստ

և եվրոպական սիմվոլիստներին, հիմարեկյան դասական բանաստեղծներին:

Առաջներում մեծք առիթ ունեցել ենք բնութագրելու Միամանթո-Չարենց գրական ազգակցությունը¹⁴³ իր Համակողմանի դրսևորումներով: Այժմ Հարկ ենք համարում ընդգծել, որ Հայոց մեծ եղեռնը Դանտեի «Դժոխքի» Հես զուգահեռելու խնդրում Միամանթոն ուսուցիչ էր թե՛ Ե. Չարենցի, թե՛ Լ. Նիրազի համար: Վերջինս, իհարկե, իր գրական ներշնչումներն ստացել է իտալացի «բարբարոս Վիրգիլից» ու Դանտեից և անմիջարար՝ Թումանյանից, Միամանթոյից ու Չարենցից և զլիսավորապես վերջինիս «Դանթեական առասպել» ու «Մահվան տեսիլ» պոեմներից: Այս ամենով Հանդերձ գրական ազգակցությունը ու արմատներով նա կապված էր ինչպես Թումանյանին ու Միամանթոյին, այնպես էլ միջնադարյան մեր ողջ տեսիլային գրականությանը:

Տասնութամյա Չարենցը 1915 թ. օգոստոսին կամավոր մեկնել էր ազգամահառ՝ Հայրենիքը փրկելու Հույսով խանդավառ ու ազնիվ մտահոգությամբ, և պատերազմի անմիջական տպավորությամբ զրկել «գլանիթյան տողերն իր հրե»: Այսպես էլ իր պոեմը որակել Հեղինակը «Չարենց - նամե» պոեմում: Իսկ այդ «հրե տողերը» նա նվիրել էր Սուլդուզի գալստում կայացած մարտում 1915 թ. դեկտեմբերի 25-ին «Մրրազան ու սիրատուն Հայրենիքի» համար նահատակված իր մարտական ընկերներին Միհրան Մարգարյանին, Ստեփան Ղազարյանին և Ալոտ Միրինոչյանին:

Չարենցյան մի կարևոր վկայություն, սակայն, ցույց կարողություն էի տրվել. պոեմի 1916 թ. թիֆլիսյան առաջին հրատարակության ընծայակետում վերը բերված հիշատակությունների կողքին կա նաև Հեսեկյալ գրությունը՝ «Տանկատան – Գարսկատան, ազգամանակատ»: Մրանից կարելի է եղբայրացնել, որ գեղեցիկ ընթացքում և անզամ պոեմը զրկելու

¹⁴² Լույս տեղում, էջ 94:

¹⁴³ Տե՛ս մանրամասն մեր «Միամանթո – Չարենց գրական ազգակցությունը» ուսումնասիրությունը, գրական հանգրվաններ, գիրք Ա, երևան, 2003:

չընտնում Չարենցը եղեանի մասին չի ունեցել այնպիսի խոր ու համապարփակ իմացություն, այնքան ամբողջական ու բնոգործուն պատկերացում, ինչպես հետագայում՝ «Ողջակերպ-
վող կրակ» շարքը, «Երկիր Կարի» վեպը, «Յմբուպետ Շափար-
չը», «Մահվան տեսիլ» պոեմները և մինչև իր բանտարկու-
թյունն ու մահը մյուս ստեղծագործությունները գրելիս: Եվ
սա միանգամայն բնական է հետագայում պիտի հասկանալի
դառնար, որ կատարվածը եղեան է ու Յնդասպանություն:

Հայտնի են գեներալ Պանոսյանի Հրամանատարությունում
Արեւմտյան Հայաստանում կուգամ յոթներորդ կամավորական
բանակի երթուղին ու կուգի վայրերը: Բայց դրանք գանձվա-
ծարար տեղահանված Հայության բնաջնջման բուն վայրերը՝
Գոնիան, Ալաշը, սիրիական անապատները՝ Դեր-Ջորը, Մար-
բազեն, Խաչահեն, էլ Բուսերան, Ռարան, Սեպիրը, Մեսքենեն,
Հոմար, Համամը, Համան չէին, որ Չարենցը տեսներ իրական
եղեանագծոթը: Իսկապես, ի՞նչ պիտի տեսած լիներ գինգոր
Չարենցը Արեւմտյան Հայաստանում 1915-16 թթ. մի քանի
ամիսներին՝ առանց ծրագրված երթուղուց դուրս գալու: Դու-
ցն ուսու զորահրամանատարը իրավունք էլ չուներ թուրքերի
գեմ լայնածավալ ուղղմական գործողությունների, ինչպես գե-
ներալ Վեդենսկին և մյուսները, որոնց հրամայված էր կազ-
մակերպել ուսուական զորքերի զիվանագիտական նահանջը՝
անգնեն Հայ բնակչությանը թողնելով թուրք մարդակերների
բնագանցական ախորժակին: Մի իրավիճակ էր դա, որում, ըստ
Վեդենսկու ուսու ցարին ուղղված նամակի՝ անգամ գեներալ-
մայոր Անդրանիկը, Վանից ընդամենը երկու ժամ հեռա-
վորության վրա գտնվելով, իրավունք չի ունեցել օգնության
հասնելու Վանի ինքնապաշտպաններին: Անշուշտ, այդպիսի
բանակում, այդպիսի իրավիճակում Հայտնված Չարենցը չէր
կարող տեսնել իրագործվող Հայոց եղեանի զարհուրելի ողբեր-
գություն ամբողջ Համապատկերը: Ինքը հետո պիտի ասեր՝
«նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է»:

Եւրջ չորս տարի շարունակ եղեանի զարհուրանքները տե-
սած եր. Օտյանն էլ հետո պիտի խոստովաներ, թե «իր սկզբնա-

վորություն մեջ չէի պատկերացնեք աղետին ահռելի մեծու-
թյունը» և այն գրեթե ամբողջությամբ տեսնելուց հետո պիտի
ըմբռներ թուրքերի կողմից անմեղ Հայերի անասելի տանջանք-
ների գերացանցությունը Դանտեի «Դժոխքի» երևակայական
պատկերներից: Բավական է Ե. Օտյանի «Անիծյալ տարիներ»
հուշագրությունն էջ չի միայն Օսմաների Խաչահի կառքով
ճանապարհվելիս նրա տեսածն ու նկարագրելի
պարզ կզանա. «Այս ճամբուն վրա տեսաք տարադիրներու
քարավաններուն աննկարագրելի խեղճությունը: Հաղարալոր
կիներ, աշիկներ, սալք, իրենց բեռներուն տակ կբա ող-
պառ ու ցավառանջ կբ քանիսն ընկնոր քարոտ ու ցիխոտ
ճամբաներ, ողբ ու կոծի աղաղակներ բարձրացնելով: Գիակներ
հոս ու հոն, գիշատիք թաշուռներ, շուներ ու բորենիներն հո-
շտոված: Հիվանդներ, որոնք ծանրու տակ կբ հեծեծեն անող-
նական: Նորածիններ լքված, որոնք կբ ճվան անոթի: Ափհափո,
գեշ թաղված մեռյալներ որոնց սրունքը կամ թեք դուրս մնա-
ցած է... դժոխային ահռելի տեսարան զոր ո՛չ մեկ Դանթե կըցած
է երևակայել»¹⁴⁴ (ընդգծ. մերն են - Ա. Մ.):

Սա էլ «դանթեականն» մյուս կարևոր զուգահեռը, որ դար-
ձյալ նպատակամիտված է Հայոց ողբերգությունը Համախար-
հային շափանիչներով քնորոշելու և մասնավոր մանտեի
հետ զուգահեռելու: Բայց սրանք գեուես չեն դառնում ցեղա-
պանության ողբերգության ամբողջական գեղարվեստական
պատկերը, որ պիտի ստեղծեն Չարենցն իր հետագա բանա-
ստեղծություններում ու պոեմներում և Հովհ. Շիրազը իր բա-
նաբոգ ստեղծած «Հայոց դանթեականը» պոեմում:

Փաստորեն եղեանի և հեռագիտության շրջանում Հայ գրական-
ության մեջ ձևավորվել է «գանթեականների» երկու հիմնական
ըմբռնում՝ չարենցյան և շիրազյան, որոնք, էական շատ ընդ-
հանրություններով հանդերձ, ունեն այդ երկու հեղինակների
խառնվածքով, գեղարվեստական մտածողության յուրահատ-

¹⁴⁴ Եր. Օտյան, Անիծյալ տարիներ, «Լափր», Երևան, 2004, էջ 193-194:

կուժյուններով և դադափարական ու գեղադիտական նպատակաբույծներով պայմանավորված տարբերություններ:

Չարենցը վաղ շրջանում իր տեսածը մարմնավորելու համար մեկը ու արտահայտչամիջոցներ փնտրելիս Միամանթոյի միջոցով հայտնաբերել է Դանտեին և նրա «Աստվածային կատակերգություն» կառույցը: «Դժոխք» մասի բովանդակությունն ու պատկերավորման մեկեր պատանի բանաստեղծին հարմար են թվացել, ընդգծում ենք, պատերազմի դաշտից առաջացած իր տպավորություններն ուրվագծելու համար: Իսկ Չարենցի թեկուզ և ստեմանափակ շրջագծով տեսածը շատ է հիշեցնում գանձեմանական «Դժոխքի» պարունակները: Դանթեն իր պոեմը կառուցել էր նուստող աներով կամ տերքիներով և ապագովել 3 և 9 խորհրդանշական թվերի անխաթարությունը. տունը 3 տող, գլուխը 99 նուստող, 9 պարունակ, 9 երկիրք և այլն: Չարենցը մասամբ է սցոտագործել թվային այս խորհրդանշակաբարձը երկու նուստող տուն միավորելով մեկ վեցաստղ տան մեջ և ստեղծելով 9 գլուխ (հետագա հրատարակություններում նա զուտ գեղադիտական նկատառումներով կրճատել է ամբողջ 7-րդ գլուխը), Դանտեի «Դժոխքի» պարունակներին նմանեցրել է խաղողի տունկերի տակ դիակներ թաքցնող այգին, ջրհորը, Մեամս բաղաբը իր «ժող սարսափահար աչքերի նման» բաց պատուհաններով, անգամ ստան շեմքին զարկված կատվով» և այլն:

Չարենցի համար թեև հասկանալի էին պատերազմական ազդեթի իր բնորոշումով «չար հողմերի» ողբերգական անձնախաղն ու անհավատալի հեռուանրերը, սակայն, այնուամենայնիվ, նա զենու մնացել է հանտարական հարցի շրջանակներում և ամբողջ պոեմում ոչ մի անգամ չի գործածել եղևուն կամ ցեղասպանություն բառերը և զբանցով չի որակել կատարվածն ու իր աչքով տեսածը: Այդպիսի համոզման նա հանգել է հետագայում «Ողջակեղզող կրակ» շարքի մի քանի բանաստեղծություններում («Հուրը լափում է հիմա սուրբ մարմինը քո», «Ինչպես երկիրս անսփոփ», «Հրափթիթ վարդերի սուկնաղ, մաքուր», «Բրունդե քույր իմ» և այլն), ողջ Արև-

մտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի մի զգալի մասը և իր ծննդավայր կարծր կորցնելուց հետո: Ահռելի ցավի այդ կակիծը զգալի են նաև նրա «Վահագնում», «Հարգազույցի համփորձներում», «Ամենապոեմում» ու «Չարենց - նամակ» - ում, «Երկիր Նաիրի» պոեմանման վեպում, «Խմբապես Շավարշը» պոեմում և այլուր:

Համաշխարհային հեղափոխության կոչերից, հեղափոխական բանակներով իր ազիբ ու արնաներկ երկրին փրկելու ջրհեղձությամբ խարուսեիկ հույաներից, ազգերի եղբայրության ու իրապաշտարարության քարոզների թմբկերից արթնացող Չարենցն աստիճանաբար հասկացավ կատարվածի ամբողջ ողբերգականությունը:

Ողջույն մեկ, ողջույն, Լենին, Մաքրո,
Ու գործ, ու փորձություն, ու երկիր նոր:
Էլ չես վերադառնա երբեք զու կարս՝
Տերյանի, Մահարու կամ քո երգի հունով:
Ողջույն մեկ, ողջույն, Լենին, Մաքրո,
Ու Եղբայր, ու Դա՛ նա, ու վհուկություն: ...

«Ars poetica» շարքի այս առաջին միավորում, որը զբղվել է 1926 թ., և մյուս միավորներում՝ զբղված 1928 թ., Ե. Չարենցը թեև բարձրաբար է ու գիտարկել է նոր արվեստի ու գրականության հիմնախնդիրները, դասական արվեստի հետ ունեցած և ունենալիք հարաբերությունները շարքի (նորի ստեղծման ճանապարհին «հինը համար հանձնարելի անցքեր է ճարում»), սակայն, մեր խորին համոզմամբ, պակաս կարևոր էլ ասանձացող մի էական ու բնորոշ արտահայտություն:

Էլ չես վերադառնա երբեք զու կարս՝
Տերյանի, Մահարու կամ քո երգի հունով:

Լենց այս երկտողն էլ հասկանալի է դարձնում 1-ին և 5-րդ տողերում կրկնված դիմումամանի հեղձական ենթիմաստը, քանի որ կարսը սոսկ մենդավայր չէր Չարենցի համար, այլ ամբողջ կորուսյալ Հայրենիքի խորհրդանշան՝ ամբողջ աշխարհը

խորհրդայնացնելու և «միջազգային ցեղային» (ն. Զարյան) զեկափարգելու հիստորիայի ժամանակներում: Հայության և նրա Հայրենիքի մասին որևէ խոսք արտահայտելու հնարավորության բացառման պայմաններում բարձրագույն այդ եղա-տակականին, սակայն, Չարենցի համոզմամբ հնարավոր չէ հասնել միայն ազգային միջոցներով ու Տերյանի, Մահարու կամ Հենց իր՝ Չարենցի «երգի հունով»:

«Դեպի սրբազան նպատակը՝ ասանող այդ ճանապարհը պետք է ընդլայնվեր, խորանար, հարստանար ու լուսավորվեր ոչ միայն Հոմերոսի, Ֆիրցուսու, Ենրայրիի, Դանանի, Հայնեի, Էզգար Պոյի, Բողբերի ու Վեուլենի, այլևս՝ մարդկային հույ-զերի ճանաչման համաշխարհային գեղարվեստական մտա-ձողությունների նվաճումներով, այլև պետք է յուրացվերին նաև մարդկային գիտական մտքի հին ու նոր ձևաբերումները: Իսկ սա նշանակում էր ոչ միայն գեղարվեստական մտածողության, այլև առհասարակ հայ հասարակական մտքի համակողմանի զարգացում ու հզորացում, ինչպես մտքի հսկաները իրենց բնագավառներում՝ Չարենցի համոզմամբ՝ Լենինը՝ ապստամ-բության, Այնշտայնը՝ ֆիզի, տարածության, չափի ու հարա-բերականության տեսության, կամ «որքան մեղի միանը ծա-նոթ էր Ֆարքին»: Ահա ինչու Հայրենի գեղարվեստական խոսքի կշիռը բարձրացնելու և նրան համասարդկային արժեք հաղորդելու համար Չարենցը յուրացնում էր օտար մեծերի տեսչամագործական փորձը և հաստի էր Հայրենի մեծերի Հետ միասին վկայակոչում նրանց անունները:

Երբեմնի դադափարական համոզմունքներից չրջադարձը նույնքան ցավալին ու ողբերգական պիտի լիներ, որքան նրանցից խոր հիասթափությունը, որովհետև թե՛՝ ժողովրդի ողբերգությունը միլիոնավոր ազգակիցների կորուստն էր ի-րական, թե՛՝ սիրելի ծննդավայրի ու պատմական Հայրենիքի կորուստը: Այս զգացողությունն էր նրան թելադրում զրի «Ապստամբություն» եռամասս պոեմը, որի առաջին մասն էր «Նմանապես Շափարը»: Նա համոզող մասերը չզրեց, որովհետև չէր հանդուրժում կեղծիքը. անգամ Հեղափոխական ողևորու-

թյամբ զրգամ երկերում ու նրանց զուգահեռ՝ «չէր մոռացել» Հայրենացային ու ազգային ողբերգությունը, ընդհակառակը՝ Հեղափոխությանը հավատացել ու գինիփորագրվել էր հասուն Հայրենիքի փրկության հավատացել էր՝ անկեղծորեն, հիաս-թափվել էր՝ անկեղծորեն, և բուն իրողությունը խորությամբ ըմբռնելուց Հետո ոչ թե նոր կեղծիքներ պիտի հորիներ, ինչ-պես իր ժամանակի ուրիշ գրողներ, այլ Հենց պատմական ճշմարտությունը գեղարվեստի լեզվով բացահայտելու համար պիտի գրեր «Գիրք ճանապարհին» և նրա մեջ գետեղեր 1933 թ. «Մահվան տեսիլը»:

Այս երկում արդեն Չարենցը եղևուի մասին խոսում է բարձրաձայն, անկարելի ժամանակներում ու պայմաններում հանդգնորեն ասում հայոց մեծ ողբերգություն մասին գրեթե ողջ ճշմարտությունը, որ արգելված էր պետականորեն: Այս-տեղ արդեն «Դանթեսական առասպելի» մահվան տարափի հա-տուկենտ ձե կցկուտը պատկերները, «Ողջակիզող կրակ» շար-քի, «Ամենապոեմի»՝ Հեղափոխական ողևորության ընդե-լուզված ակնարկային պատկերները չեն, այլ մի ամբողջ ժո-ղովրդի բնաջնջումը ներկայացնող ցայտուն պատկեր՝ կերտ-ված այդ ողբերգությունում արդեն իր ողջ խորությանը բերու-նած հանճարեղ բանաստեղծի գրչով: Այստեղ արդեն տեսնում ենք դանթեսական ուրիշ ըմբռնում, որը ոչ թե նախորդի հակա-զրությունն է, այլ նրա խորացված, ընդլայնված ու պատկե-րացումը՝ «մտածումի նավով» գեպի տնցյալ անփորձելու, «աչքերը անցյալին հասած», բայց և «սպառաշյի նմույսը նստած» բանաստեղծի ներկայի համար անհրաժեշտ պեղում-ներ կատարելու նպատակադրումով: Այստեղ արդեն տարակա-յանում է Դանտեսի Վերգիլիոսի ու Ֆիրցուսու Հետ միասին: Հանուն ազգային նրանց գեպի անցյալ երևակայական ճամ-փորդության, հայ ազատագրական շարժման զազափարական պաշտոնողների ու պայծառ քերթողների, հայ արյունով դաշ-նան ոտոզած և հայ գանգերից երկնահաս բուրդեր կառուցած սուլթան Համիդի ու նրան համոզած հրեյների հպանցիկ կերպավորումների, հայոց եղևուի, գեպի մահ՝ բնիացող բուսա-

գաթողների քարավանների դանձրեակն պատկերումներով Չարենցը նոր սկիզբ էր դնում, ստեղծում այնպիսի նախադրյալներ, որոնք նրա անմիջական հաջորդ Հովհ. Շիրազին պիտի տային ստեղծագործական նոր լիցքեր, հայոց եղեռնը պատկերող լայնակազմ չափածո երկ ստեղծելու նոր հնարավորություններ:

Արդեն «բերթություն ոլորապատու ճանապարհներով» Դանտեի և «անցյալի վառ քերթագաշայրերի, Մաքի ու Լանճարի գազաթների, Բերթության պեսերի» իբրև թե «մանկական Հերիաթի պես» Հերոսների մաշը երգած «անհույզ, մարմարյա Լաներոսի», լատինական փառքի հռչակը ալիսող, «Հելլեն հանճարների հետով ընթացած գյուցազնական ու բարբարոս Վերդիլի», «արեգակնական հանճար, շալլարեն փարթամ» Ծիրզուսու ուղեկցությամբ «մտածումի նախով» ճամփորդության գյուտը Չարենցին էր: Նրանց ստեղծագործությունը Չարենցն արժևորել է որպես «հանճարափայլ պարզ և մեղ տրված հին զարերի արձույթունից աղնիվ»: Սա մի լուրջ ալմանզ էր, որ ընդամենը տարիներ հետո պիտի կիրառեր Հովհ. Շիրազը «Հայոց դանթեականը» պոեմում:

Երկու հայ բանաստեղծներն էլ թե՛ Չարենցը, թե՛ Շիրազը, գրմել են իտալացի Դանտեի որպես հորազատի իրենց ծանրագույն վշտի մեջ «մեռնակ ու անօգնական» զգալով: Սակայն Չարենցը, որ Դանտեի հետ «հափասարի իրավունքով» ներկայանում էր որպես մարդկության «երկու տարբեր հասակ» և այդպիսով կամրժում էր հին գաբերը նորագույն ժամանակներին, հենց սկզբից իր նպատակը չէր բացահայտել. Դանտեի հասցնագրված գիմումի մեջ իրեն համակած ցավն ու համազգային մտահոգությունն արտահայտել է ընդամենը հանճարեղ ու բնորոշ մի արտահայտությունով.

Լեզվիս վրա կսկիծ, և՛ Ջերմություն, և՛ վաճը՝

Աչքերս հատի եմ սնցյալին՝ սպազայի նժույզը նստած...

Բայց մենք երբևէ հարցրե՞լ ենք ի՞նչ է նշանակում Լեզվիս վրա կսկիծ, և՛ Ջերմություն, և՛ վաճը արտահայտությունը.

այդ կսկիծը, Ջերմությունը, վաճը ի՞նչի՞ հետևանք էին «ըզձայ սպազայի» երգիչ Չարենցի համար:

Հիշյալ երևույթների մասին նա նույն երկի մեջ արտահայտվել է փոքր ավելի ուշ՝ որոշակի նախադրյալներ ու հիմքեր ստեղծելուց հետո, և **եղեռն** հասկացությունը կամուրիսա Չարենցն արգեն չի թարցնում, ընդհակառակը, ընդդժում է այդ սուկալի ողբերգության ահափորությունը սերունդներին ու մարդկության մեծերի միջոցով՝ նաև աշխարհին ճանաչելի ու հասկանալի դարձնելու համար նրա բուն էությունը.

Մեր դեմից անցնում էին արդ մանուկներ մեռյալ և ձերեր,

Հաշմողամ սերունդներ ամբողջ՝ Եղեռնի հեծանին ընծա...

Եվ անցնում էին գորբերից ուսուսուկոս արված պարտեղներ,

Հրդեհից մոխրացած հյուզեր, քաղաքներ մեռյալ և շներ,

...Սրածված սերունդներ էին արդ անցնում, քաղաքներ

քանդած,

Լեզիդ՞ պես պրծած գնում էր տեղաշան երկիր մի ամբողջ...

Անցնում էր արմատից պոփած, անխնա կտրած մի անտառ...

Սարսափած նախիրի նման՝ սպանդից փախած մի ամբողջ...¹⁴⁰

«Եղեռնի հեծանին ընծա» մեռյալ մանուկներն ու ձերերի, սրածված հաշմողամ սերունդների, մոխրացած հյուզերի ու քանդած քաղաքների, արմատից անխնա կտրած անտառի այս ողբերգական պատկերներն, իհարկե, չկան «Դանթեական առասպելում», ուր Դանտեի ինքն էլ գեռնա չկա: Չարենցի ներկայացրած «մեծքը» ինքն ու իր զինվոր ընկերներն են միայն: Եվ այդ հայտնում Չարենցի պատկերած ողբերգությունն էլ կարծես հայտնական ողբերգություն է, այլ մարդկային ողբերգություն է առհասարակ: Այս պատճառով չէ՛ր արդյոք, որ խորհրդային ժամանակների լավագույն շարենցապետներն անգամ (Հ. Սուրբաթյան, Ս. Աղաբաբյան և ուրիշներ)

Ինչո՞ւ է կրողն այս աշխարհավեր

¹⁴⁰ Ընդդ. Ձերն են. - Ս. Ս.:

Կապիկը մեր գլխին այսպես կուրորեն,
Ինչո՞ւ են սփռում այսքան մահ, ավեր,-
Հողմերը այս չար և՛րը պիտի լռեն,
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր
Ու դարձնում կյանքը նոզվյալ զեհեն

տողերը ներկայացնում էին որպես բողոք «Իմպերիալիստական սերուիթյունների արյունոտ քաղաքականության ու ընդհանրապես պատերազմների դեմ» և զեռ բանաստեղծին էլ ջանում էին «արդարացնել» «ակամա կամավոր» դառնալու և ազգային - ազատագրական շարժմանը «էջաս սասպեր պես» իր-րև թե «անգիտակցաբար» մասնակցելու համար:

«Մահվան տեսիլ» պոեմում եղեանք պատկերը ավելի բան որոշակի է և է չի կարող այլ մեկնարանուիթյունների արժանա-նայ: Այստեղ, սակայն, այլարանական մշուշի մեջ են ներկա-յացված բոլոր հերոսները, որոնք ծածկանուններով են, և նրանց հնարավոր է ճանաչել միայն նրանց գործունեության հեղինակային դիպուկ բնորոշումներով: Այլգիերի Դանտեն գրեթե չի խոսում փոխարենը արտահայտվում են այլարա-նական մշուշով պարուրված հայազգի մյուս հերոսները և ասում դաժանագույն ճշմարտություններ: «Դոսիքի» հեղինակ Դանտեմ «Մահվան աշխարհի Վարպետը», սակայն, Չարենցի պոեմում հայոց ողբերգության նկատմամբ, թվում է, ան-տարբեր դիտող է և անմեջական փնտրերմունք չի արտա-հայտում, սակայն այդ թվացյալ անտարբերությունը հերք-վում է, երբ Վարպետը ամբողջ երթի ընթացքում միայն արե-մտահայ նահատակ բանաստեղծների առիթով է արտահայտ-վում «առաջին ու վերջին անգամ».

« - Ո՞վ տխուր ու խեղճ դուստներ, նոխազներ կյանքի

բարբառու,-

Բարբառեց Վարպետը Հանկարձ՝ դառնալով նոցա սովերին.

- Դուք կուզված էիք լինելու Լույսի ու նեղություն փառու,

Բայց սրտերը մեր բոցավառ - այն Սուր՝ն ողջակից բերիք».

...Եվ սպա, գառնալով կրկին բարբառու հորձանքով տարվող

Այբերին այն՝ ասաց իր սրտի բովանդակ տերությունը ու թափով.

« - Դուք կարո՞ղ էիք Քերթնության ու Մոցի լուսն պարսեղում
ճաշակել Ողո՛ւ խեղություն՝ սեպիլով խոհով ու բանով,-

Եվ երթում այս մութ ու դաժան կա՛ որդյոք ավիլի՝ մեծ զոհ,
Քան Հանձարը մեր բոցավառ՝ մատուցած այս պիղծ սեղանին»...

Եվ լռեց Վարպետը մտայ, առաջին ու վերջին անգամ
Մեր ամբողջ երթի ընթացքում շրթունքները իր բանալով,-

Մինչ մտայ թափոթին ձուլված, ուսերով բորիկ, արմարած
Նեղացան գուսաններն այն գոտե՛ խելապար խեղազով ու լալով...

Բայց 1930-ական թթ. միջուրտում Ե. Չարենցը հայոց ի-րական գծիցը որպես «մտածուծի նավով» երևակայական ճամփորդություն ներկայացնելուց հետո պարտավոր էր նաև հնարավոր էլ քցույց տալ, առանց որի անկարելի պիտի լիներ նախ խոսքը տպագրելը, իսկ տպագրելուց հետո էլ թշնամական հարձակումներից պաշտպանվելը: Հեղինակային ակնարկներից երևում է, որ պոեմում պատկերված այդ ելքը Լենինն էր (ու-րիշ էլ ո՞վ)՝ այն ժամանակների ըմբռնումով մարդկությանը զեպի լուսավոր ապագան առաջնորդող և բոլոր իրական ու երևակայական աշեաններից փրկողը:

«Մահվան տեսիլ» պոեմը թվագրված է «1933, 5-րդ 4», որ նշանակում է նաև, թե այդ օրերին Չարենցը զեռես «համա-տում» էր Լենինին, այդ պատճառով էլ «զեպին Արքայի» հա-նդողները՝ Եղեանը կազմակերպած և իրազդորձած արյունար-բու թալանախնդ, էնվիբը, Ջեմալը, Ջեզեթը, Նազըմը, Բեհհեղդին Եսքերը, Բեմալը և մյուսները Չարենցի պոեմում անդամ հի-շատակված ու կերպագրված չեն, և Եղեանի ու «զանթեա-կանի» այս ընկալումն էլ զեռես պատմական ու զեղարգիե-տական լիարժեք ճշմարտությունը չէ:

Սակայն Չարենցը իր երկերով ու «զանթեականի» իր ըմ-բռնումով արդեն ստեղծել էր զբական մի ավանդույթ, մի նոր սկիզբ, որն իր զբսերումն ու զարգացումը պիտի ունենար զբական հաջորդ սերունդների և առաջին հերթին՝ Հովհ. Շիրազի ստեղծագործության մեջ:

Դանձիակների մյուս և առայժմ վերջին ըմբռնումը կապված է Հովհ. Շիրազի անվան Հետ: Բայց այդ երկու ըմբռնումները թեև չեն Հակադրվում, սակայն որոշակի ընդհանրություններով Հանդերձ ունեն երկու Հեղինակների նպատակադրումներով և զեղարվեստական մտածողությունն յուրաքանչյուրություններով պայմանավորված էական տարբերություններ: Չարենցն ու Շիրազը, թեև որոշ իմաստով ժամանակակիցներ (մեկի կյանքի որբերգական ավարտը գրեթե Համբնկնում էր մյուսի գրական ուղու սկզբին), սակայն նույնպես «մարդկության տարբեր Հասակներ»: Են: Արտաբուսա կարող է թվալ, թե Չարենցի դանձիակներից Հետո Շիրազին աննչու շատ բան չէր մնում, բայց զա խարուսին տպավորություն է, որ կարող է թյուրբնացությունների տեղիք տալ: Ընդհակառակը, որքան էլ Շիրազը մեծ սանկիք ունենար, Չարենցից Հետո չափազանց զգվար էր լինելու Դանտեի կերպարին անգրագարժը այն էլ միևնույն եղևունի թեմայի շրջանակներում:

Կատարված ողբերգությունից դառնացած, վերավորված Չարենցի բուն նպատակը զուցե և եղևունի պատկերումն էր, բայց նա այդ խնդրին անգրագարժն էլ Հընթացո: 19-րդ դ. վերջերի և 20-րդ դարասկզբի Հայ ազատագրական մտքի մի խումբ ներկայացուցիչներին՝ Ղ. Ալիշանի, Թ. Գառնայանի, Լաֆֆու, Կրիմյան Հայրիկի, Բրիտատափոր Միքայելյանի և ուրիշների կերպարները (իսկ ծավալային իմաստով զրանք կազմում են պոեմի մեծագույն մասը) կերտելիս նա չէր էլ կարող անգրագարժանալ եղևունին. զա կարող էր և արել է միայն եղևունի նահատակ գրողների Միամանթոյի ու Վարուժանի ստիժով:

Բոլոր զեպքերում, թեմայի մարմնավորման մեջ առաջնության գափնին Ե. Չարենցին է պատկանում, և Հ. Շիրազի Համար մեծագույն վտանգը Հնարավոր կրկնությունը կամ նմանությունն էր, քանի որ արգեն կար շարենցյան նախորինակը:

Սակայն Չարենցը 1937-ից մինչև 1954 թ.՝ այսինքն՝ Հ. Շիրազի «Հայոց դանձիակները» պոեմը գրելու շրջանում, պետականորեն արգելված Հեղինակ էր, և բացի այդ, Չարենցի՝ մանավանդ «Մահվան տեսիլ» պոեմում գրևերած զեղարվեստական բարդ մտածողությունն ու այլաբանական պատկերների Համակարգը մասշտիբ չէին ընթերցող լայն շրջաններին, նույնիսկ զրականագիտական բազմաթիվ վեճերի առիթ են դարձել: Չար բացախսություն, և շարենցյան երկերը չէին դասնում Հրապարակային քննության առարկա: Նրա այս ստեղծագործություններով «Դանձիակն առասպելով», անկազմ «Մահվան տեսիլ» պոեմով եղևունի իրողությունը գեղևուն Հնարավոր չէր ճանաչելի դարձնել Հայության նոր սերունդներին և ամբողջ մարդկությունը: Բարձր է Չարենցի անկրկնելի արվեստը, մեծ ու Հզոր՝ նրա զեղարվեստական երևակայությունը, և Հենց զրանով էլ մեծարժեք նրա ստեղծագործությունը: Սակայն, ցավոք, շատ բշերին են Հատու Չարենցի բազմաշերտ մտածողության ընկալումն ու այլաբանական պատկերների բուն էությունը:

Ուրեմն, իսկապես, եղևունի էությունը Համակողմանիորեն և բացասացությունը պատկերող մեծակամով երկի անհրամշտությունը Հատուանցել էր, բայց նոր ժամանակ ու Հնարավորություններ, նոր Հանդամանքներ ու նոր խոսք տեսիլու ունակ Հեղինակ էր պետք՝ նախ՝ սիամանթոյական, թուժանյանական, շարենցյան ավանդները յուրացնելու և ապա՝ նույն թեմայով նոր որակի զեղարվեստական խոսք տակ կարողանալու Համար:

Դրանք չուտով ներկայացան:

1918 թ. նոյեմբերի զինադադարից ընդամենը երկու տասնամյակ Հետո մարդկությունը նոր աղետների մասնվեց, նոր ողբերգությունների ստղև կանգնեց սկսված երկրորդ Համաշխարհային պատերազմով: Հիտլերյան Գերմանիան կրկնեց իր զաշենակից Թուրքիի կատարած սերագործությունը ընդարձակելով զանգվածային մարդասպանության ու ցեղասպանության ծավալներն ու աշխարհագրությունը: 1941 թ. աշնանն

արդեն զերամանական զորքերը Հասել էին Ուկրաինա, Ռուսաստան և Հյուսիսային Կովկաս: Հիտլերի հրամանները Հար և նման էին Համիդի, Թալեհի, Էնվերի, Ջեմալի ու Քեմալի հրամաններին և զործադրվում էին նույն հետևողականությամբ: Կրկին մտա գտնվող Բարի Յար կոչված քարտաչույեց, ճիշտ ու ճիշտ թուրքերի նման, ֆաշիստները անդուռն էին գլորել տասնյակ Հազարավոր խորհրդային մարդկանց՝ առանց ազգություն, սեռի ու տարիքի խորակառնություն: Իսկ նոր Նախիջևանի Մեծ Սալա Հայարնակ գյուղում ճգի մոր որովայնը պատռել էին և երեխային սրածնելով նետել վառվող թուրքերը: Զաչխառների այս և մյուս բարբարոսությունները Հովհ. Շիրազին հիշեցրին թուրքերի վայրագություններն ու մտրիկ անցյալի Հայոց կոտորածները, և նա այդ ժամանակներից սկսած, գրեթե մինչև իր կյանքի վերջը, «զանթեականի» նոր բժրունուժով սկսեց գրել իր պոեմը՝ ձգտելով իր նպատակը բերել Հայոց եղեռնի համաշխարհային ճանաչման զործնթացին, ավելի ճիշտ՝ ինքը խորհրդային իրականության մեջ սկսեց այդ զործընթացը:

Վերը տեսանք, որ Չարենցի կերպավորած Դանթեն ողբ ուղևորությունը ընթացքում միայն մեկ է անգամ և՛ շուրթերը շարժում և խոսում իր արտի «բովանդակ տարություններ ու թափով»: Հովհ. Շիրազն իր պոեմում «Դոժուքի» վարպետին Հասկացրել է բոլորովին այլ զերականատարություն:

Չարենցի օրինակով գրվելով «Դոժուքի» Վարպետին՝ Հենց սկզբից է՛ր Շիրազը նրա առջև բացում և՛ Հայ կոտորածների դժոխք հրավիրելու բուն նպատակը: Առաջին իսկ գլխի արժակ առաջարանում նա գրել է. «Թե չչորանային մտացած Հայ մայրերի ու որբ մանկանց արցունքները՝ այժմ արցունքատույզ կաներին Հայոց վշտի դեմ մշտապես այս Հողաղուռը: Եվ ի՞նչ մեծ ազդ կարող է իր մեծ վշտերով շարվել այս փոքրիկ մեծ վշտերի Հետ. ի՞նչ դժոխք կարող է չարվել Հայ կոտորածների արնածովի Հետ. ո՞րք ես, ո՞վ մռայլ Դանտե, զու, որ Վերգլիխուսի Հետ այցիլեցիդ դժոխքի կարի ու կրակի մշուռները, դու, որ տեսար աստվածային պատժով պատժվածների Հավիտենական

տանջանքները և սոսկացիք, ի՞նչ կասես, թե ի՞նչ տեսնես, իմ ազգի նը: Հայտնվիր, Հայր իմ, անիրավանից իրականը տանն քեզ, ո՞վ այժմ զբախտի մենակյացդ, բե՛ր գեթ աչքերդ, որ իմ Հայոց վշտի կշեռքը զարժենն»:

Իսկ չափածո մասերում է՛լ ավելի է Հասակեցնում նրան դիմելու պահանջն ու անհրաժեշտությունը.

« - Ո՞վ աստվածային դժոխքի Դանթեն, թե Թախտուռն ես զու զեռ դժոխքում, թե հիանում ես զեռ մահով կամ թե Բավարանն ի վեր քո մեղքն ես քավում, Կամ թե լուսափն քո Բևառորչին Դեպի դրփաս է քեզ աստաջնորդում, - Ուր էլ որ իրեն Շորս որու պես, Ուր էլ որ այժմ զու Գախրես անհող իշխի՛ր մի վայրկյան, պաղատում եմ քեզ, ի՞նչի՛ր՝ քեզ տանեմ այնպիսի դժոխք, որ զու մոռանա դժոխքը երգիլ, որ Աստուծո՞ւ ճակտին անեմք խաբանես եվ մահից խնդրես բազաան վերքից»:

«Դանթենականի» չարենցյան ու շիրազյան բժրունուժների առաջին էական տարբերությունն այն է, որ Հովհ Շիրազը Հենց սկզբից Դանթենի հրավիրում է Հայոց եղեռնադժոխք նրան Կանթեականի զեպի իրականը՝ տանելով և ցույց տալով «կոտորածների եղեռնադատարն Հազարամռայլ», ուր «մեղքն՝ անպատիժ, ու վիշտն է զեռ ծով»:

Է՛ր Շիրազի համար էլ Դանթեն Հայր է. Ուսուցիչն ու Վարպետ, բայց մեծ իտալացու կերպարում խոսացված են իտալական ժողովուրդն ու ողջ եվրոպան, որով էլ ստեղծվել է մեր վշտի դեմ մշտապես Դանթեն - եվրոպա փոխարեքական համեմատությունը:

Դանթեն իր մտքի ծնունդ «Դոժուքում», Վերգլիխուսի Հետ մամփոթեցնելով, պատկերել էր աստվածային պատժով պատժվածների Հավիտենական տանջանքները: Հիմա անհրաժեշտ էր

նույն Դանթեին ու նրա Հետ միասին Հայ և Համաշխարհային մեծութունների ողբերգին բերել Հայոց մեծ եղեռնի իրական գոխը, որ տեսնեն ու գատապարտեն մարդկութեան զեմ գործած առաջին ցեղասպանական ոճիրը և Ահեղ գատաստանն աշխարհ բերեն:

Չարենցի արինակով՝ Լովհ. Շիրազն էլ դիմում է Վերածննդի դարաշրջանի նախադրած բանաստեղծական ձևերին: Գոեմի առաջին տարբերակը հյուսված էր Գեորգարկայի ու Շերապիրի կիրառած երեք բառատուրդի և մեկ երկտող կառույց ունեցող սոնետներով, բնոց որում բոլոր տները միավորված մեկ տանձնորստողանի կառույցի մեջ և պահպանված դասական հանգափորումը (երեք բառատուրդ տները զուգահեռ, իսկ երկտող վերջին տուրը կից հանգափորումով): Հետագա վերամշակումների ընթացքում, սակայն, այդ կարգը խախտվել է, որովհետև դասական տոնետի ձևը այնուամենայնիվ կաշկանդում էր նրա մտքի թռիչքներն ու հորդարելու հույսումները: Այնուամենայնիվ, հրատարակված տարբերակում էլ պահպանվել են անխաթար մնացած ամբողջական տոնետներ:

Հեանդական պարզապաշտ Լովհ. Շիրազն իր պոեմի բոլոր զլուխների սկսել է արձակ ստաշարաններով, որոնք, շիրազյան բանաստեղծական արձակի բացառիկ հետաքրքիր նմուշներ լինելով, իրականացնում են բազմակի զեր, զրանք երկիր մուրաղի բոլոր ժողովուրդներին, աշխարհի մեծ մարդասերներին ուղղված դիմումներ լինելով, ուղղորդում են պոեմի երևակայական գործողությունների ընթացքը և Հայոց ծանրագույն ողբերգությունը հեղինակի իսկ մանրային բնորոշմամբ **ողբամուռն դասաստանամատյանում** զնահատում որպես Համաշխարհային երևույթ:

Այս երկում կերպավորված ողբերգի խմբում են Հոմերոսն ու Մաշտոցը, Շերապիրն ու Խորենացին, Դանտեն ու Նարեկացին, Գյոթենն ու Հայնեն, Այվազովսկի Մեծ Լովհանեսն ու Անդրանիկը, Բայրոնն ու Փոքր Լովհանեսն հեղինակը:

Վերջինիս պաղատանքով Հայանվում են բոլոր ողբները և ճամփորդում եղեռնի դիչերում մեջ: Նպատակային այս ասու-

ղբերությունը՝ մի գերագույն նպատակով է իրագործվում, աշխարհի հին ու նոր մեծերի առջև բացվում է Հայոց վշտի վարագույրը, պատկերվում է Տեղասպանության եղեռնաղբ-ժոխքը:

Պատկերների հիմքում Համիդյան, երիտմուքթական ու քեմալական շրջանների Հայ իրականությունն է, որոնց սկանառես ու բովանդաները սկզբում թերահավատ են, բայց տեսնելով իրողությունը՝ գատապարտում են օճաղործներին:

Դանթեի կապակցությունը պետք է նկատենք, որ Նարեկացու հետ Համաբայլ շրջող «Դոխբի» Վարպետը սկզբում կարծես անտարբեր էր իր երկրի ու ողջ եվրոպայի նման, բայց Հայոց «կոտորածների լարիբրինթոսում» նա աստիճանաբար ճանաչում է իրողությունը, ըմբռնում բուն ճշմարտությունը եղեռնի մասին: Իր «Դոխբում» մեղավորներն էին տանջվում, այստեղ՝ անմեղները, և այն էլ այնպիսի դարհուրատեսիլ ձևերով, որ իր երևակայությունից վեր էր: Լուսն ու անխոս ողբերգի, որ իր երևակայությունից անցնելիս ու օճաղործների աներևակայելի պատժածները տեսնելիս աստիճանաբար շուրթերն է շարժում, ցածրից մեջքն է ծովում, աչքերը շաղվում են, խելահեղվում է և զարհուրած փափշում դեպի բավարան, որովհետև տեսնելն անգամ մեղք էր, ուր մնաց գործիչը: Փոքր Լովհանեսն-հեղինակի

— Օ՛, կանգնի՛ր Վարդե՛տ, զեպի՛ ո՛ւր այգպես

Հարցին հեռացող Դանտեն իր միակ ու վերջին խոսքով գատապարտում է իր ազգի ու ողջ աշխարհի լուսնյակը:

« — Դեպի քավարան...

Քանզի մարդ էի, և ինչ որ տեսա՝

Իմ գոխքից էլ ժամս է ու դիմես,

Տեսնել էլ մեղք էր, դորսն մի՛ Հուսա,

Մեղքից են շողվում աչքերս, գիտեմ:

Օ՛, տեսնել անգամ մեղք է աչքերիս,

Ես նդովում եմ նրան, որ այգպես

Գործով են մրցել գրած գոխքիս՝

Մենեով ազգիդ դժոխքն աղեկեդ,
Նշավակում եմ քո լուսթյունը,
Իմ սո՛ւրբ Իսաղիա, բունզի լուսեցիր,
Երբ կուտովում էր սուրբ Հայությունը,
Անիծում եմ քեզ, Գերման նիս, լսիբ,
Որ թուրը գարձար վայրենի ցեղի,
Որով մորթվեց ստովամային ազն Հայոց այս Հողի:
Նզովում եմ քեզ, ո՛վ գու Ֆրանսիս, լուսեցիր դու էլ,
Դու էլ Անգլիա, ո՛վ սրժավուտեր,
Նշավակում եմ գժոխարթուհւք մեր լուսթյունը,
Ձեր ժանա լուսթյամբ ստանանայցավ ստովամությունը:
Օ՛, թե ունենար թեկուզ և մի շիթ
Ազգս խլամի ուղեզի սեղմից
Այս ողջ աշխարհը՝ որպես մի խրճիթ,
Ես Հանդիսս խղճով կայրեի Հինքից...»:

Եվրոպա – Դանթեն, ինչպես նկատելի է, նոր-նոր է Հար-
յուրածյա ներհից արթնանում՝ իմանալով բուն նշմարութե-
յունը եզեւենի մասին: Ակավել է ու նպատակասլաց շարունակ-
վում է Տեղասպանությունը ճանաչելու և այն որպես մարդ-
կության զեմ գործած ծանրագույն Հանցանք դատապարտելու
Համաշխարհային գործընթացը: Բայց հիմա էլ Համաշխարհ-
ային կարծիքը բուն խեղրից շեղելու և մարդկությանն ապա-
կողմնորոշելու Համար թուրքիան իր եղբայրակից Ազգրեջանի
Հես միասին Հայության զեմ ծավալել է տեղեկատվական
անամոթ պատերազմ՝ Համաշխարհային Ձև-Մ-ները և ինտեր-
նետային կայքէջերը լցնելով բացարձակ ստերով ու կեղծիք-
ներով, այնքան անամոթ, որ, մոտանում են 1994-ին իրենց իր
խեղդանքով և Ռուսաստանի ու մյուս պետությունների միջ-
նորգությամբ կնքված զինադադարը (որն արդեն Հայերի կող-
մից ամենամեծ զիջումն էր Ազգրեջանի, ալլապես Հայկական
ուժերն արդեն զրավելու էին ալիելի մեծ տարածքներ, անզամ
մայրաքաղաք Բաքուն), այդ պարտված պետության առաջին
զեմքը, հիշողությունը կորցրած և լպիրջ կնցվածքով սպառ-
նում է նոր պատերազմով, Համացանցով ներկայացված ֆրիմե-

բում Հայտարարում է, թե իրենք են տարածաշրջանի Հնագույն
ժողովուրդը, որ ստեղծել են մուսուլմանական մեծ քաղաքա-
կրթությունը, իսկ Հայերը վերջին դարերում են միայն թուր-
քիայից ու Գարսիստանից Հայտնվել այստեղ, բունազավթել
«ազգրեջանական երևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը» և
իրք նրանք են ցեղասպանություն իրականացրել տեղաբնիկ
թուրք – ազգրեջանցիների նկատմամբ: Այնքան են լկտի, որ
նույնիսկ Եվրոպայում, Պաղեստինում, Թուրքիայում և ալյուր
տեղի ունեցած բնական աղետի երկրաշարժի, և թուրք – թրք-
զական ընդհարումների զոհերին անամոթաբար ներկայացնում
են որպես Խոջալուում Հայերի կազմակերպած ցեղասպա-
նություն զոհերի: Իսկ սա բացահայտվեց Համոթ ազգրեջանցի
կեղծարարների, որոնք հիմա էլ ջանում են կտորել ինտերնե-
տային Հայկական կայքերը, որպեսզի իրենց կեղծիքը չտա-
րածվի:

Տեղեկատվական այս պատերազմում էլ Հ. Նիրազի պոեմը
կարող է լինել ամենաարդիական զենքը թուրք – ազգրեջանա-
կան Հակահայ քարոզչության զեմ: Ուրեմն՝ բանաստեղծի՝ աշ-
խարհի սֆինքսային լուսթյունը գառապարտող հրեղեն խոսքն
այսօր էլ է արդիական և ունի մեծ կշիռ ու արժեք:

Ով լիբր լուսթյուն...Ու լուսմ են, տեն,
Հյուսիսն՝ իր Հավերժ ստույգների պես,
Արեւելքն՝ ինչպես մուսն իր դիշանի,
Արեւմուտքն՝ ինչպես պոռնիկ պնասման...
Այնինչ, ո՛վ աշխարհ, թե քո լրբերի
Այս չորս բերանով գոտայիբ մի Հեղ
Գառայն կբավիբ թուրք սուլթանի,
Ձեր Հորդի զժոխքն այսքան խեղճեղ,
Մի բուս չէր մնա ծովից ազգը մեր...
Ով ծանա մարդկություն, վիշտոյ օժարիստ,
Դահճն լուսթյուն, բամ գու անտարբեր,
Ո՞նց էիր Հայդ կուլ տայդ Հանդիստ,
Երբ մի ողջ ազգ էր գլխատվում անտեր,
Ու մահճիկ պես նայում էէր վար
Թե ոնց են ճոճում մեզ կախաղանին:

Նայում էր աշխարհն, սակն հիմունք՝
Թե՛ սոց էր անգույնյ մի ազգ չքանում:

Մեր մեծ ողբերգություն (որը միայն մերը չէ) հանդեպ աշխարհի լուսնյան գեմ է ուղղված չարենցյան ներշնչումներով գրված «Հայոց գանձակահանք»: «Դանձակահանք» գիտարկվող երկու բժրունքները՝ Չարենցի և մանավանդ Շիրազի միջոցով Դանձիկի և աշխարհի մեծերի գաղափարային խոսքը կարող էր մեծագույն խթան դառնալ մայնս լուսնյան ազառածը շարժելու, եղևոնը ճանաչելու և ցեղասպանին գաղափարաբանելու համար: Չժողովանք, որ Չարենցի «Մահվան տեսիլ» պոեմը և Հ. Շիրազի «Հայոց գանձակահանք» ողբամուռն զատատանաձայանը գրքելու ժամանակներում գեո սչ մի ազգ ու պետություն չէր ճանաչել Ցեղասպանությունը: Չարենցն սկսել է Շիրազը շարունակել:

Հիմա՛ է Ցեղասպանության համաշխարհային ճանաչումը մեծ թափ առել, և այն ավելի շուտ կիրականանաք, եթե պոեմը վազուց, նախքան թուրք-աղբերական հիստերիան, ժամանակին թարգմանվեր ու որպես գեղարվեստավավերական ապացույց գրված լիներ մարդկություն սեղանին:

Գոնի ստեղծման պատմաբարդական նախադրյալները:
Զլիներ մեր ազգային մեծ ողբերգությունը՝ Հայոց եղևոնը, որ իրագործեցին թուրքերը իրենց այս տարածաշրջան ներխուժելուց հետո և մանավանդ 19-րդ դ. վերջերին ու 20-րդ դ. ստալին տասնամյակներին, չէր ստեղծվի նաև գեղարվեստական, հուշավավերագրական, պատմագիտական այն մեծ գրականությունը, որ, հայ մարզու ազգային արժանապատվության ընդգրգումներին հակառակ, մի ընդհանուր որակումով կարելի է կոչել Հայոց եղևոնապատումի գրականություն: Այդ ողբերգությունը ցայսօր համաշխարհային հանրությունը ներկայացվում է չափազանց մեղծ չափերով, և մարդկություն ուշադրությունը բեռնացվում, կենտրոնացվում է հիմնականում միայն 1915 թ. Մեծ եղևոնին դո՛հ դնացած մեկուկես միլիոն Հայերի վրա: Մինչդեռ իրականում թուրքերի Չարդարությունը՝ հա-

յությունն իսպառ բնաջնջելու նպատակով՝ տեղի է ունեցել թուրքերի այս տարածաշրջան գաղուց ի վեր և իր բարձրակետին է հասել սուլթան Համիդ - երիսթուրքեր - Բեմալ իշխանավարության շրջանում՝ մոլորեցնելով մի ամբողջ երեսնամյակ՝ 1894 - 1904, 1909, 1915 - 1918, 1920 - 1923 թթ., ընդհուպ մինչև Չեյուսեհալում և Պոլսում հայկական ու հունական թաղամասերի վերջին հրգեհուններն ու հայերի և հույների նոր զանգվածային Չարդերը: Երո՛հրդային տարիներին նախընտան իսպառ հայաթափումն ու հայ պատմահարաարագեթական ու հոգեկոր մշակութային արժեքների ոչնչացումը, սպա և՛ 1988 - 93 թթ. Սուճայիթից, Բարվից, Դանձակից, Խանլարից, Եսհուճայանից, Գեռաշենից և Աղբերջանին բռնակցված հայկական մյուս տարածքներից հայերի կոտորումը, մահվան սպառնալիքով արտաբուժումը, կոտորածը և նրանց անշարժ ու շարժական դուշրի, հազարամյակների ընթացքում ստեղծած միությունն ու մշակութային արժեքների անապարհ յուրացումն էլ իրենց երկու պետությունը (Թուրքիա և Աղբերջան) մեկ ազգ հորջորջող թուրքերի հին քաղաքականության նորագույն դրսևորումներն են: Թուրքերի կողմից ողջ պատմական Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի մի զգալի մասի բռնագավթումը՝ չու՛րժ երեք միլիոն հայերի բնաջնջումով ու տեղահանումով, Հայոց ողբերգության իրական պատկերն է, դրա հետևանքն են այսօր աշխարհի լայնքով ու երկայնքով տարածված հայ գաղթաբազայերը, որոնց բնակիչները սփյուռքահայերը, ողջ Հայ մոլորվորի հետ միասին Հայ գաթի, իրենց մարդկային ու ազգային իրավունքների օրինական պահանջատերերն են այսօր: Աշխարհի առաջագեծ մարդիկ, լուսամիտ անհատները սկզբից եեթ գաղափարաբան են թուրքերի վայրագությունները, բայց դու, ցաղիք, մինչև վերջերս չէր կրում պետական ու միջազգային ճանաչման րույթ: Ավելին, մինչև 1960-ական թթ. կեսերը՝ այսինքն՝ եղևոնի 50-ամյակի առթիվով հայաստանցի հայության հզոր ընդգրգումը, խորհրդային պետությունը, որ 1921 - 23 թթ. ստանց Հայաստանի մասնակցություն կապցած թուրք - քուլեհիկյան համա-

ձայնագրերով ողջ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի մի զգալի մասը նվիրարհեց թուրքիային, իսկ Հայոց պատմական Գողթան գավառ Նախիջևանն ու Հայոց Արևելից կողմ Արցախը նոր-նոր ձևավորված ու Ազրբեյջան հորընթացված թուրք-թաթարական պետությանը, նույնիսկ Հայաստանի Հայությունից էր հանուղականորեն թաքցնում նրա մասիկ անցյալի մեծ ողբերգությունը, անգամ իստորեն արգելում էր միլիտանտոր անմեղ նահատակների հիշատակներն ու Հայության կորցրած պատմական Հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի խնդրի հրապարակային արձարծունենքը: Միջադրային Հանրությունը, գերտերությունները սփիքսային լուսնային չէին ճանաչում ու դատապարտում Օսմանյան կայսրության մեջ սուլթան Համիդի, երիտթուրքերի ու քեմալականների կողմից Հայերի՝ պետականորեն կազմակերպված սպանելու որպես 20-րդ դարի առաջին զեղասպանություն և մարդկության դեմ իրականացված աշխարհով մեկ չղատապարտելու և նպատակազրկված մոռացության մատնելու հետևանքով նաև հորդեց երկրորդ Համաշխարհային պատերազմը, և ֆաշիստները, դամաթոթյան ու վայրագության գծով իրենց նախահայրեր և ուսուցիչներ Համիդի, էնվերի, թալիսի, Ջեմալի, Նազըմի, Բեմալի, Բեհհեզգին Եսքիրի, Կարբերիի և մյուսների օրինակով, իրենց անպատճելուությանը վստահ, իրականացրին տասնյակ միլիտանտոր մարդկանց ոչնչացումն ու չուրջ վեց միլիոն հրեաների ողջակիցում — հոյր քոստը:

Աշխարհի մարդկությունը, ի վերջո, Նյուրնբերգյան հանրահայտ վճռով դատապարտեց երկրորդ Համաշխարհային պատերազմի հանցագործներին, Բայց նույն այդ մարդկությունը ի՛նչ սիրալիր ներողամտությամբ է փայփայում թուրք ռեպրեզենտանտներին, որոնց պարագայում առայսօր չի կայացել Նյուրնբերգյան դատալարություն: Հայոց մեծ եղանը միջազգայնորեն դեռևս լիարժեք չի ճանաչվել, հանցագործ թուրքիան չի կանգնել մարդկության ու պատմության դատաստանի առջև,

ու հենց այդ պատճառով էլ, օգտվելով իր համար նպաստավոր վիճակից, ռեպրեզենտանտները սերունդներն առայժմ սառնասիրտ ցնիթիզմով ուրանում են նախնիների գործած հին ու իրենց նոր հանցանքները...

Ո՛չ Համաշխարհային դատապարտում կա, ո՛չ էլ թուրքերի կողմից զղջում ու Հատուցում:

Այս իրողության զեղարվեստավերական պատկերն է Լույճանես Երրազի «Հայոց գանթեանկանք» պոեմը:

Տեղասպանություն-եղանք՝ իր պատճառահետևանքային առնչությունների ողջ Համանկարգով, միլիտանտոր Հայերի՝ իրենց բնորոշ պատմական Հայրենիքում թուրք պետության հատուկ ծրագրով տառնաբարտրեն բնաջնջելու կամ այնտեղից արտասրելու և սիրիական անապատներում աննախադեպ դամաճությունը ոչնչացնելու, Հայերի պատմական Հայրենիքը բռնազավթելու ողբերգական իրողությունը, անուշտ, վկայված է Հայ ու Քրիստոսի սկանառանների Հուշագրության մեջ, արբեր երկրների զինանազիտական պաշտոնատարների զեկույցներում ու լուսանկարներում, պատմագիտական ուսումնասիրություններում, զեղարվեստական պատումներում ու շարժանկարներում: Այս ամենի մեջ ու բոլորի հետ միասին առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում Հայոց ցեղասպանությունը Համայն մարդկությանը ճանթթացնելու և դատապարտելու նպատակազրկումով զրկված շիրազյան այս պոեմը, որը հեղինակն ինքն անվանել է ողբամատյան կամ դատաստանամատյան:

Ողբի մանրը Հայ գրականության մեջ արժատավորվել է զեռ վաղ միջնադարից և իր արձակ ու շափածո մարմնավորումն է ստացել նորնապոետ երկում, Դավթակ Քերթոզի «Ողբ ի մահ մեծին Ջեանշիրի իշխանին», Նարեկացու «Մատյան ողբերգության», Ներսես Շնորհալու «Ողբ եղանի» երկերում, Հայկական կյանքիցմի բանաստեղծություններում, Արույանի «Վերքն» էլ ունի «Ողբ Հայրենասիրի» ենթախորագրեր, իրենց բնույթով այդպիսիք են Ալիշանի «Նահապետի երգերը» մի զգալի մասը և մանավանդ «Ողբամ գրեզ Հայոց աշխարհ»:



Գոլի. Երբայզ և Ա. Ստրալայանը 1966 թ. սեպտեմբերի 6. Չարենցի անվան դպրոցում կայացած հանձնարարության ժամանակ: Այս լուսանկարը դարձրեցին ուժեղ շիրտայան հետազոտություն: «Այս պոեմն (Վրացի ուժեղ «Չարենցի դպրոցի անվան») աստիճանաբար ազդեց Սամվելի և նրան հետո Սիրվարդի և Կարապետի»:

Ի. Պատկանյանի «Բաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմն ու «Ազատ երգեր» շարքի որոշ բանաստեղծություններ, Գեղիկ-Քաղաքյանի Նշանավոր զինվորական երգաչափը, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Միստանթոյի, Դ. Վարուժանի, Վ. Տերյանի,

Ե. Չարենցի բազմաթիվ բանաստեղծություններն ու պոեմները:

Վերջին ժամանակներում Հայոց անկախ պետականության և սփյուռքահայության համառ ջանքերով Հայ դատի խնդիրը բարձրացվեց միջազգային առաջնությունում, և արդեն ավելի բան երկու տասնյակ պետություններ 20-րդ դարասկզբին արևմտահայությանն իր բնորոշ տեղահանելու և բնաջնջելու թուրքական պետության հանցավոր գործողությունները ճանաչելու որակել են որպես անհրաժեշտ ցեղասպանություն:

Անշուշտ, պատմական նշանաբանային բացահայտման ուղղությամբ Հայ պատմագիտությունն ու գիտնականությունն էլ մեծ ջանքեր են ներդրել: Իսկ փաստերն այնքան են ակնառու, որ միտումնավոր քաղաքական ծրագիր իրականացնելու կամ կամավոր կուրության ու խլությունից դեպքերում միայն կարող են անտեսվել ու չընդունվել, ինչն էլ այսօր Հեռուստատեսությունն ընդունել է թուրքական պատմագիտությանն ու նրա համաձայնող համակիրները միջազգային բարձրագույն առաջնությունում գիտնականության հայտնի փաստերի գլխիվայր շրջման:

Համաշխարհային սփրապետության ձգտող, Մեծ Թուրանի ստեղծելու պանթյունիստական անպակասող ու պատմական սխորձակով ոգևորված Թուրքիան համատարեն ջանքեր է աշխարհին ազդեցրել, թե Արևմտյան Հայաստանի տեղաբնիկ միլիոնավոր Հայերին ինքը չի կոտորել, նրանց Հայրենիքն ինքը չի բռնազավթել, այսօրվա սփյուռքահայերի նախնիներին ինքը չի բնաջնջել կամ վնասել նրանց պատմական բնորոշությունն ու պատկանական Հողերին: Իսկ պատմության ու ողբերգության լուռ վկաները՝ այնպեղ զանգղ ավերված, կրակահեղուցն ու զեն կանգուն պատմապատկան Մայրի Հաղարավոր Հուշարձաններն էլ իրենց՝ Թուրքերի ու նրանց նախաձյուրերի ստեղծանքն են, և միակ ապացույցը Հայ քրիստոնեական կառույցների վրա եղած «ճանտիչ» պատկերաբանականները, խաչերն ու մետաղապատ Հայրենի վիճակները ջնջել - քերել - վերացնելն է ու նրանց վրա կիսազուստն դրոշմելը կամ Թուրքական դրոշմա-

ժանեղ կամ այսօր իր սահմաններում գտնվող Հայ պատմաշակութային հուշարձանները թուրքավարի վերանորոգելն ու նրանց թուրքական տեսք տալը և, որ առավել բնորոշ է, նախընտանի խաչքարերի նման իսպառ ոչնչացնելը:

Տեղատեղանությունը համառոտն ու բացող թուրքիան, միանգամայն նպատակադրված, չի էլ պատասխանում հետևյալ հիմնահարցերին՝

ա) ի՞նչ եղանակով են նախնային օսմանյան կայսրության սահմաններում ապրած միլիոնավոր Հայերը,

բ) ո՞ր պետության տարածքում են այսօր գտնվում Աստվածաշնչի ու Հայոց սրբազան Արարատ լեռը, պատմական Մեծ Հայքն ու ողջ Արևմտյան Հայաստանը,

գ) որտե՞ղ են այսօր Տարոն գավառն ու նրա Հացեկաց ու Խորոնք կամ Խորնի գյուղերը, ուր ծնվել են Հայ գրերի հանձարեղ գյուտարար Մեսրոպ Մաշտոցն ու պատմահայր Մովսես Խորենացին, ո՞ր է Վասպուրական աշխարհն իր Վանա ծովով, Աղթամարով, Վարազդանքով, Նարեկավանքով, Նարեկ ու Խատակոնիս գյուղերով, ուր ծնվել են հանձարեղ Գրիգոր Նարեկացին, Գրիգորիս Աղթամարցին ու Նահապետ Քուչակը, և ուր միջնադարում թուրքերի՝ այս տարածաշրջան մուտքից առաջ, գործել է նարեկյան Հռչակավոր գրական-փիլիսոփայական դպրոցը,

դ) ո՞ր է Կիլիկիան՝ միջնադարյան Հայ տաղերգության, մանրանկարչության, գիտական ու Հոգևոր կյանքի խոշոր կենտրոններից մեկը,

ե) ո՞ր են Սեբաստիայի նահանգն իր Բրզնիքով, որտեղ Դանիել Վարուժանն է ծնվել, Խարբերդն իր Ռինկյանով, որ Մեծարևելի ծննդավայրն է, որտե՞ղ է Ակն-էփեղը Հայ ժողովրդական անտունիների ու Սիմանթոսի ծննդավայրը, ո՞ր են Նիղիչ Չարնեցի ծննդավայր Կարսը, մեր Հանձարեղ Կարսը ստեղծած ժողովրդի բնօրրան Սասունը՝ Խաչիկ Դաշուհյանի ծննդավայր Դաշուաղեմ գյուղով, ո՞ր են Մեծուրու Արմատը, Ավետիս ԱՀարոնյանի Իգզիբմախան...

եվ, վերջապես, ո՞ր է այսօր Արևելյան Հայաստանում ապագան ու երկրագեղի լայնքով ու երկայնքով տարածված Հայրենազուրի ախյուսքահայության պատմական բնօրրանը:

Բոլորը, այսինքն՝ ողջ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի մի զգալի մասը՝ այսօրվա թուրքիայում: Հայության պատմական կենտարածքի, նրա հայրենիքի լեռների, սարահարթերի, հովիտների ու գաղտավայրերի, մեծ ու փոքր լճերի, գետերի, ժոռավոր Հաջումներով շուրջ 3 000 բնակավայրերի և ավելի քան 10 000 պատմամշակութային հոգևոր ու աշխարհիկ հուշարձանների բռնազավթում, յուրացում կամ ոչնչացում...

Մի՞թե սա կատարված ու այսօր էլ շարունակվող ճշակութարանական, ազդարանական, մարդաբանական, ժողովրդաբանական ստուգման իրական եզրուն չէ և մի՞թե զեռ ապացույցման կարիք ունի:

Այս ամենը միայն իրեն հատուկ անօրինակ ցինիզմով ջանում է հերքել մեր և մյուս քրիստոնյաների ունեցածը Հափշտակած թուրքը և իր բռնազավթումներն ու յուրացումներն արդարացնել միայն ու միայն իրեն բնորոշ ուրացումով:

Եվ այս իրողությունն է գեղարվեստական պատկերով արտահայտել Է. Շիրազը.

Ու զեռ քրքջում է ոտիս տմբարիշտ.

«— Էլ ի՞նչ Աբարատ, ի՞նչ Մասիս, հայեր, ի՞նչ լեռան անունն Ազրի-գաղ էր միշտ.

Դու՛ք էիք լույլ իմ լյառը դարեր,

Աբարատ կնիք անունն անիմյալ...

Բացը ի՞նչ է աճա իմ լեռը գարձալ...

Թուրքք են գառներն էլ Մշո, Տարսնի,

Որ գավթիլ էիք տիրաւակողորքով Հայոց Բարսնի,

Ի՞նչ է Ավարայրն, ի՞նչ են Սիփանա սարերը բոլոր,—

Դու՛ք էիք լույլ, երբ մանուկ էիք ու զլիտոնուր:

Ի՞նչ է Մովսարն, ի՞նչ են Վանա ծովն ու Վանը նրա,

Ի՞նչ է Վանանդն էլ ... Հայ ցեղն Հող չու՛նի աշխարհի վրա

Քող Լուսնի վրա իր փայլը փետրի

Կամ թե Մարտն իրեն Հայրենիք բնօրհն...
 Ի՞նչ է Հայաստանն իմ սրի բերնով...
 Եվ թե խելի եմ խելի եմ ... արևով,
 Հողը՝ իլյանն էլ՝ արևով են սպախ,
 Մինչ Հայ վերքից էլ արցունք է գալիս...
 Թե Հայն անգոր է կրնոյ Մարտն ի վեր՝
 Ե՛ն կթոցենն իմ երպոն է ի վեր՝
 Մինչև Մարս անգամ կամ մինչև Լուսին,
 Ե՛ն կթոցենն ամենակարող
 Այն Հրթիռներով, որ կան ... Մասիսին:
 Էլ ի՞նչ Վանս ծով, ի՞նչ Մասիս, ի՞նչ Հող...
 Ե՛րբ է Հայ ցեղին Հող տվի Աստված...
 Որ Հող ետ կուզես, ի՞նչ վերածված...
 Եկվոր էր Հայը այս լիբանց Հովտում,
 Ահա թե ինչու՝ դուրս եմ գնդուում
 Այս Հող ու Էրբի իմ տոտենական,
 Մի՞թ է բելասպան աղեղն էլ Հայկյան,
 Ցնորք է ցնդած ինքն էլ ցեղն Հայոց,
 Լուսնո ձորերն են միակ տեղն Հայոց
 Մեկ էլ Դեր Զորը՝ ինձնից մեղ ի ձեռ՝
 Որպես Հայ մեռյալ ազգի պանթեոն...¹⁶⁶


Իրականում սա՛ է մեծ տերութունների, բուշեիկների Հրեա, թաթար ու վրացի առաջնորդների մեծաքանակ ազգական ու անտեսական օգնությունը, զիվտնագրիտական աջակցությունը Հաղթանակներ տարած, մեր պատմական բնօրհան - Հայրենիքը բանապայթած ու Սեբի դաշնագրից էլ մինչև որս անամոխարք հրամարմոջ Հին ու նոր Թուրքիայի իրական զենքը, որն այժմ էանում է քողարկվիվ մոզովադարություն ու մարգահարություն կեղծ կարգախոսներով: Այս իրողությունը ինչպե՛ս պիտի բնութագրվի, և որան ի՞նչ անուն պիտի արվի: Բայց ահա նույն Թուրքիան չի վարանել Հայաստանի սահ-

¹⁶⁶ Գովի. Երրազ, Գայոց գանբակալը, «Լաբրի» հրատ., Երևան, 1991, էջ 232 - 233: Այս հրատարակությունը են պղծված մեքերունները: Ընթաց. ներք են - Ա. Ս.:

մանր վրա՝ Արաբիի Հանգրիպակաց ափին՝ պատմական երվանդաշատի դիմաց 5-րդ դարի մեծ փրկաուփա եղծին կողքացուծնեղավայր Կողքի սարերի՝ Հայոց Համար այս կողմից տեսանելի լանջերից մեկին Հսկա տառերով դիտմամբ գրել: «Յուրաքանչյուր թուրք զիվանագետ է», մերժում է Եղծունի մասին նույնիսկ կասկած արտահայտող Հենց թուրք գիտնականների նախաձեռնած զիտածողությունը, իսկ այսօրվա թուրք պետական այրերը, միայն իրենց Հասկանալի պատճառներով, աշխարհով մեկ ծավալում են ամենահարձակողական Հակահայ քարոզություն, և ցավոք այն է, որ նրանց զեռ լսող, Հավատացող ու կարևորող կա:

ԻՀարկե, պատմական ճշմարտությունը երբևէ Հաղթանակելու է, և թուրքական սերագործությունն ու կեղծիքը արգեն իսկ դատապարտվում են ու դատապարտվելու են ոչ միայն քաղաքակիրթ մարդկության, այլև ողջամիտ թուրքերի կողմից, և դրան նախանշաններն արգեն կան: Սակայն Թուրքիան զեռես ապավինում է իր շահանյութածող գործի Հովանավորներին ու պաշտպաններին, որոնք բանականություն, արդարամտություն ու ճշմարտություն փոխարեն առաջնորդվում են միմիայն իրենց աշխարհաքաղաքական ու անտեսական շահերով: Թուրքերի՝ նո՛ւյն այդ անզլուամեծիկյան, Հրեական, գերմանական և իսլամական աշխարհի մյուս պաշտպանները շատ էլ լավ գիտեն իրողությունն ու պատմական ճշմարտությունը, բայց այնքանով են անբարոյական, որ դա պահում են իրենց մեռքին որպես Հաղթանակ՝ միայն առանձնահատուկ զեպքերի Համար, սանեք, երբ Թուրքիան, իր ներքին շահերից ելնելով, Հանկարծ Հանգրզում է չՀպատակվել իր սուս, եվրոպական ու ամերիկյան տերերին կամ իր գաշնակից որևէ մեկին, սանեք՝ Իսրայելին կամ Միքիային, անՀանտ որևէ բալլ կատարել, միայն այդ զեպքերում են նրանք Հանում իրենց այդ Հաղթանակից թև և Թուրքիային սպասում են անցյալ դարակեղծին նրա իսկ իրագործած Հայոց կեղծիքն անաշունով ու դատապարտումով: Դա երբևէ զրսեորվում էր խորհրդաթուրքական Հարաբերությունների լարման պահերին, իսկ վեր-

Ջերս առաջին Հասակ երեսը թուրք - իսրայելական Հարաբերություններում, ԱՄՆ-ի Իրաքի դեմ պատերազմն սկսելուց առաջ, երբ Թուրքիան մի պահ վարանեց ու Հանդգնեց իր տարածքներն ու օդանավակայանները չտրամադրել ԱՄՆ-ին՝ Իրաքի դեմ ազգամական գործողություններ ծավալելու նպատակով: Արևմտե գերտերություններն իրականում իսկապես՝



«Միանալու և կորզարն» պոեմի 1979 թ. հրատարակության ընծայագիրը Ասիկի Ստրալայանի

ամեն ինչ գրան, պարզապես չիմանալու են ապիս ամեն բան, եթե իրենց ձեռնառու չէ: Այս է աշխարհի գերտերերի բարոյակազմությունը:

Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայերի Հեռուգական ջանքերով այսօր, այժմ, տեղաշարժ է նկատվում. կարծես արթնանում են մարդկության բնած խիղճն ու բանականությունը, անզամ Թուրքական անասան թվազող ամբարկուռ Հայամերթ պատանեք ճեղքեր է ապիս: Կա նաև ազա-

ամիս թուրք մտափորականություն, որը, պետական կաշկանդումներից ու Հայաստանիցներից անկար, Հետամուտ է պատմական ողբերգություն թացահայտմանն ու ճշմարտության վերհանմանը:

Բայց ի՞նչ չափով, ի՞նչ զիրբերից ու ի՞նչ նպատակով: Կոչա գիրքորոշմամբ Հանդիման, անշուշտ, Համաշխարհային կարճիքի ճնշման ներքո, այսօր Թուրքիան մասնացույց է անում Թուրքական Հատուկ մշակմամբ կեղծված ու մաքրված արխիվները և Հայաստանում, թե անհրաժեշտության դեպքում ինքը «պատրաստ է ատերևովել իր անցյալի հետ»: Այդպիսով նա դիվանագիտորեն շրջանցում է Թուրքական դեպատաներով չմշակված արխիվները այն երկրների, որոնք, ունենալով լուրջ հիմքեր ու զորավոր ապացույցներ, պետականորեն ճանաչել և զատապարտում են անցյալ զարավգրեթե Թուրքերի իրականացրած անորակի ռեպրոդուկցիաները:

Հայոց ցեղասպանության Համաշխարհային ճանաչմանն ու զատապարտման առջև, սակայն, զեռուս կան զորեղ խոչընդոտներ. Թուրքերի ու նրանց Համակիրների ապաստեղծակապական զորեղ քարոզչություն զեռուս կարողանում է որոշ ոլորտներում Հողթող զուրս զալ և ապակողմնորոշել միջազգային բարձր առյաններին ու Համաշխարհային Հանրությանը: Իսկ սա նշանակում է մեր կողմից զեռուս ամեն ինչ արված չէ, և մենք իրավունք չունենք մեղքերնս ծայած նստելու:

Հայերս, չույսներս զրամ մարդկային խղճի ու բանականության, ակնհայտ ու անհերքելի իրողություններին՝ նորորյա քաղաքակիրթ մարդկության կողմից անվերապահ ճանաչմանն ու ընդունման վրա, միամտարար կարծում ենք. թե երեկվա զազանաբարտ, կեղծավոր ու երեսպաշա թուրքն արդեն քաղաքակրթվել ու մարդացել է. մինչդեռ վերջին տարիների դեպքերը ցույց են ապիս, որ անզոտամերկիյան Հոգևամարտությունն ու իր անպատմելիությունն իր օգևորված Թուրք պետությունն ու Հանրությունը զեռուս քաջություն չունեն պատմական ճշմարտության երեսին չիտակ նայելու: 1973 թ. նրանք օմն նեչիդե Բերիմ Դեմիր թրքուհու միջոցով Հայաստանում էին. «Եթե

Հաշվի չառնեմ Համաշխարհային Հասարակական կարծիքը՝ ես իմ կողմից երկու հայ կմորթեմ»¹⁴⁷:

Անժխանի է, որ արտաքինապետ զարգացում կա, բայց դրանից թուրքի էությունը չի փոփոխվել, նա եվրոպացի ու քաղաքակիրթ է զարմել, ընդհանրապես, քաղաքակիրթության դիմադիր տակ նա այսօր էլ մարդկության համար առաջին վտանգավոր պատուհան է՝ ընդունակ նորանոր բռնագավթումների ու սերտագործությունների:

Աշխարհում իր բռնակողմ, զինվածություններ ու ռազմատենչություններ չորրորդ բռնակողմ ունեցող թուրքիան հենց վերջերս օրը ցերեկով զավթեց Կիպրոսի հյուսիսային կեսն ու էլի մնաց անպատիվ: Համաշխարհային հանրությունն այսօր դեռևս չի կարողանում թուրքիային ճանաչել տալ Կիպրոսի վերածննդ հունական պետությունը: Նա այսօր էլ հոխորատում է միայն Կիպրոսում ունեցած իր 40 000-անոց բռնակողմ: Եվ եթե կաշկանդված չլինի իր ներքին պայթյունավտանգ իրազրություններ ու աշխարհաքաղաքական այլևայլ հանգամանքներով, նա հաճույքով կշարունակի կատարել իր արևապետության տակ եղած և հարևան քրիստոնյա ժողովուրդների բռնաբռնան, Հայաստանի ավելի բռն երկու տասնամյակ թշնամական շրջափակման ու նրա հանդեպ գերտերություններից քաջալերվող անկախությանի դահճի իր ստոր պարտականությունը:

Եթե այն է ժամանակակից թուրքերի քաղաքակիրթվածությունը, ուրեմն մեր ազգային մեծ բռնատեղծ Նովհ. Թումանյանը, որ 1915 թ. անձամբ էր այցելել Արևմտահայաստան ու տեսել սմարդակեր դազան մարզու՝ անորակելի արարքները, անհուսալի ու տնուկողնի լավատես է եղել 1918 թ. նոյեմբերին կարծելով, թե այդ բերանն արևոտ անբան մարդակերը, Հազար դարում մարդակերությունից անկողմ, գործել է ձեռքերն արևոտ մարդասպան, այսինքն զարգացման ու քաղաքակիրթման

ճանապարհով մարդակերությունից Հազարվազ քարծրացել է... մարդասպանության աստիճանի...

Բերանն արևոտ մարդակեր էն անբան
Հազար դարում Հազարի դառավ մարդասպան:
Ձեռքերն արևոտ՝ դեռ է դեռ նա կամկար,
Ու հեռու է մինչև մարդը իր ճամփան:

Մականյան դրանից 50 տարի հետո էլ թուրքերը ցույց տվին բռնաբռն մարդակերի իրենց դժմար և հեշտ ու հանգիստ հերքեցին Նովհ. Թումանյանի լավատեսությունը: Եվ եթե 1988 և հետագա տարիներին Արցախի և Հայաստանի Հայությունը Աղբյուրի անձնակերպած ու պարտադրած պատերազմում չլինեց ինքնապաշտպանության ու ազատագրական պայքարի և շտաներ ճակատագրական հաղթանակ կրկնվելու էր անորակելի 1915 թվականը իր քոլոր ողբերգական հեռանակներով, և դարձյալ գերտերություններն ընդամենը պիտի ողջ մնացան՝ ներին ցավակցին, քաղաքավարություններ միտիթարին կամ Գորրաշովի պես լիտիարար ասեին՝ Սուսմայիթում ընդամենը մի քիչ ուշացանք: Որ այսօր 21-րդ դ. սկզբին անգամ, դեպի եվրոպա ձգաող, եվրոպականացած կնքվածք ընդունող թուրքը, չնայած իր արտաքին քաղաքակիրթ տեսին, նույն ցեղապանն ու մարդակերն է, վկայում է դարձյալ անպատիվ մնացած սուսմայիթյան 1988-ի փետրվարի սերտագործությունը, որի ընթացքում թուրք խառնարտից ո՛չ միայն մարդակեր միմիայն Հայ լինելու հանգամանքով կողոպտեց, սպանեց, արտաքսեց, բռնաբարեց, այլև բառացիորեն, ուղղակիորեն... կեթով (Իրինա Մելիքոսյանի բնորոշ օրինակը): Իսկ սուսմայիթյան ողբերգությունը ո՛չ միայն չդատապարտվեց իր հողակարքն ապրող խորհրդային կայսերապետության ու մյուս գերտերությունների կողմից, այլև 1988-1992 թթ. ավելի մեծ շափերով կրկնվեց Բաքվում և Աղբյուրի մյուս Հայաստան վայրերում: Այսօր անդհանգամ անտուն և անօթեան ականատեսների վկայություններ և խորհրդային ռուս սպաների օրագրային նշումները ցույց են տալիս, որ Աղբյուրում կա-

¹⁴⁷ Սեբեթուհու ըստ պոեմի հիշված հրատարակության, էջ 254:

տարված այդ ողբերգական դեպքերը ուղղակի և անմիջական շարունակությունն ու կրկնությունն են նախանցյալ դարի վերջին և անցյալ դարի առաջին տասնամյակների օսմանյան թուրքերի և աղբրիների Հետևողականորեն իրագործած ցեղասպանություն:

Մտվային սպա եղգենի Սաֆարովի Հնչողություն-վկայությունները սահմանեցուցիչ փաստեր են պարունակում արդեն 20-րդ դարավերջին աղբրի թուրքերի գաղտնությունների մասին: Սպիտակյան երկրաշարժի առիթով Բարփի փողոցներում վերջիններս սարքած Համաժողովրդական առևտրամթություններն ու խրախմանքները, երգ ու պարը, «Փա՛ռք ալլահին» բացականչություններն ու ցնծություն ճրչերը դեռ չստացած բարձրանում է Հայերի նոր կատարածների այլքն, ու սկսվում է աղբրիների գեղատաշային խրախմանքը: Սա էլ Հո պատմական անցյալը է, որ մտածելի ամենակարգ ժամանակը Հայտեցրել է մեզ, քնն ՄԱԿ-ի Հայտի բանաձևը նման մեծ ոճրագործությունների գեղարվում վաղնությունն էի ճանաչում: Մե՛ր օրերում կատարվեց ոճրագործությունը, և Հանցագործն էլի անհավատալիորեն մնաց անպատիվ:

Ահա ինչ է գրում 1990 թ. Բարփի Հունվարյան դեպքերին ակնատեսն ռուս սպան իր «Ան Հունվար» գրքում. «Ճանաչապահան մենք տեսանք՝ ինչպես էին դործում շարքարարները: 20 – 30 մարդուց կազմված երիտասարդ աղբրեջանների զինված խմբեր խուժում էին Հայերի բնակարանները, գազանաբար ծեծում էին տանտերերին՝ Հաշվի չառնելով սեռ ու տարիք, այնուհետև սկսում էին թալանն ու կողոպուտը: Նըրանց միանում էին զոհերի խանդավառ Հարևանները, տեղուտեղը դավթում ազատված բնակարանները, ծեծկոտում էին միմյանց՝ իրար չգիջելով կողոպուտից որևէ բան: Հայերի դեպքերը շարունակում էին պատմահաններից և փողոցում շարունակում էին ծանակել նրանց: Կանանց ու երիտաներին սպանելուց առաջ Հերթով բռնաբարում էին բոլորի աչքի առաջ: Երիտաները Հես չէին մնում մեծերից, իրենց մեղոյների խրախուսող ճրչերի ներքո քաշում էին ամենը, ինչ կարողանում

էին տանել: Ուկրաինայի Հրապարակում մոտ Հարյուրը այդ գաղաններից, իրար փոխարինելով, բռնաբարում էին տասնհինգամյա մի Հայ աղջկա իրենց իսկ կանանց ու երիտանների Հրահրող Հիացական ժողովուրդական Ներքը:...«Շաֆազ» կինո-Մատրոնի մոտ խաղաղի վրա ողջ-ողջ այրում էին կենդանի մարդկանց»¹⁴⁶(ընդգծ. – Ա. Մ.): Ահա այս է 20-րդ դարավերջին աղբրի-թուրքերի մարդկային ու ցեղային նկարագիրը, եթե կուզեք բուն ազգային մասնագիտությունը: Ինչո՞վ է սա տարբեր օսմանյան թուրքերի 1890 – 1920-ական թթ. գործած վայրագություններից, շուրջ մեկ դար Հետո՞ այսօր, նկատվում է արդյոք նրանց ցեղային բնավորության դուրս-ինչ բարեշրջում, մարդկայնացում կամ քաղաքակրթության զբըսնորում: Բոլորովին: Ընդհակառակը, Հայերիս Հանդիպ տեղեկատու ու անընդմջ բորբոքվող նպատակադաս ստեղծությունն այնքան է զորեղ, որ Բուլղարիայում 2004 թ. Հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած տեղում կացնահարելով սատարատորեն սպանած ոմն Թամիլ Սաֆարովի (օրն, անշուշտ, սեփական կենդանական բնազգածին մղումներից ու խաղախմ մարդասպանի իր ազգային մասնագիտությունից բացի՝ պետական Հանձնարարություն էր կատարել) Ազրբեջանում այսօր Հռչակում են Հայրենասիր ու ազգային Հերոս և իրենց նորածին լամուկներին կոչում նրա անունով, որ մեծանան ու նոր ուսմիտաֆարսովներ դառնան... Նաև այս է այսօրվա թուրքը, որ իրքերինով անընդհատ վերարտադրվող մշտափոփոխ պատուհաս է լինելու քաղաքակրթ մարդկություն Համար:

Գոչումս լույս տեսնող «Ակրոս» թերթի զլխավոր խմբագիր Հրանտ Դիրքը թուրք մարդասպանների մեղքով 2007 թ. Հունվարի 19-ին սպանվեց ո՞չ պատահաբար. դարձյալ «Փա՛ռք Ալլահին» բացականչություններով, և մարդասպանին թուրքերիս յուր զարձայ «Հերոսացնելու» փորձեր արվեցին, և ի վերջո զատապարանցին 23 տարվա ազատազրկման: Հրանտ Դիրքը

¹⁴⁶ ՏՄՍ Երեմի Տափար. Черный ящик. Воспоминания русского морского офицера о бакинском резне 1911 года. Продолжение Геноцида армян. Азербайджан: Копия 20-ого века. Ереван, 2006, 19 29.

վաղուց աչքի էր ընկել իր ազատամտությամբ և ոչ միայն Հայոց մեծ եղևոճի իրողության մասին հրապարակային ելույթներով, այլև այսօրվա թուրք պետության մեղադրանքներին, թուրք ծայրահեղականների մահվան պառնալիքներին հակառակ, ժողովրդավարության առաջամարտիկն էր իրեն ժողովրդավար Հորթորթոզ թուրքիայում: Երբ իմաստ կար, անշուշտ, Դինքի թագման ժամանակ շուրջ Հորյուրհազարանոց թափորի՝ «Մենք բոլորս հայ ենք, մենք բոլորս Հրոնա Դինք ենք» բացականչություններում և «1, 500 000 + 1» կարգախոսում:

Հին կամ նոր թուրքերին ցեղասպան որակելու Համար ուրիշ էլ ի՞նչ հատկանիշներ ու Հանցանշաններ են պակասում:

Մի՞թե չի նկատվում, որ մարդասպանությունն ու մարդակերությունը հնուց ի վեր թուրք ցեղին բնորոշ ոչ միայն բնազդային, այլև ազգային զլխավոր մասնագիտություն է, և Հայոց մեծ եղևոճից հետո ու այսօր այլ ժողովուրդների նկատմամբ ցեղասպանություն իրագործածներն ու զեռ իրագործողները թուրքերի ժառանգներն են կամ ծագումնաբանորեն, կամ դաստիարակությամբ:

Եղևոճը շարունակվում է: Ուրեմն իսկապես արդիական է Հովհ. Երրազի «Հայոց դանթիսականք»:

Մեծ տերություններն առաջնորդվում են միայն իրենց քաղաքական ու անտեսական շահերով: ամերիկյան, անգլիական պաշտոնյաների ու քաղաքագետների վերջին Հայտարարությունները վկա: Այդ ինչի՞ց է, որ թուրքիայի ու Ադրբեջանի Հակամարդկային ոճրագործություններն ու ուրիշների տարածքների բռնազավթումներն արդարացվում են, իսկ Ադրբեջանի անսնազերծած պատերազմին Հայերի Հակադրած ազգային-առնասպարական լուծը թոթափած Արցախի ինքնուրույնությունը չեն ճանաչում:

Ո՞չ Մեծ եղևոճի, ոչ էլ արցախյան ազատամարտի մասին միջազգային Հանրությունը բավարար չափով իրազեկված չէ, ավելին պակասորոշողությամբ է: Այդ պատճառով էլ լրատվական

պատերազմում մենք հաճախ տանուլ ենք տալիս: Օրինակներ՝ որքան ուզեք: Լենց վերջերս Հայեպոստ Հեռագրոր եղավ զիտել «Այ Զաղիրա» հեռուստատիկայանի Հաղորդումը այսպես կոչված Ադրբեջան-Հայաստան Հակամարտության մասին, ուր արտաբուստ «չեզոք» լրատվության խոստումով ադրբեջանցի գաղթականներին թվեց, բազմապատիկ ուսճացվելով, ներկայացվեց ավելի քան մեկ միլիոն, իսկ իրականում ավելի քան կես միլիոն Հայ գաղթականների թիվը, միտամնափոր նվազեցվելով, իջեցվեց ընդամենը ... 70 հազարի:

Մեր խորին համոզմամբ մի կարևոր հարցում մենք թերանում ենք. թուրքական հակահայ քարոզչությանը, թուրքերի իսկ գործած եղևոճի՝ նրանց կողմից անմտոթ ու բացուսմաներին արժանի հակահարված չենք տալիս ու վաշելում ենք մեր իսկ անտարբերության սխուր պատեղները. հույաները զրկ ենք մարդկային բանականության, խղճի, անհերքելի թվացող պատմական՝ ակնհայտ փաստերի ճանաչման և աշխարհի կողմից Հեռագրոր ընդունման վրա ու չենք օգտագործել ապագափարական այն գործարք զենքը, որ չունի և չէր էլ կարող ունենալ մեր խարզախ ու ցինիկ թշնամին. դա Հայոց եղևոճակատումի հուշարական-վավերական ու զեղարվեստական գրականությունն է և մանավանդ Հովհ. Երրազի «Հայոց դանթիսականք» պոեմը, մի ճշմարիտ դատաստանատայան, որի Հիմքը Հայն այդ որբերությունն է՝ իր պատմաիրավական, աշխարհաքաղաքական, ազգագրական, մարդաբանական, մշակութաբանական, հոգեբանական ու Հայոց պահանջատիրության բոլոր Հիմնավորումներով:

Ճավ ի սիրտ պետք է ասել, որ վերջին ժամանակներս հաճախ ենք մոռանում, որ արվեստը, մանավանդ պատկերավոր խոսքը միշտ էլ շատ ավելի ներգործուն միջոց է, քան նույնիսկ իրական փաստն ինքն ու նրա վկայակոչումը, անզամ փաստերի վրա Հիմնված գիտական ծանրակշիռ խոսքը: Այս իրողությունը լավ են գիտակցել բունատիրական պետությունները և զաղափարական ճակատում կամ օգտագործել են իրենց մեռնուտ գեղարվեստական երկերի ներգործուն ուժը, կամ կարակա-

նապես արգելել են ոչ-ձեռնառու գեղարվեստական երկերի տպագրումն ու տարածումը:

Ինչո՞ւ Ֆրանց Վերֆելի 1934 թ. գրած «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը աշխարհի բազմաթիվ լեզուներով ճարտարակվելուց հետո միայն 1964 թ. Թարգմանվեց ու տպագրվեց Խորհրդային Հայաստանում, որովհետև ակնհայտորեն կային խորհրդային կայսերապետության թուրքերայի հետ ունեցած քաղաքական շահեր:

Ինչո՞ւ ԼուիՇ. Երբադի «Հայոց դանթեականը» պոեմը բանաստեղծի կենդանության օրոք լույս չտեսավ, այլ միայն հեռանալու տպագրվեց զգուշավոր խմբագրումներով ու աճավոր կրճատումներով: Մինչդեռ հենց այս գործն էր պետք առաջնահերթ հրատարակել ու թարգմանել աշխարհի հնարավոր բոլոր լեզուներով ու դեռևս համաշխարհային քննիչների սեղանին: Եվ առաջին հերթին հենց թուրքերենով էր պետք թարգմանել, որովհետև այսօրվա թուրք պետական գործիչները, փոխանակ իրենց նախորդների հակամարդկային արարքները արգարամտորեն արժեքեղու ու դատապարտելու, խնդիրն իրենցից հեռացնելու համար պատմական իրողությունների գնահատականը միայն պատմագետներին վստահելու փուլը կարգախոսներով խուսանավում են բուն ճշմարտությունից և իրենց սեփական թուրք ժողովրդից էլ են Թարգմանում մեծ ոճբազորությունը: Ավելին, հեռանդակներեն հայածուծ են նաև այն հասուհիներ թուրք մտադրականներին, որոնք Եղեռնի իրողությունը ամբողջությամբ կամ մասնակի ընդունելու քաղաքական ունեն: Թաներ Աբջանին, Օրհան Փամուկին, Զարբաբյուրին ու արանց նմաններին հենց վերջերս պետականորեն հայածուծ ու դատապարտելու օրինակը, Թերևս, ամենախոսուն փաստերից մեկն է: Թուրք գրող Օրհան Փամուկին տրված նորմայն մրցանակն անդամ թուրքերայում, մեզմ ստած, բարեհաճ չեն ընդունում մի արամարանուությանը. ինչո՞ւ հենց նա Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայն արտահայտվողը, և ոչ թե մի ուրիշ թուրք գրող:

Ահա և մի ուրիշ թուրք մտադրական՝ «Սիրոս քեղմով կը խայտա» գրքի հեղինակ Քեմալ Յալչըքը, որը կարծես ազնիվ է հայերես նկատմամբ իր վերաբերմունքով, հայտնության, սիրո ու բարեկամության կողմնակից է: Վերջինս Ամասիայի շրջանում թուրքերի հետ ամուսնացած ու զրա շնորհիվ միայն ողջ մնացած պտույտ էր կանանց է փնտրել՝ նրանց հետ անձամբ զրուցելու և ճշմարտությունն անմիջական աղբյուրից իմանալու համար: Եվ այս որոնումներն ընթացքում պարզվել է, որ նրա հարազատները, անզամ համալսարանական կրթություն ստացած ժողովի, ոչ միայն անտեղյակ են հայերի մեծ ողբերգությանը, այլև ճիշտ հակառակը գիտեն, այսինքն՝ հայերն են կոտորել թուրքերին, ոչ միայն չգիտեն, որ այսօրվա թուրքերայի մի զգալի մասը եղել է հայերի պատմական հայրենիքը, այլև այդ մասին բարձրաձայն խոսելն անզամ համարում են խիստ վտանգավոր:

«Սուլթան քեռակին».

– Քեմալ, ըսել է նախապես թուրքի մեջ Հայ կար:

Համալսարանի երկրագործական բաժնի վերջին դասարանի ուսանող Յոզգյուր.

– Հորեղբայր, Հայերն են որ թուրքեր սպաններ են, ցեղասպանություն կատարեր են, Թուսերուն այ օգններ են:

Անասուլու լիսնի վերջին դասարանի ուսանող Նեվրալ.

– Քեմալ, դուն արձակուրդի եկար...Նրբանք ծովեղբրք, լավ մը հանգստանաք: Գլխույ փորձանք մի՛ բերեք»¹⁰⁹(ընդգծ. Ս. Մ.):

Այսպիսի վայտի ու սարսափի մեջ է ապրում մասնակակից թուրք գրագետ սերունդը: Բոլոր դեպքերում գրողի՝ խոսք է սա, որ գրեթե լիարժեք պատկերացում է տալիս հայերի և ցեղասպանության առթիվ այսօրվա թուրքերայի հանրային կարծիքի մասին: Քեահատելի է ճշմարտությունն անմիջական աղբյուրից՝ անձամբ հայերից իմանալու թուրք գրագետի շանքը: Ուզում ես հավատալ նրա անկեղծությանը, որ բերում է

¹⁰⁹ Գեմալ Յալչըք, Դոկու քեղմով կը խայտա, Երուսաղեմ, 2004, էջ 37:

Քրեքերեն առաձև՝ «Արևը ցնիով կարելի է ձեռնել», այսինքն՝ պետական պաշտոնական տեսախոսքի հակառակ՝ նա Համադ-ված է, որ անիմատա է ցեղատպանությունն ուրանալը: Նա նաև ներդրություն է խնդրում կատարվածի համար և քաջա-թյան ու եղբայրության խոսք է ուղղում մեզ.

«Արիելի՛. Հայ եղբայրներս,

Մեր հարյուրամյակի միծաղուն ցավը մարդկության ճակտի սև մուրը եղող ջարդերուն, «աքսորի ընթացքին ծրարված կերպով սպաննված», կյանքը կորսնցուցած բոլոր Հայերու և Ասորիներու Հիշատակին առևն կը խոնարհիմ, մեր ցավերը կընդունեն որպես իմ ցավը: Որպես թուրք թուրք գրագետ, իմ ա նուևով մեղմն և մարդկութենեն ներողություն կը խնդրեմ... մարդկության ճակտին մուրը՝ այս մեծ աղետին պատճառ եղող-ները, ծրարող և իրականացնողները անիծյալ թող ըլ-լան»¹⁵⁰ (ընդգծ. — Ս. Մ.):

Բայց նույն այս թուրք մտավորականը, որ խորապես հա-վատացած է, թե ամեն ժողովրդի մեջ լավն էլ կա, վատն էլ, «եղբայրության կողմնակիցներ ալ կան, եղբոր արյան ծարավ-ներ ալ»: Նոսու՛մ-առանձնացում է, իր կարծիքով, ամենից հանրահայտ լավագույն Հայերին ու լավագույն թուրքերին նրանց օրինակը ի ցույց դնելով սերունդների առևն.

«Հայ ազգի պատմության մեջ սրբազան գիտնական մը Մեսրոպ Մաշտոցի նման, սերը Հաշտությունը, բարեկամու-թյունը, գիտությունը պաշտպանող մեծ մարդիկ կան: Թուրք ազգի պատմության մեջն ալ, Յուևուս Էմբիի նման Հաշտու-թյունը, եղբայրությունը, սերը ամեն բանն վեր Համարող մար-դիկ ապրած են: Մեսրոպ Մաշտոցիներն ու Յուևուս Էմբիները նույն հողերը, նույն աշխարհագրությունը կը բաժնեն: Ես ալ ան Հողերուն մեկ զավակն եմ: Հեռուարք, Հաշտության, եղբայրության, սիրո և գիտության սենյց Հարթած ճանապար-

հին որպես մեկ ճամփորդը, որպես մեկ գրագետը ըլլալն Հպարտ եմ»¹⁵¹ (ընդգծ.— Ս. Մ.):

Այսպես և սրանով Հպարտանալը ժամանակակից թուրք մը-տավորական իր ընտանի իրավունքն է Համարում: Այս գեղեցում անհասկանալի կմնա, թե ի՞նչն էր ստիպել առանձին-ներորդ զարավերջի և քաններորդ զարասկրթի թուրք պետու-թյանը, զինվորականին, մտավորականին, հովիվ-անասնապա-հին, հողագործին, առևտրականին և, վերջապես, խառնաճյուղի խոժանին մինչև թեղանիքները թաթախվել Հայոց արյան մեջ: Միլիոնավոր անմեղ Հայերի Հեռ Գր. Զոհրայ ու Դ Վարուժան, Սիամանթո ու Ռ. Սևակ, Արուստան ու Ռ. Բլկատինցի, Խամակ ու Ակնուհի, Ռուբեն Զարգարյան Հոշոակով սպանած, տանջամահ արած, մեր հողերն ու աշխարհագրությունը ոչ թե քրամած, ինչպես ինքն է ասում, այլ բռնազավթած պետու-թյան ու ժողովրդի զավակ թուրք գրագետի 2002 թ. նոյեմբերի 3-ին ստորագրած խոսքն է առ, որը պարզապես նշանակում է երկու՝ Հայ և թուրք ժողովուրդների Հավասարեցում, եղևուս-գործ դաճճի և նրա դու՛հի Հավասարեցում, մեզ կոտորած ու մեր երկիրը բռնությամբ հախրապած թուրքի ու նրա մեղքով Հայրենասուղի զարձած աշխարհացի ու սփյուռքված Հայ սերունդների Հավասարեցում, կախողի ու կախվածի, սպանողի և սպանվածի Հավասարեցում...

Ուրեմն՝ ողջամի՛ր, բարեխ՛րտ, եղբայրասն՛ր ու հայասն՛ր թուրք գրագետն անցած այսօր հարցը թուրքալսարի է պատկե-րացնում՝ առաջարկելով միայն խոսքով սեր ու հաշտություն՝ առանց զղջման ու հատուցման:

Հայոց ցեղասպանությունը աշխարհի մարդկությանը տեսա-նելի և ճանաչելի դարձնելու, պատերազմներն ու նման աղետ-ները զատապարտելով կանխելու նպատակով ու մարդկությու-նից մեր ողբերգության նկատմամբ վերաբրմունք ակնկալելով է իր պոեմը գրել Հ. Երևալը՝ կանխազգույն, որ այդ աղետը, միջազգայնորեն չճանաչվելու ու չղատապարտվելու դեպքում,

¹⁵⁰ Լույս տեղում:

¹⁵¹ Լույս տեղում, էջ 12:

կրճական ու աշխարհաքաղաքական պատճառներով, մեծ կամ փոքր չափերով Հետո կրկնվելու է Վիետնամում ու Աֆղանստանում, Կամպուչիայում ու Ռուանդայում, Ազրբեջանում՝ Մուսկովյիթում, Նախիջևանում, Կիրովաքաղում ու Բարբում, Ջիբուտիում ու Հարավսլավիայում, Ջեզնիայում, Ինդոնեզիայում, Իրաքում, Գրոնդինում ու Բուլղարիայում, Մոսկվայում ու Բնալանում, վերջերս՝ նաև Վաշինգտոնում ու Լոնդոնում: Բոլոր այս աղետները չճանաչված ու չդատապարտված Հայոց մեծ եղեռնի, աշխարհի մեծ չարագործների անպատժելիության տխուր Հետևանքներն են.

Երբ դեռ Հիտլերված գծորաշուռը.

Հիշելով Թբթի խժած արյունը՝

Հեղ լիճաց վրա խոլ արշավելու վայրկյանից ստա՛ր՝

Հրաման Հաննից գերման զորքերին իր գինաշառաչ.

- Վեր անգթացե՛ք բորենուց էլ վեր,

Թրաճար արեք օրոցքներ ձձկնք,

Ճեղքե՛ք օրովայնն Հոլի Հարսնեթ՝

Թուրքին ներողը մեզ էլ կնեթրե՛ք...

Բոլոր վագրերից, օձերից էլ վեր՝ դերանգուժ եղեք,

Ինչպես Թուրքն արավ՝ մանուկներն թաղեք,

Անգթության դեմ ծուռնկի են զալես,

Ականջ չղնեք, որ մայր է լալես...

Ետտ վախեցվածը շուտ է հանձնվում,

Ուժեղ մեղավորն անմեղ է թվում...

Հայ կոտորածներն Հիշե՛ք և ի դե՛ն՝

Թուրքին ի՛նչ արին, որ մեղ ինչ անեն...

Ամերիկան, Ռուսաստանն ու եվրոպական մյուս տերությունները Ֆրանսիան, Գերմանիան ու Անգլիան, աչքները փակած Հայոց ցեղասպանության դեմ, իրենց ծոցում կամավոր ընդունել են Թուրք-մուսուլմանական օրեցօր ընդլայնվող ու զորեղացող քաղցկեղը: Եվրոպայում ու Ամերիկայում դեռ նոր են ճաշակելու իրենց թրջախրության, նրանց նկատմամբ ցուցաբերած անհնաաես ճովանավորչության դառը պտուղները և

դեռ չա՛տ են տառապելու միջազգային ահաբեկչության սպառնալիքներից ու անակնկալ մահարեր Հարձակումներից:

Անընդհատ ահուղողի, վախի ու տագնապի մեջ ապրող մարդկությունը, աշխարհի դերհզոր տերություններն անգամ այսօր ունեն չլուծված և դեռ ապագայում էլ կունենան անլուծելի խնդիրներ, քանի դեռ Համաշխարհայնորեն չի ճանաչվել ու վճռականորեն չի դատապարտվել Հայոց ցեղասպանությունը: Եղեռնի մոռացումն ու սեբազործի ներումը ամենամեծ անբարոյականությունն են և միշտ էլ Համաշխարհային նոր չարիքների պատճառ կդառնան:

Հովհ. Շիրազի այս ողբամատյան - դատաստանամատյան պոեմը զրբելու ժամանակներում կային միայն մեծ մարդասերների կարեկցական ու հուսադրող խոսքեր, ինչպես Անտոնյան Ֆրանսի «Հայերի դատը մարդկության դատն է» արտահայտությունը: Ուստի այս ամենը կուահող ու կանխատեսող բանաստեղծը, բնականաբար, իր դատաստանամատյանում պիտի գրետարկեր Հայաստան - աշխարհ և Հայություն - աշխարհի ծովուերդներ Հարաբերությունը.

... Տեսավ աշխարհը Հայոց եղեռնը անհղաքարհուր՝
Տեսավ քարայրա, մի ձայն չհաննի Սֆինքսի պես լուռ,
Թնդանոթալուտ մի խոսք էլ չստավ ու լուռն է դեռ
Աշխարհ Սֆինքսը՝ քարե աչքերով անմտառեւեռ,
Քարե շուրթերով, քար ականջներով, քարե Հայացքով,
Վիշտա չկիսեց թեկուզ կես կաթիլ քարե արցունքով,
Քարե Աֆրիկան, քարե Եվրոպան, քար Ամերիկան,
Քարե Ֆրանսիան, քարե Իրանը, քարե Իսպանիան,
Քարե Ճապոնը, քար Ջինմաչիկը, քարե Հյուսիսը,
Քարե Հնդկիք, քարե Թարքը, քարե Հիտուրը,
Քարե խաչապաշտն ու ողջը քարե -
էլ ի՛նչ ես գոռում, ո՛վ Հայ մարգարե...

Սֆինքսի աչք են երկու օվկիանոսներն այս մի աշխարհի,
Նայում չեն տեսնում. ինչպե՛ս չհանեն աչքերը քարի, -
Ո՛ւմ են պետք, երբ որ վշտեր չեն կիսում այս կյանք-քառում,

Արշաւ չկիսածի վիշտը չեն կիսում, վշտով եմ սասում, -

Այսօր մեկ հասավ ձեռքով սնունդի,

Վաղը, իմացի՛ք, մեկ պիտի հասնի...

Առաջին համաշխարհային պատերազմին ու Հայոց ցեղասպանութեանը հաջորդած ճրկորոգ համաշխարհային ու մյուս պատերազմները և այսօր աշխարհով մեկ ծավալված ու մեծաքանակ մարդկային զոհեր խլող ահարկեղանի գործողութիւններին, Համիդից ու Էնվերին, Քալմայից ու Ջեմալից, Պետրից ու Բեհանզադէի Շաքրից, Մուսթաֆա Բենալից ու Քյադի Կարարքերից, Լեհիտին ու Կորա - Սապիինց, Քերեայից ու Եմովից, Հիտլերից, Հերսից ու Գյոլրինգից, Պիտոշեօից ու Պոլ Պոտցի, Շամիլ Բասանից ու Բեն Լազենից, իրենց սեփական և ուրիշ ժողովուրդների հանդէպ մյուս համաշխարհային դահիճների ոճրագործութիւններին հետո ոչ ոք չի կարող կասկածել Հովհ. Շիրազի հարցադրումների և կանխատեսումների արդարացիութեանն ու իրավացիութեանը:

Իսկ օտար ընթերցողը, անգամ թուրքը, որի խղճի կույր աչքերն այնուամենայնիվ ականջներ ունեն (սա նույն Շիրազից ենք գոխ ստանում), գեղարվեստի լեզվով ազլիլ անմիջաբար Հաղորդակից կլինի պատմական ճշմարտութեանը: Ասկայի արդեն կշտամբանքների արժանացող ու համաշխարհային դատապարտման յուրը վտանգ զգացող թուրքիան ո՛չ միայն շարունակում է ուրացման ու Հերքման մարտավարութիւնը, այլև անցել է առաջիկ հարձակողական ինքնապաշտպանութեան: Երբեմնի Արևմտյան Հայաստանի՝ այժմյան իր տարածքում եղեռնապարկ եղած Հայերի զանգվածային հալածական գերեզմաններ հայտնաբերելով՝ ինքնարդարացման համար գրանք որակում է իրեն Հայերի կողմից սպանված թուրքերի գերեզմաններ և որպես հակակշիռ անցած տասնամյակներում ընդամենը կարողացել է «Հայտնադործել» ու հրովարտակել, թե տեսն՞ք, Հայերն են թուրքերին տեղահանել ու կոտորել... Այդ գնալքում դարձյալ թրատարանակն Հարց է ծագում, որի կույրութեանը անյիսկ թուրքերն կարող է հասկանալի լինել: Ո՛վ, ո՛ւմ և ո՛րտեղ է կոտորել, և ինչո՞ւ նույն

այդ «տեղահանող» ու «կոտորող» Հայերի զավակներն ու թուներն այսօր իրենց բուն Հայրենիքում չեն ու հիմա սփյուռքված՝ Թափառում են աշխարհով մեկ, և ինչո՞ւ, են այսօր թուրքերը դարձի Արևմտյան Հայաստանի՝ Հայութեան պատմական բնօրրանի տերը...

Ինչպես անցյալում՝ թուրքը այսօր էլ, ի գեմա իր ներկա կռաւարդներին, իր համար անցանկալի այս հարցերին ի պատրաստի նոր կեղծիքներ կհորինի ու կհրամայի համաշխարհային հանրութեանը նրան վերջնականապես ապակողմնորոշելու և ներկայումս ու գալիքում արդարանալու համար:

Այլ է Արցախի խնդիրը: Իրենց երկու պետութեանը մեկ ազգ համարող թուրք - ազրիներն այնքան են «ազնիվ», որ իրենց կամ սանձազերծած պատերազմում սեփական պարտութիւնն արդարացնելու և ուրիշ մեղավոր գտնելու համար աշխարհով մեկ հայտարարում են, թե ազրերը Հայերը զրավել են իրենց տարածքների 20 %-ը, քայլ «մոռանում» են սակի, որ զա Հայերի առաջներում իրենց զավթած պատմական Հայրենիքն է, որը նրանք վերանվանել են պատառարական պաշտարով: Ի զեղ, խնդիրը Հենց այսպես էլ պատկերացնում էր ավարացի Հոչակավոր բանաստեղծ Ռասուլ Համզաթալը: Հենց այդ պատճառով էլ նրա գրքերը հանդիսավորութեամբ այրվեցին Բաքվի հրապարակներում:

Ինչպես Հայ և օտար գրողների արարած Հայոց եղեռնապատումի ողջ մեծամասն զրավանութիւնը, այնպես էլ Հ. Շիրազի «Հայոց զանթեակներ» պոեմն ստան հիմքի և պատմական իրողութեան չի ստեղծվել: Այդ զրավանութիւնն ստեղծողները կամ եղեռնը տեսածներն ու վերապրածներն են, կամ նրանց ժառանգները, կամ օտարազիր Հայ գրողներն ու այն այլազգի գրողները, որոնց միջավայրում հայտնվել են ցեղապանական շարդից փրկված Հայեր:

Եր. Օտյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահայանը, Զ. Եսայանը 1894 - 1923 թթ. շարդերը տեսել էին գրեթե ամբողջ տեղութեամբ, Գր. Հոհրապետ, Միամանթոն ու Վարուժանը տեսել էին միայն Մեծ եղեռնին նախորդած ջարդերը, Վ. Տերյանը, Ե.

Չարենցը գրեթե ամբողջ ողբերգությունն ականատեսներ էին կամ ժամանակակիցներ, Հ. Երազը ծնվել էր Հննց 1915-ին¹⁵², իսկ 1920-ին Գյումրի ներխուժած Թուրքերն սպանել են նրա հորը: Նույն այդ ժամանակներում 1920 թ. սեպտեմբերից 1921 թ. ապրիլը Թուրք սակայրների կողմից Ալեքսանդրապոլում և շրջակա գյուղերում բռնաբարվել է շուրջ 100 հազար կին, որոնցից 60 հազարը՝ 8-12 տարեկան¹⁵³: Գաղթականներով ու որբերով լեցուն սովի ու տառապանքի այդ միջավայրում է իր որբությունն ու վաղ մանկությունն ապրել Օնիկ Կարապետյանը—Հովհ. Երազը, ցածր ներքնովի է նրա էություն, արյան ու սակորների մեջ, և այդ միջոցառում իր անջնջելի կնիքն է դրել նրա որպես բանաստեղծի ու մտածողի ձևավորման վրա:

Հովհ. Երազին նախորդած մեր գեղարվեստական շափածո գրականության մեջ Միամանթոյի «Դյուցազնորեն», «Հալոթր-դիներ», «Հողեվարքի և Հույսի ջահեր», «Կարծիր լուրեր բարեկամն» գրքերից, Վարուժանի «Ցեղին սիրտը» գրքի «Բագինին վրա» շարքից, Ռ. Սևակի մի շարք գործերից, Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի հզոր բանաստեղծություններից, Չարենցի «Դանթեական առասպելից», «Վահագնից», «Հարդազողի ճամփորդներից», «Ողջակիզվող կրակ» շարքի որոշ գործերից, «Մահվան տեսիլ» բանաստեղծությունների, «Նրիկի Կախիլի» պոեմանման վեպից, «Նմաբայես Նավարչից» ու «Մահվան տեսիլ» պոեմի մի հատվածից բացի ուրիշ ոչինչ գրեթե Հունենք: Մեր շափածո գրականության մեջ Հովհ. Երազի այս նամադրական պոեմ-դատաստանատյանը, փաստորեն, գրական որոշակի ավանդելով ստեղծված առաջին և ամենածավալուն երկն է, որը գրվել է հատուկ եղևուր պատկերելու և դատապարտելու, հայության ողբամուռն արտահայտելու

Հատակ նպատակադրումով¹⁵⁴: Բայց այն, Հակոտակ պետական գրաքննության, գրվել է որոշակի փաստական հիմքով, իրիթի-հատի կառավարության գաղտնի հրահանգների, ժամառում եղած հրապարակումների, կանանատեսների վկայությունների, ցեղասպանության երևույթը Նշավակոյ աշխարհի մեծ մարդասերների կարծիքների հիման վրա՝ որպես եղևուրագրիկ եղած և աշխարհով մեկ ցրված հայության բողոքի և պատմական հիշողության ճիշտ մարդկության քնած խղճի արթնացման, արդար հատուցման և ցեղասպանին դատապարտելու պահանջով: Եվ ամեն մի գեղարվեստական պատկեր այդ դատաստանատյանում ու երկն ամբողջությամբ մեղասպանության խտացված, համակողմանի ու կենդանի արտացոլումն է:

Հայ և օտար Հեղինակների գեղարվեստավերական ստեղծագործությունները պակաս կարևոր դեր չունեն ցեղասպանության էությունը քայահայտելու հարցում: Եվ մենք, պատմափոսական լալխատությունների կողքին ու դրանց հետ մեկտեղ, աններելիորեն չենք արժևուրում, չենք քննադատում ու միջազգային հանրությանը համառորեն չենք ներկայացնում Հ. Երազի «Հայոց դանթեականը» դատաստանատյանը - պոեմը, ուր վավերական, ողբերգական իրողությունները անմրցելի պատկերավորությամբ ներկայացված են ոչ միայն որպես

¹⁵² Արդեն անել ենք, որ 1965 թ. Սեծ եղեռնի 50- ամյակի դեպքերից հետո Գ. Երազը հատուկ կամարտաստանատյանը 5շտեց իր Սեծ եղեռնի տարում 1915 թ. ապրիլի 27-ին ծնված լինելը - Ս. Ս.:

¹⁵³ Այս փաստը Ունյունիկ հիշում է «Երևուր» ֆիլմում՝ որպես Ալեքսանդր Մյասնիճյանի անունից ավաղ խոսք:

¹⁵⁴ Պ. Սևակի «Անջելի գանգալատուն» պոեմում, որը գրվել է 1957-58 թթ. և լույս է տեսել 1959-ին, հիմնականից էր կոմիտասի գեղարվեստական կերպարի մարմնավորումը: Պոեմում եղեռնի տեսարաններ պատկերվել են կոմիտասի «վերջին հայրենասիրական մեր պատմությանը» միախառնված կյանքը և մամուլում նրա հազնված խանգարումն ու ուղեղի մթազումը գեղարվեստորեն հիմնավորելուց հետո բանաստեղծի ինքնահաստատման սխրանքն էր, հոգի մերշնչանցով գրված մեր քայտնի գործ, որով նա միամտամանակ կատարեց պատմական շատ կարևոր դեր՝ նոր սերունդներին եղեռնի իրողությունը մամուլի տակու իմաստով: Թեև «Չանգալատուն» 1966 թ. հրատարակությունն արժանիորեն փոխ ցնահատվելու և «Չանգալատուն» 1966 թ. հրատարակությանը միջադարձում չէր իր այդ գործում, որովհետև գիտակցում էր, որ «Չանգալատունով» ինքը եղեռնի մասին դեռևս ամենավերջին օրը չի ասել և 1965-ին գրեց եղեռնի թմայով իր լավագույն գործը՝ «Եսամայն պատարագ» պոեմը - Ս. Ս.:

զուտ Հայութիանը պատահած ազգային ու մարդկային ող-
բերգություն, այլև որպես Հանուր մարդկութիանը պատահած
համաշխարհային աղետ, որպես բոլոր փոքրամիթի ժողովուրդ-
ների անվտանգութիանն սպառնացող մեծադուռն չարիք:

Հայ ժողովուրդը և աշխարհ Հարթարեութիւնը քննարկելիս
Հովհ. Շիրազը աշխարհի բոլոր ժողովուրդներին համարում է
երկիր մոլորակի՝ միջանց Հարեանտաթյամբ ասարելու բնական
իրավունքով Հարատևող Համասարազոր տեքեր, ինքը Հայ ժո-
ղովրդի անունից դիմում է նրա երկրարեանկ բոլոր Հարեան-
ներին, որոնք մեծ վտանգի պահին միասինակ էին թողել իրենց
Հարեան Հայերին.

... Ով ազգեր, արդյոք դուք էլ ստեղծե՞ք,
Ով Հյուսիսուհիք, լսեցի՞ք արդյոք,
Տեսա՞ք Հայ գոթիքն, անհոգ հնդկուհիք,
Ինչո՞ւ թողնեիք իմ ազգին անոգ,
Պարսկուհիք, տեսա՞ք դո՞ւքն Հայկական,
Նեղուհիք, տեսա՞ք, թե ինչքան խորն է,
Թրքուհիք, տեսա՞ք ձեր գեմքն իսկական,
Նուրբ ճաղոտուհիք, ճշացի՞ք դո՞ւն...
Չիմուհիք, Հայ ցավն զգացի՞ք արդյոք,
Ով աֆրիկուհիք, դո՞ւք էլ եք անհոգ,
Վերուհիք, ո՞ւր եր գութեք ձեր բազկի,
Ով իսպանուհիք, լսեցի՞ք դուք էլ
Մեղասխալու՞մք իմ անմեղ ազգի,
Ա՛խ, տեսա՞ք, թե ինչ ակ ձյուն է բուքել
Մասիված գլխին իմ Հայրենիքի...
...Ով գերմանուհիք, ո՞նց էիք ներում,
Երբ ձեր լուխն էլ մեղ մահ էր բերում...

Սա զեղարգիտական ճշմարտությունն է, որը, սակայն, ոչ
միայն ամենեկին չի հակասում պատմական բուն ճշմարտու-
թյանը, այլև պարզապես խտացվածքն է նույն այդ իրողութիան
ու ճշմարտության: Այս ճշմարտության գիտակցությունն է
այսօր երևկվա մոլորեցնող ներհնից արթնացող աշխարհին պար-

տավորեցնում միջազգայնորեն ճանաչելու Հայոց ցեղասպա-
նությունն ու զատապարտելու եղեմնազոր թուրքիային: Այս
նույն ճշմարտության խոր գիտակցումով, Հայոց մարդա-
սիրության ու խղճի, Հայկական համամարդկայնության թեյա-
զրանքով էլ զատաստանամատյան-պոնմում Փոքր Հովհան-
նեսը (նույն ինքը՝ Շիրազը) և նրա հետ միասին Լարեկացին ու
Խորենացին դիմում են աշխարհի բոլոր ազգերին.

— Ազգեր, թե Հայոց այս եղեմը մեծ
Ձեր մեկնուձեկին խոշտանգեր Հանկած՝
Իմ սիրա՞ջ՝ որպես Հայոց բանաստեղծ՝
Ձեր լուի մեղ պես, պիտի մուհար այսպես աճաղնած,
ես կդառնայի սուրբ աճաղնեղի զանգահար մի նոր՝
Կահալանգեի իմ խղճի գանգով, աղանաղով իմ Հոր...
... Ես կանգեի բոլոր բյուր զանգերն Հայոց վանքերի,
Թե որ տեսնեի բուրվիլն այսպես ձեր խեղճ զանգերի:
Թե մեկնուձեկի՞ իմ ազգի նման եղեմնահարվի՞ր
Ես չէի լուի՞ Համավլած ձեր սուրբ վշտով կարնվիք,
Թե ձեր ժողովուրդն Հաղարաբավան արվեր տեղահան՝
Ես կդողայի՞ «Գառայանը քաշվիք, ո՞վ ժանն յաթաղան»...
... Եվ Լարեկացին խոսքս Համեմեց,
Նա, որի Հավատն ասես կարկանդ...
Երես դարձրեց՝ արու՞մ՝ երկնքից
Փրկել շանաղով ազգին... դո՞ւքից:
— Թե ձեր մերուկներն իմունցի նման թաղվեին կենդան՝
Ես թաղողներին պիտի թաղեի, ո՞վ մահալողան:
Թե ձեր մայրեր՝ իմունցի նման՝ կախաղանվեին՝
Կկայծակեի՞՞ ժանն ոտտներին անմայր աչքերին:
Թե ձեր քույրերն էլ իմունցի նման՝ պղծվեին մահով՝
Ես ըմբոստացած կուլի կելնեի զեկե՞ք ու զրահով:
Թե եղբայրներ՝ իմունց պես անգին խեղճվեին այսպես՝
Ես պատերազմի կելնեի իսկույն, կբրկեի մեղ...
...Եվ խոսքը խելց մեծ Լարեկացուց
Մեծ Խորենացին՝ որպես Աստուույց:
— Թե մեկնուձեկիդ զեմոցիդ բերե ոտոխը մթա՞ր՝

Ես նույնը նրան պիտի բերի՝ խղճով իմ արդար:
 Ես այնպիսի խուճ կասեի, որ ծով գործը խաղաղվեր,
 Օձի գլխում էլ թուշը մեղքանար, ժանիքը փլվեր,
 Խոսքն ի՛նչ... Ո՛վ ազգեր, ես կոտալի բազկիս բերանով,
 Ձեր քարն իրիզը խմոր կաննի խղճիս մերանով,
 Իմ կողոսկերն էլ թուր կդարձնե՛ի՝ ձեռքին իմ արդար,
 Օրացքի բնդոճն հլետղ գործի գե՛մ գործ կհաննի՛,
 Տեղասպանին ողջ Հողագեղեցից դուրս կվաննի,
 Ես չե՛ի լո՛ւ՝ մզկիթ կպոկեր վրեժիս քամին,
 Այնպես որ խելքի կզար մարդկության այս թուր թշնամին,
 Թեկուզ մինչև վեր՝ մահա՛տես լուսնի ծոցը արնաքամ,
 Որ ոչ մի ազգի ոչ մի մասն անդամ
 Ոչ մի թրով էլ չընկներ Հայոց պես:

 Ո՛վ լուսն մեծեր, եղովում եմ ձեզ... :¹⁵⁵

Այս է հայկական Համամարդկայնությունը: Ահա ինչու
 Հովհ. Շիրազի այս պոեմն ունի ոչ միայն տղգային, այլև Հա-
 մամարդկային հնչեղություն. նրա միայն նյութն է կոնկրետ
 տեղական ու ազգային մտտիկ անցյալի Հայոց ողբերգու-
 յունը, իսկ հեղինակի Հարցադրումներն ու բնդհանրացումները
 իրոք Համամարդկային են ու արգելական: Պատահական չէ, որ
 պոեմում պատկերված Հայոց եղևո՛ւնի դժոխքում հեղինակի ա-
 ուջնորդությունը չբնդող ողևո՛ւնի կազմում «Հայոց մեծերի
 անմեռ սգիներին» հետ միասին, նրա իսկ հրավերով, որպես
 խղճի ու բարձրագույն բարոյականության մարմնացում, «Ներ-
 կա» են նաև աշխարհի տարբեր ժողովուրդների մեծությունե-
 ները: Իրականում դաստանամասայան – պոեմը, Հայոց ցեղա-
 սպանությունը պատկերելով, ուղղված է առհասարակ պատե-
 րազմների ու կրկնվող Համամարդկային մեծ ու փոքր ողբեր-
 գությունների դեմ:

¹⁵⁵ Ընդգծ. մերն են – Ա.Ս.:

կառուցվածքը և նպատակադրումը: «Հայոց գանձեականը»
 պոեմն ունի անսովոր կառույց. նրա քսաներկու գլուխները
 կրում են իրենց բովանդակությանն ու Հարցադրումներին բն-
 բոլջ վերնագրեր՝ «Գիշեր այգահատաչ», «Գիշեր վշտահուշի»,
 «Գողգոթայի գիշեր», «Գիշեր խաչելության», «Գիշեր գետա-
 մուռնչ», «Անեծքի գիշեր», «Պանոսասխեղզ գիշեր», «ԼԻ՛նձ



Դուի. Շիրազը Օրծոնակաբերում եղևո՛ւնի գոհոր հույսամալքում
 մուռնչի գիշեր» և այլն: Այս գլուխների սկզբում աշխարհի
 մարդկությունն ուղղված առաջաբան – դիմումները հետաքրքիր
 են ոչ միայն որպես շիրազյան արձակի բացառիկ նմուշներ,
 այլև դրանք այժի են ընկնում իրենց Հզոր պատկերավո-
 րությունը, բովանդակային բացառիկ Հարստությունը, որ զըր-
 սևերվում է երբեմն նպատակալաց շիտակությունը, երբեմն՝
 փոխաբերական ու այլարանական դիպուկ բանաձևումներով:

Եվ դրանց մեջ, անշուշտ, անկարևոր չէ հին հոսմեական վրեժի
 և արդարության աստուծո՛ւ նեմեսիսի արդարություն կշեռքը
 ձեռքին բանաստեղծի՝ Եղևո՛ւնի հանդեպ Համաշխարհային
 լուսության այգանումը, բայց առավել կարևոր է մարդկության
 վերքը, Հայության ցավը ճանաչելու և ցեղասպանությունը

Հրեշտակագիտ կույսերին կին էին վերցնում ու թեև մեղսնում էին Հայ կնոջ ու Հայ կնոջից ծնվածի բերանում Հայ լեզուն, բայց չկա չարիք առանց բարիքի...» (էջ 170-171, ընդգծ. Ա. Մ.):

Այս և աշխարհի մյուս մոլորությունների ուղղված շիրտզայն դիմումները վկայում են, որ Հայոց եղծուր Համաշխարհային պատերազմի գործընթացը բանաստեղծին այս պոեմով սկսել էր տասնամյակներ առաջ. ու եթե նրա այս երկը ժամանակին թարգմանված ու տպագրված լիներ նրանց լեզուներով, ապա ցեղասպանության միջազգայնացման գործընթացն ավելի վաղ սկիզբ ու մեծ թափ կտաներ, ավելի շուտ կճանաչվեր, ու եղեռնագործը կդատապարտվեր Համայն մարդկության կողմից և կեանքներ պատմության ու սերունդների դատաստանի առաջ:

Բայց այս գործընթացը վաղեմություն չունի, ինչպես Հայոց եղեռնն ինքը, և Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» դատաստանամատայանը դեռ կարևոր դեր է կատարելու նրա Համաշխարհային ճանաչման ու սերտագործությունը դատապարտելու, պատմական արդարությունը վերականգնելու ճանապարհին:

Ստեղծագործման ու հրատարակման պատմությունը: Հովհ. Շիրազի այս պոեմին ծանոթ եմ 1962 թվականից՝ չհաշված նրա «Էջեղեղ» Հատվածը, որ տպագրվել էր 1958 թ. «Ռեալ Հայաստան» առաջին զրբում: Գառկերպոսի 16-17 տարեկան մի պատանու, որ դեռ նոր-նոր Հովհաննես Շիրազի Հեռ անձամբ ծանոթ լինելու երջանկությունն ուներ, բանաստեղծից հանկարծ ստանում է հանձնարարություն մի գեղերում կարդալ «Հայոց դանթեականը» պոեմի մերենագիր տարբերակն ու Գեորգ Հայրյանին ուղղված նամակը և առաջույժան երիտուր միտտին հանձնել նրան, որն այն ժամանակ Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահն էր և պոեմի հնարավոր հրատարակիչն ու խմբագիրը: Կես դար է անցել, սակայն նամակի մոտավոր բովանդակությունը միտքս է: Հավատացած եմ, որ այդ նամակն այժմ պահվում է Գ. Հայրյանի անձնական արխիվում: Նամակում է. Շիրազը Գ. Հայրյանին մոտավորապես գրել էր, թե

մինչ այդ (այսինքն՝ «Հայոց դանթեականը» պոեմը) եղած իր գրական ժառանգությունը մի կողմ, իսկ այս մեկը՝ մի կողմ: Հատկապես հիշում եմ բառացի մի ձևակերպում այդ նամակից, որ խիստ տպավորիչ էր. «Սիրելի՛ Գեորգ, միայն մեղսները ավելի մեծ ոճիր է, քան մարդ սպանելը: Միայն մեղսները դժոխքի շան շունն է: Այնպես արա, որ գիրքս լույս աշխարհ գա, և ինքնապահունության մտքի ազդակները զլիխցս դուրս թռչեն...»¹⁵⁶: 1962 թիվն էր դա, փետրվար ամիսը: Մի շնչով կարդացի պոեմը, կարդացի ու հասկացա հիշածս նամակի բովանդակությունը: Իսկ Հե՛նչա էր կարգալը ուսանողական հանրակացարանում, հսկող աչքերի ներքո, այն էլ գիշերը: Ինձ համար Հայոց մեծ եղեռնը նորություն չէր. իմ սրբան էլուծության մեջ էր այն, և նրա սարսափների վկան նախ իր ողջ գերդաստանն ու ծննդավայրը կորցրած ու երկու այլ արժեքների հետ Վանս լճի վրա մի փոքրիկ նավակում 28 որ առանց Հայ և ջրի մնացած և հրաշքով փրկված պապս էր. ցերեկները նրանք փեթից անտեսանելիության չափ Հեռացել էին լճի խորքը, իսկ գիշերները մոտեցել էին Հայրենի թաղանձ գյուղերին, թուրքերի կողպած ցորենի հորերի շրջակայքից թափված հատիկներ հավաքել, մարդկային դիակներով խցված արյուրակներից ու սուուններից վիճակահանելով խմելու արևաշուր վերցրել ու այդպես դիմացել... քաջի ու ծարավի ծանր փորձությանը: Մյուս վկաները Վասպուրականից կորուստներով Արեւիյան Հայաստան Հասած մորապապի գերդաստանն էր ու Արեւմտյան Հայաստանի մյուս վայրերը հեռու մահվան գերանդուց հրաշքով փրկված՝ գյուղի բոլոր վերապրող տարեցները, որոնք եղեռնի անմիջական ականատեսներ էին, Հայրենիք, առևտուր ու Հարազատներ կորցրած, մահվան անհնազանդ ու զարհուրելի ձևեր տեսած ու զազատի զբանց մասին ստակումով պատմող վախճարած մարդիկ:

¹⁵⁶ Այս նամակը պետք է փնտրել Գեորգ Չալոյանի հարազատների մոտ Նրա արխիվում - Ա. Ս.:

Ես կարգացել էի Դանթեի «Աստվածային կատակերգութ-
յունը», մանավանդ նրա «Իմորթ» մասը լավ գիտեի, 1957 թ.
լուս առանց գրքով գիտեի Միամանկոյին, որ 1895 – 1909 թթ.
Եղիոնի մեծ գանգաճարն էր, գրեթե անգիր գիտեի Զարնեցի
«Դանթեական առասպելն» ու Եղիոնի մասին մյուս գործերը,
Պարույր Ասախի «Անլուելի գանգախառուներ», «Էլեզիա» հաս-
վածը և Շիրազի նույն այս պոեմից, բայց միանգամայն այլ էր
պոեմի ամբողջական ընթերցումով թողած տպավորությունը:

Առաջին իսկ ընթերցումով Հովհ. Շիրազի անսխալ ստեղ-
ծագործությունն այնքան ծանոթ ու հարազատ էր ինձ, որքան
համազուգացրեցիք իմ լսած տարբեր պատմամեները: Մակայն
մի դեպքում գրանք ճշգրտորեն, պարզ ու անպաճույճ պատ-
մում էին ծննդավայր ու հայրենիք կորցրած իմ տեսած մար-
գիկ՝ ողբերգության անմիջական կրող սկանտաստները՝ Իս-
կանդար պապս, մորս ծնողներ Արսենն ու Ռոկհնատը, Նախ-
յաններն ու Ախոյանները, մեծ Հորեղբորիկն առտա Գուլեն, հո-
հարյան Բաղդասարը, Եսայան Մանուկը, Քոթուկ Գուլեն, Կո-
նկրցի Սեթոն, Ալբրե Գոլոսը, Խոտակոնիսցի Փանոսը, Դեմիի
Աբշահը և ուրիշ համազուգացիներ, որոնք սպրում էին այդ
մայր կսկիծը և թաքուն փայփայտում էին վերագարձի հույսը,
մյուս դեպքում՝ Հզոր երևակայության ու պատկերավոր մտա-
ձողություն օժտված, որչափև է և չտուտի գաղափարական ու
գեղագիտական նպատակադրում ունեցող հանձարեղ բանաս-
տեղծը: Այնպես որ, բանաստեղծն ինքն էլ զարմացավ, որ
ըզգամենը մեկ անգամ կարգալով գրեթե ամբողջությամբ ան-
գրը հիշում էր մեծածավալ պոեմի այդ տարբերակը:

Հովհ. Շիրազի իսկ պատմելով Ավ. Իսահակյանը Հենց 1942
թվից ծանոթ է եղել պոեմի առաջին տարբերակին: Երբ նա պո-
եմը թիւղարկելու է եղել գրողների միության մեքենագրու-
հիներից մեկին, չի նկատել, որ քիչ Հեռու կանգնած լսում է
Վարդևոր: Նա էլ պահանջել է պոեմի մեքենագիր առաջին
օրինակը, որի ընթերցումից ստացած տպավորությամբ էլ գրել
է իր խիստ նպաստավոր կարծիքը: Այնուհետև այդ օրինակը
Վարդևորը ավան է եղել արվեստարան Ռուբեն Զարյանին

կարգալու և կարծիք հայտնելու, նաև մտածելու տպագրու-
թյան հնարավորության մասին: Վերջինս, սակայն, նկատի
ունենալով Կենտրոնի վերաբերմունքը և այլ հանգամանքներ,
հապաղել, ձգձգել և տարիներով ուշացրել է իր վերաբեր-
մունքը գրավոր կամ բանավոր արտահայտելու: Ըստ երևույթին
հսկան դեր են խաղացել պոեմի հանդուգն, այն ժամանակ-
ներում տպագրելու համար անկարելի թվացող շիրազյան
բուռն ու պոսիվուն բանաձևումները, Թուրքիայի նկատմամբ
պետության քաղաքականությունից ու վերաբերմունքից բխող
խորհրդային զրավիրտային արգելքները:

«- Այդ բանը նզովեցի մի բանաստեղծությամբ, - ասել է
Հովհ. Շիրազը: - Մի օր, երբ Վարդևորը հայտնվեց խմբագրա-
սանը, ավելի կարծիքն իմանալու: Կարգալ, սաստիկ տրեքն,
մեռքն ու թուզիքն նույն գոգն ունեին: Մերունին ավելի կակա-
զեց վախը»:

- Թուրք-ցեղերն են աշակերտում...
Նախասերմ գրվածքս պոեմվից, վերջակետովից «Բիրլիակա-
նից» ճիշտ յոթ շարաթ հետո:¹⁵⁷

Բանի որ դեռ մանուկ գրվածքիս մեծանպաստ կարծիք էր
հայտնել Իսահակյանը, ուղիքը, որ պոեմվածքին էլ ծանոթա-
նար: Եվ ծանոթացավ: Երկար ժամանակ պոեմն մնացել էր
մտալ: Եվ ի՞նչ, արցունքներս քիչ մնաց ինդզիին ինձ այնքան
մեծ խոսք գրեց պոեմիս ճակատին: Թե առա. թե երկու թևա-
վոր էի, հազարվեցի: Բայց երբ պատահականորեն «Բաջ Նա-
զարի» Դեմիրճյանին ավի Իսահակյանին խոսքը, զարմանալի-
բուն հայրաբար ասաց. «Ավետիքի այս կարծիքը ցույց տվիր
ինձ, էլ ոչ մեկին ցույց չտաս, նախանձ կշարժե, և պոեմդ
տեղից չի շարժվի»: Եվ սակայն Դեմիրճյանի այդ խոսքը քաջ-
նազարական մարգարեություն համարելով՝ չհամբերեցի (ճ,
թուլություն...), այս կողմ, այն կողմ, այն կողմ շաղ տվի Իսահակյանի

¹⁵⁷ Գովհ. Շիրազի այս արտահայտությունը մի անգամ ես հիշատակում էի որ «Դայրյո
դանթեական» առաջին տարբերակը գրվել է մեկ շվեյլ 1942 թ. և «Բիրլիականից» յոթ շարաթ հետո:

մեծանպաստ կարծիքը¹⁵⁶, և իրազ նախանը ժայթքեց այնպես, որ քիչ մնաց պոեմի թղթերն էլ այրվեին սրտիս հետ: Քիչ առ քիչ խառցող ամպն ու թուխար կայծակեց հրաբխով չարութունից¹⁵⁷ (ընդդժ.— Ա. Մ.):

Պոեմը շուտով դառնում է Կենտրոնի քննություն առարկա. ՍաՀակ Կարապետյանի մտտ գառախանի են կանչում Հեղինակին: Խառաշունչ մեկնություն նախատրամադրված խոսու ազակ մարդիկ նույնիսկ բանաստեղծի ողջունին էլ չեն պատասխանում: «Ողջունյա կարծես խեղդվեց պատում, ստես կապարի կտոր սուզվեց ծովը. ոչ մի պատասխան չայտա:

— Այս ինչն էր եք գրել, — հենց ՍաՀակ Կարապետյանի սաստր:

Նրա կայծակին միացան Արտիկ, Քոչարի, երկու նմանակ Ջարյանների, պեռհրատի դիրեկտոր ժենյա Մելիքովայի և նրա մարմնավազից Հր. Գրիգորյանի և այլոց ոչ միայն աչքերի, այլ և լեզուների շանթերը: Չարենցի ճակատագրերն հիշող միտքս սասանեց, բայց սիրտս ազնիվ ապստամբի գրահենք հոգազմ գայրկյանի զոդացող ձեռքերով, վասնզի գլխիս էին կայծակում հետևյալ խոսքերը.

- Ումն է հարկավոր այս ողբն ու կոծը:
- Թուրքը մեր եղբայրն է այսօր:
- Մեր զորքերը նահանջում են, և սա կարող է ընկճել թիկունքի ոգին (կոտորած, նախճիր, կոտորած...):
- Եվ բոլոր ազգերն են մեղավոր Հայոց եղեռնի մեջ:
- Այո, պոեմն այդ է հրահրում...

¹⁵⁶ Դուր. Շիրազի ինքն անվան 1975 թ. տված այս հարցազույցում էլ քննակնարկում է պոեմի 1942 թ. վարպետի տված «մեծանպաստ» կարծիքը, բայց կարծես խառաշունչ արձակ կատարվածից, միայն վաստեղծի մտերմների շրջանում էր շուկվում հիյնցնում այդ գնահատականը կարևոր մտքը. «Լարսնը հազար տարի հայ ժողովրդին քրիստոսյա է պանել. Շիրազի «Գայ դանթեսանե» հայտնյանը հազար տարի հայ կյանի...»:

¹⁵⁷ Տես «Իստական» — Շիրազի հարցազույցը, Գրույցներ, վաղեմ Գ. Դովնարսը, ցանց Գ. Շիրազը, էջ 39-40:

Ինձ թվաց՝ շրջապատված եմ ոչ թե ինձ ծանոթ (երեսանց) աչքերով, այլ այն սպիներերով ու սրբերով, որոնք երկու միլիոն 800 հազար հայ բնաջնջեցին...»¹⁶⁰:

Հովհ. Շիրազը հարկազրված է եղել ճակատամարտ սառ: Նա նախ այդ քննարկում-գառախանք որակել է որպես չարամիտների սողորանք և դատապարտողների՝ պոեմը կարգացած չլինելու հետեւանք և ազա ինքն է արտասանում պոեմից հասվածներ՝ բերելով իրենհատակների լիզրզ պալատում Հայոց եղեռնի գաղտնագրված հրամանները որպես ապացույց: Մըլնությունը կարծես փոխվում է, նույնիսկ Վերջուսանց մեկը նույնիսկ շուտով նման բարեբույր խոսք սառց (կարծես Արտիկ էր)», — շարունակել է բանաստեղծը և եզրափակել. «Պոեմն արգելախող գլխավոր գերակատարներն էին Ն. Ջարյանը, Քոչարը, Թափչյանը, Հր. Գրիգորյանը և ժ. Մելիքովան»¹⁶¹:

Գրողը, Հովհ. Շիրազի Համոզմամբ, մարդասեր, արդարություն, խղճի ու բարության բարոյիչ պիտի լինի անկասկապալին պատկանելությունից, այլապես Համամարդկային արժեքներ չեն ստեղծվի: Հենց այս չափանիշներով էր հայ բանաստեղծը մտանում նաև թուրք գրողներին: Իր պոեմում անզավ նա հստակ գրել էր՝

Վաղվա Թուրքն այս ծով մեղքը չի ների...—

բայց իրենց Շիրազից ավելի հեռատես ու խելոք կարծողներն այս սողն էլ են հանել:

Հովհ. Շիրազն իր ծրագրերը կազմում էր ազգերի փոքրամեծան ու եղբայրության վրա, և քանի որ ամեն գրող իր ժողովրդի խղճի ձայնն է, ինչպես ինքը՝ Հայոց, մեծ կարևորություն էր տալիս զորոթ խոսքին: Թուրք գրողներից էլ անկեղծ զգչում կամ գոնե մարդկային վերաբերմունք էր ակնկալում, իսկ նրանց լուսնությունը, առավել ևս անամոթ ուրացումն ու

¹⁶⁰ Լույն տեղում, էջ 40:

¹⁶¹ Լույն տեղում, էջ 42:

Հարձակողականությունը ավելի էր զստանցնում բանաստեղծին: Այս կապակցությունը արժե հիշել մի բնորոշ դեպք:

Արդեն գրված էր պոեմի առաջին տարբերակը, կայացել Կենտրոնի վերջ հիշած բննորոշումը, և հայտնի էր նրա Հանդեպ խորհրդային պետության վերաբերմունքը, երբ 1954 թ. Մոսկվայում փորձում են ծանոթացնել ուսու բանաստեղծուհիներով շրջապատված թուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթին: Հովհ. Երրազը գիտակցաբար չի բռնում, օգուտ կախված է թողնում վերջինիս՝ ծանոթանալու Համար իրեն պարզած ձևերը: Այս մասին բարեբախտաբար պահպանվել է կատարվածին ակնանատես, Հովհ. Երրազի կողքին կանգնած գրականագետ Սուրեն Աղաբաբյանի մի կտրուկ վկայությունը: «Հիշեմ մի գեղեցիկ- գրել է նա. — 1954 թվականին, գրողների Համամիութենական 2-րդ համագումարի ընդմիջման ժամին Մոսկվայի Սյունազարգ գահլիճում Հովհաննես Երրազին (ևս նրա կողքին էի) մտեցավ որևէ բանաստեղծուհիներով շրջապատված թուրք նշանավոր բանաստեղծ Նազիմ Հիքմեթին: Առաջարկեցին ծանոթանալ Հիքմեթի հետ: Առաջինը ևս սեղանից նրա ձեռքը, իսկ երբ Հերթը Հասավ Երրազին, Հիքմեթի ձեռքը նրա օգուտ կախված: Մինչ ուղևեցուհիները աչքերով նախատում էին Երրազին՝ «անբարեկրթություն» համար, Հիքմեթը վրա բերեց. «ես նրան գիտեմ, նա իրավացի է» (*Я его знаю — он прав*)¹⁶² (ընդգծ. — Ս. Մ.):

Գործովում է՝ այս հանդիպումից էլ զեն տարիներ առաջ՝ 1948 թ.¹⁶³, Հովհ. Երրազը գրել և 1961 թ. վերածնակել էր

Նազիմ Հիքմեթին ուղղված մի բանաստեղծություն, որով հիշեցնում էր նրան թուրքերի ոճաբարձրություններն ու պատմական Հայաստանի հողերի բանազավթումը: Բանաստեղծությունը շարվել էր «Բնար Հայաստանի» 3-րդ Հատորում տպագրվելու համար, բայց չի տպվել ո՛չ այնտեղ, ո՛չ էլ այլ գրքում: Ընթերցողին առանց մեկնաբանություն հրամայում ենք Հ. Երրազի 1977 թ. կազմած ու զեռես անտիպ «Հատընտրից» վերջավայրը.

ՎԵՐԵ ՎՅՅԱՍՏԱՆԻ

Բայ նամակ ամենայն հայոց Հովհաննես Երրազից մի թուրք... գոտեի

Դու էլ, իբր, բանաստեղծ ես,
ես էլ մի քիչ,
Գառմությունը դու լավ գիտես,
ես էլ մի քիչ,
Բայց հիշում ես, թե ինչ արին
Թուրք սուլթաններն Հայ աշխարհին,
Գեթ մի երգով Հուռաչիր,
Մի բաղասան վերքիս տայիր,
Մի բաղասան, որ կրունի
Այն հողերում իմ հայրենի:
Մի բաղասան հողից վանա,
Հող ու ջրից իմ Սիփանա,—
Հոմ Բիճկայի ցողը վրան,—
Հայոց զերված հողը վրան...
Մի բաղասան, որ գուրս վանի
Վերջին վերքը Հայաստանի,
Որ մուրադիս լրիվ հունեմ՝
Հայաստանս լրիվ սեսունմ՝
Առած հողերն իմ բովանդակ

— Թուրքերեն լավ բարձրանի գունեմ կուլարվեմ,— պատասխանել էր Հ. Երրազը: Մեզ այնպես է բնում, քե և, Գրքերը Գոթի, Երրազին ծանալել է նաև այս բանաստեղծությամբ — Ս. Մ.:

¹⁶² Ս. Աղաբաբյան, Գովհաննես Երրազի «Գայոց դանթեականը», տես պոեմի նշվ. հրատարակությունը: էջ 340:

¹⁶³ Տես Ս. Մանուկյան, Գովհաննես Երրազ, ճորտախյալ ստեղծագործություններ, էջ 271-273: Ս. Մանուկյանի բացատրություններից վարդավում է, որ և, Գրքերին ուղղված այս բանաստեղծության առաջին տարբերակը «Հայիրանմ» վերնագրով, Գովհ. Երրազը գրել է 1948 թ. ամռանը «Սովետական դարոց» քննարկ խմբագրությունում և մերժեցալի 1-ին օրինակը տվել Գրքեր Դավթյանին. «Էսիկ իրի յի տպագրի»,- ասել է նրան բանաստեղծը: լավ պատե քովի, երբ ժամանակը զա կուտաս ինձի: Ես մեկ օրեման էլ յոց մնա ինձ մտա:

— 25 ուղուճ ևազիմ Գրքերին ուղարկել — հարցել է Գր. Դավթյանը:

Արարատիս վրանի տակ,
Որ դողանքն զանգն իմ սրտի
Գմբեթի տակ Արարատի,—
Այնպես ցնծուն ես դողանքն,
Որ քեզ անգամ գիրկս կանչեմ:
Քն չէ՛ բազ չէ՛ դուք՝ անտրեն,
Մենք սե պանենք Հավեթօրեն,
Սուրբ է Հայոց սիր, ո՛վ ցին,
Երկու միլիոն եղեւնվեցին,
Երկու միլիոն Հայեր կորին
Անզերեզման ու անխորան...

.....
Քն լինիր դու բանասանգ՝
կեղիտիր Հայ վիշտը մեծ,
Գնթ կես սրտով կզազվիր
Կամ թե վշտից կկախվիր...

1961 թ.

«Հայոց դանթեականը» պոեմի ձևազարդը Ռ. Զարյանը վերագրածն էր շուրջ քսան տարի Հետո՝ 1961 թ.¹⁶⁴, և Հեղինակն անմիջապես սկսել էր նրա լրամշակումը՝ այն գունե Մեծ եղեւնի 50-ամյակի առթիվ տպագրել կարողանալու հույսով: Փաստորեն 1962 թ. արդեն տպագրության պատրաստ էր «Հայոց դանթեականը» երկրորդ տարբերակը, որը տողերիս զբոզն անձամբ է հանձնել Ք. Հայրյանին: Հենց այն իրողությունը, որ պոեմի առաջին տարբերակը գրվել է Հայրենական մեծ պատերազմի սկզբներին՝ 1941–42 թթ., և 1962-ից տպագրության պատրաստ երկը խորհրդային երկրում Հեղինակի ողջության օրոք՝ մինչև 1984 թիվը, լույս չտեսավ, այլ հետմահու՝ 1990-ին, արդեն շատ բան է ասում:

¹⁶⁴ Արվեստագետ Ռ. Չալոյանը պոեմ վերադարձնելիս Դուլի Շիրազին բացատրել էր, քո բրդապանակը դրված է եղել մեծ պատերազմի գլխին՝ պատի կողմը, այդ պատճառով էլ եղելու ժամանակ մնացել էր յնչպեղած ու մոտաքիչ և հայտնաբերվել է տունը և պատրանի գուլից մաքրելու ժամանակ:

Պոեմն, իհարկե, լայն արձագանք ունեցավ, այն գեռ չտպագրված՝ արտասանվում էր բեմերից՝ հուշումնայից պահեր պարզենելով հանրությանը, և ողջ խորությանը բացահայտան պեմականորեն թաքցվող եղեւնի էությունը, նրա մեռագիրն արտագրվելով փոխանցվեց ձեռքից ձեռք, արժանացավ բանագիր ու գրագիր բարձր գնահատականների: Տողերիս զբոզի և Սիրվարդ Մեռողայանի կոմպոզիցիաների ասունների ձայնագրությունները Հայտնվեցին մարդկային տներում: Սակայն նրա համառոտված տարբերակն անգամ, որ «Սովետական գրականությունը» պատրաստել էր 1965-ի սպրիլյան համարում տպագրելու, չարժանացավ լույսընծայման բախտին: Ամառըր սպաված համարը հրատարակվեց եղեւնի մասին մի ուրիշ Հեղինակի պոեմով, իսկ Հովհ. Երազդի պոեմի համառոտություն մեռագիրը Հեղինակից բոլորովին անկասկ (Հովհ. Երազդի գրությունը պոեմն ամբողջությամբ կանցնել արտասահման) Հայտնվեց թեկոսանի «Ալիք» թերթի խմբագրությունում, որից հետո ամբողջական պոեմի տեղ թարգմանվեց, տպագրվեց՝ արտասահմանում ունենալով մի քանի պատկերազարդ հրատարակություն¹⁶⁵: Հայաստանում, սակայն, այդ պոեմը եղեւնի ո՛չ 50-ամյակի, ո՛չ 60-ամյակի, ո՛չ 70-ամյակի առիվ այդպես էլ լույս չտեսավ:

Հրատարակչության բնագավառի խորհրդային իրարահաջորդ ղեկավարներից ոմանք խոստանում էին ամեն գնով տպագրել: Նրանցից մեկը՝ Վ. Բալայանը, նույնիսկ անկեղծորեն երգվում էր իր երեխաների արևով, թե անպատման կապագրի, և որպեսզի բանաստեղծը հավատար իր խորին, խոստովանեց, թե նույնիսկ իր կնոջ ներկայությամբ հանձն էր առել իր անասպի մի մեղքը, գերազատել էր մեղագիրը մատաչվեց և հրատարակել էր երեխաներով երգվելուց, բայց հենց երեխաների արևով երգվում էր, թե ամեն գնով կտպագրի, սակայն խոստումը չկատարեմ՝ պաշտոնանկ եղավ:

¹⁶⁵ Պշարժման են հառնալու պոեմի բնույթյան հրատարակությունները եղանակափոխության Միմոն Միմոնյանի շանքերով – Ա. Ս.:

«Ավանդաբոյ» այն ժամանակվա խմբագիր Լորիս Կրոյանն էլ խոստացած թերթում մի ամբողջ էջ տպագրել և ընտրութեան համար պահանջեց պոետի մեքենագիր մի օրինակ: Այդ պահէն Հովհ. Շիրազն ուրախացած խոստացած ուղարկել, բայց բանի որ մեքերի տակ մեքենագրում օրինակ չկար, ինձ հորդորելով պարտադրեց, թե՛ «Պոետի լրամշակված մեքագիրը գիտես որ մեքենագրուհու մոտ է: Ուրիշ հնար չունիք»: պիտի երթաս «Ավանդաբոյ» խմբագրութեան և Լորիս Կրոյանի մոտ պոետն արտասանես. եթե իսկպեսն հուզեմ տպել, իր հավանած Հասկանները թող բռն, հետո մեքենագրել կուտանք, կուղարկենք»:

Փնացի «Ավանդաբոյ» խմբագրութեան: Լ. Կրոյանն իսկպեսն սպասում էր: Ասացի՝

— Հովհաննես Շիրազն է ինձ ուղարկել:

— Լավ է արել, — ասաց: — Իսկ ո՞ւր է պոետը:

— Շիրագի տանը մեքենագիր օրինակ չկար, ավել է մեքենագրելու, — ասացի, — բանաստեղծն ինձ ուղարկել է, որ պոետն արտասանեմ լսեք, ընտրեք, հետո Ձեր հովանած Հասկանները մեքենագրված կրերեմ:

Թե՛ն շտապում էր, բայց մեկ ժամից ավելի համերթութեամբ, հուզմունքով լսեց: Նշումներ էր անում: Ափսոսում էր ընդհատել, բայց և... շատ էր շտապում:

— Հանձնարե՛ղ պոետն է, — ասաց ի վերջո, — ավելի պատկերավոր ու հուզիչ գեղարվեստական խոսք Հայոց եղեռնի մասին երբևէ չեմ լսել ու կարդացել: Իրեն ասա՛ շատ հավանեցի: Տպագրութեան մասին կայանաճամբորդվեք:

Եղածը պատմեցի Հովհ. Շիրազին.

— Պայմանագրովել էիք, բայց պիտո՞ւ, չպիտի տպել: Ընչո՞ւ կրեիր, թե էնիկ կուզե՞ «Սովետական Հայաստանի» խմբագիրը գրանալ, հենց քիչ առաջ իմացա, որ Կենտկոմ են կանչել հաստատելու: Եղոր համար էլ շտապել...

Ասաց ու մտախփեց:

Խորհրդային իրականության մեջ թերևս ամենից դժման խմբագրման ու կրճատումների ենթարկվել է Հովհ. Շիրազի ստեղծագործությունը: Կրճատումն իրոք նրա համար ցանկալի

չէր, բայց և անհրաժեշտ որոշ գնաբերում նա էլ պատրաստ էր դիմումների, որպեսզի ազդել հրատարակիչները շտուժեն: Նույնիսկ ասում էր՝ եկեք միասին, խեղճ խելքի տալով կրճատենք: Ասկայն զլավիան ու հրատարակիչները մի վերջի գազանի հրամանով Հովհ. Շիրազի գրքերը երբեմն տպագրում էին՝ առանց իրենց կրճատում-հոշոտումները հեղինակին ցույց տալու: Լավագույն դեպքում առաջարկում էին այնպիսի անխելոճ ու անհեթեթ կրճատումներ, որ Հովհ. Շիրազն իրեք հրամարկի: Այդպես էլ պոետը անկապիտալում էր տարեկան հրատարակչական մի տարվա պլանից հանրոգ տարվա պլան, մի տնօրենից, գեղարվեստական գրականության բաժնի մի ժարբիլից, մի խմբագրի վախից ու կամայականությունից՝ մի ուրիշինը:

Կամայականության կամ ներքին վախի արտահայտություն չէ՞ր արդո՞ք, որ Գ. Դերիկյանը, պոետի մասին հիացմունքով արտահայտվելով Հանգերձ, առավել ինտերնացիոնալիստ երևալու ցուցադրանքով առաջարկել էր Հանի (և իսկպեսն էլ արդեն կրճատել — Հանի էին՝ դիտմամբ կորցնելով) պոետի գլուխների բոլոր արձակ առաջաբանները (գրանցից մի երկուսից հասկաններ վերևում տեսանք), ուր Հովհ. Շիրազը 20 - րդ դարի առաջին ցեղասպանությանն իրագործած թուրքիայի հետ միասին մեղադրում էր նաև նրան գաղնակից, նրան քաջալերած, ազատական մասնագետներով աջակցած կամ լուսնյամբ մեղաակցած մեծ սերնդի կայաններին, իսկ հրատարակչության գեղարվեստական գրականության բաժնի վարիչներին մեկը, որը, գաղթական արևմտահայ շտապիլով լինելով, ինքն էլ էր գրում եղեռնի, կրուսյալ Հայրենի եղբոր թեմայով բավական հաջող պատմվածքներ ու վիպակներ, գուցե և իր կամքին հակառակ, «Հայոց գանձակահար» պոետի տիտղոսաթերթի վրա եղած մի բանի մակագրութուններին ավելացրել էր. «Հավաստվածական հուղվանք է», և նույնիսկ... ստորագրել էր: Եվ Հովհ. Շիրազն արգարացիորեն դժգոհում էր այդ վերաբերմունքից.

— Էյ ինչպիս է՝ եղեռնի ու կորցրած Հայրենիքի մասին իրենց ուղածը գրել ու տպել կարելի է, Հենց միայն ի՞նձ չի կարելի. Թեման Հօ իրենց մասնավոր սեփականությունը չէ, մասնավորը որ է՛ս եմ Զարենցից ու Բակուցից Հեռու նրա սկզբնավորողներին մեկը: Երևի գրական նախանձն էլ կա. թե չէ՛ ի՛նչպես է գրանց ձեռք բռնում կրճատել Հեռույտ տողերս.

Թուրքն Հայի արեղ ձեռքերը Հանում,
Աստու սրբունքի մեջ է լվանում,
Սրբում սրբիչով սղգերի աված,
Սրբիչ լուծվածը նրանց սևասաված ...

— Իրենք էլ պես չեն կրնա գրել, գրա Համար էլ, պետական ներքին Հրահանգով ոչևորված, Հայտնի ու թաքուն ընդդիմանում են:

Բնականաբար. Հարցը քննարկվում ու վճռվում էր ավելի բարձր տալաններում և Գեներալում, ուր արդեն չարախոսություններն ու զրոգարտությունները իրենց սև գեղը վաղուց կատարել էին: Եվ ինչքան փոքր էր Հարցը քննող ու վճռող պաշտոնյան, այնքան մեծ էր նրա ներքին վախը:

Բայց այնտեղ Կենտրոնում, բարեբախտաբար, միայն միակողմանի կուսակցամտյուն չէին. ազգային մտածողություն ու նկարագիր ունեցող կոմունիստ պաշտոնատարներ էլ կային, որոնք պոեմը տպագրելու ելքեր էին որոնում:

Հայտնի էր, որ Կ. Դեմիրճյանն ու Կ. Գալլաբյանը սկզբունքորեն դեմ են եղել պոեմից գլուխների արձակ առաջաբանները Հանելուճ և պահանջել էին մասնագիտական ու գաղափարական գրավոր հիմնավորում: Հեղինակի պահանջով Կենտրոնի Համար տյուրպիսի հիմնավորումներ 1977 թ. գրեցին տղերին Հեղինակն ու գրավանապետ Ս. Աղաբաբյանը: Սակայն գրեմք էլ արդյունք չտվին, ու պոեմը մնաց անտպ:

Ու թեև Հեղինակի կենդանության ընթացքում «Հայոց գանձեալանք» գաղափարախոսությանն — պոեմն աջակցել էլ չտպագրվեց, սակայն արդեն Հանձնարարովի էր «Սովետական զրոգ» Հրատարակչության անօրեն պրոֆ. Հ. Ֆելեքյանին՝ խմբագրել և

Հրատարակել այն: Սակայն Հ. Ֆելեքյանին Հասել էր պոեմի կրճատված մի այնպիսի տարբերակ, որը շատ զեղեքելի Հատվածների Հեռ միասին չունեք գլուխների արձակ առաջաբանները: Դրանք Հեղինակի Հեռ գաղափար տանք պահպնող հին տարբերակներին, մի մասն էլ վերականգնվեց իմ և նրա միացյալ հիշողությամբ: Բայց ա՛հա տպագրվելուց Հեռու էլ պարզվեց, որ նվազագույն Հաշվումներով՝ Հովհ. Միրազի ձեռքով գրված շուրջ երեք Հարյուր տող, այնուամենայնիվ տպվում է. գրեթե մի ամբողջ պոեմ. շա՛տ է, թե քիչ... Գործ Համեմատությունը պարզեց, թե ինչպիսի է Հրատարակվել պոեմը:

«Հայոց գանձեալանք» պոեմի առաջին ընթերցողներից մեկը լինելով՝ պատանի տարիքում յուրացրել էի գրեթե ամբողջությամբ և գրեթե 1960 — 70-ական թթ. լրամշակված բոլոր տարբերակները: Գոեմն անընդհատ հրատարակչական պլանինց անջափոխվում էր Հաշորդ տարվա պլան: Հեղինակը կուսակց էր մի բան, որը հի՞ճա է ներկայանում որպես արդեն կատարված ցավալի իրողություն: Ասում էր՝ դիմամբ պոեմիս տպագրությունը կհօգնե. և այնքան պիտի ձգձգեն, մինչև մեռնեմ, որ Հեռու իրենց ուղած կրճատումներով տպեն:

Աղջիկս էլ եղավ: Գոեմը լույս ստեղծվեց Հեղինակի մահից 6 տարի Հետո՝ 1990 թվին: Իսկ մինչ այդ պոեմն արդեն իր զգալի մասով ծանոթ էր Հանրությունը, որովհետև ինչպիսիս Հովհ. Միրազն իր «կենդանի տպարանների» ասուներգողների միջոցով տարածել էր իր բազմաթիվ գրական Հանդիպումների ընթացքում: Դրանք երբեմն տեղում էին ժամեր, բայց ժողովուրդն անձանձիր լուսւմ էր և ընդունում որոտընդոտ ծափահարություններով: 1963 թ. Արտաշատի գյուղերից մեկի մշակույթի տան զահլինում, ուր գրական միջոցառմանը մասնակցում էին նաև այն ժամանակ երիտասարդ բանաստեղծներ Լյուդվիգ Դուրյանը, Սարգիս Խարադյանը, Նանսեն Միրաբյանյանն ու Արամայիս Սահակյանը, պոեմն առաջին անգամ էր ընդարձակ տարբերակով ներկայացվում Հանրությունը: Լեհի-լեցուն զահլինի Հոտեկայս զղրգալի ծափահարություններից չփոխված

Հովհ. Երրազը, չիմանալով ինչ անել, դիմեց կողքին նստած Ասրգիս Խարազյանին.

— Ասրո՛, ել դո՛ւ էլ գլուխ տուր, բա ես մեզք չե՛մ ...

Այդ պոնեմի ուժը չափվեց ժողովրդի կարծիքով ու գնահատակմամբ: Արդեն տարածվել էր, և այնուհետև ամենուր բոլոր գրական միջոցառումներին պահանջում էին «Հայոց դանթեական»: Իսկ այդ ժանրությունը միայնակ հաղթահարելը դժվար էր, ուստի բանաստեղծը մի անգամ էլ հրավիրեց ամուսնըրդ, վաստակավոր արտիստուհի Սիրվարդ Մեսրոպյանին: Լսելով պոեմը՝ նա խոստացավ հնարավոր կարճ ժամանակում պատասանել մե նոր կոմպոզիցիան մոտ երկու ժամ տևողությամբ, և իսկապես էլ բավական անական ժամանակ տարբեր վայրերում հնչեցրեց: Բայց իշխանությունները դա էլ շատ համարեցին. տեսնելով պոեմի հակայական ներգործուն ուժը՝ մանավանդ կենդանի բարձրարժեատ ասուներով փորձեցին մեկուսացնել Հովհ. Երրազին՝ տարբեր եղանակներով գրելով նրան կենդանի քառադուբյան հնարավորությունեց:

Ի վերջո պոեմը տպագրեցին: Թե՛ հրատարակչության տնօրենը, Թե՛ խմբագիրը հիացած էին պոեմով: Բայց ստալինի հրատարակչությունն ընթերցելիս պարզ դարձավ, որ որոշ հատվածներ «արհեստավորած» խմբագրությանը հանձված են պոեմից, սակայն չուզեցի տպավորել միայն հիշողությանս, սպասում էի հարմար առթիի, որ կարողանամ համեմատել շիրազյան մեուագրերի հետ: Իսկ 2005 թ. Դեբ – Ջորջից վերադարձին՝ Հայեպում Հովհ. Երրազի ծննդյան 90-ամյակի առթիվ հրատարակային բանախոսության ընթացքում, պարզվեց, լեփ-լեցուն զահլեմին ներկայացրել ու խոսել եմ պոեմի այնպիսի հատվածների մասին, որոնք կրճատված են եղել ու տպագրվածում չկան. դա հարուցեց Հայեպի գիտակ ունկնդիրների բնական զարմանքը.

— Գարո՛ն, մեր գիտած «Հայոց դանթեականին» մե՛կ աղ կտորները չկան...

Բանաստեղծի ծառանգները, որ իրենք էլ կատարել էին նման համեմատություն, սիրահոմար տրամադրեցին մեքենագիր օրինակներից մեկը. որը վերստին ընթերցելով և տպագրվածին համեմատելով՝ սեռ այն, ինչ կուհանում էր Հեղինակը: Խորհրդային վերջին տարիներին անգամ կատարվել են անխիղճ կրճատումներ, որոնք այլ կերպ չեն օրակի, քան այդի մասում սանում, որն ազերում, արմատախիլ է անում մատ ու ծաղիկ՝ որոշ խտրություններ: Եվ սա դեռ բարյացակամ մարդկանց մեարքով:

«Հայոց դանթեականը» գրելու տարիներին Հովհ. Երրազն իր մտածողությանը առաջ էր անցել ժամանակից ու հրատարակիչներից և արտահայտում էր այնպիսի մտքեր, որոնք դժվար էին անցնում գրաքննության մաղով կամ բնավ չէին անցնում: Անկաշկանդ գործում էր գլավլիտային մկրատը, որը կրճատում-հանում էր ազատասուհուբյան ամեն գրեւորում, ամեն շեղում, որ նահարիր էր թույլատրելի գաղափարախոսությանը: Դրան գումարվում էր նաև գաղափարական ոլորտի աշխատողների ներքին վախն ու չափից ավելի զգուշավորությունը: Որպես ասվածի հիմնավորում՝ դիտարկեցեք այդ կրճատումներից մի քանի նմուշ միայն: Ամբողջը չենք կարող, որովհետև դրանք լրբիություն հայտնաբերելու և արմեւորելու տեական ուսումնասիրության անհրաժեշտություն կա:

Իսկ ի՞նչ բնութիի են կրճատումները: կրճատված են Թե՛ անդրազական ընդարձակ հատվածներ, Թե՛ կամթելով առցիկ այտեղից - այնտեղից: Հասկանալի է, որ Թեկուզ խորհրդային կույսերապետության փլուզման նախաշնմին անվերջ գործում էր գլավլիտը, որն էլ «քաղաքականապես չօրհակվելու» սպասնալիքով հրատարակիչների պարտադրում էր այդ կրճատումները: Ի՛նչ կարող էին անել. մամուլի վրա գլավլիտի թույլատրող «Разрешено» (Թույլատրում եմ) կնիքը չիինք՝ ոչ մի տպարան իրավունք չուներ տպագրության ընդունելու օրեկ գործ: Եվ սրա տխուր հետեանքն այն է, որ ընթերցողը, ի թիվս այլ բաների, հեղինակին կարող է մեղադրել մտքի անհետե-

զականություն, պոեմի կառուցվածքային ու բովանդակային թերությունների և այլ «մեղքերի» համար:

Տրամաբանորեն Հովհ. Շիրազի «Հայոց զանթեանը», ինչպես Չարենցի «Դանթեական առասպել» և «Մահվան առևտր» պոեմները, ունի և պետք է ունենար Դանտեի «Դժոխքի» հետ արտաքին որոշ նմանություններ ու կառուցվածքային ընդհանրություններ: Բայց քանի որ այդ տեսանկյան նմանությունները «հատուկ խնամքով ու հոգացողությամբ» կրճատվել են դավլիտի հրամանով ու խմբագրի մեղքով, ապա ընթերցողը հեղինակին մեղադրել չի կարող:

Որտեղո՞վ էին «Աստվածային կատակերգություն» միջնագրային իտալացի հեղինակն ու անտիկ աշխարհի Վերգիլիտը մանուկ դժոխք իրականացնելու իրենց երեսակյախան համփոքությունը: — Դժոխքի դճով, որի վրա մի խորհրդավոր մակագրություն կար.

«Իմ դճով անցնողն հույս թող չփնտրե...»

Որտեղո՞վ պիտի Հայոց եղևունի դժոխք մտնի «պառնասպան Մասիս առջև» հավաքված հայ և աշխարհի մեծերի ու բովանդաներից կազմված ողբիտուժը: — Հենց այս հարցի պատասխանն է կրճատված պոեմից, և ընթերցողը ցանկություն զեպքում էլ չի կարող այն գտնել, քանի զեռ չուներք պոեմի ամբողջական հրատարակություն: Այդ զեպքում միայն հնարավոր էինք տեսնել արտաքին կարևոր նմանությունը:

Հովհ. Շիրազի պոեմում դատավոր — ուխտավորների ողբիտուժը եղևնադժոխք է մանուկ Հայաստանից բուն իրված և Ազրեիջանին նվիրված պատմական երբեմնի Գողթան գավառով նախիջևանով Գալլադրունք (Волыбе горота) կոչված դարպասով, որը չուներ Դանտեի պատկերած դժոխքի դուռն մակագրությունը.

Եվ ուխտի էինք ելնու՞մ դատ - ուխտի՝

Օճելու Համար թաղվածներն անճար.

Մեր յոթնամիլիոն զոհերին բախտ,

Մի ողջ սուրբ ազգի նահատակն անճառ:

Եվ այսպես հասանք իմ ձյունակուռքին,

Որ չլիթայված էր զոհերիս նճան,

Եվ ահա հասանք Գալլի դրունքին,

Ինչպես հեղ Դանթեն՝ դժոխքի դուռն.

— Օ՞ հայր ի՞մ, առի, դիրք մի՛ փնտրե,

«Ի՞մ դճով անցնողն հույս թող չփնտրե»...

Այս Գալլի դրունք այն դալլերը չեն¹⁶⁶.

Որ ճամփաղլխին այն էլ թեղ խաչեն:

Այլ խաչող դալլերն այն կողմում են զեռ.

Կողմունքն պիտի, որ թեղ կանչեցի մեր դատին անճեղ.

Քեան Աստուծան խոսվինք պիտի դժոխքով այս նոր.

Այս դարավուս մեղսամահիճով զեռ խեղանող:

Եվ ահա անցանք մենք զանթեանու Գալլադրունքով.

Եվ ճամփու գրեց մեր խզբի ծովին յուսինք խուսնով:

Կրճատված է նաև հետևյալ չբնաղ հատվածը, որը հենց Շիրազին բերորոշ գեղանկարչական հագեցվածություն բացառիկ պատկեր լինելով բացահայտում է նաև ողբիտուժի Հայոց եղևնադժոխքով ճամփորդելու բուն նպատակը.

Եվ լուռ ծովափին մտայլ գիշերվա

Լուսնի մաշվիկն էլ որպես նավաստի,

Բացել է ամպի ստապոսն ահա,

Որ ծով գցի նավն ու մեղ ուղեկցի:

Ուզում է ասես փորձու թյան մութից

Մեղ իր լուսավոր ափերը հանել. —

Բայց ի՞նչ իմանար, որ ինքը՝ մահն իսկ

Ձի կարող մեր սուրբ երկր խափանել՝

Ձի կարող ոչ մի ժանիքն էլ չարի:

Գնում ենք քանանք աչքերն աշխարհ՝

Իր չորս աչքերը՝ Արևելք, Հյուսիս.

¹⁶⁶ Դուլի Շիրազն անջարկում է թե Արթուրյանում և թե Ջուդեթայում գործող «Պոլ զայ-լեր» կազմակերպությունը: Տարբերակումը միտումնալոր է, այն «գիրճան» նպատակն այն է, թե իրո խորհրդային Արթուրյանի Գոլը գալլերն ու Ջուդեթայի Գոլը գալլերը նույնը չեն: Վերջիններն են խաչողները, և իր քողոց նրանց դեմ է Աճուրտ, սա պղծել է խորհրդային եղևնու արժույթի հենարանը ստապոսը լիանգարելու նպատակով: — Ս. Ս.:

Հարավ, Արեճուտք, որ գոցված են դեռ...
Որ չորսն էլ Հուլիսի աչք չեն, ո՞վ Մասիս...

Գեև ազանոց է Հայտնվել, ով ձեռ,
Չորանա մեզ էլ կանի սեղծնամեռ,

Չեր մանկանց ոչոքն Հուլիսի շուրթին սրինգներ կանի,
Ինչպես անում է մասուց ոչոքներն իմ Հայաստանի:

Օ՛, գնա՛ք, Գանձե՛ր, Հայր Կարկաղի,

Գու՛ր էլ Հայտնվիր, Հայր Խորհանցի,

Գու՛ր էլ, մեծամեծ ոգիներդ սուրբ,

Իզնի ապեաններ՝ աստղեր անասույց,

Տե՛ն, Հայտնվից արքան մեր անդույց երգի,

Մուրբ Կոմիտասը՝ վկան այն զիբրի,

Որ դեռ գաղու է աչքը մեզ վրա,

Արտով դեռ զրեճավ, մտքով անդրահ...—

«Այս նոր Կայենի ցեղը վայրենիք՝ տողից Հետո Հանգել է Հե-
տևյալ ամբողջական Հատվածը, որը Թուրքի էությունը բանա-
ձևային բնորոշում է և բոլոր ազգերին ուղղված մարդասիրա-
կան պատգամաբանություն՝ Հույժ արդիական Հեղուկությունը».

Որ թե կարենա, ո՞վ ազգեր, մեր էլ աչքը կհանի,

Չեր դիերն անգամ մինչև ամայի լուսին կվանի...

Ով դուք մեծ թվիր, Լուսին չէ, Թեկույ և Համներ Մարտի,

Գայլ ու վաղրեր եք՝ քանի դեռ Հույս չեք Նոյան Մասիսն,

Այն սրբաբուսան՝ ուժ վե՛զ դադարը ասպանով Նոյի

Երբորդ մայր ելվան եղավ մարդկություն փրկության, գոյի,

Տապանով Հայոց նահապետ Նոյյան, որ վեր մատրված՝

ՎՀատ նայում էր երկրին իր կիսված:

Բայց Հինա Մասիս մեր փրկիչն ինքը դերի է, ազգեր,

Մինչ գուք լուսւմ եք դասած նոր Հազկերտ

Ու Հայ լեզուն եք կլանել ուղոււմ,

Բայց տեսե՛ք, թե Նոյն էլ ինչ է ասում.

— Չեր խզի անխիզն ու սպամփայուկ շարփրինթասում

Եղեռնից խեղված ուղեղին սղորդ, երգով իմ ոգու

Ինչպես էլ շանթեն անունն Աստոււ, անունն Արարչի՝

Իմացե՛ք՝ նա կա, ու վաղն էլ շանթով, խզնով ահարկու

Ահեղ դատաստան աշխարհ է դալու, Հայը չի կորչի...

Նա, ով մեզ փրկեց ասպանով Հայոց նահապետ Նոյան՝
Կալատի, Ինչպես ազատից Գոյան:

Կալատի՝ որպես մի նոր Երևան, նոր Երուսաղեմ,

Եվ մեր լուսնությունն այն լսին Լուսնի վրա կթաղեմ:

Այն Լուսնին, որին ձգտում եք Հասնել,

Այնտեղից ոչ թե Աստոււն տեսնել,

Այլ գեհն թափել աշխարհիս վրա,

Ով անասովաներ՝ Հին ու նորոյա...

Երբեմն Հարկազրված էինք լսել նորոյա խիկար-իմաստուն-
ների բամբասանք արտունջներ, թե իբր Միբազն արխայիկ է,
Հնացած: Բայց այդ «Հնացած» Միբազն այսօր այնքան է նոր
ու արդիական, որ կարծես Արարատի գագաթին թաղված իր
սրբի աչքերով տեսնում է ամբողջ աշխարհում և Թուրքիա-
յում կատարվող մերոյա իրադարձությունները, խաբված
քրդերի ու Թուրքիայի խոզուկությունները: Տա-
նամյակներ ասել նա կուսնել է այն, ինչ այսօր տեղի է ունե-
նում ազգային փոքրամասնությունների ու մանավանդ Հա-
յերի դահն Թուրքիայում.

Բայց Հինա, քույր իմ, Հայոց մեղքի ու Հայի են կարոտ

Այնտեղ Միփանա բոլոր մուրթով գազաններն արնոտ՝

Խաբված քրդի նիզակը սուր...

Թուրքի սիրտը կերպի սուր...

Այս կքաչն դեռ յոթնամեղ,

Որ Հայտնվեն Հայերս այնտեղ,

Որ փեթակվեն՝ ընդդեմ վայոց՝

Անպատված այն Հույն Հայոց,

Որ շատկեն մեղրակարոտ

Ձույզ մեղամոր ցեղն արյունոտ:

.....

Խաբված քրդի նիզակն էլ — որ

Թուրքի սիրտ կերպի խոր...

Տեղապատկություն Հետևանքով Միյուսք ունեցող ժողովրդի
բանաստեղծը, Հայոց Հոլերի վրա Հայության ազգահավաքի

պատգամախոսը չէր կարող անտարբեր մնալ հազար փոր-
ձությունների ենթակա աշխարհացիք հայության ճակատագրի
նկատմամբ: Մանավանդ հեռավոր Միջուգում դրսի հայու-
թյանն սպանում էր ձուլման վտանգը (վերացնել է արդյոք
այն) Հովհ. Նիրազն այդ ահազանգը հնչեցրել է զրեմիե ողջ
ստեղծագործական կյանքում ու մանավանդ սփյուռքահայու-
թյանն ուղղված «Երեւանն է կանչում» (1946) պոեմում: «Հա-
յոց դանթիականն» էլ զրգված է այդ տաղանայի սուր զգացողու-
թյանը, և եթե ընթերցողը պոեմում չգտնի հեռեխալ տողերը,
թող հեղինակին շնորհակալի:

Կարմիր ջարդն անգամ եղեռնով պն-պն,
Հիմա էլ ներմալ ջարդն է ջնջում մեզ
Եվ ատա և թե անդ, և՛ անդ և թե ատա,
Այս էլ եղեռն է մի նոր, գաղտնասատա:

Հանգամ են հատկապես այն հատվածները, որոնք վերաբե-
րում են գերված ողջ Արեւմտյան Հայաստանին և անզեն ու
անպաշտպան հայությանը, թեկուզ այն արանորեն տազանայ ու
վտանգ են արտահայտում նրա բնաջնջման կամ ձուլման առ-
թիվ, մեծ ոճիբը չկանխելու համար կշտամբում են նաև աշ-
խարհի քրիստոնյա ժողովուրդներին, սկեւարհում են ներմալ
ջարդն ու մեծ սեռությունների խարդախանքները, «Երկու
զխանի արծվի արնոտ կտուցը» կամ նրա երկզգիմի խաղերը,
որոնք նույնպես մեզ պատճառեցին ազգային անդառնալի կո-
րուստներ ու դժբախտություններ: Թեթե որն է լեզվաբան —ոճա-
գետ ուղեւնա փնտրել փոխանունության կամ համընկնման
օրինակներ, լավագույնները կհամարի չիրազյան այս հանճա-
րել փայլատակումները, որոնք հանվել են խորհրդային հրա-
տարակիչների ձեռքով:

Նխաղարայի հաղարանմույզ, կամակնանման
ձերմալ միտի բաշից մի մաղ էլ չեկավ ողնության,
երկու պլիանի արծվի էլ զինված՝ նայում էր դահից՝
Տեսնում եղեռնը չէր տխրում փոքրիկ մի ազգի մահից...

Փորձում ենք արդարացում գտնել այս տեսակ կրճատու-
մների համար: Կարելի է մի պահ մտածել, թե խորհրդային հրա-
տարակիչն այլ կերպ չէր էլ կարող վարվել: ուղեր-չուզեր՝ այս
հատվածը պիտի կրճատեր, որովհետեւ նրազարայով Ամերիկա
պիտի հասկացվեր, իսկ երկու զխանի արծվով՝ թեկուզ ցա-
րական Ռուսաստան, չկրճատեր, բա ի՞նչ աներ: Սակայն ոչ մի
արդարացում չունեն այն կրճատումները, որոնք հեռու են
«քաղաքական վտանգավորությունից» և հեղինակի քերական
մեծախոսությունն են՝ զեղարգիստական ընդհանրացման ահ-
եւրի ուժով, ինչպես այս մեկը:

Ելավ լուսինը ամպի զնգանից,
Ինչպես բանաստեղծն իր դերեզմանից,
Ու մենք բարձրացանք այն բլուրն ի վեր
Ու տեսանք շիրիմն իմ սեւամարտը,
Որ, ախ, փշրված ու պղծված էր,
Ու սպիտակներն մեջ դանդա շխար...
Բայց շիրմաբարիս թեկորի ճակոխն
Գրված էր. «Քանի լուսին կա՛ նս կամ»:
Օ՛րբանաստեղծ էր, դո՛ւ կանգնիք, լուսին,
Անճա՛ց այս ոպուս որպես մահարձան,
Եվ թող հտառչե մեր ոտխը պի՛ն:
Անճա՛հ են հայը, երգն ու լուսանկան:
Հայի՛ նահապետն է Մախիսը լուին,
Իսկ Սիսը՝ որպես նիպակն իր ձեռին...

Շա՛տ են գրվել այսպիսի զլուխորոծոցներ, որ հանվել են
մեկի ջմահանույթով ու գրչի մի հարվածով: Բայց չէ՞ որ բա-
նաստեղծն այս պատկերում նկատի ունի իր մեջ մարմնացած
Վարսեմանին ու Սրամանթոյին, Գրիգոր Զոհրապին ու Ռուբեն
Աեակին, անգերեզման Չարենցին ու Բակուցյանին...

Իսկ ի՞նչ պիտի մտածենք պոեմի «Մի բուռ մայրիք կան, որ
ծով են ձեռնում» տողից հետո քաղաքայնոջ հետեխալ հատվածն
ընթերցելիս լավ, հանողները նարեկացո՛ւ զմ ինչ ունեին.

...Ինչքան մեծ՝ այնքան ամուլ էր մտում

Բայց Հայն առյուծ է, թե այժմ նրան
Իր զորքն իրեն տաք... Ինչ էք առչանում,—
Ո՛վ կույր թրջու՛հի՛ րացա՛յք վազրու՛հիք,
Թե խզճի՛ ձայնը մի թուր էլ դառնա,
Ձեր սրտի՛ կեղևն Հալիվ թե մանի,—
Մտնի՛ էլ այնտեղ վիշապ կզանի,—
Ա՛խ, կերան որպես մու՛թ Հոռննտոտեն,
Հոռննտոտենի՛ր, ձեր աչքը վկա՛
Ցեղատպանի՛ մեջ կես մարդ էլ չկա...
Կերան, կշտպան և այժմ, անշուշտ,
Ողջ Հայաստանն են խռում անկուշտ,
Ո՛ր մեղքի՛ Համար մեծ սուրբ նաթիկի,
Ձեր սուրբ նաթիկի՛ ո՛ր մեղքի՛ Համար,
Հուռ պատարագվեց Հայ գեներ իմ աղբի՛
Մեր յոթնամարտի՛ աղբի սիրաբար:
Ո՛վ Հարավու՛հիք,
Մո՛վ Հյուսիսու՛հիք,
Գոնե նզովքի՛ շանթով խոսե՛ք...
Ա՛խ, կկտորվի խզճի թուրը խեղճ
Ձեր քարե, ծայռե, ծայռե կրծքի մեջ...

Ինչպես Համոզվում ենք, «Հայոց դանթեականը» պոեմից
զատված — Հանված այս և դեռ անծանոթ մյուս հատվածները
պետք է վերականգնվեն իրենց տեղերում և նախքան Հովհ.
Շիրազի երկերի լիակատար ժողովածուի գիտական հրատարա-
կությունը պետք է ունենանք ամբողջական «Հայոց դանթեա-
կանը» իր տեքստային տարբերակներով ու անհրաժեշտ մեկ-
նություններով:

Եզեռը մինչև օրս որևէ այլ ստեղծագործության մեջ չի
արտացոլված այնքան խոր ու Համակողմանի, այնքան պատ-
կերավոր ու հիմնավոր, որքան շիրազյան այս պոեմում, որը,
զեղարվեստականի հետ մեկտեղ, ունի նաև պատմաճանաչողա-
կան անգնահատելի արժեք և այն էլ ոչ միայն Հայության Հա-
մար: Իսկ ողջ պոեմը՝ որպես մարդատիրության քարոզ ու հրո-
վարտակ, բանաստեղծը Հասցեագրել է Համաշխարհային ըն-
թերցողին, բոլոր մեծ ու փոքր ազգերին՝ ամերիկացիներին ու

անգլիացիներին, գերմանացիներին ու իտալացիներին, սուան-
րին ու ֆրանսիացիներին, արաբներին ու պարսիկներին, չին-
ացիներին ու Հնդկներին, սևերին ու սպիտակներին, «աշխարհի
բազում ազգերի երջանիկ բանաստեղծներին», որոնք պիտի
գտանան «գառապօրն աճափոր դահճի»:

Փանրային յուրահատուկություները: Դարավոր Հայ գրակա-
նության պատմության մեջ գրական տարբեր տեսակների
տարբերի Համադրությամ ստեղծված գործեր, անշուշտ, կան
առավել Հայտնի են արձակի ու չափածոյի տարբեր Համա-
մասնություններով Համագրումներ, ինչպես Արամյանի «Վերք
Հայաստանին», վեպ, որ ունի չափածո կարճ ու ծավալուն
Հատվածներ, բանաստեղծություններ, որոնք պիտի երգվեն
Հայտնի պուլսական մեղեդիներով (Արամյան կասե՛ր՝ Բեշի
օղյու դուռով), Հովհ. Թումանյանի «Հաջարան բլրուլը» և
«Անբուն կկուն», Լ. Շանթի «Հին աստվածները», ուր Հանրա-
հայտ «Իջև՛ք, իջև՛ք, երազներ»-ից բացի կան չափածո երկխո-
սություններ (մասնավորապես՝ վերջին գործողությունում Մի-
գանուշներն և Ալեհուշների երկխոսությունը) և այլն:

«Հայոց դանթեականը»՝ որպես արձակի և չափածոյի Համա-
դրությամ ստեղծված պոեմ, նապես տարբերվում է գրականու-
թյան պատմությանն ու տեսությանը Հայտնի դասական—ա-
վանդական ձևերից: Այս ողբամատյան — զատաստանամատյա-
նում Համառուված են ո՛չ միայն արձակի ու բանաստեղծու-
թյունը, այլև ռոմանտիկականն ու ռեալիստականը, զգայապաշ-
տականն ու տպավորապաշտականը, էպիկականն ու քնարա-
կանը, պատմականն ու սրբիականը, իրականն ու տեսլային-
երևակալականը, ողբերգականն ու հերոսականը:

Գոեմի առաջին տարբերակը Հյուսիսում է եղել տոնաներով,
որոնցից յուրաքանչյուրը, զեղարվեստական ուրույն և ավար-
տուն միավոր լինելով, շարահյուսված էր մի մեծ զեղարվես-
տական անբողջի մեջ՝ իբրև նրա բաղադրատարր: Հետևելով
Հոմերոսի, Վերգիլիոսի, Նաբեկացու, եվրոպական Վերածննդի
մեծ վարպետների՝ Դանթեի, Գետարդայի, Ենթապիլի, ապա և

Բայրոնի, Գուշկինի, Լերմոնտովի, Թուսնյանի, Իսահայանի, Մեծարենցի, Տերյանի, Զարենցի, Թեքեյանի կողմից գործածված ավանդական տաղաչափական ձևերին՝ պոեմի նախնական տարբերակը գրելիս Լ. Շիրազն օգտագործել էր մանավանդ իտալական գրականության մեջ լայն տարածում ստացած բանաստեղծական տեսակներից մեկը՝ 14 տողանի սոնետը կամ հնչյակը՝ տողերի հիմնականում 12 + 2 դասավորությամբ, 12 տողերի զուգահեռ կամ խառը, վերջին երկտողի պարտադիր կից հանգավորմամբ: Այդպիսով, պոեմի ամեն զլուխ առաջին տարբերակում ներկայանում էր որպես սոնետների յուրասեռակ շարք: Այսօր էլ, պոեմի արժատական վերամշակումից հետո անգամ, Հրատարակված վերջին տարբերակում անգլեն աչքով իսկ նկատվում են «անխաթար» պահպանված ամբողջական սոնետներ: Ահա օրինակ՝

Օ՛, Դանթե, մի՛թե դու լուռ ես գեռ,
Դու՛, որ ամեն մի մեղքից ես նողկում,
Դու՛, որ Աստծո դժոխքում անմեղ
Մեծ Վերգիլի հետ անմեղ դժոխքում
Միծաղում էիր փտվողների դեմ,
Հիմա ինչու՞ ես լուռ՝ չգիտեմ,
Անմեղների դեմ և այն էլ այսքան,
Մուրր անմեղություն՝ հավերժ կուտական,
Ձե՛ որ կորչում է շաշխարհ մի ցեղ,
Հողից էլ բերրի, հասկից էլ անմեղ,
Հովված գաբերից նմուշվող մի սող,
Գերանդու բերանն րեկած հեղ մի հասկ՝
Ընկած ոտքի տակ Իրան-Թուրանի,
Ինքը՛ մոռ, շուրջը՛ բոցը Դուրանի:

Նման սոնետներ կան պոեմի գրեթե բոլոր զլուխներում: Սակայն լրամշակման ընթացքում Հաղես փոխվել է պոեմի ձևն ու կառույցը. նյութի թեյագրանքով այն զուրս է եկել

ավանդական կաղապարներից, դարձել Հեղինակի անսանձ երևակալության, հաննարային մտքերի ու զգացմունքների հեղեղի հորձանքին ենթակա մի յուրօրինակ կերտվածք, որը հայտնի միջոցներով ու նշանակներով հնարավոր չէր էլ լինի չափակուել: Ոչ միայն սոնետների մեջ տողեր ու նոր հատվածներ ներմուծվելով փոխվել է նրանց տասնչորստողյա կանոնի կառույցը, այլև գրանց դարձել են երբեմն մի քանի էջ կազմող ամբողջական հատվածներ, տառը վանկանի տողերի կողքին հայտնվել են «խաղաղ» պատում ապահովող սոնետհիգիստական երկարաշունչ տողեր: Իսկ 304 – 324-րդ էջերում, ուր էպիկական հզոր շեղով պատկերված են Անդրանիկի, Ամրատի, Քեռու և մյուս հայ թալամարտիկների հերոսական կռիվները, առանց որի թուրքերի ստեղծած մահազժոխքից հաղիվ թե փրկվեր որևէ հայ, փոխվել է տաղաչափական ձևը, կիրառվել են ութադանկ կարճ տողեր, որով քնարականի կողքին հզորանում է էպիկական տարբերը, ավելի տպավորիչ ու տեսանելի են դառնում Հերոսների արագապայց գործողություններն ու ռազմի տեսարանները՝²⁶⁷:

Այնպես որ, շիրազյան այս դատաստանամատյան-պոեմը ժանրի իմաստով համադրական բնույթ ունի և ներառում է քնարականի, էպիկականի ու զրամատիկականի, շափածոյի և արձակի ժանրերին բնորոշ տարատեսակ տարբեր, որոնք ընդելուզված, համառուլված են ամբողջ Հյուսվածքին:

Պոեմի քաննչորսերորդ՝ «Մեծ մուռնչի գեղեր» գլխի արձակ առաջարանն այս իրողության թերեզ լավագույն հեղինակային բացատրությունն է, որը կարող է կողմնորոշել երկի ժանրային բնութագրերը տպուկ հարցում: Բերում ենք այդ առաջարանի մի հատվածը. «...Ես չեմ կաղապարում իմ ողբերգա-

²⁶⁷ Այն, որ Գ. Հիրազը քնարականի հետ միասին օժտված իր նաև նախնական եզրը կարողություններով, վկայում են նաև քնարակական պոեմները «Ախանանտ և Խրեզդան», «Մամբրկույան տուր», «Տրարան Անտի վիշտը», «Ախրանանտ» և այլն: Իսկ 1958 թ. լույս տեսած «Ձեռք Դայանանի» գրքի մի ամբողջ բաժին վերնագրված է «Եպիկոս», ուր գետնված են համապատասխան գործեր:

տողերի՝ թաղման տխրաբախտի նմանվող արցունքների զո-
րախմբերը: Ես երգ չեմ հեկեկում, ոչ էլ պոեմ է կշռույթավոր,
վեպի առասպելապոետներ էլ չեն ստքա, որոնցով բացվում է
ամեն մի Հայի սիրտը մեր առջև, ես չգիտեմ՝ ինչ են այս իմ
հառաչանքների մթնալույս, հուշախորհրդախոր, զարհուրա-
տեսիլ անտառները, այստեղ դուք մեզք մի՛ փնտրեք, ո՞վ դուք
միջասյաներ, որ մըշտ մի կողմն եք տեսնում՝ ձեր չարախոս
բերանը պատռա խոթողի կողմը: Այս իմ մրմունքների մարգա-
տաարտերում մի՛ք փնտրի չափն ու ձևը ձեր կարծեցյալ մո-
ղեհնականի՝ թի՛թեհնաց և... Այստեղ խոցված ու խաչված ծո-
ղովրդի սիրան է, այստեղ եղեռնապուրծ ազգի մնացյալ
փրկվածների անեծքն է անչափելի, տրտունջն է, շշուռն է,
հառաչն է, մոռունքն է, խոյանքն է, պահունջն է աննահանջելի...
Ես ահեղ դատաստանամատյանն եմ արցունքաշարով որմնա-
շարում, որին դիպչելով պիտի փշրեն իրենց բուժ ճակատները
լուսթյան օրերն ու դարերը: Ես այն եմ գրի առնում Հայոց
արցունքի և ծովացյալ արյան մեկանով ... Սա Հրաբուխն է այն
զոհարտերի, որոնք չկարողացան լուսթյանն ընդդեմ ժայթքել՝
աշխարհի լուսթյան Հողը ծանր լինելու ժայռն պատճառով...

Ես լուսթյան բերանը աստվածային ծանիքներ եմ ուղում
դեռև, խարանել եմ ուղում վարանողների լուսթյան պղծաճա-
կատը... Չափ, ձև եղելի են աստ, սևաթույր արյան հեղեղն
ի՛նչ պոեմ կարող էր կաղապարել, ո՞վ կաղապարված դավանան
լուսթյուններ, մրմունջն է անչափելի, տրտունջն է անչափելի,
հառաչն է անչափելի, տվայտաշունչն է անչափելի, անե՛ծքն է
անչափելի, խարանման մոռունջն է անչափելի, բողոքն է անչա-
փելի, աղաղակն է անչափելի, մոլուցքն է անչափելի, հուսաահա-
տուժյունն է անչափելի, խլվածներն են անչափելի, ցավն է
անչափելի, լացն ու ո՞ղբն են անչափելի, գայրո՛ւյթն է անչա-
փելի, ատանալորճոտումն է անչափելի, վշտի կշիռն է անչա-
փելի, դիպեռներն են Հայոց անչափելի, Հայոց եղե՛ռնն է ան-
չափելի, — Մատիս Հրաբուխն են իմ այս ողբամատյանի բյու-
րավոր շարված բերանների շրթուճեքները Աստծո կույր աչքի

մեջ շարվանում ... քանզի անարգաություններն են անչա-
փելի» (289-290, բնագծ — Ս. Մ):

Անշուշտ, Հովհ. Նիրազը չպիտի մնար սոսկ իր գրական
ներշնչանքների ոլորտում և չպիտի կրկներ իր նախորդներին,
այլ Հայոց ողբերգությունը պիտի դիտարկեր սեփական զգա-
ցողությամբ ու ընկալմամբ և զազափարական ու զեղազի-
տական նոր նպատակադրմամբ, նոր իրազարձաությունների
լույսի տակ՝ հեկեկելով նախորդների ստեղծագործական փորձի
վրա, պատճական փաստերի և իրողությունների զեղարժեանա-
կանացման սեփական սկզբունքներով:

Դրանք եղեռնը իրազործող մարդասպան և ավարտու կա-
ռավարողների արդին հայտնի, բացահայտված կամ գաղտնի
հրամաններն են, մահափոխիքից հրաշքով փրկված ականատես-
ների վկայությունները, օտարերկրյա զինվանադիտական աշ-
խատողների, գերմանացի, ռուս սպաների բազմաթիվ լուսա-
նկարներ և այլ վավերական նյութեր: Հաճախ է նա մամուլից,
գրքերից բերում փաստը, այս կամ այն վկայությունը և մեկ-
նարանում իր իմացական, զգայական ու պատկերավոր մտածո-
վում բանաստեղծ — զեղազեպի խոշոր ստավիտությունը նույն
փաստը ներկայացնող ու մեկնաբանող ականատեսի, ապա
լրագրողի, Հրապարակախոսի, անգամ դիտնականի նկատմամբ:

Այն, որ թուրքական գերիշխանության տակ ապրող Հայու-
թյան վիճակը միշտ էլ եղել է օրհասական, վկայում են պատ-
մական աղբյուրները: Բայց զեռ 1870 թ. Վանում և նրա շրջա-
կայքում թուրքերի ու քրդերի խոցմությունների առթիվ Գեո-
րգ Չուբրյանի գրած «Նոր սև օրեր» բանաստեղծության մի
տողը կամ պատկերն ավելի խոսուն է, քան մամուլում եղած
տեղեկությունը.

Ինչպես որ Հավ մը ծորիկն,

Աշտկես ալ Հայ մը ծորիկն...

Ի. Գասկանյանի «Մշտու հեկեկաբեր», «Վանեցու մոր եր-
գը» Հայության նույն անապահով գրությունն են պատկերում,
նույն Հարստահարությունների, սպանությունների պատկերն

ենք տեսնում Բաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերում, Վրթ. Փափազյանի «Պատկերներ թուրքահայերի կյանքից» շարքում, Եր. Օսյանի վաղ շրջանի պատմվածքներում, «Տառներկու տարի Պոլսի դուրս», «Արյունա հիշատակներ», «Անիծյալ տարիներ» հուշագրական երկերում, Մեծ եղևոնը պատկերող «Թիվ 17 խաֆինն» վեպում, Առանձաբի նորավեպերում («Բուրդի վաճառականությունը», «Երկու պատկեր» «Առուբի ստեղծը» և այլն)։ Իսկ Միսանթիս րանաստեղծն արգեն ուներ որոշակի մտասևեռում։ 1896-900-ական թթ. շարդերը նրան գեղեցկության, սիրո երգչի փոխարեն դարձրին «արջան մզմովաններ և բնրատուության երգիչ»։

Իրական և գեղարվեստականի Հարաբերակցությունը։ Ծննդ է, որ Հովհ. Շիրազի ստեղծագործական հզոր, կարելի է ասել անսահման երևակայությունն էր ի վիճակի այդքան պատկերավոր ու սպասվորի ներկայացնելու մեր մեծ ողբերգությունը։ Բայց Հայոց եղևոնը իրողություն է, թե ինչպես Դանթեի «Գոթիքը» րանաստեղծի երևակայության արգյունը, ավելի պարզ ինչպե՞ս են Հարաբերակցվում իրականն ու երևակայականը քննարկվող ստեղծագործության մեջ։

Բովանդակային խեղրում րանաստեղծը Հավատարմի է մնացել պատմական ճշմարտությանը, և բազմաթիվ փաստերով կարելի է հիմնավորել, որ պոետում պատկերված եղևոնի զբրվաղները բացարձակ իրողություն են։ Այսօր, իհարկե, գծվար է լայնահուն Եփրատի ջրերի հայելում խեղդամահ Հարյուր Հազարավոր հայերի գիակներ ու կմախքներ տեսնել, բայց շուրջ Հարյուր տարի հետո էլ թուրքերի ստեղծած մահաճամբարներում, Միրիայի անապատներում, մանավանդ Դեր-Ջորում ու նրա շրջըրը, մոտ 80 կմ հեռու գտնվող Մարքալի քաղաքում ու նրա շրջակայքում այսօր էլ Հնարավոր է առանց զրծվարության արևերես հանել ոճրագործության հետքերը։ Այդ մահաճամբարներով անցած ու միայն հրաշքով ողջ մնացած անհաստես եր. Օսյանի՝ Մեծ եղևոնը պատկերող «Թիվ 17 խաֆինն» վեպում, միջին ու մերձավորարևելյան անապատ-

ներում հայության սպանող պատկերող «Արյունա հիշատակներ» և մանավանդ «Անիծյալ տարիներ» հուշագրական երկերի էջերում տեսնում ենք այն սահմանցուցիչ իրողությունները, որոնք գերազանցում են դանթեական երևակայական գծերից պարունակներում, նրա կրակն ու կպրն մշուշներում տանջվող մեղավորների շարձարարներին, և որոնք Հովհ. Շիրազը վրձնել է որպես գեղարվեստական պատկեր։ Իսկ շուրջ չորս երկարունիկ տարիներ տարբեր մահաճամբարներում եղած, գոժիսային աքսորից վերադարձած, ողջ արևմտահայության բնաջնջումն իր աչքով տեսած եր. Օսյանի «Վերապրող մը» ստորագրությանը «Ողջուն մեզ» ուղերձը, անվարան կարելի է ասել, Հովհ. Շիրազի պոետի յուրատեսակ մանրակերտն է։

« - Ողջուն քեզ, Հայ ժողովուրդ, - մեղա՛, ողջուն մեզ, հայության մնացորդներ, - Հեռվեն, չա՛տ Հեռվեն կուգամ։

Դեր - Ջորին կուգամ՝ որուն կամուրջն երեք Հարյուր Հազար հայեր անցած են և որոնցմն միմիայն Հազար հիզ Հարյուր կինը ու որը տղաք ողջ մնացած են։

Կուգամ Օսմանիներն, ուրկն տեղատարափ անձրևով մը վաթսուն Հազար հայեր խարազանի Հարվածներուն տակ քշվեցան լեռնկիտ։

Կուգամ Բուզանթինն գեպի Թարսուս տանող ճամբայն, ուր նորածին Հայ մանկիկներ եղևնիներուն ներքև, իրենց մայրերին լքված, մեր աչքերուն առջև չապալներու և շուկներու կեր կ'ըլլային։

Կուգամ Հալեպեն գեպի Դեր-Ջոր երկարող այն անիծյալ անապատեն, ուր տասնյակ Հազարավոր հայեր, երեք տարի վրաններուն տակ, կոտորվեցան տևողեն, թիֆուսան ու թանջքեն։

Կուգամ Սեպիլի վրաններեն, ուր անթի մնողքներ իրենց զավակներն անուրդի հանեցին, և տաք տարեկան աղջիկներ վաթսուն փառայի վաճառվեցան արարներու և հրեաներու։

Կուգամ Սուրիային, ուր Հարյուր Հազարն ավելի Հայեր, բնաջինջ ըլլալու սպառնալիքին տակ, իրենց աստվածը ուրացան:

Կուգամ Համայնն ու Հոմանն, Մեսքենենն ու Համամնն, Միտլինենն, էլ Բուսերայինն, Սուլթանիենն ու Գոնիայինն, ուր երեսուն—քառասուն Հազար Հայ որրուկներ «ճայրի՛կ, մայրի՛կ» կը ճվան թուրք բնակարաններու խաֆեններուն ետեկն:

Կուգամ եղևուխ այն գոտիային վայրերն, ուր Ջոհրապետ, Ակնուհիներ, Խամակներ, Զարգարյաններ, Միամանթուներ, Վարուժաններ, Սևակներ, Տաղավարյաններ, վերջապես ամբողջ ազգի մը ըղիկը Զարգուփյուր եղա՞վ ձենկիկ Հաներու և Լենկ Թեմուրներու արժանապարհ Հարդղներու ձեռքով:

Ողջու՛յն ձեզ, Հայությանն իսլայկներ»¹⁰⁸ (բնգգժ. — Ս. Մ.):

Սա, անշուշտ, թուրքերի Համար ամենինն էլ ձեռնտու վկայությունն չէ. նրանք, իրենց ազգային ստախոս բնավորության Համաձայն, երբ ուզեն կարող են այս վկայությունն էլ Հերքել ու կեղծիք Համարել, վիթխարի զեղարմատական ու Հրապարակախոսական մտանգություն ստեղծած երգանդ Օտյանի գոյությունն էլ միտել կամ ուրանալ, ինչպես այժմ Եղևուխ մյուս կարևոր ակնատես—վիճանքի ու մանավանդ Արամ Անտանյանի վկայությունները, նրա անձնավորությունը կամ գոյությունն են առՀասարակ ուրանում:

Իսկ եր. Օտյանի «Անիծյալ տարիներ» Հուշագրությունը, որը 1919-ին տպվել է Գոլտի «Ժամանակ» օրաթերթում և ընդամենը նորերս՝ 2004-ին էլ առանձին զրբքով Հրատարակվել ու Հազիվ թե Հովհ. Շիրազին ծանոթ լիներ, կարելի է նախորդ ու բոլոր վկայությունների Հետ միասին քննարկիկող ողբամատայան—դատաւանամատայան պոեմի վավերական Հիմքերից մեկը Համարել: Եր. Օտյանն ինքն էլ, որ արտորի սկզբնական շրջանում չէր պատկերացնում Հայոց «աղետին աճուկի մեծությունը», ասելում էր թուրքերի կողմից անմեղ Հայերի անասելի տանջանքների գերազանցությունը Դանտեի «Իժուբիք»

երևակայական պատկերներից: Բայց այն, ինչ «չէր կրցած երևակայել» Դանտեն, կարողացել և իրականացրել է Հովհ. Շիրազն իր չուրջ քառասուն ստեղծագործական տարիների արնությամբ: «Հայոց դանթեականը» ողբամատայան—դատաւանամատայան պոեմն այնպես է կատարված, որ Հայոց և աշխարհի մեծերի ոչիտումը, Փոքր Հովհաննես — Հեղինակի և Անդրանիկի ստեղծագործությունը, Գայլադուրեքով մտնում է Նախիջևանն ու Արեմոյան Հայաստան, շրջում է այն մահահամարներով, որ ստեղծել էր թուրք Զարգարաբը իր բնորոշ անդահանված Հայությանը բնաջինջու սպառնալով: Կարևորն այն է, որ պոեմի գլուխներում Համաշխարհային զարհուրատեսիլ աղետն ու աննախապեղ վայրագությունները պատկերված են այնպիսի ճշգրտությամբ ու ճշմարտացիությամբ, որ քացահայտվում է Զարնեցի ասած՝ «Հաճիտեմական հիվանդիք», Շիրազի ասած՝ «միտուղի խարված խամամուժիք» բուն էությունը: Զենց նա է Համիդ ու Թալեաթ, էնվեր ու Ջեմալ, Եղբղ ու իթթիհասա մեկ, զործարկել ոչնչացնելու, կոռուպտելու, յուրացնելու, սպանության ու տանջանքների բազմապիսի մեկեր թուրքական Համակարգը: Ջենքի Հասակի Հայ տղամարդկանց գատիկուց ու նրանց ճանապարհաշինարարի անվան տակ առանձին բնաջինջու ուղարկելուց Հետո խաղաղ Հայ քաղաքների ու գյուղերի, անգնն ու անպաշտպան մեքերի, կանանց ու մանկանց վրա գերմանացին թուրքական զորքերն ու կոռուպտիվ թուրք խուժանը անակնկալ Հարձակվում են գերագույն մուլուցքով:

Ու կես գիշերով երկրում ամայի
Երբ խոր քնած էր Հայաստանն անկեն,
Ինչպես թևերը կտրված բաղեն,
Երբ քնած էր ծերուկն Հայության,
Երբ խոր քնած էր մանուկն Հայության,
Երբ մոր ստիճարում կամի էլ էր քնած՝
Ջորջն օրոցի գեմ գրո՛հի գնաց:

¹⁰⁸ «ՇԱՐՔ» կիսամյա պարբերական, Պոլիս, 1918, թիվ 5, էջ 351:

Այսպես է մեր միլիոնավոր նահատակներին ու բռնազաղթ-
վածներին ենեզորեն պատուհասել մահացու հարվածը, փրակ-
ող փրկվածներին ու մեր անբաղժ ժողովրդին հասցվել հարա-
գատների ու պատմական հայրենիքի կորուստը, մարդկային ու
ազգային արժանապատվությանը երբևէ պատճառված ամե-
նածանր փրակորանքը:

Դատաւատամանայան – պեմի վավերական Հիմքերը որևէ
կառաված չեն հարուցում: Իսկ իրական Հիմքով ստեղծված պատ-
կերավոր խտաբը բազմը աղվեսով չնորհիվ մեռք է բերում
ներգործող վիթխարի ուժ, քանի որ պատմական ճշմարտու-
թյունը վերածվում է գեղարվեստի ճշմարտութայան: Թեև նոր
վավերական Հիմքեր հայտնաբերելու և զրանցով սույն ուսում-
նավորութայանը ծանրաբեռնելու հարկ կարծես չկա, սակայն
արժե եղանին դուժարել ևս մի «դանթեական վկայակոչում»
դարձյալ ականատեսի պատմում:

Այս անգամ ականատես-պատմողը ոչ այլ որ է, քան մինչև
1915 թ. հայ քրիստոնյա, իսկ նրանից հետո երկար ժամանակ
որդես Սեհեր անուճով նշանավոր մահմեդական թրքուհի Թա-
նաջված Հերանուշ Կատարյանը՝ այսօրվա Թուրքիայի նշանա-
վոր փաստարաններից մեկի՝ Փայթհիե Չեթինի տասը: Կյանքի
վերջին տարիներին նա իր թուռանը պատմել է իր աչքով ան-
սամ բռնի տեղահանութայան, աքսորի, զննվածային ապստու-
թյունների այն ողբերգական իրադարձութայունները, որոնց գոհ
են գարձել Բալուխի և նրա շրջակայքի հայ բնակիչները: Ճառի
պատմածները վերջինս ներկայացրել է «Մեծ մայրս» հուշա-
գրական փրակում, որը Ստամբուլում փեց հրատարակութային
օժենալուց հետո միայն վերջերս է թարգմանվել հայերեն:
Պետլիք զրա թուրք ստիականական զորամիավորումների և
խուճանի հերթական հարձակման ժամանակ, երբ հրացանների
խզակոթներով ձեռնելով, մահվան սպանուղիքով աղամարդկանց
ստանձնացրել, տարել են Բալուխ ուղղութայամբ, անդառնալու
մնացած կանանց ու երեխաների լացը զսպելու համար
Հերանուշի հայրական տասն տակ է:

« – Մի՛ խառնվեք, տանն ինչ կկարգավորվի, զնացածները
կվերադառնան, – այսպեւ շարունակելով պարզաբանել է – դուք
այն ժամանակ երեխա էիք, շատերը չգիտեք, քան տարի առաջ
էլ մեր գյուղերը նման հարձակման ենթարկվեցին, դատարկվե-
ցին, թուրքու սքսոր քչեցին...»¹⁶⁹ (ընդգծ. – Ս. Մ.):

Ուշագրութայուն դարձնենք մեջբերման ընդգծված մասին.
քան տարի առաջ այսինքն 1895 – 96 թթ., նույն գյուղացի-
ներն արդեն տեսել էին առաջին շարքը. հիմա այն կրկնվում
էր ավելի մեծ վայրագութայամբ ու չափերով՝ Համասարած
բնաջնջման սպանուղիքով: Այս անգամ պատմարդկանց ու
կանանց միտան են տարել Բալու, այնտեղ ստանձնացրել ու
իրականացրել իրենց գիշատչային խրախճանքը. «Բալուում կա-
նանց ու սողամարդկանց իրարից ստանձնացրել են: Կանանց
հավաքել խցկել են եկեղեցու դավիթը, իսկ սողամարդիկ մնա-
ցել են դրսում: Որոշ ժամանակ անց՝ դրսից սկսել են Հոգեկե-
ղք ճիչեր լսվել: Քանի որ զավիթի պատերը բարձր էին, ներ-
սում գտնվող կանայք ու երեխաները չեն կարողացել տեսնել
դրսում տեղի ունեցածը, միայն ահուսարսափից ակնախո-
ռոչներից դուրս պրծած աչքերով իրար են նայել ու միմյանց
հանդիպած հայացքները զամված են մնացել: Մայրեր, ա-
ստիկներ, երեխաներ իրար կպած զոռացել են: Գավիթը զողո-
ղացող կծիկ է եղել... Ընկերուհու ուսին բարձրացած և դուրս
նայող աղջիկը ցած իջնելուց բավական հետո է միայն կարող-
ացել պատմել դրսում տեսածները: Այդ աղջկա շուրթերից
լսածները Հերանուշն ամբողջ կյանքում չէր մոռանալու:

– Տղամարդկանց կոկորդները կտրում են և հետո էլ գետն են
նե սում: Չայն ու աղամուկ զողարկուց որչա՞ ժամանակ անց
երկու փեղկանի մեծ դուռը բացվել է, և գավիթում եղած
բազմութայանը երկու շարք ստիականների միջից անցկացնելով՝
Բալուից դուրս են հանել»¹⁷⁰ (ընդգծ. մերն են – Ս. Մ.):

¹⁶⁹ Չաքիլիե Չեթին, Սեծ մայրս, քուրթերենից հայերեն թարգմանությունը և ստղատակ
ժամոպագությունները Ռ. Սեթրեյանի, «Պարուր Սևակ» հրատ., եր., 2006, էջ 50:

¹⁷⁰ Սույն տեղում, էջ 51 – 52:

Հովհ. Երբազի «Հայոց զանձնակներ» Հյուսիսում է Հենց այսպիսի կատարված ողբերգական իրողությունների պատկերմամբ, որոնք, սակայն, Հանդերձաժողոված են գեղարվեստորեն:

Գրական ավանդույթներ և ազգակցություն: Բունզազվիված Արևմտյան Հայաստանի պատմության ու աշխարհագրության զեղարվեստականացումը Հովհ. Երբազը Հեռեւողակներին իրագործել է իր շուրջ Հիսուսեանյա գրական գործունեության ընթացքում և փոքր ու մեծ ամենատարբեր գործերում: Անշուշտ, Հայ ժողովրդական բանահյուսության, գրականության ու պատմագրության մեջ զեռեւ Հեռափոր ժամանակներից մեափորվել էին հայրենագիտության ու նրա գեղարվեստականացման որոշակի ավանդներ, որոնք յուրացրել էր Հովհ. Երբազը: Մոգեսն Խրեհնացու «Հայոց պատմությունը», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» գրեթե ամբողջությամբ ու մասնավոր «Ջանգի» հավելումը, Ալիշանի «Հրազդանը», «Հայոց աշխարհիկը», «Ողբած գրքը, Հայոց աշխարհը», Գատկայանի «Արարի արտասուք» ու «Ազատ երգեր» շարքի բանաստեղծությունները, Բաֆիու «Չայն տուր, ո՛վ ծովակ»-ը, Ժրագրային-բաղաբական ու պատմական վեպերը, Թումանյանի «Հայոց լեռներումը», «Հոգեհանգիստը», «Հայրենիքի հետ»-ը, «Դժոխքի հանդեպ»-ը, Վարուժանի ամբողջ «Բագինիներ վրա» շարքը, Սիամանթոյի գրեթե ողջ քնարերգությունը, Տերչյանի «Երկիր Խարիրն» ու մասնավոր Չարենցի «Ես իմ անուշ»-ը չէին իջնում նրա շուրթերից: Անկարելի ժամանակներում 1935 թ. լույս տեսած, Հեռո մեկուկես տասնյակ լրամշակումներով հրատարակած «Սիամանթո և Խիզարեն», 1942 թ. գրված ու 1960-ական թթ. լրամշակված «Տիրբան Մեծի վիշաք և հավերժությունը», ինչպես և իր գրական ուղու տարբեր շրջափուլերում գրած «Հրազդան (Հին ու նոր Ջանգուհ)», «Սիրանան (Շոթան և Թամարը)», «Մեր գյուղերի անունները», «Մամիկոնյան սուրբ», լայնակտավ ու փոքր պոեմներում, բազմաթիվ բանաստեղծություններում Հովհ. Երբազը Հեռեւողակներին ջանացել է գեղարվեստականացնել Հայոց պատմությունն ու աշխարհագրությունը: Դա խորհրդ-

դային պետական ու գրական զեկափարները ժամանակին որոշակի Հանձնարարականով որակում էին որպես կեղծ կամ «տեղանվանական հայրենասիրություն» ու դատապարտում էին բանաստեղծին՝ իրը հայ երիտասարդությանը խորհրդային արդի լուսավոր կյանքից կտրելով ապակողմնորոշելու և անցյալը իրելակականացնելու Հնարովի մեղադրանքով:

Մինչդեռ նշմարաւթյունն այն է, որ, ինչպես տեսանք նախորդ էջերում ու մասնավոր «Դանձնակների երկու ըմբռնում» հատվածում, Հովհ. Երբազը, նորագույն ժամանակներում շարունակելով վերահիշյալ ավանդույթը, խիզախորեն իրականացնում էր գրական հոսակ ու նպատակայալ բաղաբականություն՝ Հայոց անցյալի պատմական նշանավոր գեպերի ու դեմքերի արքաների ու իշխանների, մտավորականների, Հին ու նոր Հերոսների սխրանքների ու անձնազոհ Հայրենասիրության, լեռների ու Հովիտների, լճերի ու գետերի, կորուսյալ նահանգների ու բնակավայրերի անունների վկայակոչումով ու Հիշեցումով որքան կարելի է բորբոք պահել ժողովրդի պատմական Հիշողությունը և նոր սերունդների գիտակցության մեջ աթեանացնել ու ամրապնդել կորուսյալ Հայրենիքի վերադարձի հույսը:

Այս առումով նա իր ներքին ու արտաքին Հեռեւողական բաղաբականությամբ, իր չրգված, բայց ողջ Հայության կողմից ընդունելի օրենքներով կառավարվող մի յուրտեսակ ատանձին ազգային պետություն էր խորհրդային պետության ներսում, ինքն էր ուղղորդում պետության գործունեության ազգային գիծը, ազգային-բաղաբական կուսակցություններից անկախ բորբոքում էր Հայոց պահանջատիրության կրտս, դասում էր խորհրդային վերջին տասնամյակների երիտասարդ սերունդների ուսուցիչն ու դաստիարակը, ազատագրական նորագույն պայքարի գաղափարական առաջնորդը:

Արևմտյան Հայաստանի գեղարվեստական պատկերը «Հայոց զանձնակներ» ողբամասյան - դատաստանամասյանում, Հիշյալ խնդիրների հետ միասին, ունի նաև այլ խորհուրդ և նպատակագրում. դա մի կողմից ցեղասպանության իրագործ-

ման աշխարհադրուիթյունն ու պատմութիւնն է, այսինքն՝ որտեղ որքան հայ է ջարդվել, որտեղից որքան հայ է տեղահանվել և ուղարկվել մահաճամբարներ՝ ստույգ ոչնչացման, որտեղ է կազմակերպվել ինքնապաշտպանութիւն և զինազրական շարժում, մյուս կողմից՝ դա մեր ավերված ու բռնազավթված քաղաքների, ավանների, գյուղերի, գաղտցների, գիտական, մշակութային կենտրոնների, վանքերի, բերդերի, լեռների, ձորաձովտների, դեռերի, լճերի, դաշտավայրերի, արտավայրերի, գյուղատնտեսական ու առևտրական կենտրոնների, մեր ողջ բնօրրան— Հայրենիքի բառարան - քարտեզն է՝ ուրվագծված նրա կորստի ողբերգութեան թանձր պատկերներով, գույներով ու զգացումներով: Իրավարկվել, ունեցրկվել, խողխողվել, բնաջնջվել ու տեղահանվել — վտարվել է բնիկ Հայ ժողովուրդը, և բռնազավթվել է նրա բնօրրան Հայրենիքը. սա՛ էլ ցեղասպանութիւնն չէ կամ ենթակա է մոռացման ու թարցնելու...

Նոր Միամանկն էր պետք, որ այս դեպքում Հովհ. Շիրազն էլ, բացականչելու համար.

Բայց ո՞վ պիտի կարգա ըն բարոյականը.

Ո՞վ խավարի և ավերի ժողովուրդը...

Հայոց եղևոքն «խավարի և ավերի ժողովուրդ» ձեռքով միայն միլիոնավոր մարդկանց ոչնչացումը չէ կամ հայութեան բնօրրանի բռնազավթումը, այլ երկուսը միասին: Ընթերցողին թողնելով ողջ ողբամտայան—պոեմի՝ այս տեսանկյունով ընթերցումը՝ ստորև ներկայացնում ենք միայն մի պատասխի, որի մեջ կարծես խտցված է կործանված ու բռնազավթված Արևմտյան Հայաստանի, նրա անմեղ բնակիչների անչուր ողբերգութեան ահադարձուր պատկերը.

— Հայոց երկիրն էլ նայում հայ երկիրն.

Նայում քղկտված անթիվ դահերին.

Նայում քաղաքիմ հայ կորիճների՝ կիրճերում քանդված.

Նայում մորս պես անմեղ աղոթող վանքերին քանդված.

Նայում Մատուհի ու ողջ Տարսիսի բերդերին բնկած.

Նայում Թուղրավիկի հայ թուրքերին հայ արևով հանգած.

Նայում Խարբերդի բերդերին փլված՝ անկում էր. լախ.

Նայում դեռ Վանա ծովերին խլված՝ զլլիին էր տալիս.

Նայում ժայրեծայր Հայոց ողջ ու ողջ երկրին խորտակված.

Ապա Գեր — Ջորի անտպատով մեկ դիերին խարկված.

Նայում մանկանցը՝ օրոցքում մորթված, մոր պես տեքում էր.

Ապա մայրերին՝ կուրճը ծվառված, խաչակնքում էր.

Նայում հինգ ու վեց ու յոթ տարեկան կույսերին պղծված.

Նայում հայ երկրին՝ Հայոց հեղ Աստու աչքերով եղծված.

Խաչակնքում էր փշա ու ցասուժով երկիրն անահման՝

Իր աչքի առջև մորթվող անհամար որդոց մոր նման՝

Հայոց եղևոքն սև ու սև սուլով անՀույս անհպում.

Խաչակնքում էր իր կայծակներով անկամ ճակատին.

Իր կայծակներով խաչակնքում էր երկիրը միին...

... Արարատ լիան էլ՝ քարացիկ վշտից մեր անսպեղան

Կնճուռն էր զեծքը մեծ աղեղնավոր իր Հայկի նման.

Տեսնելով աղգի բնաջնջումը՝ անպում էր. սոսկում.

Արարատն անգամ կայծակներով էր լուռ խաչակնքում.

Տեսնելով ծովված սրյուններն Հայոց՝ ընկած Հայ թաղով՝

Արարատն անպում խաչակնքում էր ճակտին կայծակով...

... Խաչակնքում էր չանթ ու կայծակով երկիրն ահառած.

Բայց ողջ աշխարհը՝ մի անապորույս չանթարկել դուռած՝

Ընկնում էր անգամ Աստուուն չանթառաք, հաթիում անշուկ.

Ու չէր Հայանվում ահեղ դատաստանն Լիտուսի մանուկ:

Գլխատվում էր ողջ մայր Հայաստանս, և ո՞ւմ սև ձեռքով.

Նրա՛, ում մեղքը կռվում է դեռ Մարտ լուներով...

Կերպարային Համակարգը: «Հայոց դանթեանկանը» աննախազեղ երևույթ է կազապար, չափ ու ձև չհանգուրժող մի ստեղծագործություն, որում, ինչպես վերը տեսանք, զեղարքնաստիան պատմանականության ճամբը համաժողոված են իրականն ու տեսիլային— երևակայականը, քնարականն ու էպիկականը.

անախատականն ու սովանտիականը, արձակն ու բանաստեղ-
ժականը՝ ստղաչափական տարրեր մեկտրով:

Անուշտ, հեղինակի գաղափարական ու գեղագիտական
հարցադրումների հասցեստորը «Քժոխք» հեղինակ Ալեգիե-
րի Դանթեն է, որի ստեղծագործությունը Հ. Շիրազից առաջ էլ
հայ գրողների կողմից եղել է հայոց եզրեանդժոխքին զուգա-
հեռման առարկա: Սակայն, ինչպես արդեն տեսանք, նրան չեն
զուհացրել անգամ Միսմանթոյի, Թուսմայանի, Օսյանի ու Զա-
րենցի զուգահեռումները, և նա մեռնամուտի է եղել գեղագի-
տական մի բարդ խնդրի լուծման, որն անկարելի պիտի լիներ
իրականացնել առանց հայ միջնադարյան ողբերի ու տեսի-
լային գրականության ավանդների, առանց գեղարվեստական
պայմանականության այն մեկերի, միջոցների ու հնարանքների,
որ կիրառել է Հովհ. Շիրազը: Դանտեի և նրա Հետ միասին
աշխարհի մյուս մտափորական մեծերի ոգիներին «հրավիրել»
թուրք սճրագործների կազմակերպած ցեղասպանության իրա-
կան դժոխքը, որ իրենց աչքով տեսնեն կատարվածը, հայու-
թյան կրած դժոխային տառապանքներն ու կորուստները և
համեմատեն դարեր առաջ երևակայությամբ ստեղծված դան-
թեական դժոխքի Հետ, չափին անչափելին, կշռեն անկշռելին ու
վերաբերմունք դրսևորեն, պատռեն քաղաքական ու տեսեսա-
կան շահերով պայմանավորված լուծված զրահները, ճշմար-
տությունը հայտնի դարձնեն աշխարհին, արթնացնեն մարդ-
կության քնած խիղճը, որ եղեռնապոթը դատապարտվի, ու
արդեն կատարված ոճիրը երբևէ չկրկնվի ոչ մի ժողովրդի
հանդեպ:

Այս արտաբնուստ պարզ թվացող գեղագիտական ու գաղա-
փարական խնդրի լուծումը, սակայն, ունի այլևայլ բարդու-
թյուններ, որոնք պիտի հաղթահարվեն գեղարվեստական հա-
մոզելի լուծումներով: Արդ, ի՞նչ հիմունքներով ու սկզբունք-
ներով, հատկանշային ի՞նչ ընդհանրություններով պետք է Հ.
Շիրազը ընտրեր ուրվաբայլ շրջող հայ և օտար մեծերի
ոգիներին, ինչպե՞ս պետք է կերպարները նրանց միևնույն
ոգևիմբում ու Հայոց եղեռնի գժմատեսիլ համապատկերում:

Սա Հեշտ լուծելի խնդիր չէր անգամ Հ. Շիրազի համար:
Տարրեր դարերի, տարրեր ազգերի ու պետությունների մեծու-
թյուններ, որ ստեղծել են համաշխարհային մեծ արվեստն ու
քաղաքակրթությունը, ինչպե՞ս էին զրվելու կողք կողքի և
իրականացնելու գաղափարական ու գեղագիտական միևնույն
նպատակադրումը, մանավանդ որ նրանց մեջ կային ժողո-
վաբանք ու պետություններ, որոնց՝ Հայերի նկատմամբ վե-
րաբերմունքից զժող էր բանաստեղծը և արժանացնում էր
սուր քննադատության, մանավանդ որ պոեմի գրվելու ժամա-
նակներում գեռես ոչ մի պետություն չէր ճանաչել ցեղասպա-
նությունն ու դատապարտել այն: Այսպես, հակահայ դիրքո-
րոշման և թուրքազաչաչալան քաղաքականության համար բա-
նասեղծը դատապարտում է Գերմանիային ու Անգլիային,
սակայն նրա պոեմում ակնածանքով ու մեծարմամբ կերպար-
վորված են Գյոթեն ու Հայնեն, Շեքսպիրն ու Բայթոնը:

Ցեղասպանողթյան և առհասարակ հայոց մեծ ողբերգու-
թյան պատկերն ուրվազնելիս Հովհ. Շիրազը գրսևորել է լայն
աշխարհայացք ու խոր կենսազգացողություն, ընթել է ժամա-
նակատարածային, ժողովուրդների ազգային ու կրոնական
պատկանելության սահմանները՝ համերոտյան հնազարդից հաս-
նելով մինչև 20-րդ դար, տեսագլուխում ունենալով հայ –
թուրքական հարաբերություններին առնչվող բոլոր պետու-
թյուններն ու ընդգրկելով երկրաբանակ ողջ մարդկությունը:

Նենց այստեղ էլ ծառանում է գլխավոր զմայրությունը՝
ինչպե՞ս ոգևորեն ընդգրկել այն ժողովուրդների մեծերին,
որոնց պետությունները թուրքիայի դանդախիցներն ու հովա-
նավորներն են եղել անցյալում կամ հիմա: Ձե՛ որ «մեծ մարդ-
կանց հայրենիքներում» և՛ Ամերիկայում, և՛ Անգլիայում, և՛
Գերմանիայում, և՛ Ֆրանսիայում, և՛ Իտալիայում, և՛ Թուրսա-
սանում եղել են մեծ մարդասերներ, որոնք իրենց վճռական
բողոքի ձայնն են բարձրացրել ընդդեմ ցեղասպանության ու
Հայերի բնաջնջման: Մի Հենրի Մորգենթաու ու Ալիս Սթուուն
Բլեյբուել, և՛ Անտոյ Թրանս ու Պրեն Քիլյար, մի Հանրի Բար-
բիուս ու Ջեյմս Բրայս, մի Յուճանես Լեփսուս ու Գարեն

Եփփեմ, մի Մաքսիմ Գորկի ու Վալերի Բրյուսով... Այո՛, գծրախա-
տարար՝ մի՛, և ո՛չ նրանց պետություններն ու ժողովուրդները՝
ժամանակին և Հետո:

Հովհ. Շիրազին հաջողվել է գտնել այդ իրոք գծվարին
խնդրի գեղարվեստական լուծումը:

Ինքնին հասկանալի է այդ ոգեխմբում Դանտեի ներկայու-
թյունը, որովհետև, ինչպես նշեցինք, նրանով են պայմանա-
վորված Հեղինակային մասհզացումն ու սյուժետային գոր-
ծողությունը զլխավոր գիծը: Նա՛ է ստեղծել «Ժոխքը», «Բավա-
րան», «Դրախտ» եռագրությունը՝ «Աստվածային կատակեր-
գություն» քնդհանուր խորագրով, անիրական գոխքի զազա-
փարը նա՛ է իր հզոր երևակայությամբ վերածել գեղարվես-
տական պատկերի, որ հրատարակվել ու աշխարհում տարածվել
է Գյուստավ Գորկի Հայտնի նկարազարդումներով:

Այս Դանտեին է Հեղինակը պաղատազգին հրավերով անի-
րականից բերում դեպի իրականը, որ դար և իր աչքերը «Հայոց
վշտի կշեռքը գարձներ», տեսնող թուրքերի գործազրած «զար-
հուրատեսիլ ու ցատմնամեծ» մահվան ձևերը, որ չկային նրա
իսկ «մտքի ծնունդ» անմեղ գոխքում:

Եվրոպա—Դանտեին ու աշխարհի մեծերի ոգիներին Փոքր
Հովհաննես Հեղինակն Անդրանիկի Հետ միասին ցույց է տալիս
միլիոնավոր Հայեր կերած իրական գոխքը, որից ստրաժիմա՝
Հեռանում է Դանտեն՝ նզովելով նրանց, որ երկ «զործով են
մրցել» իր պատկերած գոխքին, որը «թղթի վրա նկարված
հրդեհ» է Հայոց եղևոնի «ժանտ հրաբուխ» ու «հրածով»
գոխքի համեմատ: Այնտեղ պատժվում էին իրավ մեղավոր-
ները, այստեղ՝ անմեղ մի ողջ ժողովուրդ: Եվ «զարհուրատեսիլ
ու ցատմնամեծ» միլիոնավոր մահեր տեսնելն անգամ մեղք էր
ստեղծել, ո՛ր մնաց գործելը: Եվ նզովելով եղևնազորքներին,
աշխարհի քար ու անտարրեր մարդկությունը, իր սուրբ
Իտալիան ու ողջ Եվրոպան՝ Դանթեն Հեռանում է քավարան:

Եվ յոթանասուն գիշերներ մեղ Հեռ

Չափելով երկիրն այս եղևնապետ,

Այս նոր գոխքին էլ չտոկաղով,

Աչքերի մեղքին չդիմանալով՝

Կրծքի մազերն էլ սոկելով, լալով՝

Քավարան իջավ իր խցին Հյու

Դանթեն՝ իր աչքի մեղքը քաղելու...

Տրոյական պատերազմի հանճարեղ աքապատումի Հեղինակ
կույր Համբրուսի մասնակցությունը այդ ոգեխմբի երթին նույն-
պես հասկանալի է. թուրքերը Հնագույն քաղաքակրթությու-
ն ստեղծած Հույն ժողովրդին ևս ճակատագրական հարվածներ
են Հասցրել կործանելով բյուզանդական կայսրությունն ու
զավթելով նրա ծովային և ցամաքային պատմական տարածք-
ները՝ բռնազավթելով Համաշխարհային քաղաքակրթության
բնօրաններից մեկը:

Ու գնում էինք, վկայում անշեղ՝

Դառած դատավորն աճավոր դահճի-

Լուս էր շեմերը, կույր աչքերի տեղ՝

Բաց էին անթիվ աչքերն իր խոցի:

Եվ ինքը՝ Համբուս և Կեսմի՝¹⁷³ գեմ

Դեռ վրեժխնդիր ուրվականն իր Հոր,

Եվ նա, որ թի՛ Հոր, թի՛ որդու վսեմ

Հայրն է և Հայրը այրերիս բոլոր

Ինչպես վեճ լուսինն՝ աստղերում նսեմ,

Նարեկացու Հեռ զալիս էր մուրք,

Իր Նիդակակիր անուևով անգամ

Վարդապուտում էր մեր Հույսն արևոքամ...

Եվ Նիդակակիրն իր աղբից լոկ ինքն ինձ Հույս բուրվառած՝

Նարեկացու Հեռ՝ երկու մարմերով մի գլուխ դառած՝

Հայտնվում էին մեր ողևհույրը զլխավորելով,

Եվ անցնում էինք գոխքից գոխք՝ Հույս բուրվառելով:

¹⁷³ Այստեղ ունի շքարկոյան Դանթեի հորեղբայր Կլավդիոսին, որը բուժամուրելով սպա-
նել էր իր եղբորը, անուսանցել նրա կնոջ՝ Դերուտոի հետ և տիրել Դանտեարքայի գահին:
Իսկ Արգամակիղը Երեսարն է Ա. Մ.:

Ուշագրավ են Հոմերոսին, Նարեկացուն, Շեքսպիրին տված չիրագյան գնահատականները, մանավանդ ողբհույժի երթը գլխավորող «Նարեկացու հետ» երկու մարմնով մեկ գլուխ գանած» գույշի պատկերը շատ է պերճախոս: Դեռ 1942 թ. Հովհ. Շիրազը շքեղ պատկերով բնորոշել է Շեքսպիրին՝ որպես մարդկային ցեղի երբևէ ծնած մեծագույն հանճարներից մեկին.

Շեքսպիրին

Ինչքան վեր նայեմ՝ ինձ թվում է, թե
Այս մոլորակից հավերժ հեռավոր
Լուսինն արձամի գաղաղղ է եղել
Ու լուս գիշերը քեզ հուզարկավոր,
Երկինքն էլ կապույտ գերեզմանն է քո,
Արևը՝ վրադ չիրիմ լուսավոր:¹⁷²

Անգլիացի հանճարի մեծությամբ աշտարակի տիեզերական ընկալումով ու մեծարումով չբավարարվելով «Անձահ Շեքսպիրին» ձեռնած իր մի բանաստեղծություն մեջ էլ Հովհ. Շիրազը մեծ անգլիացուն տվել է համեմատն բնորոշումներ հակադրելով նրան նույն Անգլիայի պետական թուրքամետ ու հայափնաս քաղաքականությանը.

Փո մատյանները՝ գրքերն իմաստուն,
Չէի տա անգամ ես իմ սիրածին,
Չէի տա նրան, որ նա համբուրեր,
Վախենում էի, թե ես չընրի:

Երկրպագել եմ հանճարդ փնձ,
Ինչպես Հայրենի իմ Նարեկացուն,
Բայց ների՛ր, թե իմ խոսվքը խոհեմ –
Բարին չհասցնեց չարի ստածուն:

Ես քեզ եմ խելում, ոչ ազգիդ գառը,
Երբ մեր գոանը շոքեց սե մառը՝

Գառը բրբջաց թե՛ «նավերը մեր
Չեն կարող ելնել Արարատն ի վեր»:

Եվ մենակ մնաց իմ Հայոց ազգը,
Ինչպես փշերի ծովի մեջ Հասկը,
Եվ մեզ եղեռնեց յամպանը սե, –
Նիցեց մեր հողն էլ ստավամուպազե:

Նա ուղեց այրել և Նարեկն իմ հին,
Բայց ազգերի մեջ այս իբրամերձ
Դու և Նարեկը մարդկության գառին՝
Երկու գլխամի Աստված եք հավերձ:

Եվ իմաստությունը կույր ու խելախեղ
Չգտում է կրգու հասնել մեր գահին,
Օ՛ր, ոսկի ցնորք, պատրանք իմ անշեղ,
Կհասնենք՝ թե որ չհասնենք մահին:¹⁷³

Եղեռնի դժուր այցելող ողբհույժի մեջ Շեքսպիրի ընդգրկումն ունի թե՛ քաղաքական, թե՛ գեղագիտական լուրջ կոմպաններ: Ենթահային պետությունն իր ներքին ու արտաքին քաղաքականությամբ, Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից հրաժարումով, ինտերնացիոնալիզմի քարոզներով հենց Հայ ժողովրդից էր թաքցնում Եղեռնի իրողությունը, արգելում պատմական ճշմարտության բացահայտման բոլոր փորձերը գրեթե այնպես, ինչպես թուրք պետությունն էլ այսօր իր սեփական ժողովրդից թաքցնում և աշխարհի առջև ուրանում ցեղասպանությունն ու հայկական հոգերի բռնազավթումը:

Մինչև 1960-ական թթ. լույս տեսած Հայոց պատմության դասագրքերում որևէ արտահայտություն անգամ չկար այդ մասին: Եղեռնից վերապրողները, սակայն, մի-մի կենդանի Հավիտ էին՝ իրենց Հայրերի ու պապերի, միլիոնավոր անմեղ

¹⁷² Չ. Շիրազ, Երգերի գիրք, եր., 1942, էջ 37:

¹⁷³ Չ. Շիրազ, Թճար Նայաստանի, գիրք երրորդ, «Նայաստան» հրատ., եր., 1974, էջ 122:

գոհների վրեժխնդիր ուրվականների համառ պահանջին ենթակա, մի-մի թաքուն կենդանի դատապարտ էին նոր սերունդների համար, և միայն գեղարվեստական գրականությունն էր պատկերում համազգային ու համամարդկային ողբերգությունները ինչ-ինչ զրվագներ, և միայն մի քանի պատմաբաններ (Միքայիլ Լևոսիյան, Երվանդ Մարգարյան, Զոն Կիրակոսյան և ուրիշներ) էին այդ համազգային խնդիրն արծարծում իրենց աշխատություններում: Դրա հետևանքով էլ Եղեռնից հետո նոր սերունդը մինչև խորշուղջյան «ձնհալը»՝ 1950-60-ական թթ. ցեղասպանության մասին ճշմարտությունը տեղյակ էլ չէր նրա ու ճիշտ տյնպես, ինչպես Ենթադրելի Համլետը չգիտեր իր հոր եղբրական մահվան մասին բուն ճշմարտությունն ու հորեզրայր Կլավդիոսի ոճբագործությունը: Բացի նրանից, որ ակնհայտով գուզահեղձում են ոճբագործ Կլավդիոս - Թուրքն ու Համլետի հոր վրեժխնդիր ուրվական - Եղեռնի գոհները, որոնք միշտ իրենց «մորթված մարմնի վրեժն են հուշում», մեծ անզվիացին բնութագրվում է որպես Թուրքի էություն և նրա ցեղային բուրբ ստոր որակների հրաշալի գիտակ ու ներկայացնող:

Գանեմաբքայի ազնվասիրտ իշխանի անմրցելի կերպարն ստեղծած Ենթադրելի 1570 թ. պատահած դեպքեր պատկերող իր «Օթելլո»՝ ողբերգության մեջ «փաթեցողավոր թլփատված մի շուն տանիկի» կողքին կերտել է քուսիյան, խարզախուսիյան ու սրիկայուսիյան անմրցելի տիպար Յազոյին, որը կրք կամեւում է արգարանալ և մյուսների կասկածներն իրենից հեռու դանել, երկու զրվագներում Թուրքի ստորազույն էություն խոր իմացություն է կրգվում:

Մի զրվագում նա Դեզղեմոնայի կշտամբանքին հակադարձելու համար այսպես է արգարանում.

ԴեՋԻԵՄՈՆԱ
Թուհ քեզ քամաող:
ՅԱԿՈ

Ճիշտ է, Թուրք դառնամ, թե սուտ եմ սուտ¹⁷⁴:

Մի այլ զրվագում գերխարզախ Յազոն զարմայ է կրգվում, բայց Կասոյի ներկայությունը.

ԿԱՍՈՒՈ
Ճիշտն սուտ, ինչդեմ:
ՅԱԿՈ

Անազնիվ մարդ եմ, եթե սուտ ասեմ¹⁷⁵:

Ուրեմն՝ Ենթադրելի 16-րդ դարում հրաշալի գիտեր Թուրքերին: Թուրք դառնամ, թե սուտ եմ սուտ և անազնիվ մարդ եմ, եթե սուտ ասեմ արտահայտությունները, այս դեպքում համարժեք լինելով, Յազոյի համար պարզ ինքնարժեքություններ են, որոնց համեմատությունից պարզվում է, որ Թուրք - ը և անազնիվ - ը նույնանիշ - համանիշներ են, գրությունը ստորեր, սակայն նույն կամ մոտ գեշ, վատ, ստոր, նեղ իմաստներն արտահայտող բառեր, որոնք Ենթադրելի զործածել է իր հերոսի էությունը բնութագրելու համար:

Ինչպես երևում է, սա նույնպես նկատի էր ունեցել «Հայոց դանթեականի» հեղինակը Ենթադրելին կերպագործելիս¹⁷⁶:

Հասկանալի է նաև Բայրոնի ներկայությունը: Լորդ Ջորջ Գորդոն Բայրոնը՝ սոմանախոյի հիմնադիրներից ու խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, իմանալով Հայոց մշակույթը և հերոսական ու ողբերգական պատմությունը, այնքան էր տարվել զրանցով, որ այցելել էր Վենետիկ՝ Սուրբ Ղազար կրգու Մխիթարյաններին, Հարություն Ավգերյանի օգնությամբ Հայերեն գրարար էր սովորել, բնագրով կարգացել Հայոց

¹⁷⁴ Վ. Ենթադրելի. Ընտիր երկեր երկու հատրդով, հ. 1, եր. 1964, էջ 217:

¹⁷⁵ Սույն տեղում, էջ 288:

¹⁷⁶ Պեմը լրամշակելու ժամանակներում 1960-ական թթ. սկզբներին, 3. Հիրազի գրասեղանի անպակաս էր Վ. Ենթադրելի սևակա հատրդակը: Ակտան էի, որ այդ հատրդում և մանավանդ «Օթելլո»՝ ողբերգության տեղում ինչ-որ կարևոր բան էր գնաղում: Այս հիշողության քնաղաղրով վերսերնցեցն ողբերգությունը և հանգղեցի, որ Ենթադրելի «Ներկայությունը» պոեմում և նրա կերպագրումը եղել է միանգամայն մատասեղանակալ. - Ս. Ս.:

մատենագրությունը և, որպեսզի իր ժողովրդին ու աշխարհին
ծանոթացնեն Հայոց գիտությանն ու մշակութիին, անդիբնեով
կազմել էր Հայերենի դասագիրքը ու Հայերեն – անգլերեն բա-
սարան: «Բայրոնը և Հայերը» գրքի հեղինակ Խաչիկ Գաշ-
տանցն ու Հովհ. Շիրազը մտերիմներ էին, և զրա շնորհիվ վեր-
ջինս Կոնյանի ամելի շատ մանրամասներ գիտեր Հայերի ու
Հայաստանի հանդեպ Բայրոնի վերաբերմունքի մասին, քան
կային ևս. Գաշտանցի «Բայրոնը և Հայերը» գրքում: Ուստի
պատահական չէ, որ Հ. Շիրազն իր պոեմի բնարաններից մեկը՝
առաջինը, վերցրել է Հենց Բայրոնից, որը Հայաստանի և
Հայերի մասին մեծ անգլիացու լավատեսական կոաչումներից
է. «Ինչ ալ որ ըլլա հայ ազգի բախար (իսկ նա տերապին էր),
ինչ ալ սպասն անոր ապագային մեջ – իրենց Հայերի երկիրն
ու ազգը կը մնան ամենեն հետաքրքրականը աշխարհիս
երեսին»: Բայց ահա Բայրոնը, Գյոթենե, Հայնեն ոգիներ չայ
ու այլազգի ուրփակերպարների հետ միասին Վասպուրական-
ուսմ Վանուս ու Արտամեսուս, տեսնում են դժոխքի վերած-
ված Հայոց երբեմնի դրախար:

Եվ լուս ևերս մասը քաղաքադուխի՝
Կարծելով իբրավ դրախտ ևեր մանուս,
Դեռ կաթ էր ընկնում Համերն իմ կուխի՝
Աես կորցրած բախան էինք գտնում,
Բայրոնը Հարքեց խնձորի բույրով,
Ձքնալ ճակատը խնձորվեց-չիկնեց...
– Այս է դրախտը. – Գյոթեն էլ կրկնեց, –
Եվ կրճքիս Հովեց Բայրոն համբույրով:
– Ահա ինչ արավ Թուրքն ինչի համար՝
Այս կես խնձորն էլ երկնից է գուհար...
– Թե՛ աղամանդ էլ, – շշնջաց Հայնեն, –
Այս բույրերն ասես Աստու մայնն են...

Աշխարհահռչակ ժողանկարիչ, աշխարհի բազմաթիվ ակա-
դեմիաների անդամ, շուրջ վեց հազար կտավ ստեղծած, այդ
թվում՝ ժողանկարչական գլուխգործոցներ նաև Հայկական

Ջարդերի թեմաներով, Հովհաննես Այվազովսկու Կերկայութ-
յունը Կոնյանի բացատրելի է: Նա Կոնյանի թուրք պետու-
թյան կողմից էր պարզեատրվել շրանշաններով, սակայն 1894
– 96 թթ. համերկ կազմակերպած երեք հարյուր հազար Հայեր
Ջարդից հետո ոչ միայն իր շան վզին կապելով ծովն էր նետել
սուլթանի պարզաները, այլև ստեղծել էր Ջարդերը պատկերող
հզոր նկարաշարը՝ «Հայերի Ջարդը Տրապիզոնում 1895 թ.»,
«Նավերի բեռնամբը», «Թուրքական նավերը Հայերին նետում
են Մարմարա ծովը» և այլն: Մահվան պատճառով անապարտ
է մնացել «Թուրքական նավի պայթյունը» նկարը: Ահա ինչու
նա պոեմում պատկերվել է որպես Մեծ Հովհաննես:

Հայոց ցեղասպանությունն եղևուհազժոխք այցելած ոգե-
խուսմը կազմողներն այնքան են միասնական ու համամարդ-
կային, որ նրանց կերպարներն ազգային տարբերակումներ
իսկապես չունեն. բոլորը միասին թե՛ ողբում են, թե՛ գառա-
պարտում: Եթևայդ մեծ ոգիների պես Հայոց ողբերգությունը
ժամանակին վերաբերվելին մեծ անբուժյուններն ու մեծ աղ-
զերը, Թուրքը երբեք չէր հանդգնի դիմելու այդպիսի օճա-
գործության:

Ով լի՛ր լուս թյուն... Ու լուսն են, տես,
Հյուսիսն իր հավերժ սառույցների պես,
Հարավն իր լուսնի մահիկի նման,
Արևելքն՝ ինչպես ծուխն իր զեյլանի,
Արևմուտքն՝ ինչպես պոռնիկն անասճման...
Այնինչ, ո՛վ աշխարհ, թե քո լրբերի
Այս չորս բերանով գոռայիր մի Հեղ՝
Պատյան կբաշվիր Թուրք սուլթանի,
Ձէ՛ր հորդի դժոխքն այսքան խեղճանկ,
Մի բուս չէր մնա ծովից՝ ազը մեր...

Մենքուր Մաշտոցի, Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Կամի-
տասի և Աղբարանիկի ուրփակերպարները Հայոց Մարտի, Ոգու,
Խզնի և ռազմական ուժի մարմնացումները լինելով, առա-
ջնորդել են մեր ժողովրդին նրա ողջ գոյապայքարի ընթաց-

բում: Պատան չը, որ հենց որանք՝ որպես դասակիցներ, լինենք Դանտեին, Համբրտին, Շերտլիբին, Գյոթեին, Հայնեին, Բալթոնին բնկերակցողները, և բոլորով միասին զնաարար գառապարանին ցեղասպանին:

Մեծ Եստեղացու ուրվաբայլ ոգին
Ու մեծ Դանտեի ոգին ուրվաբայլ՝
Համարայլ, ինչպես իմ աչքն իմ աչքին,
Համբրտի Հեռ ընթանում էին սուրբից մոռյլ...

Այսպես է Հ. Շիրազը լուծում Հայոց վշտի համամարդկայնության խնդիրը՝ հասկապես ընդգծել կամենալով, թե տեսնե՞ք՝ ո՞ւմ են կոտորել թուրքերը, աշխարհի մեծություններին Հավասար մեծություններ մնամ և Համաշխարհային բաղաբարկությունը իր մեծ ներդրումով Հարասպարած ժողովրդին:

Այդ ուրվահերոսները պոեմում Հաճախ են դառնում Հեղինակի խոստովողը, և այն, ինչ Հնչում է նրանց շուրթերով, բխում է նրանց ոգուց և Համապատասխանում է նրանց ստեղծագործության մարդասիրական էությունը:

Այնքան ազգավորիչ են Մեհրոպ Մաշտոցի, Խորենացու, Եստեղացու, Անդրանիկի և Հայոց մյուս անմահների գիտարկվող ուրվակերպարները, որ ընթերցողը լիարժեք պատկերացում է կազմում նրանց գործի փրկարար դերի, ազգային ու համամարդկային նշանակություն մասին: Նրանց անմեռ ոգիները հեղինակի հրավերով գալիս են պոեմի «գործողության» սկզբում Դանտեի Հայտնվելուց անխիջպես հետո.

— Հայտնվե՛ք և դուք, ո՞վ Հայ անմահներ,
Ի՞նչք, թե իրավ անմահ է ոգին. —
Դու, սրև՝ Մաշտոց, զեթ ստվերդ բեր,
Քո ուրվականն էլ մահ է մողոթին:
Հայտնվիր և դու, մեծ Եստեղացի,
Ո՞վ աստվածապիղ, մուշա և դու,
Դու, որ բուրվաճան են մեծ ստեղծվածի,
Որ կշուճում էիր մեղքերը մարդու,
Աստու պես էիր Աստու, Հեռ խոսում,

Ի՞նչք, որ ազգիդ վիշտն էլ կշուս
Աստորանների լարիթինթուսում...

Սուրբ Մաշտոցի գործի գիտական բնութագրումների կողքին միշտ էլ եղել են նրա գեղարվեստական բնկումն ու պատկերավոր գեղահատումները: Ս. Արշակունյացի, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, Բաֆֆին, Դեմիրճյանը իրենց երկերում և մանավանդ Մամանթուն «Սուրբ Մեհրոպ» պոեմում արդեն ստեղծել էին Մաշտոցի կերպավորման ու նրա գործը գեղարվեստորեն արժեքելու որոշակի ավանդներ: Հ. Շիրազը, այնուհետև Պ. Սևակը այդ ավանդների շարունակողն էին նորագույն շրջանի Հայ բանաստեղծության մեջ¹⁷⁷:

Մաշտոցի նկատմամբ Հովհ. Շիրազը միշտ էլ ունեցել է ասանձնահատուկ վերաբերմունք. մեր ազգի այս գերագույն մեծին իր բազմաթիվ բանաստեղծութայններում, «Բառայակներ Հայոց լեզվապատումի» շարքում և մանավանդ 1962 թ. գրած «Հայոց հրաշքը» պոեմում նա իրոք սրբացրել ու փառաբանել է «այրենաթուր գորավար» Մեհրոպ Մաշտոցին՝ նրա անըստ-գյուտ, հանձարեղ գյուտի ազգափրկիչ դերի խոր ըմբռնումով¹⁷⁸:

Ամեն ասուղ Հայ ազգապահ մի գինվոր է անմեռական,
Ամեն բաղձ Հայոց մի գուռից, այրուրեղձ՝ բանակն Հայկյան,

¹⁷⁷ Տես մեր «Մեհրոպ Մաշտոցը Գովհանես Շիրազի և Պարույր Սևակի հայացքով» ու ստեղծագործությունը «Գրական հանդիպանք», գիրք Ա, Երևան, 2003, էջ 408-420:

¹⁷⁸ Ելանիկ Նուրի քաղաքային դպրոցներից մեկում, ուր ուսուցիչ էր բանաստեղծի ջոթը Սամվել զուար և իմ գասրնկերուի Լենա Վահանյանը, Գոյի, Շիրազի ռես հանդիպան ավարտին դպրոցի գլխարարին ընթերցատառում հյուրասիրության սեղան էր բացված: Դաստիկն հայ դասական գողմեղի ճկաներն էին փառված, իսկ ճակատային պատով մեկ Գր. Ռուխկյանի «Մեհրոպ Մաշտոց» մեծադիր նկարն էր: Իմ սուղա-վորություն էր, քն թողող մեզ ստեղծակից են: Իր կենաց բաժնակամատուն Գ. Շիրազը մասն որոշեց պատմաբանոր գնահատել մեր գրականության մեծերին և մանավանդ Մաշտոցին. «Եթե կշեռի մի նմարե՞ր դենք բոլոր հայ գողմեղին, իսկ մյուս նմարին Մեհրոպ Մաշտոցին, էլի Մաշտոցը մանր կշեռն:

Պրասան Ազատ Գասարյանը հարցրեց:

— Վարպետ, նրա քնձ էլ դենք կշեռն այդ նմարին:

— Դճնի հետ գողծ յունիս. ես կշեռ բոնոն նմ., - տեղիստեղը սրամտեց Շիրազը:

Այլ զորք՝ անբերդ, անթուր, անտեղ, անվերտ, աննեւ ու աննիզակ, բայց զուրս մղեց յաթ թշնամու բյուր զորքերին սրնակղակ...

«Հայոց դանթնականը» դատատանամատչան-պոեմում մերոպ Մաշտոցի կերպարն ստեղծվել է սրան զուգահեռաբար, սակայն գեղարվեստական ու զաղարկարական միանգամայն այլ նպատակադրումով: Այստեղ նա պատկերված է որպես զարբեր Հոլովույթում Հայ ժողովրդի լուսավորութայն շահը բացառաբար, նրա մտքի և Հոգու զանձնը մայրենի լեզվով Հրապարակում ու աշխարհին ներկայացրած մեր ժողովրդի Հոգևոր Հայր, որը ծնողի իրավունքով, երբեմն լուսլայն, երբեմն մուռնեղով դատապարտում է մարդկութայն լուսլայնն ու իր սիրատուն զավակների Հանդեպ զործված աննախատեպ ոճիրը: Անշուշտ, նրա ոգևորն կերպարն ստեղծվել է այն սկզբունքով, թե ողջ լինելու ղեկբում ինչ կաններ և ինչ կասեր տեսնելով Հայութայն բարբարոսական եղանակներով բնաջնջումը, նրա ստեղծած՝ Համայն մարդկութայնը պատկանող մշակութային ու գիտական արժեքներն ոչնչացումը, տասնյակ Հազարավոր ձեռագիր մատչանների այրումը, Հայոց քաղաքների, գյուղերի, վանքերի, իր իսկ ստեղծած զպրոցների վայրագ ավերումը, Հայութայն պատմական բնօրրանի բռնազավթումը: Եւ այն երևույթներն են տեսնում ոգևորների բոլոր այրերը, սակայն նրանցից յուրաքանչյուրը յուրովի է ընկալում տեսած ու մեկնաբանում, ու բոլորը դատապարտում են միասնաբար:

Բայլ առ քաղ բացվում են իրական գոտրքի պարունակները, և Հայ ու ալլազգի ուրվականները աստիճանաբար Համբաձխվում են տեսնելով եղեռնագոթորքի ստրասիները: Աստվածային պատժով պատժված Հանցապարտ ոճրագործների տանջանքներով ու մահերով հրճված Դանտեսն առաջին տեսարանները կարծես խաղաղ է ընդունում, լուռ է, ինչպես իր երկրին ու սփինքսաշուրթ եվրոպան, «քար Ամերիկան, քարն Ամերիկան, քարն Հյուսիսը, քարն Հարավը, քարն Ճապոնն ու քար Ֆրանսիան», բայց երբ տեսնում է իր երեակալութայնը ստեղծած գոթորքից այնի զարհուրելի պատկերներ, ինքնապաշտպանութայն Հնարավորութայնից նախապես զրկված մի

ողջ ժողովրդի բնաջնջելու թուրքերի ղեկային արարքները, լուռ է Անդրանիկի, Փոքր ու Մեծ Հովհաննեսների, Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու մեկնութայնները, սակուն է տեսածից, իր դափնեպսակը նետում Արաքսը, ծագում է մեջքը, խելահեղվում է, ու ճակատին կեճեռներ են Հայտնվում, նա ինքն էլ դատապարտում ու նզովում է իր ու մյուս ազգերի եղեռնածին լուսլայնը և գնում քավարան «իր աչքի մեղքը քափելու»:

Հայնեն ու Գյոթենն իրենց երկրի Համար նորից «պատանք են գործում»: Նրանց միանում են նաև մյուս մեծերը, ու բազմազգ ոգևորումը միավորվում է ընդդեմ Հարագործների: Նրանց այս Համերաշխութայնը, եղևնը միասնաբար դատապարտելու Համախումբ վճռականութայնը դառնում է անկասելի ուժ, որի ղեմ անդոր է Գյոյսի «սեծ սքրաթընց» Ելզրից, նրանց վրա Հարձակվող ցերբերանման թուրք զամփոը.

Եվ անցնում էինք մասխոճ ու լուռ
Ելզրի ժողով այն գոթուպուռ,
Երբ զամբու մի շուն՝ գոթուքի շան պես՝
Փանա Յերբերի պե՛ս՝ վրա պրծավ մեղ-
ժանիքը ձեցեց Մաշտոցի ոտքին,
Որ թաղեր անհետ Հայ գիրն ու ոգին,
Չկեց, բայց փշրեց ժանիքն ստալին:
Փանիքը ձեցեց Սուրբ Նարեկացուն,
Որ մե՛կ Նարեկով կրկրեց Աստուճն,
Չկեց, բայց փշրեց ժանիքը երկրորդ:
Փանիքը ձեցեց Նուրբ Կամոսախն,
Որ երգով ծուռկի թեթեց Փարիզին,
Չկեց, բայց փշրեց ժանիքը երրորդ:
Փանիքը ձեցեց Հոմերին ձյունած,
Որ չազանձն Բասթորը Հունան,
Չկեց, բայց փշրեց ժանիքն էլ չորրորդ:
Փանիքը ձեցեց մեծ Խորենացուն,
Որ թաղեց Հայոց մատչանված ամուն,
Չկեց, բայց փշրեց ժանիքն Հիպոկրոթոս...
... Փանիքը ձեցեց Դանթենն մուրը.

Որ չվկայեր՝ թե տեսան իրավ գծոյր է մի նոր;
 Եվ իսկույն ձգեց Փոքր Հովհաննեսին,
 Որ էլ չզուտ «Փրկելի Մատիսին...»
 Ազեց, բայց գովեց, վեր թափ, ընկալ,
 Վերջին ժանիքը իր հողը խրեց և շնահանգալ...
 Եվ մենք Հոմերի աչքով էլ մթին՝
 Եան մի աչքի մեջ տեսանք Թալեաթին,
 Մյուս աչքի մեջ սուլթանի սուսանք...

Գտակերն, իրօք, ընդգրկուեն է ու բազմաշերտ. թուրք աննանկեր գամփուր համախարհային բազմապիթուժյան թշնամին է, բայց նրա բոլոր ժանիքները պիտի փշրվեն, եթե միավորվեն աշխարհի բարի կամքի տեր մարդիկ և պատասխան պահանջեն ոճրագործից, նրան կանգնեցնեն ահեղ դատասանի առաջ:

Գունի առաջին գլուխներում այնչի ընդգծված ներկայանում են Հեղինակ Փոքր Հովհաննեսը, Թորենացին ու Նարեկացին, մեր «անագորույն վշտի վկա» Անդրանիկը. նրանք են նախ Դանտեի, ապա և մյուս երևակայական «Հյուրերի» առջև բացում Հայոց մեծ ողբերգուժյան վարագոյրը, պարզում նրանց խորախորհուրդ այցելուժյան նպատակը: Դրանցից մեկը «Հոտերի աղեղն աչքերով գինած, մի աչքը՝ թրի նման շողացողը, մյուս աչքն արցունքի նման զողացող» Հայոց Գարիբալդի – Անդրանիկն է, որ

**Լեզվի րոչն Հանում օրտի Հնոցի՝
 Բացում էր դժոխքն Հայ գանթնական:**

Անդրանիկի կերպավորումը նույնպես արվել է որոշակի նպատակադրումով: Նրա հատուցման թուրն է կայծակել եղևունովոլ ժողովրդին փրկելու գանթնադժոխք ճանապարհներին: Չլինելու Հայոց ազատագրական պայքարը, չլինելի Անդրանիկն ու նրա գինակիցները, այդ շրջանի Հերոս ազատամարտիկները՝ մի Հայ անգամ չէր փրկվելու թուրք – գերմանահրեա ռազմագետների նախագիծած և դաժանազույն եռանդով իրականացված ցեղասպանությունից: Բայց ահա խորհրդային

իրականություն մե՛ջ եղեանի զոհերի հետ միասին մոռացություն էին դատապարտված թե՛ Անդրանիկը, թե՛ բունազգայի ենթանակվածների փրկարար մյուս ազգային հերոսները: Գերմանացին թուրքական բանակների ու ռե պատել է միայնակըն Հայ ծեղրերի, մայրերի ու մանուկների վրա, բայց Անդրանիկի անունն անգամ սարսափ էր նրանց համար: Անարգար աշխարհի զեն այդ լեզվեղացած հերոսի գայրույթը հիմնավոր պատճառներ ունի. Հայոց գանթնական ողբամասյանը անպատենների մագաղաթներին գրվել է Սաղայելի գրչով, Հայոց արյան գետերով ու «գլանյն լեռների բազմակետերով», ինքը՝ ազգային հերոսացետը, «Հայրենիքի տեր ու պաշտպան» Անդրանիկը, մահեց հետո էլ Հայրենիքում չէր, որպես Հայրենակուրույս ու որդեկորույս Հայր լլկվում էր Հայոց նախնիների ողբերգական հուշերով, նրա ոսկորները ճեշվում էին օտար Հողի տակ, մի կարճատև պահ միայն նրան խաղաղեցնում են Նարեկացին ու Փոքր Հովհաննեսը՝ մարգարեանալով.

Ողբաց Անդրանիկն, ու օրտի զողով
 Ես մամուլայի: «– Ախ, Հայր իմ, գնանք,
 Քո սուրբ աճյունն էլ դեռ տուն կրերենք
 Անյունի նման մեծ կոմիտասի,
 Քո անմահ թրին պատյան կզարձենք
 Միայն արմատն ձյունը Մատիսի,
 Միակ պատյանը Հայոց թրերի,
 Գալիք աշտանակն Հայ գիր – մամերի...»¹⁷⁹

Նուրք քնարերգու Հ. Շիրազն օժտված էր նաև կպիկական հզոր ու արգաստարեր մթերքերով, որոնք զբեռնովել են նաև այս պոեմում: Իր «Ապիտակ միավորը Փարիզում» պոեմից առաջ նա արդեն կերտել էր ժողովրդի սիրելի հերոս Անդրանիկի իրօք մոնումենտալ հզոր կերպարը «Հայոց գանթնականը» պոեմում, որի տարրեր գլուխներում հերոսը պատկերված է

¹⁷⁹ Չորսվար Անդրանիկի անունը Փարիզից Նայաստան տեղափոխվեց ու ետարդուտ անվտվելեց պոեմի զբլիտց ավելի քան կես դար ետո 2000 թվականին:

մարդկային վեհ նկարագրով ու ուղղմական կենսազրույթյան բնորոշ գծերով: Ինչպես իր ժողովրդի բանագաղթն էր հահել Արևմտահայաստանից Արևելահայաստան տեղափոխվելիս, այնպես էլ հինա սպառազեն հսկում էր ցեղասպանության գծուքում չբջոգ ուրվահանների երթը: Կա ազնիվ է վարել իր կռիվը թշնամու դեմ, ասպետարար էլ վարվել նրա կանանց ու երեխաների նկատմամբ: Սա՛ է բուն ճշմարտությունը Անդրանիկի մասին, և կենսական այդ իրողությունը Հ. Երրազը հավաստել է գեղարվեստի ճշմարտությունում: Անդրանիկի ահեց լեզուպատառ փախած թուրքերն ու բրգերը թողնում էին ամեն ինչ, անգամ իրենց հարազատ երեխաներին.

Ու երբ դուրս ելանք եղեռնաձորից՝
Մեծ Անդրանիկը Հայաստեց նորից,
Տխուր մայրսով, աչքերով ասումուկ
Գրկած բերում էր բորի մի լամուկ,
— Թողեր փափեր են, ճամփու մեջ գտա,
Ա.ս. պահե՛, — ասաց իր թիկնադահին, —
Գլխեն թե մեկ մազ պուխի՛ Հավաստա՛
Փլուխդ կերթա, — ու խթեց իր ձին:

Բայց չէինք անցել կամուրջը Կարսի,
Երբ ձորում տեսանք զլուխ մի մանկան
Ու երկարամազ զլուխ մի հարսի,
Ձկաք մարմինը ոչ մեկի... սակայն
Մեկը հայի էր, մյուսն՝ հայուհու,
Եվ հուշում էին շուրթերն էլ մահու՛
— Սպանեց այդ հեղ մանկան Հայրը մեզ՝
Հայրը լամուկի, որ Անդրանիկի
Գրկի մեջ գտավ գլուխը իր կյանքի:

Քանենկերորդ զլիխ 9—17 հասովաններում կպրկական Հորը չնչով պատկերված են թուրքական կանոնավոր բորքերի կազմակերպած հայ գաղթականների շարդն ու վերջիններիս օգնության հասած Անդրանիկի, Ամբաստի, Քեռու, Թորգոմի ու

մյուս վրիժառու ֆիզայինների հատուցման սրով մղած փրկարար հերոսական կռիվները:

Ողբամայան-դատաստանամայանում Հովհ. Երրազը կերտել է հին ու նոր Հայաստանների խորհրդանշական պատկերը Գիշատիչ Թուրքիան ամեն ինչ կարծես արել էր Հայությանն իսպառ ընծայելիս և Հայաստանը վերջնականապես բռնազավթելու համար: Թուրքը սպանել էր Հին Հայաստան մորը, բայց չէր կարողացել սպանել մեռած մոր արդանդում շարժվող մանկանը՝ նոր Հայաստաններին, որը, որպես «հայոց վաղգա» հունգը, մահվան գերանդուց փրկվել էր «սկիտում թաքնված հասկի նման»: Գեր Ռորի անապատում հայ մայրը ա՛յս մանկանն է ավազի վրա գրելով սովորեցնում մաշտոցյան գրերը, բայց թուրք սամուճի պես գալիս է հողմածնուկը քամին, ջնջում գրերը: Հայ մոր և անապատային վայրագ քամու պայքարը և՛ ուղղակիորեն, և՛ այլարանորեն հայոց պատմությունն է, հայոց զոյամարտի գեղարվեստական պատկերը: Հաղթում է մայրը, փրկվում է որդին, քանի որ նրանց ուժ է տալիս Մնարոզ Մաշտոցի ազգապահ օգին.

Ու երբ ստեղհար ելանք Բաղդազից, Միջագետք հասանք՝
Հայոց օթևան մեծ անապատը, տեսեք ի՛նչ տեսանք.—
Տեսանք հայ մի կին՝ վշտով իմաստուն՝
Հայոց օգին էր ցույց տալիս որդուն՝

Ավազի վրա գրելով գրերն հայոց սուրբ ոգով,
Գրում էր այբբենն ու որդուն այսպես ասում շշուկով.

— Այս - բնն - գիմ - դա - ե՛, մապա, լավ նայե, որ թուրքը վայե,
Որ լավ սովորես՝ մոր պես ընդ պիտի Աստված փառիայե.—
Ասում, գրում էր մայրը հայ գրերն ավազի վրա,
Բայց քամին դալիս՝ ջնջում էր հայոց գրերն հնօրյա,
Ինչպես յամաղանն ինքն էր ջնջելով արել տեղահան,
Անապատ քշել հայոց ողջ ազգին անդորք, անվահան,
Ջնջում էր քամին, բայց ջնջանկերը գրում էր տղան՝
Գրում էր նորից աստվածապարզև գրերը բուրբ,
Բայց քամին էլի թուր - սամուճի պես գալիս էր խուրբ,
Խուժում, ջնջում էր, բայց նորեն գրում, գրում էր տղան

Հայոց սոցիալական գրեթե անխորտակ, թրեթե արմատական, Գրուս էր մայրը ավաղի վրա այրուքներն Հայոց, աննչ եւ թուրքացի դու էլ, այ քամի, ինչ կուզես, այ օձ օ, — Ասում, գրուս էր մայրն իմաստասիրտ գրեթե ավաղին «Մասիս» էր գրուս, որ չմտանա որդին Մասիսին, Որ չմտանա՞ր անապատում էլ՝ Հայրենին խզված, Գրուս էր մայրը՝ Հույսը անխորտակ, բայց ե խաբելված: Ու Վանա ծով էր գրուս ավաղին վշտով անկողար, Բայց նորից դալիս նորից էր ջնջում քամին խելադար, նորից էր գրուս, նորից էր ջնջում քամին խելաճուկ, — Ահա ձեզ, մարդիկ, Հայոց պատմությունն ամենաչքեղ, Մայրը ցույց տալիս, գրուս էր որդին մաճից էլ Համառ, Գրուս էր որդին ... թեկուզ յամբուկ — ամուսն ինքը գար... «**Չես կարող ջնջել, — մանկաց Մեղսոց Մատոցի ոտին, — Ջնջել չես կարող, ո՞վ հողմածնեւեղ, վա՛յ քո Մողորին, Չես կարող կարել Հայոց մասները, ո՞վ թուր անկրակ, Բանդի Աստուս տաք մասներինց մեկն Հայն է, իրա՞վ, Մեծ Արարիչի հրաշք մի մասն է Հայ ժողովուրդը, Միջնամատը չէ, բայց ո՞չ ճկույթը...**»:

Ու մեծ Մատոցը Համբուրեց այն ժոր մասները դողողջ, Ապա պատանու ճակատն Համբուրեց ողով էլ մի ողջ:

Հայոց եզեռնապատումի գրականություն մեղ չի ստեղծվել ավելի զորել, ընդգրկուն ու ներգործուն պատկեր, Թերեւս այս համոզումով էլ նրա «Տեսանք Հայ մի կրն, վշտով իմաստուն, Հայոց ոտին էր ցույց տալիս որդուն՝ Ավաղի վրա գրելով գրեթե Հայոց սուրբ ոգով ...» արտահայտությունը է մեկտեղվել Դեր-Հուրի Սուրբ նահատակաց, եկեղեցու ներքնահարկի ցուցադրահի նշանավոր որմնաքանդակը, ուր պատկերված է անապատի ավաղների վրա իր սրտուն մաշտոցյան գրեթե սուրբնոց մայրը՝ անապատի հողմերի և ամենակույ ժամանակի դեմ մարտակիրս:¹⁶⁰

¹⁶⁰ Այս հարցարանումը և նույն ցուցարանում կանգնեցված հսկայական պատը, որի մի եզրին Արմենյան Գայաստանի նստահան էրեղեղ չես ընկալալորի ու բարեջան մարդ-

Պեռնում Հ. Շիրազը, Հանձին թուրքերի ստեղծած Հայոց եղեռնադժոխքում գրեթե չբղոց ողբերի, ստեղծել է կերպարային հնարքերի համակարգ, թե Հայ, թե ալլազգի մեծերի ոգիներն ընտրված ու կերպարված են զաղափարական ու զեղազրտական որոշակի նպատակադրումով: Բացի նրանից, որ այդ մեծությունները գնահատվում են ըստ իրենց իրական արժանիքների և Հայաստանի Հետ ունեցած պատմամշակութային առնչությունների, թուրքական վայրագությունները որակավորվում են ըստ նրանց ըմբռումների և չափանիշների: Վերջինիսի հետ ասավածային անձեղ զոխորում չբլում, մեղավորների պատժով Հրեմված Դանթին Շիրազի պեռնում Հոմերոսի, նաթեկցու, Շեքսպիրի, Բայրոնի, Անդրանիկի և մյուսների հետ տեռնում է ոչ թե երևակայական, այլ իրական զոխոր, տեսնում է ամաշտացած Արմենյան Հայաստանը, Հայ մտավորականների զաղանային հոշոտմով սպանող, կենդանի թաղվածների հառաչանքներն ու ավայտանքները, սուկրակույտներն ու զանգաղուրները, պղծված վանքերն ու այլ-վան զպրոցները, Հայոց ողջ ավերակված երկիրը՝ ուր «Հովերն էին ժորթված Հորովին հիշելով լալիս», տեսնում է Հայ կանանց ու մայրերի ստիքների պտուկներից չինած թաղքե՛հ քաշող թրքուհիների, տեսնում է ու խելահեղվում: Աստվածապեղ սուրբ նարեկացին, «որպես Հայոց անձեռն անձեռն, քար է զեպի նեատում երկիրը, Բար Աստուս քար ճակատին, կույր Հոմերոսն իր խզնի անթիվ քայ աչքերով է տեսնում եզեռնի քույր տարափները, վանքերում, աներում և ալլազ խելված մարդկանց՝ ծովի ձայն Հանոց կրակով այրվին ու ամբանալը:

կանց նաշարը լուսնաբարձուն են «ԱՆեք խաղող էմք մեր լեռների պե, Դուք հողերն պե խուճեցի վայրագ», իսկ մյուս երեսին նույն ընկալալորի եղևնից նեռտ ավանդներ ու ծերակալների դեմատեղ լուսնալարերը՝ «Ինչ մեք հալեմք մեք մեր լեռների պե, Դուք հողերն պե կրեք վայրագ՝ ձախաղորտուններով, տեսնո մի իսրաճանեղծուի Սուրբ նահատակաց ենեղեցու այցելուների Ուղեմասյան-ուշաքցուն դոխոխորում էր հայտնել, թե ինքն է եղևնի ձալն զուլ է իր տալբուր ուղեղորտուններում, մի պեռնում և մի ընկալալորայան մեք որքեք, սակայն, անտեսել են ...» Ս. Ս.:

Իր կույր աչքերով կույրն էլ կուեսի՝
Թուրքի անցած տեղն էլ խոտ չի բուսնի:

*եվ այսքանը դեռ քիչ է թվում ողջ Հայ ազգին մահու ճա-
կատագրած թուրք բարբարոսին, որի Հոխորտալից նոր հրա-
մանը արձակում ճիշտ և ճիշտ էնվեր – Թայեթ – Ջեմալ
եռասուլթանի հրեշտօր ծրագիրն է բովանդակում.*

« – Ջեջն ք... Մասիսն էլ կարծի պետի Հայոց արյունով,
Քիչ է, մորթիցն ք, ողջ ազգն ենք մաշի ճակատագրել,
Որ Մասնա քաջերն իրենց պուլսը դեռ վայր չեն դրել,
Որ տանը մի մայր, ո՞ր օրոցքի մեջ դեռ մանուկ մի կա,
Որ հզի հարսին չեք հրել մահվան օրոցքը ոսկյա,
Որ նշանածին իր մահ-փեսայի հետ չեք պսակել,
Որ մի Հայուհու արգանդալուռը մահով չեք փակել –
Դազալ չն՞ք գրել օրոցք շինողին, հարսով քնողին,
Մտուր կապողին, նոր տուն դնողին, Հայ սերմանողին –
Հայոց արձատի արձառը գտե՛ք, վերջին թեկն հասե՛ք,
Վերջին Հայն աչքիս առջև թրատե՛ք »:

*Այս հրամանն է գործադրվել 19-րդ դ. վերջին և 20-րդ դ.
առաջին ցեղասպանությունն իրագործելիս և արևմտահայու-
թյանը բնաջնջելիս: Ողջ «Հայոց դանթեականը» դատասա-
նամասյանը թուրքերի կարծեցյալ ու այսօր իրենց իսկ կողմից
թմրկահարվող մարդասիրության հերքումն է և թուրքի իրա-
կան էությունն ու թուրք Հավաքականության բնավորության
բացահայտումը: Այս պոեմն էլ նարեկացու «Մասյանի» պես
պետք է «ժողովուրդներին քարոզվի ի լուր, տպվի սեմերին
բանականության», որովհետև ցեղասպանության մասին բուն
ճշմարտությունն է՝ գեղարվեստի լեզվով, ցեղասպանության
էությունն է՝ բոլորին ըմբռնելի ու հասկանալի Հզոր պատ-
կերավորությամբ ու ոչ միայն բնավ չի հակասում պատմական
ճշմարտությանը, այլև այն դարձնում է առավել տեսանելի ու
շոշափելի՝ իր ողջ Համամարդկային ու տիեզերածավալ ընդգրք-
կումով.*

– Ո՞վ է Հանդուհում գիշերվա այս անասճամս դադաղում,
Որ անհամար սառցերի բոլոր մոմերն են դողում,
Ո՞ւմ ես թաղել, ո՞վ Աստված, որ դադաղը գիշերվեց,
Այս ծով գիշերն անհասում՝ ո՞ւմ դադաղն է այսքան մեծ,
Որ այս անթիվ սառցերն են՝ մոմեր դառած՝ Հառաչում,
Ո՞ւմ եք թաղում, ո՞վ սառցեր...

– Հայ կատորածն է Հանդուհում,

Հայոց վշտին, Հանց դազալ, քիչ է ծովն էլ գիշերի,
Նեղ է գիշերն անասճամս՝ իրև դազալ Հուշերի:
Դազալվել է Հավիտյան, ախ, Հավիտյան, սե Հուշեր՝
Հայոց վիշտն էլ Հայ գլխին՝ Հավերժական սե գիշեր:
Հայոց եղեռնն անդադալ ու անթալ է Հավիտյան,
Տիեզերքն է դազալը եղեռնամեծ Հայության:
Ինչպե՞ս պղծվեց մայր Հողից ոտքն Հայ ողու Անթիլի,
Եղեռնի դեմ գոծիք չէ գոծիքն անգամ Դանթեի,
Որ արին էլ Հարցրե՛ս Մեծ եղեռնին է վկա:
Որ մի ձորն էլ խոր պեղե՛ս՝ Թաղվածներս կան գուրս,
Որ մի Դե Դորն էլ մանե՛ս՝ անթաղներն են մեր անհույս,
Որ մի եփբառն էլ ի՞նչես՝ Հայ գիշերն են ավազվել,
Որ մի Տիգրիսն արյուն չէր, անապատներն են կեղծվել
Հայոց որբուկ աշխարհի արյան կարծիք – սե բոցով,
Մի ողջ ազգ է մորթրվել, կարճեցին Հող ու ծով:
Որ մի քար չիբի՛մ չէ այնտեղ՝ Հայոց աշխարհում,
Լուսնից անգամ Հովիքը դիբի՛ր հոտ են քերում...
Լուսինն ինքն էլ ինձ գանգ է թվում՝ մի Հայ քերթողի,
Ձէ՛, գիշերը ծով դազալ, իսկ իսկ լուսինը՝ դազալի,
Գիշերակսոր դազալի վրա Աստծո աչքն է բաց
Սարսափահար աչքն է պիշ, մեր կույր բութի աչքն ապշած...
.....

Լացող աչքն է, լաց, լուսին, մեղ ոչ մի ազգ չի ցավի –
Լուսին, դիակն ես անթալ Հայոց ժողովրդավաճ արևի...
Քրիստոսյան աշխարհն էլ Հեթանոսակի, մահճակակի՝

Հազար անգամ է գավել,
Ոչ մի մեղքը չի քավել²⁸¹:

Լոկ սառչերն են, որ մորթված ոգիներից արթնանում
Ուսած Հայոց եղևնի դիշեր — գաղաղն են ամանում:
Վեր են հանում մոռացումն անթաղելի մեր Հեծքի՝
Տանում զեղի գալիքներն հավերժական անեծքի:

Այսբան նգերական ու ողբերգական պատերճներից Հետս
պետնր զերջնամասն այնուամենայնիվ շնչում է շիրազյան աս-
մանտիկ լավատեսությանը: Մասնա լեռան ժայռն շրթունքն իր
«ծրամանաթև թուրք» սրազ Անդրառնինի մեծշան ոգին թըշ-
նաման մի կողմից պատժում է փրկելով գաղթականների քա-
րավայրերը, մի կողմից թշնաման տալիս մարդկայնության
ու սուղնատեղան սցենյության գուսեր: Չարին պատժելու Հե-
տամուս ոգևորումըր անանում է մեր ժողովրդի հարասն կեն-
սունակության հրաշքը Արև — Մանուկին, որը շարժվում էր
իր մեռած մոր մեջ, իսկ ժայրը հին Հայաստանի խորհրդանիշն
է և շարժվող մանկան

Բարձր են էք ոսկի ու ոչ թն պատանքն իր մահամնա:

Մանուկը զազվա Հայոց Հույան է: Անսպասի ամաղներն
զբառախառակի վրա ժայրը երան է սուղորեցնում մաշտոցյան
սուրբ գրերը: Ինչքան էլ բամին ջնջում է դրանք, ժայրը նորից
է գրում ու որդուն ցույց տալիս փրկության ու հավերժության
նանապարհը:

* * *

Անշուշտ, մեր այս դիրքն ընդամենը Հովհ. Շիրազ երևույթի,
Բանաստեղծի և Մարգու, գրական իրապես հարուստ ժա-
նանգության մի հակահ մասի զհանգաման հանուն փորձ է:
Բնական ու հասկանալի է, որ նրա բոլոր երկերին, բանաստեղ-

տղանի պանստղյուցը Առեռնի է պանի հուսամտություն մեր: Դա կամ լավա-
րական միջամտության ևս մ փրկման հետևանք է: Ինքուպայք մեր վերականգնման
ճշդույն ենք համեմատելով Իմու Շիրազի ինքնակալին ընթերցան պահապանված
ժայնարդայան և երկերի Գրք հասարակ մեծ եղեկեթս խոսակով որպես ասանեն
բանաստեղծության տեղյած հասկալի հետ անս Գովհ. Շիրազ, Երևն, հ. 1,
«Մեծնական գրող» Իրաւ., Եր., 1951, էջ 236-237:

Մարտի 1952 թ. 10

ՅՊՊՊ Պ. ՅՊՊՊ Պ. ՅՊ

մական արգիտի բոլոր յուրահատկություններին անդրադա-
նալ չէինք կարող, ուստի շատ ստեղծագործություններ ու
խնդիրներ գուրս են մնացել մեր քննություն պարտից: Այդ եր-
կերի զազափարական ու գեղագիտական հարցադրումներին
մանրային, գեղարվեստական յուրահատկություններին անդ-
րադառնալու ենք հետագայում:

Հուսանք ոչ Հեռու ապագայում իրականացած կլինի նաև
մեծ բանաստեղծի երկերի ակադեմիական լրակատար հրատա-
րակությունը, որը կդյուրացնի ինձ մեր, թե այլ ուսումնասի-
րողների զործը:

ՎԵՐՋ ԱՈՍԱՐՆ ԳՐԵՐ

Գրքերի ցուցակ
1. Գրքերի ցուցակ
2. Գրքերի ցուցակ
3. Գրքերի ցուցակ
4. Գրքերի ցուցակ
5. Գրքերի ցուցակ
6. Գրքերի ցուցակ
7. Գրքերի ցուցակ
8. Գրքերի ցուցակ
9. Գրքերի ցուցակ
10. Գրքերի ցուցակ
11. Գրքերի ցուցակ
12. Գրքերի ցուցակ
13. Գրքերի ցուցակ
14. Գրքերի ցուցակ
15. Գրքերի ցուցակ
16. Գրքերի ցուցակ
17. Գրքերի ցուցակ
18. Գրքերի ցուցակ
19. Գրքերի ցուցակ
20. Գրքերի ցուցակ
21. Գրքերի ցուցակ
22. Գրքերի ցուցակ
23. Գրքերի ցուցակ
24. Գրքերի ցուցակ
25. Գրքերի ցուցակ
26. Գրքերի ցուցակ
27. Գրքերի ցուցակ
28. Գրքերի ցուցակ
29. Գրքերի ցուցակ
30. Գրքերի ցուցակ
31. Գրքերի ցուցակ
32. Գրքերի ցուցակ
33. Գրքերի ցուցակ
34. Գրքերի ցուցակ
35. Գրքերի ցուցակ
36. Գրքերի ցուցակ
37. Գրքերի ցուցակ
38. Գրքերի ցուցակ
39. Գրքերի ցուցակ
40. Գրքերի ցուցակ
41. Գրքերի ցուցակ
42. Գրքերի ցուցակ
43. Գրքերի ցուցակ
44. Գրքերի ցուցակ
45. Գրքերի ցուցակ
46. Գրքերի ցուցակ
47. Գրքերի ցուցակ
48. Գրքերի ցուցակ
49. Գրքերի ցուցակ
50. Գրքերի ցուցակ
51. Գրքերի ցուցակ
52. Գրքերի ցուցակ
53. Գրքերի ցուցակ
54. Գրքերի ցուցակ
55. Գրքերի ցուցակ
56. Գրքերի ցուցակ
57. Գրքերի ցուցակ
58. Գրքերի ցուցակ
59. Գրքերի ցուցակ
60. Գրքերի ցուցակ
61. Գրքերի ցուցակ
62. Գրքերի ցուցակ
63. Գրքերի ցուցակ
64. Գրքերի ցուցակ
65. Գրքերի ցուցակ
66. Գրքերի ցուցակ
67. Գրքերի ցուցակ
68. Գրքերի ցուցակ
69. Գրքերի ցուցակ
70. Գրքերի ցուցակ
71. Գրքերի ցուցակ
72. Գրքերի ցուցակ
73. Գրքերի ցուցակ
74. Գրքերի ցուցակ
75. Գրքերի ցուցակ
76. Գրքերի ցուցակ
77. Գրքերի ցուցակ
78. Գրքերի ցուցակ
79. Գրքերի ցուցակ
80. Գրքերի ցուցակ
81. Գրքերի ցուցակ
82. Գրքերի ցուցակ
83. Գրքերի ցուցակ
84. Գրքերի ցուցակ
85. Գրքերի ցուցակ
86. Գրքերի ցուցակ
87. Գրքերի ցուցակ
88. Գրքերի ցուցակ
89. Գրքերի ցուցակ
90. Գրքերի ցուցակ
91. Գրքերի ցուցակ
92. Գրքերի ցուցակ
93. Գրքերի ցուցակ
94. Գրքերի ցուցակ
95. Գրքերի ցուցակ
96. Գրքերի ցուցակ
97. Գրքերի ցուցակ
98. Գրքերի ցուցակ
99. Գրքերի ցուցակ
100. Գրքերի ցուցակ

ԲՈՒՍԼԴԱԿՈՒՅՅՈՒՆ

**Մասն առաջին
ՄՈՒՏՔ**

Հովհաննես Երբայ Կրկույթը 7

**Մասն երկրորդ
ՔԱՆԱՑՏԵՂՄԻ ՄԵՌՈՒ ԳԸ**

Մինչև «Գարնանամուտ» 69
«Գարնանամուտի» զորակները 98
Բանաստեղծը Համալսարանում 116
Բանաստեղծը և Ճեղքալայր Գյումրիին 126

**Մասն երրորդ
ԳՆՊԻ ՄԵՄ ԱՇԽԱՐՀ**

Քաղաքագիտության բարձրագույն դպրոցում 163
Եղանակը և Սփյուռքը բանաստեղծության համայնքում 206

**Մասն չորրորդ
ԳՈՒՄԵՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ**

Վաղ շրջանի պոեմները 264
«Վաղայն Միջրդան» 270
«Մովսիսյան կամ Սասունիցի Գավթիք» 285
«Սիրամանին և Խղիզարեն» 294

Մասն հինգերորդ

ԲՈՒՍԼԱԿԱՆ ԵՆԶԱՆՈՒԹՅԱՄԻ

«Մայր» «Քրիչխակներ» 362
«Քրիչխակների երկրորդ արարչականը» 385
«Աստուծո զուգործը» 389
«Ինքնըզանք Համանարզհային» 403

Մասն վեցերորդ

ՔԱՄՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՃԻՉԸ

«Տիրաբն Մեծի գիշարը և Հովհաննիսյանները» 418
«Անի» գրքերի Հրատարակման առիթով 437
«Հայոց գրեթեմականը» 454



ՍԱՄՎԵԼ ԳԱՐԵՎԻՍ ՄՈՒՐԱՂՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է ՀՀ Արագածոտնի մարզի Աղյու գյուղում: 1969 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը և մշտապես աշխատել հայոց մայր թուփում (մինչև 2 տարի 1992 - 94 թթ. դասավանդել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում և Հնծնաշարանում):

Մինչև 1972 թ. աշխատել է ԵՊՀ հայագիտական կենտրոնում, մինչև 1985 թ. եղել է «Բաները Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու: Բարձրագույնը՝ համատեղելով դասախոսական աշխատանքը:

Նմբագրել է «Հայաստանի տեղաճանաչողական առարկա» 1-ին հատորը, դպրոցական դասագրքեր ու մի շարք այլ գրքեր: Հեղինակակցությամբ կազմել և խմբագրել դպրոցի ավարտական և թուղի ընդունելության քննությունների՝ 2001-2006 թթ. «Գայոց լեզվի հարցաշարերի շտեմարանը», Իրանի հայկական դպրոցների 7-րդ դասարանի «Մայրենի» դասագիրքը (2007), մասնակցել 2011-2012 թթ. «Գայոց լեզվի և զրականության հարցերի շտեմարանի» հատորների կազմմանը:

1984-ին ստացել է քան. գիտ. թեկնածուի, 1995 թ. դոկտորի գիտական աստիճան, 2004-ին՝ պրոֆեսորի կոչում: 1985 - ից «Հայ զրականություն» է դասավանդում քաղաքավիճակում, «Ազգային մակատարադիրը և հայ պոեզիան», «Հայ պոեմի արվեստը» դասընթացները ճաշատարադարում: Եղել է հայ դասական և նորագույն զրականության, ինչպես և ժառանգախոսիչի գծով պաշտպանված քազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս, ղեկավարել տասնյակ առաջիկաների և հայդոցների ատենախոսություններ: ԵՊՀ-ում գործող հայ գրականության և ժառանգախոսիչի գծով քանասիրական գիտությունների դոկտորի աստիճաններ չնորոգող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ է:

2001 թ. մրցույթով ընտրվել է ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում (չորրորդը՝ ակադ.ակադ Ս Տերտերյանից, Մ. Սկլյանից և Հր. Թանրազյանից հետո):

Հրատարակել է 100-ից ավելի գիտական հոդվածներ և հետևյալ մենագրություններ:

1. «Հարություն Սուրբաբյան», Ե., 1988, 232 էջ:
2. «Երվանդ Օսյան, կանցք և գործը», Ե., 1996, 280 էջ:
3. «Գրական հանգրվաններ», զիրք Ա, Ե., 2003, 488 էջ:
4. «Գրական հանգրվաններ», զիրք Բ, Ե., 2007, 336 էջ:
5. «Գրական հանգրվաններ», զիրք Գ, Ե., 2010, 389 էջ:
6. Հովհաննես Հիրազ, քանաստեղծ, մարտ, Ե., 2012, 576 էջ:

«Անդրոս» կենտրոնում տարիներ շարունակ իմ և Լոր Տուգաթով ու Յեփրանով (2008 թ.) վարել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացները Մասնակցել է հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներ:

ԳՊԱ անդամ է 2001 բվից: Գործուն մասնակցություն է ունենում հանրապետության գիտական, գրական ու մշակութային տարրեր միջոցառումներին, հեռուստատեսությանը վարել է հայ գրականության վերաբերյալ տարրեր հաղորդաշարեր, դասախոսություններով հանդես է եկել երուսաղեմում, Բեյրութում, Ֆալեյում, Ֆայաստանի և Արցախի բազմաթիվ դպրոցներում:

Պարգևատրվել է ԳՊԱ «Պողոս Լուսար Փաշա» մեդալով և շքերհավալագրով (Ղալեպ, 2006), «Փրիտլոյ Լանսեմ» ոսկե հուշամեդալով (2007), Երևանի քաղաքապետարանի պատվոգրով (2008), ՀՀ ԿԳ նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2009), ՀՀ Ազգային ժողովի «Գատուլի մեդալով» (2012):

Դասցեն Երևանի պետական համալսարան, հայ բանասիրության ֆակուլտետ, հայ գրականության ամբիոն

Դեռ.՝ քցք. 055 – 52 – 29 – 36

բն. 52 – 29 – 36

աշխ. 54 – 43 – 91 + 1 – 18

muradyan.samvel45@gmail.com

«ՅՈՎԱԼՔ ԵՒ ԳԱՐՈՒԽՆ ԼԱՍԳԱՆՏԵԱՆ»
մասնաշաղկով լրյա են տեսել՝

1. ՅՈՎԱԼՔ ԼԱՍԳԱՆՏԵԱՆ, «ԼՍ»։ Ընդհանուր գիտելիքներ, Թիւ 3 / եր., 2006, 320 էջ, տպագրանակ՝ 1100:
2. «ԼՍ»։ Հանրագիտակ, Թիւ 5/ Յովալիկ Կաղանտան, եր., 2009, 366 էջ, տպագրանակ՝ 3000:
3. ՅՈՎԱԼՔ ԼԱՍԳԱՆՏԵԱՆ, «ԼՍ»։ Հանրագիտակ, Թիւ 6 / եր., 2009, 366 էջ, տպագրանակ՝ 3000:
4. ՎԱԶԳԷՆ ԱՌԻՔԵԼԵԱՆ, Եփրազ-Նամե. չափածոյ վեպ, եր., 2009, 196 էջ, տպագրանակ՝ 500:
5. ԱՆԻ ՅԱՐՈՒՓԻՈՒԵԱՆ, Ութերորդ երկինք / բանաստեղծութիւններ, եր., 2009, 60 էջ, տպագրանակ՝ 500:
6. ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿԵԱՆ, Ars Poetica // բանաստեղծութիւններ, եր., 2009, 208 էջ, տպագրանակ՝ 600:
7. ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ, Ընթարտի, / կազմեց Սուրեն Դանիելեան, եր., 2010, 400 էջ, տպագրանակ՝ 650:
8. ՅՈՎԱԼՔ ԼԱՍԳԱՆՏԵԱՆ, Ամերիկահայ գիրքի պատմութիւն. 1958-2011 / մասնաշաղկաւ, Լոս Անճելէս, 2011, 178 էջ, տպագրանակ՝ 300:
9. ՅՈՎԱԼՔ ԼԱՍԳԱՆՏԵԱՆ, Հայկական բառարաններու Համառոտ պատմութիւն // մասնաշաղկաւ, Լոս Անճելէս, 2011, 71 էջ, տպագրանակ՝ 300:
10. ՌՈՒՐԷՆ ՍԱՔԱԳԵՏՅԱՆ, Արեւմտահայերէն – Արեւելահայերէն նոր բառարան, եր., 2011, 380 էջ, տպագրանակ՝ 1000:
11. ՅՈՎԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ, Հայոց Տանգիականը, պոեմ / խմբագիր՝ Յովալիկ Կաղանտան, Լոս Անճելէս, 2011, 162 էջ, տպագրանակ՝ 500:
12. ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ, Յովհաննէ՛ս Եփրազ. Բանաստեղծը, Մտքը, գիրք Ա, եր., 2011, 576 էջ, տպագրանակ՝ 1000:

ԳՊԱ անդամ պահելու շարունակ

Նույնպիսի անունով «Կարճ» թերթի
ՏԵՒՈՒՄ՝ օգոստոսի 27-ին, 2012 թ.

Տպագրությունը՝ օֆսեր: Զափսը՝ 60X84 1/16:
Թուղթը՝ օֆսեր: Ճավալը՝ 576էջ:

«Լեզալ Պլյուս» հրատարակչություն
ք. Երևան, Գ. Դակոբյան 3, հեռ.՝ 27-69-92